Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

# ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ




ՀԱՅԱՍՏԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

Г. АКОПЯН

# НЕРСЕС ШНОРАЛИ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1964

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99-092 [Երեսես Շնորհալի]
Հ

ԳՐ. ՀԱԿՈԲՅԱՆ

# ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

A II 33928



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1964

Ուսումնասիրությունը նվիրված է միջնադարի հայ խոշոր բանաստեղծներից մեկի՝ Ներսես Շնորհալու ստեղծագործության վերլուծությանն ու արժեքավորմանը։ Մենագրության մեջ բնութագրվում են Շնորհալու ապրած ժամանակաշրջանը, հասարակական-քաղաքական իրավիճակը և գրական միջավայրը։ Հանգամանորեն վերլուծվում և գնահատվում են նրա արձակ և չափածո գործերը, քննության է առնվում բանաստեղծի աշխարհայացքը, բացահայտվում են նրա տաղաչափական արվեստի առանձնահատկությունները և նշանակությունը։

# ԱՌԱՋԱԲԱՆ

Գրիգոր Նարեկացուց հետո Ներսես Շնորհալին մեր միջնադարի ամենախոշոր բանաստեղծն է։ Որքան մեծ է Նարեկացին՝ որպես բանաստեղծ, նույնքան էլ մեծ ու բեղմնավոր է Ներսես Շնորհալին։ Մեկը խորն է ու հախուռն, իսկ մյուսը՝ կարկաչուն ու մեղմ և երկուսն էլ որպես գրական գագաթներ, իրենց բանաստեղծական յուրահատուկ հմայքով, հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի անմահ հուշարձաններն են և միաժամանակ ճանաչված ոչ հայտնի դեմքեր՝ նաև միջնադարյան գրողների համաստեղության մեջ։ Վերլուծել և գնահատել Նարեկացուն առանց Շնորհալու մասին խոսելու, հնարավոր է. բայց դրել Շնորհալու մասին՝ առանց նրան կապելու Նարեկացու արվեստի հետ՝ կլինի միակողմանի և թերի։ Ահա թե ինչու այս աշխատության մեջ մի անգամ չէ, որ համեմատվել ու աղերսվել են այդ երկու մեծ բանաստեղծների գործերը։ Բացի այդ, Շնորհալու գրական դեմքը ամբողջական ներկայացնելու և նրա տեղը հայ հին գրականության բազմօղակ շղթայում որոշելու համար, անհրաժեշտ է ցույց տալ նաև նրա արվեստի առնչությունը թե իրենից առաջ և թե հետո եղած միջնադարյան հայ գրականության հետ։ Թեև Շնորհալին անցյալի խոշորագույն գրողներից է, թողել է գրական հարուստ ժառանգություն, սակայն, ցավոք սրտի, նա դեռևս պատշաճ ուշադրության չի արժանացել։ Մեր հին, նշանավոր մատենագիրներից ու գրողներից շատերը թե՛ անցյալում, և թե՛ մանավանդ մեր ժամանակներում, որոշ չափով ուսումնասիրվել, ըստ արժանվույն գնահատվել են. Շնորհալին դժբախտաբար, շատ երկար ժամանակ լրիվ չի ուսումնասիրվել։ 1873 թվականին, բանաստեղծի մահվան յոթ հարյուր ամյակի առթիվ, Ղ. Ալիշանը Վենետիկում հրատարակեց Շնորհալուն նվիրված առաջին ընդարձակ ուսումնասիրությունը՝ «Շնորհալի և պարագայ իւր» արժեքավոր գիրքը։ Ղ. Ալիշանի այս գործը հայ բանասիրության մեջ առաջինն է, որտեղ բազմավաստակ բանասերը որքան մանրամասն է գրած

Շնորհալու կյանքի, կրոնական և հասարակական գործունեության մասին, նույնքան և ժլատ է նրա բանաստեղծությունները վերլուծելու, սրանց աշխարհիկ, գեղարվեստական կողմերը վեր հանելու ֆնդրում:

Բազմաթիվ փաստերով հարուստ այդ ծավալուն ուսումնասիրությունը բաղկացած է երեսուն գլուխներից, որտեղ Ալիշանը ի մի է հավաքել ու կարգավորել Շնորհալուն վերաբերող ոչ միայն հայ, այլև ուրիշ շատ ազգերի պատմագիրների ու կրոնական գործիչների հիշատակարաններում եղած տվյալներն ու փաստերը:

Մենագրության համարյա կեսը նվիրված է Շնորհալու կենսագրությանը. տքնաջան բանասերը, հիմնվելով հայ հին տպագիր ու անտիպ գործերի ընձեռած տվյալների վրա, շարադրել է բանաստեղծի ընդարձակ կենսագրությունը:

Աշխատության գլուխներից մի քանիսը նվիրված են Շնորհալու միջավայրին, ժամանակի կրոնական խնդիրներին և հայ հոգևոր մշակույթին: Մանրամասնորեն են տրված Մեծ Հայքի ու Կիլիկիայի հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած հասարակական-քաղաքական դեպքերը: Մի քանի գլուխ նվիրված է եկեղեցական բարեկարգություններին, կրոնական վեճերին և Շնորհալու տաղաչափական արվեստին:

Սակայն, ցավոք պետք է ասել, որ այս մեծարժեք մենագրությունը, փաստական և բանասիրական հարուստ տվյալներով հանդերձ, միակողմանի է: Ալիշանն ամեն կերպ ձգտել է ներսես Շնորհալուն ներկայացնել առաջին հերթին իբրև կրոնական անխոնջ գործիչ, գործունյա կաթողիկոս և ապա՝ որպես ազգային բանաստեղծ: Այնուհետև մենագրության մեջ անտեսվել են Շնորհալու հանճարեղ, որոնք բանաստեղծի չափածո ստեղծագործությունների ամենաարժեքավոր մասն են կազմում: Շարականները նույնպես չեն քննվել, հեղինակը դրանք միայն թվարկել և առաջ է անցել: Արձակի բաժնից դրվատական խոսքերով են հիշվել միայն Առեներանությունը և Ընդհանրական թուղթը. մնացած բազմաթիվ կարևոր թղթեր ու նամակներ չեն քննվել: Արձակ և չափածո գործերը դիտվել են որպես միայն կրոնական-եկեղեցական նշանակություն ունեցող գործեր, որտեղ միանգամայն անտեսվել են բանաստեղծի աշխարհիկ և հայրենասիրական տրամադրությունները:

Վերջապես այս արժեքավոր ուսումնասիրության մեջ Շնորհալու կենսագրության և եկեղեցական գործունեության (միության ֆնդրում) վերաբերյալ տեղ են գտել չհիմնավորված, ոչ ճիշտ կարծիքներ, որոնց կողքով չի կարելի լռությամբ անցնել: Այսուհան-

դերձ Ղ. Ալիշանի «Շնորհալի և պարագայ իւր» երկասիրությունը ամբողջապես առած՝ իր փաստական նյութերով ու բովանդակությամբ՝ մի հարուստ աղբյուր է ո՛չ միայն շնորհալիագիտության, այլև Կիլիկիայի, այդ շրջանի հայ ժողովրդի մշակույթի ու պատմության ուսումնասիրության համար։

Այնուհետև, ավելի քան յոթանասուն տարի, Շնորհալու վերաբերյալ որևէ ամբողջական ուսումնասիրություն չի եղել, երբ չհաշվենք դրականության պատմության դրքերն ու դասագրքերը, որտեղ նա սովորաբար տեղ է գտել, ինչպես և մյուս հայ մատենագիրներն ու դրողները։

Ալիշանից հետո Շնորհալու մասին երկրորդ արժեքավոր և լուրջ ուսումնասիրությունը կատարել է պրոֆ. Մանուկ Աբեղյանը։ Այս դործը սակայն առանձին մենագրություն չէ, այլ զետեղված է նրա «Հայոց հին դրականության պատմության» Բ հատորում (էջ 73—129)։ Սա բազմակողմանի դրականագիտական լուրջ ուսումնասիրություն է, որտեղ համոզիչ փաստերով տրված է Շնորհալու կարևոր գործերի սոցիալական ու գեղարվեստական արժեքը, դրանց տեղը հայ հին դրականության մեջ։ Այս մեծածավալ հատվածի առաջին մասում շարադրված են Ներսես Շնորհալու համառոտ կենսագրությունը, Տուվքի ու Հռոմկլայի դպրոցներում ստացած կրթությունը և մուտքը գրական-հասարակական ասպարեզ։ Այս բաժնում խոսվում է նաև Կիլիկիայի հայ դաղութի, նրա մշակույթի և երկրի քաղաքական դրության մասին։ Այնուհետև ընդհանուր գծերով բնորոշելով Շնորհալու հայացքը բանագործության արվեստի նկատմամբ, Աբեղյանը սկսում է բնութագրել և գնահատել նրա կարևոր գործերը։ Վերջիններից առանձնապես մանրամասնորեն են վերլուծված «Յիսուս Որդի» և «Եղեսիոյ Ողբ» պոեմները, իսկ արձակ թղթերից՝ «Ընդհանրականը»։ Ութ հարյուր տարվա ընթացքում «Յիսուս Որդի» երկը առաջին անգամ պրոֆ. Աբեղյանն է մանրամասնորեն վերլուծել և արժեքավորել։ Թեև Ալիշանն էլ իր դրքում բավական երկար է կանգ առել այդ դործի վրա, նույնիսկ համարել Շնորհալու գլուխ-դործոցը, խոսել դրա մասին գովասանքով ու հիացմունքով, սակայն այդ դրվատական խոսքերը ոչ թե արդյունք են դրականագիտական խոր վերլուծության, այլ անկեղծորեն բխել են բանաստեղծ-բանասերի սրտից, որը այնքան լի է ջերմ սիրով դեպի Շնորհալին ընդհանրապես։ «Յիսուս Որդի» պոեմը վերլուծելիս Աբեղյանն ամենից առաջ ցույց է տալիս, որ Շնորհալին ոճական արտահայտչական եղանակների մեջ թեև ազդվել է Գրիգոր Նարեկացուց, բայց և դրսևորվել է որպես ինքնուրույն բանաստեղծ՝ ու-

նենալով իր ուրույն ոճը և շեշտված անհատականությունը։ Այնուհետև համառ գիտնականը ոչ միայն շեշտում է Նարեկացու և Շնորհալու ոճերի անհատականությունը և առանձնահատկությունները, այլև բացատրում, թե ինչպես են առաջացել այդ տարբերությունները՝ կապված ժամանակի և հասարակական կյանքի հետ։

Ավելի հանգամանորեն է վերլուծված «Եղեսիոյ Ողբը»։ Աբեղյանի՝ Շնորհալուն հատկացված 56 էջանոց ուսումնասիրության մոտավորապես կեսը նվիրված է այդ պոեմին։ Սկզբից տրվում է երկի ստեղծագործական պատմությունը և նրա դիմառնական ձևի առավելությունները։ Ապա համոզիչ փաստերով ցույց է տրված, թե ինչպես կաթողիկոս-բանաստեղծը «Եղեսիոյ Ողբի» մեջ ներբողում է հրապուրող իրական աշխարհը և թե վերջինս որքան գեղեցիկ և ռեալիստորեն է արտահայտվել այդ պոեմում։ Հմուտ դրականագետին հատուկ վարպետությամբ ցույց է տրվել պոեմում բավականաչափ լայն տեղ գտած բարբարոսական ռազմական գործողությունների իրական պատկերները։ Այստեղ քրիստոնեական աշխարհայացքի կողքին Աբեղյանը ցույց է տալիս նաև աշխարհիկ կյանքի արձագանքները։

Դժբախտաբար, Շնորհալու մյուս, ոչ պակաս արժեքավոր մեծ ու փոքր գործերի վրա Աբեղյանը շատ քիչ է կանգ առել։ Հոգևոր երգերի, տաղերի, գանձերի բազմաթիվ գեղեցիկ գործերից մի փոքրիկ նմուշ բերված է միայն Վարդանանց շարականներից և մի քանի տող էլ՝ Հռիփսիմյանց տաղից։ Գանձերի մասին բոլորովին հիշատակություն չկա։ «Նոր գրական տեսակներ» և «Առակք-հանելուկ» ենթավերնագրերի տակ շատ համառոտակի է տրվել Շնորհալու շափածոյի կարևոր մասը կազմող «Վիպասանությունն», «Խաչի ներբողեանի», «Մաղթանք առ սուրբ հրեշտակսն», «Ցաղագս յերկնից և զարդուց նորա» և այլ գործերի նկարագիրը։ Խրատական բանաստեղծությունների մասին խոսելիս, բոլորովին չեն նշվում դրանց անբաժան և արժեքավոր մասը կազմող «սողոմոնյան» կոչվող 6—7 ոտանավորները և այլն։

Արձակի բաժնում մանրամասն քննության խնդիր է դարձել միայն «Ընդհանրական թուղթը», որի պատմական, գրական և սոցիալական նշանակությունը բացահայտված է համոզիչ փաստերով ու եղրակացություններով։ Թղթում եղած փաստերի հիման վրա երևան է հանված հոգևոր խավերի բարոյական անկումը, շահասիրությունը և նրանց հավատի թուլացումը։ Այս մասում էլ քննության առարկա չեն դարձել եկեղեցական միության վերաբերող, «պատմության համար առանձին նշանակություն ունեցող» բազմաթիվ

թղթերն ու նամակները։ Արեղյանի այս ուսումնասիրության մեջ, սակայն, Ներսես Շնորհալու չափածո գործերի անհամեմատ մեծ մասը (բացի «Վիպասանությունից», «Եղեսիոյ Ողբ»-ից և «Հանելուկներ»-ից)՝ շարականները, տաղերը, «Յիսուս Որդի», «Բան հաւատոյ», «Յաղագս երկնից և զարդուց նորա», խրատական-մանկավարժական և այլ բազմաթիվ մանր ու խոշոր ոտանավորները համարվել են կրոնական բանաստեղծություն, մինչդեռ դրանք պարունակում են նաև աշխարհիկ և հայրենասիրական մոտիվներ։ Այսուամենայնիվ մեծ գիտնականի այս գործը արժեքավոր ուսումնասիրություն է, խորը վերլուծական մեթոդով և գրականագիտական լուրջ ընդհանրացումներով։

Մեր այս ուսումնասիրության մեջ փորձել ենք ընդգրկել Շնորհալու բոլոր գործերը և ձգտել՝ գնահատել դրանք ժամանակի ոգու, տրամադրությունների և արվեստի տեսակետից։

Բանաստեղծի ժամանակն ու կյանքը ընդհանուր կերպով ուրվագծելուց հետո մանրամասնորեն զբաղվել ենք նրա հասարակական գործունեության հարցերով՝ երկու նկատառումով. առաջին՝ փորձել ենք քննության ենթարկել այն սխալ և թյուր կարծիքները, որոնք երկար ժամանակ իշխել են Շնորհալու գործունեության վերաբերյալ։ և երկրորդ՝ քանի որ գաղափարական ներքին սերտ կապ կա Շնորհալու հասարակական գործունեության և գրական ստեղծագործությունների միջև, հետևաբար, առանց վերանայելու եղած սխալ կարծիքները և ճշտելու բանաստեղծի հասարակական գործունեությունը, դժվար կլիներ ըստ արժանվույն գնահատել նրա թողած հարուստ գրական ժառանգությունը։

Անհրաժեշտ համարեցինք նախապես խոսել արձակ թղթերի մասին, քանի որ դրանք, որպես հեղինակի հասարակական և ազգային գործունեության արգասիք՝ մի կողմից իրենց գաղափարական էությամբ սերտ կապված են չափածոյի հետ և մյուս կողմից՝ կարևոր են բանաստեղծի աշխարհայացքը որոշելու տեսակետից։

Արձակ թղթերը բաժանված են երեք խմբի՝ հրապարակախոսական, եկեղեցիների միության վերաբերող և անձնական նամակ-թղթեր։ Թղթերից մի քանիսը քննվել են առանձին-առանձին, մի քանիսն էլ՝ միասին վերցրած։ Եկեղեցիների միության խնդրի առթիվ գրված 7—8 մեծ ու փոքր թղթերը շոշափվել են Շնորհալու գործունեության մասին խոսելիս և օգտագործվել որպես փաստեր ու ապացույցներ՝ այդ խնդրի շուրջ եղած սխալ կարծիքները ժխտելու համար։

Շնորհալու մեծությունն ու արժեքը որոշողը նրա չափածոն է։ Եվ քանի որ այս մեծ բաժինը բաղկացած է բազմաբովանդակ տարբեր տեսակի բանաստեղծություններից, դրա համար էլ դրանք ըստ իրենց բնույթի բաշխեցինք մի քանի ենթաբաժինների։

Շարականները, տաղերը և դանձերը իբրև հոգևոր երգեր թեև միասին են վերցված, բայց ստորաբաժանված են։ Հակառակ մինչև այժմ եղած կարծիքի, մենք աշխատել ենք հիմնավորել այն տեսակետը, որ հայկական շարականները օտարամուտ և հայ իրականությունից կտրված չեն, դրանք հայ մշակույթի մի յուրահատուկ տեսակն են, որոնցից շատերը կրոնական լինելով հանդերձ՝ միաժամանակ ունեն աշխահիկ տարրեր՝ հայրենասիրական մոտիվներով։ Շնորհալու չափածոյի մեջ բավականաչափ մեծ տեղ են բռնում դավանաբանական պոեմներն ու ոտանավորները։ Ինչպես շարականները, տաղերն ու դանձերը մինչև օրս համարվել են միայն եկեղեցական բանաստեղծություններ, այդպես միակողմանի են դնահատվել նաև դավանաբանական գործերը, իբր միայն կրոնական ստեղծագործություններ։

Սակայն այս գրվածքներում էլ հաճախակի տեղ են գտել աշխարհիկ, ոչ կրոնական տրամադրություններ, որոնք ցույց են տրված համապատասխան փաստերով ու մեջբերումներով։ Այնուհետև առանձին ուշադրություն ենք դարձրել մանկավարժական-խրատական ոտանավորների վրա, վեր հանելով դրանց ոչ միայն կրթական-ուսումնական, այլև բարոյակրթական և դաստիարակչական նշանակությունը։

Շնորհալու չափածոն արժեքավոր է պատմա-քաղաքական պոեմներով և հանելուկներով։ Այդ երկու ժանրերն իրենց գաղափարական և ձևական կողմերով մենագրության մեջ համեմատաբար ավելի շատ են մեջ բերվել ու շոշափվել։

Եթե կրոնական ոգով գրված բանաստեղծությունների մեջ ձգտում էինք գտնել և ցույց տալ աշխարհիկ մտքեր, ապա տիեզերագիտական և պատմա-քաղաքական թեմաներով գրված այս պոեմներում մեր նպատակն է եղել իրական կյանքի ռեալ նկարագրի հետ միաժամանակ, վեր հանել նաև բանաստեղծի հայրենասիրությունն ու աշխարհայացքը։ Աշխատության նախավերջին գլխում Շնորհալու հանելուկներին մոտեցել ենք տարբեր կողմերից։ Հակառակ ընդունված կարծիքի, որ Շնորհալին գրել է իր միայն 120 հանելուկ, մեր կողմից ձեռագրերից քաղված բազմաթիվ նոր հանելուկներով հաստատվում է, որ Շնորհալու գրչին են պատկանում ո՛չ միայն 120, այլ մոտ 300 հանելուկ։

Այնուհետև քննվում է հանելուկների կազմությունը, դրանց թեմաների, ոգու, ոճի, պատկերների, մտածելաձևի ժողովրդայնությունը և այլն։

Մենագրության վերջին գլուխը վերաբերում է Շնորհալու արվեստին։ Այս մասում ցույց է տրված, թե բանաստեղծը, օգտվելով ու ազդվելով մեր հին մատենագիրներից և ժողովրդական անգիր բանահյուսությունից, ստեղծելով իր ուրույն արվեստը, ձևական և էական ինչպիսի նորություններ մտցրեց հայ միջնադարյան բանաստեղծության մեջ և զարգացրեց այն։

Շնորհալու ժառանգությունը գնահատելիս ձգտել ենք ցույց տալ թե ինչպես նրա պոեզիայում աստիճանաբար մուտք են գործել աշխարհիկ և հայրենասիրական գաղափարները և թե ինչպես դրանք գնալով ավելի տիրապետող են դարձել կրոնական տրամադրությունների հանդեպ։ Ահա թե ինչու բանաստեղծի գործերը վերլուծելիս մենք սկսել ենք շարականներով և վերջացրել հանելուկներով։

Շնորհալին որպես գրող վեր բարձրացավ իր ժամանակի ֆեոդալական սահմանափակ աշխարհայացքից, քննադատության ենթարկեց այդ կարգերի հետ կապված սոցիալական անարդարությունները, միաժամանակ գեղարվեստորեն արձագանքելով դարի առաջադիմական գաղափարներին։ Նա մեր բանաստեղծության անձուկ բովանդակությունը և նրա քարացած ձևերը ազատեց միջնադարյան դոգմատիզմից, ներդնելով իրական կյանքից վերցված կենսունակ ու թարմ թեմաներ՝ աշխարհասիրական և հայրենասիրական մոտիվներով։ Ներսես Շնորհալու արվեստի հմայքը ժողովրդայնությունն է. նրա պատմական, մանկավարժական, քաղաքական պոեմներում և մանավանդ հարյուրավոր գեղեցիկ հանելուկներում շնչում է մեր ժողովուրդը՝ իր ուրույն կյանքի բույրով ու երանգով։

# ԺԱՄԱՆԱԿԸ

Մինչև իր կյանքի վերջը Ներսես Շնորհալին աշխատել ու ստեղծագործել է Կիլիկիայում, ուստի անհրաժեշտ է համառոտակի ծանոթանալ Կիլիկիայի հայ գաղութի և այդ շրջանի պատմության ու մշակույթի հետ, առանց որի անկարելի է ճիշտ գնահատել Շնորհալու գրական և հասարակական գործունեությունը։

Կիլիկիան իր բնական ամրություններով, անմատույց լեռներով և մանավանդ հարստությամբ, աշխարհակալ պետությունների ուշադրությունն է գրավել շատ վաղուց։

Այս բարերը երկրին հին ժամանակներում տիրել են Բաբելոնի և Պարսկաստանի Աքեմենյան թագավորները. ապա այն անցել է Ալեքսանդր Մակեդոնացու ձեռքը և վերջապես միացել Սելևկյան թագավորությանը։

Հայերը դեռ շատ վաղուց էին ծանոթ Կիլիկիային։ Տիգրան Բ-ի հաղթական արշավանքների և առևտրական հարաբերությունների միջոցով հայերը հետզհետե մոտք գործեցին և բնակություն հաստատեցին այս երկրում։

Արշակունյաց թագավորության անկումից հետո՝ մարզպանների և ոստիկանների ժամանակ, ինչպես և Բագրատունյաց տիրապետության տարիներին բազմաթիվ հայեր գաղթեցին Միջագետք և Կիլիկիա։ Արտագաղթը առանձնապես դեպի Կիլիկիա մասսայական բնույթ կրեց XI դարում։ Այս ժամանակներում ներխուժեցին Հայաստան սելջուկների հորդաները, որոնք բերում էին ավեր ու մահ։ Սելջուկ թուրքերի բռնակալ լուծը անտանելի պայմաններ էր ստեղծել հայ ժողովրդի համար։ Ահա այս քաղաքական աննպաստ հանգամանքներն էին պատճառը, որ հազարավոր հայեր իրենց իշխանների և հոգևորականների հետ, տարիներ շարունակ, գաղթում էին դեպի օտար երկրներ՝ իրենց կյանքը փրկելու համար։

Բայց սխալ և միակողմանի կլիներ Հայաստանում ծայր առած այդ արտագաղթը բացատրել միայն սելջուկների ներխուժմամբ։ Սելջուկներից պակաս ավերիչ դեր չէր կատարում բյուզանդական

նենգ քաղաքականությունը՝ Հայաստանը գաղթեցնելու և նրա մարդաշատ, բարեբեր նահանգներին տիրելու նպատակով։

Արտագաղթը սաստիկ ուժեղացավ 1070—1080-ական թվականներին, երբ արդեն սելջուկները նվաճել էին գրեթե ամբողջ Փոքր Ասիան բացի Կիլիկիայից։ Երկրի անտերության և անապահովության պատճառով, 1073 թվականին Գանձակի շրջանից Օշին իշխանը, ինչպես և ուրիշները նույնպես թողնում են իրենց հայրենիքը, գնում Կիլիկիա և բնակություն հաստատում Լամբրոն բերդում։ Բուն Հայաստանի տարբեր շրջաններից այդ տարիներին շատ իշխանների հետ միասին դեպի Կիլիկիա գաղթեցին նաև Քեսունում բնակություն հաստատող Վասիլը, Ներսես Շնորհալու հայրը՝ Ապիրատ իշխանը և ուրիշներ։

Տավրոսի մի ընդարձակ ճյուղի՝ Ամանոսի, կամ Սև լեռներ կոչված սարի փեշերին XI դարում հայերն այնքան էին բազմացել, որ բնակչության գերակշռող մեծամասնությունն էին կազմում։

Հայերի ճնշող մեծամասնությունը, երկրի աշխարհագրական դիրքի ռազմական քաղաքական նշանակությունը և բարենպաստ պայմանները հիմք հանդիսացան հայկական ինքնուրույն իշխանություն ստեղծելու համար։ 1080 թվականին, Լեռնային Կիլիկիայի Բարձրաբերդի շրջանի Գոռոմոզոլ գյուղում, Ռուբեն իշխանի նախաձեռնությամբ հիմք է դրվում հայկական իշխանության։

Կարճ ժամանակում նա կարողացավ շրջակա տարբեր հայ իշխաններին համախմբել նորաստեղծ իշխանության շուրջը՝ երկրի անկախությունն ու անվտանգությունը ապահով դարձնելու նպատակով։ Ռուբենի հիմնած իշխանությունը հետո ուժեղացրեց ու ամրապնդեց նրա որդին՝ Կոստանդինը։ 1095—1096 թվականներին, նա, կազմակերպելով հայ իշխաններին, նվաճեց ամբողջ Լեռնային Կիլիկիան, դուրս քշեց այնտեղից բյուզանդացիներին և իր իշխանության կենտրոն ընտրեց անմատույց Վահկա բերդը։

Կիլիկիայի հայկական իշխանությունն հետզհետե ավելի ուժեղանում, տնտեսական ու քաղաքական մեծ նշանակություն էր ստանում։ Լևոն Բ-ի օրով հայերն այնքան էին կազմակերպվել և զորացել, որ կարողացան հույներից վերցնել Կիլիկիայի արդավանդ դաշտը՝ Ադանա և Մամեստիա քաղաքներով։ Հայերի ստեղծած ինքնուրույն, անկախ պետության առկայությունը ցանկալի չէր Բյուզանդիայի համար, որը ամեն կերպ ձգտում էր ոչնչացնել այդ նորահաստատ, բայց արագ թափով ուժեղացող հակառակորդին և վերանվաճել Կիլիկիան։ Այս մեկ կողմից։ Մյուս կողմից հայերն ստիպված էին պայքարելու նաև խաչակիրների դեմ, որոնք Կիլիկիա

մտան 1097 թվականին: Նրանք ոչ միայն ավազակաբար թալանեցին և կոտորեցին հայերին, այլև հայ իշխաններից շատերին տանջամահ արեցին, շատերին էլ աքսորեցին: Վերոհիշյալ անմարդկային, վայրենի արարքների մասին Մատթեոս Ուռհայեցու մոտ կարդում ենք.

«Դարձեալ ի թուականութեանն Հայոց ՇԿԶ (566) զօրաժողով արար Կոման Ուռհայոյ Պաղտինն, և Կալարան կոման Սրճոյ, և գնացին ի վերայ Հայոց իշխանին՝ որում անուն կոչէր Ապլղարիպ[1]... Եւ կոման... մի առ մի քակեաց զամենայն իշխանսն Հայոց կարգաւ առաւել քան զտունն Պարսից և այսպիսի օրինակաւ հալածականս արար զիշխանսն Հայոց, զայն՝ որ մնացեալ էին ի կատաղի ազգէն թուրքաց»[2]:

Ապա խաչակիրները իշխաններից մի մասին աքսորում են և տակն ու վրա անում առանձնապես Գող Վասլի ամրոցը: Այս բոլորից հետո սկսում են քամնելի, ահասարսուռ դաղանությունները, որոնց մասին պատմագիրը շարունակում է, թե ինչպես խաչակիր կոմսը «մեծաւ նեղութեամբ տարաւդիր արար զամենեսեան, քակեաց զամենայն իշխանութիւն Գող Վասլին, փախստական արար զամենայն դասս ազատաց... և բազումք այն էին՝ որոց զաչսն խաւարեցուցեալ էին, զձեռսն կտրեալ, և զունչսն հատեալ, հատանէին զերանսն և ի փայտ հանեալ սպանանէին զտղայսն անմեղսն վասն ծնողացն խրատեալ հրամայէին: Եւ այսպիսի գործս անթուելի և անպատմելի, զի հանապազ վասն գանձի առնելոյ անիրաւաբար շարշարանօք յաւեր և յապականութիւն դարձուցին զերկիր... բաւեաց և ամենայն երախտեաց մոռացողք. զբազում անիրաւութիւնս նոցա կամէի գրել, բայց ոչ համարձակեցաւ զի ընդ իշխանութեամբ նոցա էաք»[3]:

Այսպես անգութ և բարբարոսաբար էին հատուցում հայերին խաչակիրները: Շատ ծանր էր Կիլիկիայի հայկական նորաստեղծ իշխանության դրությունը, քանի որ բուն երկրից հեռու, օտար հողերի վրա հիմնված փոքրիկ պետությունը շրջապատված էր անհամեմատ ուժեղ թշնամիներով: Հայերը ինքնապաշտպանության համար ստիպված պետք է կռվեին երեք մեծ և ուժեղ հակառակորդների՝ սելջուկների, հույների և խաչակիրների դեմ:

---

1 Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 337:

2 Անդ, 338:

3 Անդ, 338—339 (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են—Գ. Հ.):

Բյուզանդիան էլ սիստեմատիկորեն հարձակումներ էր գործում Կիլիկիայի վրա՝ հայկական իշխանությունը վերացնելու համար։

Ահա այդ նպատակով էր, որ 1136 թվականին Բյուզանդիայի կայսրը մի մեծ արշավանք կազմակերպեց դեպի Կիլիկիա։ Հայերի և հույների մեջ սկսվեց երկար, համառ ու անհավասար կռիվը։ Պաշարված Անարզաբա և Վահկա քաղաքների հայկական զորքն ու ազգաբնակչությունը հերոսաբար էին կռվում թշնամու դեմ և ետ մղում քաղաքների վրա հարձակվող կատաղի գրոհները։ Ընկավ Անարզաբա քաղաքը։ Երկար ու արյունալի մարտերից հետո հույները քանդեցին Վահկա անառիկ բերդի պարիսպը, ներխուժեցին և գրավեցին այդ ամրոցը ևս։ Լևոնն իր ընտանիքի հետ գերի ընկավ։ Հույները նրան շղթայակապ տարան Կոստանդնուպոլիս, որտեղ նա քանտում մահացավ։

Լևոնի գերությամբ հայկական իշխանությունը Կիլիկիայում ժամանակավորապես վերացավ։ Այս երկիրը դարձավ Բյուզանդիայի գաղութներից մեկը։ Հույներն էլ խաչակիրների նման բարբարոսաբար վարվեցին հայերի հետ. կողոպտեցին ու ավերեցին շատ բերդեր ու քաղաքներ, կոտորեցին խաղաղ ազգաբնակչությունը և թալանեցին վանքերի ու եկեղեցիների թանկարժեք սպասներն ու անոթները։ Սակայն այս դրությունը երկար չտևեց։

Լևոնի որդին՝ Թորոսը, փախավ Կ. Պոլսից և 1145 թվականին մտավ Կիլիկիա։ Եկան և Թորոսի երկու եղբայրները՝ Մլեհն ու Ստեփանեն, որոնք մինչ այդ գտնվում էին Հալեպի Նուր-էդ-Դին սուլթանի պալատում։ Թորոսն ու իր եղբայրները անմիջապես սկսեցին կազմակերպել հայ իշխաններին ու զորքը։ Կարճ ժամանակամիջոցում Լևոնի տղաները կարողացան հավաքել ու դասավորել 10.000 կտրիճ զինված հայեր։ Սկսվեց հարձակումը նախ լեռնային և ապա մյուս շրջանների վրա։ Թորոսն ամենից շուտ գրավեց իր հայրական Վահկա բերդը, հետո Սիմանկլա, Առյուծ և այլ բերդեր ու ավաններ։

Թորոսի համարձակությունն ու քաջությունը, մանավանդ ռազմական հաջողությունները կատաղեցրին Կիր Մանվել կայսրին։ Նա անմիջապես դադարեցրեց հունգարացոց դեմ պատերազմը և իր հորեղբոր որդուն՝ զորավար Անդրոնիկոսին մեծ բանակով ուղարկեց Կիլիկիա՝ Թորոսի դեմ։ Հույներն այս անգամ էլ պաշարեցին Մամեստիա քաղաքը։ Հայերը դարձյալ պաշտպանվում և գրոհները ետ էին մղում արիաբար։ Անդրոնիկոսը դաղտագած սպառնում էր պարիսպի վրայից Թորոսին թե «Ձերկաթն, որով զքո հայրն տարաք, ի հետ ունիմք, որով զքեզ կապեալ տարցուք»[1]։

---

1 Անդ, 400։

Բորոսն անչափ զայրանում է այս ամբարտավան մեծախոսությունից և գիշերով անցնում է քաղաքի պարիսպը, անակնկալ հարձակվում հույների վրա, նրանց մատնում խուճապի։ Հույների 12 հազարանոց բանակի մի մասը կոտորվում է, մի մասն էլ հազիվ փախչում, ազատվում։

Անդրոնիկոսի բանակը գլխովին ջախջախելուց հետո հայկական զորքը Բորոսի առաջնորդությամբ դուրս քշեց Կիլիկիայի շրջաններից նաև Իկոնիայի սելջուկներին և Անտիոքի խաչակիրներին։

Այս պատերազմներն, իհարկե, լուրջ էին ու տևական, որոնք շարունակվեցին մինչև XII դարի վերջերը և հայերի համար պսակվեցին հաջողությամբ։

Երկրի աշխարհագրական դիրքը, ժամանակի անցուդարձը, քաղաքական և ռազմական հանգամանքները հարկադրում էին Կիլիկիայի հայկական փոքրիկ, ինքնուրույն պետությանը մի քանի ճակատներում անհավասար կռիվների մեջ մտնել թշնամի զավթիչներից երկիրը պաշտպանելու համար։

Կիլիկիայի հայկական պետության ռազմա-քաղաքական հաջողությունները զուգադիպեցին եղբայրական վրաց ժողովրդի և նրա պետության վերելքի այն շրջանին, երբ հայ և վրաց ժողովուրդները, միացյալ ուժերով պայքարում էին սելջուկյան զավթիչ էմիրությունների դեմ։

XII դարում ստեղծված միջազգային իրադրությունների հետևանքով, արդեն քաղաքական ճգնաժամն էին ապրում սելջուկ-թուրքերի աշխարհադղորդ, լայնածավալ պետությունը, վերջինիս ահավոր ու ավերիչ արշավանքներին ենթակա Բյուզանդիան և մի քանի ճակատագրական պարտությունների ենթարկված խաչակիրները։ Այս երեք խոշոր ուժերն էլ արևելքի և արևմուտքի ճակատներում իրար բզկտելով՝ թուլացել և դեպի անկումն էին գնում։ Ահա այս շրջանում էր, որ իր ներքին կյանքով զարգանում ու բարգավաճում էր Վրաստանը, որն արևելքում գտնվում էր նպաստավոր պայմաններում։ Օգտվելով ստեղծված միջազգային նպաստավոր դրությունից, վրացական իշխանությունը ձեռնամուխ եղավ ազատելու սելջուկների գրաված հողերը։ Դավիթ Շինարարի օրով վրացական շրջաններն ամբողջովին ազատվեցին սելջուկներից։ 1122 թվականին վրաց բանակը ազատագրեց նաև Թիֆլիսը, որը դարձավ միացյալ Վրաստանի մայրաքաղաքը։

Սակայն ծանր դրություն էր ստեղծված հայ ժողովրդի համար։ Բուն Հայաստանի գլխավոր և բարեբեր նահանգները՝ Արարատյան



318–2

ՀԱՅԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐ
ՏՈՒՆ ԴԱՍԱՆՆԱՑԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ

դաշտը, Վանանդը, Շիրակը և այլ շրջաններ ու քաղաքներ ասպատակել ու ավերել էին սելջուկները։ Երկրի մի քանի կարևոր և անառիկ ամրոցները՝ Ամբերդը, Բջնին, Կարսը և ուրիշ շատ բերդեր դեռևս գտնվում էին սելջուկների ձեռքում։ Այս ծանր պայմաններում էր, որ զորեղացած և ազատագրված հարևան վրաց ժողովուրդը օգնության ձեռք մեկնեց հայերին։ Հայ-վրացական բանակներն ու ժողովուրդը միասնական ուժերով համառ կռիվներ էին մղում սելջուկների դեմ՝ հայկական հողերը ևս ազատելու համար։

Մինչև XII դարի վերջը հյուսիսային Հայաստանը ազատագրվեց սելջուկներից։ Այնուհետև Հայաստանն ու Վրաստանը բավական երկար ժամանակ խաղաղ շրջան ապրեցին։ Հայ-վրացական դաշնավոր հարևանությունն ու եղբայրական կապն ավելի ուժեղացավ։ Այս բարեկամական կապի, համագործակցության և խաղաղության պայմաններում երկու երկրներն էլ ապրեցին տնտեսական ու կուլտուրական բարգավաճում և վերելք։

Այսպես էր դրությունն Արևելյան Հայաստանում։

Կիլիկիան, իր պետական, տնտեսական ու կուլտուրական կյանքով, ճիշտ է, աշխարհագրական տեսակետից հեռու էր մայր Հայաստանից, բայց իր բուլանդակ կյանքի զարգացմամբ ոչ միայն կտրված չէր բուն երկրից, այլև նրա պետական ու հասարակական կյանքի զարգացումը իր մի քանի առանձնահատկություններով հանդերձ պայմանավորված էր հիմնականում բուն Հայաստանի կյանքով։ Կիլիկիայի հասարակական-քաղաքական կյանքի զարգացումը, ռազմական ու կուլտուրական հաջողությունները, առանձնապես XII դարում, Ներսես Շնորհալու ժամանակաշրջանում համընկան Վրաստանի հզորացման և հայկական հողերի ազատագրման, հետևապես և Արևելյան Հայաստանի ընդհանուր կյանքի զարգացման հետ։ Այս շրջանը նշանավոր է նաև նրանով, որ հայ և վրաց ժողովուրդները միացյալ ուժերով պայքարում էին օտար գավթիչների դեմ, որն ավարտվեց հաղթանակներով։ Թեև աշխարհագրական և քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով Կիլիկիայի և բուն Հայաստանի միջև չկար սերտ կապ և համագործակցություն, որպեսզի նրանք միացյալ ուժերով պայքարեին սելջուկների, բյուզանդացիների և խաչակիրների դեմ, սակայն այդ երկրները միշտ իրար հետ կապված են եղել, մանավանդ հոգևոր մշակույթով։

Կիլիկիայի՝ մեզ հետաքրքրող շրջանի ընդհանուր պատմության վերաբերյալ լրիվ գաղափար ունենալու համար, անհրաժեշտ է ընդ-

հանուր գծերով ծանոթանալ ժամանակի տնտեսական և կուլտուրական կյանքին։

Ինչպես Արևելյան Հայաստանը, այնպես էլ Կիլիկիան իր պատմության ընթացքում ունեցել է ծաղկման, վերելքի և անկման շրջաններ, որոնք պայմանավորված են եղել երկրի թե՛ ներքին կյանքի զարգացման, և թե՛ միջազգային իրադրության հետ։

Տնտեսական և կուլտուրական զարգացման տեսակետից Կիլիկիան աչքի է ընկնում առանձնապես XII դարում։

Այս շրջանում Կիլիկիայի տերիտորիայի լայնացումը, հատկապես դաշտային Կիլիկիայի գրավումը, որտեղ գտնվում էին նշանավոր առևտրական և արդյունաբերական այնպիսի քաղաքներ՝ ինչպես Տարսոնը, Ադանան, Մամեստիան, երկրի բարենպաստ աշխարհագրական դիրքը, Միջերկրական ծովի հետ սերտ կապը, տարանցիկ ճանապարհները. այս ամենը նպաստավոր պայմաններ էին ստեղծել արդյունաբերության, գյուղատնտեսության և արհեստների զարգացման համար։ Ջարգանում, բազմամարդ ու վաճառաշահ էին դառնում Կիլիկիայի քաղաքները։ Քաղաքների զարգացման, ապրանքային տնտեսության ուժեղացման հետ միաժամանակ խորանում է աշխատավորների ու մանր արհեստավորների շահագործումն ու ունեզրկումը։ Լաստիվերտցու բառերով ասած՝ «Այլև ի ճարպոյ անիրաւութեան ի նմա գործելոցն տոչորեցաւ բարձրաշէն և գեղեցկահարմար ապարանքն, և եղև ամենայն բնակութիւնն իբրեւ հողաբլուր, և վաշխն և նենդութիւնն որ ի նմա խափանեցաւ։ Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ օտարաց, և ի քրտանց տնանկաց փարթամանան, և ի վաշխից և յանիրաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն»[1]։

Կիլիկիայի քաղաքների ու արդյունաբերության զարգացմանը նպաստում էին նաև երկրի բնական հարստությունները։ Տավրոսի լեռների ընդերքից հանվում էին ոսկի, արծաթ, պղինձ, կապար, որոնք նաև արհեստների զարգացման նախապայմանն էին հանդիսանում։ Արգավանդ դաշտային Կիլիկիայում մշակում էին բամբակ, վուշ և այլ կուլտուրական ու արևադարձային օգտակար բույսեր։ Այս մշակույթներից արտահանվում էին Իտալիա և Միջերկրական ծովի ափերում գտնվող այլ երկրներ։ Երկրի ներքին, տնտեսական կյանքի զարգացման հետ միաժամանակ զարգանում է նաև միջազգային առևտուրը՝ արևելքի և արևմուտքի երկրների հետ։ Հայ վա-

---

[1] Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 166—167։

Ճառականներն իրենց ապրանքային նավերով ու քարավաններով հասնում էին մինչև Ղրիմ, Հարավային Ռուսաստան և Արևելյան Եվրոպա։ Կիլիկիա էին մտնում ուրիշ երկրների քարավաններ՝ բազմատեսակ ապրանքներով։ Արաբներն ու սիրիացիք Կիլիկիա էին բերում բամբակ, շաքար, հոտավետ յուղեր և ուրիշ ապրանքներ։ Արևելքի և արևմուտքի հետ առևտրական սերտ կապը, բազմատեսակ ապրանքների ներմուծումն ու արտահանումը նպաստավոր պայմաններ էին ստեղծել Կիլիկիայի ներքին կյանքի զարգացման համար։

* * *

Արտաքին ու ներքին առևտուրը, ընդհանուր տնտեսական վերելքը հետզհետե ձևավորեցին Կիլիկիայի համար առանձնահատուկ ֆեոդալական հարաբերություններ։ XI դարում, բյուզանդական կառավարությունը քաղաքական որոշ ակնկալություններից ելնելով, Հայաստանից հոծ զանգվածով գաղթած հայ իշխաններին և զորագլուխներին նվիրում էր բերդերի, քաղաքների վարչությունը՝ այդ բերդերին ու քաղաքներին հարող մերձակա հողամասերով ու շրջաններով։ Իսկ XI դարի 80-ական թվականներից, երբ Կիլիկիայում հետզհետե վերանում է հույների տիրապետությունը, հայ իշխաններն ու ֆեոդալները աստիճանաբար սկսում են լայնացնել իրենց պատկանող հողերի ու կալվածքների սահմանները և ավելի ուժեղացնում ճորտ գյուղացիների շահագործումը։ Հետագայում այդ ֆեոդալների տնտեսական ուժեղացմանը նպաստեց նաև Լևոն Բ-ի վարած հողային քաղաքականությունը։

Աշխարհիկ ֆեոդալների կողքին մեծ կալվածքներ ու հողեր պատկանում էին նաև եկեղեցուն և վանքերին։ Այս հողերում ու վանքապատկան գյուղերում նույնպես շահագործվում էին շինական գյուղացիները։ Կալվածքներն ու ամրոցները մեծ մասամբ եկեղեցին և վանքերն ստանում էին խոշոր ֆեոդալների կողմից՝ նվերների ու շնորհումների ձևով։

Քաղաքների հարստացումն ու ցոփ կյանքը մի կողմից, գյուղի աղքատացումն ու մանր արհեստավորների քայքայումը մյուս կողմից, հետզհետե խորացնում էին հասարակական կյանքում եղած անհավասարությունները ու շահագործումը։

Ուժեղ բեկում է առաջանում տնտեսական և գաղափարական մարզերում։ Այդ բեկումը երևում է նաև կրոնավորների կյանքում։ Հոգևորականները նույնպես աշխատում են հարստություն դիզել,

վարում են շռայլ և անվայել կյանք, ընկնում է կրոնավորների վարկը և խախտվում կրոնի հիմքերը։

Այսպիսով, աշխարհիկ և հոգևոր կալվածատերերի ուժեղացումը, շինական գյուղացու անգթորեն շահագործումը, քաղաքների ու ապրանքային տնտեսության զարգացումը, հոգևոր խավի հարըստացումն ու բարքերի ապականումը այն միջավայրն էր, որտեղ, նայած ժամանակին ու երկրին, տարբեր ձևերով առաջ են գալիս և աշխուժանում կրոնական աղանդները, որոնք ըստ էության յուրատեսակ մի բողոք են ֆեոդալական կարգերի և նրա աշխարհայացքի դեմ։ Այս շարժումները, իհարկե, կտրված չեն եղել նախորդ դարերի տարբեր անուններ կրող աղանդներից, որոնք այնքան շատ են եղել Առաջավոր Ասիայում Ներսես Շնորհալու ժամանակ։

Ահա այդպիսի աղանդներից էին «Արևորդեաց» կոչվածը Սամոսատում, և մյուսը՝ Ամայք գավառի Թլկուրանի շրջանի Ավան գյուղում։ Դժբախտաբար, Արևմտյան Հայաստանի և առանձնապես Կիլիկիայում հանդես եկած աղանդներն այնպես մանրամասն ուսումնասիրված չեն, ինչպես Արևելյան Հայաստանում եղածները։ Արևորդյաց աղանդը Կիլիկիա է մտել Միջագետքից և Սիրիայից։ Այս երևույթը ուշագրավ է այն տեսակետից, որ թեև բռնդրակեցիները խիստ պատժվել ու հալածվել են, դուրս են արել նրանց իրենց բնակավայրերից և որպես պատիժ բոլորին ցրել Միջագետքի ու Սիրիայի անկյուններում, այնուամենայնիվ այդ աղանդավորները մի դար հետո երևացել են նոր ձևով, նոր անվան տակ։ Թե Արևորդյաց և թե Թլկուրանի աղանդավորական շարժումներն ըստ էության բռնդրակյան աղանդի շարունակությունն ու ձևափոխությունն են եղել՝ ուղղված քրիստոնեության որոշ սկզբունքների և ֆեոդալական կարգերի դեմ։ Թե ինչպես է Շնորհալին ներկայացնում վերոհիշյալ աղանդները և պայքարը նրանց դեմ, կտեսնենք նրա թղթերի մասին խոսելիս։

Միջագետքին ավելի մոտիկ լինելու, այնտեղ գոյություն ունեցող տարբեր աղանդների դեմ պայքարն ավելի ուժեղացնելու և արտաքին թշնամիների վտանգից ազատ մնալու նկատառումով էր, որ Պահլավունի եղբայրները՝ Գրիգորիան ու Ներսեսը կաթողիկոսարանը Սովքից Հռոմկլա տեղափոխեցին։ Հայրապետական աթոռը Հռոմկլա գալուց հետո թե՛ տնտեսապես և թե՛ իր ազդեցությամբ ավելի ուժեղացավ։ Սկզբնական շրջանում, Գրիգոր Վկայասեր և Բարսեղ կաթողիկոսների օրոք այդ աթոռը չուներ դեռ այն ուժն ու դերը, ինչ-

պես Հռոմկլայում՝ Շնորհալու ժամանակ։ Ռուբինյան իշխանության հետ միաժամանակ ուժեղանում էր և Կաթողիկոսարանը։ XII դարի II կեսին Կիլիկիայում կային հարյուրավոր ուսումնական կրոնավորներ։ Կիլիկիայի տարբեր քաղաքներում և վանքերին կից բացվել էին բազմաթիվ վանական դպրոցներ՝ որակյալ վարդապետներով։ Հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ այդ վանական դպրոցներն իր ժամանակին խոշոր դեր են կատարել։

Կիլիկիայում բնակություն հաստատած հայ ազդաբնակությունը, նրա ինքնուրույն պետության պայմանները, արտաքին երկրների հետ ունեցած առևտրական հարաբերությունները ու շփումը, երկրի ներքին կյանքի զարգացումը պարարտ հող հանդիսացան նաև մշակույթի զարգացման համար։

Կիլիկիայի հայկական մտավոր կյանքի զարգացումը սերտ կապված է եղել բուն Հայաստանի հոգևոր կյանքի հետ, որը հիմնականում աճում ու բարգավաճում էր ընդհանուր ազգային կուլտուրայի տրադիցիաներով։

Դեռևս XI դարում Կիլիկիայում հիմնվեցին այնպիսի կրթական օջախներ, ինչպիսին էին Տարսոնի, Սսի, Դրազարկի, Կարմիր վանքի, Սև լեռան, Մեծ քարի, Սկևռայի տարբեր տիպի դպրոցները։ Տնտեսապես ու քաղաքականապես վերելք ապրող այդ երկրում ծաղկում էր և մշակույթը, զարգանում էին արվեստի տարբեր ճյուղերը՝ դրականությունը, երաժշտությունը, նկարչությունը, գրչության արվեստը և այլն։

Այդ դպրոցներում դասավանդում էին աստվածաբանության և փիլիսոփայության հետ նաև մաթեմատիկա, տիեզերագիտություն, տոմարագիտություն և ուրիշ առարկաներ։ Կային և մասնագիտական ուսումնարաններ։ Խոշոր քաղաքներում բացվել էին այդ ժամանակների համար նորություն հանդիսացող աշխարհիկ դպրոցներ։ Վանքերին ու դպրոցներին կից կային հարուստ մատենադարաններ՝ արժեքավոր ձեռագրերով, որոնք իրենց հետ Կիլիկիա էին տարել երկրից դաղթող հայերը։ Բուն երկրից բերած գրքերն ու ձեռագրերը արտագրվում, բազմացվում ու տարածվում էին մինչև Արևելյան Հայաստան։ Հայ իշխաններն ու հոգևորականները հավաքում էին նախընթաց դարերի ձեռագրերն ու հիշատակարանները, վկայաբանական գրվածքները և դրանցից կազմում աստվածաբանական, իմաստաբանական և գեղարվեստական գրքեր։ Կատարվում էին թարգմանություններ տարբեր լեզուներից, որոնց միջոցով հայերը հաղորդակից էին լինում հարևան և օտարազգի կուլտուրական արժեքներին։ Այդ շրջանում կատարած թարգմանություններն

ու հատկապես ձեռագրերից հարյուրավոր նկարազարդված օրինակներ հասել են մեզ, որոնք ցույց են տալիս նաև գրչության արվեստի զարգացումը Կիլիկիայում։ Գիտնականներն ու գրողներն իրենց կապը չէին կտրում բուն Հայրենիքից և ստեղծում էին գրական ու գիտական այնպիսի երկեր, որոնք հավասարապես արտացոլում էին ընդհանրապես հայ ժողովրդի կյանքի այս ու այն կողմը, նրա երազներն ու ակնկալությունները։ «Այդպիսին էր Կիլիկիան... նա մայր երկրից հեռու լինելով հանդերձ, չկտրվեց նրանից, չկորցրեց իր ժողովրդի դարավոր ավանդությունները, կենցաղն ու սովորությունները, գիրն ու գրականությունը, գիտությունն ու արվեստը։ Կիլիկիան որպես Հայաստանի անբաժանելի մի մասը, շարունակեց պահպանել ու զարգացնել հայոց կուլտուրան, գիրն ու գրականությունը, երգն ու երաժշտությունը, նկարչությունն ու մանրանկարչությունը և այլ բազմաթիվ գիտություններ... Կիլիկիան հայոց կուլտուրայի ու կրթության երկարատև ծխացող ամենամեծ օջախներն է ունեցել բուն Հայաստանից հետո»[1]։

Կրոնական-աստվածաբանական գիտելիքների հետ միաժամանակ զարգանում են նաև բնությանն ու աշխարհիկ կյանքին վերաբերող գիտությունները։ Բնակչության ունևոր շերտերի մեջ տարածվում են զարդարանքի և պերճանքի իրերն ու առարկաները։ Ուրախ կյանքը՝ վայելքները, խնջույքները, կեր ու խումը այդ խավերի մեջ դառնում են սովորական երևույթ։ Աշխարհիկ կյանքն օրեցօր ավելի է ուժեղանում և իր շրջանի մեջ առնում ոչ միայն քաղաքի ու գյուղի բնակչության հարուստ շերտերը, այլև հոգևորականության։ Կյանքի և աշխարհայացքի մեջ կատարվում է զգալի տեղաշարժ։ Այս շրջանի դրականությունը դարագլուխ է կազմում մեր պատմության մեջ։ Սկսում է աշխարհականանալ գեղարվեստական և գիտական դրականության լեզուն։ XII դարում Ռուբինյանց տիրապետության ժամանակ, աշխարհիկ լեզուն մուտք է գործում նաև պետական պաշտոնական գործերում։ Իշխաններն իրենց հրովարտակները, դաշնագրերն և այլ գրագրությունները գրում են աշխարհիկ, գրեթե ժողովրդի խոսած լեզվով։

Գրաբար լեզուն սահմանափակվում է միայն եկեղեցական գրականության և մասամբ պատմագրության շրջանակներում։ Մատենագիրներն ու բանաստեղծները լեզվի հետ աշխարհիկ էին դարձնում նաև գրվածքի ոյությը։ Հատորներով գրվող ու արտագրր-

---

[1] Արտաշես Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 319—320։

վող աղոթքների, մեկնությունների, աստվածաբանական և բնագանցական գործերի փոխարեն այժմ գրում էին այնպիսի թեմաների մասին և այնպիսի լեզվով, որ պարզ ու հասկանալի լիներ ժողովրդին: XII դարի երկրորդ կեսից մեր գրականության մեջ երևան են գալիս նոր թեմաներ ու նոր կենսունակ ժանրեր, որոնք իրենց նյութը վերցնում են ժողովրդական առատ աղբյուրներից ու կյանքից: Սկսում են գրել առակներ, հանելուկներ, մանկավարժական ոտանավորներ, տաղեր և սիրային երգեր: Նոտոր փոփոխություն է կատարվում գեղարվեստական արձակի և չափածոյի բնագավառներում: Առաջ են գալիս ազգային, հայրենասիրական մոտիվներով գրված գործեր՝ նոր, թարմ ու հետաքրքիր թեմաներով: Եթե նախընթաց դարերի կրոնական-եկեղեցական գեղարվեստական արձակի և չափածոյի մեջ իսպառ բացակայում էին գրողի անհատականությունը, անձնական ապրումները, նրա հոգեկան աշխարհը, ապա այժմ արդեն երևան են գալիս բանաստեղծի ներքին աշխարհը, նրա ձգտումներն ու նկրտումները:

Շնորհալու դարումն են ապրել ու ստեղծագործել Ներսես Լամբրոնացին, Մատթեոս Ուռհայեցին, Մխիթար Հերացին, Մխիթար Գոշը և ուրիշներ:

Լամբրոնացին՝ Տարսոնի եպիսկոպոսը, հայտնի հրապարակախոս ու ճարտարախոս է եղել, տաղանդավոր գործիչ: Նա գովեստով ու հիացմունքով է չափագրել իր պապի՝ Ներսես Շնորհալու կենսագրությունն ու գործունեությունը: Ունի բազմաթիվ ճառեր, թղթեր ու մեկնություններ: Լամբրոնացու գործերից հայտնի է նրա «Աստենաբանությունը», ուր, ելնելով քրիստոնեական աշխարհայացքի սկզբունքներից, քարոզում է հաշտություն, սեր և միաբանություն: Նշանավոր են նաև Լամբրոնացու գրված ծների վերջում եղած հիշատակարանները, ուր գրանցված են ժամանակի նշանավոր պատմական անցքերը: Նա իմացել է մի քանի լեզու և եղել է իր ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը:

Այս դարի նշանավոր պատմիչն է Մատթեոս Ուռհայեցին: Ուշագրավ է այն երևույթը, որ բացի բանաստեղծներից պատմիչները նույնպես գործածում էին ժամանակակից խոսակցական ոճն ու լեզուն: Ահա այսպիսի պարզ ու հասկանալի լեզվով է գրված Ուռհայեցու «Ժամանակագրություն» գիրքը: Այստեղ պատմիչը տալիս է իր ժամանակի նշանավոր անցքերը մինչև 1136 թվականը: Հայրենիքից հեռու, բայց հայրենասիրության ջերմ զգացումներով լեցուն մի հեղինակ է Ուռհայեցին: Նա մեծ ատելությամբ է պատմում հույների հայահալած քաղաքականության և մահմեդական ցեղերի գա-

զանությունների ու բռնությունների մասին։ Ուռհայեցին սիրով ու մեծ ոգևորությամբ է նկարագրում Սև լեռներում հայ ժողովրդի կատարած քաջությունները օտար բռնակալների դեմ՝ իրենց անկախության համար։

Բացառիկ արժեքավոր ու հետաքրքիր դեմք է այս շրջանում ժողովրդի կողմից շատ սիրված բժիշկ Մխիթար Հերացին, Շնորհալու մոտիկ բարեկամը։

Մխիթար Գոշը թեև Գանձակեցի է, բայց նա ևս ուսման մեջ կատարելագործվելու համար գնում է Կիլիկիա և չնայած ունեցել է վարդապետի կոչում, բայց ծպտյալ սովորում է Սև լեռների դպրոցներում։ Այս երևույթը բնորոշ է նրանով, որ Կիլիկիան այս շրջանում այնքան զարգացած է եղել կուլտուրապես, որ Արևելյան Հայաստանի նշանավոր վարդապետներն անգամ իրենց գիտելիքներն ավելի հարստացնելու համար գնացել են այդ երկիրը։ XII դարում Կիլիկիան հարուստ կուլտուրական միջավայր է եղել ընդհանուր հայության համար։

Այդ ժամանակ, երբ դեռևս իշխում էր միջնադարյան կրոնական թանձր մթնոլորտը, Կիլիկիայի Ամանոսի Սև լեռների փեշերին, թեև հեռու բոն, հայրենի երկրից, ծաղկում էր գիտությունն ու գեղարվեստը՝ աշխարհիկ բովանդակությամբ, գեղեցիկ, նոր ձևերով և ժողովրդական լեզվով։ Գրական այս նոր ուղղության ամենախոշոր ներկայացուցիչը Կիլիկիայում հանդիսացավ Ներսես Շնորհալին։

# ԿՅԱՆՔԸ

Ըստ պատմական աղբյուրների և իր գրվածքներում եղած որոշ տվյալների՝ Ներսես Շնորհալին սերում է Պահլավունիների տոհմից, որոնք V դարից հետո գրեթե մինչև X դարը հայկական պատմության մեջ համարյա չեն երևում: Այս տոհմի նշանավոր մարդիկ իրենց դիրքով ու գործունեությամբ աչքի են ընկնում Բագրատունիների ժամանակներից և հայ իշխանների մեջ կարևոր տեղ գրավում:

Պահլավունի Գրիգոր Համզեի որդիները որպես իշխաններ և պետական գործիչներ, դեռևս XI դարի սկզբներից նշանավոր են իրենց գրաված դիրքով ու ազդեցությամբ: Վասակը՝ Գրիգոր Մագիստրոսի հայրը, սելջուկ թուրքերի մի հորդայի դեմ արիաբար կռվելուց և հաղթելուց հետո, Արայի լեռան ստորոտում, մի ժայռի ստվերում հանգստանալիս, անսպասելի սպանվում է մի դարանակալ թուրքի ձեռքով՝ 1021 թվականին: Վասակի եղբայրը՝ Վահրամը, մեր միջնադարի պատմության մեջ հայտնի է որպես հայրենիքի զինվոր: Նա երկար տարիներ եղել է Բագրատունյաց բանակի սպարապետ, մասնակցել է բազմաթիվ կռիվների և դուրս եկել հաղթությամբ: Ներսեսի սպարապետը մինչև իր կյանքի վերջին օրը, 80 տարեկան հասակում, սուրը ձեռքին պաշտպանում էր իր հայրենիքը և իր եղբոր նման ընկավ օտար բռնակալների դեմ մղած հերոսական մարտերում՝ 1047 թվականին:

Սակայն Պահլավունիների բազմաթիվ իշխանների ու պետական գործիչների մեջ բոլորից ավելի նշանավոր է վերևում հիշված Վասակի անդրանիկ որդին՝ Գրիգորը: Այս երիտասարդ Պահլավունին նույնպես իր հոր ու հորեղբոր հետ շատ մարտերում է եղել և սիրել է զենքը: Բայց ժամանակի ու կյանքի հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ Գրիգորը զենքից ավելի գրիչն ու գիտությունը սիրեց և իր ամբողջ կյանքը նվիրեց դրանց: Սա ինքը՝ Գրիգոր Մագիստրոսն էր:

Գրիգոր Մագիստրոսի դստեր որդու տղան էր Ներսես Շնորհալին: Վերջինիս հայրը՝ Ապիրատը, ուրիշ շատ իշխանների հետ գաղ-

քել էր բուն Հայաստանից և բնակություն հաստատել Կիլիկիայի Մարաշ գավառի Ծովք կոչված բերդում։

Դրսից հարձակվող թշնամիներից պաշտպանվելու համար Ապիրատը Ծովքի բերդն ավելի ամրացրեց։ Այստեղ նա շատ նոր շենքեր շինեց, մի խոսքով՝ բարեկարգեց ամրոցը։ Այս բերդում Ապիրատը շինեց նաև մի մեծ, բարձրագմբեթ եկեղեցի, որն հետագայում Հայրապետական աթոռ դարձավ իր Գրիգորիս և Ներսես որդիների համար։

Ծովքի աշխարհագրական տեղը որոշելու համար տարբեր բացատրություններ են տրվել մեր պատմաբանների ու բանասերների կողմից։ Չամչյանը ենթադրում է, որ Ծովքը գտնվում է Տավրոսյան լեռների մեջ Ծոփաց աշխարհում, այսինքն Խարբերդից և Արղնիից ոչ հեռու գտնվող համանուն Ծովք լճակի մոտերքը, որը Գյոլջուկ[1] կամ Ծովակ անունն է ունեցել[2]։

Բանասեր Տաշյանն էլ ընդունում է, որ Ծովքը Արղնիի լճակն է, Ծոփաց աշխարհում, Խարբերդից ոչ հեռու[3]։

Չամչյանը փորձել է Ծովք ամրոցը Խարբերդի մոտերքը տեղավորելու իր ենթադրությունն հիմնավորել Շնորհալու գործերի մեջ եղած ավյալներով։ Բայց բանասեր Բաբգեն Կյուլեսերյանը իր «Ծովք» փոքրիկ, արժեքավոր ուսումնասիրության մեջ համոզիչ կերպով ցույց է տվել, որ Շնորհալու հիշատակությունները Ծովքից Հայրապետական աթոռը Հռոմկլա տեղափոխելու մասին վկայում են, որ Ծովքը գտնվում է ոչ թե Ծոփաց աշխարհում, Խարբերդին մոտիկ, այլ Կիլիկիայի Մարաշ գավառում։

Բ. Կյուլեսերյանի բերած փաստերին պետք է ավելացնել նաև Մատթեոս Ուռհայեցու վկայությունը, որ Ծովքը գտնվում է Կիլիկիայի Մարաշի կամ Տլուք գավառում և ոչ թե Ծոփաց երկրում։

«Յայսմ ամի տէրն Անտիոքու որ և բրինձ կոչի և անուն նորա Սիր Նաղտ, եկն յաւուրս աշնանային և յանհոգս եղեալ իջանէր յերկիրն Տլոյ և ի բերդն կաթողիկոսի, որ կոչի Ծով, և ասպատակս ափոէր ի շրջակայ երկիրն, աւար առնելով և գերելով զթուրքմանսն

---

1 Կյոլ կամ գյոլ, թուրք-թաթարական լեզուներով նշանակում է լիճ, լճակ. ինչպես՝ Պալըքգյոլ (ձկան լիճ), Ղարագյոլ (սև լիճ), Բինգյոլ (հազար լիճ) և այլն։

2 Չամչյան, հատ. Գ, էջ 18, Վենետիկ, 1786 (մեջբերումների ընդգծումները մերն են—Գ. Հ.)։

3 Բաբգեն Ծ. վ. Կյուլեսերյան, Ծովք, Վիեննա, 1904, էջ 5։

զորս գտանէր ի սահմանան ունելով ընդ իւր մարդս հազար ընդ ձիաւոր, ընդ ծլուկ, ընդ խարուանդայ, ընդ հետևակ»[1]։

1102 թվականին Շուկը կոչված այս դղյակում է ծնվել ապագա մեծ բանաստեղծ Ներսես Շնորհալին[2]։

Ներսեսը դեռ շատ փոքր էր, երբ նրա հայրը՝ Ապիրատը, Շուկի բերդի պաշտպանության համար մղվող կռիվներից մեկում նետահար սպանվեց։ Ապիրատն ուներ 4 տղա՝ Վասիլ, Գրիգոր, Ներսես և Շահան։ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսն իր այս փոքրիկ թոռնիկներից, սկզբում Գրիգորին և ապա 2 տարի հետո էլ Ներսեսին տարավ իր մոտ՝ Կարմիր վանքում կրթելու և դաստիարակելու համար։

Վկայասերը թոռնիկներին իր մոտ տանելուց մի երկու տարի հետո՝ 1105 թվականին վախճանվում է։ Հեռատես Պահլավունին իր մահից առաջ Անի քաղաքից կանչում է իր քրոջ որդի Բարսեղ Անեցի կաթողիկոսին, կտակում է նրան, որ իր մահից հետո հոգ տանի, կրթի ու դաստիարակի Գրիգորին և Ներսեսին, առաջինին կաթողիկոս դարձնելու նպատակով։ Վկայասերի մահից հետո այս երկու եղբայրների սննդի ու կրթության գործը ամենայն բարեխղճությամբ կարգավորում է Բարսեղ կաթողիկոսը։ Երբ Գրիգորը հասունանում է, Բարսեղը նրան ձեռնադրում է քահանա։

Քեսունի Կարմիր վանքում[3] Գրիգորն ու Ներսեսը ստանում են հիմնական կրթություն։ Այդ ժամանակ Կիլիկիայի բազմաթիվ վանքերի ու նրանց կից տարբեր տիպի դպրոցների մեջ Կարմիր վանքի դպրոցը հռչակված էր նշանավոր գիտնական վարդապետներով։ Վերջիններիս մեջ ավելի համբավավոր էր այդ վանքի առաջնորդ եպիսկոպոս Ստեփանոս Մանուկ գիտնականը, որը խոշոր ու վճռական դեր է խաղացել Շնորհալու և ուրիշների ուսումնառության գործում։ Այս գիտնականն ունեցել է արտակարգ ընդունակություններ և բազմակողմանի գիտելիքներ։ Այնքան սրամիտ ու խելոք է լինում Ստեփանոսը, որ պատանի հասակում Արևելյան Հայաստա-

---

1 Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 427։

2 Ներսես անունը Շնորհալուն տրվել է իր կաթողիկոս եղբոր կողմից քահանա ձեռնադրելու ժամանակ՝ ի հիշատակ Ներսես Պարթև կաթողիկոսի։ Իսկ թե ինչ է եղել նրա մկրտության, այսինքն՝ առաջին, իսկական անունը, հայտնի չէ։

3 Օրմանյանը և Զարբհանալյանը Շուղրի և Կարմիր վանքերը սխալմամբ նույնացրել են։ Մ. Աբեղյանը, հիմնվելով Շնորհալու «Վիպասանությունից» մեջբերված քաղվածքների և Մ. Ուռհայեցու վկայությունների վրա, ցույց է տալիս, որ Շուղրի ուխտը (վանքը) և Կարմիր վանքը տարբեր են։ Շուղրի վանքում քաղված է Բարսեղ Անեցի կաթողիկոսը, իսկ Կարմիր վանքում՝ Գրիգոր Վկայասերը և Գող Վասիլը (Մ. Աբեղյան, Հայ գրականության պատմություն, Բ գիրք, Երևան, 1946, էջ 76)։

նում ձեռնադրվում է քահանա։ Սելջուկների արշավանքների պատճառով փախչում է Կիլիկիայի Շուղր լեռների Կարմիր վանքը և կատարելագործվում ուսման մեջ։ Ապա կաթողիկոսը նրան նշանակում է Բեմի առաջնորդ, նրա իրավունքների տակ դնելով Գող Վասիլի իշխանության ներքո գտնվող բոլոր վայրերն ու վանքերը՝ ներառյալ և Կարմիր վանքը։ Դրանից հետո է, որ Կարմիր վանքը Կիլիկիայում հռչակվում է որպես բարձրագույն դպրոց, ուր տարբեր ժամանակներում Արևելյան Հայաստանից շատ վարդապետներ են գալիս այստեղ սովորելու և ստեղծագործելու։ Այս վանքի համբավն սկսվեց դպրոցի առաջին ընթացավարտներով, որոնց մեջ ամենից շատ աչքի էր ընկնում Ներսեսի մեծ եղբայրը՝ Գրիգորը։

Ներսես Շնորհալին մինչև 20 տարեկան հասակը սովորում է Կարմիր վանքի դպրոցում։ Նա իր մտավոր պաշարով, համեստությամբ, աշխատասիրությամբ և շնորհքով շատ նման է իր ուսուցիչ Ստեփանոսին։

Ստեփանոս Մանավի աշակերտներից են Սարգիս Շնորհալին, Բարսեղ Շնորհալին, Իգնատիոս Շնորհալին և ուրիշներ։ Այս համբավավոր գիտնականը մի բավանդակալից ու գեղեցիկ դամբանական է ասել Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի թաղման առթիվ. դրժբախտաբար այդ և նրա մյուս գործերից մինչև օրս մեզ ոչինչ հայտնի չէ, թերևս հետագայում ձեռագրերում հայտնաբերվեն... Բայց Ստեփանոսի աշակերտների գործերը վկայում են նրա գիտության մասին և անմահացնում են նրան հիշեցնելով հին, իմաստալից մի ասացվածք՝ թե «ծածկեալ գիտութիւնն վարդապետի՝ բերան են աշակերտքն»։

Ստեփանոս Կարմիրվանեցի գիտնականն ու Կարմիր վանքին կից բարձրագույն ուսումնարանն հանդիսանում են այն անսպառ մտավոր աղբյուրն ու դանձարանը, որտեղից առատորեն Շնորհալին վերցրել է իր հոգեկան պաշարը՝ գործելու և ստեղծագործելու համար։

* * *

Ներսեսի եղբայրը՝ Գրիգորիսը[1], 20 տարեկան հասակում արդեն նստել էր հայրապետական աթոռին։ Թեև նա շատ երիտասարդ էր ու անփորձ, սակայն նրա ուսուցիչ Ստեփանոս Մանավը իր խորհուրդներով ու օգնությամբ ցույց էր տալիս, թե ինչպես պետք է վարել հայրապետական գործերը։ Այս շրջանում Ներսեսը դեռ շարունակում էր սովորել։ Գրիգորիսը եղբոր նկատմամբ շատ հոգա-

1 Կաթողիկոս օծվելուց հետո կոչվում է Գրիգորիս։

տար էր։ Երկու եղբայրների սերն ու ներքին խոր կապը հիշեցնում է Գրիգոր Նարեկացու և իր եղբայր Հովհաննեսի միջև եղած ջերմ սերը և համագործակցությունը։ Գրիգորիսը լուրջ զբաղվել է Ներսեսի կրթության գործով. «...Կրթէր և զեղբայրն Ներսէս ի վարժումն իմաստից յաստուածայնոց տառից և կարգէր նմա դաստիարակս արս դիտնականս սուրբս և առաքինիս, որոյ ընկալեալ և նոցանէ զսերմն բանին, հարիւրաւոր որպէս երկիր արդաւանդ պտղաբերէր, և վտքր ինչ ժամանակ կրթութեան՝ ցուցանէր զվարս սուրբս և զիմաստութիւն դիտութեանն՝ յոքունց առաքինեաց և դիտնոց վկհագոյն...»[1],—գրում է Շնորհալու անանուն կենսագիրը։

Գրիգորիս Պահլավունի կաթողիկոսը, պատանի, բայց մտքով հասուն եղբորը՝ Ներսեսին, շուտով ձեռնադրում է սարկավագ և շատ կարճ ժամանակից հետո՝ քահանա։

Ներսեսը ինքն էլ «Վիպասանութեան» վերջում հիշատակում է, որ հասունանալուն պես օծվել է քահանա.

Մինչև յարբունս հասուցեալ,
Եւ քահանայ ձեռամբ օծեալ...[2]

Այնուհետև նա առանց հանգստի, ավելի եռանդով ու թափով զբաղվում է ընթերցանությամբ և ինքնակրթությամբ։

«Ոչ ունելով մարմնական ինչ հանգիստ, այլ անդադար ժուժկալությամբ կրթութեան յաղօթս, յընթերցումն աստուածաշունչ տառից, և միշտ և յարակայ ի նոյն քննութիւն. ուստի և ընկալաւ զշնորհս գիտութեան ի Հոգւոյն սրբոյ... Մեկնէր զխորագոյն միտս բանի սուրբ գրոց, որով հրաշանայինն ընդ քաջակորով իմաստութիւնն, և ընդ սքանչելի սուրբ և յատակ տեսութիւնն դասք ընտրելոց վարդապետացն որ զայնու ժամանակաւն էին»[3]։ Լամբրոնացին վկայում է, որ Շնորհալին անցել է ուսումնառության և ինքնակրթության հարուստ դպրոց.

Պէս-պէս ընդ կարգ՝ ուսմանց անցեալ,
Յանդ և պատշաճ խրատու կրթեալ.
Որ աստ գրով կա շարադրեալ[4]։

Բայց մեր հին դրականության պատմության մեջ դրականագետ Գաբրիել Ջարբհանալյանը, պրոֆ. Մանուկ Աբեղյանը և ուրիշները

1 «Սոփերք Հայկականք», ԺԴ, Վենետիկ, 1859, էջ 32—33։
2 Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 558։
3 «Սոփերք», ԺԴ, էջ 34—35։
4 Ներսէս Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Կ. Պոլիս, 1825, էջ 220։

այն կարծիքին են, որ իբր Ներսեսը դժգոհում է, թե ժամանակի ու քաղաքական հանգամանքների բերումով նա չի կարողացել ստանալ լավ կրթություն, որ ուսման ու կրթության տեղերը քիչ են եղել Հայաստանում և այլն: Սրա համար վերոհիշյալ գրականագետներն ու բանասերները վկայակոչում են Շնորհալու «Վիպասանություն» գործի նախաբանից և Կիր Մանվելին գրած առաջին նամակից որոշ տողեր:

Նախ՝ Շնորհալին այս չափածո մեծ գործը՝ «Վիպասանությունը» գրել է 20—21 տարեկան հասակում. դա նրա առաջին, անփորձ աշխատությունն է: Երկրորդ՝ Շնորհալու կրթությունն և ուսումը գնահատելու կամ որոշելու համար պետք է նկատի ունենալ նրա 30—40 տարեկան հասակը, երբ նա հասուն էր ու կատարյալ:

Ահա «Վիպասանությունից» այն տողերը, որոնց վրա այդ գրականագետները հիմնում են իրենց կարծիքը Շնորհալու կրթության մասին խոսելիս.

...Չի հրհանգից վարժարանի,
Չեմ տակաւին ներկուտ բանի:
Յաթենականն քաղաքի
Չանձն իմաստուք ոչ կըրթեցի:
Ոտր լրսարանն Պղատոնի.
Եւ չափ ոտիւք Հոմերովնի.
Ոտր ստորոգօղն Արիստոտէլ,
Տասըն բանի գրողն էի.
Ոտր հոյլք ամեն հրուետորի,
Ժողովարան Ճարտասանի,
Ներհըմտութիւն քերականի,
Բայի քերտմըն քերթողի[1]:

Խոսելով Շնորհալու ժամանակի, նրա ստացած կրթության մասին և մեջ բերելով այդ տողերը, գրականագետ Ջարբհանալյանը եզրակացնում է. «Ազգին այսպիսի բանասիրական դիրքին մեջ՝ Շնորհալույն ուսումն և գիտութիւնք իր փափաճանաց համեմատ չքարձրացան[2], որովհետև Ուսմանց և կրթութեան տեղուանք սակաւաւորք կը թուին յայնժամ ի Հայաստան և որոց կարողութիւնը և պետքը զգացած է և Շնորհալի՝ որ աւեն անցնելեն ետքն (բավա-

---

[1] «Բանք չափաւ», էջ 496:

[2] Գ ա բ ե գ ի ն Ջ ա ր բ հ ա ն ա լ յ ա ն, Հայկական հին դպրության պատմություն, Վենետիկ, 1897, էջ 623:

կանի երկար ժամանակ, որովհետև «Վիպասանությունը» գրվել է 1121 թվականին, իսկ Մանվելին գրած նամակը՝ 44 տարի հետո— Գ. Հ.) ալ հառաչանօք կդրէր առ կայսրն Մանուէլ. «Ուր մեր վարժարանք՝ ի թագաւորական պատրաստեալ հրամանացն. և կամ յոյս փառաց և պարգևաց՝ յառաջացելոցն չիմասաս, որ մանաւանդ մանկաբարոյից են առաւելագունի պատճառ փուճոյ կրթութեանն»[1]:

Զարբհանալյանից մոտ հիսուն տարի հետո, պրոֆ. Մանուկ Աբեղյանն իր «Հայ հին գրականության պատմության» Բ գրքում ներսես Շնորհալու կենսագրության և կրթության մասին խոսելիս՝ դարձյալ նույն մեջբերումների վրա հիմնված, գրեթե նույն կարծիքն է հայտնում.

«Ուսումնասեր լինելով, նա շատ ցանկացել է բարձրանալ իբրև գիտնական, բայց ժամանակի շփոթ դրությունը թույլ չի տվել նրան հասնել իր նպատակին: «Արտաքին» գիտությունների ուսման պակասը նա զգացել է դեռ իր գրական գործունեության սկզբում: «Վիպասանության» վերջում նա ինքն իրեն անվանում է «համբակ նուաստացեալ», իսկ նախերգանքի մեջ հայտնելով իր «անկարությունն» և «տգիտությունը»[2]:

Պետք է ասել, որ ինչպես «Վիպասանություն»-ից մեջ բերված տողերը չեն կարող չափանիշ լինել Շնորհալու կրթության աստիճանը որոշելու, այնպես էլ Մանվելին գրած նամակից կատարված մեջբերումը չի կարող ցույց տալ, թե Կիլիկիայում և Հայաստանում այդ ժամանակ «ուսմանց և կրթությանց տեղւոյանք սակաւաւոր կը թուին» կամ «Շնորհալույն ուսումն ու գիտությիւնք իր փափաքանց համեմատ չբարձրացան»:

Նախ նկատենք, որ «Վիպասանությունից» առնված մեջբերումը չի արտահայտում այն, ինչ Շնորհալին է ուզեցել ասել, որովհետև նախքան այդ տողերը Շնորհալին ասում է, որ եթե ինքը ուսման կարիք է զգում, իրեն «տգետ» ու «անկարող» է համարում ամեն քանի մեջ, դրա պատճառը իրեն դեռահաս լինելն է:

Վասն այսորիկ ոչ յիշեցի·
Զանկարութիւնս յամենայնի,
Զտգիտութիւնս իմաստ բանի,
Վասն անկատարս հասակի[3].

---

1 Անդ, էջ 622:

2 Մանուկ Աբեղյան, Հայ հին գրականության պատմություն, Բ գիրք, էջ 77 (ընդգծումը մերն է—Գ. Հ.):

3 «Բանք չափաւ», էջ 495:

Մեր հին գրողների ու մատենագիրների մոտ ընդունված գրական սովորույթ է եղել՝ համեստորեն իրենց անվանել «տկար», «տըգետ», «ոչ ներհուն», «անկարող», «համբակ», «յետին» և այլն։ Նույնիսկ հանճարեղ Գրիգոր Նարեկացին, այն էլ՝ ոչ թե Շնորհալու պես իր երիտասարդ հասակում, այլ կյանքի վերջին տարիներին, «Ողբերգության մատեանը» վերջացնելուց հետո, հիշատակարանում իրեն համարում է.

«յետին բանաւիրաց և կրտսեր վարժապետաց»[1]

Շնորհալին իր կյանքի ու մտքի լիակատար հասուն շրջանում էլ՝ 65 տարեկան հասակում, դարձյալ գործածում է այդպիսի համեստ ոճ։ Մանվել կայսրին գրված հենց վերոհիշյալ առաջին նամակի մեջ իր մասին ասում է.

Եւ այսմ բարւոյ գործակից լինել զմեզս տկարութիւն...
Եւ փոխանակ զմեզս ճաստատեաց զանարժանութիւն...

կամ՝ ...զիարիլ կարիլ մի գիտութեան հնար էր առ համատարածն ծովն իմաստութեան համարձակել մերձենալ ի հարցումն և ի պատասխանիս»[2] և այլն։

Մի ուրիշ, դարձյալ Մանվելին հասցեագրված նամակում, նա իրեն համարում է մտքով ու գիտությամբ աղքատ, նվաստ դուզնահայ[3] և այլն։

Այդ համեստ ոճը ընդունված է եղել և Շնորհալու ժամանակ։ Ներսես Լամբրոնացին, որը գիտությամբ ու պատրաստականությամբ հայտնի է մեր հին գրականության պատմության մեջ, իր «Գովեստ»-ի սկզբում նույնպես նույն ոճով ու համեստությամբ է հիշում իր մասին.

Այլ զի անվարժ ի չափ տաղի,
Ոտանաւոր տառից կարգի.
Քերթողական մեծ արհեստի,
Չեղեալ ներհուն ըստ արժանի...[4]

Որ Ներսես Շնորհալին ստացել է բազմակողմանի կրթություն, որ նա հռչակված է եղել իր գիտությամբ ոչ միայն Կիլիկիայում կամ

---

[1] Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, 1840, Վենետիկ, էջ 268։
[2] Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Երուսաղէմ, 1871, էջ 110—111։
[3] Անդ, էջ 120։
[4] «Թուղթ ընդհանրական», կ. Պոլիս, 1875, էջ 217։

ամբողջ Հայաստանում, այլև երկրի սահմաններից շատ հեռու, շատ ազգերի մեջ, վկայում են նրա ժամանակակիցները և պատմագիրները։ Ներսես Լամբրոնացին իր «Դրուատ պատմագրաբար» պոեմում, որը բովանդակում է Ներսես Շնորհալու կյանքն ու գործունեությունը, իր ուսուցչի առավելությունների և հոգևկան բարեմասնությունների մասին գրելիս հիացմունքով է խոսում նաև նրա կրթության մասին։

Հրուչակ յաշխարհ՝ այս հասանի,
Անունն յոլորտս երկրի գովի.
Յայտնի իմաստն արտափայլի,
Ախորժելի բանքրն լրսի...[1]

Շնորհալու գիտության և իմաստության համբավի մասին Կ. Գանձակեցին գրում է. «Այս Ներսէս առաւելեալ էր իմաստութեամբ քան զհոլովս ի ժամանակի անդ ոչ միայն քան զվարդապետս Հայոց, այլև քան զՅունաց և յԱսորոց. այնքան՝ զի համբաւ իմաստութեան նորա տարածեցաւ ընդ ամենայն ազգս»[2]։

Ապա ի հաստատություն իր ասածների, Գանձակեցին պատմում է մի ավանդություն, թե ինչպես օտար երկրներից իմաստուններ ու գիտնականներ գալիս էին Ներսեսի մոտ՝ նրա հետ ծանոթանալու և միաժամանակ նրա գիտելիքներն ստուգելու, թե արդյո՞ք ճի՞շտ է նրա վերաբերյալ տարածված համբավը։ Այդ գիտնականները Շնորհալու հետ ծանոթանալուց և բանակցելուց հետո,—գրում է պատմագիրը,—համոզվում էին, որ իրոք ճիշտ է ինչ որ ասում են նրա գիտության ու շնորհքի մասին և վերադառնում էին իրենց երկիրը՝ համեմատելով Ներսեսին Գրիգոր Աստվածաբանի հետ։

Անկասկած Շնորհալին ունեցել է հարուստ, հիմնավոր կրթություն, այլապես նա չէր կարող ստեղծագործել բարձրարվեստ ու հարուստ բովանդակությամբ այնպիսի գործեր, ինչպես տաղերը, «Յիսուս Որդին», «Ծդեսիոյ ողբը» հանելուկները և մյուսները։ Շնորհալու բազմաթիվ արձակ թղթերն ու չափածո գործերը վկայում են, որ նա լավ ծանոթ է եղել ժամանակի աստվածաբանական, փիլիսոփայական, բնագիտական, ճարտասանական գիտություններին և մանավանդ հունական արվեստին։

---

1 «Թուղթ ընդհանրական», Կ. Պոլիս, 1875, էջ 221։

2 Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն Հայոց (աշխատասիրությամբ Կարո Մելիք-Օհանջանյանի), Երևան, 1961, էջ 118։

Այնուհետև, արդյո՞ք ճիշտ է, որ Շնորհալու ժամանակ «ուսմանց և կրթութեանց տեղւանքը սակաւաւորք էին», որ նա չի կարողացել հիմնավոր կրթություն ստանալ։

Վերն ասվեց, որ ուսման և կրթության դործը Շնորհալու ժամանակ Կիլիկիայում ավելի բարձր աստիճանի վրա է եղել քան երբևէ։ Բազմաթիվ վանքերին կից գործում էին տարբեր տիպի դպրոցներ, ուր աստվածաբանական գիտելիքների կողքին մարդիկ սովորում էին նաև աշխարհիկ գիտություններ։ Այդ վանքերի դպրոցները հանդիսացել են ժամանակի կուլտուրական օջախները։ Հիշենք այդ վանական-ուսումնական հաստատությունների նշանավորներից Կարմիր և Դրազարկի վանքերը՝ գիտնական միաբաններով, ապա Սկևռա, Գռներո, Անդրիասեանց, Պերճերի և Ականց վանքերն իրենց տարբեր տիպի դպրոցներով։

Կիլիկիայի այդ շրջանի ուսման, կրթության և Սև լեռան, Դրազարկի, Մեծ քարի, Սկևռայի Կրակա դյուղաքաղաքի ու Սիս քաղաքի դպրոցների մասին խոսելիս Աբ. Մովսիսյանն «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության» գրքում բազմաթիվ փաստերի հիման վրա գրում է.

«Տանելով իրենց հետ հայոց դպրոցների դարավոր ավանդությունները ու փորձը, տասնամյակներ շարունակ շփվելով հին արևելքի ու արևմուտքի իրենց շրջապատող մի շարք ժողովուրդների հետ, հայերը Կիլիկիայի տերության սահմաններում ծաղկեցրին գիտությունն ու արվեստը, ստեղծեցին տարբեր տիպի դպրոցական հաստատություններ ու գրչության օջախներ»[1]։

Ոչ միայն Ներսես Շնորհալու ժամանակ, այլև նրանից առաջ էլ Կիլիկիայում գոյություն են ունեցել բազմաթիվ ու բազմատեսակ դպրոցներ։

«Ինչպես տեսանք, Ներսես Շնորհալու ժամանակ և մանավանդ, նրանից առաջ Կիլիկիայում կային բազմատեսակ, տարբեր տիպի եւ բնույթի դպրոցներ, բացի վանական և եկեղեցական դպրոցներից, կային նաև վարժարաններ ու հասարակական այլ դպրատներ»[2]։

Այո, Ներսես Շնորհալին իր երիտասարդ հասակում շատ է ցանկացել սովորել Աթենքի բարձրագույն դպրոցներում, հռոմեական արվեստի և հունական գիտության մեջ ուզեցել է խորանալ և կատարելագործվել։ Բայց այդ միայն ցանկություն է եղել, որովհետև

---

1 Աբգար Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 308 (ընդգծումները մերն են—Գ. Հ.)։

2 Անդ, էջ 310։

այդ ժամանակներում բոլորովին այլ էին հայերի և հույների հարաբերությունները և քաղաքական դրությունը։ Այլ էր դրությունը Շնորհալուց դարեր առաջ։ Դավիթ Անհաղթից և Անանիա Շիրակացուց հետո, եղակի մարդկանց անուններ են հայտնի, որոնք գնացել են Բյուզանդիա սովորելու։ VIII դարում հիշվում է միայն Ստեփանոս Սյունեցին, այնուհետև մինչև XI դարը, մինչև Գրիգոր Մագիստրոսը, որևէ նշանավոր անուն չի հիշվում։ Գրիգոր Մագիստրոսով ու նրա ժամանակով էլ դրեթե փակվում է Հունաստան գնալու սովորելու շրջանը։

Մանվել կայսրին գրած նամակում ցավով ու ափսոսանքով է խոսում մեծ հայրենասերը հայկական թագավորության ժամանակ գոյություն ունեցած պետական դպրոցների մասին։ Շնորհալին դժգոհում է, որ այդ ժամանակ չեն եղել, կամ քիչ ու անորակ են եղել հայկական դպրոցները։ Նրա ափսոսանքն այստեղ ավելի շատ վերաբերում է հայկական պետականության, թագավորների հրամանով ու հովանավորությամբ բացված դպրոցներին, որպիսիները նրա օրոք գոյություն չունեին։ Նամակում այդպիսի ափսոսանքով է խոսում նա պետության հովանավորությունից զրկված նաև հայրապետական աթոռի մասին։

Շնորհալու կրթության և Կիլիկիայի հայկական դպրոցների վերաբերյալ գոյություն ունեցած այս ոչ ճիշտ դրույթից էլ բխել է մի ուրիշ, իրականության չհամապատասխանող կարծիք։ Բազմավաստակ գիտնական Ղևոնդ Ալիշանը, հավանաբար, նույնպես հենվելով Շնորհալու հունական կրթություն ստանալու փաստի և հայկական թագավորական վարժարաններին վերաբերող վերևում մեջ բերված տողերի վրա, ենթադրում է, թե այդ շրջանում Հայաստանում և Կիլիկիայում «ոչ միայն այն ըղձացեալ նրբամիտ հելլենական Պղատոնք և Արիստոտելք չկային, այլև անոնց հասնելու ճամբան ալ շատ բանուկ չէր, այսինքն յունական դպրութիւն չկար. և նույնիսկ յիշեալ գիտուն և դրագէտ վարդապետք ԺԲ արծաթի դարուա, կամ քիչ կամ ոչ գիտէին յունարէն լեզու...»[1]։

Իհարկե այդպես չի եղել։ Բոլոր քաղաքական իրադարձությունների և ժամանակի ոգու հետևանքով Հայաստանից և Կիլիկիայից մարդիկ այլևս չէին գնում Հունաստան սովորելու, կամ ժամանակի դպրոցական ծրագրերում և դասընթացներում այլևս իշխողը ոչ թե հունական, այլ ազգային, հայկական ոգին էր, այդ դեռևս չի նշանակում, որ ԺԲ դարում հայկական դպրոցներում ծանոթ չէին Հոմե-

---

1 Ղևոնդ Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 62։

րոսի, Պլատոնի, Արիստոտելի գործերին, կամ դրանց նույնիսկ մոտենալու ճամփան փակ էր և դիտնականներն անգամ հունարեն չդիտեին։

Ներսես Շնորհալու դարը հարուստ է ազգային մատենագիրներով, դիտնական վարդապետներով, դպրությամբ զբաղվողներով ու ստեղծագործողներով։ Սրանցից անշուշտ մեծ մասն ունեցել է բարձրագույն կրթություն, որոնցից շատերն իմացել են ոչ միայն հունարեն, այլև ասորերեն, արաբերեն և պարսկերեն։ Հիշենք դրանցից մի քանի նշանավորների, որոնք ապրում ու գործում էին բուն Հայաստանում և Կիլիկիայում։

Ամենահռչակավոր գիտնականն այդ ժամանակներում Հովհաննես Սարկավագ Իմաստասերն էր. նա «Հաղբատում կրթությունն ավարտելուց հետո եկել է Անի և այնտեղ դպրոց հիմնել, որը, ինչպես երևում է, շատ խոշոր դեր է խաղացել միջնադարյան Հայաստանում...,—գրում է պրոֆ. Ա. Աբրահամյանը,—այնպիսի դպրոց, ուր դասավանդվել է Արիստոտելի փիլիսոփայությունը, Թրակացու քերականությունը, Փիլոնի մաթեմատիկան, տոմարագիտություն, ճարտասանություն և այլն»[1]։

Անիի դպրոցում Հովհաննես Սարկավագ Իմաստասերն ունեցել է բազմաթիվ աշակերտներ, որոնցից շատերը նույնպես դասավանդել են թե Անիում, և թե ուրիշ վայրերի վանքերին կից դպրոցներում։ Հիշենք նրանցից նշանավոր ժամանակագիր Սամվել Անեցուն, Երեմիա Անձրևիկին, Խաչատուր, Հովհաննես, Գրիգոր վարդապետ-Երեմիա Անձրևիկին, Խաչատուր, Հովհաննես, Գրիգոր վարդապետներին և այլն։ Անիի բարձրագույն դպրոցում կամ ճեմարանում դասավանդվող առարկաները ցույց են տալիս, որ այդ շրջանում ոչ միայն վիճակ չի եղել «հունական դպրության ճամփան», այլ լայն ու խոր կերպով է դասավանդվել այդ դպրությունը։ Բազմաթիվ փաստեր կան, որ բացի դասախոսող գիտնականներից, հունարեն իմացել և հունական դպրությունից օգտվել են նաև ունկնդիր ուսանողները։

Շնորհալու ժամանակակիցը և մոտիկ բարեկամ բժշկապետ Մխիթար Հերացին իմացել է հունարեն, արաբերեն և պարսկերեն։ Մխիթար Հերացին թարգմանասիրել է տարբեր լեզուներով գրված բժշկական շատ գրքեր և ժամանակի ժողովրդական լեզվով գրել է իր հայտնի «Ջերմանց մխիթարություն» աշխատությունը։

---

[1] Աշոտ Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 25—26։

Ինչպես Շնորհալու, այնպես էլ Մխիթար Գոշի և ուրիշ նշանավոր գիտնական վարդապետների կյանքի, գործունեության և գիտության մասին արժեքավոր տեղեկություններ է տալիս Կ. Գանձակեցին[1]։

Մխիթար Գոշը նույնպես իմացել է թե հունարեն, և թե այլ լեզուներ։

Վերջապես հիշենք նաև խոշոր գիտնական և գրող Ներսես Լամբրոնացուն։ Այն ժամանակ, երբ Գոշը օգտվելով հայ և այլազգի աղբյուրներից Արևելյան Հայաստանում կազմում էր իր հայտնի Դատաստանագիրքը, Ներսես Լամբրոնացին էլ Կիլիկիայում կազմում էր Զինվորական օրենսգիրքը, որը բխում էր վերածնության և Կիլիկիայի հայկական պետության պահանջներից։

Կասկածից դուրս է, որ Լամբրոնացին ևս շատ լավ իմացել է հունարեն, լատիներեն և այլ լեզուներ, որովհետև առանց այդ լեզուներն իմանալու, նա չէր կարող կազմել օրենսգիրքը, թարգմանել բազմաթիվ պաշտոնական գրություններ, նամակներ և ուրիշ գործեր, որոնք նրան հանձնարարում էր Գրիգոր Տղա կաթողիկոսը։

Այս փաստերը ցույց են տալիս, որ Շնորհալու ժամանակ հունական դպրության և «հունարեն լեզվի ճամփան» փակ չի եղել հայկական դպրոցներում։ Եղել են շատ գիտնականներ ու գրողներ, որոնք չնայած Հունաստանում չեն սովորել, բայց շատ լավ իմացել են հունական դպրությունն ու լեզուն։

Շնորհալու ժամանակ, թե՛ հյուսիս-արևելյան և թե՛ արևմտյան (Կիլիկիա) Հայաստանում գոյություն են ունեցել բազմաթիվ ու տարբեր տիպի բարձրագույն դպրոցներ։ Վերջիններս պատրաստել են XII դարում շատ գիտնական-վարդապետներ ու գրողներ, որոնց անունները հայտնի են մեր հին մատենագրության և պատմության մեջ։

---

1 «Եւ էին ի ժամանակին յայնմիկ վարդապետք երևելիք՝ Մխիթար, որ Գոշն կոչիւր, շինող վանացն Գետկայ, այր իմաստուն և հնգ, և վարդապետական ուսմամբ հռչակեալ, Իգնատիոս, Վարդան, Դաւիթ Քոբայրեցին ի Հաղբատայ, Յովհաննէս, հայր Սանահնին, որ էր ղկնի մահուան վարդապետին Գրիգորոյ, զոր Տատայ որդին կոչէին... Գրիգոր, զոր Մոնոնիկն կոչէին, ի Կեչառուաց, Տուրբիկն ի Թեղինեացն... Եղիա ի Հաւուց Թառոյ... Գրիգոր Դունացին, Սարգիս, միաբանացն ի Սևանայ... Վրթանէս Բջնոյ և Դունայ, Սարգիս աթոռակալ Անւոյ, Յովհաննէս Կարուց և այլք յոլովք աստի և անտի՝ հանդերձ երևելի քահանայիւք վանաց և քաղաքաց և գիւղից»։ Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն Հայոց, էջ 171—172։

* * *

Պատմագիրները, Լամբրոնացին, Ներսեսի անանուն կենսագիրը և բազմաթիվ եկեղեցական հայրեր Շնորհալու միայն գիտության, բանաստեղծական շնորհքի ու բեղմնավոր գործունեության մասին չէ որ խոսում են ակնածանքով ու գովեստներով։ Նրանք գրում են, որ Ներսեսն ունեցել է բազմակողմանի շնորհք։

Նա հոգևոր երգերը և՛ հորինել է և՛ երգել։ Նա եղել է հմուտ երաժշտագետ, ունեցել է սքանչելի ձայն, գեղեցիկ ձեռագիր և նկարելու ձիրք։

«Գրեր և շարժագրութիւն գրոյ,—ասում է կենսագիրը,—հրաշատեսակ և վայելուչ ի զանազան կերպս, որպես աստուածային մատամբ շարժահիւսեալ։ Եւ գիծք շնորհակիր և աստուածաններկ մատանցն, և բանք հոգեշարժք լեզուին արտաբերեալք ի յոքնահանճար մտացն՝ օտար և գեր ի վերոյ երևէին մարմնականաց գիտութեանց և իրաց»[1]։

Սամուել Անեցին Շնորհալուն «երգող» է անվանում, իսկ Լամբրոնացին գրում է թե

...Քաղցր ձայնիւք անջըրպետէր.
Որ երաժիշտ սուրբ հոգւոյն էր...
Որպէս հօրանս ոտից ցուցաւ,
Գեղեցկագիր գիրըն կարգաւ...[2]

Շնորհալուն եպիսկոպոս ձեռնադրելուց հետո կաթողիկոսը հանձնարարում է նրան, որ առանձնապես զբաղվի եկեղեցու բարեկարգությամբ։

Ընդունելով եղբոր առաջարկները, Շնորհալին սկսում է առաջին հերթին զբաղվել հոգևոր երգով, դրանց եղանակներով, որովհետև այս բնագավառում հայ եկեղեցին ուներ աչքի ընկնող բացեր։ Նույնիսկ Տերունական տոները մինչև այդ ժամանակ դեռևս չունեին շարականների լրիվ կանոնները։ Թե ո՞ր շարականներն են պատկանում Շնորհալու գրչին և ի՞նչ առավելություն ու նորություն նա մտցրեց հայոց հոգևոր երգի մեջ, մենք կխոսենք իր տեղում. այժմ այս կապակցությամբ միայն պետք է ասել, որ նա ոչ միայն գրեց բազմաթիվ նոր շարականներ, այլև դրանք եղանակավորեց, երգեց և շատ երգողներ պատրաստեց։ Կիլիկիայի տարբեր շրջան-

---

1 «Սոփերք», ԺԴ, էջ 35։

2 «Թուղթ ընդհանրական», Կ. Պոլիս, 1825, էջ 20, 22։

ներից նա ընդունակ պատանիներին հավաքում էր Հայրապետանոց, ինքն էր դասավանդում շարականները, դրանց եղանակները, սովորեցնում եկեղեցու ժամակարգությունն ու պատմությունը։ Աթոռի և ազգային մշակույթի համար սպասավորներ պատրաստելու նպատակով Շնորհալին ընտրում, հավաքում էր ընդունակ և ապագա խոստացող երիտասարդներին, ժամանակի պահանջներին ու որոշ համապատասխան կրթություն տալու համար։

Ներսեսը մեծ բարեփոխություն մտցրեց վանական դպրոցների վերակառուցման և ուսումնական ծրագրերում։ Աշխարհիկ ոգին, ժամանակի առաջադեմ մտքերը իրենց արտահայտությունն էին գտնում ոչ միայն հոգևորականների անձնական կյանքում ու կենցաղում, այլև դպրոցի ներքին կյանքում։ Գավառներից եկած շնորհալի պատանիները աստվածաբանական դիտություններին հետ միաժամանակ ուսանում էին նաև «արտաքին» դիտություններ՝ բնագիտություն, տոմարագիտություն, հոմերյան արվեստ, տաղաչափություն և մանավանդ երաժշտություն։ Միջնադարյան վանական դպրոցների անձուկ շրջանակներն ու սահմանափակ ծրագրերը լայնանում էին։ Շնորհալին ամեն կերպ աշխատում էր վերականգնել ժամանակի ընթացքում խափանված ազգային հոգևոր երաժշտության եղանակները և դրանց ձայնանիշները՝ խազերը։ Իր դրած շարականների հետ նա հորինում էր նաև եղանակը և ինքն էլ ավանդում Հռոմկլայի դպրոցում։ Նրա ձեռքի տակ աճեցին ու դաստիարակվեցին շատ շնորհալի երիտասարդներ՝ ինչպես Գրիգոր Տղան, Ներսես Լամբրոնացին և ուրիշներ։

Ներսեսը 14 տարեկան էր, երբ 1116 թվականին Հայրապետանոցը Կարմիր վանքից փոխադրվեց Ծովք, որի տերն էր Գրիգորի և Ներսեսի մեծ եղբայրը՝ Վասիլ իշխանը։ Ծովքում անցան Ներսեսի երիտասարդական տարիները։ Այստեղ աճեց ու զարգացավ նա և մտավ գործունեության ասպարեզ։ Այստեղ նա սկսեց ստեղծագործել և որպես բանաստեղծ։ Կարմիր վանքից հետո Ծովքում էր, որ Շնորհալին կատարելագործվեց դիտության մեջ, ձեռք բերեց խոր ու հիմնավոր գիտելիքներ։

Հայրապետական աթոռը տեղափոխվելուց հետո, Կարմիր վանքի դպրոցը կորցրել է իր երբեմնի հռչակը, որովհետև այնտեղի նշանավոր վարդապետներն ու Ստեփանոսը Հայրապետանոցի հետ միասին փոխադրվեցին Ծովք։

Ժամանակի իրադրություններն այնպես էին դասավորվել, որ կաթողիկոսարանն այլևս Կարմիր վանքում թողնելը վտանգավոր էր։ Գող Վասիլը արդեն մեռել էր։ Ուռհայի Պատին կոմսն օգտվե-

լով այդ դրությունից, հարձակվում և տիրում է Վասիլի իշխանության ենթակա բերդերն ու վայրերը: Այս գրավված բերդերից էր նաև Կարմիր վանքը: Նախ՝ Գրիգորիս Պահլավունի կաթողիկոսը ոչ մի կերպ չէր ուզում մնալ լատինների գերիշխանության տակ և երկրորդ՝ Հայրապետանոցն արդեն զրկվել էր մի այնպիսի ուժեղ և ազդեցիկ իշխանի հովանավորությունից ու պաշտպանությունից, ինչպիսին էր Գող Վասիլը: Առաջվա պես Քեսունը և Կարմիր վանքը ապահովված չէին նրա մերձականերում վխտացող արտաքին թշնամիներից: Ահա այս և ուրիշ մի շարք այլ հանգամանքներ էին պատճառը, որ Գրիգորիսը որոշեց Կաթողիկոսարանը տեղափոխել իր ծննդավայրը՝ Տլուքի շրջանի Մովքի ամրոցը: Այստեղ տեղափոխվելուց 6 տարի հետո Շնորհալին գրեց իր առաջին չափածո մեծ գործը, որտեղ հիշատակում է, թե 1120 թվականին ինքն արդեն քահանա է եղել: Իսկ թե ե՞րբ է նա եպիսկոպոս ձեռնադրվել՝ ճշգրիտ տվյալներ չկան, ահա դրա համար էլ առանձին բանասերներ ու պատմաբաններ տարբեր ենթադրություններ են անում, որ իբր թե նա 15 տարի վարել է մենուսի կյանք, այսինքն՝ եղել է ճգնավոր: Եվ որպեսզի այս անհիմն կարծիքը ընդմիշտ ժխտվի, հարկադրված մի քանի խոսք ասենք Շնորհալու եպիսկոպոսի կոչում ստանալու ժամանակի վերաբերյալ, որի հետ, կրոնական բանասերները կապում են Շնորհալու «ճգնավոր» լինելու հարցը:

Դժբախտաբար, Շնորհալու եպիսկոպոս ձեռնադրվելու ժամանակի վերաբերյալ նույնիսկ Կիրակոս Գանձակեցին, Վարդան Բարձրբերդցին, Մատթեոս Ուռհայեցին և Սամուել Անեցին, ապա նաև Կոստանդին Կեսարացին ու Ներսես Լամբրոնացին անգամ՝ որոշակի ոչինչ չեն ասում, հեղինակներ, որոնք այնքան շատ տեղեկություններ են տվել Շնորհալու կյանքի ու գործունեության մասին:

Հիմնված Ջամչյանի ասածների վրա, մեր պատմագրության և բանասիրության մեջ տրադիցիոն կարգով ընդունվել է, որ Շնորհալին 1135 թվականին է ստացել եպիսկոպոսի աստիճանը: Բայց սա, իհարկե, հավանական չէ, որովհետև մտքով հասուն, կաթողիկոսի օգնական և եկեղեցու բարեկարգիչ Շնորհալին դժվար թե 20 տարի մնար որպես սոսկ քահանա: Կարմիր վանքում, մի պերճախոս քարոզի համար Բարսեղ Անեցի կաթողիկոսը եպիսկոպոսի աստիճան տվեց շատ երիտասարդ Ստեփանոս Մանուկին, իսկ Շնորհալին, որ դեռևս Կարմիր վանքում և ապա Մովքում նույն Ստեփանոս Մանուկի մոտ սովորել էր ս. Գիրքը, եկեղեցական նշանավոր հայրերի գործերը, եկեղեցաստվածաբանական և դավանաբանական գրվածքները, եկեղեցական պատմություն, վարքագրություն, բնագիտություն, տոմարագի-

տութիւն, հայկական մատենագրութիւն, թարգմանութիւն և այլն, հավանական չէ, որ եպիսկոպոսի աստիճան այդքան ուշ ստացած լինի։ Եվ որովհետև Ներսեսի վարդապետ լինելու մասին էլ ոչ մի տեղ ոչ մի հիշատակութիւն չկա, հավանաբար նա քահանայի աստիճանից հետո անմիջապես ստացել է եպիսկոպոսի կոչում, բայց իհարկե ոչ 20 տարի ընդմիջումով։ Բացի այդ, ինչպես հայտնի է, Շնորհալին եկեղեցական և կրոնական գործերում եղել է կաթողիկոսի աջակիցն ու շատ մոտիկ կանգնած հարազատ անձնավորութիւն, ունեցել է մեծ կշիռ ու համակրանք, այնպես որ շատ անհավանական է, թե նա որպես քահանա էր այդ բոլոր աշխատանքները կատարում։ Ամենայն հավանականութեամբ, նա եպիսկոպոս է եղել 22—23 տարեկան հասակում, Կաթողիկոսարանը Ծովք փոխադրվելուց 6—7 տարի հետո, այսինքն՝ 1124—1125 և ոչ թե 1135 թվականին։

Քանի որ Ներսեսի քահանայութեան աստիճան ստանալու ժամանակից մինչև Ջամչյանի նշած 1135 թվականը, մոտ 15 տարի ոչ մի տեղեկութիւն չկա Շնորհալու վարդապետ կամ եպիսկոպոս լինելու մասին, բանասեր Ղ. Ալիշանը ենթադրում է, որ այդ տարիներին Ներսեսը թաքնված է եղել «խորհրդավոր լռութեան» մեջ, ուրիշ խոսքով՝ նա վարել է ճգնավորի կյանք՝ որևէ վայրում կամ վանքում՝ սկսած 1121-ից մինչև 1135 թվականը։ Ահա թե ինչպես է բացատրում Ալիշանն իր այդ ենթադրութիւնը.

«Շնորհալւոյ վիպասանութեամբ մատենագրութիւն սկսելէն, որ է 1121 թվականէն, մինչև 15 տարի, երիտասարդութեան միջոցը, ծածկուած կմնա մեզմէ. պատմական յիշատակ մը չեմք գտած այս տարիներուն, այլ կհամարիմ զնա բաւուցեալ այն խորհրդական և սրբազան առանձնութեան և լռութեան մէջ...»[1]։

Բայց մեծ բանասերի այս ենթադրութիւնը ոչ միայն անհավանական է, այլև տարօրինակ։ Նախ՝ Շնորհալու եռանդով լեցուն, կենսուրախ ու գործունյա կյանքը միանգամայն անհամատեղելի է ճգնավորի մենակյաց, անգործ կյանքի հետ։

Երկրորդ՝ այդ ժամանակներում, առանձնապես 1120—1135 թթ. այդպիսի «խորհրդական առանձնութիւններ» կամ ճգնարաններ գոյութիւն չեն ունեցել Կիլիկիայի վանքերում ու վանականների մեջ։

Երրորդ՝ Կիլիկիայում՝ որտեղ էլ առանձնանար Շնորհալին, ինչքան էլ նա ցանկանար անհայտ մնալ լռութեան մեջ, այնուամենայնիվ, ժամանակի բազմաթիվ վանքերից մեկում պիտի նա թաքնվեր։

---

1 Ղևոնդ Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 94։

Բայց այդ նրան չէր հաջողվի, որովհետև նա իր գիտությամբ, ձիրքով ու եռանդով Սև լեռների բոլոր վանքերում էլ հայտնի էր. մանավանդ որ նա Ստեփանոս Մանուվի աշակերտն էր և Գրիգորիս կաթողիկոսի եղբայրը: Իհարկե այսպիսի միջավայրում բոլորովին հնարավոր չէր, որ Շնորհալին 15 տարի թաքնվեր ու լռեր և ոչ ոք այդ մասին չիմանար ու չգրեր:

Շնորհալու անանուն կենսագիրը, որն այնքան մանրամասնորեն և իր բառերով ասած «ճիշտ ու անսուտ» կերպով գրի է առել նրա կյանքը, անկարելի էր, որ այդ առթիվ չխոսեր, մանավանդ որ նա ժամանակով այնքան հետու չէ Շնորհալուց:

Վերջապես, եթե այդպիսի «թաքուցեալ սրբազան առանձնություն» լիներ Շնորհալու կյանքում, այն էլ ամբողջ 15 տարի, դոնե ներսես Լամբրոնացին, իր «Դրուատ պատգրաբար» Շնորհալուն նվիրված չափածո մեծ գործում անպայման կգրեր այդ մասին:

Ապա՝ ինչո՞ւն է գաղտնիքը: Այդ տարիներին (1120—1135) Շնորհալին դեռ երիտասարդ էր, նոր էր սկսել ստեղծագործել. գրել էր միայն «Վիպասանությունը», որն իհարկե այնքան էլ արտասավոր գործ չէր իր ձևով ու բովանդակությամբ, որ Շնորհալին հռչակվեր որպես նշանավոր հեղինակ և գրվեր նրա մասին: Այս մի կողմից: Մյուս կողմից էլ, եթե իրոք, Շնորհալու այդ 15 տարիների մասին ոչ մի տեղ, ոչ ոքի կողմից հիշատակություն չկա, դա ոչ մի հիմք չի տալիս ասելու, թե նա անապատական է եղել կամ վարել է ճգնավորի կյանք: Մեր կարծիքով, ավելի հավանական է, որ այդ տարիներին նա եղել է Արևելյան Հայաստանում, հայրապետական աթոռը Անի փոխադրելու գործով: Իր ժամանակին, ինչպես Գրիգոր Վկայասեր և Բարսեղ Անեցի կաթողիկոսները, այնպես էլ Գրիգորիս Պահլավունին և իր Շնորհալի եղբայրը միշտ էլ ձգտել են տեսնել հայ պետականության վերականգնումը և հայրապետանոցի հաստատումը բուն հայրենիքում: Այստեղ Բագրատունյաց պետության հետ առաջացավ, զարգացավ ու ընկավ հայ կաթողիկոսարանը: Անիի ու արևելյան վանքերին կից դպրոցներից էր, որ դուրս եկան նշանավոր հոգևոր գործիչներ ու գիտնականներ: Ճիշտ է Կիլիկիայում էլ արդեն հիմնվել էին շատ նշանավոր վանքեր ու վանական տարբեր տիպի դպրոցներ, սակայն դրանցից և ոչ մեկը չէր հավասարվել Անիին, որպես կուլտուրական և հայրապետական կենտրոնի: Անիից հետո Արևելյան Հայաստանում պակաս հռչակված չէին Շիրակում գտնվող Հոռոմոսի, Հառիճի, Մարմաշենի, Դպրեվանքի, Կամրջաձորի վանքերն ու Արդինայի երբեմնի (971—991) կաթողիկոսարանը: Արևելյան Հայաստանը իր կուլտուրական կենտ-

բոններով ու նշանավոր հինավուրց վանքերով միշտ էլ ձգել է Կիլիկիայի կաթողիկոսներին ու եկեղեցական հայրերին: Այսպես էլ Գրիգորիս Պահլավունի կաթողիկոսն ամեն կերպ աշխատում էր վերադառնալ հայրենիք, վերականգնել հայրապետական աթոռը Անի մայրաքաղաքում: Այս նպատակով Գրիգորիսը բանակցության մեջ էր մտել այդ ժամանակ Անիին իշխող Աբուլ-Սուարի հետ, որպեսզի Անիի օտար տերը տար իր համաձայնությունն ու օժանդակությունը Աթոռը Անի վերադարձնելու համար: Այդ մասին Սամուել Անեցին գրում է հետևյալը. «...Բայց սրբազան հայրապետն և առաջնորդն հաւատոյ տէր Գրիգորիս, վասն զի ուխտ սիրոյ ունէր առ Ապըլասուար վասն սեփական աթոռոյս՝ գալ այսրէն նորա յօժար կամակցութեամբ...»[1]:

Բայց քանի որ Անիի տեր Աբուլ-Սուարի և Գրիգորիս կաթողիկոսի մեջ եղած բանակցությունը գաղտնի էր, ամենայն հավանականությամբ այդ գործին անմիջական մասնակցություն է ունեցել նաև Ներսես Շնորհալին: Շատ հնարավոր է, որ այդ տարիներին, որպես բանագնաց Շնորհալին եղել է Արևելյան Հայաստանում, Անիում՝ Աբուլ-Սուարի հետ անձամբ բանակցելու նպատակով:

Բացի այդ, որոշ հանգամանքներ ևս դալիս են հավաստելու, որ Շնորհալու՝ Արևելյան Հայաստանում լինելը հավանական է: Պատահական չէ, որ հետագայում Շնորհալին իր կաթողիկոսության տարիներին, երբ ավելի խորը զբաղվեց եկեղեցական ժամակարգության, հոգևոր երգերի ու նրանց եղանակների կարգավորման ու բարեփոխման գործով, Հռոմկլայից հատուկ մարդիկ ուղարկեց Արևելյան Հայաստանում գտնվող Մաքենյաց և Թեղենյաց վանքերը, ուսումնասիրելու այնտեղ տակավին անաղարտ ու հարազատ մնացած հոգևոր երգերի եղանակները, դրանք Կիլիկիա բերելու և ժամակարգության մեջ մտցնելու համար:

Այո, հավանաբար այդ «անհայտ» տարիներին, երիտասարդ Ներսեսը շրջագայության ժամանակ այցելել է նաև վերոհիշյալ նշանավոր վանքերը: Այդ տարիներին ոչ պակաս ծաղկած ու նշանավոր են եղել բուն Հայաստանում նաև Գանձասարի, Հաղբատի, Սանահնի, Գեղարդի և Հաղարծին վանքերը, իրենց անվանի դիտնականներով: Այս վանքերի վարդապետներից շատերին ճանաչել է Շնորհալին և ունեցել նրանց հետ թղթակցություն: «Թուղթ վարդապետացն Հայոց հիւսիսային կողմանցն որ ի Հաղբատ և ի Սա-

---

[1] Սամուել Անեցի, Հատընտիր ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 127:

նահին» վերնագրով նամակում Շնորհալին մեծարանքով ու համեստությամբ է դիմում վերևում հիշված վանքերի վարդապետներին.

«...Բասիլ եպիսկոպոս որ յարևելս հիւսիսոյ, վարդապետ Գրիգոր Սանահնին, և Հայր Յովհաննէս. վարդապետք մայրաքաղաքիս Հաղբատայ՝ Իգնատիոս, Պետրոս, Վարդան և Դաւիթ. Խաչատուր վարդապետ[1] Հաղարծնին, Մխիթար վարդապետ Կորակերտոյ, և միւս Մխիթար վարդապետ[2] գետակայ և այլք աշակերտեալք ամենեքեան սրբոց կտակարանաց Աստուծոյ. երկիրպագանեմք որպէս ի մտաց սուրբ աւետարանիդ և վերակացելումդ, և աղօթս ձիգս առնեմք վասն երկար կենաց և խաղաղութեան ձերոյ»[3]:

Այս վարդապետներին ուղղած թղթերի մեջ շոշափվել են գլխավորապես դավանաբանական և ապա գրական ու պիտական խնդիրներ: Հայաստանի տեղերին, վանքերին, վարդապետներին քաջածանոթ լինելն ու թղթակցությունները հիմք են տալիս ասելու, որ Հավանաբար Շնորհալին եղել է Հայաստանում:

* * *

Շնորհալին կաթողիկոսարանի հետ Սովքում մնում է մինչև 1150 թվականը: Սանր էր այդ ժամանակ քաղաքական դրությունը Կիլիկիայի հայկական պետության և հայրապետանոցի համար: Սովքն էլ ապահով վայր չէր Աթոռի համար: Կաթողիկոսն ու ներսեսը մեծ հույսեր էին կապել զորացող վրացական իշխանության հետ, մանավանդ, որ Անին՝ քաղաքի ազգաբնակության ցանկությամբ և օգնությամբ անցել էր վրաց Դավիթ Թագավորի ձեռքը: Բայց երբ լսեցին, որ Փալտուն ամիրան նորից է վերցրել Անին, Հայաստան վերադառնալու նրանց հույսերը խորտակվեցին: Այս անգամ էլ կաթողիկոսը մտածեց Աթոռի համար ընտրել մի ավելի ամուր և ապահով վայր:

Ստեղծված վտանգավոր դրության և այլ պատճառներով Հայրապետանոցը Սովքից 1150 թվականին փոխադրվեց Հռոմկլա[4]:

---

1 Խոսքը Խաչատուր Տարոնեցի վարդապետի մասին է, որը հայտնի է որպես հայկական խաղերի և պատարագի «Խորհուրդ խորին» նշանավոր երգի հեղինակ:

2 Խոսքը Մխիթար Գոշի մասին է:

3 «Թուղթ ընդհանրական», Երուսաղէմ, 1871, էջ 308:

4 Կայ բառն առաջ է եկել սելջուկների «գալե», «կալե», «ղալա» բառերից, որ նշանակում է բերդ, ամրոց: Իսկ Հռոմկլա նշանակում է հույների կամ հռոմեների բերդ: Իր ժամանակին սելջուկները և հետագայում թուրքերը հույներին և լատիններին անվանել են «ռում», «ուռում»: Թուրքերի այժմյան լեզվի մեջ էլ «գալա» կամ «ղալա» բառերը բերդ են նշանակում, ինչպես՝ Հասանղալա (Հասանի

Այս տեղափոխության պատճառները Կ. Գանձակեցին այսպես է բացատրում. «Սա փոխեաց (Գրիգորիս կաթողիկոսը—Գ. Հ.) զաթոռն հայրապետական ի բերդն՝ որ կոչի Հռոմկլայ... Եւ եղև պատճառ փոխելոյն այս. նեղեցաւ ի սկիւթականացն և ի տաճկաց՝ այսր անդր յածելով. ապա ետես զբերդն ամուր՝ բարձեալ զսրբութիւնն իւր և զսպասաք եկեղեցւոյ, տարեալ եդ անդ ի պահեստի առ բարեմիտ կին մի իշխանի, ազգաւ Ֆրոանդ...»[1]: Գանձակեցու հիշած բարեմիտ կինը Ճոսլին իշխանի այրին էր, որը հենվելով ստեղծված քաղաքական դրությունից ու իր շահերից՝ ամրոցը տվեց կաթողիկոսարանին և վոխարեն ուրիշ տեղեր ստացավ, կամ ինչպես ասում են՝ գնաց Եվրոպա իր հարազատների մոտ:

Ինչպես իր ժամանակին Ծովքում, այդպես էլ Հռոմկլայում Գրիգորիսը և Ներսեսը ձեռնարկեցին ամրոցում բարեկարգություն մացնելու և նոր շենքեր կառուցելու գործը: Ամենից առաջ շինել տրվեցին մի կաթողիկե եկեղեցի և դպրոցի շինք. այնուհետև կաթողիկոսարանի համար անհրաժեշտ մի քանի շինություններ և այլն: Սկսած 1150 թվականից մինչև իր կյանքի վերջը՝ շուրջ 23 տարի, Շնորհալին ընդմիշտ ապրեց ու գործեց Հռոմկլայում և իր անունը շատ

---

բերդ), Բաշկալա (Գլխավոր բերդ), Թոփրակկալա (Հողաբերդ), Կգկալա (Աղջկա բերդ) և այլն: Հռոմկլան նշանավոր մի բերդ է եղել և իր ժամանակին շատ մեծ դեր է կատարել հայկական կիլիկիայի պատմության մեջ. «Հռոմկլայի գավառակը ձգվում է Մարաշի և Անթափի արևելքում, Եփրատ գետի երկու ափերի վրա: ...Դղյակի դիրքն է մի ցից սարավանդի վրա՝ երեք կողմից շրջապատված լինելով Եփրատի հոսանքից և սրա հետ խառնվող Մերզմեն գետակից: ...Աշտարակները բառակուսի երկար ձև ունեն... Դղյակի գլխավոր մուտքը, որ Մերզմեն գետակի հովտում էր, երեք հաջորդական դռներից է առաջնորդվում: Միջնաբերդի հարավարևելքում տեսանելի է կաթողիկոսական վանքի ավերակը, որի տեղ մզկիթ է շինվել այժմ... Դղյակի վերին մասում կան երկու եկեղեցիների հետքեր, առաջինը բյուզանդական ոճով երեք բև ուներ, իսկ երկրորդը՝ հայկական չքնաղակերտ մի շինվածք էր... Ճոխաքանդակ խոյակներով պսակված» («Կիլիկիա»), 1894, էջ 372—373:

Հռոմկլան հայոց կաթողիկոսական աթոռ է եղել 1150 թվականից մինչև 1295 թվականը, երբ եգիպտացիները վերցրին այն, ավերեցին, այրեցին և գերի տարան հայոց Ստեփանոս կաթողիկոսին, յուսավորչի աջի հետ: Այստեղ տեղի են ունեցել երկու եկեղեցական նշանավոր ժողովներ՝ 1178-ին և 1179-ին Ներսես Լամբրոնացու և Գրիգոր Տղայի նախաձեռնությամբ, հույների հետ եկեղեցիների միության հարցը քննելու համար: Բյուզանդացիների տիրապետության ժամանակ Հռոմկլան աթոռավոր լեզվով կոչվում էր Գալաթ էլ րում (հույների բերդ), իսկ թուրքերի տիրապետության օրով՝ Գալաթ էլ միսլիմիյն (մուսուլմանների բերդ): Հռոմկլայի վերջնական ավերումը տեղի ունեցավ 1839 թվականին, երբ օսմանցիների Իբրահիմ փաշայի հրամանով ամրողջապես ռմբակոծվեց:

1 Կ իրակոս Գանձակեցի, էջ 108:

սերտ կապեց այդ ամրոցի անվան ու պատմության հետ։ Հայոց պատմության ու դրականության մեջ նա հայտնի է նաև Ներսես Կլայեցի անունով։ Սկեղեցական միության հետ կապված հուզող հարցերն ու ժողովները, երկրի ու հայ ժողովրդի ծանր դրությունը հուզում էին զգայուն բանաստեղծին և հայրենասեր գործչին։ Հոգեկան դառն ապրումները քայքայիչ ազդեցություն ունեցան նրա առողջության վրա։ Տավրից Հռոմկլա տեղափոխվելու հենց առաջին տարիներից Շնորհալին տառապում է ջերմախտով։ Հռոմկլայի տոթակեզ, վատառողջ կլիման մի կողմից, ծանր հոգսերն ու մտավոր լարված աշխատանքները մյուս կողմից հյուծեցին նրան։ Իր տհաճ հիվանդությունների մասին նա թղթերում և նամակներում շատ անգամ է գրել բարեկամներին և հարազատներին։ Հաղբատեցի Գեվորգ վարդապետին ուղղված թղթերից մեկում այդ մասին գրում է. «...Եւ մեք ևս յետ մարմնականին ախտի վճարելոյ ախտանամք օր ըստ օրէ իմանալեաւս փոքու և մեծաւ...»[1]։ Գրիգոր Ապիրատին գրած չափածո թղթում մահվան դուռն հասած բանաստեղծը գանգատվում է, թե՝

*Ի հիւանդոտ և ցաւալից*
*Անձնէ՝ յատուրս քառասնից։*
*Զոր մերձ մահու հասեալ մրտից,*
*Դարձոյց այսրէն տէրն ամենից*[2]։

Վերջին ջերմախտը ավելի սաստիկ է երևում։ Այս անգամ տկարացած ծերունին չի կարող տանել հիվանդությունը և մի քանի օրից հետո մահանում է։ Շնորհալու ծննդյան և մահվան տարեթվերի վերաբերյալ կան տարբեր տվյալներ ու տարբեր կարծիքներ։ Մինչև հիմա էլ վերջնականապես ճշտված չէ, թե իրոք նա ո՞ր թվականին է ծնվել, քանի՞ տարի է ապրել և ե՞րբ է մահացել։ Սամուել Անեցին այն կարծիքին է, որ Շնորհալին մահացել է 1174 թվականին. «Ի ՈԻԳ... փոխի մահուամբ առ Քրիստոս սուրբն Ներսէս և յաջորդէ զաթոռն տէր Գրիգոր՝ եղբորորդին նորին՝ տղա կոչեցեալն ամս Ի»[3]։

Մխայել Ասորի պատրիարքը իր «Ժամանակագրության» մեջ գրում է, որ Շնորհալին վախճանվել է իր 1163 թվականին[4]։

---

1 «Թուղթ ընդհանրական», Երուսաղէմ, 1871, էջ 217։
2 «Բանք չափաւ», Վենետիկ, 1830, էջ 306։
3 Սամուէլ Անեցի, 139։
4 «Ժամանակագրութիւն Միխայէլի Ասորւոց պատրիարքի», Երուսաղէմ, 1871, էջ 471։

Մեր հին Հայսմավուրքներից մեկում գրված է, որ Շնորհալին վախճանվել է 1184 թվականին[1]:

Պատմաբան Չամչյանի տվյալների համաձայն, Ներսես Շնորհալին ծնվել է 1095 թվականին, ապրել է 75 տարի և մահացել է «յամի տեառն 1173»[2]:

Նախ նկատենք, որ եթե Ներսեսը ծնվել է 1095 թ. և մահացել 75 տարեկան հասակում, նրա մահը պիտի տեղի ունենար ոչ թե 1173, այլ 1170 թվականին: Բացառությամբ Չամչյանի, Շնորհալու ծննդյան տարեթվի մասին մեր պատմագիրները, ժամանակակիցները, նույնիսկ նրա անանուն վարքագիրը որոշակի ոչինչ չեն ասում: Ընդունված է Շնորհալու ծնունդը համարել 1100—1102 թվականները:

Սակայն Շնորհալու ժամանակակից և այդ շրջանի այլ պատմագիրների որոշ տվյալների հիման վրա կարելի է ասել, թե որ թվականին է վախճանվել նա: Շնորհալու մահվան վերաբերյալ «Ընդհանրական Թղթի» ընդարձակ ծանոթություններից մեկում, այդ գործը առաջին անգամ խմբագրող Ներսես Լամբրոնացին գրում է. «Եւ յետ արձակելոյ զթագաւորական նամակն ըստ վերագրելոցդ խոստման... ի նոյն ամի վերափոխէր զերանելի հայրապետն սուրբ... յամսեանն օգոստոսի, որ օր երեքտասան էր, յաւուր հինգշաբթւոջ և ի թուականիս հայոց ի վեց հարիւր քսան և երկու»[3]:

«Ի թուին ՈՒԲ. սուրբ լուսաւորիչն Տէր Ներսէս Կլայեցին փոխի առ Քրիստոս,—գրում է Սմբատ Սպարապետը,—և պատուիրեաց նստուցանել յաթոռն զաէր Գրիգորիս մականուն Տղայ»[4]:

Շնորհալու մահից շատ տարիներ հետո նրա անանուն կենսագիրը ևս նույն տվյալներն է հաղորդում ինչ որ Լամբրոնացին և Սմբատը: «...ի նոյն ամի վերափոխէր զերանելի ըզհայրապետն սուրբ... յամսեանն աւգոստոսի որ օր երեքտասան էր, յաւուր հինգշաբթւոջ, և ի թուականութեանս հայոց վեց հարեւր քսան և երկու»[5]:

Ուրիշ պատմագիրների մոտ և տարբեր հիշատակարաններում էլ կան նույնանման տվյալներ Շնորհալու մահվան ժամանակին վերաբերող: Թվում է թե վերևում բերված միանման փաստերը բավական են, որոնք որոշակի ցույց են տալիս, որ Շնորհալին վախճանվել է 1173 թվականի օգոստոսի 13-ին՝ հինգշաբթի օրը, 71 տարեկան հասակում:

---

1 «Գիրք որ կոչի Յայսմաւուրք», 1730, Կոստանդնուպոլիս, էջ 612:

2 Չ ա մ չ յ ա ն, հատ. Դ, էջ 110:

3 «Թուղթ ընդհանրական», Երուսաղեմ, 1871, էջ 165:

4 Ս մ բ ա տ Ս պ ա ր ա պ ե տ, Պատմութիւն, Մոսկվա, 1856, էջ 90:

5 «Սոփերք», ԺԴ, էջ 80:

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հռոմկլայում է սկսվում Ներսես Շնորհալու եկեղեցական, հասարակական և գրական գործունեության բեղմնավոր շրջանը։ Այստեղ նա դրսևորվեց որպես եռանդուն ազգային գործիչ, խելացի դիվանագետ և որպես հայրենասեր մեծ բանաստեղծ։ Եթե Տարսոնում երիտասարդ Շնորհալին իր հայրապետ եղբոր օգնականն ու գործակիցն էր, ապա Հռոմկլայում առանց Ներսեսի ու նրա խորհրդի կաթողիկոսը ոչ մի լուրջ գործ չէր ձեռնարկում։ Այստեղ Շնորհալին զբաղվում է ազգային ոչ միայն ներքին գործերով՝ եկեղեցական-բարեկործչական, դավանաբանական և դաստիարակչական հարցերով, այլև պետական նշանակություն ունեցող, երկրի արտաքին քաղաքականության հետ կապված դիվանագիտական խնդիրներով։ Նրա բազմակողմանի գործունեությունն հետևողականորեն հետապնդում էր մի գլխավոր նպատակ, այն է՝ կրոնական ու ազգային պետական գործերում լինել ինքնուրույն և անկախ։ Ինչպես իր կաթողիկոս եղբայրը, այնպես էլ ինքը շահագրգռված էր, որ Ռուբինյանց պետությունը լինի միասնական, ամուր և անկախ։ Կիլիկիայի գրեթե բոլոր հայ իշխանները միավորվել էին Թորոսի գլխավորած իշխանության մեջ, բացի Լամբրոնի Օշին իշխանից, որը հույների դրդմամբ միշտ կռիվների մեջ էր Ռուբինյանց հետ։ Շնորհալին աշխատում էր վերջ տալ եղբայրասպան թշնամության։ Այդ նպատակով նա գնաց Վահկա բերդը, խոսեց Թորոս Բ-ի հետ, համոզեց նրան և ապա գնաց Լամբրոն՝ Օշին իշխանի մոտ, նրան ևս համոզելու, որ հաշտվի, ճանաչի Ռուբինյանց իշխանությունը և ենթարկվի իր ազգային պետությանը։ Լամբրոնի տերը խոսք տվեց վերջ տալ թշնամության և օգնել Թորոսին՝ ազգային պետության ամրապնդման գործում։

Սակայն, դժբախտաբար, Շնորհալու այս ազգօգուտ հաշտարար գործը մեր ժամանակների որոշ պատմաբանների կողմից սխալ է մեկնաբանվել։ Ըստ պատմաբան Գ. Միքայելյանի, Պահլավունի բո-

լոր կաթողիկոսները հունասեր են եղել և ունեցել հունական օրիենտացիա, մանավանդ Շնորհալին, որը Լամբրոնի իշխանների հետ շատ մոտ է եղել[1]։ Ավելին, որ իբր Շնորհալին «չէր հասկանում և չէր կարողանում ճիշտ գնահատել Բյուզանդիայի և Օշինյանների դեմ Թորոս Բ-ի մղած պայքարի նշանակությունը, որ նա չէր հավատում Ռուբինյանների հաղթանակին և չէր նախատեսում Կիլիկիայի հայկական պետության հետագա քաղաքական հաջողությունները»[2]։

Արդյո՞ք ճիշտ է այսպիսի գնահատականը Պահլավունի կաթողիկոսներին և առանձնապես Ներսես Շնորհալուն։

Լամբրոնի հայ իշխանները, իրոք, որոշ ժամանակ ունեցել են հունական օրիենտացիա։ Բշնամություն և ընդհարումներ հաճախ է եղել Ռուբինյանների և Օշինյանների միջև։ Ռուբինյանները պայքարում էին Կիլիկիայում հայկական ինքնուրույն իշխանության միասնության և անկախության համար, որին դեմ էին հույները. բնականաբար այստեղ բախվում էին Օշին իշխանի և Թորոս Բ-ի քաղաքական շահերը։ Ահա այս երկու թշնամի հայ իշխաններին հաշտեցնելու նպատակով էր Շնորհալու պատգամավորությունը դեպի Վահուկ ու Լամբրոն։ Կարո՞ղ էր այս հաշտարար գործին անտեղյակ կամ դեմ լինել Գրիգորիս կաթողիկոսը՝ իհարկե ոչ։ Հաշտության գործը ծրագրել էին երկու եղբայրները միասին։ Շնորհալին, ինչպես և Գրիգորիսը միշտ էլ խոսքով ու գործով ցանկացել են միասնական դարձնել և պաշտպանել Ռուբինյանց իշխանությունը։

Ի դեպ Գրիգոր Վկայասերն ու Շնորհալու եղբայրը՝ Գրիգորիսը նույնպես անտեղի և առանց փաստերի են հայտարարված «հունասեր»։

Ճիշտ է, որ Գրիգոր Վկայասեր և Գրիգորիս Գ Պահլավունի կաթողիկոսներն ամեն մեկն իր ժամանակին ձգտել է բարեկամական հարաբերությունների մեջ լինել հույների հետ՝ ելնելով Կիլիկիայի հայ ժողովրդի ազգային շահերից։ Ցույց տալ բարյացակամ վերաբերմունք մի պետության, այդ դեռևս չի նշանակում ընդունել նրա օրիենտացիան։ Կիլիկիայի հայերն այդ շրջանում բարեկամական հարաբերությունների մեջ էին նաև հարևան ասորիների հետ։ Հայերը, հույները, ասորիները Տավրոսի Սև լեռներում դեռ վաղուց

---

1 Շնորհալու Շահան եղբոր աղջիկը Օշին իշխանի կինն էր և Ներսես Լամբրոնացու մայրը։ Իսկ Թորոսի աղջիկը Հեթում իշխանի տղա Օշինի կինն էր։ Այնպես որ Լամբրոնի իշխանները խնամի էին երկուսի հետ էլ։

2 Г. Г. Микаелян, История Киликийского Армянского Государства, Ереван, 1956, стр. 137.

ունեին իրենց վանքերն ու մենաստանները։ Նրանք կողք-կողքի են ապրել, և նրանց հոգևոր հայրերը շատ անգամ միասին են աղոթել ու երգել։ Այն ժամանակ, երբ Կիլիկիան ամբողջապես կամ մասամբ դեռ հույների գերիշխանության տակ էր և գոյություն ուներ կրոնական հալածանք հայերի նկատմամբ, Պահլավունիները չէին կարող այդ դրությունը հաշվի չառնել և չէին կարող քննամական դիրք բռնել հույների հանդեպ։ Բացի այդ, չի կարելի հույների հետ Պահլավունի երեք կաթողիկոսների ունեցած հարաբերությունները գնահատել միատեսակ, անտես առնելով դրանց ժամանակի, հասարակական-քաղաքական դրության և վերջինով պայմանավորված իրադրությունները։ Այլ էր, օրինակ, իր ժամանակին Գրիգոր Վկայասերի վերաբերմունքը դեպի հույները։ Այնուհետև, քանի գնում, այդ վերաբերմունքը փոխվում է՝ հույների վարած հայահալած քաղաքականության պատճառով։ Բոլորովին այլ հարաբերություններ էին Գրիգորիսի և մանավանդ Ներսես Շնորհալու ժամանակները, երբ արդեն Կիլիկիայում գոյություն ուներ հայկական պետություն, իսկ վերջինիս առկայության փաստը դեմ էր հույների վարած քաղաքականության։ Փաստերը ցույց են տալիս, որ Պահլավունի կաթողիկոսները երբեք էլ հունական օրիենտացիա չեն ունեցել։

Վահրամ-Գրիգոր Վկայասերի ապրած ու գործած ժամանակաշրջանում Կիլիկիայի տերը գլխավորապես դեռ հույներն էին, ուժեղ էր նրանց ազդեցությունը ոչ միայն այդտեղ, այլև արևմուտքում։ Բայց Վկայասերն իր դրական-թարգմանական և հայրապետական աշխատանքների մեջ միշտ էլ ինքնուրույն է եղել։ Նա կաթողիկոս էր դարձել ոչ թե հունական կայսրի կամ պատրիարքի ցանկությամբ, այլ միայն հայ ժողովրդի պահանջով։

Գանձակեցին ասում է, որ «ապա աշխարհս Հայոց ժողովեալ ի մի վայր, կացուցանեն յաթոռն հայրապետական զտէր Վահրամ, զոր անուանեցին Գրիգորիս, զորդին Գրիգորի Մագիստրոսի, ի քաղաքէն Բջնոյ, զթոռն Վասակայ մարտիրոսի, զայր իմաստուն և առաքինի...»[1]։

Իսկ Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է, որ Գրիգոր Վկայասերը կաթողիկոս է ընտրվել Գագիկ Արծրունու հրամանով, այնպես որ այս գործում հույները ոչ մի նշանակություն չեն ունեցել[2]։

---

1 Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 95։

2 Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 155։

Վկայասերը ոչ միայն հունասեր չի եղել, այլ երիտասարդ հասակից նա հույների հարձակումներից պաշտպանել է հայոց եկեղեցու դավանությունն ու ինքնուրույնությունը: Կրոնական վեճերի ժամանակ, ինչպես ասում է Ուռհայեցին, «զարմանալի էր ամենայն պատասխանիսն ընդդէմ հոռոմոց»:

Իր ամբողջ կյանքի ընթացքում Վկայասերն էլ միշտ երազել է մեծ Հայաստանը, նրա վաղեմի փառքը, ինքնուրույն պետականությունն ու հայրապետական աթոռը, երազներ, որոնք այդ ժամանակներում տրամագծորեն դեմ էին հույների քաղաքական ձգտումներին:

Այնուհետև, Վկայասերի կաթողիկոս ընտրվելուց մի քանի տարի առաջ էր, երբ Բյուզանդիան խիստ կրոնական հալածանք էր սկսել հայերի դեմ, ուզում էր վերացնել հայոց հայրապետական աթոռը և բոլոր հայերին դարձնել քաղկեդոնական: Վկայասերը ամեն կերպ պայքարում էր այդ քաղաքականության դեմ թե՛ խոսքով և թե՛ գրչով: Օրինակ՝ Ներսես Շնորհալու ծննդյան տարին՝ 1102 թվականին, զաւակի տոնի ծիսակատարության շուրջ մեծ տարաձայնություններ եղան մոտ 10 քրիստոնյա ազգերի և առանձնապես հույների ու հայերի մեջ: Հունական կղերն ու պաշտոնյաներն ամեն կերպ վիրավորում և ամբաստանում էին հայերին: Այս առթիվ Ուռհա քաղաքի հոգևորականները բողոքեցին Գրիգոր Վկայասերին, որի աթոռը այդ ժամանակ գտնվում էր Սև լեռների Արեգի վանքում: Վկայասերը հետևյալ համարձակ շրջաբերական-նամակն է գրում Ուռհայի բնակիչներին.

«Եւ արդ թեպետ և ես խրախոյս տամ ձեզ,—գրում է Վկայասերն ուռհայեցիներին,— և քաջալերեմ համբերել ամենայն իմաստութեամբ և ոչ իրրև դվատասրտեալ հովիւ արտաքոյ մնամ կրիցն, այլ կամաւորութեամբ ես մահակից ձեզ գտանեմ յամենայն գործս և ի տեսակս տանջանաց և ոչ օտարանամ կամ յուրասա կամ. եթէ բանիւքն կամ քննութեամբ էր մեզ նեղութիւնս, և կամ հարցափորձութեամբ, ահա պատրաստ կամ յամենայն իրս տալ պատասխանի, զոր ինչ և հարցանիցեն, բայց ի պատեհ և ի դիպող ժամու. և եթէ տանջանօք է կամ բռնութեամբ, և ոչ յայնմանէ յուրասա կամք»[1]:

Ապա Պահլավունի կաթողիկոսը գանգատվում է, որ եթե մինչև այդ հայերը ճնշվել ու հալածվել են ոչ քրիստոնյա բռնակալների լծի տակ, այժմ էլ ամբարտավան հոռոմ քրիստոնյա կոչվածներն

---

[1] Մատթեոս Ուռհայեցի, էջ 289—290:

են նրանց հետ այդպես վարվում. «...մինչև ցայժմ յանաստուած հեթանոսացն տերանցն զանգիտէաք և դատէաք և այժմ ի քրիստոնէից նոյնպես...»[1]:

Մի՞թե այս տողերի հեղինակին հունամոլ կարելի է ասել, եթե ոչ՝ ընդհակառակը:

Ինչպես իր հայրը՝ Մագիստրոսը[2], այնպես էլ Վկայասեր կաթողիկոսը, հույների, ասորիների, եգիպտացիների և այլ ազգերի հետ ունեցած շփման ու մերձեցման մեջ միշտ հետապնդել է մի գլխավոր նպատակ՝ օգնել հայ ժողովրդին, վերականգնել հայ պետականությունն ու կաթողիկոսարանը հայրենի հարազատ հողի վրա:

Գրիգորիս Պահլավունի կաթողիկոսն իր ամբողջ գործունեությամբ հետևել է Վկայասերին: Սա ևս զբաղվել է գրական աշխատանքներով, թարգմանել է վկայաբանական բազմաթիվ գործեր, որի համար էլ ստացել է Փոքր Վկայասեր մականունը:

Գրիգորիսի կաթողիկոսության ժամանակ Լևոնը դերվեց հույների ձեռքով և մեռավ բանտում: Ավելի էր սրվել հայ-հունական հարաբերությունները առանձնապես Կիլիկիայում: Կրոնական հալածանքները, Ռուբինյանց պետության վրա հույների հաճախակի հարձակումները սովորական երևույթ էին: Լևոնի գերությամբ ժամանակավորապես վերացավ Կիլիկիայի հայկական պետությունը: Վերջինիս այսպես թե այնպես փոխարինում էր կաթողիկոսարանը: Գրիգորիս Պահլավունին այդ տարիներին առանձնապես մտածում ու հոգ էր տանում հայերի դրությունը բարելավելու և Կիլիկիայի հայկական պետականությունը վերականգնելու համար: Նրբ հույները 15 տարի դրեթե անընդհատ կռվում էին Կիլիկիայի հայկական պետականությունը վերացնելու, վերադրավելու ողջ Կիլիկիան,

---

1 Մատթեոս Ուռհայեցի, էջ 290:

2 Ի դեպ, պետք է ի միջի այլոց ասել, որ Գրիգոր Մագիստրոսին էլ հունամոլ համարելը դեռևս հիմնավորված չէ և այդ կարծիքը պետք է լուրջ վերանայել: Մինչև այժմ էլ այդ կարծիքը հիմնավորվում է նրանով, որ նա ունեցել է հունական կրթություն, ծառայել է հույներին, կոչում է ստացել նրանցից, իր հայրենի դավառները փոխանակել է հունական դավառներով, հետևաբար իբր ունեցել է հունական օրիենտացիա: Այստեղից էլ հավանաբար բխեցնում են, որ բոլոր Պահլավունիները կողմնակից են եղել այն ժամանակվա հույների վարած քաղաքականությանը: Մեր նպատակից դուրս է այստեղ զբաղվել Գրիգոր Մագիստրոսի հունամոլ լինելու կամ չլինելու հարցով, բայց պետք է ասել, որ մեր պատմագիրների գործերում և իրեն՝ հենց Մագիստրոսի թղթերում բավականաչափ փաստեր կան, որոնք նրա հունամոլության կամ հունական օրիենտացիա ունենալու օգտին չեն խոսում, այլ ընդհակառակը:

Գրիգորիս կաթողիկոսը միշտ էլ Ռուբինյանների հետ է եղել, օգնել է նրանց իր խորհուրդներով։

Երբ Ուռհայի կոմսը՝ Բաղդուինոսն հարձակվեց Գող Վասիլին պատկանող շրջանների ու բերդերի վրա, գրավեց դրանք, որոնց հետ և Քեսունի կարմիր վանքը, որտեղ այդ ժամանակ գտնվում էր հայրապետանոցը, Գրիգորիս Պահլավունին, հակառակ կոմսի ցանկության, երբեք չուզեցավ հարաբերության մեջ մտնել լատինների կամ հույների հետ, մնալ նրանց մոտ, այլ անմիջապես կաթողիկոսարանը տեղափոխեց Սովք։

Գրիգորիս կաթողիկոսը իր ժամանակին կատարել է ազգօգուտ գործ, զբաղվել է հայ եկեղեցու ինքնուրույնությունը պահպանելու գործով։ Այդ մասին վկայում են նաև մեր պատմագիրները. «Իսկ սքանչելի հայրապետն Գրիգորիս օր ըստ օրէ յաւելոյր ի բարեգործութիւն և ի պայծառութիւն եկեղեցւոյ։ Եւ էր սիրեցեալ նա ամենայն ազգաց»[1]։

Մի ուրիշ պատմագիր նույն կերպ է արտահայտվում այս կաթողիկոսի գիտության, համբավի և գործունեության մասին[2]։

Վերջապես, եթե Պահլավունի Գրիգոր Բ և Գրիգորիս Գ կաթողիկոսները հունամոլ լինեին, գոնե հավատի ու դավանանքի մի քանի հարցերում պետք է հույներին որոշ բան զիջեին, նրանց հետ համաձայնության եզր գտնեին, ընդունեին հույն եկեղեցու եթե ոչ գերիշխանությունը, գոնե առաջնությունը։ Այդպիսի բան մեզ հայտնի չէ։ Իսկ եթե նրանք ազգային եկեղեցու բնագավառում քիչ-կուզ որոշ փոքրիկ զիջումներ աներին հույներին, դժվար թե մեր պատմագիրներն ու մատենագիրները սիրով, գովասանքով հիշատակեին նրանց կատարած գործերն ու անունները։

Այժմ քննենք Ներսես Շնորհալու հունասեր լինելու հարցը։ Ինչ խոսք, որ Շնորհալին էլ հետևել է իր պապին՝ Վկայասերին և մեծ եղբորը՝ Գրիգորիսին, բայց եղել է ավելի ինքնուրույն ու շրջահայեաց և անհամեմատ բեղմնավոր՝ իր բազմապիսի գործունեությամբ։

Բայց արդյո՞ք այդպես է գնահատված մեծ բանաստեղծը և ազգային եռանդուն գործիչը։ Ցավոք սրտի Շնորհալուն միայն հունասեր կամ հունական օրիենտացիա ունեցող հայտարարելով հարցը չի սպառվում։ Գրականագետներից և գիտնականներից գտնում են, որ իր ժամանակին եկեղեցիների միության խնդիրը ինքը՝ Ներսես Շնորհալին է բարձրացրել և այդ միության ամենա-

---

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 117։

2 Սամուէլ Անեցի, էջ 122։

ջևրմ կողմնակիցն է եղել։ Այստեղ արդեն երկու խոշոր սխալները իրար միացած՝ մթագնում են Շնորհալու պայծառ դեմքը։ Եվ քանի որ առանց այդ թյուրիմացությունները պարզելու հնարավոր չէ բացահայտել Շնորհալու աշխարհայացքը և հասարակական-քաղաքական գործունեությունը, ուստի անհրաժեշտ ենք համարում՝ համառոտակի կանգ առնել այդ խնդիրների վրա։ Մեր պատմագրության և գրականագիտության մեջ, դժբախտաբար, ճիշտ չեն բացատրվել հայ և հույն եկեղեցիների միության խնդիրներում Շնորհալու ունեցած դիրքը և տեսակետները։ Սկսած Չամչյանից և հետագա ժամանակների պատմաբաններից ու գրականագետներից շատերը Շնորհալուն համարել են եկեղեցիների միության գործն «արծարծող» և «նախաձեռնող»։ Այս ոչ ճիշտ տեսակետները հասել են մինչև մեր օրերը և տակավին անքննադատելի են մնում։ Հասկանալի է, թե ինչու անցյալի կրոնական պատմաբաններին ու գրականագետներին (Չամչյան, Ջարբհանալյան, Ալիշան և ուրիշներ) անհրաժեշտ է եղել Շնորհալուն դուրս բերել եկեղեցիների միության գործը «ղեկավարող»՝ հունական-լատինական եկեղեցիների հետ «միանալու», նրանց գերիշխանությունն ընդունելու նպատակով։ Այսպես է գնահատվել Շնորհալին գլխավորապես Վենետիկի մխիթարյան հայրերի կողմից։ Դժբախտաբար այդ տեսակետներին մի տեսակ տրադիցիոն կերպով հետևում են նաև մեր ժամանակների գրականագետներն ու գիտնականները։

«...Միութենական ձգտումներու առաջին քայլը և միութենական խնդիրին առաջին ծրագիրը Շնորհալիեն սկսավ...»[1], ասում է Մ. Օրմանյանը։

«Պատմության համար առանձին նշանակություն ունեն այն թղթերը, որոնք վերաբերում են, այսպես կոչված, «Միութեան խընդրին»,— գրում է պրոֆ. Մանուկ Աբեղյանը,— այսինքն՝ հայկական և հունական եկեղեցիների միացման խնդրին, որ ևարուցվել էր մի կողմից՝ հայոց կաթողիկոսի և մյուս կողմից՝ Բիւզանդիայի Կիր Մանուել կայսրի միջև։ Միությունը գլուխ չի եկել Ներսեսի մանվան պատճառով»[2]։

Հետևելով Օրմանյանին և պրոֆ. Աբեղյանին, Հենրի Գաբրիելյանն էլ հետևյալն է գրում. «Ի տարբերություն իր նախորդների՝

---

1 Մ ա ղ ա քի ա Օ ր մ ա ն յ ա ն, Ազգապատում, հատ. 1, կ. Պոլիս, 1912, էջ 1413 (ընդգծումը մերն է—Գ. Հ.)։

2 Մ ա ն ո ւ կ Ա բ ե ղ յ ա ն, Հայ հին գրականության պատմություն, Բ, էջ 129 (ընդգծումները մերն են—Գ. Հ.)։

Շնորհալին հայ և հույն եկեղեցիների միության կողմնակից էր[1]»: Կամ «Ներսես Շնորհալին եղավ այդ դաշնադրության (*այսինքն՝ հայ և հույն եկեղեցիները միավորելու—Գ. Հ.*) առաջին հայ իդեոլոգներից մեկը»[2]:

*Արդյո՞ք Շնորհալին է հարուցել եկեղեցիների միության խնդիրը և գլխավորել, սակայն այդ գործը գլուխ չի եկել նրա մահվան պատճառով: Կամ մի՞թե այդ խնդրում Շնորհալին տարբերվել է իր նախորդներից, այսինքն իր եղբորից՝ Գրիգորիս կաթողիկոսից և իր պապից՝ Գրիգոր Վկայասերից:*

*Շնորհալին շատ հետևողական կերպով շարունակել ու զարգացրել է իր նախորդների գործը՝ հավատարիմ մնալով ազգային ինքնուրույն մշակույթի պահպանման սովորույթներին: Այդ են հատատում նրա ողջ գործունեությունը և այն ուր թղթերը, որոնք վերաբերում են եկեղեցիների միության խնդիրներին:*

*Նախապես պետք է ասել, որ Շնորհալին ինքը երբեք չի հարուցել եկեղեցիների միության խնդիրը: Հայտնի է, որ սկսած Քաղկեդոնի ժողովից, հույները իրենց պետական և գաղափարախոսական գերիշխանությունը քրիստոնյա փոքր ազգերի, դրանց թվում առանձնապես հայերի վրա տարածելու համար, տարբեր ժամանակներում՝ դիվանագիտական տարբեր ձևերով են հանդես եկել:*

*XII դարում, հատկապես Շնորհալու կաթողիկոսության վերջին տարիներին, հույները, ելնելով իրենց քաղաքական շահերից, շատ սուր կերպով նորից առաջ քաշեցին եկեղեցիների միության խնդիրը, սակայն այն չհաջողվեց ոչ թե Շնորհալու կամ Մանվել կայսրի մահվան պատճառով, այլ որ այդ միությունը խարխլում էր Կիլիկիայի նորահաստատ հայ ազգային պետության հիմքերը և ընդհանրապես վնասակար էր ազգային մշակույթի պահպանման համար, որոնց ջերմ պաշտպանն էր Շնորհալին: Եկեղեցիների միության խնդիրը Շնորհալու կաթողիկոսության հենց առաջին տարվանից բարձրացրել է ինքը՝ Կիր Մանվել կայսրը՝ և փորձել է այն լուծել պետական գործիչների, Միքայել պատրիարքի և հույն գիտնականների մասնակցությամբ: «Միություն» կոչված այդ խարուսիկ գործի մեջ Մանվելը հետապնդում էր ոչ թե կրոնական, այլ տիրակալական, քաղաքական նպատակներ:*

*1165 թվականի երկրորդ կեսին, երբ Շնորհալին հաշտեցրել էր Ռուբինյան Թորոսին և Լամբրոնի տեր Օշին իշխանին, գոհ իր առա-*

---

1 *Հ ա ն ր ի Գ ա բ ր ի ե լ յ ա ն, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, Հատ. Բ, էջ 72 (ընդգծումները մերն են—Գ. Հ.):*

2 *Անդ, էջ 114—115:*

քելությունից՝ վերադառնում էր Հռոմկլա. Ճանապարհին՝ Մամեստիա (Մսիս) կոչվող քաղաքում նա հանդիպեց այդ քաղաքի կառավարիչ, հռոմական իշխանության ներկայացուցիչ՝ Ալեքս Դուքսին, որը Կիւ Մանվելի փեսան էր և իր աներոջից հատուկ գրավոր ցուցմունք ուներ անցնել կաթողիկոսարան՝ եկեղեցիների միության գործով: Ալեքս իշխանը վաղուց էր լսել Շնորհալու մասին, և շատ էր ցանկանում տեսնել նրան: Հարմար առիթը ներկայացել էր:

Դուքսը ստիպեց Ներսեսին, որ մի քանի օր որպես հյուր մնա իր մոտ: Օրերով նրանք բանակցում և վիճաբանում էին հայ և հույն եկեղեցիների մեջ եղած դավանական և ծիսական տարբերությունների շուրջ: Ամենաբնորոշն այն է, որ Ալեքս իշխանը կայսեր կողմից ներկայացրեց գրավոր մի հարցացուցակ, ուր մի շարք մեղադրանքներ կային հայ եկեղեցու հասցեին ուղղված և ապա պահանջ՝ հույն եկեղեցուն ենթարկվելու համար: Ժամանակագրական այդ գրությունը «Թուղթ ընդհանրական» ժողովածուի մեջ չկա, բայց Շնորհալու «Գիր հաւատոյ» թղթից պարզ երևում է, որ եղել է Կիւ Մանվելի կողմից ուղարկված այդպիսի մի ամբաստանող գրություն, որը տակավին չի հայտնաբերվել:

Որո՞նք են Շնորհալու «Գիր հաւատոյ» թղթի այն փաստերը, որոնք հաստատում են այդպիսի մի գրության գոյությունը: Հիսուսի ծննդյան, Ավետյաց և Մկրտության տոները մի օրում կատարելու առթիվ հույների կողմից արված դիտողությունների դեմ առարկելիս Շնորհալին նշում է, որ եղել է այդպիսի մի գրություն. «Գրեալ էր առաջին, թէ ի Յունվարի, ի հինգն տօնեն վաղիւն Աւետեաց, և երեկոյն ծննդեանն և ի միւս վաղիւն, որ է վեց Յունվարի, Մկրտութեան Քրիստոսի»[1]: Քրիստոսի մի բնության մասին խոսելիս նույնպես հիշվում է այդ գրությունը. «Դարձեալ ի թղթիս ասա գրեալ էր...»[2] և այլն:

Այս փաստերը հաստատում են, որ իրոք՝ Ալեքս իշխանը Շնորհալուն ներկայացրել է մի թուղթ, ուր մեղադրվել է հայ եկեղեցին դավանաբանական ու ծիսական խնդիրներում: Ուրեմն, հենց սկզբից, Շնորհալու օրոք, եկեղեցիների միության հարցը առաջ են քաշել միայն հույները, այն էլ կայսեր, նշանավոր պետական գործիչների և մասամբ հոգևորականների ձեռքով: Շնորհալին ոչ միայն չի «հարուցել» ու «նախաձեռնել» եկեղեցիների միության խնդիրը

---

1 «Թուղթ ընդհանրական», Երուսաղէմ, 1871, էջ 94:

2 Անդ, էջ 96: Տե՛ս նաև էջ 97, 99, 101:

հայերի կողմից, այլև առարկել ու հերքել է հույների բոլոր մեղադրանքները, պաշտպանելով ազգային եկեղեցին ու նրա դավանանքը հույների հարձակումներից։

Մամեստիայում Շնորհալին բանավիճում էր շատ հիմնավոր և ոչ մի խնդրում չզիջեց Ալեքս դուքսին։ Այն ժամանակ Ալեքս իշխանը պահանջեց նրանից, որ դրավոր շարադրի հայկական դավանանքի հիմնական սկզբունքները՝ Մանվել կայսեր ներկայացնելու համար։ Ահա այստեղ է, որ Շնորհալին գրում է «Գիր հաւատոյ» վերնագրով ընդարձակ առաջին թուղթը, որը ամբողջությամբ իր «Հայոց պատմության» դրքում բերել է Կիրակոս Գանձակեցին[1]։

Թեև նպատակահարմար կլիներ եկեղեցիների միության վերաբերող Շնորհալու դրած 7—8 թղթերի մասին խոսել նրա արձակ գործերի՝ մյուս թղթերի բաժնում, բայց քանի որ նրա գործունեությունը միության խնդիրներում ճիշտ չի բացատրված, ուստի մենք ստիպված ենք այդ թղթերի մասին խոսել այստեղ, նախապես։

«Գիր հաւատոյ» թղթում համառոտ կերպով տրվում է հայ եկեղեցու դավանանքը։ Այնուհետև Շնորհալին համարձակ տոնով առարկում է այն դիտողություններին, որոնք գրված են եղել կուսակալ Ալեքս իշխանի ներկայացրած թղթում և ցույց տալիս, որ այդ մեղադրանքները հիմքից ու ճշմարտությունից զուրկ են, տեղ-տեղ էլ՝ հասնում են մոլորության»[2]։

Այս դավանագրի անբաժանելի մասն են կազմում երկու թուղթ ևս. մեկը՝ «Սահմանք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ», իսկ մյուսը՝ «Յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ», որոնք գրված են «Գիր հաւատոյ» թղթից մի տարի հետո, նույնպես կիու Մանվել կայսեր պահանջով։ Երբ Ալեքսը «Գիր հաւատոյ» գրվածքը ներկայացրեց Մանվելին, վերջինս կարդալուց հետո, չնայած զարմացավ Շնորհալու խելքի և համարձակության վրա, բայց իր ցանկացածը այդ գրվածքում չգտավ։ Հայոց կաթողիկոսի եղբայրը ոչ միայն համաձայնություն չէր ցույց տալիս եկեղեցիների միության հարցում, այլև առարկում էր հարուցված մեղադրանքների դեմ և պաշտպանում հայ եկեղեցու ուղղադավանությունը։ Խորամանկ կայսրը մի շողոքորթ ու շոյող նամակ գրեց Գրիգորիս կաթողիկոսին, որ Ներսեսին ուղարկի Կ. Պոլիս՝ իր մոտ՝ եկեղեցիների միության վերաբերյալ անձամբ խոսելու։

---

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմության հայոց, էջ 121—147։

2 «Թուղթ ընդհանրական», էջ 106։

Իհարկե, Ներսեսը չգնաց Կ. Պոլիս, այդ առթիվ Մանվելին գրեց մի նամակ, սակայն կայսրը չբավականացավ այդ նամակով. դեսպան-պալատականի միջոցով նա պահանջեց, որ արդեն կաթողիկոս դարձած Ներսեսը հայոց դավանանքի վերաբերյալ մի լրացուցիչ դրություն ևս գրի: Ահա այս երկու թղթերն են, որ «Գիր հաւատոյ» գործի հետ մի ամբողջություն են կազմում, տեղ-տեղ էլ որոշ կըրկնություններով: Սրանցից առաջնի («Սահմանք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ») միայն այն մասն է բնորոշ, թե ինչպես Կիւ Մանվել կայսրը շատ խիստ պահանջել է, որ Ներսեսը կրկին գրի դավանաբանական խնդիրների մասին: Կատարելով թագավորի հրամանը, դիմելով նրան Շնորհալին ասում է.

«...Սակայն ինքնակալ թագաւորութեանդ հրամանն, որ ի ձեռն մեծի պալատանդ ծառայի, առ մեզ հասեալ նուաստութիւն, տալ գրով զհաւատոյ մերո դաւանութեան բան... Բայց զի ձերով հրամանաւ պնդագոյնս պահանջեաց թղթաբեր սուրբ թագաւորութեանդ ի մէնջ. ոչ ընդդիմացաք հրամանին, այլ յաւելաք և զայս ևս ի նոյն, որպէս զի յերկուց և յերից կրկնաբանութեանց հաստատեսցի բանին ճշմարտութիւն իբրև վկայիւք...»[1]:

Իսկ մյուս՝ «Յաղագս աւանդութեան եկեղեցւոյ» վերնագրով թուղթը իր էությամբ, առարկելու ոճով շատ նման է «Գիր հաւատոյ» թղթին: Այստեղ Շնորհալին թագավորին բացատրում է, որ հավատի ու դավանանքի համար տոների և որոշ ծեսերի տարբերությունները կարևոր նշանակություն չունեն և դրանք չպետք է դառնան հակառակության, ազգերի թշնամության առիթ, ինչպես մարդու սև կամ սպիտակ գույնը չի կարող վնաս տալ ի ծնե առողջ մարմնին:

«Զոր օրինակ գոյնք մարմնոյ՝ սևութիւն կամ սպիտակութիւն, ոչինչ վնասեն զմարմին՝ յորժամ բնութիւնն առողջ իցէ. նոյն և որք զհաւատն առողջ ունիցին, չէ ինչ վնաս ոգւոց՝ ծոնից կամ այլ ինչ աւանդութեանց եկեղեցւոյ զանազանութիւն»[2]:

Այս թղթի վերջում Շնորհալին եզրափակում է, թե հույներն այնքան սաստիկ ատելությամբ են լցված դեպի հայերը, որ կորցրել են ողջամտությունը, տգիտաբար զրպարտում են և ծիծաղելի, անհեթեթ բաներ են վերագրում հայերին[3]:

Եկեղեցիների միության վերաբերող այս թղթերի մեջ ամենա-

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 120—121:

2 Անդ, էջ 138:

3 Անդ, էջ 142:

նշանավորը Կիւ Մանվելի առաջին նամակի պատասխանն է, որտեղ Շնորհալին հանդես է գալիս որպես խելացի դիվանագետ, համարձակ հրապարակախոս և ջերմ հայրենասեր։

Իսկ ի՞նչ է ներկայացնում իրենից Մանվելի գրած այդ փոքրիկ երկու էջանոց նամակը։ Հույների կայսրը ցանկանում է, որ իրեն ենթակա լինեն քրիստոնյա բոլոր փոքրիկ ազգերը, դրանց թվում և հայերը, «որ մերձ են յանբիծ հաւատս, որպէս զի միաւորեալք ի քրիստոնեական լրումնս՝ մի հօտ լինիցին ամենայն քրիստոնեայք, և ի միոյ հովուապետէ ոսանիցին... և միով գաւազանաւ հաւատոյ հովուին ի միասին՝ և ի միում դալարուղջ վայրի ուղղափառացն բանից...»[1]։

Այս թագավորական նամակում բնորոշն այն է, որ բոլոր քրիստոնյա ազգերին մի հոտի մեջ միավորելու, «մի հովվապետի գավազանով կառավարելու» հարցը դնում է ոչ թե հույների հոգևոր պետը, պատրիարքը, այլ ինքը՝ աշխարհիկ թագավորը՝ իր քաղաքական նկրտումներին կրոնական դույն տալով։ Իսկ թե այդ հարցն ինչո՞ւ է թագավորը ինքն առաջ քաշում՝ նամակում հիմնավորված է այսպես.

«...Զոր առաւել ևս մանաւանդ Աստուած պահանջէ յիմում թագաւորութենէս, և քան աշխարհական աթոռոյս բազմապատիկ հոգոյ՝ այսմ մանաւանդ հոգ տանել աթոռոյ հաստատութեան, և որքան կարողութիւն է՝ փոյթ ունել և ջան յաղագս ուղղութեան ամենայն քրիստոնէից»[2]։

Նամակի վերջում Մանվիլը հայոց կաթողիկոսին առաջարկում է հետևյալը. «Յայտ առնեմք զձեզ յառաջադոյն խորհել և այց առնել թագաւորութեան մերոյ յաղագս քրիստոնէից Հայոց հաւատոյդ. զորև ի միտ առեալ զեղեալ բանս ի գիրս բարեպաշտութեան ձերոյ՝ որ թարգմանեալ ցուցաւ... Վասն որոյ խորհի թագաւորութիւնս մեր լինել միջնորդ միաւորութեան բաժանման ձերոյ...»[3]։

Շնորհալին ոչ միայն ընդառաջ չգնաց Մանվելի նամակին, չկատարեց նրա պահանջները, այլ համարձակ, բայց զուսպ առարկեց Մանվելին և ցույց տվեց գերիշխանություն ձեռք բերելու նրա խորամանկ ձգտումները։

Ակնհայտ էր արդեն, որ իսկապես հույների կողմից առաջ քաշված «եկեղեցիների միություն» անունը կրող գործը փոքր ազգե-

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 107։

2 Անդ, էջ 108։

3 Անդ։

քին ճնշել էր նշանակում՝ կապված կրոնական հալածանքների և արյունալի պատերազմների հետ։ Ահա թե ինչու Ներսես Շնորհալին իր նամակում խորհուրդ է տալիս հույների կայսր Մանվելին, որ վերջ տա պատերազմներին և ուրիշների երկրների նվաճմանը, այլ ձգտի երկրների և ազգերի մեջ իսկական խաղաղություն հաստատելու համար։

«Զի ոչ այնման բարբարոսական պատերազմաց յաղթութեամբ և ամրագոյն հաղաքաց առմամբ աւնուն թագաւորութեան ձերոյ բարձրանայ, որչափ եկեղեցւոյ Քրիստոսի առնելով խաղաղութիւն ընդ տիեզերս, և զպատերազմասէր բշնամւոյն խորտակելով զգենան միշ ի սպառ, որ է ճեռ և նախանձ չարեաց և բանակռիւն լինել ի վճասակար իրս, յորոց միջի է հայհոյութիւն աւնուանն Աստուծոյ»[1]։

Իսկ այդ խաղաղությանը հասնելու համար Շնորհալին առաջարկում է, որ վերջ տրվի հույների պատերազմասեր բարքերին, դադարեցվի հայերին հալածելն ու հայհոյելը, քանի որ հայերն առանց այդ էլ հալածված են արտաքին ուրիշ աշխարհակալ ու բարբարոս թշնամիներից և, թողած իրենց բուն հայրենիքը, ցրվել են աշխարհով մեկ, որպես անտուն, պանդուխտ մարդիկ։ Բավական է, որքան հալածանք ու կոտորած է եղել, բավական է հայերի վրա դրած դրած բռնությունները, որոնք դերազանցել են սելջուկների պատճառած չարիքներից։

«...Հրամայեցէք ի բաց յայնպիսի պատերազմասէր բարուց լինել, և սիրով և խաղաղութեամբ բերիլ առ նժդեհքս և պանդխտաքս, որք ի հակառակաց Քրիստոսի հալածեալք վասն արդարութեան՝ առ ձեզ որպէս յամուր ապաստանի դիմեալք են խաղաղանալ... և մի՝ այլ լիցի՝ որպէս մինչև ցայժմ, պատճառ փախչելոյ մերոց ի ձէնջ՝ աւերումն եկեղեցեաց և սեղանոյ Աստուծոյ կործանումն և նշանաց Քրիստոսի խորտակումն և բազում նեղութիւնք պաշտօնէից և պէսպէս զրպարտութիւնք, որպէս և ոչ ի մէջ բշնամեաց Քրիստոսի՝ յորս մերձ եմք»[2]։

Այնուհետև Շնորհալին թագավորից պահանջում է, որ ազգային և կրոնական հարցերը քննելիս մեծ և փոքր ազգերը պետք է ունենան հավասար իրավունք.

«...Մի եղիցի որպէս տեառն առ ծառայս և ծառայից առ տեարս. զի դուք զմերն պակասութիւն դնէք մեր առաջի, և մեք ոչ համարձակեմք ի ձերոց ինչ՝ յորոց դայթակղիմք, ծանուցանել ձեզ.

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 112։

2 Անդ, էջ 114—115։

և այս մարմնաւորաց է օրէն և ոչ հոգևորաց, զի թէպէտ և ի նիւթականացս զբարձրագոյնն ունիք ամենայնիւ... այլ աննիւթական շնորհաւն մի են հաւատացեալք ի Քրիստոս՝ մեծամեծք և փոքունք...»[1]:

Հավասար իրավունքներ ունենալուց բացի, կողմերը պետք է լինեն նաև ողջամիտ և անաչառ:

Նամակը վերջանում է այլաբանորեն բերված մի օրինակով, որով Շնորհալին ուզում է Մանվելին հասկացնել, որ հույները միշտ մեծամտաբար, անառողջ աչքերով են նայում ուրիշի պակասություններին և չափազանցնում, իսկ իրենց պակասավոր, վատ կողմերը չեն տեսնում:

«Նաև բիբք աչաց թեպետև արագոյն լինի զայլս տեսանելով, բայց զինքն և որ շուրջ զինքեամբ են դիրք մարմնոյն՝ անկարանայ նկատել, որ և յախտանալն՝ այլոմ կարոտանայ աչաց ի ձեռին վասն առողջութեան: Եւ արդ այս պատճառ իմաստից բան՝ բաւական է ղոր տուաք գրով ծայրագոյն ձեր իմաստութեան, կարող էք սակաւուքս զբազումս իմանալ մտաւորական տեսութեամբ»[2]:

Շնորհալին կիւ Մանվելին գրել է երեք նամակ: Մյուս երկու փոքրիկ նամակները կապված են Մանվելի կարդադրությամբ Հռոմկլայ գործուղված մագիստրոս Թեորիանեի հետ, որի առաքելության նպատակը դարձյալ եկեղեցիների միությունը գլուխ բերելու գործն էր: Բայց նախքան Թեորիանեի կատարած գործերի և այդ երկու նամակների մասին խոսելը, այստեղ համառոտակի ծանոթանանք Շնորհալու մի ուրիշ նամակի հետ, որը հասցեագրված է հռոմական եկեղեցու հայր Միքայել պատրիարքին:

Վերջինս նույնպես Շնորհալուն գրել էր մի նամակ՝ եկեղեցիների միության մասին: Միքայելը մի կողմից հորդորում էր, որ Շնորհալին այդ գործում լինի կազմակերպող ու նախաձեռնող, մյուս կողմից էլ՝ ուզում էր ցույց տալ Մանվելի ուժն ու ազդեցությունը, ահաբեկել Շնորհալուն, որ անպայման ընդառաջ գնա թագավորին, որը «փառաւորեալ է յամենայնի... և ևս մեծանան սորին մեծագործութիւնքն, և աստուածապսակեալ սա, գրեթէ ամենայն թագաւորք երկրի հնազանդ լինին սմա, այլև աճաւոր է յաչս ամենեցուն որ շուրջ են զնովաւ... Նա զի՛և զամենայն եկեղեցիս կամի սա զի ի մի ժողովեսցէ, և մի արասցէ զնոսա ըստ աստուածատուր միաւորութեանն»[3]:

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 117—118:

2 Անդ, էջ 119:

3 Անդ, էջ 158:

Սակայն Շնորհալին չէր զարմանում պատրիարքի այս խոսքերի վրա, որովհետև քրիստոնեական բանաձևերի հետևում արդեն պարզ երևում էր բյուզանդական պետության միրակալական քաղաքականությունը։ Լավ ըմբռնելով այդ կարգի «խաղաղության» և «միաբանության» քարոզի իմաստը, Շնորհալին առաջ է քաշում անշահախնդիր «ճշմարիտ» խաղաղության սկզբունքը[1]։

Ինչպես Մանվել կայսրին գրված նամակում, այնպես էլ այս թղթում, Շնորհալին զգուշացնում է պատրիարքին էլ, որ անօգուտ բանակռիվները և ուրիշների վրա իշխանություն ունենալու մոլար սովորությունները բացի վնասից ոչ մի օգուտ չեն բերում։ Դրա համար էլ պետք է ձգտել իսկական խաղաղության, «Զի ոչ մարդկային ախտիւ ասօգուտ բանակռվութեամբ և անօտի յաղթասիրութեամբ՝ յորմէ ոչինչ օգտեցաւ եկեղեցի այսքան յերկար ժամանակաւ...»[2]։

Փաստերը ցույց են տալիս, որ եկեղեցիների միության գործը նման թղթերով ու նամակներով հույների համար հաջող վախճան չունեցավ։ Մնում էր դիմել գործնական և ավելի ազդու միջոցի։ Կամ Մանվել կայսրը ինքն այդ գործով պիտի գնար Հռոմկլա, կամ հեղինակավոր մարդկանց պիտի ուղարկեր։

1173 թվականի վերջերին Մանվել կայսրը երկրորդ[3] անգամ Հռոմկլա գործուղեց երկու ազդեցիկ պատգամավորներ. հույն նշանավոր դիտնական, մագիստրոս Թեորիանեին և հայ՝ Փիլիպպոպոլսի վանքի վանահայր Հովհաննես Ութմանին։ Պատգամավորներն իրենց հետ տանում էին Մանվելի կողմից գրված մի փոքրիկ նամակ՝ Հայոց Ներսես կաթողիկոսի անունով և մի գրություն, որը պարունակում էր դավանաբանական վիճելի ինը հարց՝ հետևյալ վերնագրով. «Գլխակարգեալք խնդիր առ ի Հռոմոց առաքեալ ի Թագաւորէն, պի ի գումարել ժողովոյն հայոց՝ ընտրեսցեն զոր արժանն է ընդունել սակս միաբանութեան»։ Տեղ հասնելուն պես, ինչպես հրահանգված էր պատգամավորներին, պետք է ժողով հրավիրեին և քննեին վերևում հիշված դավանաբանական ինը կետերը։ Շնորհալուն ուղղված նամակում շոյող, շողոքորթ խոսքերից բացի, կային և գայթակղեցնող խոստումներ։ Նամակը վերջանում էր այսպես.

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 103։

2 Անդ, էջ 165։

3 Թեորիանեն և Ութմանը նույն գործով առաջին անգամ եղել են Կիլիկիայում՝ 1170 թվականի գարնանը։

«Եւ այսոցիկ լինելով քարեաց կառարումն, նախ յաստուածային մարդասիրութիւն վայելեցէք անձանց և համօրէն ազգի փրկութեան լինելով առիթ սակս միաւորութեան անդամոց եկեղեցւոյ, և յետ այնորիկ շնորհի թագաւորութեան մերոյ բազմապատիկ բարեմասնութեամբ ըստ կամաց ձեր և խնդրոյ»[1]:

Մագիստրոս Թեորիանեի և վանահայր Հովհաննես Ութմանի կողմից բերած հրահանգ-թղթի ինը կետերը հետևյալներն էին, որ պիտի հայերը քննեին և ընդունեին.

ա) Նզովել մի բնություն ընդունող Նէղիքեսին և Դիոսկորոսին.

բ) Ընդունել Քրիստոսի երկու բնությունը՝ աստվածային և մարդկային.

գ) «Խաչեցար» բառը հանել «Սուրբ Աստված» երգից.

դ) Հույների ու լատինների հետ միաժամանակ կատարել Քրիստոսի ծննդյան, մկրտության, Քառասնօրյա գալստյան և Ավետման տոները.

ե) Մեռոնը ձեթով անել.

զ) Պատարագը հացով ու ջրով կատարել.

է) Պատարագի և ժամասացության ժամանակ ժողովրդին ներկա դարձնել եկեղեցում.

ը) Ընդունել դ, ե, զ, է տիեզերական-կրոնական ժողովները.

թ) Հայոց կաթողիկոսը հույների կայսրի կողմից պիտի առաջադրվի և հաստատվի:

Ինչպես ասացինք, «Գլխակարգեալք» վերնագրված վերոհիշյալ ինը կետերի, կամ «եկեղեցիների միության» կոչված գաղափարների մեջ թաքնված էր հույն միապետի աշխարհակալական, Կիլիկիան տնտեսապես և հոգեպես գաղութացնելու և փոքր ազգերի վրա գերիշխանություն տարածելու քաղաքականությունը՝ կրոնական պատրվակի տակ: Շնորհալին լավ հասկացել էր Մանվելի նպատակը:

Երբ Շնորհալին և Հռոմկլայի ժողովը մերժում են Թեորիանեի առաջարկները, հունաց մագիստրոս-պատվիրակը պահանջում է Շնորհալուց, որ Հռոմկլայի ժողովի ընթացքի և իր բռնած դիրքի մասին մի նամակ գրի Մանվել թագավորին: Շնորհալին գրում է Թեորիանեի պահանջած նամակը և հանձնում նրան:

Այժմ տեսնենք, թե ինչ է իրենից ներկայացնում Շնորհալու այս նամակը: Սկզբնական շրջանում, ընդհանրապես Շնորհալին

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 145:

այլ կերպ էր նայում եկեղեցիների միության խնդրի վրա։ Բայց երբ նա Մամիստիայում 1165 թվականին հանդիպեց Ալեքսին, նրա հետ շարաբաններով բանակցեց ու վիճեց, խորը թափանցեց այդ խնդրի բուն էության մեջ, նա զգաստացավ և կասկածանքով սկսեց նայել հույների կողմից առաջադրված միության խնդիրներին։ Իսկ երբ արդեն վերևում բերված նամակների փոխանակությունը կատարեց հույների աշխարհիկ և հոգևոր պետերի հետ, վերջնականապես համոզվեց, որ բյուզանդացիք այդտեղ հետապնդում են գլխավորապես քաղաքական նպատակ։

Շնորհալին մերժեց կիր Մանվելի, Թևորիանեի և Ումմանի միջոցով ներկայացրած պահանջները։ Եկեղեցիների միության հարցերի քննության գործը նա խելացիորեն կապեց Հայաստանի հետ և պատճառաբանեց, որ միայն Կիլիկիայի հոգևորականությունը և հայրապետական աթոռը, առանց բուն Հայաստանի հոգևորականների, չեն կարող քննության դնել այդ հարցերը, որովհետև լիազորված չեն, իսկ այդ գործը լուրջ, համազգային նշանակություն ունեցող մի գործ է։ Նամակում այդ խնդիրը Շնորհալին պատճառաբանում է այսպես.

«Բայց քանզի աթոռ Թագաւորութեան մերոյ՝ որով և քահանայապետական իշխանութիւն յառաջանայ, բարձեալ է այժմ ի բռնակալութենէ այլազգեաց, նորին յաղագաւ և հայրապետութեանս հայածեալ ի հայրենին աշխարհէ և Աթոռոյ՝ յօտար աշխարհ տարաբերի պանդխտութեամբ, յորոց պատճառի ոչ ունիմք մերձ զորս ըստ ժամանակիս եպիսկոպոսունք են Հայաստանեաց և վարդապետք, և առանց խորհրդակցութեան նոցա՝ անմարթ է զկատարեալն տալ պատասխանի հարցմանց ձերոց, զի մի՛ փոխանակ միաբանութեան զանազան պատճառս տացուք բաժանմանց, և շարժուն և փոփոխական երևիցեն բանք մեր։ Յաղագս այսորիկ,—բացատրում է Շնորհալին,— ոչ պատշաճ համարեցաք միայն մերս մերձակցօք գրել զպատասխանին մեծի խորհրդոյս, մինչև առաքեսցուք ի Մեծն Հայք և յամենայն կողմանս, և ժողովեսցուք զամենեսեան յորս իցէ զօրութիւն իմաստութեան, և առաջի դիցուք նոցա զոր խնդրեքս ի մէնջ զհատատոյ և զկարգայ եկեղեցւոյ բանն»[1]։

Այս նամակներով էլ վերջանում են բղթակցությունները հույների և նեռաես Շնորհալու միջև եկեղեցիների միության վերաբերյալ։ Բայց այս դեռ բոլորը չէ։ Շնորհալին ունի երկու նամակ ևս՝ եկեղեցիների միության խնդիրների հետ կապված։ Դրանցից մեկը

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 147։



318—5

ուղղված է մեծ Հայաստանի հոգևորականներին, իսկ մյուսը՝ Ասորոց Միխայիլ պատրիարքի գրած նամակի պատասխանն է։

Առաջին նամակով Շնորհալին զգուշացնում է բուն Հայաստանի հոգևորականներին, որ չենթարկվեն հույների կողմից տարածված սուտ լուրերի ազդեցություններին և չգժավեն Կիլիկիայի կամ ասորիների հետ «զի մի՛ յանիմաստից ամանց անուղղապէս ինչ լուեալ, այլ ընդայլոյ ինչ կարծիցէք...[1]։ Եւ մեր պատասխանեալ նոցին որպէս արժան էր»[2]։

Այնուհետև Շնորհալին հայաստանցիներին իրազեկ է դարձնում Կիլիկիայում կատարված իրադրությանը, առանձնապես հույների հետ ունեցած հարաբերությունների խնդրում։ Նամակի այս մասում ասված է, թե ինչպես հույների կայսր Մանվելը և Կ. Պոլսի պատրիարք Միքայելը անընդհատ պրոբյուններ են ուղարկում Կիլիկիա և «եկեղեցիների միություն» անվան տակ ցանկանում են իրենց ազդեցության տակ վերցնել Կիլիկիայի հայկական իշխանությունը և Միջագետքի քրիստոնյա ասորիներին։ Տիրակալական ձգտումները կրոնի քողի տակ թաքցնելով՝ հույն աշխարհիկ և հոգևոր պետերը ամեն միջոց ձեռնարկում էին, որպեսզի ոչ միայն հայերին, այլև մյուս քրիստոնյա փոքր ազգերին նույնպես առնեին իրենց ազդեցության տակ և ըստ ամենայնի իշխեին նրանց վրա։

Այն օրերին, երբ մագիստրոս Թեորիանեն և Հովհաննես Ոսկեման պատվիրակը թագավորի հրամանով գնում էին Հռոմկլա՝ եկեղեցիների միությունը գլուխ բերելու՝ Կիլիկիան իրենց հոգևոր գաղութը դարձնելու ծրագրով, այդ ժամանակ, այդպիսի մի պատգամավորության էլ Կ. Պոլսից մեկնում է Պարսամա վանք կոչված վայրը, որը հանդիսանում էր ասորիների կրոնական կենտրոնը։ Ինչպես Մագիստրոս Թեորիանեն Հռոմկլայում, այնպես էլ ասորիների մոտ ուղարկված Քրիստափոր գիտնականը հաջողություն չունեցան։ Հայերը և ասորիները Ներսես Շնորհալու ջանքերով նախապես միաբանվել էին և մերժեցին հույների պահանջները։ Սակայն Թեորիանեն Մանվել թագավորին ներկայացրած զեկուցագրի մեջ փոխանակ ճիշտ ներկայացնելու իրենց առաքելության արդյունքները, աղճատում է իսկական փաստերը, խոսում է հաղթողի ոճով՝ ղրպարտելով թե հայերին և թե ասորիներին։

Հունարեն գրած այս անապարդ զեկուցագիրը 5 դար հետո, XVII դարի վերջերին, կաթոլիկ վարդապետ Կղեմես Կալանոսը թարգմանեց հայերեն և զետեղեց իր երկի Ա հատորում՝ «Առա-

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 210։

2 Անդ, էջ 209—210։

քումն ի մէծէն կայսերէ Մանվելէ առ Հայս, յորում դնի տրամաբանութիւն զոր արար հրեշտակն Յունաց Տրիանէ ընդ կաթողիկոսին Հայոց տէր Ներսէսի» վերնագրով։ Կալանոսի անհիմն հերյուրանքները հայերի մասին թարգմանիչը հասցրել է չափազանցության, որ նրանք և իրենց կաթողիկոսը երկդիմի են, որ աղերսում են հույների պատրիարքին, որպեսզի նա «օրհնեսցէ զազգն Հայոց, որ այնքան ժամանակս եկաց մնաց ի նզովս»[1]։ Դժբախտաբար, 183 տարի հետո, լատինամոլ Կալանոսի վերոհիշյալ հերյուրանքներին անվերապահորեն հավատում է բանաստեր Ղևոնդ Ալիշանը, որն այնքան հիացմունքով ու սիրով է խոսում Շնորհալու կյանքի ու գործունեության մասին[2]։

Եկեղեցիների միության խնդրում Շնորհալու բռնած դիրքը ոչ ճիշտ գնահատելու դեմ դեռևս սրանից հարյուր տարի առաջ գրել ու բողոքել է Մ. Նալբանդյանը։ Իր հայտնի «Հիշատակարան»-ում Նալբանդյանը խիստ քննադատության է ենթարկում անցյալ դարի 50-ական թվականների վերջերին ռուսերեն լույս տեսած Ա. Խուդաբաշևի «Обозрение Армении» գիրքը, որտեղ միանգամայն սխալ են գնահատվել Սահակ Պարթևը, Խորենացին և մանավանդ Ներսես Շնորհալին։

Նալբանդյանը ցույց է տալիս, թե ինչպես Խուդաբաշևը բառացի և անվերապահորեն օգտագործել է Թևորիանեի զեկուցագիրը և Կալանոս վարդապետի վերևում հիշված գործերի ռուսերեն թարգմանությունը և բոլորովին սխալ մտքեր արտահայտել եկեղեցիների միության հարցում, որ իբր հայերը իրենք են առաջինը ձգտել եկեղեցիների միության։ Առարկելով Խուդաբաշևի այդ սխալ տեսակետին, Մ. Նալբանդյանը գրում է.

«Պարտականութիւն համարում ենք հրապարակով հայտնել անարվեստ կոմպիլատորին, թե մենք քննելով և քրքրելով հայոց պատմության թերթերը, ոչ մի տեղում չենք գտանում բուն ազգի կամ նորա հոգևորականության մեջ միավորության ձգտողություն, իսկ դորան հակառակ միտումն, ամենայն բայլափոխում...»[3]։

Հերքելով Խուդաբաշևի անհիմն տեսակետը, Նալբանդյանը ցույց է տալիս, թե իսկապես ով է առաջ քաշել միության խնդիրը.

---

1 Կղեմէս Կալանոս, Միաբանութիւն հայոց ս. եկեղեցւոյն ընդ մեծի ս. եկեղեցւոյն Հռոմայ, Հռոմ, 1690, հատ. Ա, էջ 320։

2 Ղևոնդ Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 424—425։

3 Մխայել Նալբանդյան, Ընտիր երկեր, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1953, Երևան, էջ 318—319 (ընդգծումները մերն են—Գ. Հ.)։

«Որքան խոսք ու ժողով եղած են միավորության խնդրի մասին, այդ բոլորը միշտ պատահել են նախ, հույների առաջարկությամբ և երկրորդ, ազգի անիշխանության կամ մի այնպիսի ժամանակ, երբ Բյուզանդիոնը մեծ ազդեցություն ուներ Հայաստանի վերա»[1]։

*Ապա ավելի կոնկրետացնելով իր խոսքը Ներսես Շնորհալու և Գրիգորիս կաթողիկոսների ժամանակներում ծառացած եկեղեցիների միության խնդիրների վրա, Նալբանդյանը շարունակում է.*

«Անհայտ չէ հայերից, որ սուրբ Ներսես Շնորհալու ժամանակ ինչպես նաև նրա եղբոր Գրիգոր կաթողիկոսի ժամանակ, հունաց Մանվել կայսրը շատ և շատ ցանկացավ հայոց եկեղեցու հունաց հետ միավորության, բացել էր մի շարունակ դավանաբանական գրագրություն այս առարկայի վերա, ուղարկելով ուրիշների հետ Թեորիանոս անունով իմաստասիրությամբ հռչակված հույն աբեղան, որ սա բերանացի խոսեր Շնորհալու հետ և կարգի դներ միավորության խնդիրը»[2]։

*Եկեղեցիների միության վերաբերյալ եղած բյուր կարծիքներից ավելի շատ Նալբանդյանին զայրացնում է Շնորհալուն վերագրված Թեորիանոսի հորինած գաղտնի նամակը, որովհետև այս խնդրում խուդաբաշևը ավելի հեռուն է գնում քան Թեորիանեն և Կալանոսը։*

«Պ. խուդաբաշևը,— գրում է Նալբանդյանը,— որպես ստույգ պատմություն ընդունելով մի հունական դիրք, նորա ոտա թարգմանությունից, որ ուներ ինքը, և ուր որպես թե դրված էին Շնորհալու և Թեորիանոս աբեղայի խոսակցությունքը, յուր ներկա աշխատության մեջ նկարագրում է Ներսես Շնորհալին, որպես մի երկդիմի մարդ, յուր ազգը խաբող, հունական օգուտը պաշտող, և ավելի հույն քան թե հայ...»։

*Խուդաբաշևի՝ չափը կորցրած այս զրպարտչական խոսքերի դեմ դեմոկրատ-հայրենասերը զայրույթով բացականչում է. «Կոմս, չափեցեք այս անիրավությունքը, որ չափով և կամիք, բայց մեք ընդունել այսպիսի բաներ չենք կարող։ Այս բոլորը հրատարակում ենք անարգ զրպարտություն Ներսես Շնորհալու վերա և ոչ մի վկայությամբ չհաստատվելիք։ Թեորիանոսի Շնորհալու հետ խոսակցությունը բովանդակող դիրքը,— շարունակում է Նալբանդյանը,— որ պ. խուդաբաշևն ընդունում է որպես պատգամ սրբության և որի վերա հիմնվելով հայերի և օտարների առաջև անացնում է Ներսես Շնոր-*

---

1 *Մ ի ք ա յ ե լ Ն ա լ բ ա ն դ յ ա ն, Ընտիր երկեր, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1953, Երևան, էջ 319 (ընդգծումները մերն են—Գ. Հ.)։*

2 *Անդ, էջ 319։*

*հալին, գիտությունը չի կարող ընդունել։ Այդ դեռ ապացույց չէ, եթե ոչ մի տեղում չեղած և ոչ մի ուրիշի վկայությամբ հաստատված բանը, երևում է Թեորիանոսի գրքի մեջ։ Ինչպե՞ս կարելի է ընդունել այն խոսքերը, որպես սեփական խոսքեր Շնորհալու, որի հոգին և ուղղությունը հաջ հայտնի են մեզ բոլորովին այլ կողմից, նույնիսկ Շնորհալու ընդհանրական բղթերից, հոգեշարժ շարականներից կամ այլ աշխատություններից»*[1]։

*Դրախտականի վերջում Նալբանդյանը Թեորիանեի վերևում հիշված գրքի ստահոդ խոսքերի և Շնորհալուն վերագրվող գաղտնի նամակի վերաբերյալ ազգի բերանով հետևյալ բողոքն է հայտնում.*

«Մենք բողոքում ենք այն խոսքերի ընդդեմ, որ Թեորիանոսը կամայաբար դնում է Շնորհալու բերանը, մերժում ենք, որպես մերկ սուտ, նորա արտասվալի պաղատելը Թեորիանոսին և հայերը մոլորված ճանաչելը, մերժում ենք աստկությամբ նրան վերագրված երկդիմի բնավորությունը, մերժում ենք և ծածուկ նամակի գոությունը կամ գոյությունը»[2]։

*Եկեղեցիների միության վերաբերյալ Շնորհալու թղթերը քննելուց հետո որպես եզրակացություն պետք է ասել, որ խոշոր սխալ կլինի, Ներսես Շնորհալուն հիմա էլ համարել «եկեղեցիների միության» կողմնակից, այդ խնդիրը «բարձրացնող» կամ ինչ-որ մի մտացածին, անպատվաբեր գաղտնի նամակի հեղինակ։ Իր թղթերում և դավանաբանական այլ գրվածքներում Շնորհալին, պաշտպանելով հայ ազգային եկեղեցու դավանանքն ու ծեսերը, նրա ազգային նկարագիրը, ինքնուրույնությունը, փաստորեն պաշտպանել է Կիլիկիայի հայերի և հայկական պետության ինքնուրույնությունը։*

*Բացի այդ, վերևում բերված բազմաթիվ փաստերը ցույց են տալիս նաև, որ Պահլավունի տոհմին պատկանող Գրիգոր Վկայասեր, Գրիգորիս Պահլավունի կաթողիկոսներն իրենց կրոնական և հասարակական-քաղաքական գործունեությամբ հունական օրիենտացիա ունեցողներ չեն եղել, իսկ ինչ վերաբերում է Ներսես Շնորհալուն, ապա նա այդ կաթողիկոսների մեջ, որպես հասարակական, ազգային գործիչ, ավելի առաջադեմ է և հայրենասեր։ Նա ոչ միայն ինքը առաջ չի քաշել կամ արծարծել եկեղեցիների միության խնդիրները, այլ ընդհակառակը՝ ազգային պետության անկախության*

---

[1] *Մ ի ք ա յ ե լ Ն ա լ բ ա ն դ յ ա ն, Ընտիր երկեր, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1953, Երևան, էջ 321 (ընդգծումները մերն են—Գ. Հ.)։*

[2] *Անդ, էջ 321։*

և մշակույթի պահպանման համար միշտ էլ հետևողականորեն ու անզիջում պայքարել է հույների կողմից առաջադրված «միության» դեմ, որի պատրվակի տակ թաքնված է եղել միշտ տիրակալական քաղաքականությունը։

Անխզելի է գաղափարական կապը Ներսես Շնորհալու պրակտիկ և գրական գործունեության բնագավառներում։ Այժմ փորձենք ծանոթանալ նրա գրական ստեղծագործություններին հետ։

# ԹՂԹԵՐԸ

Շնորհալին բազմաժանր հեղինակ է։ Նրա գրեթե բոլոր գործերն էլ հասել են մեզ։ Գրել է պատմական, քաղաքական, խրատական-մանկավարժական, բնագիտական և դավանաբանական բնույթի պոեմներ, բազմաթիվ շարականներ, տաղեր, հանելուկներ, գանձեր, ճառեր, թղթեր, նամակներ և մեկնություններ։ Շնորհալու գրական հարուստ ժառանգության վերաբերյալ Մ. Նալբանդյանը ակնածանքով հետևյալ տողերն է գրում.

«Բազմաթիվ են գրուածք սորա և առ ուսումնական և աստուածաբանական գրուածոցն, հարկաւորեմք պատկառ ակնածութեամբ ասել զայս արդարև Հօտապետ և Մխիթար Աղգային եկեղցւոյ։ Ի չափաբերական բանաստեղծութեանց սրբոյս ականաւոր են. «Յիսուս Որդի», «Ողբ Եդեսիոյ...», Պատմութիւն հայոց և եկեղեցական երգք ի գանազան դեպս։ Յարձակ շարադրութիւնս նորա զառաջին տեղի ունի գիրքն կոչեցեալ Ընդհանրական...»[1]։

Շնորհալու ստեղծագործությունները պատկանում են երկու խոշոր բաժինների՝ չափածո և արձակ։ Չափածո գործերը, բացի «Ողբ Եդեսիոյ» պոեմից և շարական-երգերից, հրատարակվել են միայն մի անգամ, 1830 թվականին՝ Վենետիկում «Բանք չափաւ» վերնագրով։ Արձակ գրվածքները տարբեր ժամանակներում շատ են տպագրվել. միայն XIX դարում ունեցել են մի քանի հրատարակություն «Թուղթ ընդհանրական» անունով։ Շնորհալին գերազանցապես բանաստեղծ է։ Սակայն նրա արձակ երկերն էլ իրենց պատմական, սոցիալական խոշոր նշանակության հետ մեկտեղ զուրկ չեն և գրական արժեքից, որոնք գաղափարական տեսակետից չափածո

---

1 Մ ի ք ա յ ե լ Ն ա լ բ ա ն դ յ ա ն, Երկերի լիակատար ժողովածու, 1948, Երևան, հատ. 2, էջ 37։

գործերի հետ միասին կազմում են մի ամբողջություն։ Առանց այդ արձակի հնարավոր չէ ճիշտ ու լրիվ բացահայտել Շնորհալու աշխարհայացքը և որոշել նրա տեղը մեր միջնադարյան գեղարվեստական գրականության մեջ։

Այս արձակ թղթերը կարելի է բաժանել երեք խմբի՝ հրապարակային ելույթներ, դավանաբանական և անձնական նամակներ։ Ընդունված է հեղինակի արձակ առաջին գործը համարել «Ատենաբանութիւն» կոչվող հրապարակախոսական մեծ ճառը, որ նա ասել է իրեն կաթողիկոս ընտրելու կապակցությամբ։ Գրիգորիս Պահլավունի կաթողիկոսն արդեն 70-ը անց, հիվանդոտ մի ծերունի էր։ Ծերությունն ու հիվանդությունը նրան ստիպեցին, տակավին իր կենդանության օրով եղբորը՝ Ներսես եպիսկոպոսին ընտրել կաթողիկոս։ Ահա այս նպատակով էլ, 1166 թվականի ապրիլի 17-ին, Ծաղկազարդի կամ Արմավենյաց կոչված տոնի օրը Հռոմկլայում հրավիրվեց Կիլիկիայի և Միջագետքի հայ եկեղեցու հոգևորականների համագումար՝ Ներսեսին կաթողիկոս ընտրելու համար։ Այս թղթից էլ սկսենք մեր խոսքը։

Հռոմկլայի բազմամարդ ժողովում Ներսես Շնորհալին դիմելով «առ եպիսկոպոսունս և վարդապետս, և համօրէն դասս եկեղեցւոյ» արտասանեց վերոհիշյալ ճառը։ Իր խոսքի սկզբում նա գովասանքով է ցույց տալիս եղբոր գործունեության լավ կողմերը, որպես հոգևոր հայր և ազգային գործիչ՝ նրա անձնական առավելությունները ու արժանիքները և ապա համեստությամբ շեշտում իր անարժանությունը կաթողիկոսական ծանր պարտականությունների ու բարձր պաշտոնի համար։

Ատենաբանության ամենաարժեքավոր կողմերից մեկն այն է, որ հայրապետական և կրոնական հարցերի հետ զուգընթաց այնտեղ շոշափվում են այնպիսի խնդիրներ, որոնք իրենց էությամբ ազգային քաղաքական բնույթ են կրում և այդ հրապարակային ճառի ոգին են հանդիսանում։ Հայրենասիրական ջերմ զգացմունքով ու ափսոսանքով է խոսում Շնորհալին բուն Հայաստանի քաղաքական անապահով դրության և հայերի համար ստեղծված անբարենպաստ պայմանների մասին, թե ինչպես հայ ժողովուրդը զրկվել է իր երկրից, անցյալ փառքից ու պետությունից և այժմ տարագիր ու ծանր կյանք է վարում օտար երկրներում։

Ապա բացատրելով ստեղծված քաղաքական ծանր դրությունը, նա առանձնապես շեշտում է, որ Կիլիկիայում ապաստանած հայ ժողովուրդը, նրա պետությունն ու եկեղեցին նեղվում և տուժում են ոչ միայն արտաքին, այլակրոն թշնամիներից, այլև այն պետու-

թյունների կողմից, որոնք Քեպեթ անունով քրիստոնյա են և հայերին հավատակից, բայց ոչ պակաս ճնշող են ու բռնակալ, քան այլակրոն մյուս պետությունները։

Այստեղ Շնորհալին նկատի ունի հույներին և լատիններին, որոնք դեռևս քրիստոնեության առաջին դարերից ամեն կերպ աշխատել են իրենց ենթակա դարձնել հայ եկեղեցին և վերջինիս միջոցով էլ՝ հայ ժողովուրդն ու նրա պետականությունը։ Այնուհետև, ասում է Շնորհալին, քանի որ իրերի բերումով հայ ժողովուրդը մեծ մասամբ տեղահան է եղել իր հայրենիքից, ցրված է ամբողջ աշխարհով մեկ, այդ պատճառով էլ շատ ծանր է հայրապետի պարտականությունն կատարելը։ Դժվար է շրջել ժողովրդի մեջ և կենդանի կապ պահել նրա հետ, որովհետև «ոչ ի միում աշխարհի բնակեն՝ որպէս այլոց ազգաց, զի դիւրին էր շրջել առ նոսա առաջնորդացն և սերմանել զբանն, այլ ըստ մեղաց մերոց ցրուեալ են ազգք մեր և ժողովուրդք ընդ ոլորտս տիեզերաց ի մէջ օտարասեռ ազանց»[1]։

Շնորհալին արտնջում է, որ ոչ միայն աշխարհի տարբեր մասերում ցրված հայերի հետ կապվելն ու նրանց մեջ որևէ աշխատանք տանելն է շատ դժվար, այլև նույնիսկ Կիլիկիայի սահմաններում, անդամ ինքը՝ կաթողիկոսը, չի կարող ազատ շրջել ու քարոզել, որովհետև մի կողմից թշնամիներն են հետապնդում և մյուս կողմից էլ երկրի անապահով դրության հետևանքով հայրապետական աթոռը մի մշտական, կայուն տեղ չունի, այլ աստանդական վիճակում է գտնվում։

Ուշագրավ են ատենաբանության վերջին խոսքերը։ Շնորհալին բուռն հայրենասիրական և աշխարհիկ ցանկություններով աղաչում է աստծուն, որ վերացնի հայերի վրա ծանրացած անեծքն ու աղետը և լավ կյանք ստեղծի նրանց համար այս աշխարհի վրա, որ ազատի հայի հայրենիքը, վերականգնի նրա պետությունը.

«..աննեղելի եղև բարկութիւնն Աստուծոյ այսքան երկար ժամանակաւ, բառնալով զթագաւորութիւն և զիշխանութիւն, և մատնեալ ի սուր և ի գերութիւն, և ցրուելով ըստ հրեական տոհմին ի սփռութիւն և ի ծառայութիւն ամենայն ազգաց։ Եւ յորժամ հաշտեսցին նոքա, ապա դարձցին և պաղատեսցին առ Աստուած մերբառնալ զցասումն պատուհասի յանցանաց... հալածել զչարուցեալն ի վերայ, և փրկել զմեզ ի բերանոյ առիւծուց, ազատել զգերե-

---

1 «Թուղթ ընդհանրական», Երուսաղէմ, 1871, էջ 304։

ալսն ի տանէ կապանաց՝ որք նստին ի խաւարի, և դարձուցանել զամենեսեան յաշխարհն հայրենի...»[1]։

Հրապարակախոսական երկրորդ և ամենագլխավոր գործը «Ընդհանրական թուղթն»[2] է, որը գրվել է «Ատենաբանութիւնից» երեք ամիս հետո։ Այս թուղթը շատ արժեքավոր է իր բովանդակությամբ, քանի որ պարունակում է պատմական կարևոր փաստեր ու տվյալներ, որոնք վերաբերում են հեղինակի կենսագրությանը և XII դարի հայ հասարակական հարաբերություններին ու սոցիալական հակասություններին։ Արվեստի ու ձևի տեսակետից էլ աննշան չէ այս մեծ թուղթը. գրված է պարզ, գեղեցիկ ոճով, ջերմ ու անկեղծ։ Հետևելով Սահակ Պարթևի, Հովհան Իմաստասերի և իրենից առաջ ապրած այլ նշանավոր կաթողիկոսների օրինակին, Շնորհալին իր այս առաջին կոնդակ-շրջաբերականով ազդարարում է Գրիգորիս Պահլավունու մահը և իր կաթողիկոս ընտրվելը։ Հեղինակի բառերով ասած «Ընդհանրական թուղթն» ուղղված է «առ համօրէն հայասեռ ազինս»՝ ամբողջ աշխարհում ապրող բոլոր հայերին։ «Թղթում» համառոտակի շոշափվում են ժամանակի հուզող դավանաբանական և կրոնական-տեսական մի քանի խնդիրներ և ապա խոսքն ուղղվում է աշխարհիկ և հոգևոր տարբեր խավերին։ Շնորհալին առաջին խմբի մեջ նկատի ունի իշխաններին, զինվորներին, վաճառականներին, քաղաքացոց, երկրագործ աշխատավորներին և կանանց, իսկ հոգևորականների խմբում՝ վանականներին, առաջնորդներին, եպիսկոպոսներին, վարդապետներին և քահանաներին։ Այս խավերի կյանքին, վիճակին ու զբաղմունքին վերաբերող արատներն ու թերությունները «Թղթում» խիստ քննադատության են ենթարկվել, որով մերկացվել են փաստորեն ֆեոդալական հասարակարգի արատավոր կողմերը։

Ժամանակի հասարակական-քաղաքական պայմանները, զարգացող կյանքը որոշ չափով բեկվում և իրենց արտահայտությունն էին գտնում նաև հոգևորականների շրջանում, որոնց բարոյական դրությանը, կատարած գործերին և բովանդակ կյանքին լավ տեղյակ է եղել Շնորհալին։

Ամենից առաջ քննադատվում են վանքերում ու մենաստաններում ապրող կրոնավորները, որոնք ձևացնելով թե զբաղվում են հոգևոր գործերով, պահեցողությամբ և աղոթքով, մինչդեռ տարված

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 307։

2 Հետագայում, Շնորհալու հրատարակված բոլոր արձակ թղթերը կոչվել են այս նշանավոր և մեծ թղթի վերնագրով՝ «Թուղթ ընդհանրական» անունով։

են ագահությամբ և հարստության ձեռք բերելու ախտերով։ Շատերը սրանցից թողնում են միաբանությունը, գաղտնի հեռանում վանքերից, առանձին տնտեսություններ են հիմնում և ապրում գյուղերում ու քաղաքներում՝ ընկնելով շահի և վայելքների ու ցոփ կյանքի ետևից։

Աշխարհիկ ֆեոդալներից ոչ պակաս շահագործում և հարստանում էին նաև վանքերը։ Վանականներից շատերը հիմնում էին վանքի կալվածքների մեջ իրենց անձնական տնտեսությունը, մշակում այգիներ և զբաղվում գինեգործությամբ։ Այգեգործությունը որպես տնտեսության նորամուտ ձև, տարածվում էր ու զարգանում, որովհետև այն շատ եկամտաբեր էր և մարդիկ շուտ հարստանում էին։ Հարստության ետևից ընկած հոգևորականներին Շնորհալին ավելի խիստ է խարազանում։ Այդ զբաղմունքը հոգևորականի համար նա համարում է անպատշաճ և զգուշացնում է հեռու մնալ շահամոլ գործերից։

Սակայն այգեգործությունը քանի գնում, ծավալվում էր վանքերի և մենաստանների կալվածքներում։ Վանականները, ինչպես կարելի է եզրակացնել Շնորհալու խոսքերից, մի տեսակ մրցում էին իրար հետ՝ այգուց առատ բերք ու գինի ստանալու համար։ Այդ պատճառով էլ նրանք ամեն կերպ, տարբեր մեթոդներով ու ձևերով ձգտում էին զարգացնել մանավանդ գինեգործությունը[1]։

«Եւ փոխանակ զարուեստս առաքինութեան ուսանելոյ ի միմեանց՝ զայգեգործութեան հնարս վարժին անհմուտքն ի հմտագունից...։ Այլև յատանելոյն օրինակ զանազանեալ է իւրաքանչիւր տնկոցն սեռից առ իմաստունսն յայնոսիկ. զի զոմանս հուպ յարմատան, և զայլսն ի բացեայ յատանեն. յոմանս սակաւ զոստան, և ի կեսս յոլովագոյնս թողուն, և այս ամենայն՝ որպէսզի յաճախագոյնս պտղաբերեսցեն, և յոլովս զգինւոյն չափոյ աճեցուսցեն զթիւս»[2]։

Այգիներն ու առատ գինին վանքերի կրոնավորների ամենօրյա հոգսն են եղել։ Նրանք զբաղվել են հարբեցողությամբ, վարել զեխ կյանք և հարստություն դիզել։ Ագահությունն այն աստիճանի է հասել, որ նույնիսկ այգիներ ու հարուստ տնտեսություն ունեցող կրոնավորները գողությամբ են զբաղվել, գողացել մեկը մյուսի գույքն ու գինին։

Այն հոգևորականները, որոնք շահասիրության պատճառով մերթ երևում են աշխարհականի և մերթ էլ հոգևորականի տարազ-

1 «Թուղթ ընդհանրական». էջ 19։

2 Անդ, էջ 22։

ների մեջ, դրանց Շնորհալին համեմատում է երկկենցաղ կենդանիների հետ.

«...վասն որոյ և մեք այնոցիկ կրօնաւորաց՝ որք երկակենցաղ կենդանեաց նմանեալք են, զի են ցամաքայինք վասն՝ ձևոյն, և են ծովայինք յաղագս ի ծովու աշխարհիս զրաղանաց...»[1]:

Վանական-կրոնավորների կենցաղում տեղ գտած արատները, անվայել բարքը, շահասիրությունն ու ագահությունը աշխատավոր ժողովրդի մեջ զայրույթ և ատելություն էր առաջացրել: Ամեն քայլափոխի, սովորականն, աշխարհիկ մարդիկ նրանց պարսավում ու անարգում էին և դրա համար էլ Շնորհալին իր խոսքի վերջում այդ կրոնավորներին նախատում է, որ նրանք «...մի՛ հայհոյութեան և պարսաւանաց, այլ գովութեան և փառաւորելոյ լինիցին պատճառք ի տեսողաց և ի լսողաց»[2]:

Ըստ «Թղթի» պակաս արատավոր չեն եղել այդ վանքերի առաջնորդները՝ իրենց վարած կյանքով և կատարած գործերով: Սրանց Շնորհալին այլաբանորեն համեմատում է մարդու աչքերի հետ, որոնցից մեկը պիտի նշանակի գիտություն, իսկ մյուսը՝ առաքինություն: Այդ աչքերից մեկը առանց մյուսի խավար է ու անիմաստ, գրում է Շնորհալին, ուստի դրանք երկուսն էլ պետք է լինեն մաքուր և միաժամանակ, միասին տեսնեն ու ընկալեն աշխարհը: «Իսկ որ զմի յաչացն բաց ունիցի և միւսովն կափուցեալ իցէ, այսինքն՝ որ կա՛մ գիտութիւն առանց գործոց առաքինութեան և կամ առաքինութիւն առանց գիտութեան ունիցի, թերի է ի բարեաց և ոչ կատարեալ, քանզի միակնեաց նմանի այնպիսին»[3]:

Սրանց էլ խիստ քննադատելով Շնորհալին գտնում է, որ իրականում, ընդհակառակը, այդ առաջնորդները «զերկուսեան տեսարանս աչաց խաւարեալս ունիցին ի լուսոյ, այսինքն՝ զի են տգետք աստուածային գիտութեանց, և են պղերգք յամենայն գործս արդարութեան, մանաւանդ թէ՝ և հակառակօքն լցեալք, և յանդգնին տալ զանձինս յառաջնորդութիւն եկեղեցւոյ, որ և զբազումս տեսանեմք յայսպիսեաց ի մերոմս թշուառացեալ ժամանակի՝ ձեռնամուխ եղեալ յայսոսիկ...»[4]:

Բացի այն, որ այդ առաջնորդները տգետ են և առաքինությունից զուրկ, մարդկանց առաջնորդում են դեպի «խորխորատը» և

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 25:

2 Անդ, էջ 33:

3 Անդ, էջ 34:

4 Անդ, էջ 35:

«կղուստ», դրանք միաժամանակ կաշառակեր են ու ագահ։ Ինչպես վանականներն, այնպես էլ նրանց առաջնորդները, հակառակ իրենց քարոզների ու վարդապետության, տարված են անձնական ցոփ կյանքով, մարմնական հաճույքներով և հարստանալու տենչով։

Եվ քանի որ վանքերի առաջնորդների պաշտոնը հարստություն կուտակելու տեսակետից ձեռնտու է, ուստի այդ պաշտոնին տիրանալու համար հոգևոր հայրերը դիմում են կաշառքի, բանսարկության և այլ սուր միջոցների։

«Թղթում» բերված փաստերից երևում է, որ եպիսկոպոսներն էլ, հոգևորականների այս բարձր խավը, նույնպես իրենց վարք ու բարքով այլասերված են, որոնցից ամեն մեկը մի հոգևոր ֆեոդալ է և աշխարհիկ տերերի ու իշխանների նման վարում են շվայտ կյանք, տարված են որկրամոլությամբ, կաշառակերությամբ և այլ անազնիվ գործերով։ Սրանք ոտքով ճանապարհ չեն գնում։ Ունեն լավ ձիեր ու ջորիներ։ Սրընթաց ձիերով, բաղեներով ու շներով ըղբաղվում են նույնիսկ որսորդությամբ, ինչպես իշխաններն ու թագավորները։ Պարկեշտ և հասարակ լինելու փոխարեն՝ հագնում են թանկարժեք «բեհեզեայ զգեստ» և կրում են զարդեր, ղուսպ ու ժուժկալ լինելու փոխարեն պատմում են անվայել առակներ, աննկուղոններ, խեղկատակություններ են անում և այլն։

Սակավապետության փոխարեն եպիսկոպոսները ագահ են ու արծաթասեր։ Ագահությունն է «մայր ամենայն չարեաց»։ Բոլոր ժամանակներում ագահությունն է մարդկանց մղել դեպի հանցագործություն, դավաճանություն ու ոճիր, եղրակացնում է «Թղթի» հեղինակը[1]։

Շնորհալին գտնում է, որ իր ժամանակի եպիսկոպոսներից շատերը իրենց պաշտոնը ձեռք են բերում զանազան ճարպիկ միջոցներով ու կաշառքով։ Շատ անգամ հոգևորականների ձեռքով կաշառք է տրվում նույնիսկ այլազգի, այլակրոն իշխողներին, որպեսզի նրանց ուժով տիրանան բարձր պաշտոնի[2]։

Այս ագահ, սուտանուն եպիսկոպոսներին էլ Շնորհալին համեմատում է թունավոր իժերի և կատաղի գազանների հետ։

«Այլ ճանգոյն իժի և խարբի խցեալ ղևսելիս սատուածային բանին, դեռևս համառևալ բորբոքին ի նոյն չարութեան, արբեալ և յիմարեալ փառամոլ ախտիւ իբրև զգազանս կատաղիս ոչ դադարեն

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 45։

2 Անդ, էջ 48։

մուծանել վխտովութիւն յառագաստ խաղաղութեան... որոց արիւն ի գլուխ իւրեանց եղիցի և վրէժ չարութեան գործոց նոցին յանձինս իւրեանց լիցի»[1]։

Ինչպես հոգևորականների վերոհիշյալ բարձր շերտերը, այնպես էլ քահանաներն իրենց վարքով ու գործերով դատապարտելի են։ «Թղթում» ցույց է տրվում, որ սրանք էլ շատ հեռու են բարի գործերից. զբաղվում են բամբասանքներով, չեն կարող զսպել իրենց անձնական կյանքում, ողջախոհ չեն «յաշխարհականաց ցանկութեանց և զբօսանաց» մեջ, մանավանդ նրանք «...որպէս լուաք զոմանց աներկիւղ քահանայից որ ի քաղաքս բնակեն, երթէ յառաւօտ մինչև ցժամ պատարագին ի վաճառատոզոցս խաղաքին շրջին ի տուրեւառութիւն վաճառաց...»[2]։

Քահանաների շահասիրությունն ու ագահությունը միայն առևտրով չի սահմանափակվում։ Նրանք ամեն կերպ աշխատում են ավելի շատ տուրքեր վերցնել ժողովրդից՝ ծննդի, պսակի, մահվան, տրնօրհնեքի և ուրիշ այլ առիթներով։ Հաճախ էլ այդ տուրքերը հավաքելու ժամանակ հրապարակով քահանաները վիճում, հայհոյում են, կռվում ու ծեծկվում։

Քահանաներից շատերը միաժամանակ տգետ են ու ծույլ։ Չեն կարող «զեկեղեցական դիրս ուղիղ ընթեռնուլ», բայց և այնպես, քանի որ շատ շահավետ է քահանայի պաշտոնը, դրա համար էլ հաճախ տգետ տիրացուները կաշառքով և այլ անվայել միջոցներով դնում են առաջնորդների և եպիսկոպոսների մոտ «ի ձեռնադրութիւն քահանայութեան»։

Կաշառակերության միջոցով քահանաները խախտում են նաև պսակի կանոնները՝ այրաթող, կնաթող մարդկանց անում են օրինավոր պսակ, պսակում են անչափահաս պատանիներին, արյունակից տղաներին ու աղջիկներին։ Հարսանիքներում զբաղվում են հարբեցողությամբ և դառնում ծաղր ու ծանակի առարկա։

Քահանաներից ոմանք էլ տեսնելով բարձրաստիճան կրոնավորների այլանդակությունները ու գործերը, դարձել են սանձարձակ և ինքնագլուխ. շատ անգամ նրանք չեն լսում ու ենթարկվում առաջնորդներին ու եպիսկոպոսներին։ Շնորհալին ինչպես հոգևորականների բարձր դասին, այնպես էլ գյուղական և քաղաքային քահանաներին դատապարտում է նրանց արատավոր վարք ու բարքի համար։

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 49—50։

2 Անդ, էջ 56։

Ուշագրավ է, որ «Թղթում» մի տեղ Շնորհալին վերոհիշյալ արատների կողքին կասկածով է նայում քահանաների անկեղծության ու հավատի վրա։ Նա ենթադրում է, որ նրանցից շատերը կեղծ են, ծառայում են միայն շահի համար։ «Բայց լսեմք զոմանց սուտ քահանայից, զի ոչ միայն յայլ ուսմանէ են տգետք յաղագս հեղգութեան, մանաւանդ թէ՝ վասն անհաւատութեան... առ աչս մարդկան կեղծավորելով»[1]։

«Թղթի» քննադատական այս մասն արժեքավոր է նաև նրանով, որ Շնորհալին առհասարակ հոգևոր դասերին վերաբերող արատները բացատրում է նաև ժամանակի սոցիալական, քաղաքական պայմաններով ու կեցությամբ, թե ինչպես դրանք ազդել են կրոնավորների կենցաղի և բարոյական կյանքի վրա։ «Բայց այսոցիկ բարոյ աւանդութեանց հակառակելոյ առաջնոց հարցն սրբոց՝ ոչ այլ ինչ է պատճառ, քան թէ տգիտութիւն և ինքնօրէն անձնահաճ կամապաշտութիւն, որք ոչ տեսին զառաջին պայծառութիւնս, մինչ ողորմութեամբ տեառն լի էր երկիր, այլ ի հալածանացս ծննեալ ժամանակի ընդ խրթնատեսակս նայեցան տգեղութիւն, որովք կապեալ են յամենայն ուրեք ազգ մեր յաղքատութեան՝ որպէս ընդ երկաթոյ, ի ներքոյ լծոյ ծառայութեան իւրաքանչիւր ազգաց՝ ուր և իցեն. ոյք և հարկաւոր պիտոյիցն կարօտ են ըստ մարմնոյ... և ըստ հոգւոյ՝ ամենևին անշարժք ի բարիս, զի ցամաքեցաւ սէրն՝ ըստ տէրունական բանին»[2]։

«Թղթի» մյուս բաժինը հասցեագրված է աշխարհական մարդկանց։ Ընդհանրական Թղթի այս մասում էլ շատ արժեքավոր փաստեր ու տեղեկություններ կան ժամանակի սոցիալական կյանքի տարբեր կողմերի՝ շահագործման ձևերի, առանձին խավերի մարդկանց ապրելակերպի, բարքերի ու կենցաղի վերաբերյալ։ Այս տվյալներն ավելի ցայտուն կերպով են դրսևորում ֆեոդալական հասարակաձևին առանձնահատուկ արատավոր կողմերը։

Աշխատավոր ժողովուրդը գտնվում էր ծանր վիճակում։ Իշխաններն ու հոգևորականները անողոք կերպով շահագործում էին նրան՝ անվարձ, հարկադիր աշխատանքներով և ապօրինի, բազմատեսակ ծանր հարկերով։ Անողոք շահագործումն այն աստիճանի է հասնում, որ Շնորհալին իշխաններին հրահանգում է, թե «մի անիրաւաբար վարիք առ հնազանդեալսդ ծանր և դժուարակիր հար-

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 59։

2 Անդ, էջ 53։

կադրուքեամբ՝ զոր ոչ կարեն բառնալ, այլ օրինօք դատեցէք և ըստ չափոյ զօրութեան զիւրաքանչիւր ոք...»[1]:

Իսկ ինչպիսի՞ տնտեսական և սոցիալական ուժ էին ներկայացնում այդ ժամանակ Կիլիկիայում գտնվող հայ իշխանները: Սրանք տարբեր տեղերում ունեին ոչ միայն խոշոր տնտեսական ուժ ներկայացնող կալվածքներ ու գավառներ, այլև ռազմական ուժ՝ սեփական զորք: Այդ պատճառով էլ Շնորհալին աշխարհականներին ուղղված իր խոսքի սկզբում առաջին հերթին իշխաններին է դիմում: «Առ իշխանսդ որք ի նուագեալ ժամանակիս տիրէք ի տեղիս տեղիս քազմաց և կամ սակաւուց զօրաց և գաւառաց»[2]:

Այդ զորեղ իշխանների իրավասության ներքո գտնվող գավառները կառավարելու համար իրենք՝ իշխաններն էին նշանակում զանազան պաշտոնյաներ, գործակալներ և գավառապետներ: Վերջիններս էլ իրենց հերթին էին շահագործում ու հարստահարում շինական գյուղացուն: Սրանք էլ իշխանների օրինակով գործում էին անիրավ, ոտնահարելով նույնիսկ գոյություն ունեցող օրենքները: Գավառապետների ու նրանց գործակալների մոտ էլ գողությունն ու կաշառակերությունը չափերից անցել էր: Բոնի դրավում էին մարդկանց կայքն ու ունեցվածքը: Այս անիրավությունների և կամայականությունների առաջն առնելու համար թղթում հետևյալ խոսքերն են ուղղված Կիլիկիայի հայ իշխաններին. «Մի չար և անիրաւ գործակալս և գաւառապետս կացուցանէք ի վերայ աշխարհի ձերոյ, զի մի յանիրաւութենէ նոցա զոր գործեն՝ դուք դատիք յԱստուծոյ հանդերձ նոքօք, այլ զարդարամիտս և զարդարադատս ընտրեցէք ունել ի վերայ մարդկան զգործակալութիւն. զի մի զարքունական սահմանեալ իրաւունսն վաստակաւորացն՝ թողցեն վասն սակաւ կաշառացն զրազումն, և կամ ինքեանք գողասցին, և մի՛ առասել քան զհրամայեալսն նեղեսցեն զնոսա և առցեն... այլ այնպէս իրաւադատ լինիցին...»[3],

Անարդարությունների և կամայականության դեմ եթե աշխատավորները բողոքում էին՝ հանցավորին պատժելու կամ դատելու համար, ոչ միայն պաշտպանության չէին արժանանում, այլ դատարանում էլ տուժողները այդ շահագործվող գյուղացիներն էին: Դատերը վարում էին աշառու, անարդար, որովհետև դատի ընթացքում կաշառքն ու սոցիալական վիճակն էին որոշում ամեն ինչ: Տու-

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 69:

2 Անդ, էջ 68—69:

3 Անդ, էջ 69:

Ժամ էին նրանք, որոնք ունեզրկված ցածր խավից էին և հնարավորություն չունեին կաշառք տալու։

Ֆեոդալ իշխանները և նրանց գործակալները աշխատավոր մարդուն հարստահարել և ստրուկ էին դարձրել։ Մարդը նրանց համար հավասար էր անբան կենդանու, որպես լոկ ուժ, որպես գրաստ։ Վաղ առավոտից մինչև ուշ երեկո ստիպում էին նրան կատարել ուժերից վեր, մարդուն անվայել ծանր աշխատանք՝ այն էլ առանց կերակրելու։ Այս ամենի դեմ բողոքելով՝ Ներսես Շնորհալին խորհուրդ է տալիս իշխաններին, որ շինականներին աշխատեցնելիս գոնե կերակրեն և վաստակը վճարեն նրա համար, որ նրանք կարողանան իրենց աղքատ ընտանիքի կյանքը քարշ տալ և արքունական հարկը վճարել։

«Մի որպէս զանբան կենդանիս՝ որ բնութեամբ ծառայք են մարդկան, ծառայեցուցանէք զմարդիկ որ ընդ իշխանութեամբ ձեռով լինին՝ ի գործ խիստ և աննեղելի, որպէս և Փարաւոն զորդիսն Իսրայէլի, և զայն առանց կերակուր տալոյ նոցին, այլ ներելով և քաղցրութեամբ և սակաւօրեայ ժամանակաւ... որպէսզի կարող լինիցին վաստակօք իւրեանց զաղքատանաց կեանս զտանց և զորդոց իւրեանց լցուցանել և զարքունական հարկսն հատուցանել»[1]։

Առաջարկվում է ֆեոդալ իշխաններին, որ իրենց իշխանական իրավունքներն ի չարն չգործադրեն և անտեղի չկտրեն շինականների աշխատավարձը։ Շնորհալին անվայել է համարում՝ չափից ավելի հարստության ձգտելը, մեղկ ու փափկասուն կյանք վարելը և մանավանդ խիստ խարազանում է իշխանների հոգում բուն դրած՝ միշտ հափշտակելու և իշխելու ախտը[2]։

Ըստ «Թղթի», ավատատեր իշխանները ոչ միայն տնտեսապես ու բարոյապես են ճնշում երկրագործին, այլև շատ հաճախ սպանում կամ անտեղի մահվան են դատապարտում նրան՝ ով հանդգնում է բողոքել տիրող անիրավություններին կամ հափշտակություններին դեմ։

XII դարում Կիլիկիայում զինվորները մի առանձին դաս են եղել և հասարակական-սոցիալական կյանքում խաղացել են կարևոր դեր։ Այս պատճառով էլ հավանարար, իշխաններից հետո խոսքն ուղղվում է «առ զինուորաց դասս»։ Այս մասում ամենից առաջ Շնորհալին առաջարկում է զինվորներին՝ «հնազանդ լինել տերանց ձերոց յամենայնի», անկախ նրանից, թե ովքեր են այդ

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 70։

2 Անդ, էջ 70—72։

տերերը։ Իսկ եթե ճինվորի նկատմամբ որևէ պակասություն կամ թերություն ցուցաբերի տերը, տրտնջալու կամ բողոքելու հարկ չկա։

Հնազանդությունը և հրամանները կատարելը ճինվորի առաջին պարտականությունն է։ Երկրորդ, ասում է Թուղթը, եթե խաղաղ պայմաններում իշխանության պետը, կամ ինքը՝ իշխանը ճինվորներին վստահեն և վերակացու նշանակեն որևէ գավառի ազգաբնակչության վրա, պարտավոր են վարվել արդարությամբ և օրենքով։ Անթույլատրելի է մարդկանց նեղել կամ կողոպտել։ Բացի այդ, ճինվորները պետք է բավականանան իրենց տրվող ռոճիկով» չտրտնջան և գողություն չանեն։

«Թղթում» մի քանի խոսք էլ վերաբերում է քաղաքների ազգաբնակչությանը, ղեխավորապես վաճառականներին և արհեստավորներին, որոնք թեպետ ժողովրդի բավական մեծ մասն են կազմում, բայց շատ քիչ է խոսվում դրանց մասին։ Հեղինակը վաճառականներին զգուշացնում է, թե «Եւ մի՛ ոք խաբեութեամբ և նենգաւորութեամբ վաճառեսցէ զսահացուածս իւր անմեղ գնողաց. մանաւանդ ստախօսութեամբ և սուտ երդմամբ զռամիկսն և զանդէտսն խաբեսլով... Եւ մի՛ եղիցի առ ձեզ կշիռ մեծ և փոքր, և չափ կրկին... այլ արդարութեամբ ու ղորդութեամբ վաճառեցէք զգործս ձեռաց ձերոց և զնիւթ վաճառոյ ձերոյ, զի մի՛ անէծք զրկելոցն այրեսցէ զգոյս ձեր...»[1]։

Առևտրական կապիտալի զարգացման հետևանքով վաճառականներն ստոր ձևերով շահագործում էին պարզամիտ դյուղացուն։ Կեղծիքն ու խարդախությունը միայն առևտրի մեջ չէր, այլ զարգացող առևտրական բուրժուազիայի կյանքի բոլոր ոլորտներում։ Քաղաքներում մեծ չափերի էր հասել նաև վաշխառությունը, որը նույնպես անարխատ եկամուտով ապրելու և շահագործման անխիղճ ձևերից մեկն էր։ Ֆեոդալների ու տերերի կալվածքներում աշխատող ու վաստակ չստացող աշխատավորը տնտեսապես քայքայվում և հյուծվում էր։ Իր ընտանիքի գոյությունը մի կերպ պահպանելու համար նա ստիպված էր բարձր տոկոսներով դրամ վերցնել դրամատերերից։ Բողոքելով վաշխառության ու շինականներին արհամարհելու դեմ, Շնորհալին գրում է. «Եւ մի՛ արհամարհէք զշինականսն իբրև զանդէտս, յաղագս պարզամտութեանն իւրեանց, քանզի առաւել սիրէ Աստուած զարդարամիտ կեանս նոցա՝ քան զարատաւորս և զխաբեբայս ի մարդկանէ։ Մի՛ տայք զարծաթ ձեր

1 «Թուղթ ընդհանրական», էջ 79։

ի վարձու... այնոցիկ որք նեղին ի բռնութենէ իշխողաց, և ոտէք ղաղքատութեան վաստակս նոցա ի շահս վաշխիցն...»[1]։

«Թղթի» նախավերջին գլուխն ուղղված է «առ երկրագործս և համօրէն ժողովրդականսդ», աշխատավորության լայն խավերին։

Խրատներն ու հորդորներն այստեղ սկսվում են նրանով, որ ազգաբնակչության գերակշռող և հիմնական մասը կազմող աշխատավորությունը չտարվի միայն աշխարհիկ կյանքով, առօրյա հոգսերով ու կարիքներով, որ մարմնական պահանջների կողքին աչքաթող չարվի և հոգեկանը։ Շնորհալու այս խոսքերից պարզ երևում է, որ այդ ժամանակ արդեն թուլացել էր հավատը նաև աշխատավոր խավերի մեջ։ Մի կողմից աշխարհիկ և հոգևոր տերերի ձեռքով կատարվող շահագործումները, հարստահարումը, հարկերն ու տուրքերը, երկրի ներսում ստեղծված ծանր դրությունը, իսկ մյուս կողմից՝ արտաքին պայմանները՝ սելջուկների և խաչակիրների արշավանքները, ժամանակի ոգին, այս ամենը մեծ փոփոխություններ էին առաջացրել ոչ միայն երկրի տնտեսական-սոցիալական կյանքի բնագավառներում, այլև մարդկանց հասկացողությունների ու գիտակցության մեջ։ Կատարվող տնտեսական, քաղաքական և գաղափարական տեղաշարժերի ու փոփոխությունների հետ զուգընթաց քանի գնում, այնքան երերվում էին կրոնական աշխարհայացքի հիմքերը։ Ժամանակի բարքերի, կենցաղի ու կյանքի մեջ դլխավոր տեղը, հակառակ կրոնական սկզբունքների, բռնում էր մարմնականը, կերուխումն ու վայելքը։ Դրա համար էլ, ինչպես տեսանք վերևում, կրոնավորների բոլոր աստիճանավորներն ու տարբեր դասերը տարված են վայելքներով ու հարստություն ձեռք բերելու տենչով։ Աշխարհասիրությունը Շնորհալին համարում է ժամանակի հետ կապված երևույթ, որով տարվել էին մյուս խավերի հետ նաև աշխատավորները և մոռացել հոգեկանը։ «Լուարուք և երկրադործք և համօրէն ժողովրդականքդ, զխրատ պատուիրանին Աստուծոյ՝ զոր աւանդեմք ձեզ,—դիմում է ժողովրդին Շնորհալին,—որոց մանաւանդ առաւել պիտանացու է դեղ հոգևորական առ ի բժշկութիւն ոգւոց, զի և դուք առողջանայցէք ի մեղացն հիւանդութենէ»[2]։

Իսկ որոնք են այդ «հիվանդություններից» ամենավտանգավորները, որ մուտք են գործել ժողովրդի տարբեր խավերի մեջ։ Դրանցից առաջինը հարբեցողությունն է, որը աղբյուր է շատ վատ արարքների և ծանր հանցագործությունների։

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 79։

2 Անդ, էջ 80։

Այս մասում աշխարհականներին ուղղված բոլոր խրատներն ու հորդորները կրում են բարոյակրթական բնույթ։ Հարբեցողության վնասակար հետևանքների մասին խոսելուց հետո պատվեր է տրվում մարդկանց՝ զսպել իրենց լեզուն, հեռու մնալ «չար և դառն յիշոցաց»։ Այնուհետև առաջարկվում է զբաղվել երեխաների կրթության և դաստիարակության գործով, որպեսզի նոր սերունդը հեռու մնա աղտեղի խոսքերից և կյանքում տեղ գտած զանազան ապատանելիից,— որովհետև, մանկավարժորեն բացատրում է Շնորհալին,— «ի մանկութեանն ժամանակ առաւել տնկի խրատ ծնողացն ի միտս մանկանցն անջնջելի յիշատակաւ»...[1]։

Վերջապես քարոզում է մարդասիրություն և միաբանություն՝ բոլոր մարդկանց միջև, որովհետև, ասում է նա, մարդասիրությունն է գլխավոր աղբյուրը բոլոր բարի գործերի, առաքինությունների և խաղաղության։

Վերջին խոսքն ուղղված է կանանց։ Հետաքրքրական է, որ Նղիշեից և Ղազար Փարպեցուց երկար դարեր հետո, Շնորհալին է, որ ժամանակի սոցիալական տարբեր շերտերի անելիքների ու պարտականությունների մասին խոսելիս, առաջին անգամ այդպիսի կարևոր տեղ է տալիս հայ կանանց՝ հասարակության բարոյակրթության ասպարեզում։ Բարքերի ու կենցաղի բացասական կողմերն իրենց արտահայտությունն էին գտել և կանանց շրջանում։ Ըստ ժամանակի ոգու, կենցաղում մոտք գործած ճաշակն ու նորությունները խախտել էին հին, առաքինի, բարոյական նորմաները։ Կանայք նույնպես տարվել էին կյանքի, աշխարհասիրության, մանավանդ զուգվելու, զարդարվելու և արհեստական գեղեցկության դիմելու գործով։ Շնորհալին խորհուրդ է տալիս կանանց, որ ոսկով, արծաթով և այլ զարդերով արտաքինը պճնելու փոխարեն զարդարվեն պարկեշտությամբ, բարեձևությամբ ու ամոթխածությամբ, որպեսզի լինեն առաքինի և հոգեպես գեղեցիկ։ Անվայել է, որ կինը երիտասարդներին որոգայթ ձգելու, գայթակղեցնելու համար «այլագունեսցէ զգոյն երեսաց իւրոց օտար դիղօք», որովհետև դրանով «զիւր հոգին և զցանկացողին ինքեան արկցէ ի դուրն անօրէնութեան»[2]։

Խիստ կերպով դատապարտվում են կավատությամբ զբաղվող կանայք։ Կանանց բարոյակրթական խնդիրներր Շնորհալին իր մյուս թղթերում էլ է առաջ քաշել, որովհետև ֆեոդալական տնտե-

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 81։

2 Անդ, էջ 82։

ռաձևի հետ կապված հասարակական չարիքներն ու արատները դրսևորվում էին նաև կանանց կենցաղում։

Իր մի ուրիշ Թղթում, որտեղ խոսում է Արևորդյաց աղանդի մասին, առաջ է քաշում կանանց շրջանում գոյություն ունեցող կախարդության և զանազան դեղերով մարդկանց հմայելու սովորությունների դեմ պայքարելու անհրաժեշտությունը, որի համար Մամնասիա քաղաքի հոգևորականներին և իշխաններին առաջարկվում է՝ «նոյնպէս և կանանցն պատուէր տուք ի կախարդութենէ և ի դեղաւորութենէ և յամենայն դիւական աղանդաւորութենէ ի բաց կալ... Նոյնպէս և որ զպիղծ և զաղտեղի իրս ի կերակուրս կամ յըմպելիս խառնեալ՝ տայ ուտել քրիստոնէի վասն դիւական սիրոյն... և զդուշացուցէք զնոսա յամենայն ի յայսպիսի բժժադործութենէ»[1]։

«Թուղթ ընդհանրական»-ը վերջանում է կանանց ուղղված պատկերավոր հետևյալ բարի ցանկություններով. «Եւ մեք աղաչեսցուք զՏէր, զի հանցէ ի ձէնջ զսիրտ քարեղէն և տացէ ձեզ սիրտ մարմնեղէն՝ լինել երկիր արդաւանդ, և արդիւնացուցանել զսերմն բանիս մեր յոգիս ձեր, և տալ պտուղ բազմապատիկ....»[2]։

Դարի սոցիալական հակասությունները, դասակարգային հակամարտությունները գնալով խորանում ու սրվում էին։ Շահագործումներն ու անիրավությունները սահման չունեին, որոնք կատարվում էին աշխարհիկ և հոգևոր տերերի ձեռքով։ Շնորհալին խիստ քննադատում է գոյություն ունեցող սոցիալական և իրավական անարդարությունները, ահա այս է նրա Թղթի ավելի արժեքավոր կողմը։ Այստեղ նա վեր է բարձրանում միջնադարյան քրիստոնեական աշխարհայացքի մակարդակից, տեսնում է իրական կյանքը, այնտեղ գոյություն ունեցող անիրավությունները, բողոքում դրանց դեմ, իր պաշտպանության տակ վերցնելով ժողովրդի մեծամասնությունը կազմող աշխատավորներին ու շինականին։ Ժամանակը և Շնորհալու աշխարհայացքը թույլ չեն տվել նրան, որպեսզի նա կարողանար տեսնել սոցիալական անարդարությունների հիմքերն ու պատճառները։ Այնուամենայնիվ, այն ժամանակներում այդպիսի խիստ քննադատության ենթարկել հասարակության բոլոր և կարող խավերին, մերկացնել նրանց, այս ամենը թե առաջադիմական երևույթ էր և թե բավականաչափ համարձակ քայլ։

Շնորհալու արձակի ամենակարևոր մասն են կազմում նաև այն «Թղթերը», որ վերաբերում են եկեղեցիների միության խնդրին և

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 228։

2 Անդ, էջ 83։

որոնց հետ մենք ծանոթացանք նրա գործունեության մասին խոսելիս։ Այս թղթերը, ինչպես տեսանք, շատ արժեքավոր են՝ ժամանակի քաղաքական-գաղափարական պայքարին ծանոթանալու, Շնորհալու աշխարհայացքի բացահայտման տեսակետից։

Վերևում քննված թղթերի հետ որոշ չափով, իրենց բովանդակությամբ ու բնույթով առնչվում են ուրիշ չորս փոքրիկ նամակներ ևս, որոնցից երեքը՝ անանուն, իսկ չորրորդը՝ ուղղված է ոմն Պողոս Տարսոնացի անունով քահանայի։ Այս նամակների մեջ Շնորհալին անարգում է այն անձանց, որոնք ուրանալով իրենց ազգը, ընդունելով քաղկեդոնականությունը, գործիք են դարձել հույների քաղաքականության և սկսել են ղրպարտել, վարկաբեկել հայերին և հայոց կաթողիկոսին։

Աշխարհիկ կյանքի հաղթանակը իր արտահայտությունն էր գտնում նաև կրոնական-դավանաբանական հարցերում։ Մարդիկ կասկածանքով ու քննադատաբար էին վերաբերվում Քրիստոսի մարդեղության խնդիրներին։ Սկսել էին նորից վիճել Քրիստոսի մահվան, նրա մարմնի ապականելի կամ անապականելի լինելու մասին։ Ապականության հարցի վերաբերյալ Մելիտինե քաղաքից, ասորի Հակոբ վարդապետ անունով մեկը, հայոց հայրապետանոցին ուղարկեց մի թուղթ, որին պատասխանեց Ներսես Շնորհալին։ Հայտնի է այդ թուղթը «Պատասխանի թղթոյն Յակոբայ ուրումն վարդապետի ասորւոյ ի մայրաքաղաքին Մելիտինոյ հայոց» վերնագրով։ Այս պատասխան թղթի սկզբում թեպետ Շնորհալին գովում է ասորի վարդապետի հմտությունը, սակայն, որպես կրոնապետ, խորհուրդ է տալիս Հակոբին, չզբաղվել հակաքրիստոնեական մտքերով։ Սակայն մտքերի նման խմորումներ գոյություն ունեին նաև հայ հոգևորականների շրջանում, որոնք դրսևորվում էին Կիլիկիայում և Միջագետքում որպես աղանդներ և դրանց դեմ եկեղեցական հայրերը ձեռնարկում էին խիստ և անողոք միջոցներ։

Շնորհալին իբրև մեծ արվեստագետ, մի կողմից ընդառաջ գնալով իրական կյանքի պահանջներին և իր գլխավոր ստեղծագործություններում արտացոլելով այդ կյանքի տարբեր կողմերը, ժամանակի առաջադեմ տրամադրությունները, մերկացնելով ավատական հասարակաձևի բացասական կողմերը, մյուս կողմից էլ որպես այդ նույն հասարակարգի դաղափարախոս, դեմ էր դուրս գալիս այն աղանդներին, որոնք ժամանակի նկատմամբ նույնպես առաջադիմական էին, քննադատում և բացասում էին այդ կարգերի գաղափարախոսությունը հանդիսացող քրիստոնեական վարդապե-

տության մի քանի հիմնական սկզբունքները։ Շնորհալու մոտ այդ հակասությունը նկատվում է նրա տարբեր գործերում։ Եթե նա որպես ստեղծագործող մեծ բանաստեղծ արտահայտում էր աշխարհիկ իրական կյանքը, ապա իբրև քրիստոնեական աշխարհայացքի ներկայացուցիչ նա չէր կարող անտարբեր նայել ժամանակի այն աղանդներին, որոնք ուղղված էին քրիստոնեական սկզբունքների դեմ։ Բայց պետք է նշել, որ Շնորհալու պայքարը հակաքրիստոնեական այդ աղանդների դեմ եղել է միայն տեսական-գաղափարական։ Նա որպես կրոնապետ չի դիմել խիստ պատժիչ միջոցների և չի վարվել աղանդավորների հետ այնպես անողոք, ինչպես վարվեցին Բոնդրակեցիների վերաբերմամբ իրենից հարյուր տարի առաջ ապրած եկեղեցական բարձրաստիճան հայրերը և Գրիգոր Մագիստրոսը։

Բայց և այնպես թե՛ աշխարհիկ, և թե՛ հոգևոր մարդկանց մեջ կասկածը Քրիստոսի մարդեղության, դրախտի ու դժոխքի մասին բանի գնում՝ տարածվում ու խորանում էր։ Երևան էին գալիս ու աշխուժանում նոր աղանդներ՝ իրենց գաղափարական հիմքը խարբսխելով հին, հակաքրիստոնեական հոսանքների սկզբունքների վրա։ Ահա այսպիսի շարժումներ էին Արևորդյաց և Միջագետքի Ամայք գավառում երևացող աղանդները, որոնց երկուսի դեմ էլ առանձին-առանձին Շնորհալին գրել է համապատասխան թղթեր։ Արևորդյաց աղանդը Կիլիկիա է մտել Միջագետքից և Սիրիայից ու հետաքրքրական է այն տեսակետից, որ մոտ հարյուր տարի առաջ ջախջախված և «շնական» որակված Բոնդրակեցիների ժառանգներն էին համարվում դրանք։ Ինչպես երևում է, Բոնդրակեցիները վերջնականապես չեն ոչնչացվել և մի դար հետո երևացել են այլ անվան տակ, բայց գրեթե նույն սկզբունքներով։ Արևորդիների ու Բլկուրան և Շապհան ավանների աղանդները Շնորհալին ոչ միայն համարում է Բոնդրակեցիներից մնացած, այլև համեմատում է հունաց «Պողոմելոսքների» մի ճյուղը կազմող բուլղար «Բոգոմիլների» և նույնիսկ հեթանոս հայերի հետ, որոնք երկար դարեր ծածկվելով զանազան աղանդների անվան տակ, հասել են մինչև XII դարը, ահա թե ինչպես՝ «...այսպէս և Արևորդիքդ յազգս մեր ի մասին սատանայական խաւարին մնացեալք, ոչ կամեցան լուսաւորել աստուածային լուսովն ի ձեռն Լուսաւորչին մերոյ սրբոյ Գրիգորի, այլ սիրեցին զխաւար և ոչ զլոյս մինչև ցայսօր ժամանակի»[1]։

Արևորդի բառը հենց ցույց է տալիս, որ դրանք եղել են հեթա-

---

[1] «Թուղթ ընդհանրական», էջ 223։

նոս-արևապաշտներ, որոնք իրենց այլաձևությամբ երևացել են մանիքեական, երևութական, պավլիկյան, մծղնեական և վերջապես բոնդրակեցոց աղանդների մեջ։ Ունենալով շատ ընդհանուր գծեր նախընթաց աղանդների հետ, արևորդիք աչքի են ընկնում իրենց առանձնահատուկ կողմերով։ Բնորոշն այն է, որ սրանք ևս հին հեթանոս հայերի պես պաշտում էին արևը և բարդի ծառը։ Այս աղանդը նոր չի եղել. իր թղթերից մեկում, Հարյուր տարի Շնորհալուց առաջ, Արևորդիների մասին դրել է Գրիգոր Մագիստրոսը և կարծիք հայտնել, որ նրանք հետևում են պարսից մոգերի վարդապետության. «Ահա և այլոմանք ի Զրադաշտ մոգէ՝ մոգպարսկականք և այժմ ի նոցունց դեղեալ արևգակնապաշտք, զոր Արևորդիսն անուանեն... և ինքեանք քրիստոնեայք զինքեանս յայտնապէս կոչեն։ Բայց եթէ ո՞րպիսի մոլորութեամբ և անառակութեամբ վարին՝ դիտեմք, զի ոչ ես անտեղեակ»[1]—գրում է նա ասորոց կաթողիկոսին։

Սամոսատում գործող արևորդիներից ոմանք դիմել էին տեղի արքեպիսկոպոս Թորոսին և իշխան Գազանին՝ որ իրենք աղանդից հրաժարվում են։ Շնորհալին լսում է այդ և կանչում աղանդավորների գլխավորներից մի քանիսին, բավական երկար խոսում նրանց հետ, որպեսզի վերադառնան քրիստոնեական եկեղեցու գիրկը։ Ջնայած մի քանիսը խոսք են տալիս և երդվում են, բայց Ներսես Շնորհալին չի հավատում այդ խոստումներին և կասկածում է աղանդավորների անկեղծության վրա, հավանաբար նկատի ունենալով իր ժամանակին բոնդրակեցիների և այլ աղանդավորների փորձը, որոնք թեպետև խոսքով, երդումներով հրաժարվում էին, սակայն իրականում մնում էին հաստատ իրենց համոզմունքներին։ Արևորդիների դարձի գալու մասին Շնորհալին գրում է. «Եթէ ճշմարիտ լինիցի դառնալ նոցա առ Աստուած, ուրախութիւն է Աստուծոյ և հրեշտակաց ի յերկինս և մեզ... իսկ եթէ ստութեամբ լինիցի դարձ նոցա... մեզ և ոչ մի ինչ է վնաս. զի մեք վասն հրամանին Քրիստոսի կամիմք ջանամք արկանել զնոսա՝ թէ հնար էր և զամենայն աղգս ի յուսկան Աւետարանի նորա»[2]։

Արևորդիներին համոզելու և դարձի բերելու համար Թղթում Ամայքի եպիսկոպոսին և իշխանին հետևյալ ցուցմունքն է տրվում. «...Եւ ժողովել զԱրևորդիսն անուանեալ զամենեսեան զարս և զկանայս և զմանկունս ի դրունս եկեղեցւոյն. և նախ հարցանել զնոսա, եթէ կամի՞ք ի բոլոր սրտէ և յամենայն մտաց և ի զօրութենէ ձերմէ

1 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, կէ թուղթ, էջ 161։

2 «Թուղթ ընդհանրական», էջ 224։

*Թողուլ զառաջին մոլորութիւն հարցն ձերոց, և դալ ի ճշմարիտ առաուածագիտութիւն քրիստոնեութեանս»*[1]:

*Եվ երբ արևորդիները անկեղծորեն հանձն առնեն, որ ընդմիշտ հեռանում են իրենց հայրերի մոլորություններից, այն ժամանակ պետք է կատարել «Հրաժարիմք ի սատանայէ» աղոթքը, մկրտել բոլորին և բացատրել, որ արևն աստված չէ, այլ այն գոյություն ունի որպես լուսատու՝ մարդկության համար:*

*Որպեսզի արևորդիների զավակները ընդմիշտ մոռանան իրենց հայրերի գործերը, Սամուսատի իշխանին և հոգևորականներին Շնորհալին գրում է. թէ՝ «Առէք և յորդուց նոցա յուսուցումն գրոց սրբոց, զայս և մեք խնդրեցաք ի նոցանէ՝ յորժամ եկին առ մեզ... զի թերևս արժանի լինիցին ի զաւակաց իւրեանց քահանայութեան, որպէս և յորդուց քրմացն սուրբն Գրիգոր ուսոյց և ձեռնադրեաց քահանայս և եպիսկոպոսունս»*[2]:

*Արևորդիք բառն էլ այլևս բնավ չպիտի գործածել, ասում է թուղթը: Դարձի գալուց հետո նրանց պետք է անվանել ուղղակի քրիստոնյա և երբեք չհիշեցնել նրանց արատավոր անցյալը: Վերջում Շնորհալին զգուշացնում է, որ պետք է նախկին արևորդիների հետ զգույշ վարվել, չնեղել զանազան հարկերով ու տուրքերով: Ժամանակավորապես նրանց պետք է տալ որոշ արտոնություններ, այն է՝ ծննդի, մկրտության, թաղման, հարսանիքների, տնօրհնեքների և այլ տուրքերից ազատել. միայն վերցնել այն, ինչ նրանք ինքնակամ, սրտանց տալիս են այդ ծիսակատարությունների ժամանակ*[3]:

*Այս թուղթը պատմական խոշոր նշանակություն ունի, որովհետև մանրամասն տեղեկություն է տալիս արևորդյաց հետաքրքրիր աղանդի մասին, որի գաղափարական էության մի մասը սերվում է մեր հին հեթանոսական կրոնից, մի մասն էլ՝ այդ աղանդից տեղով ու ժամանակով ոչ շատ հեռու թոնդրակեցիներից:*

*Շնորհալու մյուս ոչ պակաս հետաքրքրական թղթերից մեկն էլ վերաբերում է արևորդիներից մի քանի տարի առաջ Միջագետքի Բլկուրանի իշխանության շրջանում գտնվող Ամայք և Շալղիան գավառներում երևացող աղանդին: Վերջինս հավանաբար նույնպես թոնդրակեցիներից է մնացել: Բնորոշն այն է, որ այս երկու աղանդներն էլ, չնայած իրենց էությամբ համարյա թե նույնն են, բայց չեն*

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 224:
2 Անդ, 228—229:
3 Անդ, էջ 229:

հիշվում միևնույն անունով և չունեն սեփական անուն, ըստ երևույթին ծածուկ մնալու և կասկածների տեղիք չտալու համար։

Աղանդավորները սովորաբար կոչվել են իրենց բնակավայրի կամ ղեկավարի անունով և գործել են շատ զգույշ՝ ըստ հանգամանքների ու ժամանակի։ Սակայն երբ պայմանները նպաստավոր են եղել, աղանդը իսկույն աշխուժացել և տարածվել է ժողովրդի մեջ։ Շնորհալին դեռ եպիսկոպոս էր, երբ 60-ական թվականներին, Ամայքի աղանդն այնքան էր ուժեղացել, որ Բլկուրանի իշխան Առյուծը մի հատուկ նամակ գրեց Գրիգորիս կաթողիկոսին, որպեսզի աղանդի դեմ համապատասխան միջոցներ ձեռնարկի, մանավանդ նրա համար, որ աղանդավորների մեծ մասը գյուղական քահանաներն էին։ Գրիգորիսը Շնորհալուն հանձնարարեց գրել վարդապետական-խրատական մի նամակ՝ այդ շարժումը կասեցնելու նպատակով։ Նամակից երևում է, որ այս աղանդավորները նույնպես Թոնդրակեցիների և Թուլայլեցիների հաջորդներն են, որոնք ասորի և հայ քրիստոնյաների հարաբերությունների ու ժամանակի պայմանների համապատասխան նոր երանգ են ստացել։ Ուշագրավ է նաև այն, որ Շնորհալու այս թղթում աղանդավորներն համարվում են Սմբատ Զարեհավանցուն հետևողներ. «Լուաք դարձեալ ի ոմանք ի մոլար քահանայից ըզծածկեալ դարշահոտ պղծութիւն անիծելոյն Սմբատայ Թոնդրակեցւոյ, վերստին շարժեն ի կործանումն լսողացըն ասելով, եթէ եկեղեցի ոչ շինեալն է ի մարդկանէ՝ այլ մեք միայն, և Մաշտոցն գիրք և որ ի նմա կարգեալքն են, խաչ օրհնել և եկեղեցի և այլքն, ոչ են ընդունելի»[1]։

Ամայքի աղանդի հիմնական սկզբունքները, որոնք հակադիր էին հայ լուսավորչական եկեղեցուն, մասամբ երևում են նամակի հետևյալ երկար վերնագրից. «Թուղթ գրեալ յեպիսկոպոսութեան իւրում հրամանաւ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի եղբօր իւրոյ, ի Միջագետս Ասորւոց Յամայք կոչեցեալ նահանգին, յաղագս որ անդ մերոյ ազգի քահանայից հակառակաբանելոյ անմտաբար ընդ միմեանս, յոմանց ասել Աստուածութեանն բնութիւն չարչարեալ և մեռեալ ի խաչին ընդ մարմնոյն, և ոմանց զմարմինն միայն. և յոմանց դարձեալ ընդունելի լինել մատաղ և յոմանց արհամարհելի. և այլք եթէ դրախտն իմանալի է և միայն օրինակաւ ասացեալ, այլ ոչ ճշմարիտ էութիւն, և այլնս որ յայսպիսեաց, ի խնդրոյ ուրումն աստուածասիրի Առիւծ անուն իշխանի Բլկուրանն ասանի»[2]

---

1 «Թուղթ ընդհանրական», էջ 269։

2 Անդ, էջ 240։

Սակայն աղանդի էությունն ամբողջապես դրսևորվում է թղթի քովանդակության ընթացքում: Աղանդավորները գտնում են.

ա) «Եթէ էական բնութիւն Բանին մեռաւ ընդ մարմնոյն ի վերայ խաչին»[1]:

բ) «Եթե ոչ գոյ դրախտն Աստուծոյ զոր գրեաց Մովսէս, և ոչ ծառ կենաց և ոչ ծառ գիտութեան և ոչ պտուղ նիւթեղէն զոր եկեր Ադամ, այլ յօրինակ միայն գրեցան այսորիկ»[2]:

գ) Սուտ և անգոյ է ըստ նոցա և տապանն Նոյի... և ծառն Սաբեկայ և խոյն... և գաւազանն Մովսիսի և Ահարովնի, որ տիպք էին խաչին... և սիւն ամպոյն՝ որ նշանակ էր Հոգւոյն Սրբոյ և մանանայն՝ որ կենացս հացի, և ըմպելին՝ որ աստուածայնոյ ըմպելւոյս... և վերկիրն Աւետեաց՝ որ և այժմ է ի միջի, և զնոյն ինքն զՆորուսաղէմս սաորին՝ որ վերնոյն օրինակի և զԼեառն Սիօն որ երկնաւորին, և զտաճարն Սողոմոնի որ այսմ եկեղեցւոյ օրինակի...»[3]:

Ինչպես երևում է, այս աղանդը ժխտել է ամբողջ հին ու նոր կտակարանների քարոզած հիմնական գաղափարները և ավելի հեռուն է գնացել քան Բոնդրակեցիները: Շնորհալու այս երկու ուշադրավ թղթերը կարևոր նշանակություն ունեն վերոհիշյալ աղանդների ուսումնասիրության գործում: Դժբախտաբար Կիլիկիայում, Ասորիքում և Միջագետքում բնակվող հայերի մեջ այդ ժամանակաշրջանում երևացած աղանդները խորապես ուսումնասիրված չեն: Կասկածից վեր է, որ հայ եկեղեցու կողմից հալածված ու ճնշված աղանդները վերջնականապես չեն մեռել: Որ դրանք հետագայում աշխուժացել և հաճախ են երևան եկել Կիլիկիայում այս կամ այն ձևով, երևում է լամբրոնացու՝ Ներսես Շնորհալուն նվիրված «Գովեստ»-ի հետևյալ տողերից.

Եթե աղանդ ուրեք շարժէր՝
Մեծ զօրութեամբըն խափանէր,
Համաշխարհի նամակ յղէր՝
Իւրաքանչիւր գործս խրատէր[4]:

* * *

Շնորհալին երեք փոքրիկ նամակ էլ գրել է Հաղպատի վանահայր Գևորգ վարդապետին, որի հետ մշտապես մտերմական կապ է պահպանել: Այս նամակները բնորոշ են այն տեսակետից, թե Շնոր-

1 «Թուղթ ընդհանրական», էջ 242:

2 Անդ, էջ 264:

3 Անդ, էջ 265:

4 «Թուղթ ընդհանրական» (Գովեստ, ներբողական), էջմիածին, 1865, էջ 477:

հալին որքան սերտ կապ է ունեցել բուն Հայաստանի հետ և թե ինչպես միշտ հաշվի է առել այնտեղի նշանավոր մարդկանց կարծիքը եկեղեցիների միության, դրական, թարգմանական և այլ գործերում: Նա շատ անգամ է լսել Հաղպատի վարդապետների խորհուրդը առանձնապես դրական աշխատանքներում: Այս վանքի վանահոր՝ Գևորգի առաջարկությամբ Շնորհալին ասորերենից թարգմանեց ս. Սարգսի վկայաբանությունը: Նույն Հաղպատի վանական Վարդան վարդապետի խորհրդով նա գրեց Դավիթ Անհաղթի «Բարձրացուցեք» ճառի մեկնությունը, Հաղպատեցի մի ուրիշ վարդապետի առաջարկությամբ մեկնեց Գրիգոր Նյուսացու կարևոր ճառերից մեկը և այլն:

Հաղպատի վանքի հետ Շնորհալու ունեցած սերտ կապերի մասին Ջամչյանը հիմնվելով մի շարք ձեռագրերի հաղորդումների վրա գրում է. «Ունէր ընտանութիւն մեծ ընդ Շնորհալւոյն և Գևորգ վարդապետ առաջնորդ ուխտին Հաղբատայ՝ այր անուանի սրբութեամբ և իմաստութեամբ, և եղեւ բղբակցութիւն բազում ի միջի առ միմեանս... արարեալ ընդդէմ մոլորութեան մանիքեցւոց և պիւռեսնացւոց...»[1]:

Ջամչյանի այս խոսքերը ցույց են տալիս, նախ, որ Շնորհալին հաղպատցոց միայն հիշված երեք նամակները չի գրել, այլ «բազում բղթակցութիւն» և երկրորդ, որ Շնորհալու վերևում հիշված ոչ բոլոր նամակներն են մեզ հասել, որոնց մեջ ամենակարևորն է մանիքեցիների դեմ գրածը:

Շնորհալու արձակ թղթերի մեջ նշանավոր են նաև երկու յուրահատուկ նամակ, ուր դրսևորվել է նրա մարդասիրությունը: Այդ թղթերից մեկը կոչվում է «Բան մխիթարութեան առ վտանգեալսն մարմնով որք յանբարեաց ոմանց նախատեալք եղեն, զոր ծանուցին նմա գրով», որը վերաբերում է Եդեսիայի այն բնակիչներին, որոնք տառապում էին ուրկության ախտով և դրա համար անարգվում ու հալածվում էին իրենց համաքաղաքացիներից: Նախատվող հիվանդները գրավոր բողոքեցին հայոց կաթողիկոսին: Այդ բողոքի կապակցությամբ Շնորհալին գրեց «Բան մխիթարութեան» այս մարդասիրական թուղթը, ուր մի կողմից հուսադրում և քաջալերում է ախտացյալներին, իսկ մյուս կողմից էլ մեղադրում հիվանդներին անարգողներին և նեղողներին: Այս թղթում ամենից արժեքավորն այն է, որ թեպետ Շնորհալին ուրկության ախտը և առհասարակ

---

1 Մ խ ք. վարդ. Ջ ա մ չ յ ա ն, Պատմութիւն հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1784, էջ 85:

բախտավորությունն ու դժբախտությունը բացատրում է Աստուծո կամքով, «որ է անքննելի», սակայն գրվածքի վերջում, կրոնից բոլորովին անկախ, ընդհանրապես հետևյալ առաջադիմական բացատրությունն է տալիս հիվանդությունների պատճառների վերաբերյալ, կապելով դրանք բնագիտության և մարդու բնախոսության հետ. «Բայց ոչ ամենայն հիւանդութիւնք վասն նախասացեալ պատճառիդ են, դի բազումք յաղագս հակառակութեանց տարերացս ծնանին յորոց և մարմինս է. զոր և հավատարապէս կրեմք՝ որքան ի բնութիւնս եմք ախտաւոր, եթէ արդարք և եթէ մեղաւորք...»[1]:

Վերջին թուղթն է՝ «Գիր շրջաբերական առաքեալ ի կողմանս Արևելից ի Կարս» վերնագրով: Վանանդ գավառի Կարս քաղաքի Աբրահամ եպիսկոպոսը վախճանվել էր. սրա փոխարեն քաղաքի բնակչությունն առաջադրեց Խաչատուր անունով մի քահանայի, որին հաստատեց Շնորհալին և այդ առիթով դրեց վերոհիշյալ թուղթը: Ինչպես «Թուղթ ընդհանրական»-ում, այնպես էլ այս թղթում, Շնորհալին դիմում է Կարսի նահանգում բնակվող բոլոր խավերին՝ համապատասխան խրատներով, որոնք վերաբերում են ժողովրդի կենցաղին: Այստեղ նա զբաղվում է նաև աշխարհիկ, սոցիալական հարցերով:

Խախտվել էին հին կենցաղի բարոյական նորմաների և հաստկացությունների հիմքերը հասարակական և ընտանեկան կյանքում: Չտեսնված չափերի էին հասել Կարս քաղաքում ամուսնալուծության դեպքերը, որոնց մասին լուրերը հասել էին Հռոմկլա: Կենցաղային այդ վատ երևույթի դեմ պայքարելու համար Շնորհալին խրատներ է տալիս քաղաքի ազդարնակչության և իր կողմից նոր հաստատված Խաչատուր եպիսկոպոսին առաջադրում հետևյալը. «Պահեսցէ և զհրամայեալ օրէնսն ի Տեառնէ որ յաղագս առն և կնոջ անբաժանելի զուգաւորութեան. զի բայց ի յանէծ պոռնկութեան և որ այլ ևս են ի կանոնս սուրբ հարցն գրեալք պատճառք, այլով իվիք մի՛ արասցէ բաժինս, որպէս լսեմք զոմանց յեպիսկոպոսաց արևելից, զի արհամարհելով զօրէնս Աստուածոյ՝ բաժանեն անխտրաբար սակըս սակաւ ինչ կուրացուցիչ մամոնայի. զի թէ որ արձակէ զկին իւր և արասցէ այլ՝ շնայ, ըստ բանին Քրիստոսի. ապա և արձակողն ընդ նմին զոր արձակեաց՝ շնութեան մեղօքն պատժիցի»[2]:

Ամուսնալուծության մասին խոսելուց հետո Շնորհալին կանգ է առնում կենցաղային մի ուրիշ, տարածված արատի՝ հարբեցո-

---

1 «Թուղթ ընդհանրական», Երուսաղէմ, 1871, էջ 295:
2 Անդ, էջ 220:

ղության վրա, որը ինչպես «Ընդհանրականում», այնպես էլ այստեղ համարում է ամուսինների բաժանման, մարդասպանության և բոլոր տեսակի չարիքների պատճառը։

Սակայն Շնորհալին բոլորովին չի արգելում գինի խմելը, այլ միայն պահանջում, որ՝ «...Սիրել զչափաւորութիւն ի գինի յամենայն կերակրոց վայելս, այնքան՝ մինչ զի զուրախութիւնն միայն կրել ի գինւոյն արբմանէ»[1]։

Նամակը վերջանում է մարդասիրական խրատներով ու խորհուրդներով։ Երկրագործ, արհեստավոր թե քահանա, աշխարհիկ թե հոգևորական, բոլորն էլ պետք է իրար չխաբեն, սուտ չխոսեն, այլ լինեն ազնիվ, շիտակ ու ճշմարտախոս։ Մարդկանց միջև կապը հիմնված պիտի լինի ոչ թե ընչաքաղցության, անիրավության և շահադիտական ակնկալությունների վրա, այլ այդ կապը պիտի լինի անշահախնդիր, բարյացակամ ու անկեղծ։ Եվ այդ բոլորի համար առաջարկում է ժողովրդին. «Խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, և մի՛ դիւաբէութիւն և զատութիւն... Մի՛ անիրաւէք և մի՛ ղրկէք զմիմեանս, այլ անկեղծ սիրով սիրեցէք զընկերս և բարի արարէք միմեանց. և զոր ինչ քեզ չար թուի, ընկերին մի՛ առներ, և զոր ինչ կամիս թէ առնեն քեզ այլք, զնոյն արա և դու այլոց[2]...»։ Ապա պարտավորեցնում է, որպեսզի ամեն մեկը «տացէ և զանձն իւր օրինակ յամենայն գործս բարեաց... արդարութեամբ, խոնարհութեամբ... եղբայրասիրութեամբ և մարդասիրութեամբ...[3]»։

Շնորհա՛ու բոլոր արձակ թղթերը, առանձնապես «Թուղթ ընդհանրական»-ը, իրենց սոցիալական և դաղափարական արժեքների հետ միասին ունեն նաև դեղարվեստական նշանակություն։ Թղթերի տրամաբանական կառուցվածքը, պատկերավոր մտածությունը, գրվածքի միտքն ավելի լավ ընկալելու համար տեղին գործածված նմանությունները ու հակադրությունները, կյանքից վերցրված օրինակները, այս ամենը ոճին տալիս են նաև գեղեցիկ ձև։ Շնորհա՛ու թղթերը արտացոլում են XII դարի Կիլիկիայի հայերի հասարակական կյանքի, սոցիալական հարաբերությունների, բարքերի ու կենցաղի տարբեր կողմերը։ Այդ երկերը իսկապես արժեքավոր են ոչ միայն պատմական-սոցիալական, այլև գրական-գեղարվեստական տեսակետից։

---

1 «Թուղթ ընդհանրական», Երուսաղէմ, 1871, էջ 221։

2 Անդ, էջ 221—222։

3 Անդ, էջ 220։

# ՉԱՓԱԾՈ ԳՐՎԱԾՔՆԵՐ

Ներսես Շնորհալու մեծությունն ու հանճարը դրսևորվել է նրա բազմատեսակ չափածո գործերում։ Նկատի ունենալով այդ բանաստեղծությունների բովանդակության առանձնահատկությունն ու բնույթը՝ դասավորեցինք այսպես.

1. Շարականներ, տաղեր, գանձեր
2. Աշխարհիկ մոտիվներով դավանաբանական պոեմներ
3. Մանկավարժական ոտանավորներ
4. Պատմա-քաղաքական պոեմներ
5. Հանելուկներ

## 1. ՇԱՐԱԿԱՆՆԵՐ, ՏԱՂԵՐ, ԳԱՆՁԵՐ

Շարականների բազմաթիվ հեղինակների մեջ Շնորհալին ամենաբարձր գագաթն է։ Հայկական բազմատեսակ շարականների համարյա կեսը պատկանում է նրա գրչին։ Անկարելի է պատկերացնել մեր շարականների գանձարանը՝ Շարակնոցը առանց Շնորհալու։ Թեպետև շարականագիրներից և ոչ մեկն էլ Շնորհալու արվեստի թափն ու շունչը չունի, այնքան ճանաչված ու սիրված չէ, բայց և այնպես դեռևս նրա շարականներն ամբողջությամբ ուսումնասիրված չեն։ Ընթերցող հասարակությունը գիտե, որ Շնորհալին ունի «Թուղթ ընդհանրական», «Ողբ Եդեսիոյ» և «Բանք չափաւ» գրքերը, բայց չգիտե, թե Շնորհալին ի՞նչ շարականներ է գրել և ի՞նչպիսի արժեք են ներկայացնում դրանք միջնադարյան հայ պոեզիայի մեջ։ «Բանք չափաւ» ժողովածուի մեջ ամփոփված են հեղինակի չափածո բոլոր գործերը՝ բացի շարականներից և «Եդեսիոյ Ողբ»-ից։ Վերջին XIX դարում առանձին լույս է տեսել մի քանի անգամ, մինչդեռ Շնորհալու շարականները բացի Շարակնոցից, ոչ մի տեղ չեն հրատարակվել։ Ըստ երևույթին այս անտարբերությունը հետևանք է այն բանի, որ շարականներից շատերի հեղինակները տակավին մինչև օրս հայտնի չեն, ու մեր պատմագիրների, հիշատակարան-

ների, տոնացույցների և ձեռագրերի մեջ քիչ չեն հանդիպում այնպիսի տվյալներ, որտեղ միևնույն շարականը վերագրվում է մի քանի հեղինակի։ Սակայն առանց Շնորհալու շարականների վերլուծման, նրա բանաստեղծական պատկերը թերի կլիներ։

Պրոֆ. Մ. Աբեղյանը այսպես է բնորոշում դրանք. «Ավելի կարևոր են Շնորհալու բաղմաթիվ հոգևոր երգերը... Դրանց մեջ կան և շատ գեղեցիկները և այնպիսիները, որ մի ժամանակ սիրված և ժողովրդականացած են եղել»[1]։

Երկու հիմնական և հավաստի պատմական աղբյուր կա, թե ինչ շարականներ է գրել Շնորհալին։ Այդ աղբյուրներից մեկը Կիրակոս Գանձակեցին է, որը Շնորհալու գիտության և համբավի մասին խոսելիս, միաժամանակ հայտնում է, թե նա ո՞ր կանոնի, ո՞ր շարականներն է գրել։ «Եւ զի էր նա այր բանաւոր, բազում ինչ կարդեաց նա յեկեղեցիս քաղցր եղանակաւ, խոսրովային ոճով շարականս, մեղեդիս, տաղս և ոտանաւորս. քանզի նորա է յարութեան օրհնութիւնն՝ երրորդ կողմն, և աստուածածնի փոխման երկուց աւուրցն, և Պետրոսի և Պօղոսի օրհնութիւնն, և մանկունքն, և համբարձին, որոյ սկիզբն է այս. «Ցնծա՛ այսօր եկեղեցի աստուածոյ յիշատակաւ սուրբ առաքելոցն», և Որդւոցն որոտման օրհնութիւն՝ «Որ էն էութեան որդի միշտ էին» և շարական մի Անտոնի, և երկու Թէոդոսի և մի քառասնից, և մի առաքելոցն, և աւագ շաբաթին երից աւուրց օրհնութիւն—երկուշաբթին, երեքշաբթին, չորեքշաբթին. և երկու շարական յարութեան ճաշոյ. և Նինուէացւոցն, և հրեշտակապետացն, և սրբոց Վարդանանցն, և այլ բազում շարականս»[2]։

Չնայած եղած աղբյուրների մեջ Գանձակեցին ավելի մանրամասն ու ավելի որոշ է գրում Շնորհալուն պատկանող շարականների մասին, բայց մեջբերումի վերջին բառերից երևում է, որ պատմիչը բոլոր շարականների անունը չի տալիս. հիշված շարականներից բացի նա ունեցել է նաև «այլ բազում շարականս»։ Նշանակում է՝ Գանձակեցու հաղորդածը Շնորհալու շարականների մասին լրիվ չէ։

Երկրորդ տեղեկությունը տալիս է 1833 թ. Էջմիածնում լույս տեսած Ջայնքաղ Շարականի առաջաբանը։ Այստեղ Շնորհալուն վերագրվում են հետևյալ շարականները.

«Սուրբն Ներսես Շնորհալի՝ զվառ ձայնն Աւագ օրհնութեան, զԵօթանասնիցին, զՆինուէացւոցն, զԱղուհացիկ սմնայն կիրա-

---

1 Մանուկ Աբեղյան, Հայոց հին դրականության պատմություն, Բ գիրք, էջ 86—87։

2 Կիրակոս Գանձակեցի, էջ 119։

կէիցն, զՍաղկազարդի հարցն, զՀոգւոյ գալստեան չորս պատկերն. զվարդավառի զերկու պատկերսն, և Փոխման զերկու պատկերսն. զՅովհաննու ԴՋ հարցն. զՄարգարէից ԴՋ հարցն. զՀրեշտակապետացն, զՆորահրաշն Վարդանանց, զՂևոնդեանցն, և զԱյսօր անճառն զՆորոգօղն. զԱստուած անեղն. զԱրարչականն. զԱրևագալի շարականն, զՕրհնեմք զքեզն. զՆայեաց սիրովն. Ի քէն հայցեմքն. և ըստ ոմանց՝ ս. Յակոբայն ևս սորա է ասացեալ»[1]։

Այս առաջաբանում էլ չեն հիշվում ժամագրքում եղած Շնորհալուն պատկանող՝ «Նորաստեղծեալ», «Առաւօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն», «Յիշեսցուք», «Զարթիք» և «Նորոգող տիեզերաց» շարական-երգերը։ Ուրեմն Զայնքաղ Շարականի առաջաբանում է Շնորհալու գրած բոլոր շարականները չեն հիշված, հետևաբար այս աղբյուրն էլ լրիվ չէ։ Օգտվելով այս երկու հիմնական աղբյուրներից, հիշատակարաններից և այլ տվյալներից՝ իր «Շնորհալի և պարագայ իւր» հայտնի գրքում Ղ. Ալիշանը այդ շարականների մասին տալիս է հետևյալ տեղեկությունները.

«Ժամասացութեան, կամ պարզ ևս ըսելով՝ ժամագրոց մէջ Շնորհալին նոր մասեր կամ աղօթքներ չաւելցուց. այլ միայն նոր երգեր մտուց... Արդ իր նոր գրածներն կամ իր շարադրածներն են՝ նախ «Յիշեսցուք» և «Զարթիք»... ապա... «Առաւօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն», «Նորաստեղծեալ»... «Արարչական» երգը... Արևագալի ժամուն մէջ՝ քանի մը արձակ երգեր աւելցուցեր է... Ճաշու ժամուն՝ ծանօթ է «Օրհնեմք զքեզ» երգն, Խաւարեցաւ և Զարչարակցեալ..., «Նայեաց սիրովն», «Ի էն հայցեմքն»... Հօս,—շարունակում է Ալիշանը,—կուզեմ յանուանէ ալ յիշել իր յօրինածները, որչափ որ հայտնի են, կամ կկարծուին. և են՝ 1. 2. Երկու Աւագ տօնից սրբոց շարականքն մեծ մասամբ, այսինքն՝ Պետրոսի և Պօղոսի, Յովհաննու և Յակոբայ. 3. Առաքելոց շարականին մասն. 4. Յոթանասնից՝ «Իմաստութիւն երկնային». 5. Թևոդոսի շարականին մասն. 6. Ս. Անտօնի մասն. 7. Քառասուն Մանկանց մասն. 8. Մեծ պահոց կիրակէից կանոնքն. 9. Նինուէացւոցն. 10—12. Աւագ երկուշաբթի, երեքշաբթի և Չորեքշաբթի կանոնք. 13. Աւագ Ուրբաթու «Այսօր ի կատարումն». 14. Յարութեան երկու ճաշու շարական. 15. Ըստ ոմանց և Օրհնութիւն վառ ձայնի Յարութեան. 16. Հոգեգալստեան Բ օրվա կանոնն. 17. Վարդավառի Բ և Գ օրերուն կանոնքն. 18. 19. Վերափոխման Բ և Գ. աւուրցն. 20. Մարգարէից շարականն «Որբնդ հողէղէն». 21. Հովհաննու Մկրտչին. «Որ աւետա-

[1] «Զայնքաղ Շարական», Էջմիածին, 1833, առաջաբան, էջ 3 (մեջբերված շարականները այս աղբյուրից են)։

ուր». 22. Հրեշտակապետացն. 23. Ս. Յակոբայն. 24. «Մանկանցն Բեթղեհեմի». 25. Վարդանանց. 26. Ղևոնդեանցն. 27. Աստուած աներ. 28. 29. Այսօր անճառ և Նորոգող տիեզերաց»[1]։

Շնորհալուն պատկանող շարականների վերաբերյալ որոշ տեղեկություններ են հաղորդում նաև Գաբրիել Ավետիքյանի «Բացատրութիւն շարականաց» և Ս. Ամատունու «Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ» ուսումնասիրությունները։

Վերջապես արժեքավոր նոր տվյալներով հարուստ են Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում եղած Շնորհալու շարականների՝ №№ 1553, 5274, 3484, 1558, 8084, 6987, 9053, 424, 3438, 370, 1576, 1577, 1585, 1589, 2179, 824, 2961 ձեռագրերը։

Այսպիսով, ըստ պատմիչների, բանաստեղծների և ձեռագրերի հաղորդած տվյալների, Ներսես Շնորհալուն են վերագրվում՝ «Աղուհացից կոչվող» կիրակիների (մեծ պահքի), «Հայրապետաց», «Հրեշտակապետաց», «Հովհաննես Մկրտչի ծննդյան» կանոնները[2], «Ավագ օրհնության» երրորդ ձայնը, «Վարդավառի» երկու և «Վերափոխման» երկու պատկերները. «Վարդանանց և Ղևոնդյանց», «Անտոն Անապատականի», «Թևոդոսի կամ Թագավորաց», «Հակոբ Մծբնեցու», «Հովնան մարգարեի», «Ս. Սարգսի», «Արծաթսիրությամբ մոլյալ», «Նահապետին Աբրահամու», «Նորոգող տիեզերաց», «Նորաստեղծեալ», «Նայեաց սիրով», «Ի քէն հայցեմք», «Արարիչ և մարդասէր», «Առաւօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն», «Յիշեսցուք», «Ջարթիք», «Քառասուն մանկանց», «Որդոյն Որոտման», «Պետրոսի և Պողոսի», «Ավագ շարաթի երեք օրերի», «Հոգեգալստեան» երկու օրերի և «Արևագալի» շարականները, «Այսօր անճառ», «Արարչական» և «Աստուած աներ» պոեմները։ Իսկ եթե «Կանոն» և «Պատկեր» կոչվող շարականների շարքը առանձին առանձին թվենք, այն ժամանակ Շնորհալու գրած շարականների քանակը կհասնի հարյուրների։

Ինչպես տեսնում ենք, մեր հոգևոր երգերի ժողովածուի՝ Շարակնոցի մեջ Ներսես Շնորհալին ամենաբեղմնավոր և ամենամեծ հեղինակն է։

* * *

Խոսել Շնորհալու շարականների մասին, առանց կանգ առնելու ընդհանրապես հայկական շարականների ժանրի առաջացման, նրա

---

1. Ղևոնդ Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 444—446։

2 Այստեղ կանոն կամ պատկեր բառը նշանակում է հավուր պատշաճի շարականների մի ամբողջ շարք՝ միևնույն միտքն ու մոտիվները պարունակող։

պատմական, դրական նշանակության վրա, կլիներ թերի: Մեր միջնադարյան պոեզիայում երկար դարեր գոյություն ունեցած դրական այս խոշոր ժանրը իր սկիզբն է առնում V դարից և աստիճանաբար զարգանալով ու մտնելով ժամակարգության մեջ՝ հարատևում է ուղիղ մի հազարամյակ և հասնում մինչև XV դարի վերջերը: Շարականները սկսած V դարից մինչև XII դարի սկզբնները կոչվել են հոգևոր երգ, այնուհետև՝ շարական: Վերջինս հայկական ածանցավոր մի բառ է՝ շար արմատից և ական վերջածանցից, որը մեր թե՛ հին, և թե՛ արդի դրական լեզվի մեջ գործածվում է երեք առումով.

Առաջին՝ շարական ասելով հասկանում ենք՝ եկեղեցական կամ հոգևոր կոչվող մի երգ, բանաստեղծություն:

Երկրորդ՝ երգերի շարք. օրինակ երկու կարգ շարական, ութ ձայն շարական և այլն:

Երրորդ՝ նշանակում է գիրք, հոգևոր երգերի ժողովածու՝ Շարական գիրքը:

Ինչպես շատ քրիստոնյա ազգերի, այնպես էլ մեզ մոտ քրիստոնեության սկզբնական շրջանում կրոնական պաշտամունքի համար առանձին տեղական, ազգային երգեր չեն եղել: Հոգևոր երգերին այդ ժամանակ նախորդել են սաղմոսների կանոնները, որոնք սկզբում սոսկ ընթերցվում էին, բայց հետզհետե հարմարվեցին եկեղեցական երաժշտության և երգվում էին: Գրերի գյուտից և մեր ազգային գրականության հիմքը դրվելուց հետո, հայ եկեղեցու ժամակարգության մեջ ընդունված ու երգվող սաղմոսները աստիճանաբար փոխարինվեցին նոր, փոքրիկ, ազգային հոգևոր երգերով: Այս երգերը սկզբնական շրջանում կոչվում էին կցորդ, որովհետև երգվում էին սաղմոսներից անմիջապես հետո, որպես սաղմոսներին կցված մի մաս: Ահա այդ կցորդ կոչված երգերի հիմքի վրա է, որ առաջանում ու զարգանում են մեր հոգևոր երգերը:

Հոգևոր երգերի առաջին հեղինակները Սահակն ու Մեսրոպն են եղել: Նրանց նախաձեռնությամբ, գրերի գյուտից հետո, Հայաստանում ծայր առավ գրական մեծ շարժում: Նորաստեղծ հայկական գրական լեզուն հանդիսացավ լավագույն մի միջոց հայ ժողովրդի կյանքն ու հոգեկան աշխարհը դրսևորելու համար:

Բոլոր ժողովուրդների մոտ էլ հոգևոր երգերի միջոցով արտահայտվել են ժամանակի մարդու պատկերացումներն ու երևակայությունը, դաղափարներն ու հասկացությունները: Այդպես են եղել և մեզ մոտ: Մեր բազմաթիվ բովանդակալից շարականներն էլ իր ժամանակին արտացոլել են ազգային հոգեկան կյանքը, բատ որում և հին հեթանոսական շրջանի պատկերացումները՝ բնության,

տիեզերքի և առանձնապես արևի ու լույսի մասին։ Հայկական Արևվագալի շարականների ամեն մի տողի միջից երևում է արևի պաշտամունքն ու փառաբանումը։ Այդպես են նաև Մեծացուցէ կոչված շատ շարականներ, ուր գովերգվում է տիրամայրը՝ բնությունից, արևից ու լույսից վերցված գեղեցիկ համեմատություններով։ Ուրեմն, մեր շարականները կրոնական գաղափարների հետ միաժամանակ արտահայտել են նաև մարդու պատկերացումներն ու հասկացությունները բնության և կյանքի այս կամ այն երևույթի վերաբերյալ, հետևաբար դրանք ազգային մշակույթի տեսակներից մեկն են և կապված են հայ իրականության հետ։ Բայց մեր բանասիրության մեջ դեռևս ամբողջապես չի ուսումնասիրվել ու գնահատվել գրական այս մեծ տեսակը։

Շարականների ուսումնասիրության բնագավառում շատ խոշոր աշխատանք է կատարել պրոֆ. Մանուկ Աբեղյանը։ Ճիշտ է, թեև Աբեղյանից շատ առաջ Գ. Ավետիքյանը (1844), Մ. Էմինը (1879), Ս. Ամատունին (1894), Դ. Խաչկոնցը (1901) և Ն. Տեր-Միքայելյանը (1905) շարականների մասին գրել են արժեքավոր ուսումնասիրություններ, բայց դրանցից և ոչ մեկը չունի պրոֆ. Մ. Աբեղյանի ուսումնասիրության բազմակողմանիությունն ու խորությունը[1]։

Բանաստեղծության այս տեսակն ավելի քան մի հազարամյակ գոյություն է ունեցել ու զարգացել հայ իրականության մեջ, ունի է գեղեցիկ ու բարձր արվեստով գրված ազգային, պատմական նշանակություն ունեցող բազմաթիվ գործեր, ինչպիսիք են Կոմիտասի «Անձինք նուիրեալք»-ը, Հովհաննես Իմաստասերի Ղևոնդյանց նվիրված «Պայծառացան այսօր»-ը, Ներսես Շնորհալու՝ Վարդանանց, Ղևոնդյանց, Տրդատին, Սահակ Պարթևին, Ներսես Մեծին նվիրված և հայրենասիրական բնույթի բազմաթիվ այլ շարականներ։

Մեր շարականները առանձնապես ուժեղ թափով զարգացել են և տարածվել V—VII դարերում, VII դարում այդ հոգևոր երգերը այնքան էին բազմացել ու տարածվել, որ մի գավառի եկեղեցում երգվող շարականները մյուս գավառում չգիտեին։ Կիրակոս Գանձակեցին վկայում է[2], որ այդ խառնաշփոթ դրությանը վերջ տալու համար Ներսես Շինող կաթողիկոսը հարկադրված ինքն է դրաղվում շարականների ժողովածուների խմբագրությամբ։ Իսկ հունական կանոնը հայ եկեղեցու կողմից ընդունվելուց հետո, ընդհակառակը,

---

1 «Արարատ», 1912, № № 7—12 և «Հայ հին դրականության պատմություն», հատ. Ա, էջ 470—489։

2 Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 61—62։

մեր հոգևոր երգը սկսած VIII դարի կեսերից մինչև XI դարը անկում է ապրում: Այս երեք դարերի մեջ որպես շարականների հեղինակներ հիշվում են միայն Ստեփանոս Սյունեցին և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը: Այնուհետև հայկական շարականներն արագ թափով զարգացել են XII դարում՝ գլխավորապես Ներսես Շնորհալու ձեռքով և ընդունվել Շարականոցի ու ժամակարգության մեջ: Շարականների զարգացումը հետագայում թեև թուլացել է, բայց շարունակվել է մինչև XV դարի վերջերը: Շարականները դադարում են հասարակական-գաղափարական նոր երևույթների ազդեցության տակ, ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար: Անգամ XV դարի վերջերում էլ մեկ-մեկ երևում են բարձրարվեստի շարականներ. որպես այդպիսին, հիշենք թեկուզ Երզնկացի բանաստեղծ Կիրակոս վարդապետի «Արևելք գերարփին» մեծ, գեղեցիկ հոգևոր պոեմը՝ նվիրված Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնին: XIV—XV դարերի աչքի ընկնող շարականագիր հեղինակներից կարելի է հիշել նաև Կոստանդին Արևելցուն, Գրիգոր Տևրենցին, Առաքել Սյունեցուն և ուրիշներին:

Այսպես, ուրեմն, շարականներն առաջացել են V դարում և զարգացել մեր հին գրականության հետ միասին՝ որպես նրա անբաժան մի մասը, որպես գրական առանձնահատուկ մի տեսակ: Սրանք իրենց հիմքով ու էությամբ ազգային են՝ կապված հայ ժողովրդի անցյալի հոգեկան կյանքի երևույթների հետ: Սկզբնական շրջանում այդ երգերը. որոշ չափով ազդվել են հունական և ասորական հոգևոր երգերից, .բայց հետագայում, մեր ազգային գրականության սկզբնավորման ժամանակներից, հետզհետե ազատվում են այդ ազդեցություններից և դառնում ինքնուրույն:

Ազգային մշակույթի պահպանման և դավանաբանական-գաղափարական պայքարի բնագավառներում, իր ժամանակին, շարականներն էլ եղել են մի տեսակ առանձնահատուկ հոգևոր զենք՝ օտար աշխարհակալների ու նրանց գաղափարախոսությունների դեմ պայքարելու համար: Հայկական շարականները կապված են մեր ժողովրդի ոչ միայն կրոնական, այլև հասարակական-քաղաքական կյանքի հետ:

* * *

Այժմ փորձենք ծանոթանալ Ներսես Շնորհալուն պատկանող շարականների հետ: Վերջիններիս բնույթը նկատի առնելով, նպատակահարմար համարեցինք խմբավորել այսպես՝

Ա. Տերունական տոներին և առանձին անհատների նվիրված
Բ. վկայաբանական և դավանաբանական
Գ. Կանոններից դուրս
Դ. Ազգային, աշխարհիկ թեմաներով և
Ե. Հայրենասիրական շարականներ։
Զ. Տաղեր և գանձեր։

## Ա. ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՈՆԵՐԻՆ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՆՎԻՐՎԱԾ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Այս խմբում մեծ տեղ են գրավում Մեծ պահքի կիրակիներին երգվող Աղուհացից կոչվող շարականները։ Սրանք բաղկացած են Օրհնությունից[1], Հարցից, Ողորմեա-ից, Տեր երկնից և Մեծացուցեք անուններ կրող տեսակներից, որոնց մեջ էականը օրհնությունն է, իսկ մնացածները լրացնում կամ խորացնում են օրհնության մեջ եղած գաղափարները։

Մեծ պահքի երկրորդ կիրակիի օրհնության հիմնական իմաստը պահեցողությունն է։ Այստեղ երգվում է նաև հնազանդության մասին։

Հետևյալ երեք կիրակիների օրհնության բովանդակությունը բնորոշ է նրանով, որ նյութը վերցված է իրական կյանքից, առակներից։ Երրորդ կիրակիի օրհնության մեջ Շնորհալին դեղարվեստորեն վերարտադրում է անառակ որդու առակը։ Այստեղ նա մեղավոր մարդկությունը նմանեցրել է անառակ որդուն, որը զղջում է, վերադառնալով իր հայրական տունը՝ դարձի է գալիս և ներումն խնդրում։ Ըստ շարականի՝ Ադամի մեղանչելու հետևանքով մարդը նման է անառակ որդուն, որը նույնպես պետք է դարձի գա և զղջա։

Չորրորդ կիրակի օրվա շարականներում էլ տիրապետողը զղջման և ապաշխարելու ոգին է։

Հինգերորդ օրհնության հիմնական միտքը դատավորի առակն է, որտեղ հորդորվում է լինել արդարադատ և անաչառ։

Աղուհացից կանոնների մեջ աչքի են ընկնում Մեծացուցեների պատկերները, որոնք այլաբանորեն վերցված են բնությունից։ Սա տրդեն աշխարհիկ պատկերների առաջին մուտքն է անդամ ապաշխարության բնույթ ունեցող շարականների մեջ։

---

1 Շարականները բաժանվում են 8 խմբի՝ Օրհնութիւն. Հարց. Մանկունք. Ողորմեա. Տէր երկնից. Ձաշու. Մեծացուսցէ և Համբարձի։ Այս շարականներն ունեն ութ ձայն՝ ան (առաջին ձայն), ակ (առաջին կողմ), բն (երկրորդ ձայն), բկ (ավարտ կողմ), գն (երրորդ ձայն), դկ (վաո ձայն), դն (չորրորդ ձայն) և դկ (վերջ ձայն)։

Ի դեպ այդ Մեծացուցեններից շատերը կրում են Նարեկացու «Ննդեան» տաղերի ազդեցությունը։

Իր մակդիրներով ու այլաբանություններով առանձնապես գեղեցիկ է վեցերորդ կիրակի օրվա Մեծացուցչեն, ըստ որի երկնի Իսկուհուց առ մեզ ծագող լույսն ավելի «մեծ ու գերազանց» է, քան արեգակը. այդ լույսի զորությամբ հալածվում է անդիտության խավարը։ Այստեղ սիրամայրը պատկերված է որպես մի թեթև ու լուսավոր ամպ, որտեղից կենարար անձրև է թափվում.

*Ամպ թեթև և լուսաւոր,*
*Որ զանձրևն կենաց ի քեզ հեղեալ՝*
*Ի յերկնային ծովէն՝*
*Զոր հոսեցեր ի յերկիր ծարաւուտ...*[1]։

Սակայն այս Մեծացուցչենների գեղեցկությունն ու թափը թուլացնում են բառացի կրկնությունները և բովանդակության ու պատկերների միապաղաղությունը։ Եթե համեմատենք Աղուհացից և վեցերորդ կիրակի օրերի կանոններում եղած Մեծացուցչենները, կտեսնենք, որ շատ տեղերում նույնիսկ տողերով կրկնություններ կան։

Աղուհացից շարականները ընդհանրապես վիպական բնույթ ունեն, որովհետև դրանց մեծ մասի նյութը բանաստեղծը վերցրել է հին ու նոր կտակարաններից և պատմողաբար վերարտադրել հավուր պատշաճի։ Բայց այստեղ էլ Մեծացուցչենների և Տեր երկնից-ների մեջ կան նաև հուզական տարրեր։ Առհասարակ այս կանոնի շարականները մտքով պարզ են. մանավանդ՝ անառակ որդու, դատավորի և տնտեսի առակները, որոնք ըստ էության արտացոլում են իրական կյանքը, բայց բանաստեղծն օգտագործել է այլաբանորեն և կրոնական ոգով։

Տերունական տոների կանոններում շատ կան և այնպիսիները, որոնք հատկապես նվիրված են Ավագ շաբաթի առանձին օրերին՝ սկսած Ծաղկազարդից մինչև Զատկի կիրակին։

Ավագ շաբաթին նվիրված շարականների մեջ լավագույնը «Այսօր անճառն» է։ Սա էպիկական մի դեղեցիկ պոեմ է, որտեղ Շնորհալին վարպետորեն վիպում է խորհրդավոր ընթրիքի, և շարշարանքի հետ կապված դեպքերը։

---

[1] «Շարական», էջ 185։

Այստեղ առաջին հատվածում նկարագրված է խորհրդավոր ընթրիքը, երկրորդում՝ Հուդայի կատարած մատնությունը, իսկ մնացած գլուխներում՝ Գողգոթայի և խաչելության հետ կապված պահերը։

Մի քանի շարականներ էլ նվիրված են Հարության տոնին։ Սրանց մեջ ամենամեծը Ավագ օրհնությունն է, որը բաղկացած է մի քանի փոքրիկ հատվածներից։

Հարության շարականներում աչքի են ընկնում բանաստեղծի ուրախ զգացմունքները և զվարթ ոճը։

Հարության կանոններում Շնորհալին ունի ուրիշ չորս շարական ևս, որից երկուսը նույնպես օրհնություն են՝ «Նորոգեալ կղզիք» և «Յարեաւ Տէրն ի գերեզմանէն» վերնագրերով։

Մնացած երկուսը Գովեա-ներ[1] են, որոնք թեև ուրախ, աշխույժ բնույթ ունեն, բայց ընդհանրապես ներբողներ են՝ առանց պատկերների ու արվեստի։

Հայ եկեղեցում վարդավառի տոնը հաստատված է եղել դեռևս քրիստոնեության սկզբնական շրջանում։ Մահակ Պարթևի կանոնների մեջ երկու անգամ հիշատակված է վարդավառի տոնը։ Ըստ էության սա հնթանոսական մի մեծ տոն է եղել՝ կապված Անահիտ աստվածուհու անվան, ծաղիկների ու ջրի հետ։ Քրիստոնեությունը Հայաստանում տարածվելուց հետո, քրիստոնյա հայրերը ազգային այս մեծ և շքեղ տոնն էլ հարմարեցրին քրիստոնեական աշխարհայացքի և ծիսակատարության հետ։ Մեր նախնիքը, մինչև XII դարը, Քրիստոսի այլակերպությունը միայն կիրակի օրն էին տոնում, իսկ մնացած երկուշաբթի և երեքշաբթի օրերը հատկացված էր սրբերին, ինչպես այդ ցույց են տալիս մի քանի ձեռագիր Տոնացույցներ։ Դրա համար էլ վարդավառի միայն առաջին օրվա շարականն է եղել, որը վերագրվում է Մովսես Քերթողին։ Մնացած երկու օրվա «պատկերը» գրել է Շնորհալին։

Ուրախ զգացումներով ու աշխույժ տողերով են գրված երկրորդ օրվա Մեծացուցեն, Ողորմեան և Մանկունքը։ Բանաստեղծը լցված է ուրախությամբ. նա ուզում է, որ իր զգացմունքներին հաղորդակից դառնան երկինքն ու երկիրը, ամբողջ տիեզերքը, հատկապես այն լեռները, որտեղ կատարվել է տիրոջ պայծառակերպու-

---

1 Շարակնոցում կան վեց «Գովեայք», որից երկուսը Շնորհալունն են, իսկ մնացած չորսի հեղինակներն՝ անհայտ։ Գովեայր կոչվում են նրա համար, որ նախքան սրանց երգելը ասում են «Գովեա երուսաղէմ» բառերով սկսվող ճԽէ (147) սաղմոսը, ուստի և կոչվել են սաղմոսի առաջին բառով՝ «Գովեա»։

*Բյունը։ Սուրբ և խորհրդավոր են Սինա, Թաբոր ու Հերմոն սարերը, ասում է երգը, որոնք կապված են իրենց պատմությամբ Աստուծո, Մովսիսի և Հիսուսի անվանց հետ[1]։*

*Իր գեղեցկությամբ ու պատկերներով աչքի է ընկնում երկրորդ օրվա Տէր երկնից շարականը, իսկ երրորդ օրվա կանոնի մեջ՝ Մանկունքը։ Այստեղ ևս հորդում են բանաստեղծի զգացումները։ Դարձյալ ցնծություն է Թաբոր սարի վրա, բոլոր լեռներն են այսօր ցնծում ու պարում.*

*Լերինք ամենայն այսօր ցնծան՝*
*Ընդ ելանել քո տէր ի Թաբօր.*
*Յորում պարեն և ընդ երկնայնոցն՝*
*Դասք առաքելոց և մարգարէիցն,*
*Ընդ որս և մեք օրհնեմք՝*
*Յառաջ քան զարև ըղլոյսդ[2]։*

*Այս կանոնի շարականները գրված են սահուն ու գեղեցիկ լեզվով և համեմատաբար բարձր տաղաչափությամբ։ Տեղ-տեղ՝ հատկապես Օրհնությունների և Հարցերի մեջ կան կրկնություններ, որոնք թուլացնում են գործը, բայց չեն նսեմացնում այդ կանոնին պատկանող շարականների արվեստը։*

* * *

*Աստվածածնի վերափոխման տոնն էլ հայերի մոտ ավելի հին է, քան որևէ այլ տեղ։ Արևմտյան եկեղեցին VI դարից շուտ չի ունեցել այս տոնը, որը ոմանք դնում են Հուստինիանոսի (527) և ոմանք էլ Մորիկի (582) թագավորության տարիներին։ Սահակ Պարթևի հրամանների մեջ Վերափոխման տոնն էլ հիշվում է։*

*Ինչպես Հոդեգալատյան, Վարդավառի, այնպես էլ Վերափոխման տոնը մինչև XII դարը միայն մի օր էր տոնվում։ Շնորհալին սահմանեց վերափոխման իննօրյա տոն, որից 6-ը՝ պաս, իսկ 3-ը՝ հանդիսավոր տոներ։*

*Այս տոնի օրհնությունն ունի Դկ ձայն և բաղկացած է 6 տնից։ Սակայն վերջին տունը՝ «Ի տեսիլ հրաշից» սկսվող բառերով, հանված է օրհնության վերջից և դրված է 4 էջ հետո՝ այսինքն Կիրակոս վարդապետի «Արևելք գերարփին» հայտնի շարականից հետո. ըստ երևույթին, ամբողջ կանոնը օրհնության մեջ ընդգրկելու համար։*

---

1 «Շարական», էջ 373։

2 Անդ, էջ 377։

Աստվածածնի փոխմանը Շնորհալին ընծայել է նաև երկու գեղեցիկ տաղ, որոնք իրենց բովանդակությամբ շատ նման են այս երկու օրվա կանոնների շարականներին:

Ի դեպ, պետք է ասել, որ երբ Շնորհալին տերունական տոների կամ սրբերի մասին շարականներ է գրել, նույն տոներին ու սրբերին էլ նվիրել է երկուական տաղ. մեծ մասամբ մեկը այբուբենի կարգով գրված, իսկ մյուսը՝ հորդորակ «Ներսես» անվանակապով: Օրինակ՝ Տաղկաղարդի մասին ունի և շարական և երկու տաղ: Նույնը նաև Ավազ ուրբաթի, Վարդավառի, Վերափոխման, Հրեշտակապետաց, Առաքելոց, Մարգարեից, Հայրապետաց, Յովհաննու Կարապետի, Որդոց որոտման, Քառասուն մանկանց և Տրդատ թագավորի մասին: Շատ նմանություններ կան այս շարականների և տաղերի միջև, իսկ տեղ-տեղ էլ նույնիսկ բառացի կրկնություն: Թեև Շնորհալին կանոններով երդել է հայրապետներին, մարգարեներին և առաքյալներին, այնուամենայնիվ նա դրանցից շատերին առանձին-առանձին շարականներ է նվիրել. այդպիսիներից են՝ Անտոն անապատականը, Հակոբ Մծբնա հայրապետը, Հովհաննես Մկրտիչը, Հովնան մարգարեն, Պետրոսն ու Պողոսը, Համորեն առաքյալները և Որոտման որդիքը: Այս կարգի շարականներն հիմնականում Ավետարանի, հոգևոր հայրերի դրվածքների հարաստությունն են, որոնց վրա առանձին կանգ առնելու անհրաժեշտություն չգտանք:

## Բ. ՎԿԱՅԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Վկայաբանական շարականները թվով երեք են՝ նվիրված ս. Սարգսին, ս. Գևորգին և Սեբաստիայի քառասուն մանկանց: Առաջին և երկրորդ շարականները, Շնորհալին գրել է ասորական աղբյուրներից վերցված նյութերի հիման վրա՝ անսալով հաղբատցի վարդապետների խորհուրդները: Իսկ վերջինը՝ քառասուն մանկանց շարականը վերցված է վկայաբանական տվյալներից:

XI—XII դարերում Սև լեռների փեշերում շատ կային նաև ասորի ու հույն վանականներ: Ասորական մենաստաններից մեկում կար ս. Սարգսի վկայաբանությունը՝ ասորերեն լեզվով: Սանահնեցի Գևորգ վարդապետի խնդրանքով Ներսես Շնորհալին վերցրեց այդ վկայաբանությունը, թարգմանեց հայերենի և ըստ այդ վկայաբանության երգահյուսեց ս. Սարգսին նվիրված «Ամենասուրբ երրորդութեանն» անունով հայտնի «Օրհնություն»-ը:

Շարականի նյութը ս. Սարգսի և նրա որդի Մարտիրոսի վարքի ու նահատակության պատմությունն է։

Այս կարգի, բայց պարականոն երկու շարական էլ Շնորհալին նվիրել է ս. Գևորգին։ Սրանցից մեկն է «Այսօր տօնէ եկեղեցի» օրհնությունը, որը նման է մարտիրոսաց կարգի շարականներին։

Գևորգ զորավարի ամբողջ կանոնը Փոքր Վկայասեր կաթողիկոսի գրածն է։ Բացի հաղորդումներից, որա ապացույցներից մեկն էլ այն է, որ ամբողջ կանոնը՝ ակրոստիքոս է։ Օրհնության, Հարցի, Ողորմեայի և Տէր երկնից տների գլխագրերից ստացվում է՝ Գրիգորիոսի առ Գևորգիոս վկայ նախադասությունը։ Իսկ այն օրհնությունը, որը գրել է Շնորհալին, բաղկացած է 10 տնից, նույնպես ծայրանուն է և կազմում է Քաջամարտիկ բառը։

Ինչ ձևով ու ոճով Գրիգորիս կաթողիկոսը իր գրած շարականների մեջ հանդես է բերում Գևորգի արիությունը, ազգասիրությունը և նահատակությունը, նույն բառ ու բանով այս ամենը պատկերացնում է Ն. Շնորհալին իր հայտնի «Քաջամարտիկ» օրհնության մեջ։

Իսկ «Այսօր անյաղթելի» օրհնության մեջ փառաբանվում են Սեբաստիայում նահատակված քառասուն անմեղ մանուկները։ Հայ եկեղեցին ամեն տարի տոնում է «Քառասնից» հիշատակը[1]։ Այս փոքրիկ շարականում տրված է Սեբաստիայի լճի սառույցների վրա ընկած անմեղ մանուկների նահատակության պատմությունը։

* * *

Մեր հին գրականության մեջ դավանաբանական արձակ և չափածո գործերն առանձնապես երևան են գալիս և ուժեղանում Քաղկեդոնի ժողովից հետո։ Հետագայում գրականության այս տեսակը ավելի է զարգացել և հասել իր գագաթնակետին Ներսես Շնորհալու օրով։ Այս կարգի շարականների դերն էր՝ ոչ միայն դավանաբանական գաղափարներ տարածել հավատացյալների մեջ, այլև պայքարել քաղկեդոնականության դեմ։ Դավանաբանական գրվածքները տարբեր ժամանակներում ուժեղ զենք են եղել եկեղեցիների և նույնիսկ պետությունների ձեռքին՝ իրենց ազդեցությունը տարածելու համար։ Այս տեսակետից եթե մոտենանք, կտեսնենք, որ այդ բնույթի շարականներն իր ժամանակին ունեցել են նաև քաղաքական նշանակություն։ Դավանաբանական վեճերն ու սկզբունքներն այդ ժամանակներում իրենց արտահայտությունն էին գտնում ոչ միայն

---

[1] «Շարական», էջ 162։

արձակ, այլև չափածո ձևերի մեջ, որոնք մեզ մոտ զարգանում են առանձնապես XII դարում: Թեև մեր հոգևոր երգերի մեջ հատուկ դավանաբանական շարականների թիվը շատ չէ, բայց բազմաթիվ են այն եկեղեցական երգերը, որոնց մեջ սկզբից, վերջից կամ մեջտեղում, այս կամ այն կապակցությամբ հեղինակները նպատակով մտցրել են դավանաբանական դաղափարներ: Շնորհալու Հայրապետաց և Հոգեգալստյան կանոնների շարականները, գրեթե բոլորը այդ տրամադրությամբ են գրված: Բացի այդ կանոններից դավանաբանական շատ տողեր ու տներ էլ նա ունի «Այսօր անճառ», «Աստված անեղ» պոեմներում և «Ներաստեղծեալ», «Որդոյն որոտման», «Առաւօտ լուսոյ», «Արևելագալիի» ու այլ երգերում:

Հայրապետաց կանոնի բոլոր շարականների, առանձնապես Մանկունքի մեջ, Շնորհալին երգում է տիեզերական չորս նշանավոր ժողովները. Նիկիո՝ ընդդեմ Արիոսի. Կ. Պոլսի՝ ընդդեմ Մակեդոնի. Եփեսոսի՝ ընդդեմ Նեստորի և Քաղկեդոնի հայտնի ժողովը:

Այս կանոնի օրհնության մեջ երգվում է Նիկիո ժողովի դավանանքը, թե ինչպես հավաքվել են հայրապետները և հորինել «Փառք ի բարձունս» կրոնական հիմներգը, որը հայտնի է նաև «Հանգանակ Նիկիական» անունով: Ուշադրության արժանի է այս կանոնի Մանկունքը, որտեղ նզովվում են հերետիկոսները, Քաղկեդոնի ժողովը և Լևոնն ու իր տոմարը: Շարականը բաղկացած է 8 տնից և ամեն մի տան մեջ առանձին նզովք կա՝ ուղղված հերետիկոսներին:

Այստեղ շոշափվում է նաև Հորն ու Որդուն վերաբերող դավանաբանական հիմնական հարցը և նզովվում Արիոսն ու նրա հետևողները.

*Տեսի ես յայնմ առենի բան ծագեալ ի հօրէ.*
*Գաւանի ծնունդ և ոչ արարած.*
*Միշտ համագոյակից ընդ հօր և հոգւոյն,*
*Եւ լուսազարդ բանիւք հերքեալ զհերձուածս*
*Նզովեցին զԱրիոս և զաղանդն իւր պիղծ*[1]:

Մանկունքի հետևյալ հատվածում անարգվում է «հայհոյող լեզու ունեցող» Մակեդոնը, որին հեղինակը համեմատում է գայլի հետ.

*Արմատ անիծից կրկին բնձիւղեալ Մակեդոն հայհոյիչ*
*Գայլ ապականիչ յարձակեալ խողխողէր զրնտիրան ի հօտէ*
*գառանց*[2]:

---

1 «Շարական», էջ 452:

2 Անդ:

Շարականի վերջում մոտ յլ գույներով է նկարագրված Քաղկեդոնի ժողովի[1] կործանարար դերը.

...Աստանոր անտանելի սուտ հասեալ սուրբ ուխտին հաւատոյ
Հուր եռանդն անշէջ տեղեալ ի յերկիր.
Հրդեհեալ փլոյց զհաւատոյ շինուածս
Եւ խրամատեաց զառաքելական կանոնան.
Որք միանգամ ուրացան զտէրն ի Քաղկեդոնի[2]։

Գաղափարական բովանդակության տեսակետից Հայրապետաց կանոնի շարականները շատ բնորոշ են։ Սրանք մի կողմից լավագույն ապացույց են այն պայքարի, որ դարերի ընթացքում հայ ժողովուրդը մղել է քաղկեդոնականության և աշխարհակալական գաղափարախոսության դեմ, իսկ մյուս կողմից էլ ցույց են տալիս, թե ինչպես Շնորհալին, իր ամբողջ կյանքի ընթացքում, թե գործնականապես և թե բազմաթիվ արձակ ու չափածո գործերով հետևողականորեն պայքարել է Քաղկեդոնի որոշումների դեմ։

Հոգեգալստյան տոնն էլ IV—XII դարը տոնվել է միայն մի օր։ Ներսես Շնորհալին այդ տոնը նույնպես ճոխացրեց, դարձրեց 8 օր։ Հոգեգալստյան կամ Պենտեկոստեի առաջին օրվա «Առաքելոյ աղաւնոյ» օրհնութիւնը վերապրվում է թե՛ Մովսես Խորենացուն,

---

1 Քաղկեդոնի ժողովը կայացել է 451 թվականի հոկտեմբերի 8-ից մինչև նոյեմբերի 1-ը՝ Բյութանիայի Քաղկեդոն քաղաքում։ Այստեղ քննվել է Քրիստոսի մեկ թե երկու բնություն ունենալու հարցը։ V դարի երկրորդ կեսերին այս հարցի շուրջ բորբոքվել էին կրոնական վեճեր։ Նրանք, որոնք նեստորին էին հետևում և ընդունում Քրիստոսի աստվածային և մարդկային երկու տարբեր բնությունները, կոչվում էին երկբնակներ, կամ երկու բնության կողմնակիցներ։ Իսկ նրաք, որոնք հետևում էին Կյուրեղ Աղեքսանդրացուն և ընդունում Քրիստոսի մեկ բնությունը («Մի բնութիւն բանին մարմնացելոյ») կոչվեցին միաբնակներ կամ մի բնության կողմնակիցներ։ Քաղկեդոնի ժողովը, 336 հոգևորականների մասնակցությամբ թեև կրոնական պատրվակով քննեց Քրիստոսի բնության խնդիրը, սակայն եղնելով հույների տիրակալական ու քաղաքական շահերից (անտեսելով Ն. Պոլսի, Նիկո և Եփեսոսի կրոնական ժողովների որոշումները), ընդունեց երկու բնության սկզբունքը և ձգտում էր այն բանությամբ ընդունելի դարձնել քրիստոնյա բոլոր ազգերի համար։ Հայերը այս ժողովին չկարողացան մասնակցել, որովհետև զբաղված էին Ավարայրի պատերազմով և չընդունեցին Քաղկեդոնի որոշումները։ 506 թվականին, Բարգեն Ա կաթողիկոսը Դվինում մի հատուկ ժողով հրավիրեց, որտեղ հայերը պաշտոնապես մերժեցին քաղկեդոնականությունը։ Քաղկեդոնի ժողովի դեմ մեր հին մատենագրության մեջ կան բազմաթիվ թղթեր, շարականներ և դավանաբանական պոեմներ, որոնցից շատերը պատկանում են Ներսես Շնորհալու գրչին։

2 «Շարական», էջ 452։

և՛ թե Հովհան Մանդակունուն: Սակայն, երբ Շնորհալին ժամակարգության մեջ մտցրեց Հոգեգալստյան բազմօրյա տոնը, այդ լրացված օրերի համար ինքը գրեց համապատասխան շարականներ:

Ըստ այսմ՝ Շնորհալին գրել է Հոգեգալստյան Բ, Գ, Դ, Ե օրերի կանոնները, որոնք գրեթե բոլորն էլ դավանաբանական են և ունեն հակաքաղկեդոնական բնույթ:

Այս կարգի շարականների մեջ նշանավոր է և «Աստուած աննեղ» պոեմը: Սա բաղկացած է 36 տնից և բաժանված է 4 երգերի՝ 9-ական տներով: Ամեն մի երգն ունի երկու ձայն:

Թեպետ Շնորհալին այս գործը նախատեսել է ննջեցյալների համար, որպես թաղման մահերգ, սակայն ըստ էության սա դավանաբանական մի պոեմ է, որտեղ շոշափվում են հատկապես երրորդության վերաբերող հիմնական հարցեր:

Պոեմը սկսվում է դավանաբանական բառերով և այդպես էլ գրեթե վերջանում է: Նախ և առաջ երգվում է, որ Հայրը աննեղ, անժամանակ է. Որդին էլ, Հոգին էլ բխել են նրանից: Այսպիսով՝ Հայրը, Որդին և Հոգին հանդիսանում են մի անբաժանելի միասնություն.

Երրակի Քիւ կատարեալ՝
Յերից անձինս բաժանեալ՝
Աստուածութեամբ միաւորեալ՝
Միով բնութեամբ հաւասարեալ[1]:

Այս քառյակը հիշեցնում է «Ա՛ռ մեծ իշխանն Ալեքսին» և Կիր Մանվել կայսրին գրած նամակները: Եվ իրոք, սկզբունքայնության և մտքի հետևողականության տեսակետից որչա՞փ նման են Շնորհալու դավանաբանական շարականները և նամակները:

## Գ. ԿԱՆՈՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԵՂԱԾ ՇԱՐԱԿԱՆ-ԵՐԳԵՐ

«Երգ» կոչած մի քանի շարականներ թեպետ կանոնների մեջ չեն մտնում, բայց ժամակարգության մեջ կան և երգվում են հավուր պատշաճի: Դրանք հետևյալներն են՝ «Երգ վեցօրեայ արարչութեան» պոեմը, «Նորաստեղծեալ», «Արարիչ և մարդասէր», «Նայեաց սիրով», «Ի քէն հայցեմ», «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» երգերը:

Այդ երգերը հայկական շարականների զարդերն են, որոնց մեջ իր ծավալով ամենամեծը «Արարչական» պոեմն է: Վերջինս և «Նո-

---

[1] «Շարական», էջ 553:

բաստեղծեալ» երգը մի ամբողջություն են կազմում: «Նորաստեղծեալը» դրված է կիրակի օրերը առավոտյան երգելու համար. բաղկացած է վեց տնից, որոնց սկզբնատառերը կազմում են Ներսէս: Այս երկու գործերն իրենց բովանդակությամբ արտացոլում են ս. Գրքում եղած արարչագործության առաասպելը և դրա համար էլ պոեմը կրում է «Արարչական» անունը:

«Նորաստեղծեալի» մեջ երգվում է առաջին օրվա արարչագործության մասին, երբ, ըստ վերոհիշյալ առասպելի ստեղծվել են՝ երկինքը, երկիրը և լույսը: Այստեղ աչքի են ընկնում բանաստեղծի զգացմունքի ու մտքի ներդաշնակությունը, մեղմ ու գեղեցիկ ոճը, երգի երաժշտականությունն ու հատկապես տաղաչափությունը: Ըստ ամենայնի, տաղակալի կրկնություններն ու միօրինակությունները, ինչպես մյուս շարականներում: Բացի այդ, Շնորհալին վարպետորեն կարողացել է համադրել արարչագործության և դավանաբանական մտքերը, որոնք դրսևորել է գեղարվեստորեն, պարզ ու ջերմ: Տաղաչափության տեսակետից էլ երգը արժեքավոր է նրանով, որ միահանգ չէ, այլ ամեն մի տուն ունի իր հատուկ հանգը:

«Նորաստեղծեալը» Ներսես Շնորհալու երգերից լավագույնն է:

«Արարչական» պոեմի առաջին երգը նվիրված է երկուշաբթի օրվա արարչագործությանը:

Ըստ հին Կտակարանի այս օրն են բաժանվել հողեղենների ու հրեղենների աշխարհները՝ երկինքն ու երկիրը.

...Զջուրսն ի ջուրցն բաժանեաց՝
Հաստատութեամբ պարունակեաց.
Որով զաշխարհս հողեղինաց
Անջրպետեաց ի հրեղինաց[1]...

Երեքշաբթի օրը ջուրը ցամաքում է երկրի վրա, բաժանվում են ցամաքն ու ծովը և աճում են տունկերն ու բույսերը: Երրորդ օրվա երգում հիշվում է համաշխարհային ջրհեղեղը:

Ըստ պոեմի հետևյալ երգի՝ չորեքշաբթի օրն են ստեղծվել երկնքի բոլոր լուսատուները. արևը, լուսինը, մոլորակները, աստղերը՝ լույս տալու և ժամանակը որոշելու համար: Գրվածքի այս մասն առանձնապես գեղեցիկ է, ուր բանաստեղծն անկաշկանդ խոսում է տիեզերական մարմինների և բնության մասին.

---

1 «Շարական», էջ 470:

*Խաւարն անգոյ և սկզբնածին՝*
*Հալածեցաւ յօրն առաջին.*
*Լոյսն այն պայծառ յօր չորրորդին՝*
*Յարեգական նիւթ հաւաքեալ.*
*Լուսինն ի տիպ լուսոյ ստեղծեալ՝*
*Եւ աստեղաց պարս յօրինեալ*[1]*.*

*Հինգշաբթի օրվա երգը վերաբերում է հինգերորդ օրվա արարչագործությանը. այս օրն են ստեղծվել ծովի ձկներն ու երկնի թռչունները։ Երգը կապված է նաև բիբլիական Մովսեսի հետ, թե ինչպես նա առաջնորդում է իսրայելացիներին դեպի Ավետյաց երկիրը. իսրայելացիները փախչում են Եգիպտոսի փարավոնից և հետիոտն ճեղքում-անցնում Կարմիր ծովը*[2]*։*

*Հինգերորդ երգի մեջ աչքի է ընկնում ծովը, որի հետ վերջին հաշվով կապվում են այդ օրվա բոլոր դեպքերը. ծովում են դոյանում ձկները, իսրայելացիք անցնում են Կարմիր ծովի միջով, ծովում է փարավոնն իր զորքերով խեղդվում. վերջապես առաքյալները Տիբերական ծովից են անցնում դեպի աշխարհական կյանքի ծովը և այլն։*

*Վեցերորդ երգը նվիրված է շաբաթվա վերջին օրվան։ Շաբաթ օրն է վերջանում արարչագործությունը և լինում հանդիստ։*

*«Արարչական» պոեմը գրված է պարզ ու պատկերավոր, ըստ որում գերակշռող տեղը բռնում է էպիկական մասը, որի հետ բանաստեղծը երբեմն երգերի վերջում վարպետորեն միաձուլում է նաև իր զգացմունքներն ու վերաբերմունքը, որը և կազմում է պոեմի քնարական տարրը։*

* * *

*«Արարիչ և մարդասէր» ննջեցելոց երգը բաղկացած է տասներկու տնից։ Ինչպես իր մյուս մի քանի գործերում, այնպես էլ այս շարականի վերջում բանաստեղծը նույնպես նկարագրել է վերջին դատաստանի պատկերը։*

*Հրապարակի բեմում, զարդարված առագաստի ետևում բազմած է դատավորը՝ Հիսուսը։ Փչում է դաբրիելյան փողը. բացվում է վարագույրը. բոլոր սրբերը հավաքվում են այստեղ. արդարների դասը ուրախանում է. իսկ մեղավորները աղաչում, թախանձում են։*

---

1 «Շարական», էջ 471։

2 Անդ, էջ 472։

Ըստ երգի՝ երբ գարնանային փողը հնչէ, սուրբ խաչի ճառագայթները շլացուցիչ լույսով կծագեն արևելքից։ Գալիս են հրեշտակներն ու հրեշտակապետները։ Սուրբ սեղանի առաջ մարում է հավիտենական տանջող կրակը. խավարը հալածվում է, իսկ մեղավորները ուրախանում են, որովհետև ներվում են.

...Առաջի սուրբ սեղանոյն
Հուր շիջանի, խաւար մերժի.
Տրտմեալ հոգիքն ուրախանան՝
Զի թողութիւն մեղաց լինի...[1]

«Նայեաց սիրով» և «ի քէն հայցեմք» երգերը մեծ պահքի «երեկոյան ժամուն» համար են գրված։

Առաջինում երեկոյան ժամավորը օրվա աշխատանքից հետո փառաբանում է գթած Հորը, դիշերվա խաղաղություն խնդրում, որ երկնի հրեշտակները պահապան լինեն իրենց և փրկեն խավարի մեջ շրջող դևերից։

Ըստ այս «խաղաղական» երգի՝ ցերեկն ստեղծված է աշխատանքի ու գործի, իսկ գիշերը հանգստի ու քնելու համար։ Սակայն բանաստեղծը պահանջում է տիրոջից, որ մարդը գիշերը միայն մարմնի աչքերով քնի, իսկ հոգու աչքերով մնա արթուն.

...Որ արարիր զտիւ գործոյ,
Եւ զգիշեր ի հանգիստ քնոյ.
Տուր ի ննջել աչաց մարմնոյ՝
Արթուն լինել մեզ ըստ հոգւոյ[2].

«Նայեաց սիրով» երգի բազմաթիվ ձեռագրերը[3] ցույց են տալիս, որ տպագիր բոլոր շարականներում երգի վերջից ավելացրել են երկու տուն, որոնք իմաստով և ձևով բոլորովին նման չեն այս երգին և Շնորհալու մյուս գործերին։ Հավանաբար այդ անկապ ավելացումը կատարվել է եկեղեցու կողմից։

Ահա այդ տներից մեկը.

«Հալածեա ի մէնջ տէր նշանաւ խաչի քո զընդդիմամարտս և զաներևոյթ գաղանն. և մի տար յապականութիւն զքո ժառանգութիւնս»[4]։

1 «Շարական», էջ 556։
2 Նույն տեղում, էջ 476։
3 Մատենադարան, ձեռ. №№ 8874, 2961, 2090, 3179, 824, 3438 և այլն։
4 «Շարական», էջ 477։

Այս տողերը ոչ միայն չափածոյի նման չեն, անարվեստ են, այլև չեն կապվում երգի պարզ բովանդակության հետ։ Բացի այդ, հասկանալի չէ, թե խոսքը ո՞ր աներևույթ գազանի մասին է, սատանայի՞, մեղքի՞, թե՝ ուղղակի որևէ գազանի։

Մյուս խաղաղական երգի՝ «Ի քէն հայցեմք»-ի մեջ Շնորհալին նույնպես իր խոսքն ուղղում է երկինք ու խնդրում իր տիրոջից մխիթարություն և ուրախություն.

Ի քէն հայցեմք հայր գթութեանց՝
Եւ աստուած մխիթարութեանց.
Ի տխրական դիշերային մերձեալ ժամուս՝
Մխիթարեա զմեզ ի տրտմութեանց մեղաց՝
Եւ շնորհեա զուրախութիւն գործովք արդարութեան...[1]

Ըստ ձեռագրերի[2] «Ի քէն հայցեմք»-ի նախավերջին տունն է՝ «ձկնեղանապիր անարատ ծնողի քո» բառերով սկսվողը, որը տպագիր շարականներում դրված է «Հաղորդս արա» տնից առաջ։ Թե ինչ նկատառումներով է կատարվել այս տների տեղափոխությունը՝ դժվար է ասել, որովհետև իմաստի ու ձևի տեսակետից էլ այդ երկու տները ամբողջի հետ համապատասխանում են ու երգին խորթ չեն։

* * *

Եկեղեցուց դուրս, ժողովրդի կողմից ավելի սիրված ու տարածված են «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» երգերը՝ իրենց պարզության և գեղեցկության պատճառով։

«Առաւօտ լուսոյ» երգի մեջ բանաստեղծը խոսքով, ձայնով, ձեռքով աղաչում է ու պաղատում՝ երկնային բարի շնորհներն ու պարգևներն ստանալու համար։

Զայնիւս աղաչեմ՝
Զեռօքս պաղատիմ.
Զիր բարեաց շնորհեա[3]։

---

1 «Շարական», էջ 477։

2 «Նայեաց սիրով» երգին եկեղեցու կամ հրատարակիչների կողմից երկու տների ավելացման և «Ի քէն հայցեմք»-ի վերջին 2 տների տեղափոխության կապակցությամբ մեր կողմից նայված վերոհիշյալ ձեռագրերում «Նայեաց սիրով»-ին ավելացրած 2 տները չկան և «Ի քէն հայցեմք»-ի երկու տների տեղափոխությունը կատարված չէ։

3 «Ժամագիրք», 1862, էջմիածին, էջ 7։

Երգի սկզբում Շնորհալին երկնային հորն համարում է «Լույսի առավոտ» և պահանջում է, որ այդ արդար արեգակի լույսը ծագի և իր վրա.

Առաւօտ լուսոյ՝
Արեգակն արդար՝
Առ իս լոյս ծագեա[1]։

Ըստ Շնորհալու անսպառ են երկնի գանձերն ու ողորմությունը։ Նա ուզում է, որ այդ գանձերից իրեն էլ բաժին հասնի։ Իր պահանջներն ու խնդրանքները ներկայացնելուց հետո, բանաստեղծն այս անգամ էլ դիմում է Հիսուսին և պահանջում հավատ, հույս, սեր.

Հաստեա հաւատով,
Հաստատեա յուսով,
Հիմնեցո սիրով[2]։

Այստեղ մի քանի տեղ դավանաբանական տողեր կան և դա հասկանալի է, որովհետև բանաստեղծի խոսքն ուղղված է «երրորդութեան».

Երեակ միութիւն,
Նզելոցս խնամող,
Եւ ինձ ողորմեա[3] և այլն։

«Առաւօտ լուսոյ» երգն ունի ժողովրդական պարզության հասած լեզու։ Անցյալում, ամեն մի հայի համար պարզ ու ըմբռնելի է եղել այս երգը նաև իր էությամբ։ Զևի և բովանդակության պարզությամբ ու գեղեցկությամբ պիտի բացատրել այս երգի ժողովրդին սիրելի դառնալու գաղտնիքը։ Ոչ մի շարական կամ տաղ, երբեք այսպես մասսայական չէ դարձել ժողովրդի համար։ Սա երգվել է թե՛ տխրության, և թե՛ ուրախության ժամերին. առավոտյան ու երեկոյան. եկեղեցում և դրսում. հարսանիքներում, հանդեսներում ու խնջույքներում։ Երգվել է և՛ հոգևորականի, և՛ աշխարհական հասարակ մարդու բերանով՝ մերթ որպես մեներգ և մերթ՝ խմբերգ։

Իր ձևով ու արվեստով «Աշխարհ ամենայն»-ը շատ նման է «Առաւօտ լուսոյ» երգին։ Այստեղ բանաստեղծը ներկայացնում է իր բոլոր հանցանքները, որոնք գործել է մոլորվելով, դուրս գալով ճիշտ ճանապարհից։ Նա բողոքում է ինքն իր դեմ և կոչ անում ամբողջ աշխարհին, որ իրեն վշտակից դառնա և ողբա։ Երգի մեջ երե-

1 «Ժամագիրք», էջ 7։
2 Անդ, էջ 7։
3 Անդ։

վում է Գրիգոր Նարեկացու զորեղ ազդեցությունը։ Ինչպես «Ողբերգության մատյանում» Նարեկացին, այնպես էլ այստեղ Շնորհալին,— իհարկե ավելի զուսպ ու չափավոր,— դիմում է ինքնաճաղկման, ինքնախարազանման ձևերին և մեղքի ծանրության տակ հառաչում է.

Գող եղէ մեղաց՝
Գտող կորստեան.
Գուբ ինձ փորեցի։
Դաւեցի զանձն իմ,
Դաւաճանեցի.
Դարան գործեցի[1]։

Եվ քանի որ երգիչը ընկել է մեղքի «գուբն ու դարանը», չի կարող դուրս գալ, դարձել է ողբալի. դրա համար էլ նա հրավիրում է երկրին և երկնին թե՝

Երկինք և երկիր,
Եկայք ողբացեք
Սղկելի զանձն իմ[2]։

Ամբողջ երգի մեջ զղջացող ու իր անձի դեմ բողոքող ողբերգուն ինքնադատապարտումով է զբաղված, որովհետև հեռացել է սուրբ խորհրդից ու լույսից. ընկել է խավարի ու մահու ստվերների մեջ, հանգել է նրա ղամբարը, չարքերը խարել ու ծիծաղում են նրա վրա[3]։

Եթե «Առաւօտ լուսոյ» երգի մեջ մեղքի նկարագրի կողքին միշտ առկա է հույսը, խնդիրքն ու սպասելիքը, ապա «Աշխարհ ամենայն»-ի մեջ խնդիրք կամ հույս չկա։ Այստեղ հեղինակը անընդհատ տանջվում ու տառապում է և այդ դրությունից նա ոչ մի ելք չի գտնում.

Ջարաշար վշտօք
Ջարչարի անձն իմ,
Ջունիմ դադարումն...
Ջեռնում հրով մեղաց...[4]։

Երկու երգն էլ ունեն պարզ ու պատկերավոր լեզու։ Դարձվածքները շատ մոտ են ժողովրդական ոճին և հարազատ։ Հետաքրքիր են պատկերները, փոխաբերությունները ու այլաբանությունները։ Եթե

1 «Ժամագիրք», էջ 6։
2 Անդ, էջ 6։
3 Անդ, էջ 7։
4 Անդ, էջ 7։

համեմատենք այս երկու երգերի արվեստը, անշուշտ «Առաւօտ լուսոյ»-ն գրված է ավելի բարձր արվեստով ու լավատեսությամբ, քան «Աշխարհ ամենայն»-ը, որն, ըստ էության, հուսահատ մի ողբերգություն է։

## Դ. ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԹԵՄԱՆԵՐՈՎ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Շարականների այս խմբի նյութը վերցված է ոչ թե հին ու նոր կտակարաններից, այլ՝ հայ իրականությունից կամ աշխարհիկ կյանքից։ Այստեղ արդեն Շնորհալին դուրս է գալիս քրիստոնեական դոգմատիկ թեմատիկայից և նույնիսկ հոգևոր երգի առարկան ընտրում է իրական, աշխարհիկ կյանքից։ Այդպիսի շարականներից են՝ «Յիշեսցուք», «Զարթիք փառք իմ», Տրդատ Թագավորին, Աշխենին ու Խոսրովդուխտին նվիրվածները և Արևագալի երգերը։

«Յիշեսցուք» և «Զարթիք» երգերը Շնորհալին հորինել է Հռոմկլայի բերդի պահապան զինվորների համար, որպեսզի այլազգի «վայրապար» երգերի փոխարեն հայ զինվորները երգեն հայերեն։

Կ. Գանձակեցին այս երգերի մասին հաղորդում է հետևյալը· «...Վասն այնորիկ արար նա երգս և ուսոյց այնոցիկ, որ պահէին զբերդն. զի փոխանակ վայրապար ձայնիցն, զայն ասասցեն. որոյ սկիզբն է Սաղմոսն Դաւթի՝ «Յիշեցի ի գիշերի զանուն քո, տէր» և այսպէս խորհրդաբար ըստ կարգի՝ «Զարթիք փառք իմ», որ այժմ ասի յեկեղեցի ի ժամ գիշերային պաշտամանն»[1]։

«Յիշեսցուք» և «Զարթիք» երգերը ունեն ոչ այնքան կրոնական, եկեղեցական, որքան ազգային և հայրենասիրական նշանակություն։ Բերդի պահապան զինվորների համար գրված այդ երգերը եկեղեցու հայրերը վերցրել և մտցրել են գիշերային ժամերգության մեջ։

Կես գիշերին, երբ աշխարհը խոր քնի մեջ է, Շնորհալին դեռ արթուն է։ Նա մտածում է իր ժողովրդի դրությունը բարելավելու և նրա հոգևոր մշակույթը պահպանելու մասին։ Իսկ արշալույսին, նա որպես կոչնակ, ձայն է տալիս հայ մարդկանց՝ «Զարթիք, փառք իմ զարթիք»...

Ջերմ ղգացմունքով գրված այս բանաստեղծությունը բաղկացած է 10 տնից, ամեն տունը՝ երկու տող։ Բոլոր տներն էլ սկսվում են «Զարթիք» բառով, որով կոչ է անում Շնորհալին բոլորին.

---

1 Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 120։

*Զարթիք, նոր ժողովուրդք,*
*Նոր երգս առեալ նորոգողին ալելուիա*[1]:

*Վերածնության գաղափարների ուժեղացմամբ սկսվել էր գրականության աշխարհականացումը, խոշոր բեկում էր կատարվում նաև բանաստեղծության բովանդակության ու ձևի մեջ: Բնությունն ու իրական կյանքը գտնում էին իրենց արժեքը: Գրականության աշխարհականացումը զգալի է Շնորհալու նույնիսկ շարականներում: Աշխարհիկ ու հայրենասիրական մոտիվները նրա ձեռքով են մըտնում մեր պոեզիայի մեջ: Շնորհալին Ամանոսի լեռների վրա ոչ միայն վառ պահեց մեր միջնադարի հայ պոեզիայի ջահը, այլև պայծառացրեց այն, որն իր ճառագայթներով լուսավորեց ու ջերմացրեց մեր բանաստեղծությունը երկար դարեր:*

*Նա չբավականացավ միայն աշխարհիկ թեմաներն օգտագործելով՝ հայրենասիրական զգացմունքներ արտահայտելու համար: Դա քիչ էր: Հայրենասեր բանաստեղծ-կաթողիկոսը այդ վեհ նպատակի համար ծառայեցնում էր նաև հայ եկեղեցին, նրա ժամակարգությունը և հոգևոր երգը:*

*Եկեղեցական ժամակարգության բարենորոգումն ու ամրապնդումը, եկեղեցում աշխարհիկ, ազգային հերոսների ընդունումը, այդ հերոսներին նվիրված աշխարհիկ բնույթի շարականները—այդ ամենը ցույց են տալիս, որ Շնորհալին արձագանքում էր դարի առաջադիմական գաղափարներին և այն այս կամ այն ձևով անցկացնում անգամ հոգևոր երգի բնագավառը: Պատահական չէ, որ շարականներում մեր ազգային և աշխարհիկ հերոսներին առաջին անգամ Շնորհալին է գովերգում:*

*Բայց Շնորհալին չի սահմանափակվել միայն ազգային նեղ շրջանակներում. նա գովերգել է նաև ասորի, հույն աշխարհիկ երեվելի քաջ մարդկանց, ինչպես օրինակ՝ Թեոդորոս Թագավորին, ս. Սարգիս և ս. Գևորգ զորավարներին:*

*Տրդատին ընծայված շարականներից մեկը «Որ գերագոյն» կոչված Մանկունքն է, իսկ մյուսը՝ «Որ անհամանալի» վերնագրով պարականոն Հարցը:*

*Մանկունքի վերնագիրն է «Շարական Տրդատայ Թագաւորին», ըստ որի Տրդատին դեպի մարդկային բնությունը Գրիգոր Լուսավորիչն է դարձրել: Բնորոշ է Տէր-ողորմից պարականոն շարականը, որտեղ բանաստեղծը երգի առարկա է դարձնում Թագուհի*

---

1 «Ժամագիրք», էջ 5:

Աշխենին և թագավորի քույր՝ Խոսրովդուխտին։ Հավանաբար, դրա համար էլ եկեղեցին այս գրվածքը չի ընդունել կանոնների մեջ և համարել է պարականոն։ Տրդատ թագավորը, ըստ շարականի, փառքով ուրախացրել է Թագուհուն՝ Աշխենին և քրոջը՝ օրիորդ Խոսրովդուխտին. «Որ զուարճացուցեր փառաւք զմեծն Աշխէն տիկին և զաւրիորդն Խոսրովիդուխտ... վասն որոյ և մեք աւրհնեմք զանմահ թագաւորդ»[1]։

Արդեն շարականի նյութ են դառնում նաև աշխարհիկ կյանքի դեկավարները։ Դեռ ավելին. Շնորհալին ոչ միայն առաջին անգամ երգում է հայ իրականությունից ու պատմությունից վերցրած անձեր, այլև Տիրամոր կողքին առաջին անգամ հոգևոր երգի մեջ տեղ է գտնում հայ կինը։ Իսկ Արևագալի երգերն արժանի են հատուկ ուշադրության այն տեսակետից, որ սրանք իրենց էությամբ ու արտահայտչական ձևերով տարբերվում են մեր սովորական շարականներից և հանդիսանում են հեռավոր արձագանքն ու արտահայտությունը հայ հեթանոսական շրջանի կրոնական աշխարհայացքի և իրական կյանքի։

Մեր Շարակնոցը բանաստեղծական երգերի մի խոշոր ժողովածու է։ Կրոնական իմաստի հետ միաժամանակ այդ երգերի մեջ կան և այնպիսինները, որոնք ունեն ազգային բնույթ։ Դրանք մեծ մասամբ ծնվել, աճել ու զարգացել են հայկական իրականության, հայ մարդու հոգու և սրտի մեջ՝ տակավին հեթանոսական շրջանից գոյություն ունեցած ազգային պարարտ հողի վրա։

Այդ գեղեցիկ երգերն ունեն նաև ազդող եղանակներ, որոնք նույնպես արևելյան են ու ազգային։ Դրանք, իհարկե, սկզբնական շրջանում որոշ չափով կրելով հարևան ազգերի՝ առանձնապես պարսից հին կրոնի և երաժշտության ազդեցությունը, հետագայում, զարգանալով ու ձևավորվելով, դարձել են ազգային հոգևոր երաժշտություն։

Հեթանոսական շրջանում հայերը կրոնա-դաղափարական սերտ կապի մեջ են եղել Իրանի հետ, երբ աշխարհում խոշոր ու ազդեցիկ դեր էր կատարում պարսից զրադաշտական կրոնը։ Վերջինս, ըստ Զենդ-Ավեստայի, ունեցել է հարուստ երգեցողություն, նվիրված աստվածներին՝ բարի ոգիներին, կրակին ու լույսին։

Որքան մոտիկ ու նման են եղել հարևաններ հեթանոս հայի և զրադաշտական պարսկի սրբազան արարողություններն ու ծիսակա-

---

[1] Մահակ Ամատունի. Անվավիր կամ պարակ. շարակ., Էջմիածին, 1912, էջ 21։

տարրությունները, այնքան էլ, հավանորեն, մոտիկ ու նման են եղել պարսկական և հայկական հոգևոր երգերի ոգին ու եղանակները։

Ահա այս հեթանոսական երգերի տարրերն էլ մտել են մեր՝ հատկապես վաղ շրջանի հոգևոր երգի՝ շարականների մեջ։ Քրիստոնեության վաղ շրջանում զրադաշտականությունն ու հատկապես Միթրայի կրոնը ուժեղ ազդեցություն ունեին ոչ միայն արևելքում, այլև արևմուտքում։

«Քրիստոնեական առաջին չորս դարերում,— ասում է պրոֆ. Մ. Աբեղյանը,—պարսից արեգակի և լուսո աստված Միթրայի (Միհրի) կրոնը, որը շնորհիվ իր զրավիչ միստերիաների տարածված էր նաև Հռովմեական լայնածավալ կայսրության մեջ, ազդում է քրիստոնեական դավանանքի կազմակերպության վրա»[1]։ Ինքը՝ զրադաշտականությունն էլ լույսի պաշտամունքի ու նրա փառաբանման մի կրոն է եղել։

Անհավանական չէ, որ այս կրոնը որոշ չափով ազդել է նաև մեր հոգևոր բանաստեղծության վրա և նպաստել լույսի ու արևի պաշտամունքին նվիրված երգերի ու եղանակների զարգացմանը։ Մեր հոգևոր երգերը, որպես հայ մշակույթի մի ճյուղ, արևելյան են, ազգային ու արևոտ։ Իսկ այդ հոգևոր երգերի մեջ Շնորհալու Արևագալի շարականները իսկական և այլաբանորեն առնված լույսի փառաբանումն են՝ բազմերանգ ու գունագեղ ձևերով։

Հայոց հոգևոր բանաստեղծության մեջ եղած լուսապաշտությունը Շնորհալին զարգացրեց ու հասցրեց այնպիսի բարձր աստիճանի, որն այդ շրջանում նշանավոր երևույթ էր արևելքի և արևմուտքի բանաստեղծական դրականության մեջ։

Եթե մեր լուսապաշտության բնույթի և Արևագալի շարականները համեմատենք Ջենդ-Ավեստայի լուսերգերի հետ, կտեսնենք, որ մեր այդ երգերն էլ ամբողջապես շնչում են լույսով ու արևով և այդ լույսի աստվածացումն ու ներբողումն են։

Ահա այդ լույսի ու արևի գեղեցիկ մոտիվներն էին, որ հեթանոս Հայաստանից որպես ժառանգություն անցնում էին սերնդից սերունդ։ Լույսի պաշտամունքն ու փառաբանումը ուժեղ է եղել Հայաստանում ոչ միայն հեթանոսական, հին դարերում, այլև Շնորհալու ժամանակ և նույնիսկ Շնորհալուց էլ 2—3 դար հետո, երբ Կիրակոս

---

1 Մ ա ն ո ւ կ Ա բ ե ղ յ ա ն, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Ա, էջ 501։

Երզնկացին, XV դարի վերջերում այնքան դեղեցիկ ու գունագեղ երգեց լույսն ու արևը իր Հայտնի «Արևելք գերարփին» պոեմում։

Լույսի ու արևի փառաբանման այդ մոտիվները հետագայում անցել են նաև Մեծացուսցիների մեծ մասի՝ Տիրամորը նվիրված շարականներից շատերի մեջ, որտեղ գեղեցիկ համեմատություններով ու այլաբանությամբ տրվում է նրա նկարագիրը՝ ամբողջապես լույսի ու լուսե պատկերների մեջ. Մայր լուսոյ, լոյս ի լուսոյ. արևելք գերարփին, առաւօտ խաղաղութեան. արուսեակ գուարթաբեր, սիւն լուսոյ, տաճար լուսոյ, նոր խորան աբեգական, նոր տաճար՝ աննման լուսոյն, մարգարիտ լուսափայլ, անվայրապիակ արփի, լուսածին օթարան և այլ նման հարյուրավոր մակդիրներ ու համեմատություններ։

Արևագալի երգերում էլ Շնորհալին վարպետորեն կարողացել է լույսի գովերգումը ներդաշնակել դավանաբանական հարցերի հետ, որոնք դարձել են լուսե օրհներգություններ։ Բանաստեղծը բարձր զգացումներով է երգում լուսո արարչին կամ անեղանելի, իմանալի լույսը.

Լոյս, արարիչ լուսոյ առաջին լոյս·
բնակեալդ ի լոյս յանմատոյց...
Լոյս ի լուսոյ ծագումն արեգակն արդար...[1]

Նվ այս «լոյս» բառերով սկսվող քնարական բանաստեղծության ամեն մի տան վերջում երգվում է հետևյալ կրկնակը, որով հեղինակը դիմում է լուսո արարչին.

Ի ծագել լուսոյ առաւօտուս,
Ծագեա ի հոգիս մեր զլոյս քո իմանալի[2]։

Արևագալի մի հորդորակ երգի մեջ «երեք անձինքը» առանձին-առանձին երգելուց հետո՝ բանաստեղծը միացնում, դարձնում է մի ամբողջություն։

Ի հօրէ ծագումն անճառ,
արեգակն արդար...
Ի հօրէ բղխեալ հոգի՝
աղբիւր բարութեան.
Լուսով քո լցո զմեզ,
յայսմ առաւօտուս...
Երեք անձինք և մի բնութիւն...[3]

---

1 «Շարական», էջ 474։

2 Անդ, էջ 474։

3 «Ժամագիրք», էջ 77։

Լույսն ու լուսո արարչին փառաբանելու, նոր օրհներգեր հորինելու համար բանաստեղծը կոչ է անում արևելքից մինչև արևմուտք, հարավից մինչև հյուսիս, որ բոլոր ազգերն ու ցեղերը գան՝ օրհնեն լուսո հորը, որ լույս է տվել աշխարհին։

Միայն Արևագալի շարականներում չէ, որ Շնորհալու երգերը ողողված են լույսով։ Նա իր նշանավոր, գրեթե բոլոր գործերում էլ երգում է լույսը՝ մերթ ուղղակի և մերթ էլ այլաբանորեն՝ նրա հետ կապում իր մտքերն ու զգացմունքները։ Ահա մի քանի օրինակ, մեզ ծանոթ լավագույն շարականներից.

Վարդավառի 3-րդ օրվա օրհնությունից՝

«Ճառագայթ փառաց հօր որդիդ միածին,
Որ զլոյսդ անվայրապիակ մարմնով պարադրեալ (շարակ. 371)

Վարդանանց շարականից՝

Բենական լուսով լցեալ՝
Արիացեալն քաջ Արտակ... (նույնը 462)

«Այսօր անճառ» պոեմից՝

Այսօր անճառ լուսոյ ծագումն՝
Ի փրկութեան մեր կատարումն (նույնը 219)

Նորաստեղծեալից՝

Լոյսդ որ աննեղ, արարչական՝
Ասաց լինել լոյս եղական...
Սիոնի որդիք զարդիք, հարսին լուսոյ տուք աւետիք
(շարակ. 469) և այլն։

Շնորհալին մեր հոգևոր երգի մեջ ստեղծեց լույսի փառաբանման աքանչելի պատկերներ, որոնք այդ լույսի պես պայծառ փայլում են նրա գրեթե բոլոր աշքի ընկնող մեծ ու փոքր շարականներում։

## Ե. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Հայ ժողովրդի պատմության մեջ Ավարայրի պատերազմը անեախընթաց հերոսական, պանծալի էջերից մեկն է։ Այստեղ ազատասեր ժողովուրդը կենաց և մահու անհավասար կռվի է մտնում պարսից հզոր ու զավթողական բանակի հետ՝ հանուն իր ազգային մշակույթի, պետական անկախության և հայրենիքի։

Ազգային ազատագրական այդ հերոսական ճակատամարտի պատմությունը սրտառուչ ձևով գրի է առել Ղևոնդ Ալիշանը՝ իր «Վարդանանց պատմութիւն»-ը գրքում:

Սկսած V դարից մինչև մեր օրերը, Ղևոնդի այս գիրքը միշտ էլ եղել է մեր հետագա պատմագիրների ու գրողների ոգեշնչման աղբյուր: Ավարայրի ճակատամարտը, մասնավորապես Վարդան Մամիկոնյանի կերպարը՝ թեմաներ են հանդիսացել մեր բազմաթիվ գրողների համար: Այդ պատերազմի հերոսներին նվիրված առաջին բանաստեղծությունները գրել է Ներսես Շնորհալին, որոնք հայտնի են «Նորահրաշ պսակաւոր» և «Արիացեալք» վերնագրերով:

Հայտնի է, որ Ավարայրի ճակատամարտին են նվիրված նաև Ղ. Ալիշանի «Պլպուլն Աւարայրի», Ռ. Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնեանի մահը» պոեմները և ուրիշ շատ բանաստեղծություններ ու դրամատիկական գործեր, սակայն Վարդանանց պատերազմին նվիրված վերևում հիշված և այլ բազմաթիվ ստեղծագործությունների մեջ աչքի են ընկնում Շնորհալու այդ երկու դեղեցիկ ոչ մեծ բանաստեղծությունները:

«Նորահրաշ պսակաւոր»-ը մտնում է «Օրհնութիւն»-ների կարգում և երգվում է ամեն տարի մի անգամ, բուն բարեկենդանին՝ Վարդանանց տոնի օրը: Այս շարականի բնորոշ առավելություններից մեկն էլ այն է, որ հեղինակը գովերգում ու փառաբանում է ոչ միայն զորագլուխ Վարդանին կամ նրա հետ Շավարշան գաշտում ընկած միայն նշանավոր մարդկանց, ինչպես հետագայում շատերն են արել, այլև բոլոր այն հասարակ հայ զինվորներին, որոնք չեն խնայել իրենց կյանքը հայրենիքի համար:

Հայրենասիրական այս մարտերգը չի սահմանափակվել միայն եկեղեցու շրջանակներում, այն մտել է ժողովրդի մեջ և ժողովրդայնացել: «Նորահրաշ»-ը երգվել է հանդեսներում, զորահանդեսներում, տոներում և բեմերում՝ Վարդանանց ներկայացումների ժամանակ: Թե ինչպես այս շարականը անխզելի կապված է եղել Վարդանանց ճակատամարտի հետ, երևում է մի հայտնի փաստաթղթից, որը XV դարի գործ է: «Հայ ժողովրդի պատմության» Ա գրքում մի մանրանկար կա՝ որտեղ պատկերված է «Ավարայրի ճակատամարտը»: Նկարի ներքևում գրված է «Նորահրաշ պսակաւոր և զօրագլուխ առաքինեաց վառեցար զինու...»[1] բառերը: Այս նշանավոր մանրանկարը ցույց է տալիս, որ Շնորհալու շարականը իսկապես շատ սիրված ու մասսայականացված է եղել: Նա կրել է ազգային,

---

1 «Հայ ժողովրդի պատմություն», 1 գիրք, Երևան, 1951, էջ 109:

ժողովրդական բնույթ։ Հավանաբար այս հանգամանքն էլ պատճառ է դարձել, որ երկու դար հետո, XVII դարում, որոշ հոգևոր հայրեր ուզեցել են վերանայել Վարդանանց տոնը եկեղեցում ընդունելու խնդիրը։

Բանաստեղծության առաջին տունը նվիրված է հայոց բանակի զորագլուխ Վարդան Մամիկոնյանին, որն անձնուրաց կերպով, հոգու և իսկական զենքով արիաբար գնում է մահվան դեմ։ Իր հերոսական մահով «քաջ նահատակը» վանում է թշնամուն հայրենի երկրից։

Նորահրաշ պսակատր և զօրագլուխ առաքինեաց,
Վառեցար զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու,
Վարդան, քաջ նահատակ, որ վանեցեր զթշնամին,
Վարդադոյն արեամբդ քո պսակեցեր զեկեղեցի[1]։

Նկատելի է, որ Վարդանին նվիրված առաջին տան մեջ Շնորհալին գեղեցիկ կերպով հաճախակի գործածում է հերոսի անվան առաջին տառ՝ «Վ» բաղաձայնով սկսվող արտահայտությունները, որոնք ավելի վառ են դարձնում պատերազմի ամենանշանավոր հերոսի՝ «Կարմիր Վարդանի» պատկերը։

Պատերազմում երկրորդ գնդի զորագլուխը եղել է Խորեն Խորխոռունին։ Բանաստեղծը գեղեցիկ մակդիրներով ցույց է տալիս Ավարայրի և այս հերոսի՝ Խորենի քաջությունն ու հոգեկան բարեմասնությունները.

Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին,
Խոհական իմաստութեամբ. խոհեմացեալ անճառապէս.
Խորէն խորհրդական և ծանուցեալ անուն բարի,
Խաչելոյն վկայ եղեալ՝ հեղմամբ արեան պսակեցաւ[2]։

Այստեղ էլ Շնորհալին հաճախակի գործածում է Խորենի անվան սկզբնատառ «Խ» բաղաձայնը։

Երրորդ տունը մի ուրիշ նշանավոր հերոսի՝ Արտակի մասին է։ Արի Արտակը նույնպես հերոսաբար ընկնում է մարտի դաշտում և ներկվում աղբյուրի նման բխող բոսորագույն արյան մեջ։

Բնական լուսով լցեալ արիացեալն քաջն Արտակ,
Թաթաւեաց ի կարմրութիւն բոսորագոյն բղխեալ աղբերն...[3]

---

1 «Շարական», էջ 462։

2 Անդ։

3 Անդ։

Շարականի մնացած տներում գովերգվում են Ավարայրի հերոսներ՝ Համայակ Դիմաքսյանը, Տաճատ Գնթունին, Վահան Գնունին, Արսենը, Գարեգին Սրվանձտյանը՝ համապատասխան մակդիրներով ու փառաբանությամբ։

Ինչպես նշվեց, բանաստեղծության նախավերջի տունը նշանավոր է նրանով, որ այստեղ գովերգվում ու փառաբանվում են բոլոր շարքային մարտիկները, որոնք արիաբար ընկել են Ավարայրի դաշտում, զոհել իրենց կյանքը հայրենիքի համար.

*Բամկական խումբ հազարաց և երեսնից թիւ ընդ վեցից*[1],
*Որք ընդ նոսին նահատակեալ արիաբար պատերազմաւ,*
*Եւ հեղին զարիւնս իւրեանց ի նորոգումն եկեղեցւոյ,*
*Ընդ նոսին պսակելով ի երկնաւոր հանդիսադրէն»*[2]։

Չմոռանանք հիշել, որ այս բանաստեղծության 10 տների դրվախագրերից ստացվում է «Ներսէսի երգ» կապակցությունը։

«Նորահրաշ»-ի անբաժան մասն է կազմում Շնորհալու մի ուրիշ, փոքրիկ գործ «Արիացեալք» անունով։

Հազկերտ 2-րդը և պարսից ավագանին հայոց նախարարներին խաբեությամբ կանչում են պարսից դուռը և ստիպում ուրանալ իրենց հավատը։ Նախարարները վերադառնում են Հայաստան, պատրաստվում են և դուրս գալիս Թշնամու դեմ՝ երկիրը «անօրենների բռնություններից և նեղություններից» ազատելու համար։ Ահա դրա համար էլ բանաստեղծը երգում է, որ պետք է մենք ցնծանք այդ ազատարար ու արդար կռվի հաղթությամբ.

*Արիացեալք առ հակառակն.*
*Քաջութեամբ առնուլ զվրէժ խաբէութեան,*
*Հանճարեղք ի հատուցումն դաւանանցն,*
*Զամբարշտացն արդարադատ չափմամբ...*[3]

---

1 Շարականի այս տան թվերը Շնորհալին վերցրել է Եղիշեի հետևյալ տվյալներից. «Այս երկերիւր ութսուն և եւթն նահատակք, ընդ ինն մեծամեծ նախարարն անդէն ի տեղւոջն կատարեցան... Բոզ զայս... և այլևս եւթն հարեւր և քառասուն այր որք զանուանս իւրաքանչիւր ի դպրութիւն կենաց գրեցին ի նմին աւուր ի մեծ պատերազմին։ Եւ միահամուռ լինի ամենայն հազար և երեսուն և վեց» (Ե ղ ի շ է, Պատմութիւն Վարդանանց, Թիֆլիս, 1913, էջ 156)։

2 «Շարական», էջ 463։

3 Անդ, էջ 462։

Բացի Վարդանանց երկու շարականից, Շնորհալին գրել է նաև Ղևոնդյանց նահատակների[1] վերաբերյալ երգեր, որոնք երգվում են եկեղեցում՝ Ղևոնդյանց տոնի օրը:

Ինչպես Ղևոնդյանց նահատակությունը հանդիսանում է Վարդանանց պատերազմի շարունակությունը, այնպես էլ այս երգերը իրենց էությամբ ու ոգով կազմում են «Նորահրաշ»-ի և «Արիացեալք»-ի անբաժանելի մասը:

Ղևոնդյանց շարականների մեջ բանաստեղծը Հաղկերտին համեմատում է անդնդային վիշապի, անգութ փարավոնի հետ: Նա մոգերի չար խորհուրդներով գազանացել, կատաղել է: Սակայն Ղևոնդյանք, Վարդան Մամիկոնյանի ավանդներին և իրենց հայրենիքին հավատարիմ, «յաշխարօրէն պատերազմի ախոյան»-ի դեմ չեն ընկճվում և հերոսաբար ընդունում են մահը:

Մի ուրիշ լիրիկական շարական երգի մեջ, որը պատկանում է «Համբարձի»-ների կարգին, բանաստեղծը հավերժ ներբողներ է ձոնում Ղևոնդյանց հերոսներին և պարծենում նրանց անվամբ.

«Երգիմ ձեզ երգս, ըզհրեշտակական ըզձայնս,
Յաւէրժս և վախլուչս, մտերիմս և ներբողեանս
Ով սուրբ Ղևոնդեանք:
Առաւել պարծիմք ձեօք...[2]

Ինչպես տեսնում ենք Վարդանանց և Ղևոնդյանց նվիրված շարականները միայն կրոնական չեն: Այստեղ բանաստեղծը երգում է համազգային մեծ հերոսներին, նրանց հաջությունը, անձնուրացությունն ու հայրենասիրությունը:

Սրբե եկեղեցին ամեն տարի տոնում է Վարդանանց տոնը և դասել է նրանց սրբոց կարգը, դա երբեք չի խանգարել, որ մեր պատմագրությունը Ավարայրի ճակատամարտը գնահատի որպես համազգային-ազատագրական պատերազմ: Սրբե Շնորհալու «Նորա-

---

[1] 454 թ. Հաղկերտը չարաչար պարտվեց քուշաններից: Մոլեռանդ և ճարպիկ մոգերն օգտագործեցին այդ անհաջողությունները և համոզեցին Հաղկերտին, որ աստվածները բարկացել են նրա վրա, որովհետև դեռ կենդանի ու անպատիժ են մնում հայոց հանցավոր քահանաները: Բռնակալ Հաղկերտը իսկույն հրամայում է սպանել իր բանակում գտնվող Սամվել և Աբրահամ քահանաներին, ապա Նյուշապուհ բաղարն է ուղարկում մի բանի նշանավոր պարսիկների, որ այնտեղ գրանվող քահանաներին էլ սպանեն: Գնացողները կապված նախարարներից բաժանում են Հովսեփ կաթողիկոսին, Ղևոնդ երեցին և մյուս գերի քահանաներին և քաղաքից քիչ հեռու սպանում են բոլորին: Ահա այս նահատակներն են, որ կոչվում են Ղևոնդյանք:

[2] «Շարական», էջ 468:

հրաշ»-ը, «Արիացեալք»-ը և մյուս երգերը եկեղեցին դասել է շարականների կարգը, ապա դա էլ երբեք չպիտի խանգարի, որ այդ բանաստեղծություններն ևս դիտվեն որպես ազգային-ազատագրական պայքարում ընկած հերոսներին ուղղված ներբող։

Վերևում ակնարկվեց, որ XVII դարում եղան հոգևորականներ, որոնք սկսեցին կասկածել, թե իրոք, կարելի՞ է Ավարայրի ճակատամարտում ընկած հերոսներին համարել իսկական եկեղեցու մարտիրոս և դասել սրբերի շարքը։ Ահա թե այս կապակցությամբ Գաբ. Ավետիքյանը իր «Բացատրութիւն շարականաց» գրքում ինչ է գրում. «Սակայն ի ժէ դարուն եղեն ոմանք անծանօթք գործոցն անցելոց, որք երկբայութիւն խորհեցան ի վերայ ճշմարիտ մարտիրոսութեան սրբոց Վարդանանց, կարծելով թէ իբրև ըստ աշխարհի զօրավարք և զինուորք անկան նոքա ի քաղաքական պատերազմի...»[1]։

Իհարկե XVII դարում եղած այս կարծիքը Վարդանանց պատերազմի մասին, այն էլ հոգևորականների կողմից, վերին աստիճանի հետաքրքիր է և արժանի մանրամասն ուսումնասիրության։ Ինչո՞ւ էին «երկբայում» այդ հոգևոր հայրերը։ Ահա թե ինչ էին ասում նրանք.

1. Ճշմարիտ մարտիրոս լինելու առաջին պայմանն է, որ աստուծո ու հավատի համար հանձն առած մահը՝ լինի կամավոր, «վասն զի ի պայմանսն պահանջեալս առ ի ճշմարիտ մարտիրոսութիւն կարևոր և այս, զի յանձառութիւն մահարեր տանջանաց վասն Աստուծոյ լինիցի կամաւոր»[2]։

Ջնայած,—ասում էին նրանք,—Վարդանանց պատերազմը և մարտիրոսությունը նաև աստուծո, եկեղեցու և հավատի համար էր, սակայն «մահ նոցա ոչ էր տիրապէս կամաւոր, զի դիմամարտութեամբն կամէին մանաւանդ պաշտպանել զկեանս իւրեանց»[3]։

2. Այնուհետև, ճշմարիտ մարտիրոս միայն կարող է համարվել նա, որի մահը նմանություն ունի Քրիստոսի մահվան, որը ոչ միայն չէր դիմադրում իրեն սպանողներին, այլև անմռունչ հեզությամբ հանձն էր առնում մահը։ «Ընդդիմաբանեն դարձեալ հակառակ խորհողքն, թէ ճշմարիտ մարտիրոսութիւնն է նմանութիւն մահուն Քրիստոսի, իսկ Քրիստոս ոչ ընդդէմ դարձաւ սպանողաց իւրոց, այլև իբրև որոջ առաջի կտրչի այնպէս անմռունչ յանձն էառ զմահ»[4]։

---

1 Գաբրիել Ավետիքյան, Բացատրութիւն շարականաց, 1814, Վենետիկ, էջ 601։

2 Անդ, էջ 601։

3 Անդ, էջ 602։

4 Անդ, էջ 603։

3. Անհավատների հետ ունեցած աշխարհիկ պատերազմներում ընկածները սովորաբար չեն դասվում մարտիրոսների կարգը։ Որպես ապացույց երկրայողները բերում են խաչակրաց պատերազմներում զոհվածների օրինակը։ Չնայած իր ժամանակին Փոկաս կայսրը ցանկացել է անհավատների հետ տեղի ունեցած կռիվներում ընկած խաչակիր զինվորներին դասել մարտիրոսների կարգը, բայց Կոստանդնուպոլսի պատրիարքն ու հույն եպիսկոպոսները չեն համաձայնվել կայսեր հետ՝ առարկելով նրան, ելնելով վերևում հիշված պայմաններից։ Հետագայում այդպիսի փորձ է կատարել նաև Նիկեփորոս կայսրը, բայց նրան էլ չի հաջողվել, որովհետև եպիսկոպոսները արգելել են նրան էլ[1]։

Ուշագրավ է այն երևույթը, որ դեռևս XVII դարում վարդանանց պատերազմը քաղաքական համարողներ են եղել, այսինքն ժողովրդական, մասսայական, շարականի բառերով ասած՝ «յաշխարհօրէն պատերազմ»։ Բնականաբար այդ ժողովրդական պատերազմում զոհված հայ ժողովրդի անձնվեր հերոսներին գովերգող շարականը նույնպես ժողովրդական, ազգային ստեղծագործություն է՝ կրոնական որոշ մոտիվներով։ Եթե մեծ սխալ ու պատմության դեմ մեղանչում կլինի Ավարայրի ճակատամարտը համարել միայն կրոնական, միայն հավատի պատերազմ, ապա նույնքան էլ անիրավացի ու միակողմանի կլինի, եթե այդ պատերազմում ընկած հերոսներին երգող ու փառաբանող բանաստեղծություններ համարվեն միայն կրոնական կամ եկեղեցական երգեր։

Բացի այդ, մեր հոգևոր բազմաթիվ երգերի մեջ ձևով ու բովանդակությամբ կան այնպիսիները, որոնք իրենց գեղեցկությամբ, պարզությամբ, էպիկական ու լիրիկական բնույթով իսկական բանաստեղծություններ են՝ կրոնական շղարշով սքողված, բայց էությամբ՝ բնական և մարդկային։

«Նորահրաշ» և «Արիացեալք» երգերն իրենց գոյության օրից միշտ Վարդանանց պատերազմի հետ սերտ կապված են պատկերվել ու հասկացվել։ Այդ բանաստեղծությունները դուրս են եկել եկեղեցու պատերի նեղ շրջանակներից, և թատրոններում ներկայացվել որպես ազգային-հերոսական դրվագներ։ «Նորահրաշ» երգի մարտական եղանակը ավելի շուտ հիշեցնում է ռազմի երգերի մոտիվներ քան կրոնական։ Բովանդակության հետ մեկտեղ մեծ ազդեցություն է թողնում հանդիսատեսի վրա նաև շարականի եղանակը, երաժշտությունը։ Ինչպես բովանդակալից,

---

1 Տ ա բ ր ի ն ի Ա վ ե տ ի ք յ ա ն, Բացատր. շարականաց, էջ 603—604։

գեղարվեստական արժեք ներկայացնող շատ շարականներ տրադիցիոն կարգով, երկար դարեր մնացել են եկեղեցու պատերի մեջ և համարվել միայն նրա սեփականությունը, այդպես էլ գնահատվել է դժբախտաբար մեր եկեղեցական հարուստ երաժշտությունը: Սրանք երկուսն էլ իրենց ծնունդով հայ ժողովրդի հանճարի պտուղներն են, որոնք ահեղ, կործանարար դարերից ազատվել հասել են մեզ՝ երկար, մութ ու խոտոր ճամփեքով: Արվեստի ոչ մի ճյուղ մարդու հոգու ու զգացմունքների վրա այնպես խոր ու անմիջական չի կարող ազդել ու ներգործել, ինչպես երաժշտությունը: Ահա թե ինչու եկեղեցական հայրերը միացնելով բովանդակալից շարականներին համապատասխան եղանակ, ձգտում էին մարդու զգացմունքներին ու մտքին ցանկալի ընթացքն ու ուղղությունը տալ: Ներսես Լամբրոնացին իր «Մեկնութիւն պատարագի» գործում շարականների երաժշտությունն այսպես է բնորոշում. «Ազդումն երաժշտական եղանակին... ընդոստուցեալ զարթուցանէ զմիտս ամենեցուն առ ի տենչումն շնորհին. բանզի չիք ինչ որ զկամս մեր յեղաշրջէ յուրախութիւն կամ ի տրտմութիւն՝ որպէս զերգոցն ձայն, յորժամ որպէս պարտն է լինիցի...»[1]:

Շարականներն էլ, երաժշտությունն էլ ժողովրդից են գնացել եկեղեցի: Երկուսն էլ հորինվել են մեր ժողովրդի շնորհալի, տաղանդավոր, հանճարեղ ստեղծագործողների կողմից: Հարուստ ենք մենք թե մեր շարականներով և թե եկեղեցական կլասիկ երաժշտությամբ:

Մեր ժամանակի ազգային երաժշտության մեծ վարպետը՝ անմահ Կոմիտասը այն կարծիքին էր, որ ժողովրդական և եկեղեցական երաժշտությունը սերտ կապված են իրար, որ եկեղեցական երաժշտության հիմքն ու սկզբնական ձևը ազգային ժողովրդականն է:

Այսպիսի սերտ կապի մեջ են եղել միջնադարի հայ արվեստի նաև մյուս ճյուղերը՝ նկարչությունը, ճարտարապետությունը և այլն: Նկարչության ու մանրանկարչության կրոնական թափանցիկ քողի տակից հաճախ երևում է երկրայինը, բնականը:

Մեր հոյակապ հին ճարտարապետությունն էլ այդպես է արտահայտվել: Որքա՜ն աղքատ կլիներ մեր կուլտուրան և որքան սխալված կլինեինք, երբ մենք միջնադարի ճարտարապետությունը, պոեզիան, երաժշտությունը, նկարչությունը, դատելով միայն նրանց արտաքին ձևից, ելնելով նրանց կրոնական որոշ արտահայտու-

---

1 «Շարական», էջ 5 (ընդգծումները մերն են—Գ. Հ.):

թյուններից ու երանգից, շփափանցելով արվեստի այդ ճյուղերի բուն էության մեջ՝ համարեինք այդ բոլորը կրոնական, եկեղեցական։ Մասնավորելով մեր խոսքը Ալարայրի ճակատամարտում ընկած հայ հերոսներին ու մարտիկներին նվիրված Շնորհալու վերևում հիշված շարականների մասին, պետք է նշել, որ դրանք բոլորը մեսային կազմում են ներդաշնակ, դեղեցիկ ու անմահ հայրենասիրական մի երգ։ Դ. Դեմիրճյանի բառերով ասած «Դարերի հին երգն է դա՝ Վարդանանց նվիրված։ Ահա այդ հավերժական երգի մեջ են ճըշմարտորեն ամփոփված Վարդանը և Վարդանանք»։

## Զ. ՏԱՂԵՐ ԵՎ ԳԱՆՁԵՐ[1]

Շարականների կապակցությամբ խոսվեց մի քանի տաղերի մասին, որոնք թեմայով, էությամբ ու ձևով շատ նման են համապատասխան տոնին վերաբերող շարականներին։ Հետևաբար, դժվար չէ նկատել, որ Շնորհալու տաղերի մեծ մասը այդպիսի շարականների հարաստությունն ու կրկնությունն են։ Տերունական տոներին կամ առանձին անհատներին ձոնված տաղերից շատերն ունեն «Հորդորական» անունով՝ նույն տոի ոգին արտահայտող կից ոտանավորներ, որոնք առջևի տաղի հետ կազմում են մի ամբողջություն։ Այդ հորդորակները որևէե բոլորն էլ սկրոստիոս են «Ներսէս», «Ներսէսի է երգ» բառերով։ Հորդորակների մեջ կան այնպիսինները, որոնք անարվեստ են, միապաղաղ և նախընթաց տաղի երկրորդումն։ Սակայն կան և լավերը, որոնք ինքնուրույն են արվեստով, թեպետև տաղի էությունն ու ոգին են կրկնում։ Այսպիսիներից են «Ծննդեան», «Յարութեան», «Վերափոխման», «Խաչի» և «Առաքեալների» տաղերի հորդորակները։ Իրենց գեղեցկությամբ, քնարականությամբ և ուրախ մոտիվներով աչքի են ընկնում «Աւետեաց», «Ծննդեան» և «Յարութեան» տաղերը։ Գունագեղ ու վառ են բնության տարբեր կողմերից վերցված երանգները ու համեմատությունները՝ տիրամորը նվիրված տաղում.

---

[1] Շնորհալու տաղերը ժամակարգությունից դուրս եղած հոգևոր երգի մի տեսակն են, որոնք գրվել են տերունական և առանձին սրբերի տոներին երգելու համար։ Սոանց տաղաչափական արվեստով բարձր են շարականներից և ունեն բազմազան չափեր։

Գանձ, գանձ—պարսկերեն նշանակում է կրոնական երգ։ Սրանք մեծ մասամբ պարունակում են աշխարհիկ խնդրվածքներ, որոնք, ինչպես տաղերը, երգվել են թե՛ եկեղեցիներում, և թե՛ եկեղեցուց դուրս։ Գանձերը գրեթե արձակ մաղթանքներ են և չունեն տաղաչափական տարրեր։

*Սիրամարգ ոսկետիպ նըկար յոգի,*
*Տատրակ ողջախոհ մաքուր աղաւնի,*
*Էրևնալ ծաղիկ գարնայնոյ*
*Վարդ, մանուշակ, քըրքում, շուշան վայելուչ...*[1]

*Փառաբանական և քնարական մոտիվներով են գրված Մկրտուբյան, Ղազարի Հարությյան, Ծաղկազարդի, Հարությյան, Վարդավառի, Փոխման, Հրեշտակապետաց, Մարգարեից, Հայրապետաց նվիրված տաղերը: Մեծ ուրբաթի և Խաչելության տաղերն իրենց բնույթով բոլորովին այլ են: Այստեղ տխուր զգացմունքների հետ միաժամանակ զրսևորվել է Շնորհալու նաև ուժեղ երևակայությունը: Մեծ ուրբաթին նվիրված տաղը գրված է այբուբենի տառերով և լրիվ չէ. Ջ տառից այն կողմ՝ մոտ 9 տուն մեզ չի հասել*[2]*:*

*Հարությյան նվիրված է 10 տաղ, որտեղ արտահայտվել են այն դաղափարները, որոնք այդ տոնին վերաբերող բազմաթիվ շարականներում զրսևորվել են ավելի ջերմ ու պատկերավոր: Այդ տաղերից մի քանիսն իրենց ձևով հետաքրքրական են՝ գրվածքի ժամանակը որոշելու տեսակետից: Եղել են կարծիքներ, որ իբր թե Շնորհալին իր տաղերն ու շարականները գրել է կաթողիկոսության տարիներից առաջ, քանի որ կաթողիկոս ընտրվելուց հետո ունեցել է բազմազան հոգսեր և պարտականություններ, հետևաբար, նա չէր կարող այդ տարիներին ստեղծագործել: Ճիշտ է, որ Շնորհալին իր չափածո շատ խոշոր գործերը գրել է կաթողիկոսությունից առաջ, բայց այդ չի նշանակում, թե նա կաթողիկոս ընտրվելուց հետո հնարավորություն ու եռանդ չի ունեցել գրելու: Հարությյան տաղերից երեքը, մի քանի հորդորակ գրված են գլխակապով, ուր ստացվում են «Ներսէսի երգ», «Կաթողիկոս հայոց» և «Հայոց կաթողիկոս»*[3]*: Խաչի հորդորակն էլ է այդպես՝ «Կաթողիկոս հայոց»: Այս գլխակապ բառերը ցույց են տալիս, որ իրոք տաղերը կամ նրանց մեծ մասը Ներսես Շնորհալին գրել է կաթողիկոսության տարիներին: Սակայն Շնորհալին, ինչպես շարականներում, այնպես էլ տաղերում չի սահմանափակվում միայն կրոնական թեմատիկայի շրջանակներով: Նա ունի նաև կոնկրետ ազգային բնույթի թեմաներով գրված տաղեր, որոնք նվիրված են Տրդատին, Ներսես Մեծին և Հռիփսիմյանց:*

*Ներսես Մեծին նվիրված տաղը նույնպես ակրոստիքոս է «Ներսէսի նուաստի»*[4] *գլխակապով: Ծեր Գրիգոր Լուսավորիչը համարվում*

---

1 «Բանք չափաւ», Վենետիկ, 1830, էջ 372:

2 Անդ, էջ 381—385:

3 Անդ, էջ 388—399:

4 «Նուաստ» բառը Շնորհալուն է վերաբերվում:

է «լոյս Հայաստանեայց», ապա Ներսեսը՝ «շառաւիղ լուսոյ»: Սակայն այս շառաւիղ-լույսն ավելի զորեղ է եղել որպես «յորդառատ գետ»: Ներսեսը «լույսի և սիրո ընձյուղները» զվարթացրել է ոռոգմամբ[1], ապա Լուսավորչի և Ներսեսի գործերի մասին հետևյալ պատկերավոր քառյակն է գալիս.

*Ի մի յայնմ աղբերէ բազում բղխեաց վտակ,*
*Նովին խնկաբեր ծառք սրբեալ դրախտին Աստուծոյ.*
*Վարդից բուրելով հոտ և շուշանաց անուշից.*
*Արքայն անխմաստ արբ և ոչ խմաստնացաւ[2]:*

Ամնագեղեցիկները Հռիփսիմյանց նվիրված երեք տաղերն են, որոնցից մեկն անձամբ Հռիփսիմեին, իսկ երկուսը՝ բոլոր կույսերին է վերաբերում: Հռիփսիմյանց այս երեք տաղերն իրենց թարմությամբ և ջերմությամբ հիշեցնում են Կոմիտաս կաթողիկոսի հայտնի «Անձինըք նուիրեալք» շարականը և Գրիգոր Նարեկացու Ծնընդյան, Հարության և Վարդավառի տաղերը:

Սրե Շնորհալու մյուս տաղերից շատերը նախապես նրա գրած շարականների հարաստությունն ու տեղ-տեղ էլ կրկնությունն են, ապա Հռիփսիմյանց տաղերը ինքնուրույն են, ջերմ ու գեղեցիկ: Այս տաղերի նյութը Շնորհալին վերցրել է Ագաթանգեղոսից ու գողարվեստորեն մշակել: Առանձնապես գեղեցիկ է «Ի սուրբ կոյսն Հռիփսիմէ» վերնագրով տաղը, որը գրված է անապետյան ոտքերով: Տաղի տների գլխագրերը հոդում են «Հռիփսիմէ» անունը և ամեն տան վերջում կրկնվում է «Հրեշտակ, հրաշագեղ Հռիփսիմէ» տողը: Տաղը աչքի է ընկնում նաև իր ախորժալուր հանգիտությամբ, երաժշտականությամբ, բաղաձայնություններով ու գեղեցիկ պատկերներով.

*Սիրասնունդ սիրամարդ սիրալի,*
*Նրբափայլ ոսկեթել տարփալի,*
*Ծռապսակ իւղագլուխ ցանկալի,*
*Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ:*
*Իսկաճեմ աղաւնի օդապար...*
*Օձասպան արագիլ դու արդար...*
*Սաղարթուն կարմրորակ իբր խնձոր,*
*Հարան ազնիւ դու արեամբ քոյաւոր,*
*Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ[3]:*

---

1 «Բանք չափաւ», Վենետիկ, 1830, էջ 463:
2 Անդ, էջ 463:
3 Անդ, էջ 474—475:

Պրոֆ. Մ. Աբեղյանը Շնորհալու մի քանի և առանձնապես Հռիփսիմյանց տաղերը այսպես է գնահատել. «Շատ թարմ և ուժեղ են հնչում նրա մի քանի տաղերը, ինչպես օրինակ Հռիփսիմյանց կույսերի համար եղածները... Մի քանի բառերով ու կարճ խոսքերով տրված է Հռիփսիմեի գովքն ու գեղեցկության նկարագիրն արագ ու եռանդուն և ռիթմիկ տողերով»[1]:

Իր տաղերի արվեստով ևս Շնորհալին զգալի նորություն և թարմություն մտցրեց XII դարի բանաստեղծության մեջ, որը խոշոր նշանակություն ունեցավ հետագա դարերի տաղերգուների ստեղծագործությունների համար:

«Բանք չափաւ» դրքում Շնորհալին ունի նաև երկու դանձ, մեկը վարդավառի, իսկ մյուսը՝ Վերափոխման տոների մասին: Այս երկու դանձն էլ Շնորհալու շատ սիրած «Ներսեսի երգ» անվանակոչ ձևով են գրված: Սրանք առհասարակ արձակ գրվածքներ են և ոչ մի բանով երգի նման չեն, որոնք ավելի հարմար կլինեին, եթե գետեղվեին հեղինակի ոչ թե չափածոյի, այլ արձակի՝ «Թուղթ ընդհանրական»-ի մեջ: Վարդավառի դանձի երկու հատվածները գրված են Նարեկացու ուժեղ ազդեցության տակ և շատ նման են Նարեկի «Գ» և «Իէ» բաներին[2]:

Այս դանձերի մեջ էլ հեղինակը աշխարհիկ խնդրվածքներ ու յանկություններ է դնում: Վարդավառի դանձի մեջ նա պայծառակերպված Հիսուսից պահանջում է, որ նա իր ամենակարող ձեռքով օգնի այս աշխարհում նեղյալներին, իրենց երկրից հեռու վայրեր ցրված պանդուխտներին, մի խոսքով՝ բոնության ու տառապանքի ենթակա բոլոր մարդկանց.

*Հաշտեա ընդ մանկունս սորա սարտուցեալս ի քոց*
*բարութեանց,*
*Ընդգրկեա զվարատեալքս ի գիրկ հայրենիդ*
*գրգանաց.*
*Ժողովեա զցրուեալքս և մխիթարեա զսգացեալքս,*
*Հաստատեա ի վէմդ ամրութեան զտառապեալքս և*
*զխախտեալքս.*
*Հերքեա ի քոյոց ծառայից զծառայեալսն մեղաց,*
*Եւ ազատեա զազատեալքս արեամբ քո սրբով*[3]:

---

1 Մանուկ Աբեղյան, Հայոց հին դրականության պատմություն, Բ գիրք, էջ 87:

2 Գրիգոր Նարեկացի, Մատենագրության նախնաց, Վենետիկ, 1840, էջ 6, 63:

3 «Բանք չափաւ», էջ 482:

Բանաստեղծը միայն այսքանով չի բավարարվում։ Նա պահանջում է նաև բարօրություն՝ հայ ժողովրդի և հզորություն՝ նրա պետության համար.

«Զօրացո զթագաւորն մեր Ա. Ա. բարեպաշտութեամբ,
...Հերքեա զհոյլս ամբարշտութեանն.
Զիշխանս իշխեալ հակառակացն ճշմարտութեան.
Զօրականացն տուր հաջուիւն, և ախոյանիցն յաղթուիւն.
Աշխարհայնոցն՝ ամրուիւն, շինուիւն և խաղաղուիւն...
Առատուիւն պտղոց առօրէիս և յաւիտենականին»[1]։

Իսկ Փոխման կոչվող գանձը սկսվում է դավանաբանական խոսքերով, որտեղ նույնպես ուժեղ չափով զգացվում է Նարեկացու շունչը։ Ինչպես Նարեկի ամեն մի «բանն» ունի իր կրկնակը սկզբից, այնպես էլ այս տաղն ունի իր կրկնակը, բայց տան կամ հատվածի վերջից «Ահա ընկալեայիս» բառերով։

Սակայն այս գանձի վերջում էլ խնդրանքները դառնում են աշխարհիկ, որոնք նույնպես վերաբերում են հայ ժողովրդին ու նրա ազգային պետությանը.

...Պահել պահողին էից զամենեսեան յապահովս։
...Զթագաւորս հնազանդելօք, և զիշխանս՝ իշխեցելոք.
Զօրականսն զօրոք և զժողովս ժողովրդօք»[2]։

## 2. ԱՇԽԱՐՀԻԿ ՄՈՏԻՎՆԵՐՈՎ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՊՈԵՄՆԵՐ

Շարականները, տաղերն ու գանձերը գրված են միայն եկեղեցական տոներին երգելու նպատակով։ Դրանք դյուրավորապես կապված են ժամակարգության հետ։ Այսուամենայնիվ, ինչպես տեսանք, եկեղեցական կոչվող այդ բանաստեղծություններից էլ լավագույնները, կրոնական լինելով հանդերձ, միաժամանակ որոշ չափով արտացոլել են աշխարհիկ կյանքի այս կամ այն կողմը՝ ըստ ժամանակի հասկացողության ու ոգու։

Այլ նկատառումներով են գրված Ներսես Շնորհալու չափածոյի ստվար մասը կազմող կրոնա-դավանաբանական բազմաթիվ մեծ ու փոքր գործերը։ Սրանք նախատեսված են ոչ թե եկեղեցու, այլ ընդհանրապես ընթերցանության համար։ Այստեղ հեղինակը նախ նկատի է ունեցել տարբեր ընթերցողների ճաշակն ու պահանջը և

---

1 «Բանք չափաւ», էջ 483։
2 Անդ, էջ 491։

երկրորդ՝ այս կարգի գրվածքները այն ժամանակ յուրատեսակ զենք են հանդիսացել գաղափարական պայքարի բնագավառում՝ Հայաստանը շրջապատող այլազգի թշնամիների ազգալույծ ազդեցություններին ու խորթ գաղափարներին դիմադրելու համար։

Այստեղ կրոնական գաղափարների կողքին տեղ են գտել նաև աշխարհիկ տրամադրություններ։ Այսպիսի գրվածքները մի կողմից տարածում էին դավանանքի ու բարեպաշտության գաղափարներ, արտահայտում քրիստոնեական աշխարհայացք, իսկ մյուս կողմից՝ կատարում էին հասարակական-քաղաքական նշանակություն ունեցող մի գործ՝ ազգն ու նրա մշակույթը տարրալուծվելուց փրկելու, աշխարհիկ ու հոգևոր կյանքը ինքնուրույն տնօրինելու համար։ Ազգային մշակույթի ինքնուրույնությունը պահպանելու նպատակով Շնորհալին միշտ հանդես է եկել նաև իր ստեղծագործություններով՝ դեղեցիկ, ազդու խոսքի միջոցով։ Ահա թե ինչու նրա բազմաթիվ գործերում, լինի այն արձակ թե չափածո, մեծ կամ փոքր, կրոնական թե աշխարհիկ, միշտ էլ այնտեղ դրսևորվել են ժամանակի ազգային կամ հայրենասիրական տրամադրությունները

Դավանաբանական չափածոյի մեջ ծավալով ամենամեծը «Յիսուս Որդի» ողբերգությունն է. ապա գալիս են՝ «Բան հատուցոյ» պոեմը, Դավիթ Անհաղթի խաչի ներբողին վերաբերող գրվածքը և երկու փոքր բանաստեղծություն. մեկը՝ «Մաղթանք առ սուրբ Հրեշտակն», մյուսը՝ «Հատուցով խոստովանիմ» հայտնի աղոթքը։

Հրեշտակների և խաչի վերաբերյալ գրվածքները կոչվում են ներբող։ Հիմնվելով հին ներբողների վրա, Շնորհալին փորձել է ղարդացնել, առաջ շարժել գրական այդ տեսակը, որովհետև «հին ներբողյանների ու ճառերի մեջ,— նկատում է պրոֆ. Մ. Աբեղյանը,— որոշ կտորներ ոչ միայն պերճախոսական բնավորություն ունեն, այլև երբեմն իրենց ռիթմով և լիրիզմով մոտենում են չափածո խոսքին և անգամ չափածո բանաստեղծություն կարող են համարվել»[1]։

Սակայն այդ ժանրը չի բավարարել Շնորհալուն, ուստի նա հին ներբողյանի հիմնական առանձնահատկությունը՝ պերճախոսությունը փոխարինել է բանաստեղծական չափածո խոսքով։ Ահա այսպիսի գրական նոր ժանրով են գրված Դավիթ Անհաղթի ներբողին վերաբերող և «Մաղթանք առ սուրբ հրեշտակն» բանաստեղծությունները։ Կիրակոս Գանձակեցին թվելով Շնորհալու դրական

---

1 Մ ա ն ո ւ կ Ա բ ե ղ յ ա ն, Հայոց հին գրականության պատմություն, Բ գիրք, էջ 90։

վաստակները, «Հրեշտակաց» ներբողի մասին ասում է. «Գրեաց նա և ճառս հրեշտակապետացն ըստ ոճոյն Դիոնիսեայ Արիսպագացւոյն...»[1]:

Տակավին VIII դարում Ստեփանոս Սյունեցին հայերենի էր թարգմանել եկեղեցու նշանավոր հայր Դիոնեսիոս Արիսպագացու «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեան» երկը, ուր հեղինակը ներբողում է երկնային համարվող զորությունները: 1162 թվականին Հռոմկլայում, Գրիգորիս կաթողիկոսի խնդրանքով Շնորհալին գրեց իր «Ներբողը»՝ հետևելով Արիսպագացու վերևում հիշված գործին, տեղ-տեղ էլ ընկնելով հունաբանության և խրթնության մեջ, որը եզակի երևույթ է Շնորհալու գործերում:

Սակայն հետևելով Արիսպագացուն, Շնորհալին նրա հարատությունը չի կատարել, ինչպես կարծել են հնում: Առաջինի գրվածքում երկնային զորություններին ուղղված են բացառապես կրոնական բնույթի խնդրանքներ, իսկ Շնորհալու ներբողում հրեշտակներին ուղղված պահանջների մեծ մասը վերաբերում է ռեալ կյանքին, իրական աշխարհին: Ամենից առաջ բանաստեղծը խնդրում է երկնային «պաշտոնյաներին», որ նրանք դինակից ու պաշտպան լինեն աշխարհիկ թագավորներին և իշխաններին՝ երկրային բարբարոս թշնամիների դեմ մղվող պատերազմներում.

...Թագաւորաց բարեպաշտից
Եւ իշխանաց քրիստոնէից,
Հայցեմք լինել նիզակակից
Ի ճակատուն բարբարոսաց[2]:

Այնուհետև բանաստեղծը երկնային զորություններից պահանջում է, որ թշնամու դեմ ռազմական հաղթանակ տանելուց հետո, երկնային զորքերը պաշտպան հանդիսանան ո՛չ միայն հայերին կամ ընդհանրապես քրիստոնյաններին, այլ աշխարհի բոլոր ազգերին ու ժողովուրդներին.

Եւ հաւօրէն ժողովրդեանն,
Որ ըստ ազգի և հասակի,
Յիւրաքանչիւրն վտանգից
Փըրկող լինել ի փորձութեանց[3]:

Հասարակական և պետական կյանքին վերաբերող այդ խընդրանքներից բացի, «Ներբողում» Շնորհալին ցանկանում է նաև, որ

---

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 120:

2 «Բանք չափաւ», էջ 270:

3 Անդ:

մանուկներին ժամանակին տրվի կրթություն և առաքինի դաստիարակություն, երիտասարդները լինեն ողջախոհ, բարքով՝ մաքուր. իսկ ծերերը «ծաղկեն հոգւով որպէս հերովք»։ Կանայք էլ փոխանակ արտաքին պճնանքի, անհրաժեշտ է «պըճնիլ խոնարհութեամբ և բարեզարդ վարուքով», ամուսնացածները՝ տղամարդ թև կին, չխախտեն օրենքը, ամուսնալուծ չլինեն և այլն։ Հասարակության տարբեր խավերին ու մարդկանց տարբեր հասակին ու սեռին վերաբերող հոգատարությունն ու մարդասիրությունը բանաստեղծի մոտ հասնում է այն աստիճանի, որ նա մտահոգվում է ցամաքի ու ծովի վրա եղող ճամփորդների վիճակով անգամ և խնդրում հրեշտակներից, որ «ընթացակից» լինեն նրանց և պահպանեն.

*Ուղևորաց ճանապարհի*
*Լերուք ի նոյն ընթացակից.*
*Եւ նաւելոց, որք ի ծովու,*
*Ըզղեկավարք և նաւաստիք*[1]։

Այս դեռ բոլորը չէ. մարդկանց հանգստություն և ապահովություն խնդրելուց հետո բանաստեղծը պահանջում է խաղաղ, աշխարհիկ կյանք.

*Այլև տարերց բարեխառնիւք*
*Տուք ըզպըտղոց առատութիւն.*
*Ի ցասմանէ զպահպանութիւն...*
*Տուք խռովութեանց խաղաղութիւն,*
*Եւ յերկիւղից անհոգութիւն.*
*Ի սըրտմութեանց զուարթութիւն,*
*Եւ ի վըշտաց բսփոփութիւն.*
*Ըզտարաժամ մահուց բարձումն,*
*Զանպարտ արեանցն դադարումն,*
**Եւ յամենայն կեանս բստ մարմնոյ,**
**Լերուք պաշտպան մեզ և հոգւոյ**[2]։

Թեև գրվածքի թեմաներն ու վերնագրերը նույնն են Արիստագյու և Շնորհալու մոտ, բայց վերջինս միանգամայն ինքնուրույն է և մոտ է աշխարհիկ կյանքին քան թե երկնքին։ Այստեղ կրոնական մոտիվների հետ զուգընթաց, և ավելի ուժեղ, արտահայտություն են գտել աշխարհիկ և մարդասիրական գաղափարները։

---

1 «Բանք չափաւ», էջ 271։

2 Անդ, էջ 273։

Հետևյալ ոտանավորի վերնագիրն է. «Ներբողեան կենսատու սուրբ խաչին առ ի սրբոյ հօրէն մերմէ Դաւիթ անհաղթ փիլիսոփայէ, ասացաւ ոտանաւոր չափով աստանօր եդաւ»:

Սա, ըստ էության, Դավիթ Անհաղթի «Բարձրացուցէք» ճառի շարադրանքն է չափածո ձևով: Դյուտ կաթողիկոսի խնդրանքով, Դավիթ Անհաղթը գրել էր վերոհիշյալ ներբողը՝ արձակ ձևով և իրեն հատուկ խրթին ոճով: Շատերի համար այդ գործից օգտվելը դժվար էր, թե Դավթի և թե մանավանդ Շնորհալու ժամանակներում: XII դարում տեղի ունեցած անց ու դարձերը, հայ ժողովրդի համար ստեղծված ծանր դրությունը, հրատապ պահանջ էին առաջացնում դավանաբանական և մեկնական գրական տեսակները զարգացնելու և ազգի մեջ տարածելու գործը: Այս գրական շարժումը գլխավորել էին Արևելյան Հայաստանի Հաղպատի վանքի վանահայրերը՝ Վարդան վանահոր ղեկավարությամբ: Վերջինս խնդրեց Ներսես Շնորհալուն՝ հանրամատչելի լեզվով գրել Դավիթ Անհաղթի խաչի ներբողի մեկնությունը: Շնորհալին սիրով հանձն առավ կատարելու իր վաղեմի ծանոթի՝ Վարդան վանահոր խնդիրքը և գրեց Անհաղթի՝ խաչի ներբողի ոչ միայն մեկնությունը, այլև գեղարվեստորեն մշակեց այն: Գործը բաղկացած է 620 տողից և բաժանվում է երկու մասի: Այդ մասերն իրարից տարբերվում են թե բովանդակությամբ և թե ձևով: Առաջին մասը վարդապետական-ճառային բնույթ է կրում, գրված է 12 ոտնյա ոտանավորի չափով և «ան» հանգով: Բոլորովին այլ է երկրորդ մասը, որը գրված է բանաստեղծի նախասիրած 8 ոտնյա չափով և տարբեր հանգերով: Այս մասում առանձնապես աչքի են ընկնում խաչին վերաբերող գեղեցիկ պատկերները և այլաբանությունները:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս ներբողի վերջում բանաստեղծը հասարակական ու պետական նշանակություն ունեցող աշխարհիկ պահանջներ է անում խաչից, որ նա լինի՝

...Բազաւորաց զէն յաղթութեան,
Եւ իշխանաց յոյժ քաջութեան,
Զօրաց նոցին միշտ պահապան,
Ախոյանաց քաջ օգնական...[1]

Ինչպես տեսնում ենք, այս զուտ կրոնական-մեկնաբանական թեմայով գրված ներբողում ևս արդեն ներթափանցել են աշխարհիկ մոտիվները: Բանաստեղծը մի կողմից օրհներգում, փառաբանում է

---

1 «Բանք չափաւ», էջ 259:

խաչը, մյուս կողմից էլ խնդրանքներով դիմավոր ուշադրությունը դարձնում է իրական, առօրյա կյանքի տարբեր բնագավառների վրա և խաչից խնդրում, որ մարդը, մարդկությունը, աշխարհիկ պետությունը լավ ու ապահով ապրեն այս աշխարհում:

«Բան մաղթանաց» փոքրիկ չափածոն այբուբենի կարգով է դրված, որի բովանդակությունն են կազմում երրորդության փառաբանումը և միայն Հոգուն վերաբերող խնդրանքները: Բանաստեղծության ամեն մի տունը կազմված է երկու տողից՝ իր կրկնակներով, որոնք աչքի են ընկնում պարզ լեզվով, կանոնավոր տաղաչափությամբ և երաժշտականությամբ:

* * *

«Բան հաւատոյ» դավանաբանական մեծ պոեմը Շնորհալին գրել է 1151 թ. իր Շահան եղբոր որդի՝ Գրիգոր Ապիրատի խնդրանքով: Երկը 1500 տողից բաղկացած յուրատեսակ մի էպիկական հավատապատում է: Այժմ մի քանի խոսք պոեմի գրե ու պատճառների և ժամանակի մասին, որոնք արտահայտություն են գտել «Յիշատակարանում»:

Այստեղ բանաստեղծը այդ ժամանակները համարում է «գառն և գժնի», որովհետև Կիլիկիայի շրջակայքում անլջուկ թուրքերը օրեցօր ուժեղանում և ընդարձակում էին իրենց տիրապետությունը, հասնելով համարյա մինչև Ծովքի սահմանները: Առաջացող թշնամիների ահից հայրապետանոցը Ծովքից փոխադրվեց Հռոմկլա, որտեղ համեմատաբար ապահով էր՝ աշխարհագրական անմատչելի դիրքի և թշնամիներից հեռու գտնվելու պատճառով:

Իսկ ինչ՞ նկատառումով այդպիսի ծանր «գժնի» ժամանակներում Շնորհալին գրեց այս հավատապատումը: Մի՞թե այն, ինչպես համոզված էր Ապիրատը, կարող էր որևէ օգուտ բերել, կամ օգնել հայ ժողովրդին՝ դրսի թշնամիների դեմ մղվող ռազմական և գաղափարական կռիվներում:

Ժամանակն այնպես էր, որ թե աշխարհականներից և թե հոգևորականներից շատերն էին սկսել հետաքրքրվել հավատի ու դավանաբանական հարցերով: Մարդիկ արդեն որոշ չափով կարող էին քննադատորեն մոտենալ կրոնական դոգմատիկ խնդիրներին և հայտնել իրենց կարծիքը: Ժամանակի ոգու և հասարակական կեցության պայմանների ազդեցությամբ՝ հանդերձյալ կյանքի, Ադամի ու Եվայի բիբլիական առասպելի, Քրիստոսի մարդեղության և նման ուրիշ խնդիրների վերաբերյալ կասկածները հասարակության տարբեր խավերի մեջ օրավուր խորանում ու ծավալվում էին: Ժա-

մանակի հոգևոր հայրերը թեև դիմում էին գործնական միջոցների՝ այդ կասկածների առաջն առնելու, բայց իրական, աշխարհիկ կյանքը հաղթանակում էր։

Բացի այդ, կրոնի հիմքերի խարխլման գործին նպաստում էր նաև երկրի արտաքին դրությունը։ Սելջուկները շրջապատել էին Կիլիկիան։ Քրիստոնյա հույներն էլ իրենց հերթին էին հարձակվում հայերի վրա և սելջուկներից ետ չէին մնում իրենց բռնակալ քաղաքականությամբ։ Պատերազմները, ավարառությունները և վայրենի կոտորածները թեև ֆեոդալական դաղափարախոսները փորձում էին սրբագործել կրոնով, բայց իրական կյանքը բոլորովին ուրիշ բան էր ասում։ Սակայն պետք է նշել, որ դավանաբանական այդ կարգի գրվածքները, թեպետ մի կողմից արտահայտում էին կրոնական գաղափարներ, բայց մյուս կողմից, այդ ժամանակներում, դրանք մի տեսակ յուրահատուկ զենք էին նվաճող այլազգիների խորթ գաղափարախոսության դեմ պայքարելու և ազգի ինքնուրույնությունն ու մշակույթը պահպանելու համար։

Ահա այսպիսի պայմանների արդյունք են Շնորհալու «Բան հաւատոյ» և մի տարի նրանից հետո գրված՝ մեծածավալ «Յիսուս Որդի» պոեմները։

«Բան հաւատոյ» գործի Հիշատակարանում պարզ ասված է, որ այդ պոեմն հետապնդում է երկու նպատակ.

*Ի սմա գրեցի զբանս հաւատոյ,*
*Ոտանաւոր տաղիւ չափոյ...*
*Հակառակաց պապանձելոյ,*
*Որք ընդդիմակք են հաւատոյ.*
*Եւ ճշմարտից հաստատելոյ*
*Մանկանց սրբոյ եկեղեցւոյ...*[1]

«Բան հաւատոյ» պոեմը կարելի է բաժանել 3 մասի։ Առաջին մասում տրվում է հայերի դավանանքը և խիստ քննադատության ենթարկվում հույների կողմից առաջ քաշված «երկու բնութեան» գաղափարը։

Երկրորդ մասը Հովհաննու Ավետարանի վերապատումն է։ Զափածոյի վերածելով Ավետարանի բովանդակությունը, Շնորհալին փորձում է այն կապել և համադրել եկեղեցական հայրերի ասածների հետ։

---

1 «Բանք չափաւ», էջ 225—226։

Երրորդ մասը վերջին դատաստանի նկարագիրն է, որը Շնորհալու սիրած թեմաներից մեկն է և կրկնել է իր մի քանի գործերում վառ երևակայությամբ և ցնցող պատկերներով։

Բանաստեղծը ամփոփելով Հովհաննու Ավետարանը, այնուամենայնիվ այստեղ էլ ներմուծել է աշխարհիկ տարր, որը ոչ մի կապ չունի գրվածքի թեմայի կամ կրոնի հետ։ Առանձնապես այդ նկատվում է «Յիշատակարան»-ի մեջ, ուր գովերգվում են հասարակ մահկանացու, սակայն ազգի ու հայրենիքի համար օգտակար գործ կատարող նշանավոր քաջ մարդիկ՝ Արշակունիների և Պահլավունիների տոհմից, որոնց շառավիղն է ինքը՝ բանաստեղծը։ Սկսած իր անդրանիկ գործից՝ «Վիպասանութիւն»-ից, Շնորհալին շատ անգամ է իր գրվածքների վերջում գրել իր տոհմի, առանձնապես ծնողների ու հարազատների մասին։ Իսկ այս պոեմն ամբողջապես նվիրված է Պահլավունիներին.

*Ի յիշատակ բարեաց հոգւոյ*
*Բարեպարիշտ ծնօղաց մերոյ,*
*Յազգէն գոլով պահլաւունոյ*
*Համատոհմից արշակունւոյ...*[1]

«Բան հաւատոյ» գրվածքն իր ժամանակին մեծ ընդունելության ու գնահատականի է արժանացել։ Շնորհալու անանուն կենսագիրը այս երկի մասին հետևյալն է գրում. «Առնէր և խոստովանական դաւանութիւնս սրբարան աստուածաբանութեամբ... ըստ ուղղափառ դաւանութեան սուրբ հարցն՝ նովին տաղաչափութեամբ, յոյժ ընդունելի և հաւանական ընդհանուր եկեղեցեաց ուղղափառաց և իմաստախոհ քրիստոնէից»[2]։

* * *

Լավ ընդունելություն և գնահատական գտնելով հանդերձ, «Բան հաւատոյ» գերթվածը իր թեմայով, բովանդակությամբ ու ձևով «իրեն հեղինակին, երևի չի բավարարել» (Աբեղյան)։ Նյութի սահմանափակ, անճոռնի շրջանակները և դոգմատիզմը, ըստ երևույթին, հնարավորություն չեն ընձեռել բանաստեղծին՝ մտքի ու երևակայության թռիչք գործելու, իր տաղանդն ու անհատականությունը դրսևորելու համար։ Մի ամբողջ տարի նա որոնումներ կատարելուց հետո ստեղծագործության թեմա է ընտրում հին ու նոր կտակարանների համեմատաբար շատ լայն բովանդակությունը և գրում է

---

1 «Բանք չափաւ», էջ 226։

2 «Սոփերք», ԺԴ, էջ 39—40։

«Յիսուս Որդի» բառերով սկսվող ամենամեծ պոեմը՝ «Տեառն Ներսէսի նուէր մաղթանաց ներչափական տաղիւ տուողին բանից ըղձումըն աղօթից ներանձնական հոգւոյ զարթուցելոց մտօք ի թմրութենէ կրից յիշատակաւ անցելումն իրի ներկայի և ապագայի, ողբումն հեծութեան սրտի, խօսք ընդ աստուծոյ» վերնագրով[1]։

Ըստ բանաստեղծի այս «ներանձնական» պոեմը բովանդակում է մարդկության անցյալը, ներկան ու ապագան, ուստի և բաղկացած է երեք գրքից։ Առաջինում համառոտված է հին կտակարանը՝ իր գլխավոր և քրիստոնեության հետ առնչվող դեպքերով, երկրորդում՝ նոր կտակարանի բովանդակության նշանավոր մոմենտները, իսկ երրորդում՝ Քրիստոսին վերագրվող հրաշագործությունները և վերջին դատաստանը։

Ինչպես ասացինք, այս մեծ պոեմո գրելու գլխավոր շարժառիթները նույնպես կապված են եղել ժամանակի հասարակական-քաղաքական դրության հետ։ Շնորհալու անանուն կենսագիրը խիստ դանդաղում է, որ այդ ժամանակներում շատ ծանր էր հայ ժողովրդի քաղաքական դրությունը։ Իշխանությունը վերացել էր. երկիրը՝ ավերվել. վրա էին հասել չար ժամանակները. տեղի ունեցած անցուդարձերը, երկրի անկայուն դրությունը, այս ամենը բացասաբար էին ազդել նաև կրոնի վրա. գրեթե ոչ ոք ժողովրդից չէր զբաղվում հավատի գործերով, և մի տեսակ սառնություն էր առաջ եկել դեպի կրոնը։

«Եւ իշխանութիւն մեր բարձեալ, և եկեղեցի մեր խրթնացեալ, և աշխարհն մեր յազգաց օտարաց աւերեալ, և յեւթին դառնագոյն և չար ժամանակի պատահեալք, ցրտագեալ լինէին ամենեքեան առ սէր աստուածայնոցն, և ոչ ոք էր որ խնդրէր յանխիսոյն աստուածամուխ առնել զմտաս իմաստից, կամ դմեկնութիւնս խորին խորհրդոց, դանխոյացելոց ի սուրբ կտակարանս առ ի յօգուտ մնալոյ ազգիս մերոյ՝ յիշատակ բարեաց յապագայսն զկնի եկողացն Թողլով»[2]։

Եվ ահա ըստ կենսագրի, այդ համատարած սառնության մեջ երևում է Ներսես Շնորհալին, որ «շատատրեր բանս աղօթականս նոյն արուեստիւ, սկսեալ ի նախնի հօրէն մինչ ի կատարած յաւիտենիս այսմ. և լնոյր ի նմա զմիտս և զզօրութիւն հնոյն և նորոյս, և զբովանդակ յանգուածս տանցն միով գծիւ յօրինէր...»[3]։

---

1 «Բանք չափաւ», էջ 7։

2 «Սոփերք», ԺԴ, էջ 41։

3 Անդ, էջ 39։

Պոեմը բաղկացած է 4000 տողից, որոնք վերջանում են «ին» հանգով։ «Բան հաւատոյ» երկի պես այս պոեմն էլ հիմնականում կրոնական ստեղծագործություն է, սակայն աշխարհիկ տրամադրություններով։ Այս մեծ քերթվածի մեջ Շնորհալու ջերմ զգացմունքների հետ միաժամանակ, թեկուզ համեմատաբար թույլ, բայց արտահայտվել են նաև հոգու և մարմնի, երկնայինի և աշխարհայինի իրարամերժ ապրումները, սոցիալական կյանքին վերաբերող աշխարհիկ տրամադրություններ և անգամ հայրենասիրություն։ Ահա այս մոտիվներն են արժեքավորը, որոնք մինչև հիմա էլ անտեսվել են, երբ խոսք է եղել ու գրվել «Յիսուս Որդի» պոեմի մասին։

Թեև հոգեկան ողբերգություն ապրող մեր բանաստեղծը ջերմ հավատացյալ է, թեև նա ամեն կերպ աշխատում է հեռու մնալ գայթակղեցնող կյանքի հաճույքներից, բայց այդ նրան չի հաջողվում. իրական կյանքը ամենազոր է, ձգում է նրան։ Ահա այդտեղից էլ սկսվում է նրա հոգեկան դրաման։ Այս է նրա երեք գրքերի գլխավոր դաղափարը, որի շուրջը պտտվում է ամեն ինչ։ Այժմ տեսնենք, թե ինչու նա չի կարողանում իսկապես կտրվել աշխարհիկ կյանքից և ապրել միայն հանդերձյալ կյանքի երազներով։ Այս հարցին յրիվ պատասխանելու նպատակով, երկու խոսք ասենք, թե Շնորհալին ինչպես է օգտագործել իրեն նախորդող նշանավոր դրողների ու բանաստեղծների դրական հնարանքները իր մտքերն ու զգացմունքները գեղարվեստորեն արտահայտելու համար։

«Յիսուս Որդի» պոեմը գրված է Գրիգոր Մագիստրոսի «Հազարտողեան» երկի և Գրիգոր Նարեկացու «Ողբերգության Մատեան»-ի ազդեցության տակ։ Պոեմի ձևական և վիպական մասերում բանաստեղծը հետևել է Մագիստրոսին, նրա օրինակով նյութը վերցրել է ս. Գրքից, չափածոյի վերածել և գրել նույն «ին» հանգով։ Սա իհարկե միայն թեմայի և ձևի նմանություն է։ Նյութը ստեղծագործելիս Շնորհալին դառնում է ինքնուրույն և բանաստեղծական արժեքի տեսակետից «Յիսուս Որդի» պոեմը անհամեմատ բարձր է քան «Հազարտողեան» գրվածքը։ Սակայն այլ կերպ է արտահայտվել Նարեկացու ազդեցությունը։ Վերջինս դրսևորվել է պոեմի թե ձևի և թե բովանդակության բնագավառներում, առանձնապես ուժեղ է այդ ազդեցությունը երկի քնարական մասերում։ Ինչպես Նարեկացու «Մատյանում», այնպես էլ այստեղ գրվածքի գլխավոր էությունն է՝ «խօսք ընդ աստուծոյ»։

Իսկ ինչի՞ մասին է այդ խոսքը։ Մարդը, ըստ այս երկու հռչակավոր գործերի, տակավին Ադամի ժամանակներից մեղապարտ է ու թույլ։ Նա ամեն քայլափոխի չարի դրդմամբ հակվում է դեպի

մեղքը, խախտում է տիրոջ պատվիրանները, անտեսում է հոգեկանն ու երկնայինը և գերի դառնում մարմնին ու աշխարհային կյանքին: Սա, ըստ բանաստեղծի, վտանգավոր է մարդու համար, որովհետև նա իր այդ վարմունքով կզրկվի երկնային կյանքից: Սակայն, ըստ պոեմի մարդու այս ողբերգական դրությունը անելանելի չէ, եթե նա դարձի գա: Բայց չպետք է մոռանալ, բացատրում է Շնորհալին, որ «ներողամիտ», «գթառատ» կոչված հայրը միաժամանակ «ահեղ դատաւոր» է: Դրա համար էլ մարդը պետք է միշտ «ի խորոց սրտի» զղջա, խոսի աստուծո հետ, աղաչի նրան՝ մեղքերից ազատվելու և հավիտենական կյանքին արժանանալու համար: Շնորհալին էլ Նարեկացու պես իրեն ի ծնե համարում է բազմաբովանդակ մեղքերի տեր... Նարեկացին գտնում է, որ եթե կշեռքի մի նժարում դնեն հսկայական Արարատ լեռը, իսկ մյուս նժարում՝ իր մեղքերը, վերջիններն ավելի ծանր կլինեն քան սարը: Կամ՝ եթե ամբողջ աշխարհի անտառներն ու եղեգնուտները դրիչ դառնան, գետերը, լճերն ու ծովերը՝ թանաք, իսկ լայնածավալ դաշտերն էլ՝ թուղթ, դարձյալ բավական չեն բանաստեղծի գործած մեղքերը գրի առնելու և նկարագրելու համար: Ազդվելով մեր մեծ բանաստեղծից, Շնորհալին էլ է հորինում նման չափազանցության հասնող պատկերներ.

Թողուլ ըզմեղս առ քեզ պարտին
Որ քան զաւազ շատ է զծովին...[1]

Իր մեղքերի քանակն ու մեծությունը Նարեկացու նման սա էլ բացցնում է ահավոր չափերի: Եթե Նարեկացին Արարատ լեռան հետ է չափում իր մեղքերի մեծությունը, Շնորհալին էլ Բաբելոնի առասպելական աշտարակն է վերցնում որպես համեմատելի պատկեր.

Նոյնպէս և ես բարձրացուցի
Զպարիսպ մեղաց աշտարակին,
Հըպարտութեամբ շինեալ քարամբք
Ամբարտաւան ամբարդակին...[2]

«Յիսուս Որդի» ողբերգության մեջ էլ մեղքերն այնքան բազմաթիվ են ու տանջող, որ բանաստեղծը մեղքից ժայթքող բոցերի մեջ այրվում է.

---

1 «Բանք չափաւ», էջ 87:
2 Անդ, էջ 18:

*Բայց ես մեղօք յայժմուս կիզիմ,*
*Իբր ըզվառվող այնըր հրատին*
*Եւ բարձրանայ յիս բոց չարին,*
*Յոյժ առաւել քան ըզհնոցին*[1]։

*Իսկ ինչպես ազատվել մինչև երկինք հասնող մեղքի կրակից։ Դրա համար ցող պետք է իջնի երկնքից, որպես կենաց անձրև, զովացնի բոցերի մեջ տոչորվող բանաստեղծի հոգին և շիջի այդ ահեղ հուրը.*

*Ցող քո իջցէ իբր ի հնոցին,*
*Անձրև կենացդ առաւօտին.*
*Զիմ շիջուսցէ զբոց տապին՝*
*Փոխարկեսցէ յամպ ցօղագին*[2]։

*Մեղքերի ծանրությունից ազատվելու համար բազմատեսակ են բանաստեղծի խնդրանքները։ Վերջիններն կարելի է բաժանել երկու խմբի՝ աշխարհիկ և հոգևոր։ Դրանց մի մասը չարի ու մեղքի դեմ մղվող հոգեկան կռվին են վերաբերում, մի մասն էլ՝ աշխարհիկ կյանքին ու կենցաղին։ Չարի դեմ մղվող կռիվներում Շնորհալին իրեն համարում է տկար, անկարող։ Ըստ բանաստեղծի, ծնվելու, աշխարհ գալու օրից՝ մարդը չարի, մեղքի, խավարի ու սատանայի դեմ անընդհատ կռիվների մեջ է։ Այդ կռիվը ահեղ է, որովհետև թշնամին ուժեղ է, իսկ մարդը մենակ, որն առանց աստուծո օգնության անկարող է ու խեղճ։ Ապա ո՞րն է ելքը։*

*Այս անհավասար կռվից հաղթող դուրս գալու համար բանաստեղծը Հիսուսից պահանջում է, որ նա ջարդ ու փշուր անի մարդուն շրջապատող հազարավոր թշնամիներին։*

*Սակայն Շնորհալին թշնամու դեմ միայն հոգեկան կռվից հաղթող դուրս գալով չի բավականանում. նրան քաշում ու հետաքրքրում է նաև իրական կյանքը։ Նա ուզում է լավ լինել և մարմնական կյանքով։ Ահա այստեղից էլ սկսվում են հոգու և մարմնի երկվության ծանր ապրումները, բայց ոչ այնպիսի ցավագին ողբերգությամբ, ինչպես Նարեկացու մոտ։ Մեծ բանաստեղծներից ամեն մեկն հանդես է եկել որպես իր ժամանակի մտքի, խոհերի ու տրամադրությունների արտահայտիչը։ Նարեկացու մոտ խորն ու ցավագին է հոգու և մարմնի կռիվը, ուր նախապատվությունը հոգին է նվաճում։ Թեև այստեղ էլ աշխարհիկ կյանքի պատկերներ, երևույթներ կան, բայց*

---

1 «Բանք չափուս», էջ 57։
2 Անդ, էջ 58։

Նարեկացին երկինք ուղղած իր բազմատեսակ պահանջներով ու աղերսանքներով հոգին է ուզում փրկել. մարմնին, իրական կյանքին վերաբերող խնդրանքներ նա քիչ ունի: Սակայն այդպես չէ Շնորհալու մոտ: Վերջինս իր պոեմի մեջ երկնքից օգնություն է խնդրում նաև աշխարհիկ գործերի հաջողության և մարդու մարմնական ապահովության համար: Շնորհալին իրեն համարում է մի տկար ծիծեռն, կամ անզոր ու անմեղ աղավնի՝ թշնամու դիմաց, իսկ թշնամին չարն է, որ կուրացնում է մարդուն և մոլորեցնում նրան.

*Զաչս ի լուսոյ խաւարեցին,*
*Եւ կուրութեամբ զիս տուժեցին.*
*Յաշխարհ նայել ինձ ուսուցին*
*Եւ ոչ ի լոյսդ աստուածային*[1]:

Բանաստեղծի աչքերը, զգայարանները նրան սովորեցրել են զգալ ու ընկալել աշխարհայինը, բայց միտքը, կամքը չեն ուզում մոռանալ հոգեկանը, երկնայինը: Ահա դրա համար էլ նա ապրում է խոր երկվություն: Անհաստատ է նրա հոգեկան դրությունը աշխարհային կյանքի ալեկոծվող ծովում: Նա ցավում է, որ ոչ թե նրման է ծովափնյա անսասան մի ժայռի, կամ փոթորիկների հետ ճակատող, խոր արմատներ ունեցող հաստաբուն մի ծառի.

*Այլ եմ նման բեկեալ նաւին,*
*Տարաբերեալ միջածովին,*
*Կամ հողմահար խրոխտ խոտին,*
*Ի ժամանակս աշնանային*[2].

Պոեմի ուշագրավ կողմերից մեկն էլ այն է, որ այնտեղ բացի աշխարհիկ-անձնական պահանջներից, տեղ են գտել նաև այնպիսի պատկերներ ու մոտիվներ, որոնք վերաբերում են բնության, մարդասիրության և հայրենասիրության: Իր մտքերն ու զգացմունքները ազդու և գեղեցիկ արտահայտելու համար Շնորհալին պատկերներ ու գույներ է վերցնում իրական կյանքից և բնությունից, որոնց վարպետորեն ու տեղին գործածելը ցույց է տալիս նրա ճանաչողության խորությունը և ջերմ սերը դեպի բնությունն ու կյանքը: Արևը ջերմացնում, կյանք է տալիս մարդուն. աստղերը լուսավորում ու զարդարում են երկինքը. առատ անձրևը, ցողառատ ամպը մայրն են պտղաբերության. երկնի ցողն իբրև վաղոր-

---

1 «Բանք չափաւ», էջ 46:
2 Անդ, էջ 22:

դյան կենարար անձրև զուլուբյուն է տալիս աշխարհին ու տապի մեջ տապակվող բանաստեղծի հոգուն։ Ցողաբեր ամպերը և անձրևը կարող են հանգցնել անգամ դժոխքի ահեղ, հոգեկործան հուրը։ Այսպես են աշխարհային պատկերները։ Առանձնապես վառ երևակայությամբ ու ցնցող պատկերներով է տրված դարձյալ վերջին դատաստանի նկարագիրը։ Ըստ բանաստեղծի աշխարհայացքի, երբ հասնի աշխարհի վերջը, երբ փչի գաբրիելյան աշխարհացունց փողը, «յորժամ դրեալքն կատարին», այդ պահին երկինքն ու երկիրը, ծովն ու ցամաքը կսասանին, տակն ու վրա կլինի աշխարհում ամեն ինչ, որովհետև սկսվում է ահեղ դատաստանը.

*Յորժամ տարերքըս դղրդին,*
*Հաստատուբիւնքըն սասանին.*
*Իբր ըզծովու կոհակք կուտին,*
*Ի յեռանդանըն կաթսային.*
*Լայնատարած դողայ գետին,*
*Ի թանձրութեանց հիմանց շարժին...*
*Լերինք հիմամբըք զարհուրին,*
*Եւ ուժգնակի բախմամբ թընդին,*
*Կարծըր բնութիւնք վիմաց հալին,*
*Եւ ամենայն նիւթք հրդեհին.*
*Մինչ գետք հրեղէնք յորդահոսին*
*Իբր ըզհեղեղ ջուրց ծաւալին,*
*Հողմով հանդերձ սաստիւ հընչեն,*
*Եւ միգախառըն մրոմրոին...*
*Բլուրք լերմամբըք հալեսցին,*
*Եւ դաշտաձև աշխարհք լինին.*
*Ծովու ալիքըն ցամաքին,*
*Եւ կենդանիք նորա նուաղին*[1]։

Ջնայած այս ամենը կերտված է կրոնական նպատակով, բայց ըստ էության մեր աչքի առջև կանգնում են տիեզերքն ու բնությունը՝ իրենց երևակայական երևույթներով և գործողություններով։

Մեր հին գրականության մեջ, դարձյալ կրոնական նպատակով, այլաբանորեն թեկուզ, բայց առաջին անգամ Շնորհալին է այս պոեմում տվել մարդու զգայարանների ու մարմնի զանազան մասերի (աչքերի, լեզվի, ականջների, ատամների, ձեռքերի, որովայնի և այլն) դերն ու նշանակությունը հոգեկան և ֆիզիկական կյանքի հա-

---

1 «Բանք չափաւ», էջ 143—144։

մար և դրանց հետ կապված աշխարհիկ մի շարք խնդրանքներ է անում[1]։

Երևում է, որ Շնորհալին շատ լավ իմացել է նաև մարդակազմություն ու բնագիտություն։ Հավանական է, որ պատահական չի եղել նրա մտերմությունն ու բարեկամությունը ժամանակի հռչակավոր բժիշկ Մխիթար Հերացու հետ։

Բայց որքան էլ նա ձգտում է հավատի, մտքի ու մարմնի մաքրության, որ նրա զգայարաններն ու մարմինը մեղք չգործեն, չտարվին միայն աշխարհային կյանքով, այնուամենայնիվ, չի կարող և խոստովանում է ցավելով, որ անկախ իր կամքից, ընկնում է աշխարհիկ կյանքի հորձանքների մեջ։ Նվ ինքը, որպես սովորական տղամարդ, երբ նայում է գեղեցիկ կանանց դեմքին, նրանց աչքերը նետի պես խոցում են իր սիրտը, բայց այդ մեղսալի հայացքի հարվածները նրան հաճելի ցավ են պատճառում.

Աչօք նայիմ ցանկականին
Ի գեղ դիմաց իգականին.
Ի սիրտս առնում զխոցուած նետին,
Ոչ գիտելով առ իս ձգողին։
Ոչ շատանամ միով խոցին
Ի միանգամ հայեցուածին,
Այլ յօժարիմ բազմագունին,
Մինչ կարևէր խոցուած լինիմ[2]։

Թեև քրիստոնեական վարդապետությունը քարոզում է հեռու մնալ կանացի գայթակղեցնող սիրուց, բանաստեղծն այդ իմանալով հանդերձ, չի կարող հրաժարվել գեղեցիկ կնոջ թեկուզ նետահար անող հայացքից։ Խորն է նրա ապրած ողբերգությունը։ Մի կողմից չի ուզում զրկվել կանացի հայացքից, մյուս կողմից էլ՝ միշտ նրա ականջում հնչում է ավետարանի ձայնը, որ հեռու մնա տարփալի աչքով կնոջը նայելուց, որը նշանակում է՝ շնանալ սրտով։

Եւ այն զի ձայն քո հրամանին,
Միշտ ի յականջս հնչեալ ուժգին,
Թէ որ հայի տարփամամբ ի կին,
Շնացաւ անդէն յիւրում սրտին[3]։

---

1 «Բանք չափաւ» 137—138։
2 Անդ, էջ 68։
3 Անդ։

Այսուամենայնիվ, նա օրեցօր ենթարկվում է մարմնականին, որովհետև նրա ականջները խցել են աշխարհային կյանքի զորեղ ձայները և նա էլ չի կարող անսալ տիրոջ պատվիրանների ձայնը.

Ու իմ խըցեալ ականջս անձին,
Ոչ տամ տեղի և մուտ բանին,
Այլ հակառակ բերիմ նըմին
Ու անհնազանդ պատուիրանին[1].

Ենթարկվելով աշխարհային կյանքի սովորական պահանջներին և լավ դիտակցելով, որ ինքը մեղանչում է երկնի դեմ՝ դրանով ավելի են խորանում երկվության տարամերժ ապրումները։ Հոգեկան այդ ծանր վիճակից դուրս գալու համար Շնորհալին դարձյալ դիմում է Հիսուս Որդուն և պահանջում՝ մաքրել, առողջացնել աշխարհային ախտերով տառապող իր զգայարանները, մարմնի մասերը, սիրտն ու հոգին, որոնք աշխարհն ու կյանքը չեն զգում ու ընկալում այնպես, ինչպես քրիստոնեական կրոնն ու տասնաբանյա պատվիրանները են պահանջում։ Նա պատրաստ է աշխարհային ախտերից բժշկվելու, ուղղվելու, թեկուզ տիրոջ կողմից դանակոծվելու միջոցով.

Բեկմամբ քարձիցն և յօդուածին,
Ջիմըս պընդեա յողդողդ մարմին,
Ու խիստ դանիւ դաւազանին
Ըղխատուիւն կաղղեա սըրտին[2]։

Սակայն բանաստեղծը հոգով անքակտելի կերպով է կապված իրական կյանքի հետ։ Շնորհալին մոտիկից լավ ճանաչել է նաև երկրագործ մարդու կյանքն ու աշխատանքը, որոնց հետ համեմատում է իր գործերը կամ հակադրում։ Հողագործի ու մաճկալի կյանքից վերցրած պատկերները մեր բանաստեղծության մեջ այդ ժամանակ միանգամայն նորություն էին ու ժողովրդասիրական մի երևույթ։

Մաճկալը,—ասում է բանաստեղծը,—երբ մաճը բռնած վարում է արտը, նա հետ չի նայում, այլ միշտ առաջը բացվող ակոսին է աչքը՝ իր գործը ուղիղ և ճիշտ կատարելու համար, բայց ինքը՝ ընդհակառակը, ոչ թե առաջ՝ այսինքն՝ դեպի երկինքն է նայում, այլ ներքև, դեպի երկիրը հետ տանող ճանապարհը։

---

1 «Բանք չափաւ», էջ 70։
2 Անդ, էջ 138։

Ցավով է նկարագրում, որ չարի դրդմամբ ինքը հրաժարվել է երկնային մի հոգեկան խնջույքից, ահա թե ինչու.

Վասն աշխարհի ագարակին
Եւ վասն եզանց զգայականին,
Եւ ընդ կընոջ հեշտասիրին՝
Որով կապեալ կամ ի սոսին...[1]

Մի այլ տեղ էլ, համեմատությունը վերցնելով դարձյալ գյուղական կյանքից, իրեն նմանեցնում է մի հիմար մեծատան, որն ունեցել է պարարտ, բարեբեր արտեր, սակայն փոխանակ բարի, աղնիվ սերմերի, աճեցրել է վատը՝ որոմը, ուստի խնդրում է տիրոջից, որ իր հատու մանգաղով կտրի այդ դառնաբեր չար բույսերը:

Վերջապես այս կրոնական պոեմում արտահայտվել են նաև հայրենասիրական գաղափարներ:

Հայրենի հողից հեռու է բանաստեղծը: Որդեկորույս ծնողի նման «տրտմագին սուգ» է ապրում: Աշխարհով մեկ ցրված պանդուխտ հայերը թափառում են օտար հողերի վրա: Այս վիճակից ազատվելու համար նա խնդրում է երկնից, որ ինչպես իր ժամանակին եգիպտաբնակ հին հրեաները վերադարձան Պաղեստին, այնպես էլ Քող տարագիր բոլոր հայերը վերադառնան իրենց հայրենի երկիրը.

Ընդժդեհացեալս մարմնով ի սմին,
Յօտարոտի կեանս երկրային,
Փոփոխեացես ի հայրենին,
Որպէս զորդիսն Աբրահամին[2]:

Իսկ երբ բոլոր հայերը վերադառնան հայրենիք, այս անգամ էլ խնդրվում է նրանց համար առատ ու բարօր կյանք:

Հայրենասիրական գաղափարներով դաստիարակելու տեսակետից բնորոշ է Մակարայեցիների օրինակը.

Որք ի վերա հարցն օրինին.
Մարմնով մեռան և ոչ լուծին...[3]

«Յիսուս Որդի» պոեմում վերոհիշյալ մոտիվների հետ առընչվող և դրանց զուգրնթաց, թեև քիչ, բայց շոշափվել են նաև հասարակական կյանքին վերաբերող ժամանակակից խնդիրներ: Ինչպես «Քուղթ ընդհանրականում», այնպես էլ այստեղ, Շնորհալին զգու-

---

1 «Բանք չափաւ», էջ 89:
2 Անդ, էջ 19:
3 Անդ, էջ 59:

*շացնում է երկրի հարուստներին, որ չտարվեն ագահության ախտով, և դիրացնեն իրենց մարմինը՝ կորցնելով մարդկային առաքինությունն ու խիղճը։*

*Հարուստներից հետո բանաստեղծը սպառնում է թագավորներին, իշխանավորներին և բոլոր նրանց, ովքեր զրկում ու շահագործում են շինականին, հասարակ մարդկանց։ Կատարված բոլոր անարդարությունների համար սրանք պատասխան պիտի տան ահեղ դատաստանի օրը, որովհետև*

*Անդ թագաւորք ոչ երևին,*
*Եւ ոչ իշխանըք պատուեսցին...*
*Եւ մեծատունք ունայնասցին...*
*Անդ զըրկողաց կըշիռք դընին,*
*Որչափ զըրկեացըն պահանջին...*[1]

*Այսպիսով, թեև կրոնական ոգով, բայց Շնորհալին իր արձակ թե չափածո գրվածքներում, երիտասարդ, թե հասակն առած շրջանում, միշտ էլ ծառացել է ֆեոդալական հասարակարգում տեղի ունեցած սոցիալական անարդարությունների և արատավոր կողմերի դեմ. մի հանգամանք, որը սերտ կապված է նրա առանձնապես մարդասիրական և հայրենասիրական դաղափարների ու աշխարհայացքի հետ։*

*Խոշոր նորություն էր իր ժամանակին այսպիսի մի մեծ սյուժե ունեցող գործի չափածո ձևը, որը դեռևս ընդունելի չէր։ «Յիսուս Որդու» հիշատակարանում էլ Շնորհալին դիմում է ինքնապաշտպանության։ Եթե «Բան հավատոյ»-ի ձևի դեմ կարող էին բողոքել, որ այն չափածո է, արտասովոր, ապա «Յիսուս Որդի» պոեմի նկատմամբ Շնորհալին վախենում է, թե նույն հետամնաց «անփակ բերան» հոգևորականները կարող են իրեն մեղադրել, որ այս գործը «արտաքին» հեթանոսական ձև ունի և նման է Հոմերոսյան կամ Աֆրոդիտյան երգերին։*

*Դրա համար էլ զգուշացնում է ընթերցողներին այսպես.*

*Եւ մի՛ ի յայս ոք ախտանայ,*
*Թէ չափաւոր բանիւ է սայ,*
*Եւ արտաքին կարծի նըմայ,*
*Որպէս և դերգն Աֆրոդիտեայ...*[2]

1 «Բանք չափաւ», էջ 147—148։

2 Անդ, էջ 163։

Նարեկացու պես Շնորհալին էլ է համակված մարդասիրության գաղափարներով, մարդու հոգսերով, ներկայով ու ապագայով։ Նա էլ իր գործը համարում է համամարդկային սեփականություն, որը գրված է բոլորի համար և որպես հավիտենական մի կոթող՝ միշտ պիտի ընթերցվի և դրա հետ հիշվի իր անունը։ Շատ ընդհանուր բան կա Նարեկացու և Շնորհալու այս երկու մեծ պոեմների միջև։ Առաջինն իր «Ողբերգության Մատեանը» այսպես է գնահատել.

Իսկ ինձ եղիցի պատգամս այս բանիւ,
Արձան փորագրեալ ամենևին անեղծանելի,
Որ փոխանակ իմոյ եղկելւոյս անձին մահացուի՝
Անդադար հնչմամբ հեծութեան լալոյ
Առանց լռելոյ միշտ աղաղակէ[1]։

Նույն կերպ է նայել իր «Յիսուս Որդի» պոեմին և Ներսես Շնորհալին.

...Միշտ յիշատակ սա եղիցի
Այժմ և յաւուրն ապագայի...
Նաև հանուրց ամենայնի,
Մերձակայից և ոչք հեռի...[2]

Սակայն պետք է ասել, որ հատկապես այս գործում Շնորհալին Նարեկացուն հետևելով հանդերձ՝ ինքնուրույն է, անհատական, որով և պոեմը ձևով ու ոճով տարբերվում է Նարեկացու «Մատեանից»։ Այդ տարբերությունը գեղեցիկ համեմատություններով պրոֆ. Մանուկ Աբեղյանը բնորոշել է այսպես.

«...Ներսես Շնորհալու այս բանաստեղծության մեջ ողբերգը մեղմ է, տխուր և քնքուշ, ամենայն ինչ հանդարտ է ու փափուկ։ Ոչ վերամբարձ սլացք ու թռիչք, ոչ սրտի այրուք ու ճենճերում և ոչ տոչորող ու կրակող ղջում։ ...Ներսես Շնորհալու մոտ ևս զգացումների զեղումն անկեղծ է... բայց... չափավորության սահմանից չի անցնում... Շնորհալին նման է մի բարեկիրթ մարդու, որ իրեն պահել գիտե, մինչդեռ Նարեկացին հիշեցնում է մի բնական մարդ, որի ներքինն անդուսափ է և որ անմիջականորեն, առանց քաշվելու արտահայտում է իր բոնկումները և հեկեկալով արտասվում։ Նա համեմատվում է մի պղտոր հեղեղի, որ գրդանք տալով՝ ալիք ալիքի հետևից քշում է առաջ... մինչդեռ Շնորհալին նման է մի ականակիտ, վճիտ աղբերակի, որ հանդարտ սահում է կարկաչելով... Բայց

---

1 Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 168։

2 «Բանք չափաւ», էջ 166։

այսպիսի զանազանությամբ հանդերձ՝ Շնորհալու այս երկը պակաս ազդու չէ, քան Նարեկացունը. դա մի հեծություն, մի հառաչ է, մեղմ ու հեզիկ, և ոչ հեծկլտանք ու թառանչ, բուռն ու սաստիկ»[1]։

* * *

Դավանաբանական պոեմների հետ որոշ չափով առնչվում է Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» կրոնական հանրահայտ աղոթքը։ Սա մի արտաբուխ արձակ գրվածք է՝ բաղկացած քսանչորս տնից՝ օրվա քսանչորս ժամերի համեմատ։ Գրված է սահուն ու երաժշտական այնպիսի մի գեղեցիկ ոճով, որ կարծես արձակ բանաստեղծություն կամ ազատ ոտանավոր լինի։ Այստեղ համառոտ, բայց հիմնական գծերով ամփոփված է քրիստոնեական վարդապետությունը։ Գրվածքի գլխավոր նպատակն է պահպանել կենդանի հարաբերություն աստուծո և մարդու միջև։ Այս աղոթքը հիմնականում նման է Հանդանակ Նիկիականին («Հաւատամք»-ին), բայց այն տարբերությամբ, որ այստեղ աղոթողը ոչ միայն խոստովանում և ընդունում է դավանաբանական և հատկապես երրորդության գաղափարները, այլև մի առ մի թվում է իր անձնական պակասությունները, գործած մեղքերը, կարիքն ու ցանկությունները և այս բոլորի համար խնդրում է աստուծո անմիջական օգնությունը՝ օրհնավոր, աննայթաք կյանքով երկրի վրա ապրելու համար։

Իր պարզ լեզվով ու արվեստով, մատչելի բովանդակությամբ «Հաւատով խոստովանիմ» գրվածքը Շնորհալու այն գործերից է, որ դուրս է եկել ազգային սահմաններից, թարգմանվել է Եվրոպայի և Ասիայի ժողովուրդների երեսունվեց լեզվով՝ այն էլ մի քանի անգամ։

## 3. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՈՏԱՆԱՎՈՐՆԵՐ

Պահլավունիները նշանավոր շատ մարդիկ են տվել մեր երկրի պետական, քաղաքական և կուլտուրական ասպարեզների համար։ Այդ տոհմը աչքի է ընկնում ոչ միայն ռազմական ու պետական գործերում, այլև գիտության, արվեստի, լուսավորության և մանկավարժության բնագավառներում։ Սրանց մեջ իր գիտությամբ և մանկավարժական գործունեությամբ նշանավոր է Գրիգոր Մագիստրոսը։

Կրթական-մանկավարժական աշխատանքներում էլ Ներսես

---

1 Մ ա ն ո ւ կ Ա բ ե ղ յ ա ն, Հայոց հին գրականության պատմություն, Բ գիրք, էջ 99։

Շնորհալին Գրիգոր Մագիստրոսի դրած գործի շարունակողն է եղել: Մագիստրոսը մանկավարժական-մեթոդական խոշոր նորություն մտցրեց լուսավորության ասպարեզում, առանձնապես ուսման ծրագրերում: Նախկին անձուկ, վանական ծրագրերը ընդլայնեց, հարստացրեց աշխարհիկ ու դիտական առարկաներով[1]:

Կազմակերպորեն, հրահանգչական և մեթոդական ցուցմունքներով նա առաջ շարժեց ու բարեփոխեց ուսուցման գործը, իսկ Ներսես Շնորհալին աշխատեց գործնականում իրականացնել Մագիստրոսի մտքերը և միաժամանակ առաջ քաշեց դաստիարակչական-բարոյակրթական մի շարք խնդիրներ: Շնորհալին հանդես է գալիս և որպես առաջին հայ մանկական գրող՝ նպատակ ունենալով սովորեցնել կոնկրետ նյութի վրա՝ շաղկապելով ուսուցման ու դաստիարակության հարցերը: Առաջին անգամ իր մանկավարժական գրվածքներով մեր գրականության մեջ երևում է և առաջին հայ մանկավարժ բանաստեղծը, որն իր մի շարք բովանդակալից ու հանրամատչելի չափածո գրվածքներով հիմք է դնում մեր մանկական գրականությանը:

Մագիստրոսի կազմած ուսման ծրագիրը, հիրավի նորություններով, առաջադեմ մտքերով և հումանիզմով էր հագեցված, որը որոշ չափով արտացոլում էր հայ վերածննդության գաղափարները: Սակայն այդ ծրագրի աչքի ընկնող պակասությունն այն էր, որ այնտեղ տեղ էին գտել միայն ուսուցման, մեթոդական և գիտություն ձեռք բերելու խնդիրները, իսկ դաստիարակության հարցերը աչքաթող էին արված: Ահա այս թերի կողմն էր, որ Շնորհալին գալիս էր լրացնելու իր մանկավարժական գրվածքներով, Սողոմոնի գործերի վերաբերյալ գրված փոքրիկ, բայց իմաստալից խրատական ոտանավորներով և ժողովրդական ոգով ու լեզվով կառուցված բազմաթիվ հանելուկներով: Թեպետ նա պրոֆեսիոնալ դասախոս ու ճարտասան չէր, ինչպես Մագիստրոսը, բայց իր բազմատեսակ արձակ ու չափածո ուսուցողական բարոյա-կրթական գրվածքներով մեծ գործ կատարեց ուսման և մանավանդ դաստիարակության բնագավառներում:

Ուսումնա-դաստիարակչական հարցերը Շնորհալին արծարծել է այս կամ այն առիթով գրեթե իր բոլոր գործերում՝ կապված հայ ժողովրդի XII դարում ապրած սոցիալական, քաղաքական դրության հետ, արձագանքելով ժամանակի ոգուն և աշխարհիկ տրամադրու-

---

[1] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, հմ Թուղթ, էջ 105—107:

յիշյուններին: Չափազանց դժվար էր այդ ժամանակներում թե՛ Կիլիկիայում և թե՛ բուն Հայաստանում կանոնավոր զբաղվել կրթության և ուսման գործերով:

Օտար թշնամիներից հալածված հայ մարդը, ըստ Շնորհալու, նման է եղել որսորդի կողմից հետապնդված անօգնական մի որսի: Այսպիսի անապահով և կարիքավոր կյանքի պայմաններում թեպետ շատ դժվար է եղել կազմակերպել ուսուցման և դաստիարակության աշխատանքները, սակայն Շնորհալին երբեք չի հուսահատվել, այլամեն կերպ ձգտել է ծավալել ուսուցանելու գործը:

«Ու քաղաք թագաւորական և բազմաժողով ոչ գոյ ազգի մերում,—ասում է նա,—որպէսզի անդանոր նստելով յԱթոռ հայրապետութեան և վարդապետութեան՝ ուսուցանէիմ ժողովրդեան մերում... Այլ եմք իբրև զայծեամն յորսորդաց և ի շանց փախուցեալք ի քարանձաւս յայս բնակելով, յորում ոչ և մարմնական հարկաւոր պիտոյիւք շատացեալք ի գիւղից, կամ յագարակաց, յորոց ունիմք և ոչ մի»[1]:

Այնուամենայնիվ, ցրված հայ ժողովրդին Շնորհալին մի կերպ սովորեցնում է հեռվից՝ դրավոր խոսքով, որին այնքան մեծ նշանակություն էր տալիս ինքը:

Շնորհալու մանկավարժական բանաստեղծություններում ուսումը ու իրական կյանքի բարոյակրթությունը սերտ շաղկապված են և հետապնդում են մի գլխավոր նպատակ. այն է՝ զարգացնել մարդու զգացմունքները, միտքը և կամքը՝ տալով դրանց ցանկալի ուղղություն՝ ազգին և երկրին օգտակար լինելու համար: Շնորհալին չի սահմանափակվում միայն մանուկների և երիտասարդների կրթության գործի շրջանակներում: Նա զբաղվում է նաև հասակավորների, ծերերի և նույնիսկ կանանց[2] դաստիարակելու գործով: Նա պարտք է համարում իր «դուղնաքեայ բանիս» ծառայել ժողովրդին, սովորեցնել բոլորին «հասարակաբար»:

Ուսուցման և դաստիարակության հիմնական նպատակն է դեղեցկացնել մարդու ներքինը՝ հոգեկանը, որովհետև իսկական առաքինի մարդը նա է, որը զուգված է հոգով և ոչ թե միայն արտաքինով:

---

1 «Թուղթ ընդհանրականաւ», էջ 6—7:

2 «Թուղթ ընդհանրականաւմ» և Արևորդյաց ազանդի մասին գրված թղթում, ինչպես տեսանք, արծարծվել են սնոտիապաշտության դեմ պայքարելու և կանանց դաստիարակելու խնդիրները:

«Աստացուք և յաղագս ներքին մարդոյն, որ և օրինակ է արտաքնոյն զարդ՝ առին հոգևոր պայծառութեանն զարդու»[1]:

Ահա դրա համար էլ նա առաջարկում է բոլոր հասակի մարդկանց՝

«Վասն որոյ զտեսանելիս և զլսելիս և զիեղու և զամենայն անդամս խրատեցեք ի բարիս շարժել, և ի չարիս անշարժ մնալ, և ողջախոհութեամբ և արբուբեամբ յաշխարհական ցանկութեանց և զբօսանաց զմիտսն ամփոփելով...»[2]:

* * *

Այբուբենի տառերի կարգով Շնորհալին գրել է մանկավարժական երեք խոշոր բանաստեղծություն հետևյալ վերնագրերով.

ա. «Բան հաւատոյ վասն անեղին և եղելոց բարառնաբար ի դիմաց հայկական տառից չափարերմամբ ոգեալ ի Ներսէսէ»:

բ. «Բան ներտաղական ի խրատ ոգւոց համայնից ի դիմաց մերոյին տառից տանց իւրաքանչիւրան քառից»:

գ. «Խրատ ուսումնականաց մանկանց ի դիմաց այբևբենից տառից ոտանաւոր տաղիւ չափոյ»:

«Բան հաւատոյ» բերթվածը, ինչպես հեղինակն է ասում, գրված է «բարառնաբար»: Այստեղ այբուբենի ամեն մի տառը դիմառնաբար քարոզում է գլխավորապես դավանաբանական և բարոյախրատական որևէ դաղափար կամ խրատ: Թեև այս գործը վերնագրված է «Բան հաւատոյ», սակայն բանաստեղծության բովանդակությունից երևում է, որ հեղինակը հավատից ու դավանանքից պակաս կարևորություն չի տվել իր ժամանակի ընթերցասեր մարդկանց ճաշակն ու պահանջները բավարարելու գործին: Այբուբենի ամեն մի տառով գրել է մի քառյակ: Այդ քառյակներում համառոտ ու հիմնական գծերով ամփոփված է հին ու նոր կտակարանների բովանդակությունը:

Թեև «Բան հաւատոյ» գրվածքը սխեմատիկ է և՝ արվեստով էլ համեմատաբար թույլ, սակայն արժեքավոր է այն տեսակետից, որ գրված է ոչ թե եկեղեցու կամ կրոնավորների համար, այլ հեղինակն հետապնդել է գործնական-ուսուցողական նպատակ, նկատի ունենալով բոլոր տեսակի ընթերցողներին՝ նրանց որոշ գիտելիքներ տալու, բավականություն և ուրախություն պատճառելու համար: Գրվածքի վերջում կա մի փոքրիկ վերջաբան, որտեղ բանաստեղծն

---

1 Անդ, էջ 54:

2 Անդ, էջ 55:

ամփոփելով իր գործը, հայտնում է նաև թե ո՞ւմ համար և ի՞նչ նպատակով է այն գրել.

Նորոգ, մանկունք իմաստութեան,
Տըւաք զայս բան ձեզ խրախութեան,
Երկնատրացըն պիտութեան
Եւ համայնից եղելութեան[1]:

Երկրորդ բանաստեղծությունը՝ «Խրատ ուսումնականաց մանկանց» վերնագրով, գրված է բացառապես մանուկների համար, որը, որպես այդպիսին, առաջին գործն է մեր մանկական գրականության պատմության մեջ: Սա փաստորեն մի մանկավարժական պոեմ է, որի միջոցով հեղինակը կամենում է սովորեցնել մայրենի լեզվի այբուբենը և այնտեղ դնում է բարոյակրթական և դաստիարակչական նշանակություն ունեցող խնդիրներ: Այդ խրատներում նկատի է առնվել ոչ միայն ժամանակի ու մարդկանց պահանջները, այլև մանուկների տարիքը, կարողություններն ու ճաշակը: Այստեղ Շնորհալին հանդես է եկել որպես հոգեբան-մանկավարժ: Նա ուզում է կրթության ու դաստիարակության միջոցով վերացնել ֆեոդալական հասարակարգի բարքերում ու կենցաղում եղած արատավոր կողմերը, որոնք չարիք է համարում մարդու և հասարակության համար: Նա տեսնում է այդ կարգերի ու նրա տնտեսաձևի հետ սերտ կապված հասարակական անարդարությունները, շահագործումն ու ագահությունը, բարոյազուրկ բարքերը, տգիտությունն ու աղքատությունը:

Գրվածքի հիմնական նպատակն է մանուկների մեջ սեր առաջացնել դեպի ուսումն ու գիտությունը, աշխատասիրությունն ու առաքինությունը: Բանաստեղծության ամեն մի քառյակը սկսվում է այբուբենի մի տառով և բովանդակում է մի խրատ՝ տրված դյուրըմբռնելի և հետաքրքիր ձևով: Օրինակ՝ «Գ» տառը բերում է գիտության այն գանձը, որը շատ ավելի պատվական է քան ոսկին, իսկ «Դ» տառը բաց է անում գիտության և իմաստության տաճարի դռները, որտեղից պիտի ներս մտնեն մանուկները և սկսեն.

Ուսմամբ գրոց զբաղճանալ,
Իմաստութեամբ ուրախանալ[2]:

Ապա բացատրություն է տրվում մանուկներին, որ ուսում ձեռք բերելն այնքան էլ հեշտ չէ. պետք է տքնաջան աշխատել և երբեք

---

1 «Բանք չափաւ», էջ 321:
2 Անդ, էջ 342:

չծուլանալ։ Ուսման մեջ պետք է լինել համբերող, տոկուն, թեկուզ ծեծ ուտելու գնով, ինչպես որ ոսկին քուրայումն է ծեծվելով մաքրվում.

Ժուժկալ լինել, ասէ յուսումն,
Թէ և ապտակ առնուս յարբումն,
Հայեաց յոսկին՝ յոր ի քրայումն,
Զի ծեծելով առնի զմաքրումն[1]։

Ուսումնական մանուկները պետք է հեռու մնան անկիրթ, անխրատ մարդկանցից, որպեսզի նրանցից վատ բաներ ու հայհոյանք չսովորեն։

Սովորողները պետք է չնախանձեն ոչ սովորող, անմիտ, թրև եկող մանուկներին, որոնք ազատ են բոլոր տեսակի դատարկ խաղերի համար։ Ուսումնական մանուկը պիտի ձգտի նմանվել առաքինի, աշխատասեր մարդկանց և իմաստուններին, զբաղվի ընթերցանությամբ, կապվի գրքերի հետ, օգտվի գիտությունից, որը նման է անսահման ծովի և որտեղով ընթանում է գիտունը իր հոգու առագաստով.

Ծովու նման, ասէ, գիմաստ,
Որ ի յերկնից իջեալ է աստ.
Բաց ըզհոգւոյ քոյ առագաստ՝
Սրծել մրտօքըդ լեր պատրաստ[2]։

Ուսում ու գիտություն սիրելու խրատներից հետո Շնորհալին առաջ է քաշում դաստիարակչական մի քանի խնդիրներ, որոնք բնորոշ են XII դարի և ընդհանրապես ֆեոդալական հասարակարգի համար։ Նկատի ունենալով կյանքի դառնությունները, չարքաշ ապրուստը և մանավանդ պանդխտությունը, որ սովորական դժբախտություն է եղել հայ ժողովրդի համար, մանկավարժ բանաստեղծը արիություն ու տոկունություն է ներշնչում մանուկներին, որ այդ դառնությունների առաջ չընկճվեն, չվախենան, այլ դիմանան ու ւսանեն համբերությամբ.

Զայն չարշարանաց, ասէ, համբեր.
Պանդրխտութեան ժուժկալ դու լեր...[3]։

---

1 «Բանք չափաւ», էջ 343։
2 Անդ, էջ 344։
3 Անդ, էջ 347։

Այդ ամենի հետ միաժամանակ, ուսումնական մանուկը պետք է լինի աշխույժ և աշխատասեր.

Մի՛ ծույլ կենար և դեգերած,
Մի՛ սիրեր զքուն դանդաղանաց[1]։

Ապա պետք է լինել զուսպ և սակավապետ։ Մեծ արատ է որկրամոլությունը և մանավանդ հարբեցողությունը, դրա համար էլ տակավին մանուկ հասակից պիտի դաստիարակել երեխաներին, որ հեռու մնան այդ աղետաբեր ախտերից։

Վայրիվերո շատախոսությունը, անկարգ, բարձրաձայն ծիծաղելը և անտեղի վիճաբանությունները նույնպես առաքինությունը արատավորող պակասություններ են, որոնցից պետք է խուսափել։

Բայց որքան մարդ կրթված ու շնորհքով լինի, այնքան էլ պետք է համեստ ու ընկերաբար վարվի իրենից հոգեպես ցած գտնվող հասարակ մարդկանց հետ և լինի մարդասեր։ Այս է պոեմի վերջին խրատը.

Ցոյն ցածուն, ասէ, խոնարհամիտ
Լեր առ ընկերն և բարեմիտ.
Նւ ոչ հրպարտ բարուք և բիրտ,
Թէ և շընորհ ունիս յոգիդ[2]։

* * *

«Ի խրատ ոգւոց համայնից» վերնագրով բանաստեղծությունը կազմված է ությակներից և գրված է բոլոր հասակի մարդկանց համար։

Այբուբենի ամեն մի տառով գրված ութ տողը բովանդակում է մի խրատ. հետևաբար այս պոեմն երկու անգամ ծավալով մեծ է քան նախորդ երկու բանաստեղծությունները։

Նախորդ խրատներում գլխավոր շեշտը դրված էր ուսում սիրելու և դիտություն ձեռք բերելու խնդիրների վրա, իսկ այստեղ գլխավորը դաստիարակչական հարցերն են և դրված այնպիսի ձևով ու խորությամբ, որոնք տեղ-տեղ բարձրանում, հասնում են ժամանակի սոցիալական կյանքի արատները քննադատելու և մերկացնելու մակարդակին։

Արդ, որոնք են սոցիալական այդ արատները, որոնցից պետք է հեռու մնան մանուկները, պատանիները, երիտասարդները և

---

1 «Բանք չափաւ», էջ 347։
2 Անդ, էջ 348։

նույնիսկ ծերերը։ Ամենից առաջ Շնորհալին զգուշացնում է «համայնից» մարդկանց, որ բոլոր չարիքների արմատը կամ աղբյուրը հարստության եռևից ընկնելն ու ագահությունն է։ Ահա թե ինչ է ասում այդ մասին «Ջ» տառի ուիյակը.

Ջայն չար ասէ զագահութիւն,
Ջի շատ մեղաց է ծնելութիւն.
Ջի ի նմանէ սպանութիւն,
Նա է աւար և գերութիւն.
Անտի սկսեալ է գողութիւն
Եւ անիրաւ դատողութիւն,
Ի յայնմանէ վաշխառութիւն,
Եւ ըզմիմեանս ատելութիւն[1]։

Իսկ ովքե՞ր են այդ ագահները, որոնցից սկսվում են սոցիալական չարիքներն ու անարդարությունները։ Դրանք տերերն ու իշխաններն են, թագավորներն ու բռնակալները, որոնց առաջարկում է Շնորհալին, որ փոխանակ գանձ հավաքելու և անիրավություններ անելու, զբաղվեն ազգօգուտ, բարի գործերով, հետևեն առաքինի և քաջ մարդկանց օրինակին, որոնք իրենց կյանքը չեն խնայում ժողովրդի ու նրա պետության համար.

Տիւնըն տէրանց և իշխանաց
Խրատ ընծայէ իմաստութեանց
Թէ մի՛ սիրէք ժողովել գանձ,
Այլ ըզժողով բարի արանց.
Ըզմըտերիմսըն տէրութեանց
Եւ զհետևողսըն քաջութեանց,
Որ վասն ձեր ի մահ անձանց։
Կամաւ դիմեն որպէս ի գանձ[2]։

Ապա խոսքը դարձնելով թագավորներին, զգուշացնում է, որ եթե նրանց հաջողվել է տիրանալ արքունական թագին, այդ երբեք իրավունք չի տալիս պաշտոնը համարել սեփական և ամբարտավանանալ.

Թոյն թագ, ասէ, արքունական,
Կամ պետութիւն իշխանական.
Թէ ընկալցիս դու ըզմարդկան,
Մի՛ համարիր քեզ սեփհական,
Այլ ըստ հարանց քոց, որ անցան,

---

1 «Բանք չափաւք», էջ 335։
2 Անդ, էջ 337—338

Ծանիր ըզքեզ ծաղկի նըման.
Եւ մի՛ լինիր ամբարտաւան,
Այլ քաղցր և հեզ խոնարհական[1]։

Իսկ իշխանություն ունեցողներն էլ ի չարը չպիտի գործ դնեն իրենց իրավունքները՝ խեղճերին ու աղքատներին տանջելու ըստ իրենց քմահաճույքի։ Այդպիսի անիրավներին Շնորհալին ուղում է սանձահարել վերջին դատաստանի սպառնալիքով։

Տերերի ու իշխանների անիրավությունների առաջն առնելու նպատակով դրված խրատներից հետո, «Մ» տառի ուիյակով զգուշացնում է, որ մարդիկ հեռու մնան չար գործերից ու մեղքից և մոնավանդ՝ անմաքուր կենցաղից.

Մենն մերժել ի բաց, ասէ, ի քէն,
Զաղտըս մեղաց՝ որ ի չարէն,
Զպոռնկականն և զայլն ամեն,
Որով զաղտնի նետիւք խոցէն[2]։

«Ն» տառը խրատում է, որ մարդը միշտ բարի գործ կատարելու, ուրիշին բարի ցանկանալու մասին պիտի մտածի։ Պետք է միշտ զգոն լինել ճշմարտության ձայնն անսալու համար։

Առհասարակ այս խրատներում Շնորհալու դաստիարակչական և բարոյակրթական հայացքները դուրս են գալիս մանկավարժական շրջաններից և կրում սոցիալական բնույթ։

Խրատներ էլ կան, որոնք վերաբերում են մարդկային անցավոր կյանքին։ Կյանքի և մահվան մոմենտներն էլ է օգտագործել Շնորհալին՝ աշխարհի իշխանավորներին զսպելու և սանձահարելու համար։ Տերերը, իշխաններն ու թագավորները, անօրեն և անխիղճ գործերից պիտի խուսափեն, որովհետև, ասում է խրատներից մեկը, բոլոր մարդիկ հավասար են ծնվում և հավասար էլ մեռնում։ Նրանք մերկ գալիս են աշխարհ, մերկ էլ գնում, էլ ի՞նչ իմաստ ունի հարստություն դիզելու համար շահի ու ագահության հետևից ընկնելը, ուրիշներին հարստահարելն ու զրկելը։ Բարոյախոս բանաստեղծը բոլոր իշխողներին և տերերին անիրավություններից ու անարդար գործերից հեռու պահելու նպատակով այստեղ էլ սպառնում է կամ աշխարհիկ մահվան երկյուղով և կամ դժոխքով։

Սակայն «Ի խրատ համայնից» մանկավարժական բանաստեղծությունը միայն չոր ու ցամաք վերացական խրատների շարք չէ։

---

1 «Բանք չափաւ», էջ 329—330։

2 Անդ, էջ 333։

Նախ՝ բոլոր օրինակներն ու փաստերը վերցված են ժամանակի հասարակական կյանքից ու կենցաղից և երկրորդ՝ կան շատ խրատներ, որոնք դրսևորվել են գեղարվեստորեն և գաղափարները մատուցվում են ընթերցողին գեղեցիկ պատկերներով ու համեմատություններով: Խրատներից մեկում, որն սկսվում է «Զ» տառով, բանաստեղծը մարդու մարմինը նմանեցնում է կառքին լծված ձիերի, իսկ հոգին՝ կառապանի, որի ձեռքին է գտնվում ձիերին ուղղություն ցույց տվող և զսպող սանձը: Եթե հոգին լավ կառավար է, գնում է ուղիղ և անմոլոր ճանապարհով, անվտանգ կսուրա առաջ, մինչև տեղ հասնելը.

Զայն ձիոյ ըզքեզ օրինակով
Զմարմինդ ի կառըս լծելով,
Եւ կառավար ուղղիչ սանձով
Զհոգիդ, ասէ, անդ նըստելով...
Յայնժամ յառնելն քո մարմնով,
Դու առաջ նորա թըռչիս ամբով[1]:

Մի ուրիշ տեղ էլ աշխարհային կյանքը նմանեցնում է ալեհույզ, փրփրադեզ ծովի, իսկ մարդը՝ նավի: Այստեղ էլ նավավարը մարդու հոգին է, որն իր հզոր բազուկներով պիտի վարի այդ նավը՝ ընդդեմ բոլոր փոթորիկների ու արհավիրքների դեպի գիտությունը՝ դեպի հանգիստ ու խաղաղ նավակայանը.

Ղատն ղեկ առնուլ քեզեն ճարտար,
Նաւել յայս ծով տայ հրմտաբար.
Ասէ, յուղել ալեացն յերկար,
Ընդդէմ կացցես հրգօրաբար.
Վարեա ըզհոգւոյդ նաւ անդադար,
Հոգւոյն թևովք առ ի հանճար.
Զի հասուցես անդորրաբար,
Յանքոյթ տեղին խաղաղաբար[2]:

Շնորհալին միայն գեղեցիկ խոսքով չի քարոզել ուսումնասիրություն ու առաքինություն: Իր ամբողջ գործունեությամբ ու կյանքով, գործնականում նա կենդանի օրինակ է հանդիսացել այն գաղափարների, որոնք իր զորեղ և հետաքրքիր խոսքով ուզեցել է ներշնչել մանուկներին ու պատանիներին, երիտասարդներին ու ծերերին, հասարակ ռամիկ աշխատավորներին, իշխաններին ու թագավորներին:

---

1 Աբանք չափաւ, էջ 332:
2 Անդ, էջ 333:

Մանկավարժական-ուսուցողական տեսակին են պատկանում բիբլիական «Սողոմոն իմաստուն» արքային նվիրված յոթ փոքրիկ ոտանավորներ։ Թեև սրանք փոքրիկ բաներ են, բայց հետաքրքրական են, մանավանդ, որ մինչև օրս դրանց մասին երբեք չի խոսվել։

Ինչպես երկու հարյուր տարի առաջ Գրիգոր Նարեկացուն, այնպես էլ XII դարում Ներսես Շնորհալուն շատ է հետաքրքրել Սողոմոնի «Երգ-երգոց»-ը և առակները, որոնց էությունն ու աշխարհիկ ոգին նա ամեն կերպ աշխատել է համաձայնեցնել քրիստոնեության գաղափարախոսության հետ։

Սողոմոնյան շարքին պատկանող այս փոքրիկ ոտանավորները ուշադրության արժանի են և իրենց ձևով, մանավանդ կառուցվածքով ու տաղաչափությամբ։

Առաջին ոտանավորի վերնագիրն է «Ի Սողոմոն արքայն», որը բաղկացած է ութտողյա յոթ տներից՝ արտասովոր ակրոստիքոսով։ Տների սկզբում Սողոմոնի անվան ամեն մի տառը կրկնվում է չորս անգամ, այսպիսով յոթը տառից բաղկացած «Սողոմոն» անվան համար գրված է հիսունվեց տող։ Բանաստեղծության սկզբում Շնորհալին Սողոմոնին բնորոշում է հետևյալ մակդիրներով.

*Սա մարգարէ աստուածաբան,*
*Եւ իմաստուն յոյժ խոհական,*
*Սա օրինակ է աննման,*
*Սողոմոնին ճշմարտութեան...*[1]

Ոտանավորի մեջ Սողոմոնը միաժամանակ ներկայացվել է որպես արդարադատ դատավոր, որը կարողանում է լուծել դատական խճճված վեճերը՝ իր անաչառ վճիռներով։ Իմաստուն մտքի և խաղաղասիրության համար Սողոմոն արքայի հռչակը տարածված է ամբողջ աշխարհում։

Ըստ բանաստեղծի, Սողոմոնը ոչ հասարակ մահկանացու է եղել, ոչ էլ նման է իրեն նախորդող թագավորներին կամ հետագա բռնավոր տերերին.

*Ոչ համեմատ երկրածընդաց...*
*Ոչ ի նախնեաց թագաւորաց.*
*Ոչ յապագայց բռնաւորաց...*[2]

---

1 «Բանք չափաւ», էջ 351։

2 Անդ, էջ 352։

Սողոմոնին նվիրված մյուս ոտանավորն ունի «Ի ժողովող անունն» վերնագիրը: Այստեղ բանաստեղծը հիացած է Սողոմոնի իմաստուն, Իսրայելի որդիներին օտար երկրներից հավաքելու և մարդօգուտ այլ գործերով:

Մանավանդ իր ձևով, հնաոճրքրքական է «Յիշատակարան առակաց Սողոմոնի» այբուբենական երկտող տներով գրված ներբողը: Այստեղ ինչ տառով որ սկսվում է առաջին տողը, նույն տառով էլ վերջանում է. օրինակ՝

Աստուածեղէն հոգովն ի սմա...
Գեղեցկադիր բանիւն ի կարգ...
Թրմբրեալ հոգիս առնէ զբարբ...[1] և այլն:

Իսկ ի՞նչ է սովորեցնում Սողոմոնն իր վերոհիշյալ առակներով: Նա,— ասում է բանաստեղծը,— մանուկների հոգին ու սիրտը զարդարում է ողջախոհ և առաքինի բարեմասնություններով: Հոգեկան այսպիսի զարդերով պետք է մանուկները երևան ծնողներին ու մեծերին: Սրանք այնպիսի զարդեր են, որոնց

...Չէ պիտանի արծաթըն յինչ,
Եւ ոչ ոսկոյն գեղ զարդարիչ[2]:

Չորրորդ ներբողն իր ձևով շատ նման է այս «Յիշատակարանին», միայն այն տարբերությամբ, որ այստեղ ոտանավորն սկըսվում է այբուբենի վերջին տառից՝ «Անդրադարձութիւն տառից» վերնագրով:

Շնորհալին մեծ փափագով ու սրտատրոփ է ընթերցել Սողոմոնի գրած ամեն մի գործը և դրա համար էլ հոգով հրճվում է.

Ցնծամ հոգւով մինչ կարդացից...[3]

Ներբողում ճառական և պերճախոսական գովասանքների կողքին Սողոմոնին մեծարելու համար գործածվում է և պատկերավոր խոսքը.

Ռետին քաղցու կենաց բարբառ,
Պըտղաբերէ անմահ այս ծառ...
Նարդոս, քրքում, զմուռ ընդ հալուխ,
Կազմէ քառիւք զառաքինին...

---

[1] «Բանք չափաւ», էջ 356:
[2] Անդ, էջ 358:
[3] Անդ, էջ 359:

Ղամբար լուսոյ մտաց նըւաղ...
Հաց հանճարոյ սորա անմահ...[1]

Բանաստեղծության վերջում խոսքը վերաբերում է հայ իրականության, ոտանավորը գրելու ժամանակին և իր՝ Շնորհալու հղացքներին ու ազգականներին:

Մնացած երեք ոտանավորները փոքրիկ բաներ են. մեկը՝ «Յիշատակարան որդի իմաստուն գլխոյն», մյուսը՝ «Յիշատակարան փառք աստուծոյ գլխոյն» և վերջինը՝ «Յիշատակարան Որդ երգոց գլխոյն» վերնագրերով:

«Որդի իմաստուն» հիշատակարանը 12 երկտող տնից է բաղկացած՝ «Ներբէս» գլխակապով: Բանաստեղծը ցանկություն է հայտնում, որ իրենից հետո եկող մարդիկ կարդան Սողոմոնի խրատական բաները և զարգանան.

Նորոգ ծընունդ, որ յերկիր գաս,
Եւ յերկարեալ կենօք մընաս,
Եթէ ի խրատ բանից սորայս,
Յօժարութեամբ սըրտի կենաս,
Բարեւնաբար իմաստանանաս,
Եւ հանճարով փարթամանաս[2]:

Մյուս «Յիշատակարանի» մեջ խորհուրդ է տրվում, որ Սողոմոնի ոտանելի, ճշմարիտ խրատների միայն կարդալը բավական չէ. հարկավոր է դրանց մտքերը կյանքում գործնականորեն իրագործել.

Լսել խրատու այսըր տուի,
Եւ կատարել գործով բարի[3]:

«Որդ երգոցի յիշատակարանը» միայն մի քանի տողից է բաղկացած, որը գրված է Նարեկացու «Մեկնութիւն Որդոց երգոյն» գրվածքի տպավորության տակ: Հետևելով Նարեկացու վերոհիշյալ գործի մեջ մեկնաբանված «հարս» ու «փեսա» բառերի այլաբանական նշանակությանը[4], Շնորհալին իրեն համարում է հարս, իսկ Քրիստոսին՝ փեսա: Բայց քանի որ բանաստեղծը «մեղքերի մեջ խաւարել է», Քրիստոսը հրաժարվել է նրանից և այրիացրել:

---

1 «Բանք չափաւ», էջ 359—360:

2 Անդ, էջ 362:

3 Անդ, էջ 363:

4 «Հարան եկեղեցի և ժողովուրդ կոչի... Դառնայ հարան գոհանալով զփեսայէն՝ Քրիստոսէ, պատմէ զիւր առաչին յանցանսն և զպատիժսն՝ զոր կրեաց», «Մատենագրութիւնք Գր. Նարեկացւոյ», Վիեննա, 1840, էջ 281—283:

*Երբեմըն քեզ հարանացելոյս*
*Եւ այժմ ի քէն այրացելոյս,*
*Բարեւնաբար ծագեա յիս լոյս...*[1]

* * *

*Մանկավարժական ոտանավորների հետ առնչվում են նաև երկու չափածո նամակներ՝ իրենց խրատական, մարդասիրական կողմերով: Այդ նամակներից մեկն ուղղված է Գրիգոր Ապիրատին, իսկ մյուսը՝ Բարձր Հայքի անծանոթ իշխաններից մեկին:*

*Տարիքով տակավին երիտասարդ, սակայն բավականաչափ զարգացած ու գրասեր Գրիգոր Ապիրատը Ներսես Շնորհալու ստեղծագործական եռանդին զարկ տալու խնդրում կարևոր դեր է խաղացել: «Յիսուս Որդի», «Բան հաւատոյ» և «Ողբ Եդեսիոյ» քերթվածները գրվել են Ապիրատի խորհրդով: Եվ քանի որ Ապիրատի անունը սերտ կապված է բանաստեղծի գլխավոր գործերի հղացման հետ, ուստի նախքան նամակի մասին խոսելը համառոտակի ծանոթանանք նշանավոր երիտասարդ Պահլավունուն, որի հետ կապված է նաև այս չափածո նամակի գրվելու ժամանակը: Ապիրատը Ներսես Շնորհալու Շահան (կամ Զորավար) եղբոր ավագ որդին էր: Նույն ընտանիքում Գրիգոր անունով մի տղա էլ ուներ Վասիլը և քանի որ վերջինիս տղան տարիքով ավելի փոքր էր քան Գրիգոր Ապիրատը, իրարից տարբերելու համար այս փոքրին կոչում էին «Գրիգոր Տղա», այսինքն՝ փոքր*[2]*: Տակավին պատանի հասակում Գրիգոր Ապիրատը թողեց Հռոմկլան և մտավ զինվորական ծառայության: Նա գլխավորապես զբաղված էր աշխարհիկ գործերով: Զինվորական ասպարեզում նա այնքան աչքի ընկավ, որ ծառայության մտավ Հունաց արքունիքում, դարձավ կայսեր ու նրա մերձավորների սիրելին և ապրում էր Կ. Պոլսում: Զինվորական կրթության ասպարեզում նրա ունեցած հաջողությունների և կատարած քաջագործությունների համբավը հասել էր Կիլիկիա: Հորեղբայր կաթողիկոսը հպարտանում և ուրախանում էր Ապիրատի հաջողություններով: Եվ ահա այս*

---

1 «Բանք չափաւ», էջ 364:

2 Ասում են նաև, որ այս Գրիգորը «Տղա» կոչվել է նրա համար, որ միշտ ապրել է Շնորհալու մոտ, իբրև կաթողիկոսի հոգևորդի, նրա տղան: Այս երկու Գրիգորներն էլ հետագայում կաթողիկոս ընտրվեցին: Գրիգոր Տղան, ինչպես հայտնի է, անմիջապես հաջորդեց Շնորհալուն, իսկ Գրիգոր Ապիրատը 1195 թ. հաջորդեց Քարավեժ կաթողիկոսին 72 տարեկան հասակում:

ակրոստիքոս չափածո թղթով[1] դրևորից նա իր սերն ու կարոտը առ Ապիրատ, որն այդ ժամանակ 30 տարեկան էր և գտնվում էր տակավին իր ուժերի ծաղկման շրջանում։

Շնորհալու, ինչպես ինքն է ասում, «առնքս գովեստից» գործը բնորոշ է նրանով, որ իր թեմայով ու բնույթով զերծ է կրոնական որևէ միտումից, միանգամայն մարդկային է ու մարդասիրական։ Բանաստեղծը ջերմ սիրով է կապված իր հարազատի հետ.

Արեգական լուսոյ ծագման՝
Սէր քո առ իս համանման...
Ապիրատիդ զքրեմ զայս բան,
Եղբօրորդուդդ իմ ըղձական[2]։

Ապիրատը անվանի ձիավարժ է. հմուտ է պատերազմական գործերում. ճարպիկ ու միշտ հաղթող է եղել թշնամու դեմ մղված մարտերում։ Կատարած սխրագործությունների համար Ապիրատը սեր ու հարգանք է վաստակել նաև Բյուզանդիայի արքունիքում։ Նրա հետ հաշվի են նստում պալատականները, անգամ ինքը՝ կայսրը։ Թեև Ապիրատի համբավով հպարտանում է հորեղբայրը, բայց ափսոսում է, որ իրենից հեռու է.

Տիրականիդ ընդհանրական,
Որպէս լըսեմ, դու պատուական։
Նաև միտում սեռ արքունեան,
ՅԱնդրոնիկեայ[3] սիրալրական.
Իսկ առ ի մէնջ՝ հրաժարական,
Ի սիրելեացըս քո բնական[4]։

Չնայած Ապիրատի տեղը պատվավոր ու լավ է Կ. Պոլսում, սյնուամենայնիվ, Շնորհալին ցանկանում է, որ նա վերադառնա

---

1 Այս բանաստեղծությունը բաղկացած է 30 երկտող տներից ութվանկյան չափով։ Թղթի տնագլուխ տառերը կազմում են հետևյալ նախադասությունը. «Առ Ապիրատն ի Տէր Ներսէսէ բան չափով սա»։

2 «Բանք չափաւ», էջ 303։

3 Այս Անդրոնիկոսը, որն ըստ բանաստեղծի նույնպես սիրել է Ապիրատին, կայսեր հորեղբոր որդին է և պատմության մեջ ոչ անհայտ իր վատ գործերով։ 1151—1152 թվականներին բյուզանդական զորքի գլուխ կանգնած՝ կռվեց Կիլիկիայի հայկական անկախությունը վերացնելու համար, բայց Թորոս Բ-ից չարաչար պարտվեց և նահանջեց։ Կայսեր դեմ ապստամբելու համար բանտարկվելուց, ապա տարիներ անց ներումն ու իր պաշտոնը ստանալուց հետո, 1166 թվականին, երկրորդ անգամ մեծ բանակով հարձակվեց Կիլիկիայի հայկական պետության վրա, դարձյալ պարտվեց ու փախավ.

4 «Բանք չափաւ», էջ 304։

հայրենիք, մանավանդ որ հարազատներն ու բարեկամները նրան զատ են կարոտել և բոլորն էլ ցանկանում են, որ նա ապրի ու գործի իր երկրի մեջ: Իսկ մինչ վերադարձը խորհուրդներ ու խրատներ է տրվում երիտասարդ հայ հեծյալին, թե ինչպես պետք է իրեն պահի օտար երկրում, այնտեղի աշխարհային, ապականված կենցաղում: Ապա Շնորհալին զգուշացնում է Ապիրատին, որ չար, ախտասեր պալատականների հետ կապ չունենա, հեռու մնա նրանցից, որովհետև այդ այլասերված մարդիկ, մանավանդ դրանց մեջ երիտասարդները, իրենց անգին ժամանակը վատնում են պալատական ապականված միջավայրում:

Ուշագրավ է, որ կաթողիկոս-բանաստեղծը չնայած Ապիրատին խորհուրդ է տալիս հեռու մնալ աշխարհային արատավոր բարքերից ու կենցաղից, բայց չի ժխտում աշխարհային մաքուր, առողջ կյանքը: Նա խորհուրդներ է տալիս երիտասարդ եղբորորդուն, որ ամենից առաջ հետևի իր առողջությանը, ապա և հոգևոր կյանքին: Այսպես մարմինն ունի հոգուն հավասար արժեք.

Ինձ դու յաւէտ կաց խընդական,
Մարմնով առողջ և հոգեկան[1]:

Եվ որ գլխավորն է՝ Շնորհալին ցանկանում է որպեսզի Ապիրատը արիությամբ ու ազգօգուտ գործերով նմանվի իր նախնիներին և հետևի նրանց թողած բազմաթիվ լավ օրինակներին[2]: «Թղթի» վերջում գրում է, որ Ապիրատը լավ լսի և կատարի իր տված խրատները, մանավանդ՝ օտար աշխարհում հավատով ու ազգությամբ մնա անսասան.

Սակաւ բանիցըս խրատական,
Լեր ամրագոյն դու պահապան,
Այլև դհաւատդ, որ յաւազան,
Անշարժ պահեա միշտ յաւիտեան[3]:

Ակրոստիքոսից հետո, որպես վերջաբան գրված է երկու քառյակ: Այդ մի քանի տողից երևում է, որ Թուղթը գրվել է Ապիրատին այն ժամանակ, երբ նա արդեն եղել է 30 տարեկան.

Ըստ լի ամաց քոց երեսնից,
Գրեցան և տունքըս գովեստից...[4]

---

1 «Բանք չափաւ», էջ 305:
2 Անդ, էջ 304:
3 Անդ, էջ 305:
4 Անդ, էջ 306:

* * *

Շնորհալուն մարդկայնորեն, հավասարապես հետաքրքրել են բոլոր խավերի մարդիկ՝ ծանոթ, թե անծանոթ, հեռու թե մոտիկ, միայն թե բոլորը ապրեն լավ, հաշտ ու խաղաղ, անվիշտ և ուրախ։ Նա կարեկցում էր և առողջներին և տառապող հիվանդներին, օգնության ձեռք մեկնում կարիքավորներին և ապրում առհասարակ մարդու ուրախությամբ ու վշտով։ Բառի իսկական իմաստով մարդասեր էր նա։ Նա հաղորդակից էր լինում անգամ անծանոթ, իրենից շատ հեռու գտնվող քաղաքներում ու այլ վայրերում ապրող մարդկանց վշտերին ու տառապանքներին։ Այդպիսի մի օրինակ մենք տեսանք արձակ թղթերում՝ բոր հիվանդությամբ տառապողներին նյութապես և բարոյապես օժանդակելու և մխիթարելու համար։ Նման մարդասիրական մի գործ էլ կա նրա չափածոյի մեջ, որը շատ քչերին է հայտնի և չենք ուզում մենք էլ դրա կողքով լռությամբ անցնել. մանավանդ, որ այդ ոտանավորը շատ մարդկային է և կարեկցական։ Վաղաժամ մահանում է Մեծ Հայքի արևելյան քաղաքներից մեկում ապրող մի հայ իշխանի միակուսակ պատանի որդին։ Դառնապես ողբում են ծնողները երկար ժամանակ։ Այդ մասին լսում է Շնորհալին և որոշում մխիթարել ու հուսադրել դժբախտ ծնողներին։ Նվ ահա գրում է մի ոտանավոր «Թուղթ մխիթարության» վերնագրով՝ 116 տողից բաղկացած[1]։ Զգայուն սիրտ ունեցող բանաստեղծը մարդկայնորեն ապրում է մահկանացու մարդու աշխարհիկ վիշտը։ «Թղթում» մի կողմից բնականորեն բացատրում է սպավորին, որ մարդու համար վաղ թե ուշ մահը անխուսափելի է, մյուս կողմից էլ քաջալերում, զգուշացնում է մեռնողի հորը, որ արիանա, հոգեպես ոտքի կանգնի, ինչպես ծանր վշտերի պահին արել են մեր հայրերը.

*Սթափեա ի սգոյդ ըսփոփելով,*
*Զանիր զբնութիւնըս մեր մարմնով*
*Մահկանացու անդարձ վճռով։*
*Կաց ի կանգուն օրինակով՝*
*Զոր մեզ եառն հարքըն գրով*[2]։

---

1 *Այբուբենի տառերով գրված է 36 երկտող տուն, որից հետո 44 տողը ակրոստիքոս է և գլխագրերի կապակցությունից ստացվում են «Ներսէսի՝ կաթողիկոսի Հայոց» բառերը։ «Բանք չափաւ», էջ 307—312։*

2 *Անդ, էջ 308։*

Հետո բանաստեղծը բերում է պատմությունից բազմաթիվ օրինակներ, թե ինչպես անցյալում այդպիսի ծանր, սգալի օրերին մարդիկ չեն ընկճվել, այլ են մնացել հոգով՝ ներքուստ կրելով մարդկային վիշտը։ Որպես դասական արիության օրինակ ցույց է տրվում մակաբայեցիների տիպարները։ «Յիսուս Որդի» պոեմի Ա մասում, ինչպես տեսանք, բերված էր Սիխազար Մակաբեի օրինակը, իսկ այս Թղթում որպես հոգու արիության լավագույն օրինակ ցույց է տրված մակաբայանց մայրը՝ Շամունեն, որի աչքի առաջ թշնամիները չարաչար տանջանքներով սպանում են նրա յոթը որդիներին՝ հանուն «հարցըն օրինին»։

Դառն արտասուքը «անօգուտ է յետ մահուան» սփոփում է բանաստեղծը, և հարկ չկա երկար ժամանակ սգալ ու սևեր հագնել։ Պետք է վերջ տալ արտասուքին, հանել սև զգեստները, դուրս գալ սգի մղձավանջից, ունենալ կամք և իշխել իրեն։

Շնորհալին Թղթի վերջում ասում է, որ ցավակցական ոգով գրված այս փոքրիկ չափածոն ուղղվում է անծանոթ ազգակցին՝ որպես մխիթարության խոսք.

*Քեզ մխիթար սակաւ այս բան*
*Չափով տառիցըս հայկական...*
*Ի բաց դիր այժմ ըզսգոյդ խաւար,*
*Որ անյուսից է տրտմաբար.*
*Եւ դու ընկալ զսոյն անվրիպար,*
*Չյուսացելոցըն զուարճարար*[1]։

Շնորհալու մանկավարժական և մարդասիրական բնույթի ոտանավորներն ամբողջությամբ վերցրած՝ բնորոշ են դաստիարակչական և սոցիալական կողմերով։ Ինչպես իր մյուս գործերում, այնպես էլ այստեղ, բանաստեղծ-մանկավարժն այն կարծիքին է, որ ուսումն ու դաստիարակությունը անարժեք են, եթե դրանք կապված չեն գործնականի՝ կյանքի հետ։

Այնուհետև նա մանուկներին խորհուրդ է տալիս «սիրել զնիւթ ուսման, զխոհեմութիւն և զջան»։ Այս ոտանավորներում խրատական հորդորների կողքին տեղ են գտել նաև հասարակական մոտիվներ։ Մարդը, ամենից առաջ պիտի լինի պարտաճանաչ. նա պիտի զգա, որ ինքը որոշ պարտք ունի կատարելու հասարակության հանդեպ։ Այդ գաղափարն է արտահայտում «Ե» տառի ուրյակը («Բանք չափաւ», էջ 328)։

---

[1] Անդ, 310—311։

Ոտանավորներից շատերի մեջ քարոզվում է ընկերասիրություն, որը զարդանալով հասնում է մարդասիրության մակարդակին։

Ինչպես «Թուղթ ընդհանրական»-ում, այդպես էլ այստեղ, Շնորհալին բողոքում է ֆեոդալական հասարակաճևի անիրավությունների դեմ և իր պաշտպանության տակ առնում տուժող, հասարակ մարդկանց («Բանք չափաւ», է 330)։

## 4. ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՊՈԵՄՆԵՐ

### Ա. «ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՆ»

Այս գործը Շնորհալու գրական երախայրիքն է։ Հայ հին գրականության պատմության մեջ իրավամբ համարվում է մեր պատմական առաջին մեծ պոեմը, որը հիմնված Խորենացու երկի վրա՝ հայոց պատմության շարադրումն է հետևյալ վերնագրով. «Շարադրութիւն Հոմերական վիպասանութեամբ սակս հայկազանց սեռի, և Արշակունեացն զարմի ի սկզբանց մինչև ի վախճան առասացեալ Ներսէսի եղբօր կաթողիկոսի հայոց յիւրական նախնիս ի համբակութեան ելով տիս»[1]։

Մի դար առաջ, պատմա-ավանդական թեմատիկայով, Գրիգոր Մագիստրոսը գրել էր իր հայտնի «Հազարտողեան» չափածո մեծ երկը, որը մասամբ ուղեցույց հանդիսացավ Շնորհալու այս գործի համար։ Հետևելով Մագիստրոսին, Շնորհալին, սակայն, իր պոեմի նյութն ընտրեց ոչ թե բիբլիական-առասպելական թեմաներից, այլ իսկական պատմությունից՝ հայ ժողովրդի անցյալ կյանքից, ըստ որում առաջ շարժեց և զարգացրեց Մագիստրոսի սկսած պատմական ժանրը։ Բայց և այնպես, նկատելի տարբերություն կա այս երկու պոեմների մտահղացման, թեմատիկայի և բովանդակության միջև։

Գրիգոր Մագիստրոսը Կոստանդնուպոլսում 1045 թվականին ծանոթանում է մի արաբ, բանիմաց բանաստեղծի հետ։ Սրանց մեջ երկար զրույցներ են տեղի ունենում քրիստոնեական և մահմեդական կրոնների մասին։ Արաբ բանաստեղծը հպարտանում է, որ իրենց Ղուրանը Մահմեդը ոտանավորի ձևով է գրել՝ ի վերուստ ստացած շնորհքի ուժով, մինչդեռ քրիստոնեանների Ավետարանը արձակ ու անարվեստ մի գործ է։ Մագիստրոսը առարկում է Մա-

1 «Բանք չափաւ», էջ 493։

նուչն անունով այդ արար բանաստեղծին և ասում, որ միահոդ չափավորությամբ դրելը մի մեծ, կամ աստվածային շնորհ չէ։ Եվ հետո, եթե Մահմեդը Ղուրանը կարողացել է դրել 40 տարում, ինքը այդպիսի մի բան կարող է դրել չորս օրվա ընթացքում։ Եվ այսպես, Մագիստրոսը գրում է իր «Հազարտողեանը»՝ վերնագրելով «Առ Մանուչէ...»։ Երկը փաստորեն ս. Գրքի համառոտ բովանդակությունն է։ Պոեմի վերջում միայն խոսվում է Հայոց պատմության մասին՝ սկսած Գրիգոր Լուսավորչից մինչև Սահակ-Մեսրոպն ու թարգմանիչները։ Այս ամենը շարադրել է Մագիստրոսը անարվեստ ու սխեմատիկ, իհարկե առանց դուրս գալու կրոնական դրույթների նեղ շրջանակներից։ Այդպես չէ, սակայն, Շնորհալու մոտ։ Թեև վերջինս էլ է իր պոեմը դրել նույնահանդ, բայց այն ունի պարզ ու գեղեցիկ լեզու, հետաքրքիր պահեր, տեղ-տեղ էլ գեղարվեստական հնարանքներ։ Մագիստրոսի «Հազարտողեանը» իր ժամանակին այնպիսի ջերմ ընդունելության չարժանացավ, ինչպես «Վիպասանությիւն»-ը, որը նույնպես նմանության աղբյուր հանդիսացավ հետագա շատ գրողների համար։ Եվ վերջապես «Հազարտողեանը» դրելու դրդապատճառը եղել է միայն հավատն ու կրոնասիրությունը, իսկ «Վիպասանությանը»՝ նախնյաց երախտագիտությունն ու հայրենասիրությունը։

Այսպիսով, «Վիպասանությիւն»-ը կրոնական կաշկանդումներից աղատ պատմական պոեմ է, որը հիմնականում արտացոլում է հայ ժողովրդի անցյալ կյանքը։

Շնորհալու այս պոեմն ունի նաև 44 տողից բաղկացած մի նախերգանք, որը գրված է հայրենասիրական ջերմ շնչով։ Բանաստեղծն իրեն պարտական է համարում նախնիների հանդեպ, գտնում է, որ պետք է հատուցանի իր պարտքը, այսինքն՝ հիշի ու երգի նրանց կատարած լավ գործերը.

Պարտական է հօր որդի,
Հատուցանել վարձըս ծնօղի,
Եւ անդրադարձ փոխարինի,
Բազում երկանցըն պատշաճի։
Բայց սակայն ոչ վարկպարագի,
Այլ զօրութեամբ և ըստ կարդի[1]։

Այստեղ միաժամանակ երիտասարդ բանաստեղծը համեստորեն դիմում է ընթերցողին, որ ինքը դեռ հասակով անկատար է և

---

1 «Բանք չափաւ», էջ 495։

ժամանակի անբարենպաստ պայմանների պատճառով չի կարողացել դնալ Արևնք՝ հունական գիտությունների և արվեստի խորքերը թափանցելու համար[1]:

Գիտության և արվեստի բնագավառում դեռևս իրեն անփորձ, դեռահաս համարելով հանդերձ, բնական մի ներքին ուժ, երախտագիտության և հայրենասիրության բուռն զգացումները նրան մղում են ձեռնարկելու այսպիսի մի լուրջ գործ.

Վասն այսորիկ ոչ յիշեցի,
Զանկարուքիւնս յամենայնի,
Զտրգիտուքիւնս յիմաստ բանի,
Վասն անկատարըս հասակի[2]:

Շնորհալու այս առաջին պոեմը համեմատած նրա հետագա մյուս բանաստեղծությունների ու պոեմների հետ, արվեստի տեսակետից թույլ է, բայց ամբողջությամբ առած՝ շատ արժեքավոր է, որովհետև այնտեղ խորն ու անկեղծ զգացումներով դրսևորվել է բանաստեղծի ջերմ հայրենասիրությունը: Խախտելով միջնադարյան դրական տրադիցիաները, սկսնակ բանաստեղծը հենց սկզբից էլ գրում է ոչ թե ևկեղեցու համար, այլ նկատի ունի աշխարհիկ ընթերցողներին, որպեսզի նրանց ներշնչի երախտագիտության և հայրենասիրության գաղափարներ: Վիպասանության մեջ հանդես են եկել մեր նախնիները, նրանց լավ ու վատ, արի ու անարի գործերը: Բանաստեղծը գտնում է, որ ներկա և ապագա սերունդները պիտի ընթերցեն այս գործը, դաս վերցնեն անցյալից, որպեսզի հետու մնան անվայել ու չար գործերից և հետևեն իրենց պապերի պանծալի օրինակին.

Սկըսանելով յայսմ տառի,
Ի նախահարան իմ բան կարգի,
Թէ ու՛ր էին և կամ ուստի՛,
Եւ կամ յորու՛մ ժամանակի:
Եւ մակագրեալ ի քարտիսի,
Զառ ի նոցայն գործեալ իրի,
Զոմանց պատմել յոյժ գովելի,
Զարիւքիւնսըն պանծալի...[3]

---

1 «Բանք չափաւ», էջ 496:
2 Անդ, էջ 495:
3 Անդ, էջ 496—497:

Պոեմում ցույց է տրված, որ արմենները քաջ, հաղթող և միաժամանակ աղնիվ ու հայրենասեր մարդիկ են եղել։ Նրանք սիրել են ազատությունը և խիստ ծառացել բռնության և անարդարության դեմ։ Հայոց պատմության սկիզբը Շնորհալին բաց է անում Հայկ Նահապետով, որը գետին է տապալել բռնակալ Բելին։

Հայկազանց սերից հետո բանաստեղծը կարողացել է ջերմ խոսքով վեր հանել Արտաշեսյան և Արշակունիների տոհմի նշանավոր մարդկանց արիությունն ու ազգօգուտ գործերը։ Այս երկու անվանի հարստությունների առաջին թագավորներն իրենց իշխանության տարիներին ամենակարևոր գործն են համարել Հայաստանի պետական կարգերի վերակառուցումը՝ հիմնելով ժամանակի պահանջներին համապատասխան հաստատություններ։ Արտաշեսն ընդլայնել և ապահովել է Հայաստանի սահմանները, ամրապնդել պետության ներքին կարգը։ Նա հատուկ ուշադրություն է դարձրել դինվորական գործի ուժեղացման ու բանակի վերակառուցման վրա։ Բազմաթիվ բարեկարգումների շնորհիվ Արտաշեսը դարձել էր իր ժողովրդի սիրելին, նրանից սարսում էին թշնամիները։ Նա վաստակել էր այնպիսի փառավոր մի անուն, որ ո՛չ անցյալում և ո՛չ էլ հետագայում չի ունեցել և ոչ մի հայ թագավոր։ Արտաշեսն համեմատվել է Ալեքսանդր Մակեդոնացու հետ և ավելի բարձր գնահատվել.

...Քան զԱղեքսանդրը վեհ եղեալ,
Պոլիկրատայ գովաբանեալ...[1]

Պակաս չի գովերգվել և Տիգրանը. «այն որ միջինըն կոչեցեալ»։ Սա հաղթել է հույների և հռոմայեցիների բանակներին, կրկվում սպանել Կրասոսին, գերի վերցրել Հյուրկանոսին և կատարել բազմաթիվ քաջագործություններ։

Այնուհետև գալիս են գովասանքի արժանի Արշակունի թագավորները, որոնցից առաջինը Արշակ Ա-ն է։ Ըստ պոեմի, Արշակունիներից են առաջացել Պահլավունիները՝ բանաստեղծի պապերը և ինքը.

Արդ ի սորին զարմէ սկրսեալ,
Պարթևական տոհմ անուանեալ,
Ոստի Արշակ թագաւորեալ,
Արշակունի ազգըն ցեղեալ,
Եւ ըզքաղաքըն Բահլ առեալ,
Բահլաւունիք անդ կոչեցեալ...[2]

---

1 «Բանք չափաւ», էջ 506։

2 Անդ, էջ 504։

Նստելով հայոց գահին, առանձնապես Վաղարշակ և Արշակ թագավորները հաղթում են արտաքին թշնամիներին, ապահովում երկրի սահմանները։ Ամրացնում են նաև պետության կառուցվածքը, հաստատում նախարարություն, քաղաքական և քաղաքացիական օրենքներ, մի խոսքով բարեկարգում երկիրը։

Ապա մանրամասն նկարագրվում են Արշակի կատարած հաղթանակներն ու բարեներոդություններ։

Պոեմում լավ է տրված Տրդատի կերպարը։ Նա արտակարգ ֆիզիկական ուժի տեր մի հերոս է։ Նշանավոր է իր քաջությամբ և մանավանդ Հայաստանի կրոնական դարձի գործում իր խաղացած բացառիկ դերով։ Տրդատի նկարագիրը ուշագրավ է նրանով, որ Շնորհալին, ի տարբերություն կրոնական պատմագիրների, այդ կերպարը չի ներկայացրել երկու հակադիր կողմերով, մեկը թևավոր քաջ, ուժեղ, բայց հնթանոս, Գրիգոր Լուսավորիչին անլուր տանջանքների ենթարկող, սկզբից քրիստոնեական պրոպագանդայի դեմ խիստ պայքարող, Հռիփսիմյանց կույսերին կոտորող, խոզակերպ և այլն։ Մյուս կողմից՝ հոգեպես դարձի եկող, զղջացող, եռանդուն կերպով քրիստոնեությունը Հայաստանում տարածող, հնթանոսության դեմ անողոք պայքարող և այլն։ Պոեմում Տրդատը այդպիսի երկդիմի նկարագիր չունի։ Թեև Շնորհալին էլ է Տրդատին կապել Գրիգոր Լուսավորչին տանջանքների ենթարկելու, կույսերին նահատակելու դեպքերի հետ, բայց ոչ բացասական կերպարանք տալու համար։ Թեթևակի հիշելով թագավորի կատարած այդ երկու հակաքրիստոնեական գործերը, բանաստեղծը ցավելով, մի տեսակ ներքին համակրանքով է ներկայացնում նրան։ Տրդատը պոեմում ավելի ցայտուն է հանդես գալիս որպես քաջ, երկիրը դրսի թշնամիներից պաշտպանող համբավավոր թագավոր, իսկ քրիստոնեության հետ կապված դեպքերը՝ երկրորդական են և ոչ բնորոշ։ Այսպիսով «Վիպասանության» մեջ Տրդատի նկարագիրը համեմատաբար անաչառ և ամբողջական է, որպես մարդ և որպես թագավոր։ Հենց սկզբից դեռ հնթանոս Տրդատը ներկայացվում է որպես դրական տիպ։ Նա օտար երկրներում իր քաջագործություններով և գերմարդկային ուժով պանծալի անուն է ձեռք բերում, ըստ որում արևմուտքում բարձրանում է նաև իր ազգի՝ հայ ժողովրդի պատիվն ու անունը։ Նա քաջերից քաջ է, ուժեղ ու անպարտելի որպես մի նոր Հերկուլես։

Նա Խոսրովու որդի եղեալ,
Առ ի քաջաց քաջ երևեալ,
Եւ յաղթանդամ հրսկայացեալ

*Ուժեղ կարող անյաղթ գրտեալ...*
*Եւ զՀայրական պարտ վրճարեալ,*
*Ի միասին պանդխտացեալ...*
*Եւ նոր Հերակլ անդ անուանեալ*[1]։

*Մանրամասն են նկարագրված Տրդատի սխրագործությունները հրկեհներում, մրցությունների և պատերազմների ժամանակ։*

*Ինչպես տաղերում, պոեմի այս մասում էլ գեղեցիկ պատկերներով է տրված Հռիփսիմյանց կույսերի նահատակության նկարագիրը։*

*Այնուհետև գովերգվում են եկեղեցու նշանավոր հոգևոր հայրերն ու հայրապետները, որոնք նույնպես օգտակար գործ են կատարել հայոց պատմության մեջ։ Հայոց քաջ և հայրենասեր թագավորները, աշխարհիկ գործիչները վճռական դեր են խաղացել ազգային պետությունը արտաքին թշնամիներից պաշտպանելու և ներքին բարեկարգման ասպարեզում. իսկ ժողովրդի հոգեկան կյանքն ու մշակույթը խորթ ազդեցություններից ազատ պահելու համար տարբեր ժամանակներում, կարևոր աշխատանք են կատարել նաև հոգևոր հայրերից ու գործիչներից շատերը։ Ըստ Շնորհալու այդ կարգի գործիչներից են՝ Գրիգոր Լուսավորիչը, Ներսես Մեծը, Սահակն ու Մեսրոպ Մաշտոցը։ Մանրամասնորեն է տրված Լուսավորչի գործունեության նկարագիրը՝ ըստ Ագաթանգեղոսի։*

*Գովեստներով ու ակնածանքով է նկարագրված Ներսես Մեծը։ Լուսավորիչը տարածում է քրիստոնեական կրոնը, իսկ Ներսեսն ամեն կերպ աշխատում է բարոյակրթել մարդկանց։ Նա որքան հակված է դեպի բարին, այնքան էլ ատելությամբ է լցված դեպի չարը.*

*Ընդդեմ չարեաց սուսեր սրբեալ,*
*Եւ առ բարիսըն հեզացեալ...*[2]

*Սակայն պոեմում հոգևոր կյանքի և հայ մշակույթի բնագավառում իրենց բեղմնավոր գործունեությամբ բոլորին գերազանցում են Սահակն ու Մեսրոպը։ Այս երկու անխոնջ մշակների գործունեությունը չի սահմանափակվում միայն կրոնական ասպարեզում։ Մեսրոպը ստեղծում է հայոց տառերը. Սահակը օժանդակում, ընդառաջ է գնում նրան։ Սրանք երկուսով վարում, հերկում են «հոգու խոպան անդաստանները» և ցանում «իմաստության սերմը»։ Հավաքում են*

---

1 «Բանք չափաւ», էջ 515։

2 Անդ, 529։

ընդունակ մանուկներին՝ սովորեցնում մայրենի լեզվով, հայերեն տառերով։ Հիմք են դնում հայ դպրության, պատրաստում են թարգմանիչների մի պայծառ սերունդ, որոնք գնում են արտասահման և որպես ջանասեր մեղուներ դիտության ծաղիկներն ու քաղցրությունը բերում հայրենի երկիրը՝ մարդկանց հոգով սնուցանելու համար.

Յայսմ վայրի եղև յայտնեալ,
Այն որ Մեսրոպըն կոչեցեալ,
Որ տեսական ուսմամբ վարժեալ,
Գործնականաւ զերազանցեալ...
Բարեաց արմատ Հայոց եղեալ...
Զաստուածագիծ տառն ընկալեալ
Երիւք տասամբք վեցիւք յանդեալ,
Արեգական նըմիւք չափեալ[1]։

Ստեղծելով հայոց տառերը, բաց աննելով հայկական դպրոցներ, Մեսրոպը մատհոգվում է նաև ուրիշ ազգերի համար մայրենի լեզվով գիր ու գրականություն ստեղծելու գործով։ Ըստ պոեմի, Մեսրոպի լուսավորչական-մանկավարժական աշխատանքները դուրս են գալիս ազգային շրջանակներից, լայնանում ու տարածվում հարևան ազգերի մեջ ևս.

Բայց Մեսրոպայ շրջագայեալ,
Զամենեսեան լուսաւորեալ,
Վրաց ու Աղուանից գիր ըստեղծեալ,
Հոգւոյն շնորհօք առատացեալ[2]։

Աշխարհիկ և հոգևոր նշանավոր մարդկանց գործերը բնութագրելուց հետո, Շնորհալին սիրով ու ջերմությամբ է վիպում հայրենիքի համար իրենց կյանքը նվիրած հայրենասերների մասին։ Ազգի անկախությունն ու մշակույթը պաշտպանելու համար Վարդան Մամիկոնյանի հրամանատարությամբ հայ աշխատավորները, նախարարներն ու հոգևորականները միացյալ ուժերով ծառանում են ազդակործան բռնակալ Հազկերտի դեմ։ Շատերն են հերոսաբար ընկնում։ Եվ երբ որևէ մեկը ուզում է հավաստի գաղափար կազմել Վարդանանց հերոսամարտի, հայ ժողովրդի արիության, նրա հոգու զորության մասին, բանաստեղծը խորհուրդ է տալիս կարդալ Եղիշեի գիրքը։

---

1 «Բանք չափոյ», էջ 533։
2 Անդ, էջ 534։



318—12

Զոր թէ կամի ոք հաւաստեալ
Զնղիշային տառ վերծանեալ.
Որ ցուցանէ զայս գործեցեալ,
Ի Յազկերտի աւուրս եղեալ[1]։

Հազկերտը գաղանաբար է վարվել հայ ժողովրդի հետ և նպատակ դրել ոչնչացնել հայերին թե՛ ֆիզիկապես և թե՛ հոգեպես։ Ահա Հազկերտի հրամանով կատարված բարբարոսություններից մի նկարագրություն.

Ըզգլուխն ոտիւքն ի բաց բարձեալ,
Զմեծըն փոքոմբք տարամերժեալ,
Զհօտըն հօվուտք սըրոյ տըւեալ,
Զգառինըս գայլոց յափըշտակեալ.
Զերիտասարդըս խողխողեալ,
Ի մարց գըրկաց տըղայք դերեալ.
Ըզկուսանս ոչ ոք սրգացեալ,
Ծերք յաթոռոյ պատուոյ անկեալ.
Ըզքահանայս ի սուր մատնեալ,
Զայրիս նոցա ոչ ոք լացեալ...
Քանզի պարսից յայնժամ տիրեալ
Տանըս Հայոց թագաւորեալ...[2]

Վարդանանց ժամանակներից սկսած՝ քանի գնում հայ ժողովրդի դրությունը ավելի է վատանում։ Օտար նվաճողներն ու բռնակալները մեկը մյուսի ետևից ներխուժում են հայոց երկիրը, ասպատակում, ավերում ու կոտորում։ Հայերը զրկվում են ոչ միայն պետականությունից, քաղաքական իրավունքներից, այլև նրանց կայքը, կյանքը միշտ վտանգի տակ է։ Անապահով կյանքի պայմանները շատերին են ստիպել թողնել իրենց հայրենիքը և գնալ օտար երկրներ։ Ցավով ու ափսոսանքով է պատմում բանաստեղծը, թե ինչպես հայերը կորցրել են իրենց անկախությունը, պետությունը, ոտնակոխ դարձել աշխարհակեր բռնակալներին։

Ի յաշխարհէ ծնընդեան ելեալ,
Ի հայրենեաց տարամերժեալ։
Ցերկիր օտար պանդրխտացեալ,
Մինչ զի ըզմերըն մոռացեալ.

---

1 «Բանք չափաւ», էջ 536։
2 Անդ, էջ 536—637։

*Զաշխարհըս մեր օտարք կերեալ,*
*Մեր առաջի աչաց տեսեալ.*
*Անմիտ ազգաւ զկրծեցուցեալ...*[1]

*Սրտառուչ և ջերմ հայրենասիրական տողերով է նկարագրված, թե ինչպես հայոց թագավորական գահը և հայրապետական աթոռը, որ մի ժամանակ լուսավոր ու պայծառ էին, հիմա մեղի ու խավարի մեջ են։ Նրանք, որոնք թագավորական թագերի ժառանգները պետք է լինեին, այժմ անարժան մարդկանց են ենթակա դարձել. նրանք, որոնք շատ երկրների էին կերակրում, այժմ մուրացկանություն են անում օտար երկրներում։*

*Այնուհետև սկսվում է Պահլավունիների տոհմի գովքը, որոնցից առաջինն է Գրիգոր Մագիստրոսի հայրը՝ Վասակ Պահլավունին։*

*Պոեմում Մագիստրոսը պատկերվում է որպես աստվածային շնորհքով լցված և իմաստությամբ փայլող մի գիտնական։ Հույները միշտ նրա հետ հաշվի են նստել՝ լուրջ գործեր ձեռնարկելիս և լսել նրա խորհուրդները։ Նա ունեցել է ծուլ գիտություն։ Ստեղծագործել է Հոմերոսի պես, պերճախոսել Պլատոնի նման։ Նա բոլ ամենայնի հմուտ է եղել հույն գիտության և արվեստի մեջ։*

*Բարձր գովեստների են արժանացել նաև Գրիգոր Վկայասերը և բանաստեղծի եղբայրը՝ Գրիգորիս Պահլավունին։*

*Այսպիսով, բանաստեղծը պոեմում հայ ժողովրդի պատմությունն սկսելով մեր Հայկ Նահապետից բերում, հասցնում է մինչև Պահլավունիները, մինչև իր օրերը և փակում եղբայրների, քույրերի և հարազատների հիշատակումով։*

*Մեր պատմության մեջ հանդես եկած նշանավոր հայրենասեր գործիչներին Շնորհալին միայն պասսիվ նկարագրող կամ մեծարող խոսքերով գովերգող չէ։ Նա ապրում է նրանց լավ գործերով, ոգեվորվում ու հրճվում։*

*Որքան խորն ու ջերմ է բանաստեղծի սերն ու վերաբերմունքն առ յուր հայրենասեր նախնիքը՝ աշխարհիկ և հոգևոր գործիչները, որոնք չեն խնայել իրենց եռանդն ու կյանքը հայրենիքին՝ նրա մշակույթը պաշտպանելու համար, նույնքան էլ խորն է նրաատելությունը այն օտար բռնակալների նկատմամբ, որոնք զրկել են Հայաստանը պետությունից և այժմ ամբարտավան կերպով պարսաւում են հայերին։ Այդպիսիներից են հույները.*

*Որք այժմ ըզմեզ գոն աղարտեալ,*
*Զանթագաւորքըս պարսաւեալ,*

---

1 «Պանք չափաւ», էջ 540։

*Բայց մեր ի յայս ոչ պանծացեալ,*
*Զի ըստ մարմնոյ գոյ ներգործեալ*[1]*։*

*Մեծ վնասներ են պատճառել Հայաստանին նաև արաբներն ու սելջուկները։ Սրանք էլ իրենց վայրենաբարո, կործանարար ավերածություններով ու կոտորածներով անապատի են վերածել հայոց երկիրը։ Ահա մի հատված, որը ցույց է տալիս, թե այդ «գազանացեալ» հորդաները ինչպես են արյունի ու ավերի մատնել Հայաստանը.*

*Արեանարբուք գազանացեալ,*
*Զազիր գործովք անասնացեալ...*
*Զոսկերըս մեր ըզչորացեալ,*
*Զոր էր նախկի ազգաց ծրծեալ,*
*Վիշապօրէն սոցա կըլեալ,*
*Եւ առիւծուց նման մանրեալ,*
*Զի ի համար թիւ ոչ անկեալ,*
*Անպարտ արեանցըն զոր հեղեալ,*
*Կամ ծառայիցն անդին գերեալ.*
*Եւ կամ յայտնին որ վաճառեալ.*
*Կամ ըզգոյիցըն յափըշտակեալ,*
*Որք ընդ ձեռամբ նոցին անկեալ*[2]*։*

*Այդ մարդակերպ վիշապները, ասում է բանաստեղծը, միայն մարդկանց կոտորելով ու գերելով, երկիրը թալանելով ու ավերելով չեն բավականացել։ Նրանք մարդկանց ստիպել են ուրանալ աղոթը, հավատը, հայրենիքը, մեռնել հոգեպես, որն ավելի ահեղ է քան մարմնական մահը։*

*Այս հոգեսպանությունը բանաստեղծը համարում է կատարված բոլոր չարիքներից ամենասարսափելին, ամենամեծը։*

*...Թողից ըզչարըն մեծ ասել,*
*Զհոգւոց կորուստըն գործեցեալ,*
*Ի հաւատոցն ուրացուցեալ,*
*Եւ չար գործովք ապականեալ*[3]*։*

*Միայն արտաքին թշնամիների կատարած ավերածությունները նկարագրելով չի բավականանում Շնորհալին։ Նա խիստ քննադա-*

---

1 «Բանք չափաւ», էջ 506։
2 Անդ, էջ 539։
3 Անդ։

դաստում ու անարգում է երկրի և նրա պետության անկմանը նպաստող ազգային որոշ ղեկավարների և թագավորների արատավոր բարքերն ու գործերը: Այս կարգի մարդիկ իրենց անվայել գործերով բացասաբար են ազդել երկրի քաղաքական բախտի վրա և աղետաբեր եղել ազգային պետության համար:

Ըստ պոեմի, Արշակունի Տիրան թագավորը գահ նստելուց հետո փոխանակ հետևելու նախորդ թագավորների և իր հոր առաքինի գործերին, հակառակ ուղղությամբ է գնում և վաստակում վատ անուն.

Յետ խոսրովու Տիրան եղեալ,
Յաթոռըն հօր իւրոյ նըստեալ.
Արիութեանց ոչ հետևեալ,
Այլ վատութեամբըն համբաւեալ[1]:

Իր վատ ու վնասաբեր գործերով ավելի առաջ է գնում Արշակը՝ Տիրանի որդին: Հակառակ Ներսես Հայրապետի բազմիցս զգուշացումների, սա էլ իր հոր նման կանգնում է անվայել ճանապարհի վրա: Արշակն անտեղի հեղել է տալիս իր ազգականի՝ անմեղ Գնելի արյունը: Այս ամենի հետևանքով տուժում է ազգն ու պետությունը:

Ավելի բացասական է ներկայացված Պապ թագավորը: Հայոց հայրապետը սրան էլ փորձում է խրատել, սակայն՝ իզուր: Սա էլ իր հոր նման չի լսում Ներսեսին: Նվ քանի որ կաթողիկոսը անընդհատ նրան հանդիմանում և նույնիսկ սպառնում է անեծքով, ասում է բանաստեղծը, ուստի Պապը որոշում է այդ ամենից ազատվելու համար թունավորել Ներսեսին.

Բայց Պապ զազիր գործովք կացեալ,
Եւ ի սըրբոյն յանդիմանեալ,
Որում մահու դեղ արբուցեալ,
Եւ ի կենաց աստի հանեալ[2]:

Ներկայացված դրական և բացասական տիպերը բանաստեղծը գնահատում է ազգային շահերի և հայրենասիրության տեսակետից: Եթե նրանք, իրենց վարքով ու գործերով օգուտ են տվել հայոց երկրին ու պետությանը, բանաստեղծը նրանց մասին գովասանքով է խոսում, իսկ այն թագավորներն ու գործիչները, որոնք ըստ բանա-

---

1 «Բանք չափաւ», էջ 527:
2 Անդ, էջ 530:

ստեղծի արատավոր վարք և անարի գործեր են ունեցել, վնաս տվել երկրին ու պետությանը, դրանց մասին էլ խոսում է անարգանքով և զայրույթով։

Շնորհալին ֆանատիկ չէ։ Նա միայն իր ազգային-կրոնական շրջանակներում եղած դրական ու բացասական անձնավորությունների նկարագրով չի ներփակվում։ Նա շրջահայաց ու լայնախոհ է։ Այնտեղ, որտեղ դրսի թշնամին, առանձնապես մահմեդական, այլազգի բռնակալներն ու հրոսակները ներխուժում են հայոց երկիրը՝ թալանում, ավերում ու կոտորում, բանաստեղծը դառն կսկիծով ու խոր ատելությամբ է խոսում դրանց մասին։ Իսկ այնտեղ, որտեղ այդ նույն մահմեդական ազգերի այն առաջնորդները կամ պետական գործիչները, որոնք թեկուզ փոքր չափով հաշվի են առնում հայերի իրավունքներն ու շահերը, նրանց հետ վարվում են մարդավայել, սրանց մասին Շնորհալին գոհունակությամբ ու գովասանքով է խոսում, առանց նկատի առնելու կրոնական հակառակությունները։ Բարսեղ Անեցի կաթողիկոսը ազգի ընդհանուր շահերը պաշտպանելու խնդիրներով դիմում է Մելիք Շահին։ Վերջինս արժանավայել ձևով ընդունում է կաթողիկոսին, լսում նրան, հարգելով նրա խնդիրը՝ կարգադրում է իրեն ենթակա բանակին ու պետական գործիչներին, որ այլևս հայերին չհալածեն, չհափշտակեն նրանց գույքը, անվտանգ դարձնեն նրանց ֆիզիկական գոյությունը և թույլ չտան բռնի հավատափոխության դեպքեր։ Այդ Մելիք Շահի մասին Շնորհալին հետևյալ տողերն է գրում.

...Արդ զայսպիսի աղէտ տեսանել,
Այն որ հոգւովն էր զօրացեալ,
Չերկիւղ մարդկան ի բաց մերժեալ,
Առ վեհագոյնն ազգին երթեալ.
Այն՝ որ բոլոր աղանց տիրեալ,
Որք են ծովու յայս կոյս բնակեալ,
Որ Մելիքշահ անուանադրեալ,
Բարեբարոյն գովաբանեալ։
Զոր և սիրով իսկ ընկալեալ,
Եւ մեծարդոյ փառօք պատուեալ,
Չկամրս սրբոյ նորին լըցեալ
Եւ բղխողիրսըն կատարեալ[1]։

Մի քանի խոսք պոեմի արվեստի մասին։ Ասվեց, որ ժամանակի համար դրական այս ժանրը միանգամայն նորություն էր։

---

[1] «Բանք չափաւ», էջ 551։

Բնականաբար նոր դրել սկսող երիտասարդ բանաստեղծի համար շատ դժվար կլիներ գրական մի նոր տեսակ, լուրջ ու բազմաբովանդակ թեմայով ստեղծագործել բարձր արվեստով, ինչպես նրա հետագա պոեմներն են: Այս պոեմի գլխավոր թերությունն այն է, որ համեմատաբար, արվեստի տեսակետից թույլ է և դա հասկանալի է: Բայց միևնույն ժամանակ ճիշտ չի լինի Շնորհալու այս գործը համարել «ընդհանրապես մի հետևակ բան»[1] կամ «իր գրվածոց ամենեն հետևակը»[2]: Արվեստ ասելով, եթե մենք հասկանանք միայն բազմահանգ բանաստեղծություն, պատկերավոր մտքեր, գեղեցիկ նկարագրություններ, որոնցից իրոք որ, գրեթե զուրկ է այս պոեմը, շատ անձուկ և սահմանափակ կլիներ: Երբ բանաստեղծն ապրում է իր գրվածքով, նրա խոսքը ջերմ է ու անմիջական, գործի մեջ դրսևորվում է գրողի անհատականությունը, կարողանում է ըմբռնել ժամանակի ոգին, վեր է բարձրանում տիրող գրական ըմբռնումներից, տեսնում է նորը՝ աշխարհիկն ու ազգայինը, իր հայրենասիրական գաղափարներով կարողանում է ազդել ժամանակի ընթերցողի վրա, ունենում է իրեն նմանողներ և հետևողներ, սրանք նույնպես արվեստում կարևոր մոմենտներ են, որ անպայման պետք է նկատի ունենալ այս երկը վերլուծելիս և գնահատելիս:

Անժխտելի է, որ պոեմն ունի աչքի ընկնող թերություններ. սակայն այդ թերությունները նշելիս, պետք է գործը դիտել իր ժամանակի մեջ և ոչ թե մեր օրերի ու արվեստի նորմաների տեսակետից: Սովորաբար ընդունված է «վիպասանությեան» մասին խոսելիս, որպես աչքի ընկնող թերություն նշել պոեմի նույնահանգ ձևը: Իրոք որ դա ձանձրացուցիչ մի պակասություն է: Բայց այն ժամանակ, երբ հայկական հին գրականության մեջ տաղաչափությունը տակավին նոր էր աստիճանաբար իր տեղը գրավում և դեռ պատանի բանաստեղծը նոր էր սկսել գրել, չէր կարող միանգամից կատարյալ տաղաչափությամբ ու բազմահանգ հորինել իր առաջին գործը: Այս թերությունն ինքը՝ բանաստեղծը տարիներ հետո զգացել է և իր մի ուրիշ՝ «Բան հաւատոյ» մեղ արդեն ծանոթ պոեմի հիշատակարանում ասում է, որ պիտի գրի փոփոխական հանգերով, որ ձանձրալի չլինի ընթերցողի համար:

Պոեմն ունի նաև կառուցվածքային թերություններ, ուր դեպքերը, երևույթներն իրար հաջորդում են ոչ կապակցված ու տրամա-

---

1 Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Բ հատ., էջ 89:

2 Ղևոնդ Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 75:

բանորեն։ Այնտեղ, ուր կարելի է կարճ խոսել, ընդհակառակը, խոսվում է երկար, նյութը ծանրաբեռնվում է, աղոտանում կամ խճճվում է գրվածքի գլխավոր գաղափարը։ Հայտնի չէ թե ինչ նկատառումով պոեմում Բագրատունիների գործերն ու գործիչներն անտեսվել են։ Գրվածքի մեջ շուրջ 8 էջ խոսվում է Հայկազանց, 33 էջ Արշակունիների, մոտ 20 էջ Պահլավունիների մասին, իսկ Բագրատունիները, որ նույնպես երկար դարեր խոշոր դործ են կատարել Հայոց պատմության մեջ, ունեցել են քաջ, առաքինի, հայրենասեր պետական գործիչներ, արժանացել են միայն հետևյալ գունատ մի քանի տողերին.

Իսկ յետ ամաց սակաւ անցեալ...
Բագրատունեաց թագաւորեալ,
Եւ մասնաւոր Հայոց տիրեալ,
Եկեղեցիք լուսաւորեալ,
Նախարարաց գահ նորոգեալ...[1]։

Իր թերություններով հանդերձ բանաստեղծի առաջին գործը ժամանակին շատ ջերմ ընդունելություն գտավ, որը ոչ միայն սիրվեց ու ընթերցվեց, գրչագրվեց ու տարածվեց, այլև օրինակ հանդիսացավ հետագա շատ գրողների համար։

## Բ. «ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԻՑ ԵՒ ԶԱՐԴՈՒՑ ՆՈՐԱ[2]»

Ներսես Շնորհալու գործերից շատերը իրենց թեմայով ու էությամբ նորություն էին ժամանակի գեղարվեստական գրականության մեջ։ Դրանց մեջ, որպես գրական նոր տեսակ, մանավանդ իր թեմայով հետաքրքրական է «Յաղագս երկնից և զարդուց նորա» տիեզերագիտական պոեմը՝ գրված 1160 թվականին, ժամանակի նշանավոր բժիշկ և աստղագետ Մխիթար Հերացու խնդրանքով։

Պոեմը բաղկացած է 200, իսկ Յորդորակը 62 տողից. առաջինը՝ 12, իսկ երկրորդը՝ 11 վանկանի եռանդամ ոտանավորի չափով։

Ինչպես «Ողբ Եդեսիոյ»-ն, այնպես էլ այս երկը գրված է դիմառնաբար։ Անձնավորված երկինքը ահա թե ինչպիսի պարծանքով է պատմում իր ծագման, դերի, զարդերի ու ձևի մասին.

---

1 «Բանք չափաւ», էջ 538։

2 Լրիվ վերնագիրն է «Յաղագս երկնից և զարդուց նորա բարառնաբար ի դիմաց նորին ի չափ երկոտասանհոյն պարզեալ ոտից ի խնդրոյ առն բժշկապետի և աստեղագետի Մխիթարայ» («Բանք չափաւ», էջ 279)։

*Իմ եղական գոլով բնութիւն և սկըզբնական,*
*Յանեղէ՞ն ձրգեալ կամար անզուգական,*
*Անջրպետեմ զջուրսըն վերին և ներքնական...*
*Ես եմ միջոց ընդ անմարմինան և մարմնական...*
*Պարունակող եմ անզգայնոց և զգայական...*
*Բոլորա՞կ եմ, կիսագունդ որպէս խորան,*
*Բնութեամբ կայուն, անձամբ շարժուն անկայական։*
*Հիմն և աւարտ եմ գոյութեանցս այս նիւթական...*[1]

Գրվածքը բովանդակում է երկնքի ու երկնային մարմինների, նրանց բնույթի, շարժման և կյանքի վրա ազդելու նկարագրությունը։ Շնորհալին ի դեմս երկնքի արտահայտել է իր ժամանակի աշխարհըմբռնումը տիեզերքի ու տիեզերական մարմինների վերաբերյալ։ Նկարագրության առարկաներն են գլխավորապես արևը, լուսինը, մոլորակները և կենդանակերպերը։ Բոլոր ժամանակներում էլ երկինքն իր անթիվ լուսատուներով անսպառ աղբյուր է եղել բանաստեղծության համար։ Առաջին հայացքից թվում է, թե այստեղ Շնորհալին պիտի երևա բանաստեղծական մեծ թռիչքներով ու պատկերավորությամբ, քանի որ այդ թեման շատ հնարավորություններ է տալիս այդպիսի թռիչքի և գեղեցիկ նկարագրությունների համար։ Դժբախտաբար այդպես չի եղել։ Թեև պոեմում կան գեղեցիկ համեմատություններ, վառ երևակայության հետ կապված պատկերներ, բայց քանի որ բանաստեղծի միտքն ու ղգացմունքները հիմնականում կաշկանդված են եղել տիեզերքին վերաբերող արարչագործական գաղափարներով, ուստի նա չի կարողացել լայն թևածել որպես պոետ և ոչ էլ նոր խոսք է ասում տիեզերքի կազմության ու նշանակության մասին։ Այսուհանդերձ բանաստեղծը, տիեզերական երևույթների մասին խոսելիս, կուրորեն չի գնում մինչև այդ եղած դոգմատիզմի հետքերով, այլ երևույթներին մոտենում է քննադատորեն և հանդես է բերում ավելի բարձր հասկացություն, քան ժամանակի գիտնականները ու աստվածաբանները։ Ահա այս տեսակետից էլ պիտի դիտել և արժեքավորել բովանդակությամբ հին, բայց ձևով նոր այս գործը։

Շնորհալին այստեղ էլ հետապնդել է ուսուցողական նպատակ։ Մի կողմից նա ուզում է ժողովրդական լայն խավերին ծանոթացնել տիեզերական երևույթների հետ, իսկ մյուս կողմից հերքում է տիե-

---

[1] «Բանք չափաւ», էջ 281—283։

*դերքի մարմինները աստվածացնելու անոտիապաշտ սովորությունը, որը գալիս է տակավին հեթանոսական շրջանի անիմիստական վերապրուկներից և քաղդեական խաբուսիկ մոգական «գիտություն»-ից։ Գրագետ լինելը, սովորական ուսում ունենալը, ըստ բանաստեղծի, դեռ բավական չէ բացատրելու տիեզերական նուրբ ու բարդ երևույթները, վերջիններիս օրինաչափությունը։ Խոր գիտելիքներ չունենալու պատճառով շատ անգամ մարդիկ սխալ բացատրություն են տալիս այդ երևույթներին։*

*Տիեզերական երևույթները ճիշտ մեկնաբանելու և վերլուծելու համար՝ հարուստ գիտելիքների հետ միաժամանակ հարկավոր է նաև առողջ և լայնախոհ միտք։ Եթե մարդիկ ողջախոհ և լայն մոտեցում ունենան երկնքում կատարվող երևույթներին, ապա պարզ կլինի նրանց համար, որ այնտեղ զարմանալի կամ հրաշալի ոչինչ չկա, քանի որ այդ բոլորը տիեզերական մարմինների օրինաչափ շարժման հետևանք են։*

*Եւ չեն զարմանք ըսքանչելեաց՝ որք յայս փութան,*
*Թէ ի շարժմանց սոցա լինին նախ գիտական...*
*Ի կերպարանս ազգի ազգի տալով նըշան,*
*Ծանուցանեն բանաւորաց զառաջիկայն...*[1]

*Շնորհալին ներհուն մտքի և գիտական մոտեցման արժեքն այն աստիճան բարձր է գնահատում այստեղ, որ այդ երկուսի առկայության դեպքում, երբ արդեն «մոլար առասպելները» այլևս չեն կարող մարդուն խաբել, հնարավոր է համարում ո՛չ միայն ըմբռնել, այլև քննության ենթարկել արարչագործության հետ կապված գաղափարներն ու մեկնությունները։*

*Ծանիր և զայս, ո՛վ իմաստուն և խոհական,*
*Զի այս արուեստ հուպ էր ի տունն աբրահամեան...*
*Նա՝ և Մովսէս և այլ ընտրեալք յայս վարժեցան,*
Զգործըս ճննել ամենիմաստն արարչութեան։
Բայց ոչ մոլար առասպելօք խաբողական,
Այլ ճշմարիտ յրստակ մրտօք և մաբրական[2]

*Ըստ Շնորհալու՝ խորախորհուրդ, բայց իմանալի են երկնային երևույթները, որոնք ինքնանպատակ կամ ինքնաբավ չեն։ Դրանք սերտ կապված են երկրային կյանքի հետ, ազդում են վերջինիս վրա*

---

1 «Բանք չափաւ», էջ 287։

2 Անդ, էջ 291—292։

տարբեր եղանակներով ու չափերով՝ կապված ժամանակի ու տեղի հետ։

Այդ աղեցությունը կարող է արտահայտվել հակասական ձևվով։ Երկնային մարմինների օրինաչափ շարժման հետևանքները կարող են երկրի ու նրա վրա ապրող կենդանական աշխարհի համար մերթ օգտակար լինել, մերթ վնասակար։ Որպես օրինակ պոեմում առնված են ջուրն ու կրակը։ Ջուրը շատ անհրաժեշտ է կյանքի համար, առանց որի ոչ մի արարած չի կարող գոյություն ունենալ։ Սակայն նույն ջուրը որոշ պայմաններում դառնում է կործանարար հեղեղ, որը ահեղ աղետ է կյանքի համար և ոչնչացնում է այն։ Կրակը, նրանից բխող ջերմությունը, նույնպես կյանքի աղբյուր է ու անհրաժեշտ պայման։ Բայց այդ կրակն էլ իր հերթին դառնում է հրդեհ, այրում, ավերում է ամեն ինչ ու կյանում ոչնչացնում կյանքը։ Հետևաբար, եղրակացնում է բանաստեղծը, երկնային մարմինների շարժման անխուսափելի հետևանքներն ունեն երկու հակառակ բնույթ. մի կողմով նրանք անհրաժեշտ և օգտակար են աշխարհի ու արարածների համար, իսկ մյուս կողմով՝ վնասակար և աղետաբեր։

Անձնավորված երկինքը հպարտությամբ է պատմում աշխարհին, որ ինքը ոչ միայն հարուստ է հրաշատես զարդերով, անզուգական դեղեցիկ է և համապարփակ, այլև անընդհատ շարժման մեջ է.

Շարժիմ յաւէտ, թռչիմ արագ՝ անհասական...
Եւ ի գունոյ պայծառութեան չորդեղանամ[1]։

Չկա ոչ մի ուժ, որ ազդի երկնի վրա. ինքն է ազդողը և չկա ոչ մի ուժ, որից ինքը սասանի, այլ ինքն է սասանեցնողը։ Ահեղ որոտները, հեղեղը, հրդեհը, սարսափելի փոթորիկները նրա համար ոչինչ են, որովհետև դրանք բոլորն էլ ծնվում են երկնքի բնդերքից և ցույց են տալիս նրա հզորությունը։

Բոլոր տեսակի կենդանիների (օդում, ջրում և գետնի վրա ապրողների) ծննդի ակունքն ու մահվան պատճառը նույնպես ինքը՝ երկինքն է, որի կամքին հլու հնազանդ ենթարկվում են տիեզերական մարմինները։

Երկինքը միաժամանակ բնության ու տիեզերքի փարթամության և դեղեցկության հավիտենական պահարանն է։ Այդ ամենը տնօրինելու հետ միասին նրա ձեռքին է նաև կյանքի տևողության՝ ժամանակի բաշխումը։ Նա ինչպես ցանկանա, այնպես էլ կսահմա-

[1] «Բանք չափաւ», էջ 283։

նի բազմատեսակ կենդանի էակների կյանքը։ Այդ էակներից ոմանք երկար, ոմանք էլ կարճ են ապրում երկնքի գիտությամբ ու կամքով։ Երկրային կյանքի տեղողության ու ժամանակի խնդրում մեծ դեր են խաղում արևն ու լուսինը, մանավանդ արևը, որով պարծենում է երկինքը, թե

*Ունիմ առ ինէ՝ պայծառատիպ մի կարկհան,*
*Եդեալ ի լանջս ըստ վկասին ահարոնեան...*[1]

Արեգակի կենարար մեծ դերը ցույց տալու համար բանաստեղծը երկնի բերանով բերել է աշխարհային կյանքից վերցրած մի գեղեցիկ համեմատություն։ Իր ջերմությամբ ու լույսով նա հանդես է գալիս որպես փեսա, իսկ ջուրն ու խոնավությունը՝ որպես սիրակարոտ հարս։ Ջերմ սիրով արեգակը գրկում է իր հարսին, զուգավորվում նրա հետ և դառնում կյանքի ակունք.

*Փեսայօրէն ջերմամբ սիրոյ յոյժ ըղձական,*
*Գիրկս արկանէ հարսին իւրոյ խոնաւութեան*[2]։

Սողոմոնի «Երգ երգոց»-ին նվիրված հիշատակարանի մասին խոսելիս, մենք տեսանք, որ Շնորհալին հետևելով Գրիգոր Նարեկացուն «հարս» և «փեսա» բառերը կիրառել էր կրոնական-այլաբանական առումով, այսինքն՝ իրեն համարել էր հարս, իսկ Քրիստոսին՝ փեսա։ Այդ բառերը թեև այստեղ էլ գործածվել են այլաբանորեն, բայց ոչ կրոնական, այլ աշխարհային առումով։ Փեսան կենաստու արեգակն է, իսկ հարսը՝ ջուրը։ Երկուսի միավորումից բեղմնավորվում է ամբողջ աշխարհը և լցվում բազմատեսակ կյանքով։ «Յաղագս երկնից և զարդուց նորա» պոեմում, հարսի ու փեսայի հասկացությունը կրոնական պատկերացման հետ արդեն ոչ մի կապ չունի, այլ բնական, աշխարհիկ նշանակությամբ է գործածված։ Գեղեցիկ ու լիրիկական է լուսնի նկարագիրը, որ այդ ժամանակ եզակի երևույթ էր մեր միջնադարյան դեղարվեստական գրականության մեջ։ Սպիտակափայլ լուսինը տասնհինգ օրը մի անգամ օրինաչափորեն նվազում և լրանում է։ Մարդիկ լուսնի հետ են կապում ժամանակի միավորների հաշիվները՝ ամիսը, տարին, դարը։ Ըստ բանաստեղծի, նրա հետ է կապված դավթյան տասնաղի քնարի երգը։ Ահա թե ինչպես գիշերը, լուսնի ներկայությամբ ամուսնական կապերով միավորվում են խոնավությունն ու ջերմությունը, որպեսզի աշխարհը լցնեն բազմազան կյանքով։

---

1 «Բանք չափաւ», էջ 285։

2 Անդ։

*Իսկ առ դիշեր՝ սպիտակափայլ բիւրեղանման,*
*Որ միշտ աճէ և նրւազէ հրնդեւտասան,*
*Չափէ ըզթիւ ժամանակաց աւուրց մարդկան.*
*Զոր և քրնարըն տասնաղի երգէ դաւթեան։*
*Բնաւորելով զիջին խոնաւ և հիւթական,*
*Միաւորեալ յամուսնութիւն կիզողական.*
*Յորոց խառնից գոլ համայնից ծրնրնդական.*
*Բուսոց, սրնկոց և ըղդայնոց՝ որք շրնչական[1]։*

*Այնուհետև նկարագրվում են 7 մոլորակները, որոնք թեպետ իրենք «մոլորյալ» են, բայց «տան անմոլար խմաստ մարդկան»։ Իսկ 12 կենդանակերպերը[2] ըստ հին արևելքի ու քաղդեացիների պատկերացման 7 մոլորակների կայաններն են, որոնց միջից տարվա ընթացքում անցնում են նրանք և արևը։ Այդ 12 կենդանակերպերը բանաստեղծը նմանեցնում է մի քաղաքի՝ 12 աշտարակներով։ Դրանց շարժումից ու ընթացքից իր ժամանակին մոգերը դանազան գուշակություններ էին անում։ Քաղդեական աստղաբաշխների առասպելական մեկնաբանությունների հետ Շնորհալին չի համաձայնում, այլ ընդունում է, որ «անբան, յանկենդանեաց» ընթացքը միայն ինչ որ ազդական նշանակություն ունի կյանքի համար և ուրիշ ոչինչ։*

*Ըստ Շնորհալու աշխարհայացքի, ոչ թե այդ անգդա մոլորակները կամ կենդանակերպերն են փոփոխություն մտցնում կյանքի մեջ ու վճռական դեր խաղում, այլ այդ ամենը տնօրինում է երկնի ու երկրի արարիչը։ Այնուհետև բանաստեղծը համոզված է, որ հավիտենական համարվող այդ զարմանալի երկնային զարդերի վերջն էլ է գալու մի օր։ Բայց ե՞րբ։ Ըստ ս. Գրքի՝ երբ աշխարհի ստեղծագործության 7 հազար տարին լրանա, որի խորհուրդն են ներկայացնում 7 մոլորակները, ութ հազարամյակում վրա կհասնի աշխարհի վերջը։ Այդ ժամանակ տակն ու վրա կլինեն երկինքն էլ, երկիրն էլ։ Այլևս ոչ արև, ոչ լուսին և ոչ էլ մոլորակներ են հարկավոր։ Լուսատուներն իսպառ կվերանան և վերջին դատաստանից հետո կստեղծվի նոր աշխարհ։*

*Վերջում, երբ երկինքը ավարտում է իր զարդերի ու դերի նկա-*

---

1 «Բանք չափաւ», էջ 285—286։

2 12 կենդանակերպերը, որոնք հայտնի են նաև Զոդիկոս Հունարեն անունով, հետևյալներն են՝ Խոյ, Ցուլ, Երկվոր, Խեցգետին, Առյուծ, Կույս, Կշիռ, Կաթնճ, Աղեղնավոր, Այծեղջյուր, Ջրհոս և Ձուկ։

բազմությունը, բանաստեղծը հայտնում է իր անձնական հուզմունքն ու հիացմունքը։

Ընդ որս և ես, որ սպասաւորս եմ բանական,
Որ ի դիմաց երկնից գրեցի սակաւ այս բան,
Նայիմ յերկինս և նըկատեմ զայս ամենայն,
Եւ փառըս տամ անեղ բնութեան արարչական[1]։

Պոեմից հետո Մխիթար Հերացուն ուղղված ակրոստիքոս «Ճորդորակ»-ն ունի «Այլաշափ տաղք ի խնդրոյ անուան նախադիծ տառից տանց» վերնագիրը։ Գրվածքի տների սկզբնատառերը հոդում են հետևյալ խոսքը՝ «Մխիթար բժիշկ, ընկալ ի Ներսէսէ զայս բան»։

## Գ. «ՈՂՔ ԵԴԵՍԻՈՅ»

Այս պոեմը Շնորհալու չափածոյի պսակն է, նրա գլուխ-գործոցը։ Սա արդեն իսկական բանաստեղծական մտահղացմամբ գրված մի աքանչելի քերթված է, ուր հեղինակը կարողացել է ջերմ ու ճշմարտացի դրսևորել և իր, և ժամանակի հայ ժողովրդի քաղաքական տրամադրություններն ու նկրտումները։ Պոեմի նյութը պատմական անցքերն ու եղելություններն են։

Շատ հին ժամանակներից Եդեսիան իր աշխարհագրական դիրքով ու հարստությամբ Միջագետքի հռչակավոր քաղաքներից է եղել։ Արևելքի և արևմուտքի մեծ պետությունները տարբեր ժամանակներում այս քաղաքը խլել են իրար ձեռքից և տիրապետել նրան։

Պատմության մեջ Եդեսիային տարբեր անուններ են տալիս։ Հույն աշխարհագիր Ստրաբոնը նրան վերագրում է երեք անուն՝ Եդեսիա, Բամբիկ և Հիերապոլիս։ Հռոմայեցի աշխարհագիր և բնախոս Պլինիոսը նույնպես Եդեսիան հիշում է երեք անուններով՝ Եդեսիա, Անտիոք և Կալլիռոյե։ Արաբացի հեղինակներն Եդեսիան անվանում են՝ Օրֆա, կամ Օրհա։ Վերջապես եվրոպացի աշխարհագետներն ու բանասերները կոչում են՝ Ռոա, Ռոհախ, Ռազե, Օռֆա, Եդեսիա, Անթեմասիա և այլն։ Իսկ հայկական մատենագրության մեջ այն հայտնի է Ուռհա և Եդեսիա անուններով[2]։

Ալեքսանդր Մակեդոնացուց հետո, երբ Սելևկիոսը տիրում է այս երկրին ու «իբր 310 ամօք յառաջ քան զՔրիստոս,— ասում է ասորի պատմիչներից մեկը,— արար ի նմին քաղաքի զբազում չի-

1 «Բանք չափաւ», էջ 296։

2 Մովսէս Խորենացի, Թիֆլիս, 1913, գիրք Բ, գլ. ԺԱ, էջ 113։

նուիրեաց և եւս նմա զանուն միոյն ի դստերաց իւրոց, որ կոչէր Եդեսիա[1]»: Հետագայում հայոց Վաղարշակ Ա Թագավորը տիրում է Միջագետքին, Եդեսիայում նախարար է կարգում իր ազգականներից մեկին Ռու կամ Ուտհէ անունով, որը քաղաքը մեծացնում ու շքեղացնում է նորակառույց շենքերով և կոչում իր անունով:

Հայերը տիրում են Եդեսիային մինչև 75 թվականը, որից հետո Օրվանդ Բ-ն ստեղծված քաղաքական դրությունից հարկադրված, Միջագետքը տալիս է Վեսպասիանոս կայսեր և փոխարեն վերցնում վերին Հայոց գավառները: Սկսած Վեսպասիանոսի ժամանակներից, Եդեսիան ընկնում է հռոմայեցիների տիրապետության տակ և մնում բավական երկար: Այնուհետև տարբեր ժամանակներում Միջագետքին տիրում են հույները և ապա արաբները՝ մինչև 1099 թվականը, երբ Եդեսիան վերցրին խաչակիրները: Վերջիններս այդ քաղաքին կարողացան տիրել միայն շուրջ 45 տարի: Այս տարիներին, Հալեբին տիրող Զանգի ամիրան ընդարձակելով իր սահմանները՝ ամբողջ Ասորիքի իշխողը դարձավ: Եդեսիան Ասորիքի և Փոքր Ասիայի սահմանակետն էր: 1144 թվականին Զանգին բազմաթիվ զորքով հանկարծակի պաշարեց այդ քաղաքը: Եդեսիային տիրող խաչակիր ֆրանկները և նրանց կոմս Ճոսլինը, փոխանակ զբաղվելու քաղաքի պաշտպանությամբ, վարում էին ցոփ ու շվայտ կյանք, անուշադրության մատնելով երկրի ապահովությունը: Պաշարված քաղաքի բնակիչները հերոսաբար էին դիմադրում անհամեմատ զորեղ թշնամուն: Մի ամիս, զոր ու դիշեր շարունակ քաղաքի պարիսպների վրա տեղի են ունենում արյունալի կռիվներ: Չնայած ոչ մի տեղից եդեսիացիները սպասած օգնությունը չեն ստանում, բայց և այնպես Զանգին երկար ժամանակ չի կարողանում քաղաքը գրավել: Անօգնական ու պաշարված ժողովուրդը հետզհետե թուլանում է: Նոսրանում են նրանց շարքերը: Բաց մնացած տեղերից թշնամիները քանդում են պարսպի հիմքը և գրոհելով ներխուժում քաղաք: Սկսվում է ահեղ կոտորած, թալան, կողոպուտ և գերեվարություն: Քաղաքը ներկվում է անմեղ մարդկանց արյունով: Պաշարված քաղաքումն է եղել այդ ժամանակ նաև երիտասարդ Գրիգոր Ապիրատը, որը մի կերպ ազատվել է մահից և գնացել Ծովք՝ իր հորեղբայրների մոտ: Այս սոսկալի աղետի վերաբերյալ ականատես Ապիրատը մանրամասն պատմում է Շնորհալուն և խնդրում գրել այդ մասին: Ապիրատի և ուրիշ ականատեսների աղետալի

---

1 «Ողբ Եդեսիոյ», 1829, Թիֆլիս, էջ 9:

պատմածների տպավորության տակ Շնորհալին գրում է «Ողբ Եդեսիոյ» պատմական պոեմը:

* * *

Շնորհալուց առաջ «ողբեր» գրել են թե մեր պատմագիրները և թե բանաստեղծները: Առաջիններից հիշենք Մովսես Խորենացուն և Արիստակես Լաստիվերտցուն, իսկ բանաստեղծներից՝ Դավթակ Քերթողին և Գրիգոր Նարեկացուն: Բանաստեղծության այս ժանրը մեր միջնադարյան գրականության մեջ ուշագրավ ու ինքնատիպ է այն տեսակետից, որ այն իրրև նյութ վերցնում է հասարակական կամ անձնական ողբերգական դրություններն ու դեպքերը: Հասարակական-ազգային բնույթ են կրում Խորենացու և Լաստիվերտցու ողբերը, որտեղ իհարկե արտահայտություն են գտել գրողի նաև ներքինը, անձնականը: Սակայն գերազանցապես անձնական անհատական բնույթ ունեն Դավթակի և Նարեկացու ողբերը, որտեղ, իհարկե, արտահայտվել են նաև հասարակական արժեք ներկայացնող մոմենտներ: Այսպիսով, մինչև Շնորհալին, պատմագիրների գրած «ողբերը» իրենց էությամբ գերազանցապես հասարակական-սոցիալական են, իսկ բանաստեղծներինը՝ անձնական-անհատական:

Խորենացին իր «Հայոց պատմության» եզրափակում է նշանավոր «Ողբով», որը գրել է Արշակունյաց թագավորության վերացման և հայ պետականության անկման առիթով: Հայրենասեր պատմագիրը բանաստեղծին հատուկ քնարականությամբ դառնապես ողբում է իր երկրի քաղաքական դրությունը՝ խորապես ապրելով այն:

Խորենացու «Ողբը» այն ամուր հիմքն է, որի վրա դարեր հետո շատ պատմագիրներ ու բանաստեղծներ կառուցել ու հորինել են իրենց ողբերը, զարգացրել ու հարստացրել գրական այդ ժանրը: Պակաս հուզիչ ու քնարական չէ և Լաստիվերտցու «Ողբը»: Խորենացու «Ողբում» հասարակական և քնարական մոտիվների կողքին աչքի է ընկնում և ճարտասանական տարրը, բայց Լաստիվերտցու մոտ զգացմունքներն ավելի խորն ու հորդաբուխ են, առանց ճարտասանական ձևերի: Լաստիվերտցու «Ողբը» համակված է սոցիալական և անձնական բնույթի ապրումներով: Այս տեսակետից էլ նա ավելի շուտ բանաստեղծ է, քան պատմագիր և որպես այդպիսին նա յուրատիպ է մեր միջնադարի գրականության պատմության մեջ:

Դավթակի և Նարեկացու Ողբերի նյութն ըստ էության անհատական են։ Մեր հին դրականության մեջ Դավթակն է հանդիսանում անհատական աշխարհիկ պոեմի հիմնադիրը, որտեղ նա ողբում է դավադրաբար սպանված Ջիվանշիր իշխանի մահը։

Իր էությամբ գերազանցապես միստիկական, բայց թափով ու արվեստով մի անզուգական, հանճարեղ կոթող է Գրիգոր Նարեկացու «Ողբերգությեան մատեանը», որտեղ Դավթակից երեք դար հետո հանդես է գալիս նույնպես անհատը, սակայն իր խոր, բազմապիսի, ընդվզող, տարամերժ ապրումներով, հախուռն բռնկումներով, բողոքով ու միստիկ նրազներով։ Այսպես յուրատիպ ու խոր մարդկային են եղել միջնադարի մեր ողբերգու պատմագիրներն ու բանաստեղծները մինչև Շնորհալին։ Նրանք արտահայտել են մարդուն և մարդկությանը հուզող մտորումները, տրամադրություններն ու ապրումները։ Շնորհալուց դարեր առաջ «ողբերի» տեսակը մեր դրականության մեջ բավականին լայն տեղ է ունեցել իր սոցիալական և անհատական մոտիվներով, որոնք հիմք ու առաղձ են հանդիսացել «Եդեսիոյ Ողբի» համար։

* * *

Թեև Շնորհալին չի ասում, թե երբ է գրել իր «Ողբը», բայց քանի որ Եդեսիայի գրավումն ու կոտորածը տեղի է ունեցել 1144 թվականի վերջերին, մեր բանասերները հավանական են համարում, որ կատարված դեպքերի թարմ տպավորության տակ՝ 1145 կամ ամենաուշը 1146 թվականների ընթացքում պետք է գրած լինի այն։ Պոեմն ունի ընդարձակ վերնագիր.

Երր Տեառն Ներսիսի,
Սրբազան եպիսկոպոսի.
Եղեր Տեառն Գրիգորի,
Հայոց կաթողիկոսի.
Բան բարառնական,
Տաղիւ չափեալ Հոմերական,
Խօսեալ բանիւ ողբերգական,
Վասն Եդեսիոյ մեծի առման.
Ի թուականի հինգ հարիւրի,
Եւ իննսան ընդ երեքի.
Քսան ւ երեք դեկտեմբերի,
Ի չերրորդ ժամ օր շաբաթի[1]։

1 «Ողբ Եդեսիոյ», ի Տփղիս, 1829, էջ 1։



318—13

Ինչպես երևում է, վերնագրի սկզբի չորս տողերը չունեն մնացած ութ տողերի հանգն ու չափը, և հավանաբար ավելացրել են բանաստեղծի մահից հետո։

«Եդեսիոյ Ողբ»-ը ամենից առաջ աչքի է ընկնում այն բանով, որ նրա սյուժեն ազատ է կրոնական բնույթից և ընդգրկում է պատմական իրադարձություններ՝ կապված Եդեսիայի առման ու աղետի հետ։ Իրար հետ կապված ու հաջորդող դեպքերի ընթացքն ու զարգացումը կազմում են «Ողբի» վիպական և քնարական մոմենտների էությունը, երկի բուն բովանդակությունը։ Նկարագրվող դեպքերի և երևույթների մեջ բանաստեղծը կարողացել է վեր հանել և գեղարվեստորեն ներկայացնել աշխարհիկ կյանքը, ազգերի, նրանց կրոնների և մարդկանց փոխհարաբերությունները։ Ավելին, Շնորհալին միայն պասսիվ նկարագրող չէ։ Նա գնահատում է դեպքերն ու մարդկանց գործողությունները, ցույց է տալիս իր վերաբերմունքը, խորապես ապրում մարդկային և հասարակական վիշտը։

Պոեմը բացի սկզբի 12 տող վերնագրից և 6 տող ակրոստիքոս հավելված մասից, բաղկացած է 2096 տողից, այսինքն՝ 1048 երկտող տնից։

Ամբողջ գործը կարելի է բաժանել չորս մասի. Նախերգանքը (1—27 էջ), Եդեսիայի պաշարումն ու կոտորածը (28—74), անհծքները (74—91) և բանաստեղծի հույսերն ու ակնկալությունները գալիքի նկատմամբ (91—110 էջ)։

Հենց սկզբից պոեմն աչքի է ընկնում վիպերգելու հետաքրքիր եղանակով, որը բոլորովին նորություն էր ժամանակի համար՝ որպես գրական ձև։ Դա դիմառնություն է, գեղարվեստական պատկերման ազդու եղանակներից մեկը, ուր անշունչ առարկաները կամ բնության երևույթները օժտվում են մարդկային հատկություններով ու կարողություններով, խոսում են, զգում, մտածում ու գործում։ Պոեմում Եդեսիա քաղաքը հանդես է գալիս անձնավորված։

Ջանգի ամիրայի վայրենաբարո հորդաները կործանել են Եդեսիան։ Ծաղկած պարտեզի նման քաղաքը ներկվել է իր զավակների արյամբ։ Եդեսիան նման է որդեկորույս սգավոր մի մոր, որը նրստած ավերակների վրա փետում է իր վարսերը, մոխիր ցանում գլխին ու աղեկտուր աղաղակներով ողբում աննկարագրելի ավերն ու աղետը։ Ծանր է ու խորը Եդեսիայի վիշտը. նա չի կարող մենակ տանել այդ հոգեցունց ապրումները, ուստի նա ամենից առաջ ողբի է հրավիրում քրիստոնեական եկեղեցու նշանավոր կենտրոններին՝ Երուսաղեմին, Հռոմին, Կ. Պոլսին, Աղեքսանդրիային և Անտիոքին։

Սդեսիան բարեկամաբար հանդիմանում է հարևան Անտիոք քաղաքին, որ հապաղել է և չի հասել օգնության.

Բանիւ դատմամբ ընդ քեզ կագեմ,
Ո՛վ Անտիոք քոյր սիրելի...
Ընդէ՞ր չհասեր վաղվաղակի,
Ինձ ի թիկունս օգնականի[1]։

Պոեմում ողբն հետզհետե խորանում ու ծավալվում է։ Թվում է, թե իրոք ողբացողը ոչ թե Սդեսիան է, կամ ի դեմս Սդեսիայի՝ ինքը բանաստեղծը, այլ մի որդեկորույս թշվառ կին, որը հոգեկան հավասարակշռությունը կորցրած՝ գանակոծում է իրեն և բզկտում.

...Քօղս ի գլխոյ մերկանալով,
Զիմ պատառեմ ծածկոյթ զարդի.
Փետտեմ ըզվարս իմ ցանկալի,
Խըզեմ ըզհերըս անխնայելի.
Քարամբ ծեծեմ կուրծըս սրտի
Բաղխեմ զերեսս իմ յապտակի[2]։

Թեև քիչ հետո խելակորույս, ողբացող կինը որոշ չափով ուշքի է գալիս, դադարում է մազերը փետելուց և իր երեսին հարվածելուց, սակայն նրա վիշտը խորն է ու տևական։ Նա սև է հագնում, որպես սգավոր՝ նատում մութ տանը՝ մեղմ լալու և հորդ արցունք թափելու համար։ Երբեմնի փառավոր մայրը կորցնելով իր զավակներին, գիտակցում է, որ ինքը հիմա աշխարհի համար դարձել է նախատելի ու խեղճ.

Նըստիմ ի սուգ ի տան մըթին...
Սև ըզգենում գոյն տըխրալի.
Հեղում արտօսր անչափելի,
Յորդ և առատ՝ նման գետի.
Քանզի առակ եղէ յերկրի,
Տիեզերաց նախատելի[3]։

Ապա ողբը հետզհետե դուրս է գալիս կրոնական և անձնական նեղ սահմաններից ու դառնում սոցիալական, ազգային-քաղաքական մի բողոք՝ ընդդեմ բարբարոսության և անողոք իրականության։

Քրիստոնեական նշանավոր կենտրոններին ողբի հրավիրելուց

---

1 «Ողբ Սդեսիոյ», էջ 8։
2 Անդ, էջ 21։
3 Անդ, էջ 22։

Հետո Եդեսիան առանձնապես դիմում է Հայաստանին և ապա երբեմնի նրա փառքը կազմող Վաղարշապատ և Անի մայրաքաղաքներին, որոնք նույնպես փառազուրկ են ու թափուր։ Բանաստեղծը խորապես ողբում է հայ ժողովրդի փառավոր անցյալն ու տխուր ներկան, նրա ազգային պետության անկումը և օտարների լծի տակ ընկնելը։ Հայաստանը դարեր շարունակ եղել է աստպատակությունների պողոտա, կռիվների դաշտ, կատորածների ու ավերի վայր։ Անհամեմատ ավելի շատ դառնություններ է տեսել հայ ժողովուրդը քան ինքը՝ Եդեսիան։ Հայաստանում էլ չկա վաղեմի ազատ և ուրախ կյանքը։ Լռել են երգն ու երաժշտությունը, չկան առաջվա շքեղ հարսանիքներն ու հանդեսները, փակվել են բարեկամական ճոխ սեղանները, մատուռականերն էլ չեն բաշխում անուշ դինին։ Ամենուրեք տիրում է տխրություն ու սուգ։ Եդեսիան բազմաթիվ հուզումնալից հարցերով Հայաստանին հիշեցնում է նրա փառավոր անցյալը և պատասխան պահանջում, թե ինչո՞ւ կորավ այդ ամենը՝ որպես «անուրջ», որպես «երազ»...

Բայց հարցանեմ ո՛վ բաղձալի,
Բանիս խնդրեմ պատասխանի.
Այժմ արդ ո՞ւր է թագ քո զարդի,
Եւ կամ պըսակըն հրաշալի...
Ո՞ւր պարարակ եզնամոլին,
Ձիա՞րդ ի քեզ ոչ զենանին.
Կամ մատռուակըն բաժակին,
Ձի՞ ոչ բաշխեն զանոյշ գինին.
Ո՞ւր բարեկամք զուարճակից...
Ուր քաղցրաձայն երաժըշտի,
Կամ գեղգեղումն եղանակի[1]։

Այնուհետև Եդեսիան իր հարցերն ուղղում է Վաղարշապատին.

Արդ ո՞ւր գահոյք թագաւորի,
Վաղարշապատ քոյ քաղաքի.
Կամ նախարարըքն արքայի,
Արարատեանըդ գաւառի.
Ո՞ւր են իշխանք, որք առաջին,
Կամ զինակիրք, որք են վերջին.
Ո՞ւր զօրականքն յասպարիզի,
Կամ լեգեոնքն ի ճակատի.

---

1 «Ողբ Եդեսիոյ», էջ 11—12։

*Ո՞ւր մեծամեծքն ի բազմոցի,*
*Կամ ո՞ւր սեղանն ամենալի*[1]։

*Սակայն, ինչպես իր երբեմնի փառքով ու հարստությամբ, այնպես էլ արդի թշվառ վիճակով Եդեսիային ավելի շատ նման է Անին։ Բագրատունյաց թագավորությունն ընկել էր։ Անին թեև չէր դադարել նշանավոր քաղաք լինելուց, բայց այնտեղ էլ իշխում էր թշնամին.*

*Բայց և ըզքեզ յայս հրաւիրեմ,*
*Արևելեան քաղաքդ Անի.*
*Կցորդ լեր դու իմոյս ձայնի,*
*Եւ ըսփոփիչ տարակուսի.*
*Քանզի երբեմն և դու էիր,*
*Վայելչական հարսն ի քօղի.*
*Մերձաւորաց յոյժ ցանկալի,*
*Հեռաւորաց փափագելի...*[2]

*Իսկ ինչո՞ւ համար են այդքան աղետալի լաց ու կոծերը։ Մի՞թե այդ ողբերը կարող են որևէ օգուտ տալ Եդեսիային կամ մոռացնել կատարված աղետը։ Իհարկե ոչ։ Լացը անհրաժեշտ է իր զավակների խողխողումը տեսած սգավոր մորը միմիայն նրա համար, որ այն որոշ չափով մեղմացնում է հոգեկան ցավերը։*

*Այնուամենայնիվ որդեկորույս մայրը լալով ու հառաչանքներով, ուրիշ քաղաքներին ու երկրներին ողբի հրավիրելով էլ չի հանդրստանում, որովհետև մեծ, համաշխարհային է համարում իրեն հասած դժբախտությունը.*

*Բայց իմ աղետըս ցաւալի,*
*Ոչ փոքրագոյն դեղով բուժի.*
*Եւ ո՛չ միով տեղեաւ փակի,*
*Կամ մասնաւոր մարդկամբ սփոփի.*
*Այլ կարեկից այսր աղետի,*
*Պարտէ կոչել աղերսալի.*
*Զչորեքծագեան կողմ աշխարհի,*
*Ուր են հանուր մարդկան որդի*[3]։

*Ողբի սկզբում մայր-Եդեսիան իր վշտալի խոսքն ուղղում է միայն քրիստոնյա աշխարհին, եկեղեցական կենտրոններին և*

---

1 «Ողբ Եդեսիոյ», էջ 13—14։
2 Անդ, էջ 15։
3 Անդ, էջ 19—20։

ապա Հայաստանին։ Քանի գնում ողբերգությունը խորանում, տարածվում և դառնում է համաշխարհային վիշտ։ Ամբողջ աշխարհը պետք է ողբա սգավոր Եդեսիայի հետ՝ անկախ մարդկանց ազգից ու կրոնից, տարիքից ու սեռից, հասարակական դիրքից ու պաշտոնից՝ սկսած թագավորներից մինչև փոքրիկ տղաները։

Պոեմը դուրս է գալիս անհատական վշտի նեղ սահմաններից և դառնում աշխարհիկ-քաղաքական մի քերթված, հայ հայրենասիրական չափածո առաջին ողբերգությունը։

Այնուհետև բանաստեղծը տալիս է Եդեսիայի բարգավաճ և ուրախ անցյալը, ավերն ու կոտորածը, թալանն ու գերեվարությունը և ապագայի նկատմամբ ունեցած լավատեսությունը։

Այս է «Ողբ Եդեսիոյ» երկի էությունը։

* * *

Այժմ տեսննենք, թե տեղի ունեցած դեպքերին ինչպես է մոտեցել բանաստեղծը և դրանք գեղարվեստական ինչպիսի ձևերով ու պատկերներով են արտահայտվել «Ողբի» մեջ։

Վերջինիս պատմական թեմատիկան, բովանդակությունը և գաղափարական կողմը հանդիսացել են այն ամուր պատվանդանը, որի վրա բարձրացել են երկի գեղարվեստական հնարանքներն ու ձևերը։ Պոեմի հիմքը հանդիսացող իրական եղելությունները հնարավորություն են տվել հեղինակին բարձր արվեստով հորինելու հայրենասիրական գաղափարներով տոգորված խոշոր մի գործ։ Եվ քանի որ քերթվածքի նյութը վերցված է կատարված պատմական դեպքերից, Շնորհալին կարողացել է վարպետորեն տալ բնության և հասարակական կյանքին վերաբերող ռեալիստական նկարագրություններ, որոնք XII դարում առաջին անգամ են երևան գալիս մեր գեղարվեստական գրականության մեջ։ Ամենից առաջ պոեմում աչքի են ընկնում բնության վերաբերող գեղեցիկ նկարագրությունները՝ կապված Եդեսիա քաղաքի և նրա շրջապատի հետ։ Սգավոր Եդեսիան որոշ ժամանակ դառն ողբալուց հետո, աստիճանաբար սկսում է խաղաղվել։ Փոխվում է նրա հոգեվիճակը, զգաստանում, գիտակցության է գալիս և պատմում իր փառավոր անցյալը։ Հոգեբանական տեսակետից ողբացող մոր հոգեկան դրության փոփոխումը, անցումները միանգամայն բնական և համոզիչ կերպով են տրված, ըստ որում, երբ Եդեսիան պատմում է իր անցյալը, բնականորեն, հետզհետե պոեմում քնարական տարրը նվազում է՝ տեղի տալով վիպականին։ Ահա պատկերներով է տրված Եդեսիա քաղաքի

ու նրա բնության նկարագիրը։ Ահա թե ինչպիսի գեղեցկություններ է ունեցել նա.

...Քանզի երկիր պարարտ էի...
Ջուր կենդանի յինէն բղխէր,
Ջուարթ ծաղիկ բոյս յօրինէր.
Գետոց նրման վըտակ հոսէր,
Ջբուրաստանս արբուցանէր.

Իսկ ծովը իր գեղեցկությամբ ավելի է զարդարել քաղաքը, տալով նրան նաև բարեխառն կլիմա և մաքրություն.

Ծովն ի միջի իմ ծածանէր,
Քաղցրիկ օդովըն ծիծաղէր...[1]

Այս բոլորի հետ միասին Եդեսիան իր բուսական հարստությամբ և բուրումնավետ ծաղիկների առատությամբ ըստ բանաստեղծի եղել է մի չնաշխարհիկ բուրաստան.

Բազմագունի տունկ յօրինէր,
Որպէս ըզդըրախտն, որ Եդեմ էր,
Մաղարիթաբեր ծառով ծաղկէր,
Առատագոյն պըտղաւէտ էր,
Տերևախիտ հեզիկ շարժէր,
Հոտ անմահից յիւրմէ բուրէր.
Նարդոս, քրքում, ինձ ընձիւղէր,
Վարդ մանուշակ վերաբերէր.
Առաւօտուն ցողն իջանէր,
Ոսկենման ճաճանչ փայլեր[2]։

Քաղաքի բնական գեղեցկության հետ միաժամանակ հմտորեն է տրված նաև նրա շրջապատի արդյունավետ գյուղատնտեսական կյանքի նկարագիրը.

Զի դանդաստանս իմ թէ գործէր,
Ոք երկրածին և սերմանէր.
Հարիւրաւոր, վաթսընաւոր,
Կամ երեսուն պըտղաբերէր.
Տոհմականօք զոր ընծայէր.
Բազմաբեղուն բարիս բերէր,

[1] «Ողբ Եդեսիոյ», էջ 23—24։
[2] Անդ, էջ 24։

*Ցըշտեմարանըս ժողովէր,*
*Ի այնու զորդիս իմ կերակրէր*[1]։

*Ռեալիստորեն է պատկերված միջնադարի քաղաքը՝ իր շենքերով, փողոցներով և ամրություններով։ Այս նկարագրության մեջ առանձնապես գեղեցիկ են գործադրված համեմատությունները, ուր Նգեսիան մերթ համեմատվում է վհուկ թագավորի, մերթ՝ պճնված թագուհու և մերթ էլ վարդի կամ հասած խնձորի հետ։*

*Միջնադարյան քաղաքի համար ավելի բնորոշ է հետևյալ նկարագիրը.*

*Շուրջանակի պարսուսուր,*
*Պարսիպ ածեալ լայն և ամուր.*
*Աշտարակօք բարձր և ահաւոր...*
*Հաստահեղոյս հիմամբ ի խոր,*
*Մահարձանօք պըսակաւոր.*
*Տունք և տաճարք զարմանաւոր,*
*Շինեալ ի գիրկս իմ շքեղաւոր.*
*Յարկք և փողոցք տեղ վաճառաց,*
*Գոյր յօրինեալ հանճարաւոր...*[2]

*Այսպես գեղեցիկ, հարուստ ու փառավոր է եղել մայր-Նգեսիան։ Բայց վրա են հասնում վատ ժամանակներ, փոխվում է ամեն ինչ։ Թշնամին թունավորում է խաղաղ քաղաքի կյանքը և արյունով լցնում փողոցները։ Որքան ջերմ ու սիրով բանաստեղծը նկարագրում է քաղաքների ու ազգերի անցյալը, նրանց փառքը, խաղաղ կյանքը, այնքան էլ ցասումով ուատելությամբ տալիս է թշնամու բարբարոսությունները և չարագործությունները։ Ամենամեծ արյունարբուն ու չարագործը Ջանգին է, որը դարանամուտ գայլի կամ վագրի նման վաղուց էր մտադիր գաղտնի հարձակվել իր զոհի՝ Նգեսիայի վրա։ Եվ ահա հասավ ժամը.*

*Այն որ զօղեալ և թաքուցեալ,*
*Ծածկեալ ունէր զնենդն ի մըտին.*
*Եւ դարանեալ գայլն ի մայրին,*
*Ինձրն թագչէր յանապատին.*
*Որում անուն իւր կոչէին,*
*Ջանգի չարեաց գործունէին.*

---

1 «Ողբ Նգեսիոյ», էջ 24—25։

2 Անդ, էջ 25—27։

Յարձակեցաւ յանկարծօրէն,
Եւ յեղակարծ ժամանակին[1]։

Զանգին բանաստեղծի ստեղծագործական երևակայությամբ ստեղծված, իրականության համապատասխանող մի տիպ է, որն իր մեջ ընդհանուր գծերով խտացնում է միջնադարյան սելջուկ զորավարներին հատուկ խորամանկությունը, նենգությունը, անգթությունը և մարդատյացությունը։ Ուժեղ համեմատություններով է տրված այդ ասպատակ բռնակալի բացասական պատկերը.

...Սողայր և գայր նըման օձին,
Եւ նենգաւոր թունաւորին.
Առ ի խայթել գարշապարին,
Եւ հարկանել գաղտնի նետին[2]։

Զանգին ոչ միայն արյունարբու և դաժան բռնակալ է, այլև միաժամանակ նենգ ու խաբեբա է։ Նա եդեսացիներին խոստացել էր չկոտորել, բայց քաղաքը գրավելուց հետո, հակառակ իր խոստումի, փողոցները ներկեց անմեղ մարդկանց արյունով և կատարեց անլուր բարբարոսություններ։

Սկսած XI դարի սկզբներից մինչև միջնադարի վերջերը, իրենց աշխարհակործան, վայրագ արարքներով իրար շատ նման են եղել ու տիպական՝ զանգիները, չինգիզները և լենկթիմուրները, որոնց նախատիպը այսպիսի բնորոշ գծերով պատկերել է Շնորհալին։

Քաղաքներ, երկրներ ու աշխարհներ ավերող այդ կործանարներին նա դիպուկ համեմատություններով ու մակդիրներով է բնորոշել։ Այդ բարբարոսներն ավելի ահեղ են եղել քան թե

...Բերոմըն կարկըտին,
Եւ եղեման խրստագունին...
Կամ անխոնաւ խիստ երաշտին,
Կամ բազմութեան յոյժ մարախին.
Կամ դալուկին մըննիայն,
Եւ կամ մըկամբ զազրագունին,
Ի չհոացումն անդաստանին...
Կամ աղտեղի կոյր խըլըրտան,
Որ կայ անյոյս խաւար մըթան...

---

1 «Ողբ եդեսիոյ», էջ 33։
2 Անդ, էջ 32։

*Կամ զերթ թրթռուր զազրաբերան,*
*Թունօք պըղծէ զբուրաստան*[1]։

*Ռեալիստական ցայտուն ձևերով և համապատասխան պատկերներով են դրսևորվել նաև քաղաքի պաշարման ու գրավման համար մղված ռազմական գործողությունները։ Առանձնապես հմուտ է Շնորհալու գրիչը պատերազմական գործողությունները նկարագրելու մեջ։ Տակավին մանուկ հասակից բանաստեղծին վիճակվել է տեսնել բարբարոսական գործողություններ՝ ամրոցներ ու քաղաքներ գրավելու համար։ Շատ բան է լսել այդ կռիվների մասին նաև պատանեկան հասակում, երբ սելջուկների հրոսակախմբերը պարբերաբար հարձակվում էին հայ իշխանների բերդերի ու ամրոցների վրա։ Դեռևս 19—20 տարեկան հասակում երիտասարդ բանաստեղծը նկարագրել է իր հայրենի Շովք ամրոցի պաշարումը սելջուկների կողմից, որի պաշտպանության ժամանակ պարիսպների վրա հերոսաբար ընկավ բանաստեղծի հայրը՝ Ապիրատ իշխանը։ Շովք դղյակում ապրողներն էլ եղեսացիների նման վարում էին խաղաղ և ուրախ կյանք։ Խնջույքի ժամանակ, երբ ամրոցում հանկարծ լսում են սելջուկների գալստյան լուրը, խանգարվում է անդորր և ուրախ կյանքը, տիրում է տագնապ.*

*Արդ մինչ կային զըւարճացեալ,*
*Եւ առ միմեանս խրախացեալ...*
*Լուր գառնութեան եղև հընչեալ,*
*Եւ ձայն գուժի Հռամայ հասեալ*[2]։

*Ասպատակելով և ավերելով ողջ Արևելյան Հայաստանը, սելջուկները հասել են մինչև Կիլիկիա և պաշարել Շովք ամրոցը։ Մըղվում են կատաղի մարտեր։ Այս ռազմական գործողությունների էպիկական առաջին նկարագիրը մանրամասնորեն տրված է բանաստեղծի առաջին գործի՝ «Վիպասանության» մեջ*[3]։

*Պաշարման հետ կապված ռազմական գործողությունների ավելի հմուտ և ընդարձակ նկարագիրը, հետագայում՝ շուրջ քսանհինգ տարի հետո, անգերազանց վարպետությամբ տրված է «Եղեսիոյ Ողբ» պոեմում։*

---

1 «Ողբ Եդեսիոյ», էջ 77—79։
2 «Բանք չափաւ», էջ 552։
3 Անդ, էջ 553—554։

Միշտ հանապազ մարտընչէին,
Օր ըստ օրէ զիս նեղէին.
Զև զանազան փոփոխէին,
Նո՛քօք ի մարտ վառեալ կայինն.
Զրահատորք մրկընդատորք,
Ճօշիւք պատեալ բոլոր անձին,
Սունակաւորք և նետաւորք,
Նետիւք հարեալ խոցոտէին.
Պատնէշ կանգնեալ մեքենաիւք,
Ըզռումբարձրըս հոսէին։
Ծեծէին զիս հարկանէին,
Անհնարին տագնապէին,
Բայց այսօրիւք ոչ կարացին
Յաղթել քաջացըն որ յիս կային[1]։

Եվ քանի որ սովորական, ճակատ առ ճակատ մարտերով Զանգիի զորքերը չեն կարող քաղաքը վերցնել, ուստի նրանք դիմում են ռազմական խորամանկ գործելակերպի։ Ահա և այդ խորամանկ գործողությունների նկարագիրը.

Մինչև ի յայլ հընար մըտին,
Այն խորամանկ նենգաւորին.
Որպէս խըլուրդքն փորէին,
Ներքոյ հիման ամրականին.
Սիւն և նեցուկ հաստատէին,
Աշտարակացըն և պարըսպին.
Առ ի յայրել պատրաստէին,
Որպէս օրէն է այս նոցին[2]։

Թեև անօգնական նեխսացիները ՉՀնամուց չեն ահաբեկվում, շարունակում են դիմադրությունը, բայց խորամանկ ՉՀնամին պարըսպի անպաշտպան տեղերի հիմքերը փորում է, որպեսզի ստորերկրյա անցքով մի կերպ ներխուժի քաղաք։ Այստեղ Զանգին իր զորքերին քաջալերելու և ուժեղ գրոհ կազմակերպելու նպատակով, բարձրաձայն հայտարարում է, որ եթե քաղաքը գրավեն, Թուլլատրվում է թալան ու ավեր, որքան իրենք ցինվորները կամենում են.

Յայնժամ վիշապըն անդրնդային,
Գոչեաց սաստիկ զօրականին,

---

1 «Ողբ եդեսիոյ», էջ 34։
2 Անդ, էջ 34—35։

*Ի սուր, յաւար, ւ ի գերութիւն,*
*Ասաց լինել զամենեսին*[1]։

*Բարբարոս հրոսակները, լսելով իրենց առաջնորդի խոստումը ավարի և գերեվարելու մասին, խելակորույս ոգևորությամբ ներխուժում են քաղաք։ Այնպիսի աղմուկ ու աղաղակ են բարձրացնում իրենց ահեղ ձայներով, որ քաղաքացիները սարսափահար են լինում։ Սկսվում է մի զարհուրելի կոտորած։ Ռազմական գործողությունների ավելի սարսափելի մասը կազմող այս կոտորածը զարմանալի ռեալիստական գույներով է տրված։*

*Այս սարսափելի տեսարանը ողբերգության ամենացնցող հատվածներից մեկն է։ Վարպետորեն և հաջորդաբար տրված են քաղաքի պաշարման ու կործանման հետ առնչվող գործողությունները, որոնք զարգանալով հասնում են իրենց գագաթնակետին՝ արյունալի կոտորածին։ Սկզբում բանաստեղծը այդ գործողությունները նկարագրում է զուսպ և էպիկական սառնասրտությամբ։ Ապա դեպքերն հետզհետե ծավալվում ու զարդանում են, որի հետ միաժամանակ դրսևորվում է նաև բանաստեղծի վերաբերմունքը՝ առելության բուռն զգացումը դեպի թշնամին։*

*Երբ եղեսացիները տեսնում են, որ թշնամին արդեն ներխուժել քաղաք, խառնվում են իրար և խուճապի մատնվում։ Թեպետ նրանց միջի արիները քաղաքի ներսում էլ դիմադրում են բարբարոս խուժանին, բայց բնակչության մեծ մասը, առանձնապես կանայք, փոքրերը և ծերերը փախչում են դեպի քաղաքի միջնաբերդը՝ սրից ազատվելու համար։ Ահա մի տեսարան, թե ինչպես թշնամին սուսերամերկ հետապնդում է դեպի դղյակը փախչող խուճապահար ամբոխին.*

*Քանզի խուժան անօրինին,*
*Մինչ ըղփախուստըն զայն տեսին,*
*Սուսերամերկըք լինէին,*
*Մէջ քաղաքին յարձակէին.*
*Եւ ժողովոցըն բազմութիւն,*
*Մի ըղմիոյ հետ կասէին.*
*Անդ առաջի ընթանային,*
*Մինչև ի դրունըս դղեկին*[2]։

---

1 «Ոդք եղեսիոյ», էջ 46։
2 Անդ, էջ 48։

Սակայն դղյակի դռները փակ են. փախչող բազմությունը քերդի մուտքի առաջ մատնվում է Թշնամու սրին, տեղի է ունենում տեսարաններից ամենասարսափելին.

Յայնժամ առ դրունըս կոտէին
Իբրև ըզշնջղս անհրնարին.
Կամ յօրինակ մայրից փայտին,
Միմեանց վերայ դիզանային.
Արք և կանայք, ծերք և տղայք,
Մանկունք՝ւ ամէն չափ հասակին...[1]
Առհասարակ կոտորէին,
Արեան վրտակըս հոսէին.
Ջերիտասարդս և ըզմանկտիս,
Անխնայասէս խողխողէին.
Յայիս ծերոց ոչ խնայէին,
Ի ոչ ի հասակըն տղային...[2]

Կոտորածից ու թալանից հետո նկարագրվում է մի ուրիշ ոչ պակաս ցնցող տեսարան: Սկսվում է ավարն ու դեղեցիկ կանանց դերեվարությունը: Կողոպտում են անդամ մնռածներին. հանում են նրանց թանկարժեք հագուստներն ու զարդերը և անպատվում դիակները.

Քանզի զոմանըս գերէին,
Որ դեղեցիկ դիմօք էին...
Եւ զխեղդելոց դիակուտին
Մարմինսն արտաքըս քարշէին,
Զորս զրննէին կողոպտէին,
Մերկ խայտառակ զայնս թողուին...[3]

Ծանր վիշտ է ապրում բանաստեղծը կատարված աղետալի դեպքերի տպավորությունների տակ: Ահով ու սարսափով է պատմում քաղաքի կործանման և կոտորածի մասին: Եթե մինչև այդ ցնցող դեպքերը հեղինակը ողբում էր Եդեսիայի բերանով, հիմա արդեն կարծես ինքն է անմիջապես պատմողն ու բացատրողը: Երբ պոեմում նկարագրվող դեպքերն հասնում են այն սոսկալի աստիճանին, որ Թշնամին բանդում է պարիսպը և ներխուժում քաղաք.

---

1 «Ողբ Եդեսիոյ», էջ 51:
2 Անդ, էջ 49:
3 Անդ, էջ 53:

ահա թե այդ առթիվ ինչպիսի ապրումներ ու հոգեկան ցավեր են համակում բանաստեղծին.

...Որ աստանոր սիրտ իմ ճըմլի,
Ի երիկամունքըս գալարին.
Ցաւ հարկանի որովայնիս,
Միտք և հոգիս իմ այլայլին.
Մինչդեռ յիշեմ զօրն ահագին
Եւ զառաւօտըն մըթագին[1]։

Ցնցող պատկերներով ու մռայլ դույներով է տրված նաև կոտրածը կատարող բարբարոսների նկարագիրը։ Բանաստեղծի հոգում վիշտն ու ցավը հետզհետե փոխվում են դեպի թշնամին տածվող ատելությամբ։ Ջանգիի նման արյունարբու գազան են և նրա բարբարոս, մարդախողխող հրոսակները։ Անգութ խուժանը չի խնայում ոչ ծերերին, ոչ կանանց և ոչ էլ մանուկներին։ Ծերերի սպիտակ մազերը ներկվում են կարմիր արյունով, կանանց անպատվում, անարգում են, մանուկներին խլում մայրերի գրկից, խողխողում կամ զարկում են քարերին և կամ մայրը մեռնում է զավակին գրկած։

Հաղթանակներից հղփացած թշնամին, խնջույք ու խրախճանք է կազմակերպում՝ ուտում-խմում, երգում ու պարում են։ Նրանք բոլոր ձևերով անպատվում և անարգում են եղեսացիներին։ Բանաստեղծը ահեղ պատկերներով է ցույց տվել այդ արյունարբու մարդակերների կողմից սարքված քստմնելի տեսարանները.

Իբրև ըզշունըս կատաղիս,
Յորսոյ վերայ յարձակէին,
Զարիւնս առեալ ըզսպանելոց,
Զանձինս իւրեանց օծանէին.
Եւ զորովայնսըն հերձնուին,
Լեարդսըն հանեալ խածատէին.
Եւ ըզգլուխսըն քերթէին
Ի ի խորասան զայն տանէին...[2]

Ինչպես տեսնում ենք, Ներսես Շնորհալին ռեալիստական եղանակներով և վարպետ գրչով է պատկերել պատերազմական գործողությունները և բարբարոսների անհատական ու հավաքական բացասական բնորոշ գծերը։ Թշնամու գազանային արարքները ներ-

1 «Ողբ Եդեսիոյ», էջ 42—43։
2 Անդ, էջ 64։

կայացված են զարհուրելի պատկերներով՝ որոնք ընթերցողի մեջ առաջացնում են բուռն ատելություն և զայրույթ[1]։ Այդ նկարագրերները միայն դեպքերի և գործողությունների սառը, պասսիվ վիպում չեն, այլ բանաստեղծի ամեն մի տողի մեջ երևում է նրա զգացմունքն ու միտքը, դեպքերի ու մարդկանց նկատմամբ ցուցաբերած իր վերաբերմունքով ու գնահատականներով։ Իրադարձությունների հաջորդաբար զարգացումը հասնում է վերջին աստիճանին՝ դղյակի դռան առաջ կատարված սարսափելի կոտորածի տեսարանին։ Թեպետ այդտեղ էլ լուծվում է պոեմի հանգույցը, սակայն սա դեռ բոլորը չէ։ Բանաստեղծի մտքերն ու զգացմունքները, դեպի Թշնամին ունեցած վերաբերմունքը, նրա հույսերն ու երազները ամբողջապես հանդես են գալիս պոեմի երկրորդ և երրորդ մասերում, որոնք միասին վերցված՝ իրենց ծավալով մի քանի անգամ ավելի փոքր են քան միայն առաջին մասը։

Երկրորդ մասում հիմնականում դրսևորվել է բանաստեղծի վերաբերմունքը դեպի Թշնամին ու նրա կրոնը, տրված է դեպքերի

---

[1] Ֆրանսիայի Մարսել քաղաքում հրատարակված «Արմենիա» թերթի 1889 թվականի 3-րդ համարում փաստեր կան, որ «Եդեսիոյ Ողբ»-ը հրատարակվել է այդ թվերին և Կ. Պոլսում, որտեղ օսմանյան գրաքննությունը երկից կրճատել է 48 տուն՝ պոեմի վերոհիշյալ հատվածը, ուր նկարագրված է Եդեսիան գրավելու ժամանակ Զանգիի և նրա ղորքերի կատարած բարբարոսությունները։ «Արմենիա» թերթի վերոհիշյալ համարում «Օսմանյան պատմություն» հոդվածի հեղինակ Կեզկըլտուկ անունով մի Թղթակից, թվելով տարբեր դարերում օսմանյան բռնակալության ձեռքով կատարված բազմաթիվ բարբարոսությունները՝ նյութական և հոգևոր կուլտուրայի բնագավառներում, ի միջի այլոց, բողոքում է նաև օսմանյան դրաքննիչի բարբարոս վարմունքի դեմ։ Հոդվածի վերջում Կեզկըլտուկը դիմելով խմբագրությանը, գրում է. «Արդ, դառնալով Արմենիայի ազնիվ խմբագրության, կխնդրենք, որ բարեհաճի . հրատարակել ընդհանուր հայոց պարծանքն եղող... Ներսիսի Շնորհալւոյ հիանալի երգոց սա «յաղաղ» (թուրք. արգելված—Գ. Հ.) եղած 48 տունները զորս «Ողբ Եդեսիոյ» մեջեն օրինակով կը դրկենք ձեզ. որ նման երգողները դեռ չունեցանք, որ հայ արյան և սիրտերու մեջ կմտնեն ու կեուացնեն, մինչև իսկ սառուցյալ սրտերը... թող մեր վատերը կարդան և տեսնեն, թե որպիսի՜ սրբազան նախնյաց անարժան զավակներ եղած են իրենք...»։

Կեզկըլտուկը «վատերը» և «նախնյաց անարժան զավակներ» ասելով ակնարկում է երեք հայերի՝ Նուրյան, Միմոնյան և Հարությունյան ազգանունով, որոնք հավանաբար մասնակից են եղել ցենզորական աշխատանքներին («Արմենիա», 1889, № 3)։

Մեր երկար որոնումներն ապարդյուն անցան և չկարողացանք գտնել «Արմենիա» թերթում հիշված «Ողբ Եդեսիոյ»-ի այդ հրատարակությունը։ Արգելված տների մի մասը տպագրված է «Արմենիա» թերթի 1889 թ. 6 և 7-րդ համարների 3—4 էջերում։

պատճառաբանություններն ու որոշ մեկնաբանություններ, հարցեր, որոնք պոեմի գաղափարական կողմը լրիվ ըմբռնելու տեսակետից շատ կարևոր են։

Այս մասում գլխավորապես երկու հիմնական խնդրի շուրջ է դառնում բանաստեղծի խոսքը։ Առաջինը՝ տեղի ունեցող անհատական և հասարակական աղետների պատճառը մեղքով բացատրելն է, իսկ երկրորդը՝ Թշնամու գլխին թափվող բազմատեսակ անեծքներն են։

Պոեմում ցայտուն կերպով նկարագրված է, թե Զանգին ու իր զորքը հաղթանակի առիթով ինչպես են արտահայտում իրենց ուրախ, ցնծության հասնող զգացմունքները։ Նրանք այժմ ժողովուրդը կոտորելուց ու կողոպտելուց հետո կազմակերպում են խրնջույքներ, անառակ պարեր և այլ պիղծ գործեր։

Մի ուրիշ տեղ էլ վայրենի խուժանը բարձրանում է զանգակատունը, ուժեղ զարկում են զանգերը և բարձր ձայնով ազդարարում ի լուր մեռած Մահմեդ մարգարեին՝ իրենց տարած հաղթանակի մասին։

Իսկ Զանգին էլ իր զինվորական և կրոնական նշանավոր մարդկանց հետ նստած է եկեղեցու բեմում, որտեղ վայրենի երգերի ու նվագների տակ հարճերը և ուրիշ կանայք պարում են։ Քաղաքի տարբեր մասերում ու հրապարակներում հղփացած զինվորներն էլ իրենց համար են խրախճանք սարքել։ Հարբած վայրենիներն այնպիսի անառակություններ ու գարշելի գործեր են կատարում, որ բանաստեղծը մեղք է համարում դրանց մասին խոսելը։

Խոր ատելությամբ է լցված որդեկորույս այրի Եդեսիան իր զավակներին խողխողող և նրանց պատիվն ու սրբությունները անարգող այլակրոն Թշնամիների հանդեպ։

Զանգիի կատարած ոճիրների թվելը և դրանք մռայլ գույներով նկարագրելը չի հովացնում սգավոր Եդեսիայի խոցոտված սիրտը։ Եվ ոչ էլ լացն ու արտասուքն են հանգստացնում նրան։ Ահա այստեղ, բնականաբար, խորապես վիրավորված այրին դիմում է ավելի խիստ ու ազդու միջոցների՝ Թշնամու գլխին Թափելով բազմապիսի, սոսկալի անեծքներ, որով և որոշ չափով կարողանում է դուրս Թափել իր սրտում ու հոգում կուտակված մաղձը։ Այդ անեծքները Թեպետ բավական շատ են և մի քանիսի իմաստը գրեթե նույնն է, բայց դրանք կազմում են պոեմի ուժեղ հատվածներից մեկը։ Հայոց հին գրականության մեջ անեծքները եզակի երևույթներ չեն։ Մեր հին ու նոր ժողովրդական վեպերի մեջ էլ կան անեծքներ, ինչպես Արտաշես Թագավորի անեծքը՝ Արտավազդին, Դավիթինը՝ Մհերին

կամ Ներսես Մեծի անհծքը հայ ժողովրդին և այլն։ Սակայն դրանք որպես անհծք իրենց խորությամբ, ազդեցությամբ և արտահայտման ձևերով բոլորովին այլ են, քան Դավթակ Քերթողի և Շնորհալու անհծքները։ Այս առումով առաջին անգամ մեր գրականության մեջ Դավթակ Քերթողն է բուռն և մեծ հուզումով դառն անհծքներ թափում Ջիվանշիրին սպանող եղեռնագործի գլխին։ Թեպետ Դավթակի անհծքներն ուղղված են միայն մի անհատի, առանց նրկատի առնելու չարագործի ազգն ու կրոնը, սակայն այդ անհծքներն իրենց չարաբաղձ բովանդակությամբ, չարագործին դժբախտություն ու կործանում ցանկանալու բնույթով և մանավանդ ձևով շատ նման են «Նռնսիոյ Ողբի» անհծքներին։ Դավթակը Ջիվանշիր իշխանին սպանողին համարում է «ծնունդ չար», «որդի անօրէնության» և ցանկանում է, որ մարդասպանն իր ամբողջ կյանքի ընթացքում անհծքներով պարուրված «գնասցէ ընդ երկիր»։

Նույն ձևով, բայց ավելի շատ և ավելի ազդու պոռթկում են Շնորհալու անհծքները։ Վերջիններս ծնվում ենատելության և վրեժխնդրության զգացմունքների հորձանքներում և որպես մարդկային սրտի հույզ անհամեմատ ուժեղ են քան լացն ու ողբը. ահա այս տեսակետից էլ անհծքները պոեմի ամենաուժեղ մասերից մեկն են։ Ատելությամբ լցված այրին, աշխարհում ինչքան վատ բաներ ու սոսկալի չարիքներ կան, ցանկանում է, որ մեկը մյուսի հետևից թափվեն եղեռնագործ թշնամու գլխին։ Բայց անհծքներից առաջ նա հայտնում է, որ Զանգին թող չկարծե, թե ինքը միշտ հաղթող պիտի լինի կամ հոխորտա իր կարճատև, սին հաղթանակով։ Թեև նա շատ ցավ է պատճառել ժողովրդին, գազանաբար սպանել է իր զավակներին, սուգ ու տրտմություն է բերել մի խաղաղ, բարեկեցիկ երկրի, սակայն մոտ է և նրա անկումը.

*Արդ, լո՛ւր և դու, փրտեալ գերան,*
*Մերձ ի յանկումըն կործանման...*[1]

Ապա թափվում են մեկը մյուսի հետևից, մեկը մյուսից ավելի չարատանջ բազմաթիվ անհծքներ։ Աշխարհի ստեղծագործության օրից մինչև նրա վերջը, ինչքան որ անիծված չարքեր, վիշապներ ու սատանաներ կան, որոնց նման է նաև ինքը՝ Զանգին, պիտի շրջապատեն նրան, հալածեն ու տանջեն։ Ողբամայրը ցանկանում է, որ խավար լինի Զանգիի անցած ճանապարհը նրա ողջ կյանքում.

---

[1] «Ողբ Եդեսիոյ», էջ 80։

...Արդ եղիցիս դու հալածեալ...
Եւ ճանապարհ քո խաւարեալ...[1]

Բայց մենակ Զանգիին անիծելով չի հանգստանում ողբասաց մայրը։ Նա ցանկանում է.

Վասն այսօրիկ Աստուած իսպառ,
Կործանեսցէ զքեզ յաւիտեան,
Եւ խըլեսցէ զարմատըս քո...[2]

Ինչպես որբ ու այրի դարձան շատ եդեսացիներ, գերի տարվեցին օտար երկրներ, դարձան տարագիր ու մուրացկան, զրկվեցին իրենց գույքից, պատվից, շատերն էլ՝ կյանքից, սուգ իջավ ծովածիծաղ քաղաքի վրա, այս ամենը մայր-Եդեսիան ցանկանում է, որ բաժին դառնա նաև չարագործների սերնդին.

Որդիք ձեր որբ կանայք գերեալ,
Լիցին մուրողք և տատանեալ.
Ելցեն յարկացըն տարագրեալ,
Փոխան իմոցըն տատանեալ,
Զինչս և ըղգոյս ձեր վաստակեալ,
Առցեն օտարք յափըշտակեալ.
Զոր հատուցիքն ինձ չարաչար.
Դարձցի ի գլուխ ձեր բազմացեալ[3]։

Եվ որովհետև ալեկոծված է սգավոր այրու դառնացած հոգին, և լցված է անսահման ատելությամբ, անընդհատ պոռթկում են ավելի ցնցող, ավելի սարսափելի պատկերներ և չարաղետ ցանկություններ։

Իսկ ինչպե՞ս է Շնորհալին բացատրում մարդկությանը կամ տվյալ դեպքում հայ ժողովրդին հասած պատերազմներն ու աղետները։ Ո՞րն էր ուրեմն Եդեսիայի կործանման պատճառը։ Հետևելով եկեղեցու հայրերի բացատրություններին՝ հասարակությանը և ազգերին հասած չարիքների ու աղետների պատճառը նա ևս համարում է մեղքը։ Հին է, շատ հին է այս բացատրությունը, նույնիսկ քան ինքը՝ քրիստոնեությունը։ Սակայն դժբախտաբար, անգամ XII դարում, երբ տարածվում էին վերածննդության գաղափարները և, ինչպես տեսանք, արտահայտություն էին գտել հենց իրենց

1 «Ողբ Եդեսիոյ», էջ 82։
2 Անդ, էջ 81։
3 Անդ, էջ 83։

Շնորհալու մի շարք գործերում, այս խնդրում բանաստեղծը առաջ չի գնացել հին դարերի պատմագիրներից ու մեկնաբաններից։ Երբ մարդը կամ մարդկությունը բազմաթիվ, անքավելի ծանր մեղքեր է գործում, դուրս է գալիս կրոնա-բարոյական պատվիրաններից, հակադրվում է Աստուծո կամքին, ըստ բանաստեղծի՝ Արարիչը նման դեպքերում մեղսագործ մարդկությանը կամ ազգին պատժելու համար մատնում է այլակրոն և դաժան որևէ ազգի ձեռքը։

Ներսես Շնորհալուց մի դար առաջ Արիստակես Լաստիվերտցին ահա թե ինչպես էր բացատրում Դեսիայի կողմից ողբի հրավիրվող «տիեզերահռչակ» Անի քաղաքի գրավումն ու կոտորածը. «...Այլ ստամբակեցան ի միտս իւրեանց, և ամբութեամբն ապըստամբեցան ոչ ի մարդկանէ՝ այլ յԱստուծոյ, որ տայ զբարձր աշտարակս ի կոխումն և զքաղաքս ամուրս ի հողաբլուրս. ոչ իմացան և ոչ առին ի միտ զահ տեառն և զսպառնալիս որ ի նմանէ և զմրուր բարկութեան և զսրտմտութեան, որ ի նմանէ խոնհարի յարրուման մեղաւորաց, սպառեալ համարեցան. մանաւանդ ամուրն Անի և որ շուրջ զնովաւ գաւառք իւր՝ առաւել յամբարտաւանութիւն կրթեալ՝ ընդդէմ երկնից կայթս հարկանէին...»[1]

Ըստ քրիստոնեական մեկնաբանության, մեղանչող անհնազանդներին աստված մատնում է պարսից անօրեն թագավորի ձեռքը՝ անողոք պատժելու համար։ Ահա այդ ահեղ տեսարանը, որ Դեսիայի կոտորածի նկարագրի նախապատկերն է հանդիսացել։ «Անդ էր տեսանել զվիշտս և զտագնապս իւրաքանչիւր հասակի. զի ի գրկաց մարցն յափշտակեալ լինէին մանկունք՝ անողորմաբար զբարի հարեալ, և մարքն արեամբ և արտասուօք զմանկունս իւրեանց թանային. զհայր և զորդի մի սուր խողխողէր. զի ծերք և երիտասարդք, քահանայք և սարկաւագունք զմի սրոյ ճաշակ մահու ընկալան. զի լցաւ քաղաքն լի ծայրիւ և ծայրիւ, և ճանապարհ էր մարմին սպանելոցն. զի ի բազմութենէ կոտորելոցն և յանթուելի դիականցն՝ վտակն մեծ, որ անցանէ առ քաղաքաւն, ներկանէր արեամբ...»[2]։

Ըստ Լաստիվերտցու, տիրոջ կամքով անողոք են պատժվում մեղավորները, նրանց հետ և անմեղները, նույնիսկ բազմաթիվ կրոնավորներ՝ այն էլ այլակրոն, դաժան բռնակալների ձեռքով։ Այդպես է բացատրում նաև Շնորհալին Դեսիայի արյունալի կոտորածը։ Այստեղ էլ, ինչպես Անիում, մեղանչել են ոչ միայն աշխար-

---

«Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», Թիֆլիս, 1912, էջ 164։

2 Անդ, էջ 166։

հիկ, սովորական մարդիկ, այլ հոգևորականները, մեծերը, փոքրիկ տղաներն անգամ, հետևաբար բոլորն էլ ենթակա են պատժի։

Քանզի լըցաք գործովք չարին,
Եւ չարարաք՝ զկամս Արարչին.
Այլ հաւասար ազգ մարդկային,
Ամենեքեան որ յիս կային.
Իւրաքանչիւր իւր հասակին,
Յանդրգնաբար մեղանչէին.
Բարեաց գործոց հեռանային,
Եւ ի չարիսըն հրպէին.
Ծերք և տրղայք արք և կանայք,
Յաղտըս մեղաց անկեալ կային.
Քահանայք իսկ քարոզք բանին,
Եւ սպասաւորք սուրբ Խորհրդին,
Անխըտրաբար վարուք կէին,
Զոր չէ ասել պարտ գործէին։[1]

Սակայն Ներսես Շնորհալին հասարակական աղետները, պատերազմներն ու կոտորածները «մեղացըն բազմութեամբ» պատճառաբանելով հանդերձ, ուրիշների բերանով կասկած է հայտնում այդ բացատրության վերաբերյալ, թե արդյո՞ք երկնքի կողմից տրված սարսափելի վճիռը իրավացի է, որ անմեղ մանուկներն անգամ մատնվեն թշնամու «պիղծ գնդի» ձեռքը, «ի սուր և ի գերութիւն»։ Այդ կասկածն արտահայտվել է հետևյալ տողերում.

Այլ զի ոմանք՝ ընդդէմ բերին,
Եւ աստանօր հակառակին.
Ասեն զիա՞րդ իրաւացին
Այս է վճիռ դատաստանին[2]։

Այնուհետև բանաստեղծն երկբայում է, թե արդյո՞ք մեղքի պատճառով են բոլոր պատերազմներն ու կոտորածները։ Եվ եթե մեղքն է պատճառը, ապա ինչո՞ւ երկինքը չի պատժում արյուն ու ավեր տարածող բարբարոս նվաճողներին, թուլլ և անօգնական ազգերին կոտորողներին, որոնց գործած մեղքերն այնքան ծանր են ու անհաշիվ։

---

1 «Ողբ եդեսիոյ», էջ 74։
2 Անդ, էջ 75։

*Արդյո՞ք երկնքի այդ վճիռը արդար է.*

*Մի՞թէ միայն մեղան նոքին,*
*Քան զազգն ամեն Քրիստոնէին.*
*Չի այսքանեաց բիւր քաղաքաց,*
*Պատիժ նոքա միայն կրեցին.*
*Կամ թե արդա՞ր արդեօք էին*
*Որոց ի ձեռըս մատնէին.*
*Ջանգի և իւրքն ամենեքին,*
*Որ ըզնոսա չարչարեցին*[1]:

Եվ ահա իրր այդպիսի կասկածողների մտքերն հանգստացնելու համար Շնորհալին ս. Գրքից բերում է մի շարք օրինակներ՝ այդ «մի թե»-ներին պատասխանելու նպատակով: Սակայն այդ երկարաբան մեկնությունը էությամբ և արվեստով չի հյուսվում երկի կառուցվածքի ներքին ամբողջականության հետ: Այս մի կողմից: Հետո, ինչպես տեսանք, Շնորհալու մյուս չափածո գործերում, երբ նա մի որևէ առաջադեմ միտք է արտահայտում, կամ բանաստեղծական նոր ձև է գործածում, «անփակ բերան» մարդկանցից պաշտպանվելու համար նախապես դիմում է ս. Գրքի օրինակներին: Այդպես էլ վարվում է այստեղ:

Շնորհալին տեղ-տեղ քննադատորեն է մոտենում հավատի և կրոնական խնդիրներին: Բայց դարի ոգին և աշխարհայացքը կաշկանդում են նրան՝ ավելի առաջ գնալու կամ հետևողական լինելու համար: Նույն «Ողբ Եդեսիոյ» պոեմում էլ նա ավելի որոշակի է ասում, որ առանց մաքուր, արդար գործերի ճշմարիտ հավատը ոչ մի նշանակություն ու արժեք չունի.

*Ոչ ի հաւատն ճըշմարիտ,*
*Ունել միայն վըստահութիւն.*
*Այլև ըզգործըս արդարութեան,*
*Միաբանել ընդ հաւատին,*
Քանզի մեռեալ հաւատ ասին,
Որում և գործ ոչ հետևին[2]:

Ընդհանրական ոգու մասին խոսելիս տեսանք, թե որքան ակընթարթ էին կրոնավորների արատները, նրանց խոսքի և գործի հակասությունը: Ինչպես արձակ ոգիներում, այնպես էլ չափածոներում, մասնավորապես այս պոեմում, բանաստեղծը թեև կրոնական աշ-

1. «Ողբ Եդեսիոյ», էջ 75:
2. Անդ, էջ 76:

խարհայացքի ներկայացուցիչ է, սակայն կյանքի հոսքը նրա մեջ առաջացրել է զգացմունքների և մտքերի հակասություն։ Որպես մեծ արվեստագետ նա դրսևորել է հասարակական լայն շերտերի տրամադրությունները՝ նրանց քննադատական մոտեցումը հավատի և կրոնական հարցերում։ Թեպետ նա ելնում է քրիստոնեական աշխարհայացքի դիրքերից, սակայն օբյեկտիվորեն մերկացնում է ֆեոդալական հասարակարգի խոցոտ կողմերը և գրականության մեջ հնչեցնում աշխարհիկ, առաջադիմական մոտիվներ։

Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» երկում ավելի ակնբախ են հասարակական, աշխարհիկ և հայրենասիրական նշանակություն ունեցող մտքերն ու տրամադրությունները։ Երբ հավատացյալ, բարեպաշտ հայրապետը պոեմում զգույշ կասկածանքով, անհամարձակ քննադատական խոսքեր է ասում հավատի ու կրոնական հարցերի վերաբերյալ, ապա շատ տեղերում նրա դրսևորած զաղափարներն ու հորդորները օբյեկտիվորեն հակառակ են կրոնական սկզբունքներին։

Թեև Շնորհալին իր այս նշանավոր երկը անվանել է «Ողբ», սակայն այնտեղ չկան հուսահատական տրամադրություններ։ Ողբացող այրու լաց ու կոծի միջից երևում է աշխարհիկ կյանքի արժեքավորումն ու փառաբանումը. նա ողբում է ոչ միայն իր ներկա ծանր վիճակը, այլև անցյալ աշխարհիկ փառքը։ «Ողբը» չնայած տեղ-տեղ կրում է քրիստոնեական բնույթ, բայց ըստ էության՝ իրական կյանքի անցքերի անդրադարձումն է աշխարհիկ մոտիվներով։ Հակառակ քրիստոնեական կրոնի հիմնական սկզբունքի աշխարհուրացության, այնտեղ ներքոդվում է աշխարհասիրությունը, որի շուրջն էլ զարգանում են պոեմի գործողությունները։ Այրի կնոջ ասելով, Եդեսիան երկրային իսկական դրախտ է եղել, իր առատությամբ ու գեղեցկությամբ.

Ես մայր էի բազմորդուքեան,
Անթիւ ծընա դուստր և որդի.
Զորս մայրաբար դիւեցուցի,
Յըստեանց իմոց՝ զկաթին արբուցի,
Գեղեցկատիպ յօրինեցի...
Կարծեմ թէ չէ նմանատոր
Այս քաղաքացս երկրաւոր[1]։

---

1 «Ողբ Եդեսիոյ», էջ 23—25։

Քրիստոնեական կրոնը մի կողմից անտեսելով աշխարհիկ կյանքը, մյուս կողմից էլ քարոզում է պասսիվություն, խոնարհություն՝ անգամ թշնամու առաջ։ Կարիք չկա «չարին հակառակ կալ...»։ Պոեմի ոգին բոլորովին հակառակ է նաև այս սկզբունքին։ «Ողբի» միջից պարզ երևում է, թե կյանքի համար մղվող կռիվներում ինչպիսի ակտիվություն և արիություն պիտի ցույց տա իր հայրենի քաղաքը պաշտպանող մարտիկը։ Երբեք, ոչ մի պայմանով մարդը չպիտի ընկրկի թշնամու առաջ։ Այստեղ ամենամեծ առաքինությունն ու սրբությունը հայրենասիրությունից բխող արիությունն է.

Արիաբար հաստատէին,
Զինուք անկածըն պարսպին.
Դիմեալ ի մարտ խրախուսէին,
Ոչ զանգիտեալ ի սրոյ նոցին[1]։

Եթե քրիստոնեությունը խրախուսում է նահատակությունը՝ միայն հավատի համար, կրոնի համար, այստեղ բանաստեղծը փառաբանում է այն մահը, որ կատարվում է հայրենի քաղաքը պաշտպանելու, բռնակալությունից ազատ մնալու համար.

Հապա՛ եղբարըք սիրելիք,
Մի՛ զարհուրիք առձայնէին.
Ջմահն ընտրեցեք դուք բաջութեան
Որ հան զկեանըս է գովելին...[2]

Բերդի պարիսպների վրա կռվող եղեսացի մարտիկներին ուղղված հորդորների և կոչերի մեջ զգացվում է Սղիշեի ազդեցությունը և հայրենասիրական ջերմ շունչը.

...Մակաբայեանց նմանէին,
Եւ վարդանանց պատերազմին.
Միշտ առ միմեանըս ձայնէին,
Աղաղակաւ զայս ասէին.
Մի երկիցուք զանգիտելով,
Եղբարք ի սրոյ մահկանացուին
Եւ ընդ քաջացն արիութեան
Մի՛ խառնեսցուք զերկիւղ վատին,
Անուն բարի ժառանգեսցուք
Որ ընթանայ յազգ երկրածին[3]։

---

1 «Ողբ Սդեսիոյ», էջ 44։
2 Անդ, էջ 44։
3 Անդ, էջ 36։

Այն այրին, որ ողբում էր այնպես դառնագին ու սրտակոտրոկոչ էր անում արար աշխարհին՝ ողբակցելու իրեն, այժմ իր զավակներին զինում է քաջությամբ և անհուն ատելություն և զայրույթ բորբոքում թշնամու հանդեպ: Այսպես է դիմում նա բերդի պարիսպների վրա կռվողներին: Իսկ նրանք, ովքեր հերոսաբար ընկնում են կռվի մեջ, նրանց հոգիները և փառքը անմահ են, ասում է մայր-Եդեսիան: Ճիշտ է, նրանք մեռնում են, սակայն գեղեցիկ և հրաշալի անուն են թողնում գալիք սերունդների սրտերում: Հայրենի հողի վրա արյուն թափող նահատակները նման են հողի մեջ թաղված ցորենի հատիկին, որը դիմանալով ձմեռվա սառը ցրտերին, մնում է ձյան տակ մինչև գարուն և ապա վերընձյուղում իր ծիլերը՝ բողբոջելու, աճելու, հասկակալելու և բարի բերք տալու համար: Բանաստեղծը զոհված մարտիկների անմահ անունն ու փառքը ցույց տալու համար ստեղծում է նորանոր թարմ պատկերներ՝ պայծառ համեմատություններով.

Զցորեանն ի հողըն թաղեցիք,
Յորում նեխեալ անդ լուծանիք.
Եղեմնապատ սառամբ լինիք,
Եւ ձիւնաթաղ ամբողջ պահիք.
Մինչ ի գարուն՝ հողով ծածկիք,
Ամենացեալ պարարտասջիք...
Բազմաբեղուն ստեղն արձակիք,
Մինչ ի յերկինըս հասանիք[1]:

Միայն արիության կոչելու, մեռածներին փառաբանելու խոսքերով չի վերջանում ամեն ինչ: Չէ՞ որ քաղաքը կործանելու ժամանակ շատերին գերի տարան, մի մասն էլ այս կամ այն կերպ ազատվեց թշնամու սրից: Նրանք, ովքեր ողջ են մնացել, ցրվել են աշխարհի տարբեր մասերում՝ գերության կամ օտարության մեջ: Այդպիսիների սրտերում հայրենիքի սերը վառ պահելու նպատակով, այրիացած մայրը հուսադրում ու քաջալերում է իր պանդուխտ զավակներին, որ այլևս չզան, այլ գոտեպնդվեն, հոգով արի մնան՝ հանուն գալիք լավ օրերի.

Եւ թէ ցրուած կայք ի յաշխարհ,
Ի ի գերութիւն յերկիր օտար.
Եթէ ի սրոյն այն մահարար
Մնացեալ առ իս էք յուսաբար...

---

1 «Ողբ Եդեսիոյ», էջ 92—93:

*Կացէք յոտաց զուարճաբար,*
*Սուգըդ լուծեք ըզվշտարար,*
*Հանեք զըսգեստըդ տխրարար,*
*Զգեցեք պայծառ ւ ուրախարար*[1]։

*Պոեմի հիմնական գաղափարը՝ հայրենասիրությունն ու լավատեսությունը վերջում արտահայտվել են ավելի ուժեղ մոտիվներով։ Այդքան դառնություններ ապրող մայրը բնավ չի հուսահատվում։ Նրա արցունքների միջից երևում են գալիք լավ օրերի հույսը, աշխարհիկ կյանքը՝ իր գեղեցկություններով, մանավանդ հաղթանակը թշնամու դեմ։ Այստեղ Շնորհալին նկատի ունի ոչ միայն Նզեսիան, այլ վերջինիս բերանով արտահայտում է ամբողջ հայ ժողովրդի տրամադրությունները։*

*Աշխարհում «և ընթացիւք արեգական» անկարելի բան չկա։ Այն ինչ որ այսօր անհնար է, վաղը կլինի «դիւր և կար». կփոխվի ամեն ինչ, դառն օրերին կհաջորդեն ցանկալի, լավ օրերը և այդ, ըստ բանաստեղծի հեռու չէ.*

*Ահա ոակաւ ինչ ժամանակ,*
*Փոխէ զպըղտոր ջուրն ի չիստակ,*
*Եւ տայ ըմպել դառնաճաշակ*
*Այնմ որ արբոյց ինձ դըժընդակ.*
*Զվերջին մըրուրըն կապուտակ*
*Արբուցանէ նըմին բաժակ.*
*Իսկ ինձ պայծառ և քաղցրունակ,*
*Զանմահարարն ըմպել վըտակ,*
*Ոչ թէ իմոյն միայն դիմակ...*
*Իսկ ըզկապեալսդ որ էք ի փակ,*
*Արձակեսցէ Տէր ընդարձակ.*
*Եւ զգերութիւնս իմ վտարակ*
*Դարձուցանէ այսբէն ի յարկ,*
*Մատնէ զգերիչս իմ ի յապտակ,*
*Սուր ւ ի զընդան ձեր փոխանակ*[2].

*Հայաստանում տիրող քաղաքական ոչ նպաստավոր պայմանների պատճառով տարբեր ժամանակներում շատ հայեր հեռացել են հայրենի երկրից։ Եվ քանի որ հեռու չէ Հայաստանի լավ ապագան, ուստի օտար երկրում ապրող բոլոր հայերը վերադառնալու*

---

1 «Ողբ Նզեսիոյ», էջ 96—97։
2 Անդ, էջ 98—99։

են հայրենիք։ Պոեմում Շնորհալին առաջին անգամ դնում է ազգահավաքման գաղափարը, ավելի որոշ, ավելի համարձակ, քան այն միայն մի փոքրիկ շարականի մեջ տասնյակ տարիներ առաջ արել էր Հովհաննես Սարկավագը։ Ըստ բանաստեղծի օտար երկրներում ապրող հայերը շուտով պիտի

Գան ժողովին յամեն կողմանց,
Ուր հալածեալ են ու ցրուած.
Լինի աշխարհ քրիստոնէից,
Անչափ անբաւ բարեօք լցած...
Յայնժամ որդիքդ իմ հեռացած,
Որք այժմ յինէն էք բաժանած.
Գայք ի վերայ բարձեալ կառաց,
Պալարակապ երիվարաց.
Որք ցրուեցայք յամեն կողմանց,
Չորեքծագեան տիեզերաց.
Ի դաւառաց հեթանոսաց,
Եւ յաշխարհաց պարսից թուրքաց[1]։

Երբ փոխվի հայ ժողովրդի քաղաքական դրությունը, հավաքվեն գերի և պանդուխտ հայերը իրենց բուն հայրենիքում, այդ ժամանակ միանգամայն կփոխվի նաև ողբացող այրի մոր հոգեկան վիճակը.

Վերամբառնամ զաչս ի բարձանց,
Զձեզ տեսանեմ շուրջ ժողոված.
Ընդ որ խընդամ և ցընծացած,
Գիրկս արկանեմ զուարճացած,
Եւ ըզտըրխարական զգեստ մերկացայց,
Կարմիր կանաչ գոյն զգեցայց,
Եւ ըզպատմուճանըս պատառած,
Փոփոխեցից նորոգ կարած...[2]

Երբ վերանա օտարի բռնակալ լուծը, երբ հայերը տեր լինեն իրենց սեփական երկրին, վերանան թշնամությունները ու պատերազմները, կթագավորե առատ և ուրախ կյանքը։ Ժողովուրդները կսկսեն զբաղվել խաղաղ-շինարար աշխատանքով և ոչ թե պատերազմներով։ Մարդիկ կապրեն առատության մեջ և այնքան հաճելի կլինի աշխարհիկ կյանքը, որ կենդանի մնացածները կափսոսան

1 «Ողբ Եդեսիոյ», էջ 101—103։
2 Անդ, էջ 103։

մեռածների համար, որոնք բախտ չեն ունեցել ապրելու և այդ խաղաղ, առատ կյանքը վայելելու։

Լինի առատ պտուղ բազմաց,
Սերմանց և ամէն պտղաբերաց.
Մարդիկ ցրնծան զուարճացած,
Յուտել յըմպելըն պարարած.
Որք վայ ասեն վաղ մեռելոց,
Եղուկ կարդան գերեզմանաց.
Թէ է՞ր չհասիք յօրս կենաց
Յանգիստ բարիս հասարակաց[1]։

«Ողբ Եդեսիոյ» հռչակավոր քերթվածքը մեր առաջին քաղաքական պոեմն է։ Իր գեղարվեստական և գաղափարական բարձր մակարդակով, մանավանդ ջերմ հայրենասիրությամբ այն արժեքավոր տեղ է գրավում ոչ միայն հայ, այլև միջնադարյան համաշխարհային գրականության մեջ։

## 5. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Շնորհալու մյուս գործերի մասին խոսելիս տեսանք թե նա իր արվեստով որքան սերտ է կապված եղել իրական և առանձնապես ժողովրդական կյանքի հետ։ Այս տեսակետից բացառիկ խոշոր արժեք ունեն նրա հանելուկները։ Վերջիններս աշխարհի շատ ազգերի սիրած բանահյուսական ձևերից մեկն են եղել։

Շատ հին է հանելուկների ժանրը հայ գրականության մեջ[2] և հայտնի է «առակ», «առակք», «առեղծված» և «առասպել» անուններով։

Շնորհալուն պատկանող հանելուկները կոչվում են «Առակք վասն ուրախութեան մարդկան»։

---

1 «Ողբ Եդեսիոյ», էջ 102։

2 Հանելուկները մեր ազգային հին, ավանդական բանահյուսության տակավին չուսումնասիրված մի տեսակն են, որոնք այսօր էլ դեռևս կարոտ են մանրամասն հետազոտության։ Ահա այս բացը վերացնելու տեսակետից շատ արժեքավոր է վերջերս լույս տեսած «Հայ ժողովրդական հանելուկներ» խորագրով՝ բանասիրական գիտությունների թեկնածու՝ Սարգիս Հարությունյանի ուշագրավ ուսումնասիրությունը։ Փաստացի հարուստ տվյալների հիման վրա՝ գրքի հեղինակը կարողացել է վեր հանել և արժեքավորել մեր հանելուկների ձևի, բովանդակության, ժանրային և տաղաչափական առանձնահատկությունները՝ կապելով դրանք հայ ժողովրդի նյութական, կենցաղային և հոգևոր կյանքի տարբեր կողմերի հետ։

Այս բովանդակալից ուսումնասիրությունը՝ մի արժեքավոր ներդրում է հայ հանելուկագիտության բնագավառում և զգալի չափով օգնում է այն բանագետներին ու բանասերներին՝ որոնք զբաղվում են հանելուկներով։

Սակայն, «Առակք» բառը այստեղ չպիտի հասկանալ արդի իմաստով,— բացատրում է պրոֆ. Մ. Աբեղյանը,— այլ իբրև «հանելուկներ»[1]: Այս առումով առակների կամ հանելուկների նշանակությունը կայանում է նրանում, որ ժողովուրդը դրանց մեջ այլաբանորեն կամ փոխաբերական իմաստով դրել է կյանքին ու աշխարհին վերաբերող որևէ խնդիր, որը ենթակա է դուշակման կամ լուծման:

Հայ ժողովրդական անգիր բանահյուսության հարուստ գանձարանից է վերցրել Շնորհալին իր հանելուկների նյութը, մշակել և գրի առել: Հայ միջնադարյան գեղարվեստական գրականության մեջ առաջին անգամ որպես գրական նոր տեսակ Շնորհալու ձեռքով են մուտք գործել մեր գրավոր հանելուկները, որոնք վկայում են, թե նա որքան լավ է ճանաչել իրական կյանքը, թափանցել նրա խորքերը և գեղարվեստորեն վերարտադրել այն:

Այս հանելուկների միայն նյութը չէ, որ ժողովրդական է, ժողովրդական են նաև դրանց պատկերները, մտածողության և երևակայության ձևերը, ոճական առանձնահատկությունները, լեզուն ու շարահյուսությունը: Իր չափածո գործերի մեծ մասը, ինչպես տեսանք, Շնորհալին գրել է ուսուցողական նպատակով, ժողովրդի համար և «մեկին» լեզվով: Թեև հանելուկներից մի քանիսի նյութը վերցված է հին ու նոր կտակարաններից և գրված գրաբար, բայց դրանք նախ շատ քիչ են, երկրորդն էլ ունեն պարզ, դյուրըմբռնելի լեզու: Շնորհալու հանելուկների մեծ մասը գրված են գրեթե ժամանակի խոսակցական լեզվով և մի կողմից արտահայտում են օբյեկտիվ իրականությունը՝ այլաբանորեն ու փոխաբերական հակիրճ խոսքերով, իսկ մյուս կողմից՝ ունեն ճանաչողական խոշոր արժեք, որովհետև դրանց միջոցով դրսևորվել են ժամանակի մարդու մտածողության ձևերը՝ կապված բնության և հասարակության կյանքի բազմազան կողմերի ու երևույթների հետ: Այսպիսով, սրանք հիմնականում արտացոլում են հայ ժողովրդի հասարակական, տնտեսական, կենցաղային և այլ բնագավառների տարբեր երևույթներն ու կողմերը:

Հանելուկների գլխավոր նպատակն է՝ պահպանել ու տարածել ազգային բանահյուսական մշակույթը, որ ժողովուրդը ազատ և ուրախ ժամերին՝ խնջույքների, հարսանիքների, կեր ու խումի պահին ոչ թե ժամանակ կորցնի օտար, վնասակար իմաստ ունեցող զրույց-

---

1 Մ ա ն ո ւ կ Ա բ ե ղ յ ա ն, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Բ, էջ 94:

ներով, առասպելներով, այլ զբաղվի այդ կարճ հանելուկներով, որոնց հիմքում դրված են բարոյակրթական և հայրենասիրական նպատակներ։ Որ Շնորհալին իսկապես այդ նպատակներով է գրել հանելուկները, Կիրակոս Գանձակեցին հետևյալն է հաղորդում. «Եւ զի յամենայնի հանճարեղ էր Ներսէս, արար և առակս խորհրդաբարս ի գրոց, և հանելուկս, զի փոխանակ առասպելեաց՝ զայն առասցեն ի դիւնարբուս և ի հարսանիս...»[1]։

Մի ժամանակ հոգևորական բանասերների մեջ եղել են տարակուսանքներ, իբր դժվար թե հայոց հայրապետը թույլ տար իր արժանապատվությանը գրել հանելուկներ, այն էլ մեծ մասամբ ոտանիկ լեզվով։ Այդ տարակուսանքներից էլ բխում էր մեկ ուրիշ ենթադրություն, թե հավանորեն հանելուկները գրվել են մինչև նրա կաթողիկոս ընտրվելը, թերևս երիտասարդ տարիքում։ Սակայն Շնորհալու ստեղծագործություններում միշտ էլ եղել է ժողովրդասիրությունն ու ժողովրդական ոգին, որը դնալով ավելի է խորացել ու տարածվել։

Հանելուկները գրելու ժամանակը որոշելու տեսակետից կարևոր նշանակություն ունի Կիրակոս Գանձակեցու մի ուրիշ վկայությունը ևս. պատմագիրը այնպիսի հաջորդականությամբ է թվում Շնորհալու գործերը, որ «Զարթիք փառք իմ» և «Ցիշեսցուք» երգերը (որոնք անկասկած գրվել են կաթողիկոսության տարիներին) հիշելուց հետո, ամենից վերջում հանելուկների մասին գրում է. «արար առակս խորհրդաբար գրոց»[2]։ Եվ անմիջապես նշում է Ներսես Շնորհալու մահը և նրան փոխարինող Գրիգոր Տղայի մասին այսպես. «Եւ յետ նորա յաջորդէ զաթոռն Գրիգոր ամս քսան...»[3]։

Շնորհալին այդ երկու երգը գրել է Հռոմկլայում կաթողիկոս եղած ժամանակ, իսկ հանելուկները դրանցից էլ հետո է գրել, բայց թե կոնկրետ ո՞ր տարին, դժվար է ասել, իսկ հարցի սկզբունքային լուծման տեսակետից կոնկրետ տարեթիվը ունի միայն բանասիրական արժեք։

Մինչև հիմա էլ ընդունված է Շնորհալուն վերագրել միայն 120 հանելուկ[4], որն իհարկե ճիշտ չէ։ Մեր բազմաթիվ ձեռագրերում տարբեր քանակությամբ գրված են շատ հանելուկներ, որոնք պատկանում են Ներսես Շնորհալուն, բայց դրանց մեծ և արժեքավոր մասը հրատարակվածների մեջ չկան։ Սակայն տպագրվածների մեջ

---

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 147։

2 Անդ, էջ 147։

3 Անդ։

4 «Բանք չափաւ», էջ 560—584։

կան և այնպիսինները, որոնք թեև վերագրվում են Շնորհալուն, բայց նրա գրչին չեն պատկանում։ Մեր ասածը հաստատելու համար նշենք 1724 թվականին Կ. Պոլսում հրատարակված «Գրքոյկս, որ ասի Հանելուկք զոր արարեալ է Տեառն Ներսէսի Կլայեցւոյ Հայոց կաթողիկոսի վասն ուրախութեան մարդկան» գրքի հետևյալ բնորոշ քառյակը, որը գրվել է Շնորհալու մահից հետո՝ նրան մեծարելու համար։

Իշխան մի կայր յեկեղեցի,
Ի ի ծայրագոյն աստիճանի.
Քան զոր չեղև ոք աւելի.
Երգիչ տաղի շարականի[1]։

Իրավացիորեն Գ. Զարբհանալյանը այս հանելուկի հեղինակը համարում է «ազգային յետ դարուց քերթող մը», որի գրածը անզգուշորեն վերագրվել է Շնորհալուն։

Ավանդաբար ընդունված է եղել նաև այն կարծիքը, որ Շնորհալու հանելուկները բոլորը իրր թե կարճ քառյակներ են բացառությամբ մեկից՝ «Աշխարհ» հանելուկից («Պանդոկ մի կայր» և այլն), որը բաղկացած է 2 քառյակից կամ ութ տողից։ Այս սկզբունքով էլ ընտրվել և հրատարակվել են Շնորհալուն վերագրվող 119 հանելուկ, որոնք բոլորն էլ գրված են քառյակներով։ Արդյո՞ք ճիշտ է նման մոտեցումը։ Այս հարցին պատասխան տալու համար դիմենք տարբեր ձեռագրերում եղած Շնորհալու գրած հանելուկների կազմությանը։

Մի ձեռագրում լուսնի մասին գրված հետևյալ հանելուկը բաղկացած է միայն երկու տողից.

Առաւօտուն եղև մըթնիկ,
Երեկոյան ծագեաց լուսիկ[2]։

Մի ուրիշ ձեռագրում «Ջուկ» հանելուկը բաղկացած է երեք տողից.

Ջամէն խաղայ ւ է գնայուն,
Հանց սուր երթայ քան ըզթըռչուն,
Բընաւ չանկնի իւր աչքն քուն[3] ։

---

1 Գ ա ր ե գ ի ն Զ ա ր բ հ ա ն ա լ ե ա ն, Հայկական հին դպրութեան պատմութիւն, 1897, Վենետիկ, էջ 638։

2 Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր № 3421, էջ 329։

3 Ձեռագիր № 7703, էջ 92։

Երեք տողից է բաղկացած գրքի մասին գրված նաև ներքևի հետաքրքիր հանելուկը.

Հայր իմ ծնաւ զիս ի մօրէ իմմէ,
Եւ ես ծնա զմայր որդւոյ իմոյ,
Եւ որդիք իմ ծընան զմայր հօր իմոյ[1]։

Չորս տողանի հանելուկների մասին չխոսենք, դրանք բոլորն էլ անվիճելի կերպով վերագրվում են Շնորհալուն։

Ձիու կամ խոզի պատկերող հանելուկը ունի հինգ տող.

Շինեցին զնա ի հողէ,
Յօրինեցին ի կրակէ,
Հանին ի կառըն փայտեղէն
Եւ խոցեցին ի յաջ կողէն,
Եւ շատք արբին իւր արենէն[2]։

Ահա և մի այնպիսի հանելուկ, որը կազմված է վեց տողից.

Մեծ յորովայն անյագ կերով,
Բազում ուտէ խառնեալ ջրով,
Ըզնա ծածկեն շատ լաթերով,
Որ յագենա ինքըն քընով,
Զարթչի և գայ փրփրալով,
Ընդ դէմ հրոյն պատերազմով[3] (տաշտ)։

Իսկ հայոց այբուբենին վերաբերող ներքևի հանելուկը բաղկացած է 7 տողից.

Ի չորս տասէն չորս էառ,
Զայլն եբեր կացոյց յերևան,
Ամէնն է տասը հազար,
Մէկ պակաս և այլն ի լման,
Ինքըն քառեակի փակեաց,
Որ ճարտար մարդիկն իմանան,
Զկեսըն ժԸ առնէ, որ տխմար մարդիկն չիմանան[4]։

Ինչպես մի քանի ուրիշ, այնպես էլ «Լուսինն» հանելուկը բաղկացած է ութ տողից.

---

1 Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր № 695, էջ 415։
2 Ձեռագիր № 7703, էջ 104։
3 Ձեռագիր № 6045, էջ 186։
4 Ձեռագիր № 695, էջ 413։

Յորժամ ահեակ ակն բանի,
Նա ծուռ հայի յամէն տեղի,
Յետ երթայ ւ այլ այլ փոխի,
Մինչև աւուրքն իւր կատարի։
Է նշանակ նա աշխարհի,
Անցաւորաց մարդկան ազգի,
Որ մանկանայ ւ ալևորի
Դարձեալ խոռի և պակասի[1]։

Եվ վերջապես հանելուկներ էլ կան, որոնք կազմված են տասը և ավելի տողերից։ Հիշենք այդպիսիներից «Ամպ» հանելուկը, որը հյուսված է տասներկու տողից[2]։

Այս հանելուկի մոտ կա նաև մի ուրիշ, կրկնակի մեծ՝ բաղկացած քսանչորս տողից, որը վերաբերում է «Հողմ»-ին[3] և այլն։

Ինչպես տեսնում ենք, Շնորհալին հանելուկներ գրել է ոչ միայն քառյակներով, այլ սկսած երկուսից մինչև քսան և ավելի տողերով։

* * *

Այժմ փորձենք գնահատել այս հանելուկները գաղափարական և գեղարվեստական տեսակետից։

Շնորհալու հանելուկները գերազանցապես արտացոլում են օբյեկտիվ իրականությունը՝ բնությունը, մարդը, մարդկային կյանքը, հավատալիքները, կենցաղը, աշխատանքը, արհեստը, բուսական և կենդանական հարուստ աշխարհի որոշ կողմերը, վերջապես քարոզում են բարոյակրթություն և հայրենասիրություն։ Սրանք ամբողջապես վերցրած՝ իրենց բնույթով բաժանվում են երկու խմբի՝ կրոնական և աշխարհիկ։ Առաջին խմբին պատկանող հանելուկներն ավելի քիչ են ու կյանքից կտրված, ունեն միայն վերացական իմաստ։ Այդպիսիներից են հին ու նոր կտակարաններից վերցրված նյութերը, օրինակ՝ Ադամ, Դրախտ, Աբել, Կայեն, Աբրահամ, Ղովտ, Դավիթ, Դանիել, Աբիսակ, Հակոբ, Հոբ, Հովհաննես-Մկրտիչ, Հովսեփ, Հուդա, Սիմեոն, Սամսոն, Առաքյալները և այլ ուրիշներ։ Բայց կրոնական որոշ հանելուկների մեջ էլ երևում է հեղինակի վարպետությունը և հումորը, որտեղ թեև զուսպ, բայց իրա-

---

1 Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր № 7703, էջ 101։

2 Ձեռագիր № 7703, էջ 104։

3 Ձեռագիր № 7703, էջ 105։

կան դծերով պատկերված են կրոնավորների պակասությունները ու բացասական կողմերը.

Մեկիկ հատուկ մի կար փոքրիկ,
Ի ի գլուխն ունէր սևուկ թեպրիկ,
Երթայր նըստէր ինքըն լըռիկ,
Աղօթք առնէր խիստ սրպըրկիկ[1] (Աբեղա)։

Այստեղ հեղինակը թեպետ մեղմ, բայց ծաղրի է ենթարկում աբեղային, համեմատելով նրան փոքրիկ հավուկի հետ։ Մի ուրիշ հանելուկում խողը համեմատվել է միակեց վանականի հետ.

Ջետ միակեց հագնի խոշոր,
Ի ինքն ի բընէ մազեղնատոր,
Ջորմէ ասեն թէ չէ աղուոր,
Ջի Քրիստոսի կայ նենգատոր[2] (խոզ)։

Խողն ի բնե մազոտ է և ագեղ. ահա այս հատկություններով է, որ նա համեմատվում է կրոնավորի հետ։

Հասկանալի է, որ այս հանելուկների մեջ հեղինակը ծաղրում է աբեղային և մենակեցին։ Սակայն ծաղրը վարպետորեն տրված է հանելուկի պատկերի մեջ, որը անպայմանորեն վերաբերում է իրեն՝ հանելուկի նյութին։ Մի քանի հանելուկներում քննադատորեն ու բացասաբար են ներկայացված նաև այլազգի կրոնավորներն ու կրոնական ներկայացուցիչները։

Ագռավը գիշատիչ թռչունների մեջ հայտնի է որպես ագահ, ամեն կեղտոտություն ու լեշ ուտող. այս բացասական հատկություններով, մանավանդ կռնչալով՝ հանելուկի մեջ նա համեմատված է սուրբ քահանայի հետ[3]

Մի այլ հանելուկում էլ ծաղրված են մահմեդական հոգևորականը (շեյխը) և գերմանացի կաթոլիկ կրոնավորը, որոնք համեմատված են արջի հետ։

Շրխուկ մի կայր գետ ըզՓըրեր,
Ու ինք խաւ ի վեր մուշտակ ունէր,
Խաղայր, քաջօլ կենայր ու յառնէր,
Ու հետ տանձին գաշերն ածէր[4] (արջ)։

---

1 «Բանք չափաւ», էջ 560։
2 Անդ, էջ 571։
3 Անդ, էջ 561։
4 Անդ, էջ 565։

Հանելուկի վերջին տողն առնված է ժողովրդական առածից,— բացատրում է պրոֆ. Մ. Աբեղյանը,— թե՝ «Արջի աչքը մերու տանձին է»[1]։

Ձեռագրերից մեկում Մահմեդը համարվում է կախարդ, որը ինչպես և մյուս կրոնների առաջնորդները շատերին է պատիր կրոնով հմայել և իրեն հետևորդներ դարձրել.

*Յիւրմէն ես ինչ տամ քեզ նշան,*
*Որ յիշելոյ նա չէ արժան.*
*Կախարդ հմայ ինքն է լման,*
*Որ շատք իւրենն արար հաւան*[2] *(Մահմեդ)։*

* * *

Մյուս խմբին պատկանող աշխարհիկ բնույթի հանելուկները անհամեմատ ավելի շատ են, բովանդակությամբ հետաքրքիր և արվեստով էլ՝ բարձր։ Սրանց մեջ բավական մեծ տեղ են գրավում այնպիսիները, որոնք վերաբերում են բնությանը և նրա հետ կապված երևույթներին։ Շնորհալին սիրել է բնությունը՝ որից նա ընդհանրապես վարպետորեն օգտվել է իր մտքերն ու զգացմունքները ընթերցողին հասցնելու համար։ Այս կարգի հանելուկների մեջ նա դիպավորապես ցանկացել է այլաբանորեն և սրամիտ կերպով ժողովրդին ծանոթացնել բնության ու նրա հետ աղերսվող դեպքերի հետ։ Մարդու կյանքը բազմաթիվ թելերով կապված է բնության երևույթների հետ. ջերմությունն ու ցուրտը, փայլակն ու որոտը, ամպն ու անձրևը, կարկուտն ու սելավը, հողն ու ջուրը, այս ամենը վճռական դեր են խաղում մարդու տնտեսական կյանքում։ Ահա այս պատճառով էլ բնական և տիեզերական երևույթները հետաքրքրում են մարդկանց, որոնք ցանկանում են հասկանալ այդ ամենը, ճանաչել աշխարհը։ Շնորհալին կարողացել է վարպետորեն կառուցել հետաքրքիր հանելուկներ, որոնք պետք է որոշ չափով բավարարեին ժամանակի պահանջները։

Հանելուկները առհասարակ սեղմ, բայց բովանդակալից այլաբանական խոսքեր են, որոնք իրենց մեջ պարունակում են թաքուն իմաստ։ Տիեզերական մարմինները երկնքում, բնական երևույթները երկրում, այս երկուսը միասին կազմում են այն հանելուկների

---

1 Մ ա ն ո ւ կ Ա բ ե ղ յ ա ն, Հայ հին գրականության պատմություն, հատ. 2, էջ 95։ Այդ նույն էջում էլ բացատրված է, թե քոլոլ գալ, նշանակում է խաղալ, դյորվել, գզվել։

2 Ձեռագիր № 7703, էջ 93բ—94։

առարկան, որոնք գալիս են մարդուն բացատրելու առերևույթ թվացող առեղծվածայինն ու անհասկանալին։ Կյանքի համար բացառիկ մեծ նշանակություն ունի արեգակը։ Նա շատ հին դարերից սկսած դարձել է մարդու ուշադրության կենտրոնը, անգամ պաշտամունքի առարկան։ Հանելուկներում արեգակը խորհրդավորվել է մի քանի ձևերով, բայց մենք ընտրենք դրանցից միայն երկուսը, մեկը՝ տպագրված, մյուսը ձեռագիր։

Գեղեցիկ, նորածին մանկան է նման արևը. նա ամեն առավոտ ծնվում է, երեկոյան մեռնում և դարձյալ հարություն առնում՝ մարդկանց կյանք տալու համար.

*Տեսի զմանուկ մի որ ծնանէր,*
*Եւ ի նոյն օրըն մեռանէր,*
*Յետ թաղելոյն դարձեալ յառնէր,*
*Ի այլ գեղեցիկ զինք ցուցանէր*[1]։

Ավելի կենդանի ու գեղեցիկ է ձեռագրում եղած «Արև» հանելուկի պատկերը, որի հետ մեր բանաստեղծը կապել է հայոց այբուբենը՝ սկսած Ա տառից մինչև Ք-ն։

*Նա բարձրանայ այբբեն իքէն*
*Եւ խոնարհի դարձեալ անդրէն,*
*Ամէն գրրի հինգ օր յիւրմէն,*
*Գընայ զվեց ամիսն ամէն»*[2]։

Աստղերն էլ են դարձել հանելուկի առարկա։ Ժամանակի պատկերացմամբ՝ ամպն ու ջուրը վեր են բարձրացել երկինք, ամուր կպել երկնի կամարին. ամպի հատիկները լցվել են երկնային անմար բոցերով և որպես աստղեր լույս են տալիս աշխարհին՝ մեկը մյուսից գեղեցիկ, մեկը մյուսից պայծառ.

*Ջառ ի վեր ջուրն է մեկնած,*
*Ներքոյ ամուր աւազով փակած.*
*Աւազն ամէն հրով լցած,*
*Մի քան զմի պայծառացած*[3]։

Արևը, աստղերը, լուսինը և տիեզերական բոլոր մարմիններն իր մեջ բովանդակողը անհուն երկինքն է, որը պատկերված է որպես մի հրաշակերտ եկեղեցի, մի հսկայական կոթող։ Իսկ երկնա-

1 «Բանք չափաւ», էջ 564։

2 Ձեռագիր № 3421, էջ 328։

3 «Տաղարան և ուրբաթագիրք», Վենետիկ, 1513, էջ 52, և № 3421 ձեռագրում, էջ 329։

յին բազմաթիվ ու բազմատեսակ լուսատուները որպես ջահեր կախված են երկնակամարից և անվերջ վառվում են աշխարհի համար.

Եկեղեցին բարձր էր և լայն,
Անսիւն շինած էր ւ անգերան,
Կանթեղք ի կախ կան անշուան,
Ջահերն անձեռ ըղձոյն տան[1]։

Բնության և տիեզերքին վերաբերող բոլոր հանելուկները ունեն իրական, կոնկրետ նշանակություն, որոնց նյութը և պատկերները մեզ հնարավորություն են տալիս որոշ չափով դաղափար կազմելու ժամանակի մարդու հասկացողությունների և պատկերացման մասին՝ բնության երևույթների նկատմամբ։

Երկինքը մի կողմից զարդարված է լուսատու ջահերով, լույս ու ջերմություն է տալիս մարդուն, որոնք կյանքի համար անհրաժեշտ են, իսկ մյուս կողմից էլ երկնքի անհուն տարածությունը լցված է օդով, առանց որի նույնպես ոչ մարդը, և ոչ մյուս կենդանիները մի ժամ անգամ չեն կարող ապրել.

Առանց նորայ կեանք ոչ լինի,
Բոլոր աշխարհ նովաւ շարժի.
Այլև երկինք նա անուանի,
Ու ննջակա հոգւոյն մեծի...[2]

Հանելուկը հետաքրքրական է նաև նրանով, որ ըստ բանաստեղծի՝ ամբողջ աշխարհում կյանքի գոյության պատճառը օդն է. ամբողջ աշխարհը նրանով է շարժվում. անգամ նա երկինք է անվանվում։ Քառյակի երեք տողերի մեջ երկնքին ու օդին վերաբերող մտքերը միանգամայն հետու են կրոնական գաղափարներից։ Այստեղ Շնորհալին չերմ հավատացյալ լինելով հանդերձ, նաև աղատախոհ է։ Իսկ վերջին տողը, նախ՝ մնացածների հետ մտքով թույլ է կապվում և երկրորդ՝ այն ժամանակ հնարավոր չէր ամեն ինչ բացատրել բնական պատճառներով և չկապել կրոնի հետ։

Կրոնական բացատրություններից բոլորովին հետու, բնական և գեղեցիկ է կառուցված «Ամպ» հանելուկի պատկերը, որի տված բնորոշ հատկանիշների և համեմատությունների օգնությամբ ունկրնդիրը ոչ այնքան դժվարությամբ կարող է կռահել հանելուկի առարկան և լուծել այն։

---

1 «Բանք չափաւ», էջ 570։

2 Ձեռագիր № 4283, էջ 23։

*Ի գոլորշեաց նայ գոյանայ,*
*Ոչ երևի և էանայ,*
*Յանկարծակի ոչընչանայ,*
*Որ այլ բընաւ չերևանայ.*
*Ջերդ զբամբակ նա դիզանայ,*
*Է զի սպիտակ և սևանայ.*
*Երբեմն թուխ և սպիտականայ,*
*Վաղ և երեկուն կարմրանայ.*
*Ջրով ուռի և բարձրանա,*
*Փայլակըն տայ և որոտայ.*
*Երբեմն ջուր ոլորտանայ,*
*Անուշ մաղէ, երբ կակղանա*[1]:

*Այս հանելուկը հասարակ մարդուն մի կողմից սովորեցնում է սրամտություն, վարված դատել, մյուս կողմից էլ մանրամասնորեն ծանոթացնում է ամպի բնական հատկություններին, նրա ձևափոխումների և նշանակության հետ: Այսպիսի հանելուկները, գեղեցիկ և բնական եղանակներով, հետաքրքիր ձևերով, մարդկանց սովորեցնում են ճանաչել աշխարհը, այնպես, ինչպես նա կա, առանց նախապաշարումների:*

*Բազմաթիվ ու հետաքրքրական են այս կարգի հանելուկները, որոնց արտաքին նկարագիրը և պատկերը կառուցված են սրամիտ ու գեղեցիկ: Հիշենք այդպիսիներից ձեռագրերում եղած «Կանթեղ», «Աղեղ», «Ջուրք», «Կարկուտ», «Որոտ», «Գետ», «Ծովն» և տպագրվածներից՝ «Ջյուն», «Աշուն», «Ամառ», «Գարուն», «Ձմեռ» հանելուկները:*

* * *

*Բնությունից ու տիեզերքից հետո հանելուկների մի մեծ շարք էլ մարդկանց, պաշտոնյաների և նույնիսկ աղգերի մասին է գրված: Ամենից առաջ այստեղ հանելուկի առարկա դարձել է կոնկրետ մարդը, որը համեմատվել է աղյուսե տան հետ.*

*Անկիւն տեսայ աղիւսէ տուն,*
*Յերկու սիւնի վերայ կանգուն.*
*Բարձրութիւնն երեք կանգուն,*
*Թիզ մի տանիքն ամէնն ի բուն*[2]:

---

1 Ձեռագիր № 7703, էջ 104բ—105:

2 Ձեռագիր 7703, էջ 99բ:

Ձեռագրերից մեկում մի պարզ հանելուկի նյութը մարդ-պաշտոնյան է, որտեղ ցույց է տրված, թե նա ինչպես է կատարում իր պաշտոնը.

Կայր դատաւոր մի անիրաւ,
Ճանչէր ըզղորդըն, չառնէր իրաւ,
Յօվկիանոս ծով խեղդեցաւ,
Տանջի հըրով և խաւարաւ[1]։

Աղուհացից կոչվող շարականների բաժնում մենք հանդիպեցինք «Անիրավ դատավորի» առակին, որը չնայած վերցված էր նոր կտակարանում եղած առակներից, բայց բանաստեղծության նպատակն էր հավատացյալների մեջ ատելություն առաջացնել դեպի անիրավությունն ու անարդարությունը և այս է միայն արժեքավորն այդ շարականում։ Իսկ «Դատավոր» հանելուկի նյութը ոչ մի կապ չունի հին կամ նոր կտակարանների հետ, առնված է իրական կյանքից, առավել ևս արժեքավոր է այն տեսակետից, որ նախ՝ ոչ մի բանով չի առնչվում կրոնի հետ և երկրորդ՝ ավելի որոշ է խարազանվում անիրավությունն ու ճշմարտության ոտնահարումը։ Այստեղ արդեն հեղինակը չի բավականանում լսողների մեջ միայն ատելություն առաջացնելով դեպի անիրավ պաշտոնյան, այլ ցանկանում է, որ նա պատժվի, խեղդվի օվկիանոսում, կամ այրվի հրով։ Շարականներում եղած անիրավ դատավորի առակի մեջ օրինազանցը պատիժը պիտի կրի երկնքում, իսկ հանելուկում այդ պատիժը պիտի տեղի ունենա երկրում՝ մարդու ձեռքով։

Մի ձեռագիր հանելուկում էլ ցույց է տրված, որ մարդը թեև մահկանացու է, բայց նա է բնության զարմանալի հրաշքը.

Ով որ ասիմ, քեզ սիրելիս,
Բան մի տեսի զարմանալի.
Առ ի վերուստ զարմատն ունի
Եւ յամենայն տեղ բուսանի[2]։

Սակայն երկրում արմատ ունեցող, ամեն տեղ բուսնող այս զարմանալի մարդը նույնպես ժամանակավոր, անցավոր է, ինչպես ինքը՝ աղյուսե շենքը, կամ չորացող բույսերը։ Աշխարհը նման է մի հյուրանոց-պանդոկի, և մարդը որպես հյուր գալիս է, միառժամանակ մնում, ապա գնում։ Երբ նա նոր է գալիս այդ ոչ պակաս զար-

---

1 Ձեռագիր № 2961, էջ 237։

2 Ձեռագիր № 7703, էջ 103բ։

*Մանալի պանդոկը, նրան հարգում, մեծարում են, իսկ գնալիս՝ ամբողջովին կողոպտում, մերկացնում, ապա նոր են ճամփա դնում.*

*Պանդոկ մի կայր վերայ երկրի,*
*Ի յանցաւոր ճանապարհի.*
*Որ անծանօթքն ի նմա գային,*
*Եւ ծանօթքըն գընային.*
*Մինչ հիւրըն գայր մեծարէին,*
*Եւ մինչ գընայր կողոպտէին.*
*Ոչ թէ մասն ինչ իրս առնուին,*
*Այլ զբովանդակըն խըլէին*[1]:

*Աբիսակին և անառակ կնոջը վերաբերող հանելուկներով խաթաղանվում են ավատական հասարակաձևի կենցաղի և բարոյականության արատավոր կողմերը:*

*Շնորհալու ձեռքով է առաջին անգամ աշխարհիկ կինն իր արտաքին գեղեցիկ նկարագրով մուտք գործում մեր գեղարվեստական գրականության՝ գրավոր հանելուկների մեջ.*

*Կոյս մի կայր աղուտ աչեր,*
*Ի ունէր կարմիր բարակ շրթներ,*
*Ջողջ գիշերուն ածէր գըրկեր,*
*Վաղըն բարով ելնէր ի վեր*[2] *(Աբիսակ)*:

*Աստեղ կինը վերցված է ոչ թե այլաբանորեն՝ ինչպես Նարեկացու մոտ է, այլ ուղղակի, իսկական առումով: Շնորհալու նկարագրած Աբիսակը աշխարհիկ ռեալ, սովորական կին է, որն իր նկարագրով մի տեսակ նախատիպ է հանդիսացել միջնադարյան հետագա տաղերգուների համար:*

*Հակառակ այս գեղեցիկ ու համայիլ կնոջ նկարագրի, հետևյալ հանելուկում գծված է անառակ կնոջ բացասական պատկերը.*

*Ոսկի սընդուկ է տեսողաց,*
*Մէջըն պեղծ աղբով լըցած.*
*Աստ վայելուչ է ունողաց,*
*Անդէն հանէ դրախտէն կենաց*[3]:

---

1 «Բանք չափաւ», էջ 563:
2 Անդ, էջ 561:
3 Անդ, էջ 572:

* * *

Հանելուկների մի մեծ շարք էլ ցույց են տալիս մարդկային ռեալ կյանքը, կենցաղը, երկրագործական աշխատանքները և վերջինիս հետ կապված զանազան գործիքներ ու առարկաներ։ Սրանք գլխավորապես արտացոլում են ժամանակի սոցիալ-տնտեսական կյանքի զանազան կողմերը։

Երկրի վրա ամենից շատ բարիք տալիս է այգին, որը նման է բազմազավակ մի մոր.

Կին մի նստէր յոյժ փառաւոր,
Դստերք ունէր շատ ւ աղաւոր,
Կանաչ հագնին զերդ զթագաւոր,
Ամենեցուն է ցանկաւոր[1]։

Այգին լիքն է բազմաթիվ մրգերով, որոնց մեջ ամենից գեղեցիկն ու ցանկալին, խնձորն է.

Պատուղ մի կայր յոյժ ցանկալի,
Ի ինք գեղեցիկ տեսակ ունի.
Յոյժ վայելուչ և պիտանի
Որ հիւանդաց շարապ լինի[2]։

Ավելի գեղեցիկ է սերկևիլի հանելուկը։ Եթե խնձորը խիստ ցանկալի է և նույնիսկ կամակ հիվանդների համար, ապա սերկևիլը թե գեղեցիկ է, թե բուրավետ և թե դեռ հասնում է մինչև անգամ թագավորի սեղանը.

Յոսկի խնձոր նման լինի,
Իւր հոտն դայ անպակ մըշկի.
Ինքն է հագեր դեղին թաղի,
Երթայ յառջև թագաւորի[3]։

Իսկ թթենու հանելուկի միջոցով հեղինակը ունկնդիրներին սովորեցնում է այդ ծառի օգտակարությունը նաև շերամապահության տեսակետից, որը խոշոր նշանակություն է ունեցել ժամանակի արհեստների և տնտեսության համար.

---

1 Ձեռագիր № 7703, էջ 93։

2 «Բանք չափաւ», էջ 571։

3 Ձեռագիր № 7703, էջ 92բ։

Զայն ծառըն տես որ կու ծաղկի,
Տերևն է իւրն զերդ ըզկաշի,
Նարմով զգեստ մարդկան լինի,
Խիստ վայելուչ և ցանկալի[1]։

Գեղեցիկ համեմատություններով է տրված այգու բերքի բերքը՝ դինին, որը սակայն շատ գործածելու պարագայում հանցանքի և արյունահեղության պատճառ կարող է դառնալ.

Ըզչուրն հըրոյ նըման տեսայ,
Նա և պայծառ քան ըզլուսընկայ.
Քան զծիրանի ծուվ կու ծըփա,
Շատոց արիւն հեղեալ է նայ[2]։

Հողագործության և տնտեսության հետ կապված բազմաթիվ հանելուկներից վերցնենք միայն ցորենի, ջրաղացի, կտավհատի և ձիթահան ջոթի մասին գրվածները։

Ցորենի մասին գրված մի քանի հանելուկները ցույց են տալիս, թե Շնորհալին որչափ մոտ է կանգնած եղել սերմնացան աշխատավորին և որքան ջերմ է եղել նրա սերը դեպի մայր հողն ու ստեղծագործ աշխատանքը։ Ցորենն է կյանքին կյանք տվողը, որին բանաստեղծը անվանում է «հոգու հոգի»։ Այդ կենսատու ցորենն անցնում է շատ փորձությունների բովից և կրում է մի քանի փոփոխություններ։ Նա թաղվում է հողի տակ. ձյունը նստում է նրա վրա, սառը հողում նա մեռնում է. բայց երբ գարուն է գալիս, նա արթնանում է մեռելային քնից, հարություն է առնում, աճում ու հասկակալում։ Ապա գալիս է ամառը. հնձվորի ոսկե մանգաղը զարկում-կտրում է նրան, կալսում, ծեծում են, աղում, վերջապես նա անցնում է կրակի ու ջրի միջով. դառնում է հաց՝ մարդուն կյանք տալու համար.

Տեսայ զիմ հոգւոյս հոգին,
Որ մեռաւ ւ ի հող թաղեցաւ,
Դարձեալ իմ սիրոյս համար,
Ինքն յարեաւ ու շատ դաւեցաւ.
Կամաւ նա ի սուր եկաւ,
Եւ քարամբ խիստ քարկոծեցաւ.
Ի գեհեան ւ ի հուր մըտաւ,
Իմ հոգւոյս հոգի նա դարձաւ[3]։

---

1 Ձեռագիր № 7703, էջ 100—100բ։

2 «Բանք չափաւ», էջ 566։

3 Ձեռագիր № 7703, էջ 100բ։

Այն պրոցեսներից, որոնց միջով անցնում է ցորենը՝ պատրաստի հաց դառնալու համար, դրանցից մեկն էլ ջրաղացն է, որի մասին Շնորհալին գրել է երկու գեղեցիկ հանելուկ։

«Ո՞րքան իրական է նկարագրված աշխարհը կերակրող ջրաղացն իր ցրտոնում (ջրառուն), տառապող անվով (փառ), շաղ տված ալյուրով ու չախչախով»,— հիացմունքով բացականչում է պրոֆ. Մանուկ Աբեղյանը[1].

Մինն ի յանդունդըս տառապէր,
Մինն ի յերեսըն թըքանէր,
Գըլխովըն ծափըս հարկանէր,
Ըզկենարարըն մեզ բերէր։

Կամ թե՝

Ոմն ի յէից էր անկենդան,
Զայնիւ գոչէր անհեզական,
Յընթրիս կոչէր զազգըս մարդկան,
Եւ զիւր փըսխածն առնէր սեղան[2]։

Ինչպես ցորենն ու ջրաղացը, այնպես էլ կտավհատն ու ձիթհանքը անհրաժեշտ, կենսական նշանակություն ունեն աշխարհի համար։ Ձեռագիր հանելուկներից մեկում այսպես է բնորոշվել կտավհատը.

Ինքն խոտ է գետնաբոյս,
Կոճակ ունի ի գլուխն և յուս.
Երբ շարշարեն դնեն ի սոյզ,
Արեգական նըման տա լոյս[3]։

Ինչպես ցորենին ջրաղացում են շարշարում, ջարդում, այնպես էլ կտավհատին՝ ձիթահանքում։ Իսկ ո՞վ է այդ շարշարողը, որ կտավհատից ձեթ ստացվի։ Այդ հասարակ աշխատավոր մարդու նկարագիրն էլ տրված է «Ձիթացպան» կամ «Ջոթ» հանելուկում.

Ոմն բաղմեալ ի հողէ ձի,
Եւ հանապազ ծափս հարկանի.
Հալաւ հագեր զարմանալի,
Թէ զգինն ասես փող մի չարժի[4]։

---

1 Մ. Աբեղյան, Հայ հին գրականության պատմություն, հատ. 2, էջ 96։

2 «Բանք չափաւ», էջ 580—581։

3 Ձեռագիր № 7703, էջ 103։

4 Անդ։

Կյանքից վերցված այս հանելուկները չափազանց շատ են, որոնց բոլորի վրա հնարավոր չէ կանգ առնելը։

* * *

Բազմաթիվ հանելուկների առարկա է դարձել նաև կենդանական աշխարհը, ուր կան վայրի և ընտանի կենդանիներ, թռչուններ, սողուններ, միջատներ և այլն։ Այս ամենի նյութը հարկավ Շնորհալին նույնպես վերցրել է իրական աշխարհից և ինչպես յուր մյուս հանելուկներում, այնպես էլ այստեղ, հետապնդել է ուսուցողական նպատակ։ Այս կարգի հանելուկները գլխավորապես ունեն դաստիարակչական և բարոյակրթական նշանակություն։

Կենդանիների մեջ ամենահզորն առյուծն է, որը

Գլուխ ունի զերդ զքոյց,
Աչուի ունի ինքն զերդ բոց,
Յորժամ խնդիր լինի որսոց,
Ջերդ թագաւոր խոլրէ շաւոց[1]։

Գայլը ագահ է, դող «աչուի ունի զերդ կայծ տուող» և սարսափելի հափշտակող է։ Աղվեսը «խելօքն ծով է ու խիկար»։ Խոզը տգեղ, ծանրամարմին է ու կեղտոտ, մինչդեռ մաքին, այծը, մաքուր են իրենց մսով ու մազերով։ Այծի ու ոչխարի հասարակ եղջյուրներն անգամ օգտակար են մարդուն։ Բայց ամենաբնորոշն ու գեղեցիկը կատվի հանելուկն է.

Որպէս տիկին յուշիկ գնայ,
Պարան յետևն ի քարշ կուգայ,
Բազմի յոսկի բարձի վրայ,
Որսիկ առնէ քան զբազայ[2]։

Թռչուններից էլ հիշենք կաքավի, ծտի, աքլորի, թխսի, բադի, արտույտի և մյուսների հանելուկները։ Բայց սրանցից վերցնենք միայն աքլորի (խորոզի) և ծտի (չիտին) բնորոշ հանելուկները, որոնք կան միայն որոշ ձեռագրերում։

Աքլորի հանելուկը բնական դեղեցիկ նկարագրի հետ միասին, ունի և ուրախ բնույթ։ Աքլորի մորուքը նման է բոցի, գլուխը՝ կարմիր սղոցի։ Թեկուզ նա տասնյակներով կին ունի, բայց աչքը էլի դուրսն է, ուրիշ հավերի է կանչում.

---

1 Ձեռագիր № 6045, էջ 177։

2 «Բանք չափաւ», էջ 572։

*Մորուք ունի ինքը գետ գլոց,*
*Ի ի գլուխն ունի կարմիր սղոց.*
*Կանայք ունի տասն ու հնգոց,*
*Զայնէ ւ ընկեր ուզէ այնոց*[1]։

*Իսկ ծիտը ձրիակեր է և գողությամբ է ապրում։ Նա գողունի մանում է այգիները և այնքան շատ խաղող է ուտում, որ չափից ավելի է գիրանում.*

*Գայր ի այգին ինքն դողէդող,*
*Ու հետ ուտէր ինքըն խաղող.*
*Գիրացեր է զերդ ըղբող*
*Բայց ինքը չարժէ քան զմեկ փող*[2]։

*Միջատներից էլ մրջյունի, մեղվի և լվի հանելուկներն են շատ հետաքրքրական և իմաստալից։ Մրջյունի և մեղվի հանելուկներով Շնորհալին նպատակ է ունեցել մարդկանց մեջ ուժեղացնել աշխատասիրության գաղափարը, որը տրամագծորեն հակառակ է գայլի, աղվեսի, ծտի հանելուկների մեջ եղած ագահության և ձրիակերության։ Այս հանելուկներում ավելի ցայտուն կերպով են արտահայտվել աշխատավոր մարդու մտքերն ու տրամադրությունները։ Մրջյունն իր համառ աշխատասիրությամբ հիշեցնում է հողագործ աշխատավոր մարդուն.*

*Կարի տեսայ ես շատ կարուան,*
*Որ կու իջանայր ի Խորասան.*
*Իշուին բորիկ էր ու անփալան,*
*Մեկիկ հատիկ բառնան ու գան*[3]։

*Մեղուների մասին գրված է երկու հանելուկ, որից մեկին հրատարակիչները տվել են կրոնական դույն, այնինչ ձեռագրերում այդ հանելուկը կրոնական ոչինչ չունի։ Ահա ձեռագիրը.*

*Գործաւոր փոքր և հրաշալի,*
*Զամէն շրջի յանապատի.*
*Մասուն առնու ևս յամենի,*
*Յառաջ բերէ գործ ցանկալի*[4]։

---

1 *Ձեռագիր № 695, էջ 409բ։*

2 *«Տաղարան և ուրբաթագիրք», Վենետիկ, 1513, էջ 50—51 և ձեռ. № 7703, էջ 95։*

3 *«Բանք չափաւ», էջ 576։*

4 *Ձեռագիր № 7703, էջ 90։*

Տպագրվածը՝

Գործաւոր փոքր և հրաշալի,
Ամէն շրջի յանապատի.
Յառաջ բերէ գործ ցանկալի,
Որով Աստուած փառաւորի[1]:

Հանելուկը խմբագրողը ձեռագրից հանելուկ ընդգծված երրորդ տողը, նրա տեղը դրել է տպագրվածի ընդգծված չորրորդ տողը, որը բոլորովին չի կապվում հանելուկի մտքի և կառուցվածքի հետ:

Մեղվին վերաբերող մյուս ավելի գեղեցիկ և իմաստալից հանելուկը հետևյալն է.

Ջերդ ըղքարդործ ւ այլ իմաստուն,
Հրաշից ծաղկանց շինէ իւր տուն.
Քաղցըր բըղխէ նորա լեզուն,
Բընաւ չընկնի յիւր աչքըն քուն[2]:

Շնորհալին ինչպես մեղվի և մրջյունների հանելուկներով մարդկանց ուզում է մղել դեպի աշխատանքն ու ստեղծագործությունը, նույն ձևով էլ նա իր մի քանի ուրիշ հանելուկներով քարոզում է սեր՝ դեպի գիրն ու գիրքը, ուսումն ու մտքի զարգացումը: Հիշենք դրանցից երկուսը, որից մեկը վերաբերում է այբուբենին: Այստեղ Շնորհալին ուզում է գրագիտության հետ միասին սովորեցնել նաև հաշիվ՝ թվաբանություն.

Ի չորս տասէն չորս էառ,
Զայլն եբեր կացոյց յերևան.
Ամէնն է տասը հազար,
Մէկ պակաս և այլն ի լման,
Ինքն քառակի փակեաց.
Որ ճարտար մարդիկ իմանան,
Զկեսն ժԸ առնէ,
Որ տխմար մարդիկն չիմանան[3]:

---

1 «Բանք չափաւ», էջ 575:
2 Անդ:
3 Ձեռագիր № 695, էջ 413:

Հետևյալ գեղեցիկ հանելուկը այլաբանորեն հյուսված է «Գրի» այսինքն՝ ընդհանրապես տառերի վրա.

Մարդ իւր արգանդն էր սևային,
Հօրըն բարակ ամենևին,
Որդիքըն սև ծրնանէին
Դաշտըս բապիտակ բնակէին[1]։

Այբուբենի տառերից հետո մի քանի բովանդակալից հանելուկներ էլ թղթին, թանաքին և գրքին են վերաբերում։ Գրված թուղթը, չնայած անշունչ առարկա է, բայց քայլում է, ամեն տեղ մտնում ու խոսում է համարձակ։

Է բանաւոր, չէ կենդանի,
Շատ գա ի շուրջ ոտուի չունի,
Ուր մեծատուն կա և արքունի,
Նա համարձակ երթայ խօսի[2] (թուղթ)։

Թղթի հանելուկի պատկերը կազմված է կենդանի մարդու հետ համեմատելով, իսկ թանաքի նկարագիրը տալու համար հեղինակը իր համեմատությունները վերցրել է բնությունից և երկրագործական աշխատանքների հետ կապված առարկաներից ու գործիքներից.

Սերմն սև ու ջրաց հոլով,
Դաշտըն հերկած սպիտակ թամբկով.
Ի հինդ լուծըն հարօրով,
Ի իւրեանց վաստակն ընթանալով[3]։

Պարզ երևում է, թե ինչպես Շնորհալին ցանկանում է հանելուկներից ամեն մեկը, այս կամ այն պատկերով ու առարկայով կապել շինական մարդու ամենօրյա աշխատանքի ու աշխատասիրության հետ։ Ապա դալիս են «Գիրք» հանելուկները։

Մի տեղ գիրքը նման է երկնային գիսավորի, որի ընթացքը հետաքրքրություն է առաջացնում աշխարհում, քանի որ նա խորախորհուրդ մտքեր է պարունակում.

Միասունի, բազմոտանի,
Եւ գիսաւոր ընթացք ունի.

---

1 Ձեռագիր № 3421, էջ 336։
2 Ձեռագիր № 6045, էջ 186։
3 Անդ, էջ 184։

*Ի խորս անճառ զննեալ նստի,*
*Եւ յանջրդիս նա մեռանի*[1]։

*Գրքին վերաբերող մի ուրիշ հանելուկ էլ հետևյալ այլաբանական համեմատություններով է հյուսված.*

*Տուն մի տեսի սպիտակ փրռած,*
*Ու սև հաւեր ի ներս թառած.*
*Զուս ածէին ցեղք ի ցեղաց,*
*Լեզուաւ խոսին բանականաց*[2]։

*Առանձնապես հետաքրքիր են կառուցված այն հանելուկները, որոնք վերաբերում են դրասիրության և ուսումնասիրության։ Գիրքն ու ուսումը զարգացնում են մարդու հոգեկան աշխարհը՝ առանձնապես միտքը։ Վերջինս թռչում է արագ, վայրկենապես անցնում է երկրե երկիր և մարդկանց (թեկուզ հեռավոր երկրներում ապրող) կապում է իրար հետ։ Միտքը թռչող-թևավորների մեջ բոլորից, անգամ ծիծեռնակից էլ արագ է թռչում.*

*Արդ է անթև և անփետուր,*
*Քան ըզծիծառն երթայ ի սուր.*
*Յերկրէ յերկիր շրջի թափուր,*
*Դառնայ ու գայ բերէ շատ հիւր*[3]։

*Մարդու մտքերը ձևակերպողը, արտահայտողը լեզուն է, որն ունի իր գիտությունն ու արվեստը՝ քերականությունը։ Սովորողների համար Շնորհալին հանելուկի առարկա է դարձրել նաև քերականությունը, որը թեև «փոքր», բայց շատ կարևոր գիտություն է.*

*Տեսի արհեստ մի ես փոքրիկ,*
*Յոյժ պիտանի և գեղեցիկ,*
*Ուներ յինքեան երկու դրռնիկ,*
*Ութեակ թվով պատուհանիկ*[4]։

*Այս հետաքրքիր հանելուկը կարևոր է նաև այն տեսակետից, որ սրա միջոցով կարելի է պատկերացնել, թե XII դարում ինչպիսի բաժիններից և ենթաբաժիններից է տրոհվել քերականությունը։ Հանելուկում հիշված երկու դռներից մեկն հավանորեն ձևաբանու-*

---

1 *Ձեռագիր № 695, էջ 415։*
2 *«Բանք չափաւ», էջ 566։*
3 *Ձեռագիր № 6045, էջ 184։*
4 *Ձեռագիր № 6045, էջ 190։*

թյունն է, իսկ մյուսը՝ շարահյուսությունը, որոնց միջոցով մարդը ծանոթանում է այդ դիտության։ Իսկ ութ պատուհանները երևի խոսքի մասերն են։

* * *

Ինչպես իր մի շարք ուրիշ գործերում, այնպես էլ հանելուկների մշակման բնագավառում Շնորհալին հետևել է մեր հայրենասեր պատմիչներ՝ Խորենացու, Ագաթանգեղոսի, Բյուզանդի, Փարպեցու, Ղևոնդի և մյուս մատենագիրների լավագույն սովորույթներին և ստեղծագործության առարկա դարձրել հայոց պատմության մեջ նշանավոր անձանց՝ ժողովրդին հայրենասիրության ոգով դաստիարակելու նպատակով։

Իր հսկայական ուժը Տորք Անդեղը գործադրում է հայրենիքի թշնամիների դեմ, որոնք հեռու տեղերից, որպես ծովահեն ասպատակներ՝ հարձակվում են Հայաստանի վրա.

*Մանուկ մի կայր ի Հայք գովան,*
*Քան զՍամփսոն այլ յաղթական,*
*Վհմ մի վհրոյց մեծ տրամական,*
*Ի ծովն ընկէց կանգնեաց արձան*[1]։

Տրդատ թագավորի հանելուկի մեջ էլ, ինչպես «Վիպասանության» պոեմում, միայն թևթևակի է նշվում կրոնական-առասպելական ավանդությունը՝ նրա խոզ դառնալու մասին, դարձյալ շեշտը նրա լավ կողմերի վրա դնելու նպատակով։ Այստեղ գլխավոր մոտիվնտը նրա խաժակն լինելն է և այն, որ նա ունի մեծ երկիր, որի սահմանն հասնում է մինչև Մարաշ.

*Թագաւոր մի կայր աշխին էր խաժ,*
*Ժոմ մի ժանի ունէր ու բաշ.*
*Սինօր ունէր մինչ ի Մարաշ,*
*Ամենքդ ասեք իւրեանն վաշ*[2]։

Իր ուժով ու քաջագործություններով Տորքին շատ նման է Արշակունի Վարազդատը.

---

1 «Բանք չափաւ», էջ 583։

2 Անդ, էջ 584։

Մանուկ մի այլ ի յայս[1] նման,
Էր ի յազգէն Արշակունեան,
Հանչաք մանուկ էր ու իշխան,
Դ'Եփրատ վաղեաց քայլ մի լրման[2]։

Ֆիզիկական մեծ ուժի տեր հայրենասեր պատմական անձնավորությունների կողքին հայոց պատմության մեջ քիչ չեն և հոգեկան խոշոր ուժի տեր հայրենասեր մարդիկ ու գիտնականները։ Այսպիսի մարդկանցից հանելուկի նյութ են դարձել Ներսես Մեծը, Դավիթ Անհաղթը և ուրիշներ։

Մի անտիպ հանելուկում Ներսեսը պատկերված է որպես հոգու պատվական տնտես, որը հոգեկան սնունդ է մատակարարում հայ ժողովրդին, իսկ երեխաներն առանձնապես այդ մտքի սննդով աճում և փարթամանում են.

Տնտես մի կայր խիստ պատուական,
Ճաշեր կազմէր յոյժ զանազան,
Մանկունքս ուտեն և զուարճանան,
Եւ գիտութեամբ փարթամանան[3]։

Ձեռագրերում հղած Դավիթ Անհաղթ գիտնականին վերաբերող հանելուկի մեջ Շնորհալին դրել է հետևյալ նպատակները՝ ճգտում ոչ սեր դեպի գիտությունը և՝ մեծարումն ազգային անվանի գիտնականին, որի համբավը դուրս է եկել հայրենի երկրի սահմաններից և դարձել հայ ժողովրդի հպարտությունն ու պարծանքը.

Իմաստուն մի ի յԱթենաց
Էր ի յազգէն հայոց մեծաց,
Խոսրովային ճառ մի ասաց,
Որ չոր թուեաց վարդապետաց[4]։

Վերջում հիշենք և հայ ժողովրդին նվիրված հայրենասիրական հանելուկը։ Իր ողջ պատմության ընթացքում, հայրենի երկիրը դրսի դավիչներից պաշտպանելու մարտերում հայ ժողովուրդը տասնյակ դարեր շարունակ ճակատել է թշնամիների անհամեմատ մեծ ուժերի բանակների դեմ և հերոսաբար պաշտպանել իր հայրենիքը.

---

1 Քանի որ Վարազդատի հանելուկը մի ձեռագրում կցված է եղել Տորք Անդեղի պատմությանը, «ի յայս» ասելով պետք է հասկանալ Տորքի նման, սրա նման («Բանք չափաւ», էջ 583)։

2 Անդ, էջ 583։

3 Ձեռագիր № 7703, էջ 103բ—104։

4 Ձեռագիր № 7703, էջ 91։

*Քան զամենայն ազգ այլ ի վեր,*
*Ազգ մի գիտեմ հաւասար քաջեր...*[1]

*Այս հանելուկը առաջին հայացքից թվում է թե գրված է ազգային սնապարծության ոգով, բայց միայն թվում է։ Երկար դարեր հայ ժողովուրդը, ինչպես և արևելքի ու արևմուտքի մյուս փոքր և ճնշված ժողովուրդներից շատերը, բազում անգամ արիաբար մարտնչել է արտաքին բռնակալ թշնամու դեմ՝ իր երկիրը և ինքնուրույնությունը պաշտպանելու համար և իսկապես տվել է բազմաթիվ քաջեր և անձնուրաց հերոսներ։*

*Շնորհալու գրած հանելուկները բավականաչափ շատ են՝ բազմաբովանդակ ու արժեքավոր. դրանց թիվը մեր ձեռագրերում հասնում է շուրջ երեք հարյուրի, որոնք արժանի են հատուկ ուշադրության և ամբողջական հրատարակության։*

---

1 *Ձեռագիր № 6045, էջ 183։*

# ԱՐՎԵՍՏԸ

## Ա. ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Այժմ տեսնենք արվեստի տեսակետից Շնորհալին ինչո՞վ է առաջ անցել իրեն նախորդող բանաստեղծներից ու գրողներից, կամ ո՞րոնք են այն նորությունները, որ նա ներդրեց մեր պոեզիայի մեջ, հարստացրեց և զարգացրեց այն:

Աշխարհիկ և ազգային նոր թեմաների հետ, բնականաբար, պիտի երևան գային նաև գրական նոր տեսակներ ու ձևեր: Մինչև Շնորհալին բանաստեղծության մեջ գերազանցապես տիրող ժանրերն էին՝ շարականները, հոգևոր երգերը և տաղերը: Հարկավոր էին գրական նոր տեսակներ, որոնց միջոցով բանաստեղծը կարողանար արտահայտել ժամանակի ոգին և իր խոհերն ու ցանկությունները: Եվ ահա մեկը մյուսի ետևից բանաստեղծության մեջ տեղ են գտնում գրական նոր ժանրերը: Երևան են գալիս պատմական, քաղաքական-հայրենասիրական, տիեզերագիտական և մանկավարժական պոեմներ: Մշակվում են Սողոմոնի առակները, թարմություն, նոր շունչ և նոր ձևեր են մուտք գործում նույնիսկ հոգևոր երգերի մեջ. գրվում են անվանականապով և այբուբենի կարգով բազմաթիվ ոտանավորներ ու երգեր: Այս ամենը որպես ժամանակի պահանջ և նորություն առաջին անգամ մտնում էր միջնադարյան գրականության մեջ Ներսես Շնորհալու ձեռքով: Գրվածքների աշխարհիկ և ազգային բովանդակությունը, նոր, հետաքրքիր գրական տեսակներն ու ձևերը ազդարարում էին աշխարհիկ ոգու հաղթանակը և կրոնական հին ձևերի նահանջը: Շնորհալու միջոցով Կիլիկիան կապվում էր արվեստի, իսկ արվեստը Կիլիկիայի և իրական կյանքի պահանջների հետ:

Ներսես Շնորհալու բանաստեղծական հմայքի գաղտնիքը ամենից առաջ նրա մարդասիրության և ժողովրդասիրության մեջ է: Նրա բազմաթիվ գրվածքների գլխավոր միտքն ու միտումը կայանում են նրանում, որ մարդը բարքով ու հոգով կատարյալ լինի և

լավ ապրի այս աշխարհում՝ առատության և խաղաղության մեջ։ Ահա թե այդ խաղաղ ու բարօր կյանքի համար նա իր պոեմներից մեկում ինչ է խնդրում երկնքից.

...Անմեղ տղայոց գոլ պահապան,
Ի յարկածիցըն դիւական...
Չերիտասարդըս մարզելով
Յառողջ խորհուրդս և ի մաքուրս,
Եւ զկատարումըս հասակաւ
Խրատել յիմաստըս կատարեալս։
Զալևորեալսն ի դոյն սպիտակ
Ծաղկեալ հոգւով որպէս հերովք...
Կանանց պըճնիլ խոնարհութեամբ
Եւ բարեզարդ ըզգաստութեամբ...
Որք ի բանդի՝ արձակեցիք,
Եւ զկապկլոց կապանս լուծէք։
Զգերեալսն ի յարկսըն դարձուցէք,
Եւ ըզծառայն աղատեցէք...
Տուք ըզպըտղոց առատութիւնս.
Ի ցասմանէ զպահպանութիւն...
Տուք խոովութեանց խաղաղութիւն,
Եւ յերկիւղից անհոգութիւն[1]։

Մի ուրիշ պոեմում մարդասիրությունն ավելի լայն չափով է երևան եկել։ Այստեղ Շնորհալին որոշակի հայտարարում է, որ ինքը դրում է ո՛չ թե միայն իր անձի, ազգականների, կամ ազգի համար, այլ՝ «համօրէն ժողովրդեան», բոլոր ազգերի համար։

Մարդասիրական գաղափարներն ու զգացմունքներն են գլխավոր պատճառը, որ բանաստեղծն իր մի քանի գործերում (արձակ և չափածո) խիստ քննադատության է ենթարկում ավատական հասարակաձևի տիրող խավերի ոչ մարդկային արարքներն ու անիրավությունները։ Հանուն հասարակ մարդու, նա ծառանում է աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների դեմ, բողոքում, կարդի հրավիրում և ամեն կերպ փորձում է զսպել կատարվող անարդարությունները։

Շնորհալու հումանիստական, ժողովրդասիրական գաղափարները ցայտուն կերպով երևում են նրա ողջ գրական և հասարակական գործունեության ընթացքում։ Սերտ ու խորն է բանաստեղծի կապն իր ժողովրդի հետ։ Նա առաջինն էր, որ մտավ ժողովրդական ստեղ-

---

1 «Բանք չափաւ», էջ 270-273։

ծագործության գանձարանները, այնտեղից վերցրեց ու մշակեց հայ ժողովրդի անգիր հանելուկները: Հանելուկների մշակումն ու գրառումն այն ժամանակ առաջադեմ երևույթ էր և գրական խոշոր նորություն, որին բացասաբար էին վերաբերվում հետամնաց գրողները և խոտելի համարում տիրող դաղափարախոսության ու գրական բարքերի տեսակետից: Բազմաթիվ են Շնորհալու այն գործերը, ուր ժողովրդական բնույթ կրող նյութերն ու թեմաները գեղարվեստորեն ձևավորվել են այդ նույն ժողովրդի մտածելու, ղգալու, ընկալելու և պատկերելու հղանակներով: Վարպետորեն է նա կիրառել ժողովրդի ոճական և լեզվական ձևերը՝ իրենց երանգով ու նրբությամբ: Ահա միայն մի երկու նմուշ հանելուկներից և պոեմներից.

Ես երկու դաշտ տեսա տափակ,
Լրծած վեց եղն յերկու կրնճակ.
Թէ դու կարծիս ունիս խառնակ,
Քեզ իրաւունք առնէ յրատակ[1] (կշեռք):

Այդ տեսակետից բնորոշ է մի ձեռագրում գտնվող նաև հետևյալ հանելուկը.

Բարով հկիր պապ ալևոր,
Բռնեմ շընչացրդ և տամ ոլոր,
Խելքդ է ախմախ, միտքդ մոլոր...[2]

Փառաբանելով Նդեսիայի պաշտպանության մարտերում ընկած հերոսներին, բանաստեղծը նրանց բնութագրում է հատարակ մարդու հոգուն ու սրտին հարազատ պատկերներով ու ոճով.

Աշխատեցեալք իբրև մըշակք,
Ի տապ տօթոյ աստ քրտունեցիք.
Յորժամ հրնձէք զոր ցանեցիք...
Դուք խրնդալից սրտիւ բերկրիք[3]:

Միայն հանելուկներում և «Նդեսիոյ Ողբ»-ում չէ, որ Շնորհալին հետևում է ժողովրդական բանաստեղծության ոգուն ու ոճին, այդ դիծը երևում է նաև նրա մանկավարժական-ուսուցական գրվածքներում, Սողոմոնի առակների առթիվ գրված ոտանավորներում, շատ տաղերում և նույնիսկ որոշ շարականներում:

---

1 «Բանք չափաւ», էջ 573:
2 Ձեռագիր № 695, էջ 417ա:
3 «Ողբ Նդեսիոյ», էջ 93:

* * *

Շնորհալին շարունակելով ու խորացնելով Նարեկացու սկսած գործը, ավելի լայն չափերով է օգտագործում աշխարհիկ տաղերի և ժողովրդական երգասացների արվեստը՝ մանավանդ ձևի տեսակետից: Անգնահատելի է նրա դերը տաղաչափության արվեստի մշակման ու զարգացման ասպարեզում: «Մեր այս բանաստեղծը,— գրում է պրոֆ. Արեղյանը,— մշակել է հայոց լեզվի տաղաչափությունը»[1]: Հայ պոեզիայի պատմության մեջ թե անցյալում և թե ներկայումս, ոչ մի բանաստեղծ այնքան խոշոր դեր չի կատարել հայկական տաղաչափության ձևերի ու չափերի մշակման գործում, որքան Շնորհալին: Նա հանդիսացավ անգերազանց վարպետը այդ ասպարեզում: Հայկական տաղաչափության տակավին չմշակված, բայց ազգային ինքնուրույն տարրերը գալիս են շատ հնից: Դեռևս V դարում՝ Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու, Հովհան Մանդակունի կաթողիկոսի որոշ գործերում և ապա Կաղանկատվացու գըրքում, Դավթակ Քերթողի մոտ, հետագայում Գրիգոր Նարեկացու և Գրիգոր Մագիստրոսի գործերում երևում են հայկական չափի և հանգի գործածության տարրեր: Բայց այդ տարրերը չեն մշակվում ու տարածվում բանաստեղծության մեջ մինչև Ներսես Շնորհալին:

Կրոնական-եկեղեցական բանաստեղծության պարզունակ տաղաչափական ձևերը այլևս չէին կարող բավարարել Շնորհալուն, որի կոչումն էր արտահայտել ժամանակի ոգին, հայ ժողովրդի իղձերն ու տրամադրությունները: Այսպիսի մեծ ու նոր գաղափարները, նոր բովանդակությունը, անհնար էր պարփակել գրական հին, անճոռնի ձևերի մեջ, որոնք գլխավորապես պատահական ոտքերով ու անդամներով ոտանավորներ էին: Այդ ձևերով Շնորհալին ինքն էլ է գրել բազմաթիվ շարականներ, բայց աշխարհիկ բնույթի չափածո գործերում նա չի գործածել պատահական ոտքերով ձևը և գրել է պարզ ոտքերով, այսինքն՝ անթերի տակտերով:

Արդ, տեսնենք թե որո՞նք են տաղաչափական արվեստի մեջ ներդրված այդ նորությունները: Բազմատեսակ են Շնորհալու գործածած տաղաչափական ձևերը, որոնց մեջ ամենից շատ աչքի է ընկնում յամբական երկանդամ ութ վանկանի ոտանավորի (4—4) չափը, որով գրված են նրա չափածոյի համարյա երեք քառորդը: Այդ չափով են գրված «Յիսուս Որդի», «Բան հաւատոյ», «Վիպասանութիւն», «Ողբ Եդեսիոյ» մեծ պոեմները, հանելուկների մեծ մասը,

---

1 Մ ա ն ո ւ կ Ա բ ե ղ յ ա ն, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Բ, էջ 82:

«Օրնեալ ես փայտ փրկութեան», «Առ Ապիրատ», «Ի սուրբ Մարգարէսն», «Յովհաննու Կարապետին», «Արարչական», «Այսօր անճառ», «Նորաստեղծեալ», «Նայեցաց սիրով», «Ի քէն հայցեմք», Վարդանանց «Նորահրաշ պսակատոր» և այլ բազմաթիվ շարականներ, տաղեր ու երգեր: Բերենք մի երկու նմուշ այդ չափից.

«Ողբ Եդեսիոյ» պոեմից

...Քանզի խեթիւ / յիս հայեցաւ, 4—4
Լոյսն արևուն / և սևացայ.
Արդ վայ ասեմ / ինձ ըստ Դաւթայ,
Քանզի յերկիր / պանդրխտացայ[1]:

«Վիպասանութիւն»-ից

Այլ Թորգոմայ / զՀայկըն ծընեալ, 4—4
Յորմէ և Հայք / մեք անուանեալ...
Որոյ յաշխարհ / ըս մեր եկեալ,
Եւ ծընընդովք / ըզսա լըցեալ...
Քանզի յաղթող / ազգաց եղեալ,
Եւ քաջութեան / անուն առեալ...[2]

Հանելուկներից

Բըրուտ մի կայր / խիստ պիտանի, 4—4
Զկուժըն զուգեաց / թուխտ ու նուվի,
Խառնեաց ի նա / դեղ հիւանդի
Խըճերն ու մեղր / ի մէկ տեղի[3] (տանձ):

Շնորհալու շատ սիրած ձևն այս չափի ոտանավորն է, որի «գլխավոր շեշտերը, —ասում է պրոֆ. Մ. Աբեղյանը, —4-րդ և 8-րդ վանկերի վրա են... Ռիթմիկ երաժշտականության կողմից մեր այս շատ սիրված ոտանավորը մեր չափերի մեջ լավագույններից է, դի սովորաբար թե պարզ և թե բարդ ոտքերի ռիթմն զգալի է»[4]:

Յամբական երկանդամ ութ վանկանի շատ տարածված ոտանավորից հետո Շնորհալու չափածոյի մեջ աչքի է ընկնում յամբական եռանդամ 12 վանկանի ոտանավորի չափը: Այդ չափով են գրված «Յաղագս երկնից և զարդուց նորա» պոեմը, ս. Խաչի ներբողը, Մեծ

---

1 «Ողբ Եդեսիոյ», էջ 31:
2 «Բանք չափաւ», էջ 502—503:
3 Անդ, էջ 583:
4 Մ ա ն ո ւ կ Ա բ ե ղ յ ա ն, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 198—199:

ոտրաթի՝ «Անեղ Որդին», «Ի խաչելութիւն Տեառն», «Ծարաւեցաւ Տէրն ի խաչին» տաղերը և բազմաթիվ շարականներ։ Այս չափի սխեման է՝ 4—4—4։ Ահա մի օրինակ «Յաղագս երկնից և զարդուց նորա» պոեմից, որի և մյուս մի քանի չափերի ուսումնասիրությունը առաջին անգամ կատարել է Մանուկ Աբեղյանը.

Համապայծառ / և անբաւուեր / արփիական, 4—4—4
Ոչ կարոտի / աշխարհն առ տիւ / արեգական.
Եւ կամ լուսին / աստեղք ի լոյս / գիշերական,
Զի լուսաւորքս / յիւրեանց լուսոյն / խաւարանան[1]։

Այս չափի մեջ գլխավոր շեշտերն ընկնում են 4-րդ, 8-րդ և 12-րդ վանկերի վրա։ Եռանդամ յամբական այս ոտանավորի կազմությունն ըստ էության նույնն է, ինչ որ երկանդամ ութ վանկանոց, որի վրա ավելացված է մի քառավանկ անդամ. օրինակ՝

Երկանդամ—Սերդ սիրով / խոնարհեցար, 4—4
Ի փըրկութիւն / մեր մարմնացար...[2]
Եռանդամ—Պարտիմ առնել / զայս հասարակ / որոց աստ
կան, 4—4—4
Զի զոր տօնէք /դուք ժողովուրդ / հանդիսական[3]։

Երկանդամ ութ վանկանի ոտանավորի հետ համեմատած այս չափը ծանր է և տակտերով՝ դանդաղ. հավանաբար դրա համար էլ Շնորհալին սա ավելի քիչ է գործածել, քան յամբական երկանդամը։ Այնուհետև, շարականներում և մանավանդ տաղերում բավական շատ են այն երկանդամ ոտանավորները, որոնք տարբեր ոտքերի խառնուրդ են։ Այդպիսիներից է «Աւետեաց տաղ»-ը, որի սկզբի անդամները բաղկացած են հինգ, իսկ երկրորդները՝ երկու-երեք վանկերից,

Բարբառ աւետեաց / ձայնիւ (5—2)
Գաբրիէլ կոչէր / սըրբուհւոյն. (5—3)
Առ քեզ պաղատիմ / մաքուր, (5—2)
Պատրաստել տեղի / տէրունւոյն։ (5—3)[4]

Ճրագալույծի հետևյալ երկանդամ տաղն ունի ութ և տասվանկյա չափերի խառնուրդ.

---

1 «Բանք չափաւ», էջ 294
2 Շարական, էջ 456։
3 «Բանք չափաւ», էջ 232։
4 Անդ, էջ 365։

*Այսօր աւետեաց / Գաբրիէլի լրումն, (5—5)*
*Եղանի առ կոյսն / Մարիամ։ (5—3)*[1]

*Իսկ Հարութեան տաղերի եռանդամ հորդորակներից մեկն ունի հինգ և տասնմեկվանկյա խառն չափ.*

*Կեանքըն ընդ հօր / անմահ մարմնով / տէր յարեաւ (4—4—3)*
*Ի գերեզմանէն։ (5)*[2]

*Այդ բազմաթիվ հորդորակներից մի քանիսն էլ ունեն եռանդամ ութ և իննվանկյա խառն չափեր։*

*Նոյնագոյ / ընդ հօր / բանն աստուած (3—2—4)*
*Ի սկզբանն / առ աստուած / միշտ էն։ (3—3—2)*[3]

*Հարութեան մի ուրիշ տաղ ունի քառանդամ տասներկու և տասներեք վանկերի խառն չափ։*

*Այսօր / դրրունք բացան / դըժոխոց / Աւետիք (2—4—3—3—)*
*Սլին / կապեալ հոգիքն / որ ի նմա / մեծ աւետիք։*
*(2—4—3—4)*[4]

*Շնորհալին շատ ունի նաև երեք չափերից կազմված խառն ոտանավորներ։ Վերցնենք դրանցից խաչին նվիրված տաղը՝ գրված եռանդամ վեց, յոթ և ութ վանկերից բաղկացած խառն չափերով.*

*Սաբեկա / ծառոյն / նըման, (3—2—2)*
*Ոչ խոյ / յողջակեզ / կախեալ, (2—3—2)*
*Այլ գառըն / Աստուծոյ / զննեալ, (3—3—2)*
*Մեզ / հաշտութեան / նըւէր։ (1—3—2)*[5]

*Վերջապես բազմաթիվ են այն տաղերն ու շարականները, որոնք գրված են տարբեր և խառն չափերով։*

*Կարճ չափով գրված ոտանավորի տեսակը շատ քիչ է Շնորհալու մոտ։ Այսպիսի չափով են գրված միայն «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» երգերը։ Այդ երկու երգն էլ ունեն յամբ-անապեստյան միանդամյա հինգ վանկանի ոտանավորի չափ։ Հինգ վանկը միասին կազմում են երկու շեշտ ունեցող մի կարճ տող, որի մեջ*

---

1 «Բանք չափաւ», էջ 369։
2 Անդ, էջ 396։
3 Անդ, էջ 398։
4 Անդ, էջ 400։
5 Անդ, էջ 413։

ռիթմական շեշտը ընկնում է տողի վերջում: Այս չափի ոտանավորների բնորոշ կողմն այն է, որ մեծ մասամբ մի տողը (միանդամը) կազմվում է երկու երկվանկ, կամ եռավանկ բառերից: Այդ բառերից մերթ եռավանկով և մերթ էլ երկվանկով է սկսվում տողը: Այսպես.

Առաւօտ / լուսոյ, (3—2)
Արեգակն / արդար, (3—2)
Ա՛ւ յիս / լոյս ծագեա՛ւ (2—3):
Բղխումն / ի հօրէ, (2—3)
Բղխեա՛ / ի հոգւոյս, (2—3)
Բան քեզ / ի հաճոյս: (2—3)
...Գանձդ ո / զորմութեան (2—3)
Գանձիդ / ծածկելոյ... (2—3)
Գրտող / զիս արա (2—3)[1]:

Շնորհալու տաղաչափական արվեստի հետ սերտ կապված են նույնպես նրա կողմից մշակված հանգն ու հանգիտությունը:

Պոեզիայի մեջ արդեն իրենց տեղը գրավող աշխարհիկ թեմաները, տաղաչափական ձևերը, իրենց հիմքում անխզելիորեն կապված են ժողովրդական բանահյուսության արտահայտչական ձևերի-դեղեցկության, բարեհնչյունության և երաժշտականության հետ: Խորն է եղել երաժշտագետ բանաստեղծի մեջ դեղեցիկ խոսքի ու դրա երաժշտականության ըմբռնումը: Մինչև Շնորհալին հայ միջնադարյան պոեզիայի մեջ կանոնավոր չափ ու հանգ գոյություն չեն ունեցել:

Թեև դարեր առաջ մեր հոգևոր և աշխարհիկ երգերի մեջ եղել է ոտանավորի որոշ չափ, ռիթմ, բայց շատ թույլ և հաղվադեպ: Հովհան Մանդակունուն վերագրվող մի ողբական դրվածքի մեջ երևում է մեր հին հոգևոր ոտանավորի չափը՝ իր սկզբնական, չզարգացած վիճակում: Մանդակունու այդ գործը 16 վանկանի քառանդամյա մի ոտանավոր է, որը մեր չափածո գործերի հին նմուշներից է: Ահա մի երկու տող այդ ոտանավորից.

Քրիստոսասէրք / իմ սիրելիք / ինձ օգնեցէք / վիրաւորիս,
Եւ գորովով / մեծ ողորմիւ / աղաչեցէք / ըզտէր վասն իմ...[2]
Սխեման է՝ 4—4—4—4

Իսկ Մովսես Խորենացուն վերագրվող «Ուրախացիր սրբուհի» Մեծացուսցէ շարականը գրված է քառանդամ, 14 վանկանի ոտանավորով:

---

1 «Ժամագիրք», էջ 7:

2 Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 71:

*Ուրախացիր / սրբբուհի / Գաբրիէլի / աւետաբեր,*
*Որ քարոզեաց / ըզգալուստ / արքային տեառն / ի յերկնից*[1]*։*
*Սխեման է՝ 4—3—4—3*

*Հովհան Մանդակունուց և Մովսես Խորենացուց երկու դար հետո, Կոմիտաս կաթողիկոսը Հռիփսիմյանց նվիրված «Անձինք նուիրեալք» հայտնի շարականում, չնայած դործածում է տարբեր չափեր, սակայն գերիշխողը այստեղ քառանդամ, 12 վանկանի ոտանավորի տեսակն է. օրինակ՝*

*Ընկերըք / միամիտք / մարմնական / կենցաղոյս,*
*Նահատակք / հաւատարք / և հոգով / միացեալք,*
*Միաբան / ընթացեալ / ի տեղի / ճակատու,*
*Զինեցան / հաւատով / և կային / հանդիման*[2]*։*
*Սխեման է՝ 3—3—3—3*

*Ինչպես տեսնում ենք, չնայած մեր բանաստեղծությունը մինչև X դարը եղել է առանց հանգի, սակայն չափը և տաղաչափության այլ հատկանիշները նկատելի են նրա մեջ։ Հետևաբար սխալ է այն տեսակետը, ըստ որի իբրև թե հայկական հոգևոր երգերի մեջ տաղաչափական տարրերը և հանգը սկսել են երևալ արաբական արշավանքներից հետո, այսինքն՝ արաբական բանաստեղծության ազդեցությամբ։ Ինչպես մեր հոգևոր երգերը սկզբնավորվել են և զարգացել V դարից՝ կրոնական բնույթով, բայց ազգային, ինքնուրույն հիմքով, այնպես էլ նրանց ձևը, արվեստը, բովանդակության դուրընթաց՝ աստիճանաբար զարգանում է մինչև X—XII դարերը։ Սակայն մեր աշխարհիկ և հոգևոր բանաստեղծության ինքնուրույն ձև ու բովանդակություն ունենալու հանդամանքը բոլորովին չի բացատում, թե հայկական բանաստեղծությունը ամբողջապես հետու է կանգնած եղել հարևան ազգերի ու կրոնների բանաստեղծական արվեստից, կամ ամենևին չի ազդվել դրանցից։ X դարից սկսած հանգն էլ է գործածվում մեր աշխարհիկ բանաստեղծության մեջ։ Թեպետ դեռևս այդ ժամանակ հոգևոր երգերը առանց հանգի էին, բայց դրանք միայն արձակ բանաստեղծություններ չէին, այլ ունեին որոշ չափ ու ռիթմ. մի խոսքով՝ թեև ոտանավոր, բայց կար տաղաչափական արվեստ։ Գրիգոր Նարեկացու բոլոր գործերը գրեթե*[3] *անհանդ*

---

1 «Շարական», էջ 20։

2 Անդ, էջ 357։

3 Ասում ենք «գրեթե», որովհետև հանգը նկատվում է Նարեկացու նաև մի քանի տաղերում. «Յարութիւնն» բարդոտնյա խառն ոտանավորի չափով գրված

ին, բայց «Ողբերգութեան մատեան»-ում նա ասում է, որ նմանվելով ժողովրդական «լալեաց» բանաստեղծության, մի քանի տեղերում ինքն էլ է գործածել հանգը։ Այս տեղեկությունը հիմք է տալիս ենթադրելու, որ մենք X դարից (գուցե և շատ առաջ) աշխարհիկ բանաստեղծության մեջ ունեցել ենք հանգը։ Պրոֆ. Մկրտիչ Մկրյանը իրավացիորեն նկատում է, որ հայկական տաղաչափության, հանգի, ինչպես նաև հանգիառության տարրերը ազգային են, որ «դրանց ծագումը հին է և գալիս է հայ ժողովրդական բանահյուսությունից»[1]։

Նարեկացուց հետո Գրիգոր Մագիստրոսը «Հազարտողեան»-ի մեջ կանոնավոր գործ է ածում հանգը, սակայն նրա լեզվի չոր, խրթին և օտարաբան լինելը խանգարում է հանգի տարածման և ընդունելության գործին՝ մինչև XII դարը։ Ներսես Շնորհալու ձեռքով է տարածվում ու ընդունվում հանգը հայկական հոգևոր և աշխարհիկ բանաստեղծության մեջ։

Մագիստրոսին հետևելով՝ Շնորհալին էլ գրել է նույն հանգով վերջացող տողերով. ինչպես «Յիսուս որդի» պոեմը իմ և «Վիպասանութիւն»-ը եալ հանգերով։

Սակայն Շնորհալին շուտ է նկատում նույնահանգ բանաստեղծության պակասավոր կողմերը, հրաժարվում է այդ ձանձրալի ձևից և գրում փոփոխական հանգերով։ Այս ձևով գրված նրա առաջին գործը «Բան հաւատոյ» մեծածավալ պոեմն է, որի «Յիշատակարան»-ում նույնահանգ երկի պակասության և փոփոխական հանգերով գրվածքի առավելության մասին հետևյալն է ասում.

...Ոչ մի տաւիւ վերջ յանգական,
Զի մի՛ ծուլից լուր ծանրանան.
Այլ խըտրաբար փոփոխական,
Զի ընթերցողք ոչ ձանձրանան[2]։

---

տաղի մեջ ևս նկատելի է հանգի գործածությունը, օրինակ.

Այն ճորտն ճոճ էր և ճապուկ,
Ուռամիջակ, հաստաբազուկ...

Այս տաղի 7-րդ տողը վերջանում է «սերովբէք», 8-րդը՝ «քերովբէք» բառերով։ 40-րդ տողը վերջանում է «սայլին», իսկ 41-րդ տողը՝ «ամոլին» բառերով («Մատենագրութիւնք», էջ 473—474)։ Այնպես որ հանգի, թեպետ սակավ, բայց գործածության դեպքեր կան Նարեկացու թե «Ողբերգութեան մատեան»-ում, և թե տաղերում։

1 Մ կ ր տ ի չ Մ կ ր յ ա ն, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 35։

2 «Բանք չափաւ», էջ 223։

Եվ որպեսզի բանաստեղծությունը լինի ավելի հետաքրքիր ու առինքնող, հոգեկան բավականություն պատճառի մարդկանց, երաժշտագետ, բարձր ճաշակի տեր բանաստեղծը փոփոխական հանդերի հետ զուգընթաց վարպետորեն կիրառում է նաև հանգիստությունը: Վերջինս որպես գրական հնարանք լոկ ձևական երևույթ, կամ հնչյունների խաղ չէ, այլ ըստ էության, դարձյալ սերտ կապված է ժողովրդական բանահյուսության, նրա լեզվի ճկունության, արտահայտչական ձևերի և երաժշտականության հետ:

Եթե հանգի ամենամեծ վարպետը Շնորհալին է, ապա հանգիտության առաջին անգերազանց վարպետը եղել է Գրիգոր Նարեկացին: Հանգիտության արվեստի մեջ էլ Շնորհալին շատ բան է սովորել այս մեծ հանճարից:

Անենք մի երկու համեմատություն ցույց տալու համար, թե հանգիտության բնագավառում ինչպես է Շնորհալին օգտվել Նարեկացուց և մշակել այդ ձևը:

Նարեկացու մի քանի տաղերում առանձնապես դեղեցիկ ու հաճախակի են գործածված վ, շ, ծ բաղաձայնները, որին սիրով է հետևել և Շնորհալին: Բերենք «վ» բաղաձայնը Նարեկացու «Վարդավառ»-ի տաղից.

Գոհար վարդն վառ առեալ
Ի վեհից վարսից արփենից:
Ի վեր ի վերայ վարսից
Ծավալէր ծաղիկ ծովային[1]:

Այդ նույն բաղաձայնի գործածությունը Շնորհալու մոտ.

Վիրօք յանցանաց, վշտանա հոգիս, վարանեալ շրջիմ:
Վասն դիւթեանդ, վասն ողորմութեանդ, վերստին կեցոյ[2]:

«Ծ» բաղաձայնի հաճախակի գործածությունը Նարեկացու «Ննդեան» տաղերում.

Աչքըն ծով ի ծով ծիծաղախիտ,
Ծաւալանայր յառաւօտուն...
Ծոցըն չուսափայլ, կարմիր վարդով լըցեալ.
Ծղիքըն ծիրանի մանուշակի հոյլք[3]:

---

1 Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 482:
2 «Ժամագիրք», էջ 7—8:
3 Գրիգոր Նարեկացի, էջ 465:

Կամ՝

Ի ծոց ծնողին ծագումն անուն,
Յարփւտյն ծագումն եկեալ ի սէր.
Կուսին ծնեալ ծոցոյն ծաղիկ։
Ծաղիկ ծոցոյ ծոց հայրենի,
Ամպոյ նըման իջեալ յերկնից[1]։

Նույն բաղաձայնը Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմում.

Ծովն ի միջի իմ ծածանէր,
Քաղցրիկ օդովըն ծիծաղէր...
Սաղարթաբեր ծառով ծաղկէր[2]։

Կամ՝

...Ծնունդ հօր ծոցոյ, ծածկելոյդ սառւերաւ, ծագեա զլոյս փառաց։

...Ծածկեն անդնդօք, ծիծաղին գլորմամբս, ծանակ զիս առնեն[3]։

Վերջապես «շ» բաղաձայնի հանգիստությունը Նարեկացու մոտ.

Շուշանն շողէր յովտին,
Շողշողէր դէմ արեգականն...
Շուշանն շաղով լըցեալ,
Շող շաղով շար մարգարտով[4]։

Շնորհալու մոտ

Շուրջ պատեալ զինև,
Շունք բազումք եղեն,
Շաղախին արեամբս...
Շնորհատու բարեաց,
Շնորհեա զքաւութիւն,
Շնորհեա զթողութիւն[5]։

Նարեկացու և Շնորհալու մոտ հանգիստության արվեստը միայն առանձին բաղաձայնների գործածությամբ չի սահմանափակվում։ Բաղաձայնության և առձայնության գործածության գեղեցիկ օրի-

---

1 Նարեկացի, էջ 464։
2 «Ողբ Եդեսիոյ», էջ 24։
3 «Ժամագիրք», էջ 7։
4 Նարեկացի, էջ 482։
5 «Ժամագիրք», էջ 7—8։

նակներ երկուսի մոտ էլ կան։ «Յարութեան» տաղում Նարեկացին Մասիսի աջ կողմից իջնող սայլի շարժումն այսպես է նկարագրում.

Ի գիւղ գայր ի գիւղ, սայլիկն ի գիւղ,
Ի Մասեաց յաջ կողմանէն՝
Սայլիկն ի գիւղ գայր ի գիւղ,
Եւ ճռընչալով գայր մտանէր յերուսաղէմ[1]։

Այստեղ ներդաշնակորեն և հաճախակի գործածվող «ի» ձայնավորը և «գ» բաղաձայնը տաղին տալիս են երաժշտականություն։ Ալիտերացիայի և ասոնանսի գործածության այդպիսի վարպետություն ցույց է տվել նաև Շնորհալին Հռիփսիմեին նվիրված և այլ տաղերում։

Սիրասնունդ, սիրամարգ սրխալի,
Նըրբափայլ ոսկեթել տարփալի,
Նռապսակ իւղագլուխ ցանկալի,
Հրեշտակ, հրաշագեղ Հռիփսիմէ...[2]

Այս քառյակում նույն ձայնավորների և բաղաձայնների (ա, ս, լ, ր, հ) հանգիտությունը հասնում է բարձր վարպետության։ Հետևվելով Նարեկացուն, Շնորհալին հանգիտությունն ավելի է զարգացրել։ Նարեկացու տաղերում առձայնությունները հազվադեպ են, իսկ Շնորհալին հանգիտության այդ կողմն ևս մշակել ու առաջ է մղել։ Դործածելով գրեթե մեր բոլոր ձայնավորները, օրինակ՝

ա ձայնավորով.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա...
Աշխարհ ամենայն, առ իս նայեցեալ, ախտակից լերուք...
է-ով
Էդ հայր անսկիզբն, էակից որդի, է միշտ սուրբ հոգի...
ը-ով
Ընտրեցի ըզչարն, ընկալա կամաւ, ըզհոյլս մեղաց։
Ընկալ զիս գթած, ընկալ ողորմած, ընկալ մարդասէր։
ի-ով
Ի քէն տէր հայցեմ, ի մարդասիրէդ, ինձ բժշկութիւն,
Ի բաց մեկնեցայ, ի սուրբ խորհրդոց, ի բարեաց գործոց[3]
և այլն։

---

1 Նարեկացի, էջ 474։
2 «Բանք չափաւ», էջ 474—475։
3 «Ժամագիրք», էջ 7—8։

Վերևում բերված բազմաթիվ օրինակները ցույց են տալիս, որ Շնորհալին օգտագործելով նախորդ բանաստեղծների գործերում եղած տաղաչափական և հանգիտության ձևերը, մշակել ու զարգացրել է նաև այս բնագավառը։

Տաղաչափությունից ու հանգիտությունից ոչ պակաս վարպետությամբ նա հարստացրել է նաև դրական ժանրերն ու տեսակները։ Թեև բանաստեղծը կրթվել է քրիստոնեական ոգով, եղել է ջերմեռանդ հոգևորական, սակայն նա սիրել է մեր աշխարհիկ բանաստեղծությունը և շատ անգամ իր գրվածքների ոճով ու ոգով, չափով ու արվեստով հետևել ու նմանվել է ժողովրդական բանաստեղծության արվեստին։ Վերջինս եղել է այն անսպառ աղբյուրը, որտեղից բանաստեղծը վերցրել է նոր, կենսունակ ձևեր, աշխարհիկ շունչ և դրանք ներմուծել բանաստեղծության մեջ՝ նախկինի ընդարմացած ձևերի փոխարեն։ Բայց այդ նորությունները բանաստեղծության մեջ հեշտությամբ և առանց դիմադրության չեն ընդունվել։ Մինչև Ներսես Շնորհալու ժամանակները, բացառությամբ Մագիստրոսի «Հազարտողեան» երկից, կրոնական կամ հավատի հիմնական խնդիրները չափածո գործի թեմա դարձնելը ընդունելի չէր և նույնիսկ մեղք էր համարվում։ Հակառակ ընդունված այդ սովորության, Շնորհալին գրում է «Բան հաւատոյ» և «Յիսուս Որդի» չափածո մեծ պոեմները։ Բանաստեղծը համոզված է, որ այդ ձևը պետք է քննադատեն, դրա համար էլ պոեմի հիշատակարանում նախապես դիմում է ինքնապաշտպանության և բացատրում, թե ինչպես դեռ շատ դարեր առաջ, նշանավոր կրոնական գրողներ ու բանաստեղծներ, աստվածաբանական թեմաներով շատ գործեր չափածո են գրել, հետևաբար, թող արտասավոր ու մեղք չհամարվի, որ ինքն էլ «Բան հաւատոյ» գործը չափածո է գրել։ Եվ ապա՝ այդպես է գրել ոչ թե նորաձևության համար, այլ նկատի է ունեցել ժամանակի պահանջը.

...Ոչ նորաձև և աննշան
Յինէն շինած առանց հիման...
Եւ դի ոտիւք է պարզական,
Եւ ոչ բանիւ անչափական։
Մի՛ յայս լեզուաւ պարսաւական,
Բարբառիսցի անփակ բերան։
Քանզի բազում նախ վարեցան,
Այսպէս յիմաստ աստուածական...
Որպէս դաւթեան սաղմոսարան,

Եւ Սողոմոն առակաբան,
Մեծըն Գրիգոր աստուածաբան,
Եւ սուրբ Եփրեմ ասորական։
Նոցին և մերս հետևաւան,
Բան դուզնաբեայ համանմանաւ։

Ըստ Շնորհալու՝ ինչպես դրվածքի միապաղաղ, նույնահանգ ձևը ձանձրույթ է առաջացնում ընթերցողի մեջ, այդպես էլ ձանձրալի կլիներ գրականությունը, եթե նա ունենար միայն մի տեսակ. այսինքն՝ դրվեր միայն մի ժանրով։ Որպեսզի գործը հետաքրքիր ու սիրով ընթերցվի, պետք է դրել տարբեր ժանրերով ու տարբեր ոճով, որովհետև բոլոր մարդիկ դրելու միատեսակ շնորհք չեն կարող ունենալ.

Ըստ այսմ և շնորհն ոչ միակի,
Այլ ի բազումս բաժանի...
Ոմանց տայ բան՝ որ ոչ չափի,
Բայց զօրաւոր և ըստ կարգի.
Այլոց շնորհէ բանըս տաղի,
Զի և այնու միտքըն բանի։
Քանզի բնութիւն մեր է յայտնի,
Արագայագ և ձանձրալի.
Վասն այսորիկ տայ նա լեզվի
Զյոգնաստեղեան ազգըս բանի[2]։

Ընդունելով ու գործադրելով գրական տարբեր ժանրեր, բանաստեղծական տարբեր չափեր ու հնարանքներ, Շնորհալին միաժամանակ հատուկ ուշադրություն է դարձրել և գեղեցիկ խոսքի ձևերի վրա։ Նա շատ լավ իմացել է, որ պատկերավոր խոսքը անհրաժեշտ է՝ բանաստեղծությունը գեղեցիկ և ազդու դարձնելու համար։ Առանձնապես գրավիչ ու պայծառ է Շնորհալու խոսքը «Ծդեսիո Ողբի» և հանելուկների մեջ։ Կյանքից ու բնությունից վերցրած գեղեցիկ պատկերները, ժողովրդական դարձվածքներն ու խորիմաստ ոճերը առանձին հմայք են տալիս բանաստեղծական խոսքին։

Շնորհալու կերտած պատկերները բնական են, գեղեցիկ և յուրահատուկ անհատականության դրոշմ ունեն։ «Ծդեսիո Ողբի» մեջ թշնամու սրով սպանված զավակների վրա ողբալիս, սգավոր մայրը

---

1 «Բանք չափու», էջ 222—223։
2 Անդ, էջ 164—165։

իր որդիներին համեմատում է կանաչ քաղված արտի և տապից կիզված դալար բույսերի հետ.

...Որ էք ի լաց դուք անդադար,
Նըստիք ի սուգ ի տան խաւար։
Վասն իմ հընձոցըն տարաժամ,
Կանաչ բուսոց խորշակահար[1]։

Իսկ այն անձնուրաց քաջերը, որոնք հայրենի քաղաքը պաշտպանելու համար զոհվել են՝ բնութագրված են այսպես.

Զամօթ բնութեանըն մերկացիք,
Զաղտեղութիւն արեամբ լուացիք,
Արդ քան ըզձիւն սպիտակ լինիք,
Եւ քան ըզկաթըն մածանիք։
Անճառ լուսով լուսաւորիք,
Եւ թագ ի գլուխ պրսակեսջիք[2]։

Ավելի ինքնատիպ ու գեղեցիկ են բնությունից վերցրած պատկերները։ Այստեղ մարդու ներքինը՝ հոգեկանը, ներդաշնակորեն կապված է շրջապատող արտաքին աշխարհի հետ։ Մարդու ներաշխարհը ճշմարտացի և ամբողջությամբ հանդես բերելու նպատակով բանաստեղծը դիմում է բնությանը և այնտեղից վերցնում գույներ, պատկերներ ու տեսարաններ.

Նըստիմ ի սուգ ի տան մըթին...
Եւ փոխանակ որդան զգեստի,
Սև զգենում գոյն տրխրալի։
Հեղում արտօսր անչափելի,
Ցորդ և առատ նըման գետի[3]։

Պատկերներն ու նկարագրությունները գեղեցկության հետ մեկտեղ հագեցված են նաև հուզականությամբ։ Բանաստեղծը ոչ մի կերպ չի կարող կտրվել աշխարհիկ կյանքից, իսկ այդ հակառակ է կրոնական ոգուն։ Անելանելի է նրա դրությունը, անզոր է, չի կարող դիմադրել։ Նրա հոգին ծածկված է մեղքերի խոցած վերքերով։ Այդ ծանր վիճակից ազատվելու համար դարձյալ նա օգնություն է խնդրում երկնքից.

---

1 «Ողբ Եդեսիոյ», էջ 96։
2 Անդ, էջ 94։
3 Անդ, էջ 22։

*Ջհոգիս մեղաց վիրօք լըցին,*
*Ոչ կիսամահ թողեալ դնացին...*
*Դի՛ր դեղ հոգւոյս խոցոյս խորին,*
*Պատեա զգեստիւքն իմ առաջին...*
*Արկ ի վերա զձեռ և զգինին,*
*Զդեղըն կենաց հոգւոյ վիրին...*[1]

*Հուզականությամբ և զեղումներով լի են առանձնապես այն տողերը, երբ բանաստեղծը դեռ նոր պիտի սկսի նկարագրել Եդեսիայի աղետը. նրա սիրտը լի է ցավերով, իսկ հոգին խռոված է.*

*Բայց երանի զանձնէ իմմէ,*
*Թէ բանք իմ աստ դադարէին.*
*Եւ ոչ յառաջ այլ խաղային,*
*Ճըմլել ըզսիրտըս լսողին...*[2]
*Ցաւ հարկանի որովայնիս,*
*Միտք և հոգիս իմ այլայլին...*[3]

*Շնորհալու ընտրած պատկերները և ընդհանրապես նրա բանաստեղծական արվեստի բոլոր ձևերը անքակտելի շաղկապված են տվյալ երկի բովանդակության ոգու հետ: Խոսքի և չափի դեղեցկությունը համեմատ է բովանդակության: Անգամ բանաստեղծի նույնահանգ գործերը ունեն իրենց ուրույն հետաքրքրությունն ու գրավիչ կողմը, որոնք ձգում են ընթերցողին և համակում հեղինակի մտքով ու տրամադրություններով: Շնորհալու պոեզիան իր էությամբ և բանաստեղծական մշակույթով ունի գրավիչ շատ հատկություններ:*

*Ամենից առաջ բանաստեղծը սերտ կապված է իր ժամանակի ու կյանքի հետ, որտեղից նա հայթայթում է ճանաչողական մեծ ուժ, որով և պայմանավորված է նրա գործերի ռեալիստական նկարագրությունների արժեքը: Արվեստից ավելի դեղեցիկ ու հետաքրքրքիր է ինքը՝ կյանքը: Որքան կյանքը բնական ու համոզիչ տրվի գրողի կողմից, նույնքան տվյալ երկը գրավիչ ու արժեքավոր կդառնա իր ձևով ու բովանդակությամբ: Սրե այս տեսանկյունից նայենք Շնորհալու բազմաթիվ գործերին, կտեսնենք, որ, իրոք, դրանցից շատերը հագեցված են իրական կյանքով, տվյալ ժամանակի առաջավոր և հուզող գաղափարներով, որոնք դրսևորվել են նոր ու*

---

1 «Բանք չափաւ», էջ 90:
2 «Ողբ Եդեսիոյ», էջ 46:
3 Անդ, էջ 43:

գեղեցիկ ձևերով։ Նա բացեց միջնադարյան ընդարմացած արվեստի փակ դռները, ներս մտավ հաստատ քայլերով, բերելով իր հետ նոր, կենսունակ թարմ շունչ՝ բանաստեղծությանը աշխարհիկ թափ ու ոգի հաղորդելու նպատակով։ Նրա ոչ միայն աշխարհիկ, այլև հոգևոր բնույթի գործերից շատերը շնչում են այդ թափով ու թարմությամբ։

Ինչպես տեսանք, կրոնական ոգով գրված «Յիսուս Որդի» և «Բան հաւատոյ» մեծ պոեմներում անգամ, բանաստեղծը արտահայտել է աշխարհիկ զգացմունքներ և հայրենասիրություն։ Արվեստի տեսակետից էլ այս երկու պոեմները ուշագրավ են այն առումով, որ գրված են մեր աշխարհիկ սիրո երգերի՝ Շնորհալու շատ սիրած յամբական երկանդամ 8 վանկյա ոտանավորի չափով։ Եթե XII դարում մեղք էր համարվում կրոնական թեմաներով չափածո գրելը, որի դեմ բողոքում էին պահպանողական հոգևորականները, ապա որքան մե՜ծ համարձակություն կլիներ այդ նույն կրոնական թեմաներով գրված չափածոների մեջ աշխարհիկ, սիրո երգերի չափերի գործածությունը, ժողովրդական բանաստեղծության նմանվելը։ Այդ համարձակությունն էլ ունեցավ Շնորհալին։ Այստեղ էլ բանաստեղծը այդ չափի ու ձևի համար հետագա մեղադրանքները կանխելու նպատակով, նախապես բացատրում է, որ իր երկը «արտաքին», այսինքն՝ աշխարհիկ կամ հունական-հեթանոսական, «ափրոդիտյան» երգերի նման չէ.

Եւ մի՛ ի յայս ոք ախտանայ,
Թէ չափաւոր բանիւ է սայ,
Եւ արտաքին կարծի նըմա
Որպէս և դերգն Ափրոդիտեայ[1]։

Ապա նա գտնում է, որ այդ ձևի չափածո խոսքն ընդհանրապես ավելի գրավիչ ու գեղեցիկ է, քան արձակը.

...Քանի՞ արդեւք վայելչանայ,
Ճշմարտութեան բանս որ ի սմայ։
Երգոյն հանգոյն Սողոմոնի
Սա, որ Երգոց երգ անուանի...
Եւ կամ դաւթեանն Սաղմոսի...
Եւ այլ բազմաց՝ որ են յայտնի,
Որք վարեցան չափով բանի[2]։

---

1 «Բանք չափաւ», էջ 163։

2 Անդ, էջ 163—164։

Գեղարվեստական գրականության մեջ աչքի ընկնող նորություններից մեկն էլ Շնորհալու լեզուն է։ Դեռևս XII դարի սկզբից, թե՛ պոեզիայի և թե՛ արձակի մեջ այս կամ այն չափով սկսում են մուտք գործել ժամանակի խոսակցական լեզուն և բանավոր գրականության ոճերն ու դարձվածքները։ Աշխարհիկ թեմաները և աշխարհիկ ոգին պահանջում էին նոր, համապատասխան ոճ ու լեզու։ Իր ստեղծագործություններին մեջ Շնորհալին մտցնում է և լեզվի պարզություն, իհարկե, աչքաթող չանելով նրա գեղեցկությունը։ Այդ պարզությունն ու ժողովրդական ոճերը ավելի ակնբախ են հանելուկներում և մանկավարժական բնույթի բանաստեղծություններում։ Բայց այդ չի նշանակում, թե նրա մնացած գործերի լեզուն այդ արժեքներից զուրկ է։ Պարզ, գեղեցիկ ու գրավիչ լեզվով են գրված Շնորհալու բոլոր գործերը։ Աշխարհիկ բնույթի բառերն ու ոճերը, դույներն ու պատկերները ներթափանցել են անգամ նրա հոգևոր երգերի մեջ։

«Յիշեսցուք» հայտնի բանաստեղծության լեզվի պարզությունը մոռացնել է տալիս ընթերցողին, որ այն գրաբար և հոգևոր երգ է։

Բղխեսցեն սիրաք մեր զբան բարի,
Եւ լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր թագաւորիդ[1]։

«Զարթիք փառք իմ» քնարական երգը, նույնպես, թեպետ գրված է գրաբար, բայց այնքան պարզ, որ ամեն մի հայ կարող է կարդալ և լրիվ հասկանալ.

Զարթիք, փառք իմ զարթիք...
Զարթիք, որդիք լուսոյ, զարթիք...
Զարթիք, նոր ժողովուրդք...
Զարթիք և մի ննջէք[2]։

Ավելի պարզ, ժողովրդական լեզվով և աշխարհիկ սիրո երգերի ձևով են գրված «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» երգերը։ Բանաստեղծն իր անցյալի և ներկայի հակադրությունը պատկերավոր դուգադրելու նպատակով հետևյալ երկու հույակներում գրում է.

Երբեմն էի լոյս,
Եւ այժմ եմ խաւար,
Եւ բատուեր մահու։
Հաստեա հաւատով,

1 «Ժամագիրք», էջ 5։
2 Անդ, էջ 5։

*Հաստատեա յուսով,*
*Հիմնեցո սիրով*[1]։

*Լեզվի պարզությունն ու ժողովրդական ոճը ակնհայտ է առանձնապես հանելուկների մեջ։*

*Զարմանք ասեմ քեզ սիրելի,*
*Կին մի ծնաւ զրուզ որդի,*
*Տըղայն ունի ալիք ծերի*
*Երբ ծերանայ՝ դառնա անի*[2] *(խաղող)։*

*Կամ՝*

*Եկ դու միտ դիր, սիրելի,*
*Իրք մի ասեմ զարմանալի,*
*Մէկ մի ունի մագիլք հազի,*
*Վազէ յերես բըռնակալի*[3] *(սանր)։*

*«Եղեսիոյ Ողբ»-ում էլ տեղ-տեղ լեզուն հասնում է այնպիսի պարզության, որ շատ դժվար է այն տարբերել ժամանակի խոսակցական լեզվից.*

*Չէ բաւական բան ասողին,*
*Պատմել զաղետըն սաստկագին.*
*Քանզի յորժամ գայլքըն մըտին.*
*Եւ շունքըն լիրբք՝ պաշարեցին,*
*Զհօտ ոչխարացըն ցրուէին,*
*Զանմեղ գառինս պատառէին*[4]։

*Նման օրինակները բազմաթիվ են Ներսես Շնորհալու բոլոր գործերում, որոնք հաստատում են նրա հակումն ու սերը դեպի ժամանակի խոսակցական, կենդանի լեզուն և ժողովրդական բանավոր երգերի ու բանահյուսության պարզ ոճերը։ «Ցիսուս Որդի» պոեմի հիշատակարանում Շնորհալին իր կարծիքն է հայտնում նաև գրական լեզվի ու նրա ոճերի վերաբերյալ։ Նա բնդունում է երկու տեսակ ոճ, մեկը՝ «ծածուկ», մյուսը՝ «ամենին».*

*Ըստ այսմ և շնորհն ոչ միակի,*
*Այլ ի բազումս բաժանի.*

---

1 «Ժամագիրք», էջ 6։
2 «Բանք չափաւ», էջ 571։
3 Անդ, էջ 581—582։
4 «Ողբ Եդեսիոյ», էջ 50։

*...Ոմանց տայ շնորհ մեկին բանի,*
*Զի հանրական լուր օգտեսցի,*
*Այլոց իմաստ ծածուկ ճառի*
*Զի զարթուացէ զնիրհեալ հոգի*[1]։

*Ուրեմն՝ պարզ կամ «մեկին» ոճը նրա համար է, որ բոլորը նրանից օգտվեն, իսկ «ծածուկ ճառ»-ը, այսինքն՝ խրթին ոճը, պիտի դաստիարակեր թմրած մտքի տեր մարդկանց, որ սթափվեն և լարված մտածեն։ Հետևաբար, ըստ Շնորհալու՝ լեզվի այդ երկու ոճն էլ անհրաժեշտ են գրական լեզվի համար և հետապնդում են մի գլխավոր նպատակ, այն է՝ սովորեցնել մարդկանց։*

*Բանաստեղծը թեպետ ընդունում է այդ երկու ոճերն էլ, բայց խրթին կամ «ծածուկ» ոճով նա չի գրել, եթե չհաշվենք «Հրեշտակաց ներբողը» և «Ի սուրբ քառասունսն» փոքրիկ գործը, ուր տեղ-տեղ միայն կան խրթնաբանություններ։ Եվ իսկապես. Շնորհալին բոլորովին չհետևեց խրթին ոճին, ընդհակառակը նա մաքրեց Մագիստրոսի ճոռոմաբան լեզուն, հանեց այնտեղից այն ամենը, ինչ որ խորթ էր հայոց լեզվի ձևաբանության ու շարահյուսության ոգուն։*

*Համարձակ կարելի է ասել, որ Շնորհալու բոլոր գործերը, արձակ թե չափածո, գրված են և՛ գեղեցիկ, և՛ մաքուր հայկաբանությամբ։ Ահա այս լեզուն էր, որ գրական մյուս նորությունների հետ բերեց Շնորհալին, հիմք դրեց մեր հայերեն լեզվին և յուրատեսակ մի կամուրջ հանդիսացավ գրաբարի և աշխարհիկ գրական լեզուների միջև։ Հիմք ընդունելով մի կողմից մեր պատմիչների, մատենագիրների և առանձնապես Գրիգոր Նարեկացու հարուստ, ճկուն ու գեղեցիկ լեզուն, մյուս կողմից՝ վարպետորեն օգտագործելով ժողովրդի կենդանի, խոսակցական և աշխարհիկ բանաստեղծությունների գունագեղ ոճերն ու նրբերանգները՝ նա կերտեց պարզ ու գեղեցիկ, կենսունակ գրական լեզու։*

## Բ. ԹՈՂԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

*Իր արվեստով և աշխարհիկ գաղափարներով Շնորհալին մեծ ազդեցություն է թողել մեր միջնադարյան բանաստեղծության վրա։ Նրա անվան հետ են կապված մեր հին պոեզիայի բովանդակության աշխարհականացման, գրական նոր, ժողովրդի ոգուն ու սրտին մոտ ձևերի, պատմական, քաղաքական, մանկավարժական և այլ բնույթի ժանրերի պատմությունները։ Դարեր շարունակ, շատ գրողներ*

---

1 «Բառանք չափաւ», էջ 164։

ներշնչվել են Շնորհալուց, սովորել նրա արվեստը և ձգտել՝ նմանվել նրան: Թե որքան մեծ է եղել այդ ազդեցությունը մեր աշխարհիկ և հոգևոր բանաստեղծության վրա, երևում է ոչ միայն պատմիչների տվյալներից, այլև բազմաթիվ գրական կոնկրետ գործերից, որոնց հեղինակները ամեն կերպ աշխատել են նմանվել այդ մեծ բանաստեղծին: «Ողբ Եդեսիոյ», «Յիսուս Որդի», «Վիպասանութիւն», «Յաղագս երկնից և զարդուց նորա» պոեմները, հանելուկները, խրատական-մանկավարժական գործերը, շարականներն ու տաղերը ուսանելի օրինակներ են եղել գրական շատ սերունդների համար:

Շնորհալու ազդեցությունն արտահայտվել է հոգևոր և աշխարհիկ բանաստեղծությունների բնագավառներում՝ թե ձևի, և թե բովանդակության տեսակետից: Վերևում նկատվեց, որ Շնորհալին զարգացրեց ու բարձր աստիճանի հասցրեց հայկական շարականները: Բնական է, որ այդպիսի բարձրարվեստ հոգևոր երգերը անշուշտ պիտի ուժեղ ազդեցություն ունենային հետագա շարականագիրների վրա:

Շնորհալու կրտսեր ժամանակակիցը՝ Ներսես Լամբրոնացին «Այսօր յարեաւ», «Նորոգեալ կղզիք» և Համբարձման տոնի կանոնի շարականները հորինելիս խիստ հետևել է իր պապի շարականների ոգուն, թեմատիկային, չափին, պատկերներին ու ոճերին:

Շատ նմանություններ, անգամ տողերի բառացի կրկնություններ կան Շնորհալու «Այսօր անճառ», «Արարչական», «Նորաստեղծեալ» երգերի և Լամբրոնացու «Նորոգեալ կղզիք» և Համբարձման կարգի շարականների միջև[1]:

Շարականների նշանավոր հեղինակ է և Գրիգոր Սկևռացին՝ Ներսես Լամբրոնացու աշակերտը: Ձևի, բովանդակության և մանավանդ ոգու տեսակետից շատ նմանություններ կան Շնորհալու «Արարչական» և Սկևռացու՝ Հովհաննես Մկրտչին նվիրված «Արեգականն արդարութեան» պոեմների միջև[2]:

XIII դարի շարականագիրներից է Հակոբ Կլայեցին, որի գրչին է պատկանում Աստվածածնի ծննդյան կանոնը՝ իր բոլոր «սարօքըն» (սարքով): Այս կանոնի շարականներից «Երգեցէք որդիք Սիոնի» բառերով սկսվող Օրհնություններ գրված է Ներսես Շնորհալու Աստվածածնի վերափոխման տոնի առաջին օրվա Օրհնության ուժեղ ազդեցության տակ: Ինչ ձևով ու պատկերներով, որ Շնորհալին

---

1 «Շարական», էջ 230 և 471—485:

2 «Շարական», էջ 339—341 և 470—473:

է փառաբանում, այդ նույն ձևով ու գրեթե նույն բառերով էլ Հակոբ Կլայեցին է գովերգում Տիրամորը[1]։

Հակոբ Կլայեցու շարականի ամեն տան վերջում գործածվող «Ուրախ լեր, անհարսնացեալ մայր» կրկնակը ուղղակի Շնորհալու «Աղուհացից» կոչվող վեցերորդ կանոնի «Տէր երկնից» շարականի (Շար. էջ 173) կրկնակի և որոշ տողերի կրկնությունն է։

Բացի այդ, Կլայեցին իր վերոհիշյալ Օրհնության հատվածներից մեկը, որը մեր Շարակնոցում հայտնի է նաև որպես Մեծացուսցէ, գրել է Շնորհալու «Առաւօտ լուսոյ» երգի հանդիսությամբ ու չափով. օրինակ՝

Շնորհալի

Տիեզերական տեսլեամբ,
Տուր ինձ յագեցնել,
Տէր Յիսուս Քրիստոս[2]։

Հակոբ Կլայեցի

Տուն տնօրէնութեան,
Տաղաւար հոգոյն...
Տաճար լուսոյ մայր[3]։

Շնորհալու ազդեցությունը ավելի ուժեղ է արտահայտվել Հովհաննես Երզնկացու գործերում։ Վերջինիս պատկանում են Ներսես Մեծին նվիրված «Որ զլոյս անճառ», Դրիգոր Լուսավորչին վերաբերող «Վերինք ամենայն», «Այսօր զուարճացեալ», յոթը խոտաճարակների «Յաւուրս վերջին» կանոնական և ս. Սարգսին նվիրված «Երեմական տնկոյն» պարականոն շարականները։ Սրանք բոլորն էլ գրված են Շնորհալու հետևողությամբ. մի երկու կարճ օրինակով համեմատենք Շնորհալու «Նորահրաշ պատկաւոր» և «Նայեաց սիրով» երգերը Հովհաննես Երզնկացու «Երեմական տնկոյն» պարականոն շարականի հետ։

Շնորհալին իր խոսքն ուղղելով Վարդան Մամիկոնյանին ասում է.

Վարդագոյն արեամբդ քո պսակեցեր զեկեղեցի...
(Շար. 462)։

Հովհաննես Երզնկացին էլ դիմելով ս. Սարգսին՝ երգում է.

1 «Շարական», էջ 8 և 384։
2 «Ժամագիրք», էջ 7։
3 «Շարական», էջ 9։

*Վարդագոյն արեամբ պսակեալ փառօք... (Ս. Ամատունի, «Հին և նոր պարականոն շարականներ», էջմիածին 1912 թ. էջ 52)։*

*Շնորհալի—Բանաւոր պատարագաւ ընծայելով հօր ի յերկինս (Շար. 463)։*

*Հովհ. Երզնկացի—Պատարագ անուշահոտ ընծա բանաւոր (Ս. Ամատունի, նույն տեղում էջ 52)։*

*Շնորհալի—Սուրբդ սրբոց երրորդութիւն,*
*Ջմեզ մաքրեա քեզ բնակութիւն (Շար. 476)։*

*Հովհ. Երզնկացի—Սուրբդ սրբոց երրեակ միութիւն,*
*Ջմեզ մաքրեա քեզ ի բնակութիւն (Ս. Ամատունի, նույն տեղում, 52) և այլն։*

*Ինչպես ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակաւոր» և «Նայեաց սիրով» շարականները, այնպես էլ Հովհաննես Երզնկացու այս պարականոն շարականը անվանակապի ձևով է գրված։*

*Ջմոռանանք նշել, որ շատ նմանություններ և երբեմն էլ՝ բառացի կրկնություններ կան Շնորհալու «Արարչական» պոեմում և Երզնկացու վերևում հիշված կանոնական չորս շարականներում։*

*Մեր վերջին նշանավոր շարականագիրը Երզնկացի Կիրակոս վարդապետն է, որն ապրել ու ստեղծագործել է XV դարի երկրորդ կեսերում։ Սա ունի այբուբենի կարգով գրված մի գեղեցիկ պոեմ «Արևելք գերարփին» վերնագրով՝ նվիրված Տիրամոր վերափոխման տոնին։ Կիրակոսի այդ հոգևոր պոեմը գրված է Շնորհալու՝ վերափոխման առթիվ գրած շարականների ազդեցության տակ և ամենագեղեցիկն է մեր շարականների մեջ իր պարզությամբ ու պատկերներով[1]։*

*Վերափոխման առաջին օրվա օրհնության մեջ Շնորհալին Աստվածածնին բնութագրում է «Գերարփի փայլեալ», «Երկնային անմատոյց լուսեղէն խորան» և ամբողջապես լույսից ու արևից վերցրած մակդիրներով։ Կիրակոս բանաստեղծն էլ նույն թեմայով՝ վերափոխման նվիրված, նույնպես լուսեղեն պատկերներով է սկսում իր «Արևելք գերարփին և օթարան լուսածին» շարականպոեմը։ Շնորհալին իր շարականում Մարիամ կույսին բնորոշում է այսպես.*

---

1 *Ձևի տեսակետից «Արևելք գերարփին» աչքի է ընկնում նրանով, որ այն գրված է թե այբուբենի կարգով և թե միաժամանակ ակրոստիխոս է, որպիսի երևույթը եզակի է հայկական հոգևոր երգերի մեջ։ Երբ վերջանում են այբուբենի տառերը, պոեմի վերջում կա մի գեղեցիկ վերջերգ, որի ոչ թե տների, այլ տողերի սկզբնատառերը կազմում են՝ «Կիրակոս վարդապետ» բառերը։*

*Լոյս անքննին ծածկեալ ի ծոց հօր,*
*Որ ծագեցաւ ի քէն մայր և կոյս... (Շար., 386)։*

*Հենց այդպես էլ Կիրակոս վարդապետն է պատկերում.*

*Լոյս ի լուսոյ հօր ծոցածին,*
*Իջեր յերկնից յաշխարհ սաորին (նույն տեղում, 387)։*

*Կիրակոս Երզնկացու այս պոեմի վրա վերևում հիշված վերափոխման շարականներից բացի՝ երևում է Շնորհալու «Ի փոխումն կուսին» երկու տաղերի ազդեցությունը հս. օրինակ՝*

*Տաղից —Այսօր երկնայնոց խմբիցն պար առեալ,*
*Եղանակէին շուրջ զգերեզմանաւն...*[1]

*Կիրակոսի պոեմից —Հոյլք վերին զօրացն իջեալ,*
*Շուրջ զկուսին պար առեալ,*
*Ջերգս օրհնութեան եղանակեալ,*
*Քաղցր ձայնիւ ակոմբ առեալ*[2]

*Տաղից —...Տուար անքննին*
*Եւ ամպ թեթևադին...*[3]
*Կիրակոսի պոեմից—Տուար անճառ, անքննին*
*Եւ ամպ թեթև լուսածին...*[4] *և այլն։*

*Այսպես ուրեմն. վերևում բերված համեմատությունները ցույց են տալիս, թե ինչպես հետագա շարականագիր-բանաստեղծները, գրեթե բոլորն էլ թեմայի, ոգու, ոճի, պատկերների և չափի բնագավառներում հետևել են Շնորհալուն, ընդօրինակել և տեղ-տեղ էլ նույնիսկ կրկնել։*

* * *

*Հայտնի է, որ Շնորհալին գրել է բազմաթիվ ոտանավորներ ու պոեմներ հայոց այբուբենի տառերի կարգով և անվանակապով։ Այդ ձևերը թեև գոյություն են ունեցել VII—X դարերի մեր բանաստեղծների մոտ, բայց չեն ընդունվել ու տարածվել։ Դրանք բառացիորեն կամ սոսկ ձևական երևույթներ չեն եղել իր ժամանակին։ Այ-*

---

1 «Բանք չափաւ», էջ 408։
2 «Շարական», էջ 388։
3 «Բանք չափաւ», էջ 409։
4 «Շարական», էջ 407։

բուբենի և անվանակապի ձևերը սերտ կապված են եղել ոտանավորների բովանդակության հետ, պայմանավորել բանաստեղծության ծավալը: Այդ ձևերը խոշոր փոփոխություն են մտցրել հոգևոր երգերի և աշխարհիկ ոտանավորների մեջ: Հայկական շարականները մինչև Շնորհալին, մեծ մասամբ, բաղկացած են եղել երեք, և շատ քիչ դեպքերում դրանից ավելի տներից: Այբուբենի և ակրոստիքոսի ձևերը անհրաժեշտաբար լայնացնում են գրվածքի սահմանափակ ծավալը՝ դարձնելով այն մի մեծ ոտանավոր կամ պոեմ: Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» նշանավոր քերթվածը այս տեսակետից առաջինն է մեր բանաստեղծության մեջ: Այբուբենի կարգով գրված հոգևոր կամ աշխարհիկ ոտանավորը, պարզ է, որ չէր կարող 36 տնից պակաս լինել, իսկ մի տունն էլ կարող էր ունենալ առնվազն երկու, և ամենաշատը՝ ութ տող: Ակրոստիքոսի ձևով գրված բանաստեղծությունների բովանդակությունն էլ ընդլայնվում, զարգանում է, որովհետև շատ հաճախ միայն հեղինակի, կամ մի անուն չէ, որ հոդում է ակրոստիքոսը, այլև կապակցություններ ու նախադասություններ: Անվանակապով գրող մեր առաջին բանաստեղծը Գրիգոր Նարեկացին է: Այդ ձևով գրված տաղերում և գանձերում նա ունի «Գրիգորի երգ», «Գրիգորի է երգս այս»[1] ծայրանույնը և այլն:

Շնորհալու բազմաթիվ ակրոստիքոսներն էլ կապում են «Ներսէսի է երգ», «Ներսէս Հայոց կաթողիկոս», «Ներսէսի է բանս այս» բառերը: Ավելին. ինչպես տեսանք «Յաղագս երկնից և զարդուց նորա» պոեմի «Յորդորակի» տների առաջին դրերը հոդում են «Մխիթար բժիշկ, ընկալ ի Ներսէսէ զայս բան» նախադասությունը:

Հովհաննես Երզնկացու քիչ առաջ մեզ ծանոթ ս. Սարգսի պարականոն Շարականի տների սկզբնատառերի կապակցությունից ստացվում է «Յովհաննիսի առ սուրբ Սարգիս» և այլն: Ուրեմն՝ այդ ժամանակներում այբուբենի և անվանակապի ձևերը ոչ միայն չեն կաշկանդել բանաստեղծի ազատությունն ու ներշնչման թափը, այլև առաջ են մղել ոտանավորի բովանդակությունը և բանաստեղծն ավելի լայն հնարավորություն է ստացել արտահայտելու իր մտքերն ու զգացմունքները:

Ներսես Շնորհալու արվեստի, բանաստեղծական մշակույթի և հատկապես այբուբենի տառերի կարգով գրելու ձևի մասին վալերի Բրյուսովը գրում է. «Ներսես Շնորհալին ունի ոտանավորներ, ուր ամեն մի տողը (ավելի ճիշտ՝ երկու կիսատողեր) սկսվում է այբու-

---

[1] Գ ր ի գ ո ր Ն ա ր ե կ ա ց ի, Մատենագրութիւնք, էջ 455—462, 469:

*ընի իրար հաջորդող նոր տառով։* Ոտանավորի այս խաղը չի խանգարում բանաստեղծի ներշնչման ազատությանն ու մարդությանը»[1]։ *Ահա այս ձևերն էլ Շնորհալու ձեռքով են դարգանում և նրա ազդեցությամբ ավելի ու ավելի տարածվում։*

*Շնորհալու աշխարհիկ և հոգևոր երգերի ու պոեմների տաղաչափական բազմազան ձևերը նույնպես ոտանելի և օրինակելի են եղել մեր գրեթե բոլոր տաղերգուների համար. ձևեր, որոնք մի շարք դրական սերունդների մոտ ապրել և հասել են մինչև մեզ։ Այսպես, հայկական բանաստեղծության մեջ առաջին անգամ Ներսես Շնորհալին է դործածել ութվանկյա երկանդամ անապեստյան ոտանավորը, որն հետագայում այնքան շատ տարածվել և դործադրվել է մեր գրեթե բոլոր տաղերգուների մոտ։ Ցույց տալու համար, թե որքան ուժեղ է եղել այդ չափի ազդեցությունը և որքան լայն տեղ է դրավել այն մեր բանաստեղծական արվեստի մեջ, բերենք մի երկու օրինակ Շնորհալուց և միջնադարյան նշանավոր տաղերգուների դործերից։*

Շնորհալի —...Քաջալերէր / Հայրըն զորդին, 4—4
*Որդիքն ի մարտ / պատրաստէին.*
*Անդ ոչ իշխան / էր պատուական,*
*Եւ ոչ կըրսեր / ի տեղ վերջին...*[2]

Հովհաննես Երզնկացի—*Ճրագ մարմնոյս / է իմ խաւար, 4—4*
*Աչքըն հոգոյս / դարձեալ է չար,*
*Տեսն աղքատաց / ինձ գայ դրժար,*
*Զարթո՛ դիս, տէ՛ր, / ի քնոյ մեղաց...*[3]

Ֆրիկ—*Այս է զարմանք / հիանալի, 4—4*
*Որ կու լինի / վերայ երկրի,*
*Եւ հիացումն / ազդի ազգի,*
*Զոր տեսանեմք / ի յաշխարհի*[4]։

Ոսոտ. Երզնկացի— *Շատ են չարկամ / ինձ յաշխարհի, 4—4*
*Բայց չէ իմ սիրտս / իսկի յահի.*

---

[1] „Поэзия Армении с древнейших времен до наших дней", под редакцией, со вступительным очерком и примечаниями В. Брюсова, 1916, М., *էջ 41 (ընդգծումը մերն է—Գ. Հ.)*։

2 *«Ողբ Եգեսիոյ», էջ 40։*

3 *Ա. Ա ր ա պ յ ա ն, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 174։*

4 *Ֆ ր ի կ, Բանաստեղծություններ, Երևան, 1941, էջ 232։*

*Վան այն ես դիս / ծածուկ պահի,*
*Որ ժամանակս / իմ չէր հասել*[1]։

Հովհ. Թլկուրանցի—*Սէրն զԱդամ / դրախտէն եհան, 4—4*
*Յերկիր ձրգեց, / ւ արար շիւար,*
*Եւ սատանի / ըզնա մատնեաց,*
*Որ չարշարեաց / ամ վից հազար*[2]։

Գրիգոր Աղթամարցի— *Գիրի Գրիգոր / անյիշելի, 4—4*
*Եւ անպիտան / Աղթամարցի*
*Սէր աշխարհիս / սուր երկսայրի*
*Հոգիս նոաւ / վիրաւորի*[3]։

Նաղաշ Հովնաթան—*Քաղաք ես Խու / թայի Մոսկով, 4—4*
*Խելքս տարար / անուշ խոսքով,*
*Ճակատըդ լը / ցնլ ես ոսկով,*
*Ունքերիդ հետ / խի՛ստ է խառըն*[4], և այլն։

*Այս չափի ոտանաւորի օրինակներ կարելի է բերել նաև մեր շրջանի պոետների գործերից, բայց այսքանը բաւական է։ Անցնենք մյուս չափերի աղբեցութիւններին։ Յամբական եռանդամ 11 վանկանի ոտանաւորը, որն առաջին անգամ Նարեկացին է գործածել իր խառն չափով գրված տաղերի մեջ, նույնպես չի տարածվել։ Այս չափն էլ Շնորհալու տաղերի և շարականների աղբեցութեամբ է մտնում մեր բանաստեղծութեան մեջ և ընդհանրանում։*

*Վարդավառի առաջին օրվա կանոնի Ճաշու վերջ ձայնի շարականը Շնորհալին գրել է այդ չափով, որը հետագայում գործածել են շատ բանաստեղծներ։*

*Այս չափի ոտանաւորն էլ բաւականին տարածված է, բայց ոչ այնքան, որքան յամբական երկանդամ ութվանկյա չափը։ Եռանդամ 11 վանկյա ոտանաւորի չափը մեր միջնադարյան բանաստեղծներից ամենից շատ գործածել է Կոստանդին Երզնկացին։ Սակայն վերջինս Շնորհալուց տարբերվում է միայն նրանով, որ այնտեղ առաջին և երկրորդ անդամները մշտապես բաղկացած են չորս վանկերից, իսկ Երզնկացու մոտ՝ գրեթե միշտ առաջին անդամը*

---

1 Ա. Սրապյան, Կոստանդին Երզնկացի, Երևան, 1962, էջ 122։
2 Էմ. Պիվազյան, Հովհաննես Թլկուրանցի, Երևան, 1960, էջ 161։
3 Ներսես Ակինեան, Գրիգորիս Աղթամարցի, Վիեննա, 1958, էջ 82։
4 Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծութիւններ, Երևան, 1951, էջ 51։

*բաղկացած է 3-ական, իսկ երկրորդ և երրորդ անդամները՝ 4-ական վանկերից.*

Շնորհալի—*Ուրախացիր / պսակ կուսից / Տիրամայր 4—4—3*
*Այսօր որդին / քո հայրենի / փայլեաց զփառս.*
*4—4—3*[1]

Կ. Երզնկացի—*Թէ լինէր / որ զքեզ տեսնի / առ յիս գալով*
*3—4—4*
*Եւ խընդութեամբ / ի գիմ գայի / քեզ սիրով...*
*4—4—3*
*Դու ծաղկանց / ես թագաւոր՝ / վարդի գունով.*
*3—4—4*
*Չիս ի քո / դիմացդ ի փուշն / է՞ր կու դառնաս*[2]*:*
*3—4—4*

*Հայկական բանաստեղծության մեջ շատ տարածված է Շնորհալու գործածած յամբական եռանդամ 12 վանկյա ոտանավորի չափը, որը նույնիսկ հասել է մինչև մեր ժամանակները:*

Շնորհալի—*Արեգակըն / խաւար դարձաւ / մէջօրէին*
*Նըսեմացաւ / ընդ անարգանս / անմահ բանին*[3]*:*
*4—4—4*

Ալիշան—*Փետուած քընար, / ահա քեզիկ / տամ թոյլ մատներս,*
*Անմաշ փափագ, / անմար կըրակ / մըտեք ի ներս*[4]*:*
*4—4—4*

Չարենց—*Որպես լըքված / թավջութակի / ձրգված մի լար,*
*Դողում է սիր / տըս կարոտով / մի ահարկու*[5]*...*
*4—4—4*

*Թեպետ յամբ-անապեստյան միանդամ 5 վանկյա չափով միայն «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» երկու երգերն են գրված, սակայն ոտանավորի այդ չափն էլ սիրվել ու տարածվել է մեր բանաստեղծության մեջ: Այդ պարզ ու կարճ չափի շատ սիրվելը բացատրվում է նրանով, որ այն շատ նման է մեր ժողովրդական երգերին: Անկասկած այս չափը Շնորհալին ժողովրդական երգերից է վերցրել ու մշակել:*

---

1 «Շարական», էջ 370:
2 Կոստանդին Երզնկացի, էջ 167:
3 «Հանք չափաւ», էջ 386:
4 Ղևոնդ Ալիշան, Նվագներ, Երևան, 1957, էջ 44:
5 Ե. Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1955, էջ 148:

Ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը Շնորհալու տաղաչափական արվեստին հետևյալ գնահատականն է տալիս. «Շնորհալու գործածած չափերը խիստ բազմազան են: Մի քանի չափական ձևեր նա այնպես զարդացրել է և ռիթմիկ դարձրել, որ օրինակելի են մնացել, և մեր հին գրականությունից նույնիսկ նորին են անցել: Կարելի է ասել, որ հաջորդներն իսկապես նրա փորձերն են միայն գործադրել, շատ քիչ բան փոխելով»[1]:

Սակայն այս ազդեցությունները ոտանավորի միայն ձևական կողմին են վերաբերվում: Շնորհալու ստեղծագործությունները իրենց թեմատիկայով և իդեական բովանդակությամբ նույնպես մեծ ազդեցություն են թողել վերևում հիշված նշանավոր տաղերդուների և մյուս գրողների վրա:

Ֆրիկն ու Կոստանդին Երզնկացին, հետևելով Շնորհալու գործերում արտահայտված աշխարհիկ, ժողովրդական մոտիվներին, օգտագործեցին դրանք, զարդացրին, առաջ մղեցին նրա բանաստեղծություններում եղած լավագույն, առաջադիմական տրամադրությունները, ազատելով այն կրոնական տիրապետող ոգուց, որով և մեր բանաստեղծության մեջ ուժեղացրին տակավին նոր հնչող աշխարհիկ և քնարական լիահնչուն մոտիվները:

Շնորհալու պես, հենց սկզբից, Ֆրիկն էլ է եղել մարդասերդրել է սովորական մարդու համար՝ դյուրըմբռնելի և քաղցր լեզվով.

Լեզուն բարի, քաղցրիկ խոսի,
Երբ մարդ լսէ, նա հաւանի...[2]

Հետևելով Շնորհալուն, նրա լեզվի պարզությանն ու ժողովրդախիրական տրամադրություններին, Ֆրիկն ավելի առաջ գնաց, զարգացրեց Շնորհալու մարդասիրական գաղափարները և մեր դրականության մեջ մտցրեց նոր, սոցիալական մոտիվներ: Ինչպես Շնորհալին, այնպես էլ Ֆրիկը լայն չափերով օգտվել է ժողովրդական աղբյուրներից:

Ներսես Շնորհալու ազդեցությունն ուժեղ չափով նկատվում է և Կոստանդին Երզնկացու գործերում: Օրինակ ունենալով Շնոր-

---

1 Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Բ հատ., էջ 82:

2 Ֆրիկ, Բանաստեղծություններ, էջ 238:

հալու «Յիսուս Որդի» պոեմը, սա էլ իր առաջին չափածո (ըստ Ամիր Փոլինի ժողովածուի) երկում տալիս է Աստվածաշնչի բովանդակության շարադրանքը: Թևպետ Երզնկացու այս քերթվածը համառոտ է քան Մագիստրոսի «Հազարտողեանը» և Շնորհալու «Յիսուս Որդին», սակայն իր արվեստով շատ բարձր է Մագիստրոսի երկից և ոչ պակաս հետաքրքիր ու գեղեցիկ քան նույնիսկ Շնորհալու պոեմը:

Ներսես Շնորհալու բանաստեղծություններում ու պոեմներում մեծ տեղ է գրավում հոգևոր սերը: Ըստ բանաստեղծի՝ ամենից առաջ մարդը պետք է տոգորված լինի սիրով: Նա պետք է ամբողջ էությամբ սիրով լցված լինի դեպի իր նման մահկանացուն:

Սակայն հոգևոր սիրո կողքին միշտ առկա է աշխարհը և աշխարհիկ սերը: «Յիսուս Որդի» պոեմում տեսանք, որ բանաստեղծը գեղեցիկ կնոջ նետահար հայացքից և բավականություն է ստանում և խուսափում է: Ամեն կերպ նա աշխատում է հեռու մնալ կնոջ գայթակղեցնող, սիրարծարծ աչքերից, բայց ինչպես տեսանք՝ նա չի կարողացել. աշխարհը գրավել է նրան: Սկզբնական շրջանում այդպես է նայել կնոջ ու նրա սիրո վրա և Թլկուրանցին.

Սէրն հանէ զմարդն ի խելաց,
Որ այլ իսկի չըկա խաբար...
Կինն քաղցրիկ զըրուց ունի,
Քան զօձ քայլէ ւ առնու գալար.
Ջքիւնքն թափէ յանկարծակի,
Որպէս զակնատ բռնէ անճար:
Ջունքըն քաղէ, զաչքն դեղէ,
Ջինք զարդարէ զէտ նշի ծառ,
Մէջքն ու պոկունքն ծրամռէ,
Ջմարդիկ ձգէ ի սար ւ ի քար[1]:

Շնորհալու հոգևոր սիրո մոտիվներին հետևելով, ժամանակի ընթացքում Թլկուրանցին էլ Կոստանդին Երզնկացու նման անցումներ է ապրում, աղատագրվում այդ տեսակ սիրուց, դառնում է ինքնուրույն և երգում աշխարհիկ, իսկական սեր, որը նման է կենսատու արևի: Այս անգամ արդեն կնոջ ծոցն է դառնում դրախտը. կին, որին ոչ միայն մարդը, այլև աստված ինքն էլ կսիրեր.

Ծոցդ է դըրախտ անմահութեան,
Անմահական պըտղով դըրախտ,

1 Հովհաննես Թլկուրանցի, էջ 162,

*Դու օրինակ ես աղեկնուն,*
*Ջքեզ սիրէ աստուած և մարդ*[1]։

*Իր խրատական բանաստեղծություններում Թլկուրանցին բարի խորհուրդներ է տալիս մարդկանց՝ խուսափելու կեղծավորությունից, անառակությունից և հարբեցողությունից հենց այնպես, ինչպես այդ խորհուրդները տալիս էր Շնորհալին իր թղթերում, մանկավարժական և այլ բանաստեղծություններում։ Տեսանք նաև, թե Շնորհալին իր թղթերում որքան խիստ էր քննադատում շահի, ագահության և հարստության ետևից ընկնող աշխարհիկ և հոգևոր վիճակում գտնվող մարդկանց։*

*Իր մի քանի գրվածքներում, հենց նույն եղանակով էլ Մկրտիչ Նաղաշն է սուր քննադատության ենթարկում հարստություն դիզելու, փող կուտակելու ախտով տառապող ագահներին, որոնք միայն չարիքի ու ոճիրների պատճառ են դառնում։ Այս տեսակետից բնորոշ է Նաղաշի «Վասն ագահութեան» հայտնի բանաստեղծությունը։*

*Միջնադարյան գրողների շատ գործերում ակնբախ են Շնորհալու նաև դանձերի, տաղերի և մյուս բանաստեղծությունների թողած ազդեցությունը։ Սողոմոնյան շարքի և խրատական մանկավարժական ոտանավորները նշանավոր շատ տաղերգուների գործերում առաջացրին խոհա-խրատական և իմաստասիրական բանաստեղծությունների ընդարձակ մի տեսակ՝ դիդակտիկական ոգով։*

*Աննշան դեր չեն խաղացել և հանելուկները, որոնք մի կողմից զարգացրին, առաջ շարժեցին գրական այդ տեսակը, իսկ մյուս կողմից՝ իրենց հակիրճ, իմաստալից նյութերով հարստացրին միջնադարյան առակագրության թեմատիկան։*

*Սակայն հայ գրականության վրա ավելի ուժեղ ազդեցություն են թողել Շնորհալու աշխարհիկ թեմաներով գրված պոեմները։ Մեր պոեզիայի մեջ իսկական պատմական և քաղաքական պոեմների հիմնադիրը Ներսես Շնորհալին է։ Հայ առաջին պատմական պոեմը՝ «Վիպասանութիւն»-ը իր իդեական, հայրենասիրական կողմերով խոշոր նորություն էր մեր գրականության անդաստանում և ջերմ ընդունելության արժանացավ։ Ժամանակակիցներից և հետագա գրողներից շատերը սիրեցին այն և ներշնչվեցին նրանից։ Այդ գործը շատ դուր եկավ և Կիլիկիայի Լևոն Գ թագավորին, որի հանձնարարությամբ Վահրամ Բաբունի վարդապետը շարունակեց Շնորհալու «Վիպասանութիւն»-ը՝ սկսած Թուրքերի հարձակումներից*

---

[1] *Հովհաննես Թլկուրանցի, էջ 129։*

մինչև իրենց օրերը՝ 1275 թվականները։ Հետևելով Շնորհալուն, Բաբունին էլ իր չափածո պատմությունը գրում է ութվանկյա ոտանավորի չափով և նույն նալ հանգով վերջացող տողերով։

Երկու պոեմներում էլ հատվածներ կան, որ մտքով և գրելաձևով իրար շատ նման են։

Ինչ ձևով որ Շնորհալին է «Վիպասանութեան» մեջ իր պապերի՝ Պահլավունիների տոհմի պատմությունն անում, նույն ձևով ու ոճով էլ Բաբունին է շարադրում Ռուբինյանց տոհմի պատմությունը, տեղ-տեղ էլ նույնիսկ կրկնելով իր նախորդին[1]։

«Վիպասանութեան» վերջում Շնորհալին ասում է, որ այդ օգտակար և հոգեշահ երկը գրելիս իր նպատակն է եղել.

Հասարակաց խրախճան տըւեալ,
Որք իմաստից են ցանկացեալ։
Յամենեցունց որք ընթերցեալ,
Հայցմամբ սըրտիւ զայս պաղատեալ,
Յիշել յաղօթս արժանացեալ,
Զանձն անարժան և տաժանեալ[2]։

Այդ նույն դերն էլ իր գրվածքին տալիս է վահրամ Բաբունին, միայն ոչ թե գրքի վերջում, այլ սկզբում.

Այսպէս և մեր բանս եպերեալ,
Զգեղեցկագոյն բանս յարգեալ,
Որովք այսու վստահացեալ.
Յառաջիկայս համարձակեալ,
Յուսով իմ յայն ապաստանեալ,
Որ ամենից բան է շնորհեալ,
Առատապէս իմաստ տուեալ,
Եւ ոչ զմի ոք նախատեալ[3]։

Ջևով ու բովանդակությամբ աչքի ընկնող նորություն էր Շնորհալու նաև «Յաղագս երկնից և զարդուց նորա» պոեմը։ Աշխարհի արարչագործության վերաբերյալ՝ ս. Գրքի և քաղդեական մոգերի տրված բացատրություններն այլևս չէին կարող բավարարել մարդկանց հետաքրքրությունն ու պահանջները։ Կյանքն ու ժամանակի ոգին պահանջում էին որոշ չափով գիտական, ռեալ մոտեցում բնության և տիեզերական երևույթներին։ Արևն ու լուսինը, աստղերն ու

1 «Տարեգիրք Սմբ. Սպար.», էջ 189, 192 և «Բանք չափաւ», էջ 547—559։

2 «Բանք չափաւ», էջ 559։

3 «Տարեգիրք», էջ 187—188։

Քոլոթակները, սրանց հետ կապված բազմատեսակ երևույթները կարող էին փոքր ի շատե դիտական, համոզեցուցիչ բացատրություն։ Ահա այդ պահանջների և հետաքրքրության արձագանքն է Ներսես Շնորհալու վերոհիշյալ պոեմը։ Ինչպես բանաստեղծի մյուս գործերը, այնպես էլ այս պոեմը մեծ հետաքրքրություն առաջացրեց և ունեցավ շատ հետևողներ։ Ամենից առաջ այս երկի ազդեցության տակ հանդես եկավ XIII դարի նշանավոր գիտնական և բանաստեղծ Հովհաննես Երզնկացին։ Վերջինս Ապլոց հայ իշխանի խնդրանքով գրեց նույնպես տիեզերագիտական մի պոեմ՝ հետևյալ վերնագրով. «Յաղագս երկնային զարդուց չափաբերմամբ ի խնդրոյ բարեպաշտ իշխանին Ապլոցի ըստ նախագիծ տառից տանց»։

Բանասեր Ա. Սրապյանը հաղորդում է, որ Հովհաննես Երզնկացու այս երկը՝ մեր Մատենադարանում գտնվող ձեռագրերում (№№ 2079 և 4594) ունի և ուրիշ վերնագրեր։ Այդ վերնագրերից մեկը ուղղակի Շնորհալու գործի վերնագրի նման է. ահա այն՝ «..Յովհաննիսի վարդապետի Եզրնկացւոյ (ի) խնդրո ուսումնասէր և բարեպաշտ իշխանին Հայոց Ապլոցի, բան ինչ ի յիշատակ սիրոյ, և նա դրեաց յաղագս երկնի և զարդու նորին»[1]։ Միայն վերնագրով և թեմայով չէ, որ այս երկու գործերը իրար նման են։ Երզնկացին հետևել է իր նախորդին ընդհանրապես։ Շնորհալու պոեմը գրված է յամբական եռանդամ 12 վանկանի ոտանավորի չափով և ան հանգով. հենց այդ չափով ու հանգով էլ գրված է Հովհ. Երզնկացու գործը։

Ահա մի օրինակ.

Շնորհալի—Իմ եղական / գոլով բնութիւն / և սկզբնական...
4—4—4

Ունիմ առ իս / յերկուց բնութեան / զրն յատկական
4—4—4

Ըստ անմարմնոց՝ / զոչ ի ձեռաց / շօշափական
4—4—4

Եւ բստ մարմնոց՝ / գոլով աչաց / տեսողական[2]։
4—4—4

Հովհ. Երզնկացի—Ով սքանչելի / ձեղուն հարկի / այս մեծի տան
4—4—4

---

1 Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 93 (ընդգծումները մերն են)։

2 «Բանք չափաւ», էջ 281—282։

*Ի բարձրելոյն / բանէ ձրգեալ / որպէս խորան*
*4—4—4*
*Յոյժ մեծութիւն / քո հրաշագեղ / անչափական*
*4—4—4*
*Հանդերձեալ նուրբ / և պատմուճան / քեզ*
*կարգեցան[1]: 4—4—4*

*Ինչպես տեսանք, Շնորհալին իր գործի վերջում ուներ մի ակրոստիքոս հորդորակ՝ նվիրված Մխիթար Հերացուն. այդպիսի ակրոստիքոսով մի բան էլ Հովհաննես Երզնկացին է գրել[2], որի գլխագրերից ստացվում են «Յովհաննիսի բան յաղագս երկնի ի խնդրոյ իշխանի հայոց Ապլոց անուն» բառերը:*

*Շնորհալու ազդեցությունը նկատվում է Երզնկացու գրվածքի բովանդակության, առեղծագործելու և նյութը շարադրելու եղանակների մեջ ևս: Երկու պոեմների նյութն էլ երկինքն է, որը հանդես է գալիս դիմառնաբար: Շնորհալու մոտ երկինքը այդ ձևով իր մասին պատմում է, թե՝*

*...Ես եմ միջոց ընդ անմարմինն և մարմնական.*
*Ունիմ առ իս յերկուց բնութեանցըն յատկական...*
*Շարժիմ յաւէտ, թրուիմ արագ անհասական...*
*Տանն եմ մեծի ձեղուն յարկին պարագական[3]:*

*Հովհ. Երզնկացին էլ անձնավորում է երկինքը, որը բազմաթիվ զարդեր ունի.*

*...Դու հարկ մեծին ձեռամբ շինեալ արքայական,*
*Ջահք ի բարձանց ի քեզ կախեալ անշիջական.*
*Դու անթառամ ծաղկանց լուսոյ մեծ բուրաստան,*
*Որք յանդաստան քո գեղեցիկ ծաղկագրեցան,*
*Ոչ թէ միայն քո պարանոց զարդարեցան*
*Այլ բովանդակ մարմին և անձն շքեղացան[4]:*

*Շնորհալու պոեմում տեսանք արեգակի նկարագիրը և տիեզերքի ու կյանքի համար նրան վերագրած նշանակությունը: Նույն ոգով այդ արեգակի ավելի ընդարձակ և ավելի գեղեցիկ նկարագիրը կա Երզնկացու պոեմում.*

---

1 Հ ո վ հ. Ե ր զ ն կ ա ց ի, Տետրակ համառօտ և լի իմաստնախոհ բանիւք, Ն. Նախիջևան, 1792, էջ 51:

2 Ա. Ա ր ա պ յ ա ն, Հովհաննես Երզնկացի, էջ 93:

3 «Պանք չափաւ», էջ 281—285:

4 Հ ո վ հ. Ե ր զ ն կ ա ց ի, Տետրակ համառօտ..., էջ 51:

*Այլևս պայծառ լուսոյն աղբիւր միշտ հոսական,*
*Ըզդեղեցիկ ակն աշխարհի լոյս ցուցական...*
*Որ զկերակուրըն հրոյ բաշխէ բնաւից պիտան...*
*Ջմահ և զկեանք օրինակէ դէմ յանդիման,*
*Առաւօտուն ծագմամբ ըզծնունդըն մայրական,*
*Երեկոյին թաղմամբ ըզմատն ի գերեզման[1]։*

*Արեգակից հետո Շնորհալին երկնքի բերանով տալիս է 7 մոլորակների գոյության խորհուրդը. այսպես՝*

*Յիս ընդ սոսա կանթեղըս եւթն են ի վառման,*
*Որք մոլորեալ տան անմոլար իմաստ մարդկան.*
*Ունին յինքեանքս ըզթիւ աւուրց արարչութեան,*
*Եւ ըզխորհուրդ եւթանց դարուցըն կատարման[2]։*

*Մոլորակների մասին նույն բացատրությունն է տալիս և Երզնկացին.*

*Դարձայց ի թիւ մոլորակացն ի եօթնական,*
*Որք տանուտեարըք դարուց անուանեցան,*
*Այլև ըստ աւուրցըն շաբաթու համարեցան...[3]*

*Նույն նկարագիրն ունեն երկուսի պոեմներում էլ և տասներկու կենդանակերպները[4]։*

*Ինչպես Շնորհալու, այնպես էլ Երզնկացու մոտ այնուհետև խոսվում է լուսնի, լույսի, ջերմության, սառնության, տեղումների և այլ բնական երևույթների մասին, նույն մտքով, նույն ձևով ու ոճով։*

*Ներսես Շնորհալու պոեմի ազդեցության տակ աստղաբաշխական մի մեծ քերթված էլ Առաքել Սյունեցին է դրել։ Այս դրող-գիտնականը Գրիգոր Տաթևացու քրոջ որդին է և Տաթևի դպրոցի ականավոր բանաստեղծներից։ Ունի բազմաթիվ գրվածքներ, որոնց թվում նաև այդ «Վասն երկոտասան կենդանակերպիցն...» պոեմը։ Սյունեցու այս գործը տպագրված է Հովհաննես Երզնկացու պոեմի հետ վերևում հիշված «Տետրակ համառօտ...» վերնագրով գրքի վերջում (էջ 62—73)։ Սյունեցին էլ կենդանակերպների նկարագիրն*

---

1 Հովհ. Երզնկացի, *Տետրակ համառօտ և յիմաստնախոհ բանիւք*, Ն. Նախիջևան, 1792, էջ 54—55։

2 «Բանք չափաւ», էջ 286։

3 Հովհ. Երզնկացի, *Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժման...*, Ն. Նախիջևան, 1792, էջ 31։

4 «Բանք չափաւ», էջ 286 և Հովհաննես Երզնկացի, նույն տեղում, էջ 29։

ու դերը տալիս է ուղղակի այնպես, ինչպես այն կա Շնորհալու պոեմում:

Տիեզերագիտական մի չափածո գործով Շնորհալու պոեմին է հետևել նաև Ազարիա Սասնեցին: Այս գրվածքը, որ միայն վերջին տարիներին է հայտնաբերել Ն. Ակինյանը[1], բաղկացած է 9 գլխից: Բացի վերջին երեք գլխից, մնացած վեցը աստղագիտական են հետևյալ ենթավերնագրերով.

ա) Յաղագս գիտութեան երկնից բարձրութեան և պարունակութեան

բ) Յաղագս որքանութեան ծովն հազար և երկիր իւրացն

գ) Յաղագս գիտութեան արեգական բաւալմանցն

դ) Վասն գիտութեան հինգ պատուր արարչութեան

ե) Յաղագս գիտութեան հայոց թուականի

զ) Տօմար արեգակին և լուսնի[2]:

Սակայն հայ գրականության վրա ամենաուժեղ ազդեցությունն է ներգործել «Եղեսիոյ Ողբը» քերթվածը: Նույնիսկ մեր հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին իր աշխարհահռչակ «Նարեկի» բացառիկ ուժեղ արվեստով, վառ երևակայությամբ, հախուռն ու տարամերժ զգացմունքներով և մտքի դերմարդկային թռիչքներով հետագա բանաստեղծների վրա չունեցավ այնպիսի տևական ու զորեղ ազդեցություն, որպիսին վիճակված էր «Եղեսիոյ Ողբը» պոեմին: Սկսած Շնորհալու ժամանակներից մինչև նույնիսկ քսաներորդ դարի մոտերքը, շուրջ 8 դար գրողներից շատերը «Եղեսիոյ Ողբի» ոգով ու օրինակով դրել են բազմաթիվ «ողբեր»:

Շնորհալու մահից 13—14 տարի հետո, ամենից առաջ «Եղեսիոյ Ողբի» հետևողությամբ հանդես եկավ XII դարի բանաստեղծ Գրիգոր Տղա կաթողիկոսը: Վերջինիս երկը գրված է Երուսաղեմի դրավման և այնտեղ կատարված կոտորածների առթիվ՝ «Բան ողբերգական վասն առմանն Երուսաղէմի» վերնագրով:

1187 թվականին մահմեդականները Սալահադինի առաջնորդությամբ նորից գրավում են Երուսաղեմը խաչակիրներից և ոչընչացնում նրանց հիմնած իշխանությունը: Երուսաղեմի առումը ցրնցեց ողջ քրիստոնյա աշխարհը: Ահա այս դեպքի ազդեցության տակ

---

1 Բանասեր Ն. Ակինյանը «Հանդես ամսօրյա»-ի 1936 թ. №№ 7—9-ում հիշատակում է, որ Վիեննայի Մխիթարյան մատենադարանում է գտնվում Ազարիա Սասնեցու այս երկու ձեռագիրը:

2 Մնացած երեք գլուխներն ուրիշ բնույթ են կրում՝ է) Աշխարհացոյց Պրտոմէոսի, բ) Կարգ և թիւ կաթողիկոսաց Հայոց, թ) Հաւաքածոյ կանոնագրութեանց:

Գրիգոր Տղա կաթողիկոսը գրում է իր վերոհիշյալ պատմա-քաղաքական պոեմը: Ինչպես Շնորհալին է ողբում Եդեսիայի գրավումն ու կոտորածը, նրա անցյալ փառքը, նույն եղանակով, նույն պատկերներով էլ Գրիգոր Տղան է ողբում Երուսաղեմի ավերումը, նրա փառավոր անցյալը և սգավոր ներկան:

Շնորհալու պոեմում ողբում է անձնավորված Եդեսիան, իսկ Գրիգոր Տղայի մոտ՝ Երուսաղեմը, նույնպես ութվանկյա ոտանավորի չափով և ին հանգով:

Անձնավորված Եդեսիայի օրինակով, Երուսաղեմն էլ ի լուր աշխարհի ազդարարում է իրեն վիճակված աղետը, ողբում դառնագին և հրավիրում երկնքին ու երկրին՝ ողբակից լինելու համար.

Ահա ձայնեմ ձայն ողբագին,
Կակաղ բառնամ արտուասուագին,
Ձեռս ձրգեմ յերկինս վերին.
Դառնամ խօսիմ յերկիր ներքին.
Կոչեմ զերկոսին միասին,
Լինել սգակից իմոյս անձին[1]:

Երուսաղեմն էլ, Եդեսիայի պես սևեր հագած ողբում է իր կործանումը.

Բառնամ բողոք լամ ողբագին
Զգենում ըզսև ընդ բնհեզին...[2]

Այստեղ էլ Երուսաղեմն է կշտամբում Սիրիայի մայրաքաղաք Անտիոքին, որ հապաղել է և ժամանակին օգնության չի հասել իր հարազատին.

Զայնեմ յառաջ Անտիոքին,
Մօր քաղաքացըս Սուրային...
Է՞ր որպէս քերց ծրնեալ մարմին.
Թող դու, ինձ է՞ր չհասեր թիկին.
Ի բարկութեանս որ այժմ եկին...[3]

Ինչպիսի մռայլ գույներով Շնորհալին է տալիս Զանգի ամիրայի կատարած բարբարոսությունները, ճիշտ նույն եղանակով էլ Գրիգոր Տղան է նկարագրում Սալահադինի գազանությունները Երուսաղեմը գրավելիս.

---

[1] Dulaurier, Hist. Arm., Paris, 1869, էջ 272:

[2] Անդ, էջ 274:

[3] Անդ:

Շնորհալի—

*Իբրև ըզշունըս կատաղիս,*
*Յորսոյ վերայ յարձակէին,*
*Զարիւնս առեալ զբսպանելոց,*
*Զանձինս իւրեանց օծանէին.*
*Եւ զորովայնսըն հերձնուին*
*Լեարդսըն հանեալ խածատէին,*
*Եւ ըզգլուխսըն քերթէին...*[1]

Գ. Տղա—

*Ներկեալ յարիւն կայլակ վիժին,*
*Կիսոց ըզգլուխսըն քերծեցին...*
*Որպէս ըզշուն կատաղէին*
*Եւ ըզմարմինսըն լափէին...*
*Ներոց պատիւ ոչ դընէին...*
*Յերիտասարդս ոչ խնայէին,*
*Եւ ի մանկունսն ոչ դթային:*[2]

*Զանգիի զորքերը խորամանկորեն քանդում են Եդեսիայի պարսպի հիմքերը և ներխուժում քաղաք: Սալահադինի հրոսակներն էլ Երուսաղեմի պարսպի հիմքն են քանդում, ներս մտնում և խուճապահար անում ժողովրդին:*

Շնորհալի—

*Յայնժամ պարիսպ ամրականին*
*Վերուստ ի վայր կործանէին.*
*Եւ ի հիմանց տապալէին...*
*Իսկ ժողովուրդըն քաղաքին*
*Զայն ինչ տեսեալ զարհուրէին*
*Զայնըս գուժի արկանէին,*
*Եւ ի փախուստըն դառնային*[3]:

Գ. Տղա—

*Պատեալ ըզնա բոլորովին...*
*Եւ նրմանեալ գետնափորին,*
*Եմուտ ի հիմըն պարսպին,*
*Եւ հար նա հուր մեքենային.*
*Փլոյց զամուր շինուած նորին,*
*Զոր և տեսեալ զարհուրէին,*
*Եւ երկիւղէն սասանէին*[4]:

*Ինչպես Զանգին, այնպես էլ Սալահադին ուխտադրուժ է. երկուսն էլ խաբում են պաշարված քաղաքացիներին, կողոպտում և կոտորում.*

Շնորհալի—

*Իսկ դիւաբնակ նենդաւորին,*
*Եւ խորամանկ չար խաբողին.*
*Զուխտըն սրտէր զոր եդ նոսին...*[5]

Գ. Տղա—

*Ապա դաշանցըն նենգեցին,*
*Եւ ուխտադրուժք եղեն ուխտին*[6]

*Թե «Եդեսիոյ Ողբ»-ում և թե այս պոեմում քաղաքը գրավող այլազգիները խնջույքներ են սարքում եկեղեցիներում ու սրբարաններում, անարգում հաղթվածների կրոնն ու հավատալիքները: Ահա այդ տեսարանների նկարագրությունը.*

---

1 «Ողբ Եդեսիոյ», էջ 64:
2 Dulaurier, էջ 275—278:
3 «Ողբ Եդեսիոյ», էջ 43 և 48:
4 Dulaurier, էջ, 277—278:
5 «Ողբ Եդեսիոյ», էջ 58:
6 Dulaurier, էջ 279:

Շնորհալի—

Արհամարհանց զյարկ տաճարին,
Զաստուածընկալ և զհրաշալին...
Բայց ոչ միայն անդ առնէին,
Զանարգութիւնս զոր ասէին.
Այլ ամենայն խորան սրբոց,
Որք աստանդր շինեալ կային.
Յիպաքանչիւրսն մոռանէին,
Ըզսրբութիւնսըն պղծէին[1]։

Գ. Տղա—

Առականաց գործ առնէին,
Որպէս օրէնքն է Մահմետին.
Ի ներքս ի տան սրբրարանին,
Սոդոմական գործ գործէին.
Այպանելով եպերէին,
Եւ ձաղելով կատակէին...
Եւ կըռփելով խաղ առնէին[2]։

Հոգեկան ծանր ապրումներ է ունեցել Շնորհալին Եդեսիայի աղետը նկարագրելիս։ Այդպիսի ծանր հոգեվիճակ է ապրել և Գրիգոր Տղան, երբ գրել է Երուսաղեմի ողբը։ Այս համեմատությամբ էլ վերջացնենք։

Շնորհալի—

Որ աստանօր սիրտ իմ ճըմլի,
Ի երիկամունքըս գալարին.
Ցաւ հարկանի որովայնիս,
Միտք և հոգիս իմ այլայլին,
Մինչդեռ յիշեմ զօրն ահագին,
Եւ զառաւօտըն մըթագին[3]։

Գ. Տղա—

Յորժամ յիշեմ զայս՝ նուաղիմ
Երիկամունքս իմ գալարին...
Դողան զոսկերքըս և սաստանին,
Լոյս իմ քաղի, սիրտ իմ ճմլին.
Քանզի աչօք իմ տեսանին,
Ողորմագին հարուածք նոցին[4]։

Շնորհալուց և Գրիգոր Տղայից հետո հայրենասեր նշանավոր տղերգու է Ստեփանոս Օրբելյանը։ Նա իր «Ողբ ի ս. կաթողիկէն» պոեմի նյութը նույնպես վերցրել է պատմական անցքերից՝ սակայն բուն հայկական թեմայով։ Եթե Շնորհալին և Գրիգոր Տղան Եդեսիա և Երուսաղեմ քաղաքներն անձնավորելու միջոցով են արտահայտում իրենց քաղաքական տրամադրություններն ու հայրենասիրությունը, ապա Օրբելյանը էջմիածնի բերանով է հաղորդում իր զգացմունքներն ու մտքերը։

Էջմիածինը երկար դարերի ընթացքում եղել է հայ ժողովրդի ազգային, պետական և հոգեկան մշակույթի կենտրոնը և որպես այդպիսին փառաբանվել է մեր պատմագրության և բանաստեղծության մեջ մինչև VII դարի կեսերը։ Այս քաղաքին նվիրված վերջին նշանավոր բանաստեղծությունը պատկանում է Սահակ Զորափո-

---

1 «Ողբ Եդեսիոյ», էջ 64 և 66։
2 Dulaurier, էջ 279—280։
3 «Ողբ Եդեսիոյ», էջ 42—43։
4 Dulaurier, էջ 285 և 304։

բեցու դրչին՝ «էջմիածինն ի հօրէ» վերնագրով։ Այս բանաստեղծությունն իր ժամանակ այնքան ջերմությամբ ընդունվեց, որ եկեղեցու հայրերն այն մտցրին ժամակարգության մեջ ու այդ փոքրիկ ոտանավորի հետ անխզելիորեն կապվեցին Գր. Լուսավորչի և էջմիածնի անունները։

Արաբների և սելջուկների արշավանքների հետևանքով Հայաստանի ազատության հետ միասին իր փառքից զրկվում է նաև երեմնի փառաբանված քաղաքը։ Այնուհետև դարեր շարունակ, հայրապետական աթոռը ընկնում է աստանդական դրության մեջ։ Այսպես՝ էջմիածնի մեծարումը լռում է մինչև XII դարը։ Հինգ դար դրեթե մոռացության մատնվելուց հետո էջմիածինը Շնորհալու «Եղեսիոյ Ողբում» նորից հանդես է գալիս իր պատմական անցյալով։ Շնորհալին ջերմությամբ ու ափսոսանքով է խոսում այդ քաղաքի մասին, որ նա շատ շուտ է զրկվել իր երեմնի նշանակությունից.

Ահա բարձաւ այս վաղագոյն,
Յոյժ հեռացաւ, որ չերեւի.
Անուրջք ւ երազ էին յայտնի,
Արդ ծածկեցաւ ի վարդենի[1]։

Ժամանակի իրադարձությունների և Շնորհալու հայրենասիրական «Ողբի» ազդեցությամբ, Վաղարշապատը նորից է դառնում ստեղծագործության առարկա։ Ահա այսպիսի մի գործ է պատմաբան բանաստեղծի՝ Ստեփաննոս Օրբելյանի՝ 1300 թվականին գրած «Ողբ ի ս. կաթողիկէն» պոեմը, որը հայտնի է նաև «Ողբ և հառաչանք ի դիմաց մերոյ սրբոյ Աթոռոյն էջմիածնի», «Բան բարառնական ոգեալ դիմառնաբար ի դիմաց Վաղարշապատու ս. Կաթուղիկէին» և այլ վերնագրերով։ Օրբելյանն էլ իր պոեմը գրել է Շնորհալու ութվանկյա ոտանավորի չափով և ին հանդով։ Շնորհալին իր «Ողբի» արվեստը հետևյալ կերպ է բնորոշում.

Բան բարառնական
Տաղիւ չափեալ Հոմերական...

Գրեթե նույն կերպ է բնորոշում իր «Ողբը» և Օրբելյանը.

Բան բարառնական...
Տողեալ տաղիւ չափ յանկական
Ըստ արուեստին Հոմերական...

---

[1] «Ողբ Եդեսիոյ», էջ 14։

Օրբելյանի «Ողբում» էջմիածինը նույնպես դիմառնաբար է հանդես գալիս և որպես փառազուրկ արքայուհի՝ ողբում իր պայծառ անցյալը և մռայլ ներկան։

Օրբելյանի պոեմը բաղկացած է 17 հատվածից, որոնցից շատերն իրենց էությամբ և պատկերավորությամբ նման են «Եղեսիոյ Ողբ»-ին։ Այստեղ էջմիածինն էլ Եդեսիայի նման իր ողբի խորությունն ու ծանրությունը ազդարարում է բովանդակ աշխարհին.

Զայն բարձրագոյժ և ահագին...
Գայ ի դաշտէդ Արարատին.
Լնու աշխարհ բոլորովին,
Զորեքծագեան տիեզերին...
Երթալ ի գուժ աղաղակին,
Լինել կցորդ ողբոց նորին,
Վայ և եղուկ կարդալ նմին[1]։

Արքայուհի էջմիածնի վիշտը ևս անտանելի է, որին անկարելի է դիմանալ։ Ինչպես Եդեսիան, այնպես էլ արքայուհին ցնցող հոգեկան ցավերից կորցնում է իր հավասարակշռությունը, հասած խելագարի վիճակի՝ գանակոծում է իրեն, փետում վարսերը և մոխիր լցնում գլխին.

Տեսին ի նմա զարքայուհին...
Զմայրն լուսոյ Հայկայ զարմին...
Մերկ, խայտառակ ի բաթրոնին...
Հերքն ճողեալ որպէս կնտրին,
Մաինքն ցամաք զերդ ըսկնդկին,
Զկուրծքն բախէր քարամբ ուժգին,
Առուք արեանց իջանէին.
Մոխիր կուտէր նման բլրին,
Ցանէր ձեռամբն ի գագաթին[2]։

Շնորհալին իր «Ողբում» հակադրում է Եդեսիայի երանելի անցյալը և սգավոր ներկան։ Նույն հակադրությունը, բայց ավելի կենդանի և ուժգին պատկերներով դրսևորվել է Ստ. Օրբելյանի պոեմում.

---

1 Մատթէոսի Օրբէլեան, Ողբ ի ս. կաթողիկէին, Թիֆլիս, 1885, էջ 23—24։

2 Անդ, էջ 25։

Երբեմն էի որպէս զերկին,
Հիմ հաստատ եմ դռնէին.
Երբեմն արփի արևածին,
Այժմ խաւար անհնարին...
Երբեմն հարսն առագաստին,
Մածնալ գրկօքն իմ փեսային,
Այժմ եմ սեղեխ օտարոտին,
Անպետ նման հոսեալ ջրին...[1]

Վաղարշապատի և Անիի անցյալի մասին գրելիս, ինչպես տեսանք, Շնորհալին արտահայտում է իր ազգային-քաղաքական տրամադրությունները և ջերմ հայրենասիրությունը: «Ողբ ի դիմաց ս. Կաթողիկէ» պոեմի հեղինակը նույնպես ցավով ու ափսոսանքով է հիշում հայոց թագավորող տոհմերը և նրանց կորցրած պետականությունը.

Ահա կորեայ բոլորովին,
Մտեալ ի սուգ դառն և ուժգին:
Ո՞ւր է որդին իմ նախածին,
Արշակունի տունն առաջին,
Կամ ո՞ւր կրսերն զկնի նորին
Բագրատունի տունն վերջին[2]:

Նմանապես ողբում է, թե ինչպես այլազգի բռնակալները ներխուժել են հայոց հայրենի հողը, ծաղկած երկիրը դարձրել ավերակ և ներկել իր զավակների արյունով: Ահա այդ նույն մոտիվներով էլ ողբում է էջմիածինը՝ լցված ջերմ սիրով առ հայրենիքը և բուռն ատելությամբ դեպի թշնամին.

Շնորհալի—

Յայնժամ յարեան ի յիմ վերայ
Ազգ և ծնունդքն Հագարայ.
Յառաջ զորդիս իմ զոր ծրնայ,
Կոտորեցին ի յանխընայ.
Ապա զաւանսըն պարագայ...
Աւերեցին և քանդեցին,
Հողաբլուր թողին զնոսա[3]:

Օրբելյան—

Իսկ ի զօրանալ Իսմայէլին,
Սրոյ ձեռին Հագարացին,
Եղեալ երկփեղկ տունս Արամին...
Տունք ե ապարանք կործանէին...
Եւ յատարի հարեալք գերին,
Գեղք և աւանք աւերէին.
Քաղաքք և բերդըք տապալին[4]:

---

1 Անդ, էջ 27—28:
2 Մատթէոս Օրբելյան, Ողբ, էջ 35:
3 Շնորհալի, Ողբ եդեսիոյ, էջ 31—32:
4 Մատթէոս Օրբելյան, Ողբ, էջ 36—37:

Երկու ողբերգու հայրենասեր պոետների գործերում էլ ապագայի հույսը և լավատեսությունը կազմում են նրանց ոգին։ Մենք տեսանք, թե Շնորհալու «Ողբը» ինչպիսի վառ հույսերով ու լավատեսությամբ ավարտվեց։ Ճիշտ նույն ոգով ու եղանակով էլ Օրբելյանն է փակում իր «Ողբը».

Առնէ վախճան սգոյս խորին,
Ջոր բազմամեայ կրեմք յանձին,
Տայ նորոգումն մեզ կրկին,
Որ բնաւ չյիշեմք զփառսն առաջին.
Կանգնէ զաթոռ թագաւորին,
Եւ գաւազան պատրիարքին։
Ամենեցունց ըստ իւր կարգին,
Ուղղէ զդահոյս տիրականին.
Նոր զարդարէ փառօքն հին,
Եւ առաւել քան զոր էին[1]։

Ստ. Օրբելյանը «Ողբը» դրել է Խաչատուր Կեչառեցու խորհրդով։ Անհայտ չէ հայ հայրենասիրական ողբերի մեջ նաև իրեն՝ Խ. Կեչառեցու «Ողբ վասն աւերման տանս արևելեան» բանաստեղծությունը, որը դրել է Ստեփանոս Օրբելյանի «Ողբից» մի տարի առաջ՝ 1299 թվականին։

Կեչառեցու «Ողբը» թեև ծավալով փոքր է և արվեստի տեսակետից անհամեմատ թույլ, բայց ոգով ու էությամբ ջերմ հայրենասիրական է։ Նա ևս անկեղծ և խորը ողբում է իր հայրենիքի ավերումը, երկրի ներքին ուժերի պառակտումն ու անմիաբանությունը։ Թե՛ Կեչառեցու, և թե՛ Օրբելյանի Ողբերի համար նյութ է ծառայել գլխավորապես XIII դարի վերջերին Թուրքերի լծի տակ հեծող, իր պետականությունից զրկված հայ ժողովրդի ծանր վիճակը.

Յայս ահագին աւուրս որ հասաք,
Ժամանակիս որ պատահեցաք,
Զքաղցր արարիչըն դառնացուցաք,
Զերկիրս արեամբ մեղօք ներկեցաք[2]։

Օտար բռնակալների լծի տակ տառապող հայ ժողովրդի վիճակը շատ խորն է ազդել գիտնական բանաստեղծի ներաշխարհի վրա և նա երանի է տվել անգամ մեռածներին ու Հոր Երանելու պես ցավում է, որ ծնվել է ինքը.

---

1 Ստեփանոս Օրբելյան, Ողբ, էջ 48։
2 Մայիս Ավդալբեկյան, Խ. Կեչառեցի, Երևան, 1958, էջ 129։

*Աւա՜ղ, զորն ասեմ ի լալի,*
*Զայն հին ու նորքն ի գերեզմանի։*
*Վայ ըզմընացորդքըս սուտ կենդանի,*
*Մակար չէաք ծննեալ յաշխարհի*[1]։

*Բայց հուսահատական պահերն այս «Ողբում» էլ անցողիկ են։ Հիմնականը, արժեքավորը, ինչպես մյուս ողբերգուների մոտ, այս երկում ևս այն է, որ Կեչառեցին իր հույսը չի կորցնում, ապագայի հետ լավ երազներ է կապում, Շնորհալու պես աղաչում է Տիրամորն ու նրա որդի Հիսուսին, որ փրկեն հայ ժողովրդին օտար բռնակալներին ձեռքից, խաղաղ կյանք հաստատեն աշխարհի վրա և վերականգնեն հայոց թագավորական թագն ու հայրապետական աթոռը.*

*...Սոքօք հանդերձ աղաչեա զորդի,*
*Փըրկել ըզմեզ յազգէն հագարի,*
*Զթագ և զաթոռ մեր հայոց ազգի*
*Բարձր առնելով մինչ յօրըն վերջի...*[2]։

*Շնորհալու ազդեցությունը չի ավարտվում միայն վերևում հիշված հայրենասեր ողբերգու բանաստեղծների գործերով։ Բազմաթիվ ողբագիրներից մենք վերցրինք միայն ավելի նշանավորներին։ Սկսած XII դարից, այս կարգի Ողբերը որպես դրական տեսակ, խոշոր տեղ են բռնում հայ միջնադարյան բանաստեղծության մեջ, որոնք մերթ ուժեղ, մերթ էլ թույլ մոտիվներով հասնում են մինչև նույնիսկ XIX դարը։ Հիշենք այս կարգի հայ ողբագիր մի քանի բանաստեղծներին։ Գրիգոր Մարաշեցի՝ «Վարք Ողբոց», XII դար. Գրիգոր Խլաթեցի Սերենց՝ «Յիշատակարան աղետից», XIV դար. Թովմա Մեծոփեցի՝ «Ողբ» Լենկթեմուրի արշավանքների մասին, XIV դար. Առաքել Բաղիշեցի՝ «Ողբ մայրաքաղաքին Ստամբոլու», XV դար. Սմբատ Անկյուրացի՝ «Ողբ ի վերայ մայրաքաղաքին Կոստանդնուպոլսոյ», XV դար. Հովասափ Սեբաստացի՝ «Սուգ աշխարհի հայոց մեծին», XVI դար. Մինաս դպիր Թոխաթեցի՝ «Ողբ ի վերայ օլախաց կրկրի հայերուն», XVI դար. Ստեփանոս Թոխաթեցի՝ «Ողբ ի վերայ Եւդոկիայ մեծ քաղաքի», XVI դար. Հակոբ երեց Թոխաթեցի՝ «Ողբ ի վերայ Եւդոկիայ քաղաքի», XVI դար. Սիմէոն Ապարանցի՝ «Ողբ ի վերայ Մեծոփա ս. Ուխտին», Ազարիա վարդապետ Սասնեցի՝ «Ողբ ի վերայ հարուածոց աշխարհի հայոց», XVII դար և այլն։*

---

1 *Մ ա յ ի ս Ա վ դ ա լ բ ե կ յ ա ն, Կեչառեցի, էջ 132։*

2 *Անդ, էջ 133։*

Շնորհալու «Եղեսիոյ Ողբ»-ի ազդեցության արձագանքները հասել են նույնիսկ մինչև հայոց նոր գրականությանը։

Իրավացիորեն պրոֆ. Մ. Աբեղյանը նկատում է, որ Ներսես Շնորհալու «Եղեսիոյ Ողբ»-ի ազդեցությամբ հայ միջնադարյան բանաստեղծության մեջ և հետագայում «Վաղարշապատն ու Անի քաղաքը դառնում են Հայաստանի անցյալ մեծության սիմբոլներ, որ այնուհետև երգվում են և ուրիշներից։ Նույնիսկ սգավոր «Մայր Հայաստանի» կոչված հայտնի նկարի դաղափարը XIX դարում,— ասում է պրոֆ. Աբեղյանը,— առնված է «Ողբ»-ի այս տողերից, որոնցով Շնորհալին պատկերացրել է ավեր Հայաստանը»[1]։

Վերջապես Շնորհալու այս բացառիկ ուժեղ ազդեցությունը տեսնում ենք նաև XIX դարի բանաստեղծ և քաղաքական մեծ քննադրերգու Ռափայել Պատկանյանի «Արաքսի արտասուքը» գեղեցիկ բանաստեղծության մեջ։ Այստեղ Արաքսը, Եդեսիայի պես անձնավորված՝ ողբում է իր «շենն» անցյալն ու «ավեր» ներկան։ Թթե եղել է ժամանակ, որ Եդեսիան նման է եղել «դորովագութ» մի «բաղմորդի» մոր

Կամ թագուհի յոյժ գեղաւոր,
Ոսկետրտուն և ճամկաւոր,
Փողփողելով ի վերջաւոր,
Պայծառագեստ և պճնաւոր...[2]

ապա պակաս փառավոր ու շքեղ չի եղել նաև Մայր Արաքսի անցյալը, երբ նա նման է եղել շքեղազարդ մի գեղեցիկ և ուրախ հարսի.

Կար ժամանակ, որ ես էլ՝
Շքեղազարդ հարսի պես,
Հազար ու բիւր պըչրանքով
Փախչում էի ափերես[3]։

Եդեսիան խորապես ցավում է, որ երկիրը օտարների ձեռքն ընկնելու պատճառով իր հարազատ զավակները պանդխտում են աշխարհի տարբեր կողմերում, կրում նյութական զրկանքներ և տպրում հոգեկան տվայտանք։

Ի հետիոտըս տանէին
Քաղց և ծարաւ պանդրխտէին...

---

1 Մանուկ Աբեղյան, Հայոց հին դրականության պատմություն, Բ հատ., էջ 108։

2 Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, էջ 25։

3 Ռափայել Պատկանյան, երկեր, Երևան, 1955, էջ 70։

Եւ թէ ցրուած կայք ի յաշխարհ,
Ի ի գերութիւն յերկիր օտար[1]։

Նույնպիսի ցավով ու ափսոսանքով էլ Մայր Արաքսն է հիշում օտար բռնակալների ձեռքով «հեռու քշված հայկյան բնիկ ազգին» իր զավակներին.

Մինչ իմ որդիք,—ո՞վ գիտէ,
Ծարաւ, նոթի, անտերունչ
Օտար աշխարհ հածոմ են,
Թոյլ ոտքերով կխաշռունչ...[2]

Իր կոտորված ու կորած զավակների համար Եղեսիան սևեր հագած՝ սգավոր ողբայրու նման գետերի չափ արցունք է թափում։

Արաքսն էլ, որպես օտար փեսա չուզող մի որբևայրի, այնքան ժամանակ սևեր հագած՝ սգի մեջ կմնա, մինչև նրա պանդուխտ զավակները վերադառնան իրենց ազատված, հարազատ երկիրը.

Քանի որ իմ զաւակունք,
Այսպէս կու մընան պանդուխտ,
Ինձ միշտ սրտմոր կտեսնեք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...[3]

Ահա որշափ խոր ու տևական է եղել Շնորհալու ազդեցությունը։

Հայ գրականության բարեկամ Վ. Բրյուսովը Շնորհալու արվեստի և ազդեցության մասին խոսելիս գրում է. «Ներսես Շնորհալին Հայաստանի ամենաականավոր և ամենաբեղմնավոր գրողներից մեկն է, որը հսկայական ազդեցություն ուներ իր ժամանակակիցների մտքի վրա։ Ներսես Շնորհալու բոլոր պոեմները տոգորված են ճշմարիտ ոգևորությամբ, տեղ-տեղ հուզիչ են արտակարգ, գրված բացառիկ վարպետությամբ, որոնց տակ թաքնված է մեծ արվեստագետը՝ տարված իր իսկ արվեստի տեխնիկայով»[4]։

Շնորհալու արվեստի հմայքը և ազդեցության խորությունը կայանում է նրանում, որ նա որպես բանաստեղծ մարմնավորումն էր այն ամենի, ինչ որ լավ էր ու առաջադիմական մեր հին գրականության մեջ։

---

1 Շ ն ո ր հ ա լ ի, Ողբ Եդեսիոյ, էջ 73 և 96։
2 Ռ ա փ ա յ ե լ Պ ա տ կ ա ն յ ա ն, երկեր, էջ 70։
3 Անդ։
4 „Поэзия Армении", стр. 44 (ընդգծումը մերն է.—Գ. Հ.)։



318—19

Նա Խորենացուց, Փարպեցուց, Ղազարից և մյուս մատենագիրներից վերցրեց ջերմ հայրենասիրությունն, Դավթակից սովորեց երգել աշխարհիկ կյանքն ու դեպքերը, Կոմիտաս կաթողիկոսի օրինակով գրեց բազմաթիվ գեղեցիկ շարականներ ու երգեր. շարականների պատմիչ ոգին փոխարինեց Ստեփանոս Սյունեցուց վերցրած մարտական մոտիվներով, երգեց Վարդանանց, Ղևոնդյանց, Տրդատին և ազգային ուրիշ հերոսների. հանճարեղ Նարեկացուց սովորեց սիրել բնությունն ու մարդը. նրա պես քննեց ու քննադատեց ժամանակի կյանքը դժգույն ու դառն դարձնող սոցիալական անիրավություններն ու անարդարությունները. Նարեկացու աքանչելի տաղերի և իր տեսակով անկրկնելի «Ողբերգութեան Մատեան»-ի արվեստի հիմքի վրա կառուցեց իր բարձրարժեք բանաստեղծություններն ու պոեմները. Հովհաննես Իմաստասեր Սարկավագից սովորեց բնությունը սիրելու և նրան հասկանալու լեզուն. Սարկավագի պես երգեց «վարատեալ» պանդուխտներին. ամբողջ սրտով ցանկացավ այդ պանդուխտների վերադարձը դեպի հայրենիք. բարօրություն ու խաղաղություն խնդրեց երկնից՝ բոլոր մարդկանց համար, որ այս աշխարհում «բարվոք» ու լավ կյանքով ապրեն։

Եվ այդպես՝ օգտագործելով ու զարգացնելով մեր անցյալի գրական հարուստ ժառանգությունից եկող լավագույն գաղափարներն ու գրական ձևերը, Շնորհալին ստեղծեց իր ուրույն դպրոցն ու բարձր արվեստը, որը երկար դարեր դասական օրինակ հանդիսացավ հետագա և նույնիսկ մեր ժամանակների բանաստեղծների համար։

# ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ[1]

*Ներսես Շնորհալին մեր այն գրողներից է, որի անունը կապված է հայ գրքի առաջին տպագրությունների պատմության հետ։ 1643 թվականին Վենետիկում առաջին անգամ Սաղմոսի հետ լույս տեսավ նաև Շնորհալու «Յիսուս Որդի» մեծ բերթվածը, մի քանի տարի հետո՝ «Հաւատով խոստովանիմ» աղոթքը, շարականները, հանդուկները և այլն։ Ըստ մեր աշխատության կառուցվածքի՝ մատենագիտական տեղեկությունների ու ծանոթությունների էլ սկսենք Շնորհալու արձակից.*

## «ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ»

Ա տպ.— «Գիրք, որ կոչի Ընդհանրական, արարեալ արբազնասուրբ հայրապետին մերոյ տեառն Ներսէսի Շնորհալւոյ, որ պարունակէ յինքեան զուղղափառ դաւանութիւնս և զանստերիւր աւանդութիւնս կարգաց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ ևս և հոգևշահ խրատս և փրկառիթ պատուէրս առ ամենայն ցեղ կացութիւնս եկեղեցականաց և աշխարհականաց։ Տպագրեալ հրամանաւ... ծայրագոյն նուիրակի Ռուսաց երկրի... Տեառն Յովսէփայ արքեպիսկոպոսի, որոյ արդեամբքն իսկ տպեցաւ ի յօգուտ... սիրելի ազգին իւրոյ։ Յամի տեառն 1788, ի մայիսի 1-ի թուին հայոց ՌՄՀԷ, ի կայսերապահ մայրաքաղաքս Սանկտ Պետերբուրգ, 336 էջ.*

Բ տպ.— «Թուղթ ընդհանրական». *արարեալ երիցս երանելի սուրբ հայրապետին մերոյ Տեառն Ներսէսի Շնորհալւոյ բաժանեալ յերիս գիրս։ Յառաջնումն են թուղթք ընդհանրական դրեալ առ համօրէն ազգս, առ եկեղեցականս առ քաղաքականս՝ վասն ուղիղ հաւատոյ և բարի վարուց։ Յերկրորդումն՝ թուղթք միաբանութեան գրեալ առ Յոյնս վասն միութեան եկեղեցւոյ։ Յերրորդումն՝ թուղթք առանձնականք առ մասնաւոր անձինս ի զանազան պետս։ Տպագրեալ յար և նման հնագոյն և ընտիր օրինակին, որ գրեալ էր ի թուին հայոց ՉՇՒՀ, վերափոխ՝ հրա-*

---

1 *Մատենագիտական տեղեկությունները համառոտված ու քաղված են մեծ մասամբ Արսեն Ղազիկյանի «Նոր մատենագիտություն կամ հանրագիտարան» աշխատությունից, Շնորհալու գործերի հիշատակարաններից ու նախաբաններից, Գարեգին Զարբհանալյանի «Հայկական մատենագիտություն» և Ղևոնդ Ալիշանի «Շնորհալի և պարագայ իւր» գրքերից։ Հիշատակարաններից և աղբյուրներից վերցված բաղվածքներում եղած հատուկ անունները, գրության ձևերը և կետադրությունը թերել ենք անփոփոխ։*

*մանաւ տեառն Կարապետի արքիեպիսկոպոսի... և պատրիարքի Կոստանդնուպոլսոյ: Արդեամբ և ծախիւք... մահտեսի Աբրահամ ամիրայի Թերզեան Անկիւրեցւոյ ի գործարանի իւրում ի Հասան փաշա խանն, ի Կոստանդնուպոլիս, 1825, ՌՄՀԴ, 233 էջ:*

Դ տպ.— *Ներսէսի Շնորհալւոյ կաթողիկոսի Հայոց «Թուղթ Ընդհանրական» առ համօրէն հայասեռ ազինս ի վենետիկ, ի տպարանի սրբոյն Ղազարու, յամի 1830—ՌՄՀԴ, 82 էջ:*

Դ տպ.— *«Ընդհանրական թուղթ» կամ նամակը սրբազան կաթողիկոսին ամենայն հայոց Տեառն Ներսէսի Շնորհալւոյ, փոխեալ յաշխարհիկ բարբառ: Աշխատասիրութեամբ աշակերտաց սուրբ Մահտեսեան դպրոցին Սամաթիոյ, Կոստանդնուպոլիս ի տպարանի Նոյեան աղանոյ (միայն «Ընդհանրական թուղթը»), 1853, էջ 82:*

Ե տպ.—*Տեառն Ներսէսի Շնորհալւոյ հայոց կաթողիկոսի «Նամականի». Վենետիկ, ս. Ղազար, 1838:*

Զ տպ.— *«Ընդհանրական թուղթ» սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ: Երուսաղէմ, ի տպարանի Հակոբեանց, 1871, էջ 332:*

է տպ.— *«Թուղթ ընդհանրական» (միանգամայն նման Դ տպագրութեան) Վենետիկ, 1873, էջ 330:*

Լատիներեն.—Epistola Pastoralis S. Nersetis Clajensis quam ex armenio latinitata primum donatam Ill. ac Rer... S. Lazari, MDCCCXXIX, *էջ 91:*

*Վերեւում հիշված լատիներեն թարգմանութեան վերաբերյալ «Հայ լեզվի ուսումըն» գրքում,— ասում է մատենագետ Արսեն Ղաղիկյանը,— կարդում ենք հետևյալը. «Նայման գրած է տեսութիւն մը Ս. Ներսէս Շնորհալւոյ ամենայն մատենագրութեանց, որոնց լատինական թարգմանութիւնը բրած է Գաբրիէլեդդի Յովսեփ քահանայն և հրատարակած ի սուրբ Ղազար Վենետկոյ, 1833 թ., ինչպես դարձեալ նոյն Շնորհալւոյ Ընդհանրականին հայ բնագրին և քերթվածոց վրա՝ հրատարակեալց ի 1830 ի սուրբ Ղազար: Այս տեսութիւն հրատարակեցաւ նախ ի «Մատենագրական տարեգիրք» („Jahrbucher der Literatur") ամսաթերթին Վիեննայ՝ ի հատորն Կէ ի 1834: Նոյն հատորի մէջ կգտնենք (էջ 32—36) Նայմանի ձեռքով գերմանական թարգմանութիւն մը Շնորհալւոյ «Ա՛ր արևորդիս կամ Սամուսատա գրած քղթոյն յԹՒ դարու, ըստ լատինական թարգմանութեան Գաբրիէլադդիմայ (յէջ 169) առաջնոյ հատորի Վենետիկոյ տպագրին» (Ա ր ս ե ն Ղ ա ղ ի կ յ ա ն, Հայկական մատենագիտութիւն, Բ պրակ, էջ 262):*

**«Մեկնութիւն սուրբ Աւետարանին որ ըստ Մատթեոսի».** *արարեալ ի սրբոյն Ներսէսէ Շնորհալւոյ մինչև ի համարն 17 հինգերորդ գլխոյն և անտի աւարտեալ երանելւոյն Յովհաննու երղնկացւոյ՝ որ և կոչի Ծործորեցի: Տպագրեալ ըստ ընտիր օրինակաց հրամանաւ տեառն Կարապետի արհիեպիսկոպոսի և պատրիարքի մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսի. արդեամբ մահտեսի Աբրահամ ամիրայի Ակնեցւոյ՝ իւրում տպարանի. Յամի տեառն 1825, մարտի 16 ի Հասան Փաշա խանն:*

## Զ Ա Փ Ա Ծ Ո

### «ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ»

*Մեր միջնադարյան գրականության տպագրության հենց սկզբի օրերից, ոչ մի դիրք այնքան շատ չի տպագրվել ու սպառվել, որքան այս մեծաճա-*

վալ Ողբերգությունը։ Տարբեր վայրերում ու տարբեր ժամանակներում տպագրված այս գրքի «Յիշատակարանում» ու «Մանուկսմներում» բազմաթիվ են այն տվյալները, որոնք ցույց են տալիս տպագրական գործի հանգամանքներն ու դժվարությունները։

Ա տպագրությունը կատարվել է Վենետիկում 1643 թվականին։ Գրքի նորածև հակատում նկարված է մի վարդապետ՝ ձեռքին քառակուսի քարետախտակ՝ որի վրա գրված է «Յիսուս որդի» բերթվածի հետևյալ վերնագիրը՝ «Տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի նուէր մաղթանաց. ներշափական տաղիւ. Ողբումն հնծութեան, ի խորոց սրտէ խօսք ընդ Աստուծոյ»։ Թեև գիրքը խորագրված է «Յիսուս Որդի», բայց այնտեղ տպագրված են հնդինակի ուրիշ շատ գործեր ևս, որոնք կազմում են Շնորհալու չափածոյի անհամեմատ մեծ մասը։ Ահա այդ գրքի բովանդակությունը։

1. Յիսուս որդի, որից հետո գալիս է մի ակրոստիքոս ոտանավոր «Ստեփանոսի երգ» կապով՝ նվիրված Ներսես Շնորհալուն։

2. Նորին տեառն Ներսէսի առաջնալ առ սուրբ երուսաղիմն։

3. Բան-խրատ ուսումնասիրաց մանկանց ի դիմաց այբուբենից տառից՝ ոտանաւոր չափով։

4. Բան ճաւատոյ վասն աննեղին և եղելոց։

5. Նորին բան ճերտաղական ի խրատ ճոգւոց ճամայնից, ի դիմաց մերոյին տառից տանց իւրաքանչիւր բառից։

6. Յիշատակարան յառակացն Սողոմոնի՝ ըստ տառից Այբուբենից։

7. Թուղթ մխիթարութեան առ ոմն իշխան տրեղեան՝ վասն որդւոյ իւրոյ տարաժամ մնռանելոյ։

8. «Յաղագս երկնից և զարդուց նոցա»։

9. . . . . Վիպասանութիւն սկսեալ ի ճայկազեան սեռէ և յԱրշակունեաց գարմէ մինչև ցվախճան։

10. Վասն խաչի և չարչարանաց։

Գրքի վերջում հրատարակիչ Հովհաննես Անկյուրացու «Մանուկսմ-յիշատակարանն» է, որտեղ նա նույնպես պատմում է տպագրության պայմանների ու դժվարությունների մասին։

Բ տպ.— «Յիսուս որդի», Վենետիկ, 1660 թվական

Այս տպագրությունը ըստ ամենայնի նման է առաջինին. այստեղ ուշադրավ է լատինացի հրատարակչի ընդարձակ «Յիշատակարանը»։

Գ տպ.— «Յիսուս որդի», Ամստերդամ, 1660, 614 էջ 1200 օրինակ (տպարանակ)։ Վերջում կա Մատթեոս Մարեցու «Յիշատակարանը»։ Այս տպագրությունն ընդօրինակված է Հովհաննես Անկյուրացու տպած գրքից։

Դ տպ.— «Յիսուս որդի», Վենետիկ, 1686, 416 էջ։

Ե տպ.— «Յիսուս Որդի», Մարսել, 1702, 342 էջ։

Զ տպ.—«Յիսուս որդի», Կ. Պոլիս, 1724, 404 էջ։ Գրքի ճակատին նկարված է Հիսուս մանկան պատկերը։ Վերջում՝ «Ողորմութեամբն Աստուծոյ և բարեխօսութեամբ սրբոյն Մինասայ աւարտեցաւ սուրբ տառս ի թուականին 1724, յունվարի 8. ի տպարանի տրուպ Աստուածատրոյ»։

Է Տպ.— «Յիսուս որդի», Կ. Պոլիս, 1746, 411 էջ։ Գրքի վերջում՝ 409—411 էջերում տպված են Շնորհալուն վերագրվող մի քանի փոքրիկ երգեր՝ հետևյալ բացատրությամբ։ «Նորին տեառն Ներսէսի ասացեալ երգք գտեցեալ ի գրոց «Յիսուս որդւոյ» միոջէ, զոր ասա ի վերջոյ եդաք զի մի կորիցէ յիշատակ սրբոյն»։

Ը տպ.— «Յիսուս որդի», Կոստանդնուպոլիս, 1746, 376 էջ։ Այս տպագրությունը նույն տարում, Կ. Պոլսում լույս տեսած նախորդ օրինակից տարբերվում է միայն նրանով, որ այստեղ, գրքի վերջում, ավելացված են Ներսես Շնորհալու՝ Ապիրատին գրած ոտանավորը և Դրիդոր Մագիստրոսի «Տաղաչափութիւնք»-ը։

Թ տպ.— «Յիսուս որդի», Ս. Պետերբուրգ, 1785, 433 էջ, որը միանգամայն նման է 1746 թվականին Կ. Պոլսում լույս տեսած տպագրության։

Ժ տպ.— Յիսուս որդի», Մադրաս, 1792, 444 էջ։ Այս տպագրության մեջ կա 36 տողից բաղկացած մի գեղեցիկ ոտանավոր՝ նվիրված գիրքը տպագրող Ավետ Սեթյանին։

ԺԱ տպ.— «Յիսուս որդի», Կ. Պոլիս, 1824, 471 էջ։ Այստեղ էլ կան Ապիրատին նվիրված ոտանավորը, Մագիստրոսի «Տաղաչափութիւնք»-ը և ավելացված է Շնորհալու «Առաւօտ լուսոյ» երգը և մի ակրոստիքոս ոտանավոր՝ 20 տողից «Ներսեսի երգ» անվանակապով։

ԺԲ տպ.—Տե՛ս «Բանք չափաւ» գրքի սկզբից, Վենետիկ 1830 թվական։

## «ԲԱՆՔ ՉԱՓԱՒ»

Տեառն Ներսէսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի «Բանք չափաւ», ի Վենետիկ, ի տուրս Ղազար, 1830, 650 էջ։

Այս հրատարակության մեջ դնելով նախորդ տպագրությունների չափածո նյութերը, ավելացրել են Շնորհալու տաղերը, գանձերը և հանելուկները։ Գիրքը դրա համար էլ կոչվել է ոչ թե «Յիսուս որդի», այլ «Բանք չափաւ», թեև սկսվում է այդ մեծ պոեմով։ Գրքի բովանդակության մասին նախաբանում գրված է. «Ի մի յայս մատեան բովանդակեմք զամենայն տաղաչափութիւնս Շնորհալւոյն, բայց յընտրելագունէն ի քերթուածս նորա յՈղբոյն եգեսիայ և ի շարականացն։ Բայց գիտացեն ընթերցողք, զի ոչ եթէ վարկպարազի ընտրանաւ այսորիկ ի սիպ ածանց ըստ չեռնոց ինչ պատուաստ դրչագրաց յորոց յաւելուածք անգատէն չանհամութենէ տողիցն և ի կազ ոտիցն չափոյ նշավակեն առ անհմուտ եւ եթ պատրուակեալ, այլ ամենայն զգուշեաւ բազդատեցան ընդ ոտան և առաւել ևս ձեռագիրս, յորոց մանաւանդ չորք վաղեմիք են և հարազատք, ի ձեռին ունենալով և զամենայն տպագիրս։ Իսկ զերկրայելի ընթերցուածս չետ կոյս մատենիս դրօշմեցաք»։

## ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Ժամակարգության մեջ ընդունված Շնորհալու գրած բոլոր շարականները, սկսած հայ գրքի տպագրության հենց առաջին տարիներից, անընդհատ տպագրվել են տարբեր ժամանակներում հրատարակված հետևյալ Շարականոցներում.

1. Շարակնոց, երաժշտական երգեցմունք հոգևորականք, աստուածայնոց, և երջանկաց սրբոց վարդապետաց, Հայոց Թարգմանչաց, գկարգաւորութիւնս եկեղեցւոյ վայելչացուցանողաց. յԱմստերդամ, 1664։

2. Շարակնոց, տպեցեալ յԱմստերդամ քաղաքի, յամի տեառն 1685, ի սեպտեմբեր 25... ի տպարանի Մատթեոսի Վանանդեցւոյ։

3. Շարակնոց, վայելչացուցանողաց։ Տպեցեալ յԱմստերդամ քաղաքի, յամի տեառն 1702, 780 էջ։

4. Շարակնոց, վայելչացուցանողաց ի Թուին Քրիստոսի ՌՈՂԲ (1692) և ի հայոց ՌՃԽԱ, դեկտեմբեր ամսոյ Ը։ Տպեցեալ Ամստերդամում[1] քաղաքի։

5. Շարակնոց... տպեցեալ Ամստերդամ, ի Թուին Քրիստոսի ՌՉԺԸ (1718)։

6. Շարակնոց... ի Կոստանդնուպոլիս, յամի 1727, «Աւարտեալ կատարեցաւ սուրբ գիրքս Երաժշտական ի վերայ օրինակին Ոսկանայ»։

7. Տպեցաւ սուրբ Երգարանս եկեղեցւոյ, որ կոչի Շարակնոց, ի վերայ սրբագրեալ ուղիղ օրինակաց հանդերձ նորագիւտ այլ շարականօք։ Ի Կոստանդնուպոլիս, յամի 1736։

8. Շարակնոց... տպեցեալ ի Կոստանդնուպոլիս, յամի 1742; ի տպարանի մաշհուեսի Աստուածատրոյ։

9. Շարակնոց, տպեցեալ ի Կոստանդնուպոլիս, յամի 1768, ի տպարանի տիրացու Յովհաննէսի և տիրացու Յակոբոյ։

10. Շարակնոց... ի Կոստանդնուպոլիս, յամի 1784, ի տպարանի Պետրոսեան Ստեփաննոսի։

11. Շարակնոց... ի Կոստանդնուպոլիս, յամի 1790, ի տպարանի Յովհաննէսի և Պօղոսի։

12. Շարակնոց... ի Կոստանդնուպոլիս, յամի 1802, ի տպարանի Յովհաննիսեան Պօղոսի։

13. Զայնեղ Շարական, ս. Էջմիածին, 1833 թվական։

14. Շարական հոգևոր երգոց սուրբ և ուղղափառ եկեղեցւոյս Հայաստանեայց. յօրինեալ ի սրբոց Թարգմանչացն մերոց և ի սրբոյն Շնորհալւոյն և յայլոց սուրբ հարց և վարդապետաց. Կոստանդնուպոլիս, ի տպարանի Յովհաննու Միւհենթեխեան, 1853։

15. Շարական ձայնագրեալ երկասիրութեամբ Նիկողայոսի Թաշճեան Կոստանդնուպոլսեցւոյ և տպագրեալ հրամանաւ վեհափառ տեառն Գևորգայ Դ կաթողիկոսի ամենայն հայոց, ի Վաղարշապատ 1874։

16. Շարականք, տաղք և ալելուիա Աւագ շաբաթու ի պետս եկեղեցւոյ մանկանց. Տպագրութիւն Հայաստանեայց ս. Էջմիածին, 1877.

17. Շարականք և երգք ժամակարգութեան Հայաստանեայց եկեղեցւոյ առ սուրբ Կոյսն յեղեալ ի լատին. Վենետիկ, ի վանս Ս. Ղազարու, 1877։

18. Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ, Սահակ վ. Ամատունի, Վաղարշապատ, 1911։

19. Եղիշե Դուրյանը աշխարհաբարի է վերածել Շնորհալու, Այսօր անճառ, Արարչական, Աստուած անեղ պոեմները և Առաւօտ լուսոյ, Աշխարհ ամենայն, ու նորոգող տիեզերաց երգերը։ «Լոյս», 1905 էջ 11—431։

Բացի վերոհիշյալներից, բոլոր ժամանակներում հրատարակված բոլոր հայկական ժամագրքերում տպագրվել են Շնորհալու «Առաւօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն», «Ջարթիր», «Յիշեսցուք», «Նորաստեղծեալ», «Արարչական», «Այսօր անճառ», «Նայեցաց սիրով», «Ի քէն հայցեմ», «Աստուած անեղ» երգերն ու պոեմները։

---

[1] Այս Շարակնոցի տպագրության տեղի վերաբերյալ վաստակավոր մատենագետ Գարեգին Զարբհանալյանը գրում է. «Թեև այս տպագրությունը կրում է Ամստերդամու անունը, բայց տպագրության աղավաղություն գուշակել կուտա, թե կամ ի Մարսելիա կամ ի Լիվոռնա, կամ ի Գոլիս հրատարակված է»։ «Հայկական մատենագիտություն», Վենետիկ, 1883, էջ 514։

Ա տպ.— «Ողր եղեսիոյ քազաքի, վայելչահիւս չափաբանութեամբ շարադրեալ՝ սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ՝ հայոց կաթողիկոսի Կլայեցւոյ»։ Այդ նոյն գրքում տպագրված են նաև հետևյալ գրողների երկերը. ա. Վիպասանութիւն հայոց չափեալ ոտիւք, Տեառն Վահրամայ մեծի վարդապետի։ բ. Ներբողեան առ սուրբն Ներսէս Շնորհալին, ասացեալ Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ, ոտանաւոր հնգմամբ հանգեալ։ Զգուշաւոր քննութեամբ ուղղագրեալ բազդատութեամբ ձեռագիր օրինակաց... Յամի տեառն 1810 և ի թուականիս հայոց 1259 ի մայիսի 20։ Արդեամբ և ծախիւք պարոն Սարգիս Ծատուր Աղավալեանց կոչեցելոյն և ի նորին տպարանի, որ ի Մադրաս։

Բ տպ.— «Ողր եղեսեայ», ասացեալ սրբոյ Տեառն Ներսէսի Շնորհալւոյ հայոց կաթողիկոսի. զառաջինն ի լոյս ընծայեալ գործադրութեամբ տեառն Յովհաննու վարդապետի Զօհրապեան Կոստանդնուպոլսեցւոյ։ Ասիական ընկերութենէն Փարիզու 1828, ՌՄՀԼ ի Փարիզ, ի գործարանի Տօնաէի Տիւբէյ։ Այս հրատարակութեան մէջ է հռչակավոր արևելագետ Սեն Մարտենի գրած ֆրանսերեն առաջաբանը։ 112 էջ։

Գ տպ.— «Ողր եղեսիոյ. Յօրինեալ Տեառն Ներսիսի Կլայեցւոյ երանաշնորհ հայրապետին Հայոց։ Ի լոյս ածեալ ի Յ. Շ. Զրպետեանց, Արքայական վարժապետէ ի դպրատան Փարիզոյ և յԱնգամոյ ընկերութենանց Համալսարանին Հնագիտաց Դաղղիոյ Դամարճակին Աշխարհագրաց Փարիզոյ և Հայկական Ճեմարանի սրբոյն Ղազարու, որ ի Վենետիկ ի հայրապետութեան Տեառն Սիրեմի գերաստիճան կաթողիկոսի ամենայն Հայոց։ 1829 ի Տփխիս, ՌՄՀՔ. 110 էջ։ Ի տպարանի Ներսիսեան դպրոցի Հայոց ընծայելոյ յԱզնուական Գէորգեայ Արծրունւոյ։

Դ տպ.— «Ողր եղեսիա քաղաքի». վայելչահիւս չափաբանութեամբ շարադրեալ սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ հայոց կաթողիկոսի Կլայեցւոյ. Կալկաթա, 1832, 216 էջ։

## «ՈՂՔ ԵՒԵՍԻՈՅ»-Ի ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ֆրանսերէն՝ «եղեսիոյ Ողբի» առաջին կեսը՝ մինչև 1358 տողը հայերէն բնագրով թարգմանել և հրատարակել է հայտնի հայագետ Դելիյուբեն՝ իր «Recueil des Croisades, Documents Armeniens...» երկասիրության մէջ՝ Elegie sur la prise d'Edesse վերնագրով (Դելիյուբէ, Ա հատ., Փարիզ, 1869, էջ 226–268)։

2. Ռուսերէն՝ «Элегия на взятие Эдессы»—отрывок из поэмы Нерсеса Шнорали (Благодатный), „Поэзия Армении". М., 1916, էջ 171—178։ Թարգմանել է բանաստեղծ Վալերի Բրյուսովը։

## «ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ» ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Ներսես Շնորհալու այս հռչակավոր երկը հաճախակի է տպագրվել Աղօթագրքում, Սաղմոսում, Ժամագրքում և առանձին։ Հայ գրականության է ոչ մի գործ աշխարհի տարբեր լեզուներով այնքան չի թարգմանվել ու տպագրվել, որքան այս հոգերուխ բանաստեղծութիւնը.

Ա տպ.—«Հաւատով խոստովանիմ», հայերեն և իտալերեն, Պատուա, 1690։

Բ տպ.— *Աղօթք Տեառն Ներսէսի հայոց կաթողիկոսի թարգմանեալ ի լեզուս լատինացւոյ, գաղղիացւոյ և անգլիացւոյ. ի Լոնդոն, յամի 1780։*

Գ տպ.— «Հաւատով խոստովանիմ», *աղօթք տեառն Ներսեսի Հայոց կաթողիկոսէ ի վեց լեզուեան՝ հայ, տաճկերէն, յունարէն, լատիներէն, իտալերէն և գաղղիերէն. ի Վենետիկ, ՌՄՄԲ—1810, ի վանս ս. Ղազարու։*

Դ տպ.— «Հաւատով խոստովանիմ», *աղօթք սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ՝ վեցլեզուեան՝ հայերէն, գաղղիերէն, լատիներէն, հունգարերէն, գերմաներէն, իտալերէն։*

Ե տպ.— «Հաւատով խոստովանիմ» *տասն լեզուներով՝ հայերէն, տաճկերէն (հայկական տառերով), յունարէն, լատիներէն, իտալերէն, գաղղիերէն, դրանսիլվանիոյ, գերմաներէն, հունգարերէն, սերվիաներէն, Վենետիկ, 1810։*

Զ տպ.—«Հաւատով խոստովանիմ» *տասնչորս լեզուաւ՝ հայերէն (դրաբար և աշխարհաբար), դրանսիլվանիոյ, տաճկերէն (հայերէն տառերով), հունարէն, լատիներէն, իտալերէն, գաղղիերէն, անգլերէն, գերմաներէն, հունգարերէն, սերվիաներէն, հոլանդերէն, իսպաներէն, դաղմատերէն, Վենետիկ, ս. Ղազար, 1815։*

Է տպ. «Հաւատով խոստովանիմ» *տասնվեց լեզվով, Վենետիկ, ս. Ղազար, 1818։*

Ը տպ.— «Հաւատով խոստովանիմ» *քսանչորս լեզուներով՝ Վենետիկ, ս. Ղազար, 1823։*

Թ տպ.— «Հաւատով խոստովանիմ» *քսանչորս լեզուներով՝ Վենետիկ, ս. Ղազար, 1837։*

Ժ տպ.— *Նոյն լեզուներով (24), ս. Ղազար, 1862։*

ԺԱ տպ.— *Նոյն լեզուներով՝ ս. Ղազար, 1872։*

ԺԲ տպ.— «Հաւատով խոստովանիմ» *36 լեզուներով՝ Վենետիկ, ս. Ղազար 1873, և այլն։*

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Արեղյան Մ. *Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1946, հատ. Բ, էջ 73—129։*

Ալիշան Ղ. *Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 538։*

Ալիշան Ղ. *Հայապատում պատմիչք և պատմութիւն հայոց, Վենետիկ, 1901, էջ 96—97։*

Ալիշան Ղ. *Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 56—81, 163 և հետ։*

Աճառյան Հ. *Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, Երևան, 1948, էջ 44—46։*

Առաքելյան Ա. *Հայ ժողովրդի մատենագրական մշակույթի զարգացման պատմություն, Երևան, 1959, էջ 333—341։*

Գաբրիելյան Հ. *Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, Երևան, 1958, հատ. 2, էջ 72, 79, 82, 94—99 և հետ։*

Ջամիճյան Ա. *Հայ գրահանության պատմություն, Նոր Նախիջևան, 1914, էջ 170—172։*

Ջարբհանալեան Գ. *Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897, էջ 621—642։*

Մկրյան Մ. *Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 218—260։*

Մկրյան Մ. *Հայ գրականություն*, Երևան, 1954, Ա գիրք, էջ 120—128։

Մկրտչյան Ա. *Նյութեր X—XVIII դդ. հայ գրականության պատմության համար*, Երևան, 1945, Ա պրակ, Ներսես Շնորհալի։

Զամչեան Մ. *Պատմութիւն հայոց*, Վենետիկ, 1784, հատ. Գ, էջ 18—111։

Փափազեան Վ. *Պատմութիւն հայ գրականութեան (բանահիւսութեան պատմութիւն) սկզբից մինչև մեր օրերը*, Երևան, 1907, էջ 210—213։

Օրմանյան Մ. *Ազգապատում*, Կ. Պոլիս, 1912, էջ 1400—1446։

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Առաջաբան . . . . . 5
Ժամանակը . . . . . 13
Կյանքը . . . . . 26
Հասարակական գործունեությունը . . . . . 49
Թղթերը . . . . . 71
Ձափածո գրվածքներ . . . . . 95

1. Շարականներ, տաղեր, գանձեր . . . . . 95
   Ա. Տերունական տոներին և առանձին անհատների նվիրված շարականներ . . . . . 102
   Բ. Վկայաբանական և դավանաբանական շարականներ . . 106
   Գ. Կանոններից դուրս եղած շարական-երգեր . . . . 110
   Դ. Ազգային և աշխարհիկ թեմաներով շարականներ . . . 117
   Ե. Հայրենասիրական շարականներ . . . . . 122
   Զ. Տաղեր և գանձեր . . . . . 130

2. Աշխարհիկ մոտիվներով դավանաբանական պոեմներ . . . 134

3. Մանկավարժական և այլ ոտանավորներ . . . . . 153

4. Պատմա-քաղաքական պոեմներ . . . . . 171
   Ա. Վիպասանություն . . . . . 171
   Բ. Յաղագս երկնից և զարդուց նորա . . . . . 184
   Գ. Ողբ Եդեսիոյ . . . . . 190

5. Հանելուկներ . . . . . 219

Արվեստը . . . . . 243
   Ա. Բանաստեղծական մշակույթը . . . . . 243
   Բ. Թողած ազդեցությունը . . . . . 263

Մատենագիտական տեղեկություններ . . . . . 291




ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ГРИГОР АРШАКОВИЧ АКОПЯН

# ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ. գրականության ինստիտուտի գիտական խորհրդի ճանճնաժողովի որոշմամբ

*Պատ. խմբագիր Ա. Ս. Մարգսյան*
*Հրատ. խմբագիր Ա. Հ. Շապտամյան*
*Նկարչական ձևավորումը Լ. Ա. Սադոյանի*
*Տեխն. խմբագիր Հ. Լ. Գորգոյան*
*Սրբագրիչ Զ. Ա. Օրմանյան*

*ՎՅ 06537, հրատ. № 2307, ՄՀՄ № 843, պատվեր 331, տիրաժ 2000*

*Հանձնված է արտադրության 1/VIII 1963 թ., ստորագրված է տպագրության 19/II 1964 թ., տպագրական 18,75 մամուլ, հրատարակչական 15,71 մամուլ, թուղթ 60×92¹/₁₆։ Գինը կազմով 83 կոպ.*

*Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության, 24։*

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220033228

A II
A 33928